



Павел БАСИНСКИЙ

ЛЕВ ТОЛСТОЙ: СВОБОДНЫЙ ЧЕЛОВЕК

Перевод на армянском - Нерсес Атабекян



Հրատարակվել է «Թարգմանության ինստիտուտ»  
ինքնավար ոչառեւտրային կազմակերպության  
աջակցությամբ, Ռուսաստան:

Pavel BASINSKI

LEV TOLSTOY: IS A FREE MAN

Translation Armenian - Nerses Atabekyan

Stepanakert 2020

ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

# ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ. ԱԶԱՏ ՄԱՐԴԸ

Ռուսերենից թարգմանությունը՝  
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Ստեփանակերտ - 2020

ՀՏԳ- 821.161.1.0  
ԳՄԳ- 83.3(2Ռ-ուս)  
Բ 312

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

**Բասինսկի Պավել**

Բ 312 **Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը:** Վավերագրական վեպ:  
Թարգմանություն ռուսերենից՝ Ն. Աթաբեկյան:  
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2020, 320 էջ:

«Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» գրքի լույսընծայումից առաջ Պավել Բասինսկին հրատարակել է եւս երեքը ռուս մեծ գրողի մասին, որոնցից մեկը՝ «Լեւ Տոլստոյ. փախուստ դրախտից», թարգմանաբար տպագրվել է մեր մատենաշարով/2016/: Տոլստոյական յուրահատուկ քառերգության այս վերջին գրքում հեղինակը «վերծանում» է բուն Տոլստոյ մարդուն՝ հայտնաբերելով, որ նրա կյանքն ամբողջովին մի կատարյալ ստեղծագործություն է. գրողի կյանքն ու մահը, հարաբերությունները մոտ ու հեռու տարբեր մարդկանց հետ, իրոք, նույնպիսի մեծ ստեղծագործություն են, ինչպես և նրա գրչի արգասիքը:  
Փաստական հարուստ նյութի հիման վրա գրված սույն վավերագրական վեպը հայ ընթերցողներին լավագույն հնարավորություն է տալիս՝ խորությամբ ծանոթանալու աշխարհահռչակ գրողի կյանքի անկրկնելի էջերին:

ISBN 978-9939-1-1088-2

ՀՏԳ- 821.161.1.0  
ԳՄԳ- 83.3(2Ռ-ուս)

© Pavel Basinskiy, 2020  
The publication of the book was negotiated through Banke,  
Goumen & Smirnova Literary Agency ([www.bgs-agency.com](http://www.bgs-agency.com)).

© «Ոգի-Նաիրի» /թարգմանության համար, 2020/

**ՏՈՒՍՏՈՅՑ ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ԱՍԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ**

Մինչ այս գիրքը ձեռնարկելը ես երեք գիրք եմ գրել Տոլստոյի մասին: Գրքերը լույս են տեսել տարբեր ժամանակներում (2010, 2013 և 2015 թթ.), վերահրատարակվում են մինչ օրս և յուրատեսակ եռագրություն են:

Առաջին գիրքը՝ «Լև Տոլստոյ. փախուստ դրախտից», պատմում է Յասնայա Պոլյանայից գրողի հեռանալու, նրա վերջին ուղևորության ու Աստապովոյում մահանալու մասին, ինչպես և այն մասին, թե ինչն էր հեռանալու պատճառը, Տոլստոյի կյանքի ինչ պահեր են նախորդել ու կանխորոշել այդ իրադարձությունը:

Երկրորդ գիրքը՝ «Սուրբն ընդդեմ Լևի: Հովհան Կրոնշտադտցի և Լև Տոլստոյ. մի թշնամանքի պատմություն», նվիրված է «Տոլստոյն ու Եկեղեցին» հիմնախնդրին: Ինչո՞ւ եղավ այդ ողբերգական առձակատումը, ի՞նչ էր նշանակում նշանավոր «բանադրանքն» և իրականում իրենից ինչ էր ներկայացնում «Տոլստոյի կրոնը»:

Երրորդ գիրքը՝ «Լևը Լևի ստվերում»: Սիրո և ատելության պատմություն՝ Տոլստոյի ու նրա երրորդ որդու և բոլոր երեխաների հետ հարաբերությունների մասին է: Չէ՞ որ համաշխարհային գրականության դասականների մեջ Լև Նիկոլաևիչն ամենաբազմազավակ հայրն էր. կինը՝ Սոֆյա Անդրեևնան, տասներեք երեխա էր պարզել նրան: Ինչպիսի՞ն է եղել Տոլստոյ-հայրը: Ի՞նչ են մտածել ու գրել նրա մասին երեխաները: Եվ ընդհանրապես, ի՞նչ է նշանակում լինել զավակը մի մարդու, ով ողջ աշխարհում հանճար է ձանաչվել արդեն կենդանության օրոք:

Այդ գրքերը գրելիս, թվում է՝ ակնհայտ, բայց այն ժամանակ բարդ մի բան հասկացա: Տոլստոյը ոչ միայն հեղինակ է մեծագույն ստեղծագործությունների՝ ահռելի «Պատերազմ և խաղաղությունից» մինչև մահվանից չորս ամիս առաջ գրված փոքրիկ «Ակամա» պատմվածքը: Տոլստոյը հենց ինքը ստեղծագործություն է: Նրա կյանքն ու մահը, հարաբերությունները մոտ ու հեռու տարբեր մարդկանց հետ, նույնպիսի մեծ ստեղծագործություն են, ինչպես և նրա գրչի արդյունքը: Եվ այդ ստեղծագործությունը նա գիտակցաբար էր ստեղծում՝ դրան տալով ոչ պակաս, և անգամ ավելի շատ ուժ ու ժամանակ, քան գրական ստեղծագործությանը, փիլիսոփայական տրակտատներին ու հրապարակագրությանը: Եվ մենք նույնիսկ գիտենք այդ աշխատանքն սկսելու տարին ու ամիսը. 1847 թվականի մարտ՝ առաջին գրառումներն օրագրում: Երիտասարդ «հեղինակի» քսան տարին դեռ չէր լրացել, երբ Կազանի համալսարանական հիվանդանոցում շարադրում է կյանքի մեծ ստեղծագործության մտահղացումը, որի իրագործման համար պետք կլինի վաթսույն տարուց ավելի: Այդ պահից սկս-

վում է ամենօրյա աշխատանքը, եթե կուզեք՝ սևագրումը «Լև Տոլստոյ» վերնագրով վեպի՝ բազմաթիվ սյուժետային գծերով, տարբերակներով, հաջողություններով ու ողբերգական կոնֆլիկտներով, գավելշտական տեսարաններով և այնպիսի պատկերներով, որոնք չեն կարող կատարիս, հոգեկան ցնցում չհարուցել:

Գուցե հենց այդ պատճառով էլ, որպեսզի այդ ստեղծագործությունն ավարտի ոչ թե «հեպի էնդով», ինչպես «Պատերազմ և խաղաղությունը», որտեղ նա խելացի ու ճիշտ է դասավորում իր սիրելի հերոսների՝ Նատաշայի ու Պիեռի, Նիկոլայի ու Մարիայի ընտանեկան կյանքը, այլ ողբերգական, տառապագին շեշտով, որն ավելի էր համապատասխանում XX դարին, Տոլստոյը լքեց Յասնայա Պոլյանան 1910 թվականի աշնանային մի ցուրտ գիշեր ու վախճանվեց Աստապովո կայարանում՝ կողքով սլացող գնացքների սուլոցի տակ:

Ես հասկացա, որ Տոլստոյի կենսագրությունը չի կարելի գրել որպես կյանքի իրադարձությունների շղթա և գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծություն, ինչպես գրվում են սովորական գրողական կենսագրությունները: Պետք է վերլուծել ոչ թե Տոլստոյի կյանքի փաստերը, առավել ևս՝ նրա բանավոր ստեղծագործությունները (դա այլ բանասիրական խնդիր է), այլ կենսական մտահղացումն ու այն իրագործելու մեթոդները: Բայց այդ խնդիրը, եթե դրան մոտենանք ամենայն պատասխանատվությամբ, անհաղթահարելի է, համենայնդեպս՝ ինձ համար: Եվ այդ ժամանակ որոշեցի հակիրճ ու հնարավորինս ընկալելի շարադրել «Լև Տոլստոյ» վերնագրով ստեղծագործությունը: Սա, այսպես ասած, յուրատեսակ դարոցական առաջադրանք էր: Հույս ունեմ, որ կատարել եմ, և գրքի ընթերցողներից յուրաքանչյուրը գոնե իր ընդհանուր պատկերացումը կկազմի, թե Տոլստոյն ինչպես էր ստեղծում իր կյանքը:

Այս գիրքն առաջինը հրատարակել է «Մոլոդայա գվարդիան», 2016 թվականին՝ «Լև Տոլստոյ. ազատ մարդը» վերնագրով: Ներկայիս հրատարակությունը լրացված է կենսամատենագիտությամբ, Տոլստոյի կյանքի և ստեղծագործության ժամանակագրությամբ, ինչպես և ավելի ծավալուն լուսանկարչական նյութերով:

Պավել ԲԱՍԻՆՍԿԻ  
2-ը փետրվարի, 2017 թվական

## ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

### ԶԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

(1828-1847)

#### *Կյանքը որպես բռնություն*

Լև Նիկոլաևիչ Տոլստոյը ծնվել է Տուլայի նահանգի Կրասիվենսկի գավառի Յասնայա Պոլյանա կավածքում, 1828 թվականի օգոստոսի 28-ին:

Ամենավաղ զգացողությունը բարոյից ազատագրվելու ցանկությունն էր. «Ահավասիկ՝ իմ առաջին հիշողությունները... Ահա դրանք. ես կապկաված եմ, ուզում եմ ազատել ձեռքերս ու չեմ կարողանում, և ճշում ու լալիս եմ, և հենց ինձ տհաճ է իմ ճշոցը, բայց ոչ մի կերպ չեմ կարողանում դադարել: Գլխավերևս, վրաս կռացած՝ կանգնած է մեկը, չեմ հիշում՝ ով: Եվ այդ ամենը՝ կիսախավարում: Բայց հիշում եմ, որ երկուսն են: Իմ ճիչը ազդում է նրանց վրա. նրանք անհանգստանում են իմ ճշոցից, բայց ինձ չեն արձակում, ու ես ավելի բարձր եմ աղաղակում: Նրանց թվում է՝ հենց այդպես էլ պիտի լինի (այսինքն, որ կապկաված պիտի լինեմ), այն դեպքում, երբ ես գիտեմ, որ պետք չէ այդպես, և ուզում եմ դա սպացուցել նրանց, ու հենց ինձ համար զգվելի, բայց անզուսպ ճշում եմ: Ոչ թե մարդկանց անարդարությունն ու դաժանությունն են զգում, որովհետև նրանք խղճում են ինձ, այլ՝ ճակատագրի դաժանությունն ու խղճահարությունն իմ հանդեպ»:

Երկրորդ հիշողությունը. «մորս ինչ-որ զարմիկի, հուսար իշխան Վոլկոնսկու այցելությունն է: Նա ուզում էր գուրգուրել ինձ ու մստեցրեց ծնկներին և ինչպես հաճած է լինում՝ ինձ գրկած շարունակեց խոսակցությունը մեծերի հետ: Ես փորձում էի դուրս պրծնել նրա գրկից, բայց նա ավելի ուժեղ էր սեղմում: Դա երկու րոպեի չափ տևեց: Սակայն գերյալության, անազատության, բռնության այդ զգացումը այնպես էր վրդովել ինձ, որ հանկարծ սկսեցի պոկվել նրա գրկից, լացել ու թայտալ...»:

Տոլստոյի գրական մուտքը՝ «Մանկություն» վիպակը, նույնպես սկսվում է երեխայի նկատմամբ բռնությունից ու... սպանությունից: Գերմանացի դաստիարակ Կառլ Իվանովիչը ճանճ է սպանում իր մահճակալում քնած տասնամյա Նիկոլենկա Իրտենևի գլխավերևում, ու ճանճասպանը դիպչում է սնարին կախված պահապան հրեշտակի սրբապատկերին: Առաջին իսկ սպանված ճանճն ընկնում է տղայի դեմքին:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

«Ենթադրենք փոքրիկ եմ,- մտածում էի ես,- բայց ինչո՞ւ է ինձ անհանգստացնում: Ինչո՞ւ ճանճ չի սպանում Վոլոդյայի անկողնու մոտ, տես ինչքան շատ են: Չէ՞, Վոլոդյան ինձնից մեծ է, իսկ ես բոլորից փոքրն եմ, դրա համար էլ ինձ է չարչարում: Ամբողջ կյանքում մտքիմը հենց միայն այդ է,- շշնջում էի ես,- թե ինչպես տհաճություն պատճառի ինձ...»:

Կառլ Իվանովիչը նաև խուտուտ է տալիս Նիկոլենկայի կրունկները, որ արթնացնի նրան:

«-Ach, lassen Sie!, Կառլ Իվանովիչ,- ճչացի ես արցունքն աչքերիս՝ գլուխս բարձերի տակից հանելով»:

Շոշափողական տպավորությունները կարևոր դեր են խաղում Տոլստոյի մանկության մեջ. «Ես նստած եմ տաշտի մեջ, և ինձ շրջապատում է տարօրինակ, նոր, ոչ տհաճ թթվաշ հոտը ինչ-որ նյութի, որով տրորում են իմ տկլոր փոքրիկ մարմինը: Ըստ երևույթին՝ թեփ էր, և ինձ ջրով ու տաշտում լողացնում էին ամեն օր, սակայն թեփի տպավորության թարմությունն արթնացրեց ինձ, ու ես առաջին անգամ նկատեցի ու սիրեցի իմ փոքրիկ մարմինը՝ երևացող կրծոսկրերով, և հարթ ու մուգ տաշտը, և դայակի բշտած թևերը, և տաք, գոլորշի արձակող ջուրը, և ջրի ձայնը, և հատկապես տաշտի թաց եզրերի հարթությունը, երբ թաթիկներս քսում էի դրանց...»:

Բայց մտապահվել էր նաև, թե սփռոցին թափած կվասի համար տնտեսուհին ինչպես բռնեց նրան՝ չնայած «համառ դիմադրությանը», ու թաց սփռոցով տրորեց երեսը: Եվ Ծաղկազարդի կիրակիին դաստիարակն ինչ-որ զանգանքի համար ձաղկեց ուռենու ճյուղերի խրճով: Եվ ինչպես էին այդ ուռենուց թափվում «փոքրիկ կոները»:

Նա հիշում էր՝ ինչպես էր «առանձնակի քնքշությամբ» համբուրում «հոր սպիտակ ջղուտ ձեռքը» և «գորովագին երջանիկ» էր լինում, երբ այն շոյում էր իրեն: Բայց և՛ թե հայրն ինչպես մի անգամ բռնեց իր ականջը:

Ծեծված ճշմարտություն է այն կարծիքը, թե Տոլստոյը վաղ մանկությունը գովերգել է որպես հոգու դրախտային վիճակ: Եվ դա ճիշտ է: Գրականության մեջ ոչ ոք գնահատանքի այսպիսի տողեր չի գրել.

«Երջանիկ, երջանիկ, անդառնալի մանկության ժամանակ: Ինչպե՞ս չսիրել, չփայփայել նրա մասին հիշողությունները: Այդ հիշողությունները նորացնում, վեհացնում են իմ հոգին և լավագույն հաճույքների աղբյուր են ինձ համար...»

---

1. Ախ, թողե՛ք (գերմ.):



Կվերադառնա՞ երբևէ այդ թարմությունը, անհոգությունը, սիրո պահանջն ու հավատի ուժը, որով օժտված էս մանկության տարիներին: Ո՞ր ժամանակը կարող է լավը լինել նրանից, երբ երկու մեծագույն առաքինություններ՝ անմեղ զվարթությունն ու սիրո անասհման պահանջը կենսական միակ մղումն էին: Ո՞ր են այն ջերմեռանդ աղոթքները: Ո՞ր է լավագույն ընծան՝ գործանքի այն մաքուր արցունքները: Թռչում-գալիս էր սփոփանքի հրեշտակը, ժպտալով սրբում այդ արցունքները և անուշ երազանքներ բերում չփչացած մանկական երեկակայությանը»:

Յասնայա Պոլյանայում երեխաներին չէին ծեծում և խիստ հազվադեպ էին մարմնական պատժի ենթարկում ճորտերին: Այդ ավանդույթը գալիս էր երկու տոհմերի գծով՝ հոր ու մոր, Տոլստոյների ու Վոլկոնսկիների: Այդ ընտանիքներում ամոթալի էր համարվում ձեռք բարձրացնել արարածի վրա, որը չի կարող կամ իրավունք չունի պաշտպանվել: Ընդ որում, դա հենց այդ ընտանիքների առանձնահատկությունն էր, ոչ թե լուսավորյալ դարաշրջանի նշան: Երեխային չծեծելը առաջավոր սկզբունք էր այդ ժամանակի համար, որը պահպանվում էր, օրինակ, Յարսկոյե սելոյի լիցեյում, որտեղ սովորում էր Պուշկինը: Երեխաներին ճիպոտով, նույնիսկ հրացանի շամփուրով ծեծելը (դրանցով ասպագա Նիկոլայ առաջին կայսերը ծեծում էր նրա դաստիարակ գեներալ Լամզորոֆը՝ դա գրանցելով ամենօրյա մատյանում) սովորական էր ազնվականական ընտանիքներում:

Սակայն ո՛չ «Մանկություն» վիպակում, ո՛չ «Հուշերում» չեք գտնի որևէ դեպք, որ երեխային ծեծում են, որովհետև «այդպես է պետք»:

«Հուշերում» Տոլստոյը գրում է, որ մանկության տարիներին ոչ մի անգամ չի տեսել, որ ծեծեն ճորտին: «Ըստ երևույթին,- ենթադրում է նա,- այդպիսի պատիժներ լինում էին: Այն ժամանակ դժվար էր պատկերացնել կառավարումը առանց այդ պատիժների կիրառման, բայց դրանք, ամենայն հավանականությամբ, այնքան սակավադեպ էին, և հայրս այնքան հազվադեպ էր մասնակցում դրանց, որ մեզ՝ երեխաներիս երբեք չէր վիճակվել լսել դրա մասին»:

Նա հիշում է, թե երեխաներին ինչպես էր սարսափեցրել կառապանի օգնական «ծուռ Կուզմայի» ընտանիքատեր և արդեն ոչ երիտասարդ մարդու հենց միայն տեսքը, որին գործակատարն ինչ-որ տեղ էր տանում: «Սեզնից մեկը Անդրեյ Իլյիչին հարցրեց, թե ուր է գնում, և նա հանգիստ պատասխանեց, որ գնում է կալատուն, որտեղ պատժելու են Կուզմային: Չեմ կարող նկարագրել սարսափելի զգացումը, որ ինձ պատեց այդ բառերից և Կուզմայի բարի ու վիսատ տեսքից: Երեկոյան ես դա պատմեցի հորաքույր

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Տատյանա Ալեքսանդրովնային, որ դաստիարակում էր մեզ և ատում էր մարմնական պատիժը, և նման բան երբեք թույլ չէր տալիս մեր, ինչպես և ճորտերի հանդեպ այնտեղ, ուր կարող էր ազդեցություն ունենալ: Նա խիստ վրդովվեց իմ պատմածից ու հանդիմանանքով ասաց. «Ինչպե՞ս չարգելեցիք նրան»: Մինչև խոր ծերություն Տոլստոյը չէր կարողանում մոռանալ, թե ինչպես մի անգամ նրան նույնիսկ չէին ճիպտել, այլ ընդամենը սպառնացել էին: Սպառնացել էին հանել շավարիկն ու ճիպտով թակել հետույքը. նվաստացում ու ցավ: Եվ հայտնի չէ՝ որն է ավելի սարսափելի:

1895 թվականի՝ մարմնական պատիժներին նվիրված «Ամոթ է» հոդվածում Տոլստոյը գերազանցապես ուշադրություն է դարձնում հաշվեհարդարի ոչ թե ֆիզիկական, այլ բարոյական կողմին: «Ահռելի քրիստոնեական պետության գերագույն կառավարությունը, Քրիստոսից 19 դար անց չկարողացավ օրենքի խախտումներին հակազդելու ավելի օգտակար, խելացի ու բարոյական բան մտածել, քան օրենքը խախտած մարդկանց, հատում ու երբեմն նաև ծեր մարդկանց մերկացնելը, հատակին գցելն ու հետույքները ճիպտներով դաղելն է»:

1837 թվականին, երբ Լյովոչկան ինը տարեկան էր, տանը նոր դաստիարակ հայտնվեց՝ Պրոսպեր Շառլ Անտուան Տոման («Մանկություն»-ում՝ St.-Jerome): Նա Կրոնշտադտով Ռուսաստան էր եկել 1835 թվականի ամռանը, գրանցվել Պրոսպեր Իվանովիչ անունով, արագ ռուսերեն խոսել էր սովորել ու հասցրել էր որպես քարտուղար ծառայել Չեռնիգովի, Պոլտավայի և Խարկովի նահանգապետ, իշխան Վասիլի Վասիլևիչ Լևաշովի՝ Պետական խորհրդի ապագա նախագահի մոտ: Հետո ավագ դաստիարակ էր աշխատել Տոլստոյների ծանոթ Միլյուտինների տանը, իսկ այնտեղից նրան հրապուրելով բերել էր Պելագեյա Նիկոլաևնա տատիկը՝ Տոլստոյ եղբայրների և քրոջ վաղ մահացած հոր մայրը:

Միաժամանակ տան դռները փակվեցին բարի, խմող գերմանացի Ֆյոդոր Ռյոսելի առաջ («Մանկություն» վիպակում կրում է Կառլ Իվանիչ Մեյեր անունը): Նիկոլային, Սերգեյին, Գմիտրիին ու Լևին ֆրանսիացուն հանձնելիս խեղճ գերմանացին, որին երեխաները քեռի էին ասում, հագիվ էր զսպում արցունքներն ու աղաչում էր. «Խնդրում եմ սիրեք ու փայփայեք նրանց: Ամեն ինչ փաղաքշանքով արեք»: Նա հատուկ ուշադրություն էր հրավիրում կրտսերի՝ Լևի վրա: Ասում էր, որ երեխան «չսպիագանց բարի սիրտ ունի, նրա հետ վախեցնելով ոչինչ չի ստացվի, և ամեն ինչ կարելի է անել փաղաքշանքով: Ֆրանսիացին դրան առարկեց՝ «Հավատացեք, mein Herr, որ ես կկարողանամ գտնել այն միջոցը, որը նրանց կստիպի ենթարկվել»:

Նոր դաստիարակ հրավիրելով՝ Պելագեյա Նիկողանան նույնպես պնդում էր, որ տղաների նկատմամբ երբեք ֆիզիկական բռնություն չգործադրվի: Եվ դաստիարակը գրավոր խոստացավ, որ «Աստծո՝ որբերի հոր օգնությամբ» ճիպտից ձեռնպահ կմնա:

Տոլստոյի կարծիքով՝ Տոման «իսկական ֆրանսիացի էր»։ «Հիմար չէր, բավական ուսյալ էր ու բարեխղճորեն կատարում էր իր պարտականությունը մեր վերաբերմամբ, բայց որքան իր բոլոր հայրենակիցների համար ընդհանրական, նույնքան էլ ռուսական բնույթին հակառակ գծեր ունեւ՝ թեթևամիտ եաստիություն, փառամոլություն, հանդգնություն և անկիրթ ինքնավստահություն: Այդ ամենն ինձ դուր չէր գալիս»:

Տոմայի ու Լյովայի միջև բախումներ սկսվեցին: Գաստիարակի պատժի եղանակներից մեկը, չոքացնում էր զանցառուին ու ստիպում ներողություն խնդրել: Ընդ որում, միևնույն ժամանակ «ցցելով կտրծքն ու ձեռքով վեհապանձ շարժում անելով՝ ողբերգական ձայնով գոչում էր «A genoux» mauvais Sujet»: Բոլոր եղբայրներից միայն Լյովաչկան էր դիմադրում: Մի անգամ ֆրանսիացին, համենայնդեպս, նրան ուժով ստիպեց ծնկի իջնել:

Մի անգամ Տոլստոյների ընտանիքում երեկույթ էր, որին հրավիրվել էին այլ ընտանիքների երեխաներ: Բայց ֆրանսիացին հայտարարեց, որ Լյովան իրավունք չունի մասնակցելու ընդհանուր ուրախությանը: Տղան հանդուգն պատասխանեց: «Ce՛bien,- հետևիցս հասնելով՝ ասաց նա,- ես արդեն մի քանի անգամ պատիժ եմ խոստացել, որից ձեզ փորձում էր փրկել ձեր տատիկը, բայց հիմա տեսնում եմ, որ ճիպտից բացի ոչինչով ձեզ հնարավոր չէ ստիպել ենթարկվել, և դուք դա լիուլի վաստակել եք»:

Ճնշելով տղայի դիմադրությունը՝ դաստիարակը նրան տարավ խորդանոց ու փակեց այնտեղ: Եվ ահա, բանտարկության մեջ անցկացրած՝ ամոթալի պատժի սպասման այդ ժամերը, նա հիշում էր ողջ կյանքում:

Բանը ճիպտահարության չհասավ, բայց հիշողությունը մնաց:

«...Ես վրդովմունքի, զայրույթի ու զզվանքի ահավոր զգացում ունեի ոչ միայն Thomas-ի հանդեպ, այլև այն բռնության, որ նա ցանկանում էր գործել իմ նկատմամբ,- հիշում էր Տոլստոյը:- Թերևս այդ դեպքն էր պատճառը ցանկացած բռնության նկատմամբ այն սարսափի ու նողկանքի, որ զգում եմ ողջ կյանքում»:

Խորդանոցում փակված տղան երևակայում էր, թե ինչպես է պատժելու

---

2. Ծնկի՛, սրիկա (ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

դաստիարակին: «Եվ St-Jerome-ը ծնկի կգա, կսկսի լաց լինել ու թողություն խնդրել»: Բայց, ինչպես հետագայում սկսեց հասկանալ, դա թույլ սփոփանք էր: Այն չէր ազատում բռնության, ցանկացած բռնության հանդեպ սարսափից ու նողկանքից:

Նույնն էր զգում, երբ բարություն էին: «Նրանց թվում էր, թե դա (այսինքն, որ կապկպված լինեմ) անհրաժեշտ է, այն դեպքում, երբ ես գիտեմ, որ պետք չէ»: Եվ երբ ուլիկ են մորթում, և երբ ծեծում են զինվորին կամ ճորտին, և երբ երեխային փակում են խորդանոցում, բոլոր մեծահասակները մտածում են, որ «պետք է»: Իսկ Տոլստոյը գիտակցության առաջին առկայծումներից սկսած չի կարծում, այլ հաստատ գիտի, որ «պետք չէ»:

Եվ հենց այդ պատճառով Տոլստոյի ողջ, այսպես կոչված, հասուն կյանքը փորձ է ապացուցելու մարդկանց, որ «դա պետք չէ»: Եվ ողջ քաղաքակրթությունը նրան պատկերանում էր այն հուսարի տեսքով, որն իրեն բռնել-պահում էր ծնկներից և ինչ-որ «կարևոր» բան էր պատմում մեծահասակներին: Իսկ իրականում անտանելի հիմարություններ էր դուրս տալիս: Ընդամենը՝ գործելով հանցանքներից ամենասարսափելին:

Բռնություն: Ոչ միայն երեխայի նկատմամբ, այլև նրա հոգու: Որն ազատ էր ծնվել, կենաց անդադար բերկրության համար: Բայց չգիտես ինչու նախ ծնկի բերեցին, ապա փակեցին խորդանոցում: Ու դեռ սպառնացին պատժել: Այնտեղ՝ անդրշիրիմյան կյանքում: Պատժել:

### *Վոլկոնսկիները*

Տոլստոյի մորական պապը՝ իշխան Նիկոլայ Մերգենիչ Վոլկոնսկին, ծնվել է 1753 թվականին և վախճանվել 1821-ին, երբ միակ դուստրը՝ Մարիան, դեռ ամուսնացած չէր: Այսպիսով, Տոլստոյը պապին չի տեսել: Մարիան կյանքից հեռացավ 1830 թվականին, երբ որդին երկու տարեկան էլ չկար: Տոլստոյը մորը չէր հիշում և նույնիսկ նրա պատկերը չէր տեսել, որովհետև մայրը չէր սիրում բնորդել նկարիչներին: Պահպանվել էր միայն սև թղթից ուրավանկարը, որն արվել էր ինը տարեկանում:

Բայցևայնպես, Վոլկոնսկիները ուժեղ ազդեցություն են թողել Տոլստոյի վրա: Պապի ազդեցությունը ազնվականական էր: Յասնայա Պոլյանայում Տոլստոյի ողջ տեսածն ու լսածը նրան էր հիշեցնում. և՛ կալվածքի պլանավորված լանդշաֆտը, և՛ հիմնավոր տնտեսական շինությունները, և՛ երկու կողաշենքերով, իտալական ոճի մեծ տունը, և՛ գեղջուկների ու սպասավորների պատմությունները ծեր տիրոջ մասին: Տոլստոյը հպարտանում էր պապով ու երիտասարդ տարիքում փորձում էր նմանվել նրան: «Դեք» վի-

պակում, որի գլխավոր կերպարի նախատիպը հեղինակն էր, ասվում է. «Ամենասովորական պահպանողականները երիտասարդներն են: Այդպես էր նաև Եվգենիի դեպքում: Հիմա, գյուղում բնակություն հաստատելուց հետո նրա երազանքն ու իդեալն այն էր, որ վերակենդանացնի ոչ թե հոր, այլ... պապի օրոք եղած կենսակերպը»:

Զգիտես ինչու՞ Տոլստոյը շատ էր սիրում այն լեգենդը, որ Վոլկոնսկին ջահել ժամանակ հրաժարվել էր ամուսնանալ իշխան Պոտյոմկինի զարմուհու և սիրուհու՝ Վարենկա Էնգելհարդի հետ. «Ինչի՞ց է որոշել, թե իր ք-ի հետ պիտի պսակվեմ...»:

Եկատերինա II-ի տիրակալության օրոք իշխան Վոլկոնսկին սրընթաց բարձրանում էր ծառայողական սանդուղքով: Դեռ յոթ տարեկանում բանակ գրվելով՝ նա 27 տարեկանում, կապիտանի կոչումով Եկատերինա II-ի շքախմբում էր, Մոզիլյովում՝ ավստրիական կայսր Իոսիֆ II-ի հետ հանդիպման ժամանակ: Մայր, գնդապետ, բրիգադիր, գեներալ-մայոր... 1793 թվականին նա դեսպանի նշանակում ստացավ Բեռլինում: Հետո զորքերում էր Լեհաստանում ու Լիտվայում:

Շնորհագրկումը սկսվեց Պավել I-ի գահակալումով, որն առանձնակի խստությամբ էր վերաբերվում մոր օրոք առաջ քաշված սպաներին: 1797 թվականին, Ազովյան հրացանակրային գնդի շեֆի (հովանավորի) պաշտոնում, Վոլկոնսկին ազատվեց ծառայությունից՝ կայսեր նշանակած տեսչական ստուգմանը ներկայանալուց հրաժարվելու համար: Մարտական գեներալը (մասնակցել էր Օչակովի գրավմանը) վիրավորված էր ցարի անվստահությունից ու հիվանդ էր ձևացել:

«Չեմ կարծում, սակայն, որ դա նրան շատ էր դառնացրել,- նկատում է գրողի որդին՝ Սերգեյ Լվովիչ Տոլստոյը:- Պավելը միայն նրա հետ չի այդպես վարվել, և հասարակության կարծիքը, որին պատկանում էր Վոլկոնսկին, նրա կողմն էր...»:

Սակայն մեկուկես տարուց կայսրը Նիկոլայ Սերգեևիչին վերականգնեց նախկին պաշտոնում: Նրան նշանակեցին Արխանգելսկի զինվորական մահանգապետ, ապա գեներալ-անշեֆի՝ «լրիվ գեներալի» կոչում շնորհեցին: 1799 թվականին նա իր խնդրագրով ազատվեց ծառայությունից:

Նիկոլայ Սերգեևիչ Վոլկոնսկին, ըստ երևույթին, ճիշտ է պատկերված քոռան «Պատերազմ և խաղաղություն» վեպում՝ ծեր իշխան Բոլկոնսկու կերպարում: Ասենք, պահպանված դիմանկարներն էլ համապատասխանում են այդ կերպարին: «Պատերազմ և խաղաղություն» վեպի տարբերակներից մեկում Տոլստոյն այսպես է նկարագրում պապին. «Իշխանն իր տա-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

րիքի համար թարմ տեսք ուներ, գլուխը պատած էր դիմափռոշով, կոկիկ խնամված մաքուր մորուքը կապտին էր տալիս: Թեզանիքների ու կրծքակալների բառիստե ճերմակեղենն արտակարգ մաքուր էր: Մեջքն ուղիղ էր պահում, գլուխը՝ բարձր, իսկ սև աչքերը՝ կեռված, չոր քթի վերև, խիտ, լայն հոնքերի տակից նայում էին հպարտ ու հանդարտ, բարակ շրթունքները հաստատակամ սեղմված էին...»:

Տոլստոյը պապից ժառանգել էր պատվի և պարտքի հասկացությունները, դատողությունների անկախությունն ու ազատամտությունը, ներքին կեցվածքը, որը նրա մեջ զգացվում էր միշտ, հատկապես ուշ տարիքում: Նա պապից էր ժառանգել նաև իր էսթետիզմը: «Նրա բոլոր շինությունները ոչ միայն ամուր ու հարմարավետ, այլև նրբագեղ են», - ընդգծում է Տոլստոյն իր «Հուշերում»: Ժառանգություն ստանալով Յասնայա Պոլյանան և պաշտոնաթողությունից հետո բնակություն հաստատելով այնտեղ՝ Նիկոլայ Մերգելիչը առաջնահերթ խնդիր էր համարել ոչ թե բնակահարմար տուն կառուցելը, այլ կալվածքի լանդշաֆտի վերակառուցումը XVIII դարի «պարադիզի» ոճով: «Վոլկոնսկին որպես անդավաճան ու հետևողական «վոլտերական» համաքայլ էր գնում ժամանակի հետ ու բռնված էր կալվածքի տենդով...,- գրում է Տոլստոյի կյանքի հետազոտող Ն.Ա. Նիկիտինան:- Իր կրթով ու խանդավառությամբ նա վերափոխում էր Յասնայա Պոլյանայի նախկին տեսքը, տալիս ամպիրի ազնվագարն գծեր, որոնք հետագայում այնպես գերել էին թռռանը: Իշխանն իր կալվածքի համույթը հաջողությամբ ներգրել էր բարդ ռելիեֆում՝ օգտագործելով նախկին պլանավորման տարրերը՝ կալվածատան մուտքի «Պրեշպեկտ» ծառուղին, մեծ լճակը, զբոսայգին: Գրողի պապը կառուցապատումը հիմնավոր ու մտածված էր անում... Իշխան Վոլկոնսկին հենց ամպիրի մեջ գտավ այն, ինչ փնտրում էր՝ պարզություն, կարգ ու գեղեցկություն: Նա մարդկանց այն յուրահատուկ տեսակից էր, որոնց մեջ օրինավորությունը զուգորդվում էր գեղագիտական զգացմանը: Նրա մեջ ամեն ինչը, հագուստից մինչև անկեղծ ոճը, a la classique էր»:

Կնոջ՝ Եկատերինա Դմիտրիևնայի (ծնունդով՝ Տրուբեցկայա) մահվանից հետո նրա ծերության մխիթարությունը դարձավ 1790 թվականին ծնված դուստրը: Իշխանուհի Մարյայի կերպարը «Պատերազմ և խաղաղություն» վեպում մասամբ է համապատասխանում նախատիպին: Ճիշտ է, որ նա տգեղ էր, ուստի հայրը, այնքան էլ հույս չունենալով, որ աղջիկը կամուսնանա, նրան դաստիարակում էր «սպարտական» ոճով, ամենօրյա վարժություններ, մարմնամարզություն (Տոլստոյի մայրը բավական լավ բիլյարդ էր խաղում), մաթեմատիկայի և օտար լեզուների պարապմունքներ

(տիրապետում էր ֆրանսերենին, անգլերենին, գերմաներենին, իտալերենին և, ինչն անսովոր էր այդ ժամանակի աղջիկների համար, հրաշալի գրում էր ռուսերեն):

Սակայն վեպում կա երկու կարևոր անհամապատասխանություն:

Եթե դատելու լինենք ըստ վեպի՝ հայր ու աղջիկ Յասնայա Պոլյանայում (վեպում կալվածքը կոչվում է Լերկ լեռներ) փակ ու առանց շփումների կյանքով էին ապրում: Հպարտ ու քմահաճ իշխան Բոլկոնսկին սիրում էր կրկնել. «Եթե ես որևէ մեկին պետք եմ, Մոսկվայից 150 վերստ կկտրի, կհասնի Լերկ լեռներ, իսկ ինձ ոչինչ ու ոչ ոք պետք չէ»: Այդպես էին համարում Տոլստոյի վաղ շրջանի համարյա բոլոր կենսագիրները: Սակայն ավելի ուշ շրջանի հետազոտություններն ապացուցեցին, որ Վոլկոնսկիներն այնքան էլ ճգնափոր չեն եղել: Տոլստոյների տոհմի պատմության գիտակ Տ.Գ.Նիկիֆորովան գրում է. «Հակառակ ձևավորված կարծիքի (մասամբ՝ ըստ «Պատերազմ և խաղաղություն»-ում ծեր իշխան Բոլկոնսկու և իշխանուհի Մարյայի կերպարների) Վ.Ս. Վոլկոնսկու և նրա դստեր կյանքը բնավ մեկուսացած չէր... Իշխան Գմիտրի Սիխայլովիչ Վոլկոնսկու՝ Ն.Ս. Վոլկոնսկու հարազատ զարմիկի օրագրից երևում է, որ ազնվականական զինվորական շրջանակը, գրական-գիտական միջավայրը, որին, ճյուղավորված ազգակցական-ընկերական կապերի շնորհիվ, պատկանում էր օրագրի հեղինակը, հենց նույն մշակութային-պատմական միջավայրն էր, որտեղ անցնում էր հայր և դուստր Վոլկոնսկիների կյանքը»:

Շփումների այդ շրջանակում էին Սերգեյ և Վասիլի Լվովիչ Պուշկինները (մեծ բանաստեղծի հայրն ու հորեղբայրը), Պյոտր Անդրեևիչ Վյազեմսկին, Նիկոլայ Սիխայլովիչ Կարամզինը, Պավել Իվանովիչ Սումարոկովը, Իվան Անդրեևիչ Կռիլովը: Մարիա Նիկոլաևնան մտերիմ էր Գմիտրի Սիխայլովիչ Վոլկոնսկու կնոջ՝ Նատալյա Ալեքսեևնայի (ծնունդով՝ կոմսուհի Մուսինա-Պուշկինա) հետ, հյուրընկալվում էր նրա հոր՝ Ալեքսեյ Իվանովիչ Մուսին-Պուշկինի տանը, ում շնորհիվ մենք ձեռք ենք բերել մի շարք թանկարժեք հին ռուսական ձեռագրեր, այդ թվում՝ «Ասքի Իգորի արշավանք մասին»-ը: Ռազգույլայում գտնվող նրա տանը մասնակցում էր տոնակատարություններին ու ընտանեկան ներկայացումներին: Հակառակ դեպքում դժվար է բացատրել, թե գյուղում «փակված» երիտասարդ կինն ինչպես կարող էր գրել մի քանի շատ լավ բանաստեղծություններ, երկու մեծ արձակ գործ («Ամտառային երկվորյակները» ֆրանսերեն հեքիաթը և «Ռուսական Պամելան կամ Առանց բացառության կանոններ չեն լինում» վիպակը) ու հրաշալի օրագիրը հոր հետ 1810 թվականին Սանկտ Պետեր-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

բուրգ կատարած ուղևորության մասին՝ «Օրագրություն անճանական հիշողության համար» վերնագրով:

Տոլստոյը մոր գրություններում ընդգծում էր «ճշմարտացիությունն ու պարզությունը», որոնք, ինչպես ինքն էր համարում, հատուկ չէին հորը: «Այն ժամանակ նամակներում առանճակի տարածված էին չափազանցված զգացումների արտահայտությունները, անման, պաշտելի, իմ կյանքի ուրախություն, անգնահատելի և այլն. սրանք ամենատարածված մակդիրներն էին հարազատների շրջանում, և որքան փքուն, այնքան՝ կեղծ: Այդ գիծը, չնայած և ոչ այնքան ուժեղ, երևում է հոր նամակներում: Նա գրում է. «Ma bien douce amie« je ne pense qu'au bonheur d'être auprès toi»<sup>3</sup> և այլն: Գժվար թե այդ ամենը լիովին անկեղծ էր: Իսկ մայրս միշտ միատեսակ դիմելաձև է օգտագործում՝ «mon bon ami»<sup>4</sup>, և նամակներից մեկում ուղիղ ասում է. «Le temps me paraît long sans toi« qu'oiqua'a dire vrai« nous ne jouissons pas beaucoup de ta societe es ici»<sup>5</sup> ու միշտ նույն կերպ է ստորագրում «ta devouee Marie»<sup>6</sup>:

Երկրորդ, ավելի էական անճշտությունն այն է, որ Տոլստոյը «Պատերազմ և խաղաղություն»-ում մորը որպես խիստ կրոնապաշտ աղջիկ է պատկերել: Դատելով օրագրից՝ Մարիա Նիկոլաևնան առանճակի աստվածավախությամբ աչքի չէր ընկնում և կրոնի հանդեպ անտարբեր հոր խկական աղջիկն էր: «Նիկոլայ Սերգեևիչը,- գրում է Ս.Լ. Տոլստոյը,- ոչ միայն աստվածավախ չէր, այլև անտարբեր էր ուղղափառության հանդեպ և նույնիսկ, հոգու խորքում, ազատամիտ էր... Դա երևում է նրանից հետո մնացած գրքերի ընտրությունից և նրանից, որ Յասնայա Պոլյանայում որևէ հետք չի մնացել ուղղափառության հանդեպ վերաբերմունքից: Ընդունին, նրա հարստությամբ կարելի էր եկեղեցի կառուցել Յասնայա Պոլյանայում, գյուղում կամ կալվածքում. նա այդ բանը չարեց, այլ տուն ու տնտեսական շինություններ կառուցեց: Իհարկե, նա կատարում էր եկեղեցական ծեսերը՝ համարելով, որ այդպես է պետք, բայց ըստ երևույթին դրան ձևական էր վերաբերվում...»:

3. Իմ քնքուշ բարեկամ, ես շարունակ միայն այն մասին եմ մտածում, թե ինչ երջանկություն է լինել քո կողքին (ֆր.):

4. Իմ բարի բարեկամ (ֆր.):

5. Ինձ համար ժամանակը երկար է ձգվում առանց քեզ, չնայած, ուղիղն ասած, մենք քիչ ենք վայելում քո ընկերակցությունը, երբ այստեղ ես լինում (ֆր.):

6. Քեզ նվիրված Մարիա (ֆր.):



Հնարավոր է, որ Նիկոլայ Սերգեևիչը նույնիսկ մասոն էր: Համենայնդեպս, նա ակնհայտորեն համակրում էր «ազատ որմնադիրներին»: Դա է վկայում նրա գրադարանում 1762 թվականի մասոնական երգարանի առկայությունը՝ մասոնների ստատուտների<sup>7</sup> հետ միասին:

Դժվար է ասել, թե դա որքանով է ազդել նրա թռան աշխարհայացքի վրա: Եկատերինյան դարաշրջանի մասոնները «վոլտերականներ» էին: Իսկ «վոլտերականության» էությունը Եկեղեցու ժխտումն ու նոր բարոյականության ստեղծումն էր՝ հիմնված բանականության գերակայության վրա: Այդ ամենը հարազատ է ուշ շրջանի Տոլստոյին՝ բանականության դիրքերից Եկեղեցու քննադատությամբ: Մակայն մասոնության ծիսական կողմը, որը ծաղրանկարված է «Պատերազմ և խաղաղություն» վեպում, նրան օտար էր նույնքան, որքան կրոնական ծեսերը:

Կրոնի հանդեպ գիտակցված վերաբերմունքով աչքի էր ընկնում նաև իշխանի դուստրը, եթե դատելու լինենք նրա օրագրից: Մինչև Սանկտ Պետերբուրգ հեռավոր ճանապարհ բռնած տասնիննամյա աղջիկը չի վախենում ոչնչից և աշխարհին նայում է բաց ու առանց մախապաշարմունքների: Ճանապարհին եկեղեցական շինություններ նկատելով՝ նա ավելի շատ ուշադրություն է դարձնում դրանց արտաքին տեսքին, քան աղոթելու ցանկություն է ունենում: Եկեղեցական ավանդությունները հարգանք չեն ներշնչում նրան:

«Ամսի 21-ին նորից ճանապարհ ընկանք ժամը յոթին: Մոտ 25 վերստ անցնելով՝ տեսանք շատ լավ նորոգված մի ջրհոր ու երբ հարցրինք, մեզ ասացին, որ սուրբ ջրի ջրհոր է և մոտակայքում մատուռ կա, որտեղ պահվում է Կազանյան Աստվածամոր սրբապատկերը: Լսելով այդ՝ մենք կարգադրեցինք մոտենալ ջրհորին, իջանք կառքից, մի քիչ ջուր խմեցինք ու քայլեցինք դեպի մատուռը. այն շատ լավ է կառուցված և չնայած պարզաճաշակ է, տեսքը հարգանք է ներշնչում: Մենք մտանք, համբուրեցինք սրբապատկերը, ու հայրիկը խոսեց պահակի հետ, որը հաստատեց երկու հարյուր տարի առաջ այդ սրբապատկերի՝ այստեղ հայտնվելու ավանդությունը: Չնայած աներևակայելի է, որ ոչ վաղ ժամանակներում դեռ այդպիսի հրաշքներ կատարվեին, բայց քանի որ ժողովուրդը չի կարող հասու լինել Աստծո գիտակցված պաշտամունքին, այդպիսի ավանդությունները մեծ տպավորություն են թողնում»:

7. Այստեղ՝ կանոնադրություն, կանոնների ժողովածու:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Մա լուսավորյալ ազնվականուհու հայացք է, որը Եկեղեցու հավանությանն արժանացած ժողովրդական ավանդությունը հստակ տարբերում է իր շրջանակի մարդկանց կողմից Աստծո «գիտակցական» ընկալումից:

Պետերբուրգում Ալեքսանդրո-Նևսկի մայրավանք այցելության ժամանակ նա կրկին ուշադրությունը դարձնում է նորակառույց տաճարի արտաքին տեսքին. «Արտակարգ գեղեցիկ ու փառահեղ եկեղեցի է. կառուցված է պարզ ու ազնվական ճաշակով»: Նա հոգեկան անհանգստություն չի զգում Իսակիևյան տաճարի ժամերգությունից ուշանալու համար և ուրախանում է, երբ ժամերգության ժամանակ իրենց այնտեղից տանում է Եկատերինայի ֆրեյլինա Աննա Պետրովնա Մամարինան: Բայց դա չի նշանակում, թե Մարիա Նիկոլաննան աթեիստ էր: Հոր պես նա էլ անհրաժեշտ է համարում Եկեղեցին: Եվ ոչ միայն ժողովրդի, այլև իր ընտանիքի համար:

Մեր օրերը հասած նրա իրերի մեջ պահպանվել են մի ձեռագիր աղոթարան ու սրբապատկեր, ուր պատկերված սրբերը կրում էին նրա որդիների անունները՝ Նիկոլայ Հրաշագործ, Մերգեյ Ռադոնեժցի, Գմիտրի Ռոստովցի ու Լևոն՝ Հռոմի պապ: «Նիկոլենկայի վարքի մատյանում», որը նա վարում էր՝ զբաղվելով սիրելի ավագ որդու՝ Կոկոյի դաստիարակությամբ, գրում է, որ «նրան տարել է եկեղեցի, որ հաղորդակից լինի, նա այնտեղ կանգնել և տարիքի համար իրեն շատ օրինավոր էր պահում, և ամբողջ օրն էլ սիրալիք ու լսող էր»: Սակայն «Մատյանում» ոչ մի նշան չենք գտնի, որ Մարիա Նիկոլաննան որդուն դաստիարակում էր կրոնական ոգով: Նրան ավելի շատ հուզում էին քմահաճության ու վախկոտության արտահայտությունները. վախենում էր բզեզ բռնել...

Եվ արդեն լրիվ անհնար է պատկերացնել, որ Մարիա Նիկոլաննայի մտքով անցնեք աշխարհաթող լինելու հնարավորությունը, ինչը հաճախ այցելում էր Մարյա Բոլկոնսկայային:

Բայցևայնպես, եթե խոսում ենք Տոլստոյի վրա մոր ազդեցության մասին, ապա դա նախևառաջ միստիկական ազդեցություն էր: Տոլստոյը ոչ թե պարզապես սիրում, այլ աստվածացնում էր մորը: Աստծուց հետո մայրը միակ ատյանն էր, որին նա հաճախ դիմում էր աղոթքներում և ասում, որ «այդ աղոթքը միշտ օգնում էր»:

Մոր առեղծվածը մնում է Տոլստոյի հոգևոր կենսագրության գլխավոր հանելուկներից մեկը: Մոր կերպարը անափ տեղ էր գրավում նրա հոգում: Տպավորություն է ստեղծվում, որ այդ կերպարը մի տեսակ «մեղմում էր» կրոնի ընկալման տոլստոյական ռացիոնալիզմը, որ հանգում էր մի պարզ մտքի. այն ամենը, որ մեր գիտակցությունից դուրս է, մեզ համար գոյություն

չունի: Հետևաբար, ինչ իմաստ ունի քննարկել, առավել ևս՝ կուրորեն հավատալ դրան: Եթե մեր գիտակցությունն ի գորու չէ հասկանալու անդրշիրիմյան կյանքն՝ իր դրախտով ու դժոխքով, ապա նրա մասին դատողություններ անելու կարիքն էլ չկա: Կան ավելի մտարկելի բաներ՝ բարին, սերը, մարդկանց օգնելը:

Մակայն մոր համար նա բացառություն էր անում: Բավական է թեկուզ այն, որ աղոթքով դիմում էր մեռած մարդուն և հավատում, որ դա իրեն օգնում է: Ծեր տարիքում նա Մարիա Նիկոլաննային վերաբերում էր իսկական երեխայի պես: «Չեմ կարողանում առանց արցուքների խոսել մորս մասին», - գրում է նա իր օրագրում: «Այս առավոտ շրջում էի այգում և ինչպես միշտ, հիշում մորս՝ «մայրիկին», ում ընդհանրապես չեմ հիշում, բայց որը սուրբ իդեալ է մնում ինձ համար»:

1906 թվականի մարտի տասին նա գրում է. «Ամբողջ օրը՝ բութ, տրտում վիճակ: Երեկոյան կողմ այդ վիճակը փոխվեց խանդաղատանքի - գուրգուրանքի ցանկության - սիրո: Ուզում էի, ինչպես երեխա ժամանակ, փարվել սիրող, կարեկցող մի արարածի և մեղմ արտասվել ու սփոփված լինել: Հիշում եմ բոլոր սիրելի մարդկանց. ոչ մեկը հարմար չէ: Ո՞ւմ փարվես: Փոքրիկ դառնայի ու՝ մորս, ինչպիսին նրան պատկերացնում եմ: Այո՛, այո՛, մայրիկին, ում երբեք այդպես չեմ դիմել, երբ խոսել չգիտեի: Այո՛, նա մաքուր սիրո իմ գերագույն պատկերացումն է, բայց ոչ թե սառը, աստվածային, այլ երկրային, տաք, մայրական: Դրան էր ձգտում իմ լավ, հոգնած հոգին: Դու, մայրիկ, դու գուրգուրիր ինձ: Այս ամենը խելագարություն է, բայց այս ամենը ճիշտ է...»:

Մարիա Նիկոլաննան մորը կորցրել ու կիսով որբացել էր, երբ երկու տարեկան էր: Նույնը պատահեց նաև որդուն՝ Լևին: Ասես կանխազգալով, որ Լևն իր վերջին որդին է, նրան «mon petit Benjamin»<sup>8</sup> էր անվանում (այդ մականունը Տոլստոյը պահպանեց «Մանկության» գլխավոր հերոսի համար): Բենիամին հունարեն նշանակում է «հաջողակ, բախտավոր»։ Միևնույն ժամանակ, Աստվածաշնչում Բենիամինը Հակոբի որդին էր, որի կինը՝ Ռախիլը մահացավ այդ տղային ծննդաբերելիս՝ նրան կոչելով Բենոնի՝ «ցավի զավակ»։ Տոլստոյը սիրում էր հիշել, որ Կոկոյից հետո մոր երկրորդ սիրելին ինքն էր՝ կրտսերը:

Անհասկանալի է, թե Տոլստոյը մոր օրագիրն ինչու ձեռք բերեց այդքան ուշ՝ 1903 թվականին, նրա մահվանից ավելի քան 70 տարի անց: Ըստ

8. Իմ փոքրիկ Բենիամին (Ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

երևույթին, պարզապես տեղյակ չէր եղել օրագրի գոյության մասին: Սակայն հատկանշական է, որ այդ տեսրերը, Մարիա Նիկոլաննայի այլ թղթերի հետ... թափված էին ձեռնահարկում. դրանց որևէ նշանակություն չտալով՝ այնտեղ էր լցրել Տոլստոյի որդին՝ Լև Լվովիչը, երբ հյուսիսային կողմերը վերակառուցում էր իր և ջահել շվեդուհի կնոջ՝ Դորայի համար: Եվ միայն Սոֆյա Անդրեևնան էր ուշադրություն դարձրել այդ տեսրերին ու դրանք ցույց տվել ամուսնուն:

Տոլստոյի վերաբերմունքն այդ տեսրերի հանդեպ նույնպես լիովին հասկանալի չէ: Այդ թղթերը ձեռք բերելուց ընդամենը երկու ամիս անց Տոլստոյը դրանց մի մասն ուղարկեց Սանկտ Պետերբուրգի Հանրային գրադարան՝ առանց պահպանման պայմանագրերի մասին պայմանավորվելու: Մյուս մասը՝ նամակները, «Նիկոլենկայի վարքի մատյանը» և օրագրի վերջնական տեքստը, պահեց իր մոտ, որովհետև այդ ժամանակ կենսագիր Պավել Իվանովիչ Բիրյուկովի խնդրանքով պատրաստում էր «Հուշերը»: Սակայն «Հուշերի» ամենասկզբում Տոլստոյը գրում է, որ մոր իրական պատկերը չասենք բոլորովին չէր հետաքրքրում իրեն, բայց գլխավորը չէր նրա մասին իր պատկերացումներում: Նա գրում է, որ չի կարող պատկերացնել նրան որպես «իրական մարմնավոր արարած» և «մասամբ ուրախ է դրա համար, որովհետև նրա մասին իմ պատկերացումներում առկա է միայն նրա հոգևոր կերպարը, և ամենը, որ գիտեմ նրա մասին, հրաշալի է...»:

Դատելով այն ամենից, ինչ մեզ հայտնի է Մարիա Նիկոլաննայի մասին, նրա կյանքում իսկապես համարյա մութ կետեր չեն եղել: Բայց և հոգևոր իդեալ չէր նա: Ավելի շուտ կարելի է ասել, որ (հնարավոր է՝ ոչ գեղեցիկ արտաքինի պատճառով) հաջողությունների էր հասել մտավոր ու գեղարվեստական զարգացման մեջ: Սակայն դա բավարար պատճառ չէ նրան պաշտելու համար: Իսկ մնացած առումներով Մարիա Նիկոլաննան իր ժամանակի սովորական օրիորդ էր: Հիշենք, թեկուզ, ռոմանտիկ ընկերությունը ֆրանսուհի Լուիզա Գենիսենի հետ, որով արտահայտվում էր «սիրո նրա կանացի պահանջմունքը», ինչպես զգուշորեն գրում է Ս.Լ. Տոլստոյը: Այդ ընկերությունն ավարտվեց սկանդալով, որովհետև հոր մահվանից հետո Մարիա Նիկոլաննան ցանկություն էր հայտնել կարգավորելու ընկերուհու քրոջ՝ Մարիա Գենիսենի ընտանեկան երջանկությունն ու նրան էր նվիրել ժառանգության մի մասը: Ինչպես իր օրագրում գրում է Դ.Մ. Վոլկոնսկին, նա «վաճառել էր մերձնոսկովյանը» և «փողերն այդ մամզելկայի անունով հանձնել գրավատուն»:

Դրան հակառակվեցին ազգականները, դժգոհ էր նրա փեսացու Նիկոլայ Իլյիչ Տոլստոյը, բայց Մարիա Նիկո-

լաևնան համառ էր: Ասենք, ամուսնությունից հետո նրա զգացմունքները Լուիզա Գեմիսենի հանդեպ սառան:

Ս. Լ. Տոլստոյը ենթադրում է, որ Մարիա Նիկոլաևնան Լևի վրա կողմնակի կրոնական ազդեցություն է թողել ավագ որդու՝ Նիկոլայի և «կանաչ ձողիկի» մասին նրա ֆանտաստիկ պատմության միջոցով, որը թաղված է անտառում, այնտեղ, որտեղ գրողը կտակել էր թաղել իրեն: Այդ փայտիկի վրա իբր գրված է մարդկային երջանկության գաղտնիքը: Տոլստոյը թանկ էր գնահատում այդ լեզենդը ու սիրում էր հիշել եղբոր՝ Նիկոլենկայի «մրջյուն եղբայրների» խաղը: Ըստ երևույթին դրանց նախատիպերը «մորավական եղբայրներն» էին՝ XV դարի չեխ բողոքականները, բարեփոխիչ Յան Հուսի հետևորդները: Նրանց մասին Նիկոլենկան լսել էր մորից, որը, ինչպես Տոլստոյը գրում է «Հուշերում», «գրավիչ հեքիաթներ պատմելու մեծ վարպետ էր»:

Այստեղ մի բարդ խճանկար է հավաքվում: Պապի մասոնական հրապուրանքները, «մորավական եղբայրները», ընդհանուր միստիցիզմը Ալեքսանդրյան դարաշրջանի, ուր դաստիարակվել էր Մարիա Նիկոլաևնան, նրա տոհմական կապերը... Նրա քեռի Նիկոլայ Նիկիտիչ Տրուբեցկոյը հայտնի մասոն-ռոզենկրեյցեր էր, երկու եղբայրները՝ Պյոտրն ու Յուրին, նույնպես մասոններ էին: Չարմիկ Նիկոլայ Նիկոլաևիչ Տրուբեցկոյը կաթոլիկություն էր ընդունել:

Սակայն դա բավարար հիմք չէր մորը սրբապատկեր դարձնելու համար: Ինչ-որ խոր գաղտնիք կա այդ ամենի մեջ՝ Տոլստոյի աշխարհայացքի հանելուկը: Իսկ գուցե (և դա ամենահավանականն է), մանկությունից չէր բավականացնում մայրական սիրո ջերմությունը: Պատահական չէ, որ «Մանկություն» վիպակում հեղինակը երկարացնում է մոր կյանքը: Նա մահանում էր, երբ գլխավոր հերոսը միանգամայն ունակ է գիտակցելու այդ կորուստը: Եվ ճիշտ այդպես էր Տոլստոյը երևակայում մայրիկի կյանքը մինչև խոր ծերություն՝ դրանով իսկ երկարացնելով իր մանկությունը:

### *Տոլստոյները*

Գրողի հայրական պապը՝ Իլյա Անդրեևիչ Տոլստոյը, առաջին հայացքից՝ որևէ լուրջ ազդեցություն չի ունեցել թոռան վրա: Բայցևայնպես նախատիպ է հանդիսացել «Պատերազմ և խաղաղություն» վեպի ամենահամակրելի հերոսներից մեկի՝ ծեր կոմս Իլյա Անդրեևիչ Ռոստովի համար: Տոլստոյը նույնիսկ անուն-հայրանունը չի փոխել:

«Հուշերում» Տոլստոյը պապին «սահմանափակ» է կոչում, իսկ մտերիմ-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

ների հետ գրույցում նրան պարզապես հիմար էր գնահատում: «Պատերազմ և խաղաղության» կոնսպեկտում այսպիսի բնութագիր է տրվում «հիմար, բարի կոմս Ռոստովին»:

«Զայքաված տնտեսություն, մեծ ունեցվածք, անփութություն, զվարճանքներ, անհետևողականություն, հիմար շքեղություն:

Հանրային: Սնափառություն, բարեհոգություն, հարգանք բարձրատոհմիկների հանդեպ:

Միրային: Համաչափ վերաբերմունք կնոջը, երեխաներին, աստվածավախ ու երբեք անհավատարմություն:

Բանաստեղծական: Ահռելի ու բարեհոգի հյուրընկալության պոեզիա: Դեմ չէ խմելուն: Երաժշտության ձիրք:

Մտավոր: Հիմար, ընդհանրապես անուս»:

Ահռելի ու բարեհոգի հյուրընկալության պոեզիա: Վեպի կոնսպեկտում դրա մասին այսպես է ասվում. «Բոլորին քարշ է տալիս իր մոտ»: Իլյա Անդրեևիչը, այն ժամանակվա լեզվով ասած, սովորական վատնող էր: Չափազանց շռայլ էր ապրում՝ հաշվի չառնելով միջոցները: Տոլստոյի կինը՝ Սոֆյա Անդրեևնան ուրիշների պատմածով նրա մասին գրում էր. «Կոմս Իլյա Անդրեևիչը ծայրահեղ ճոխ կյանք էր վարում, ստեղծել էր բերել տալիս Արխանգելսկի նահանգից, ապիտակեղենը լվանալու էր ուղարկում Հոլանդիա, տնական թատրոն ու երաժշտություն էր պահում և ամեն ինչ մախեց»:

«Բեյովի գավառի նրա Պոլյանի կալվածքում, ոչ թե Յասնայա Պոլյանայում, այլ Պոլյանիում,- գրում է Տոլստոյը «Հուշերում»,- տևական ու անընդհատում խրախճանք էր՝ ներկայացումներ, պարահանդեսներ, ճաշկերույթներ, չմշկասահք, ինչը, մանավանդ նակատի ունենալով լոմբեր ու վիստ խաղալու մեծ հակումը՝ խաղալ չիմանալով, բոլորին պարտք տալու և նվիրատվություն անելու պատրաստակամությունը, և գլխավորը՝ խարդախություններով ու կապալառությամբ գործարքները, ավարտվեց նրանով, որ նրա կնոջ խոշոր կալվածքը այնպես էր խճճվել պարտքերի մեջ, որ ապրուստի միջոց չկար, ու պապս ստիպված էր խնդրել ու ստանալ, ինչը նրա կապերի առկայությամբ շատ հեշտ էր, Կազանի նահանգապետի պաշտոնը»:

1815 թվականին Տոլստոյները տեղափոխվեցին Կազան, որտեղ մեկ շաբաթ անց ահռելի հրդեհ եղավ, որը ոչնչացրեց քաղաքի կեսը: Ուրիշ ոչ մի նշանակալի իրադարձություն նրա նահանգապետության տարիներին չի կատարվել: Նրան չհաջողվեց ծառայության ընթացքում շտկել նյութական վիճակը, որովհետև կնոջ՝ Պելագեյա Նիկոլանայի հետ (ծնունդով՝ Գորչակովա) Կազանում էլ շարունակում էին նույն կենսակերպը, բայց արդեն քա-

դաքային թափով: Արդյունքում՝ Իլյա Անդրեևիչի պարտքը հասավ կես միլիոն ռուբլու: Բոլոր կալվածքները վերգրված էին, իսկ դրանցից ստացվող եկամուտները սկսեցին փոխանցվել Խնամատարության վարչություն՝ բաժնետերերին վճարելու համար:

1820 թվականին նրան ծառայողական չարաշահումների մեղադրանք ներկայացվեց: «Պապս,- «Հուշերում» հայտնում է Տոլստոյը,- ինչպես ինձ պատմել են, կաշառք չէր վերցնում, բացի, այսպես ասած, կապալառությունից, ինչն այն ժամանակ ընդունված սովորույթ էր, և բարկանում էր, երբ առաջարկում էին, բայց տատիկս, ինչպես պատմեցին, ամուսնուց թաքուն կաշառք ընդունում էր»:

Դա հաստատվում է նաև փաստաթղթերով: Նահանգապետի տնօրինության տակ գտնվող գումարների մանրակրկիտ ստուգումը տասը հազար ռուբլուց պակաս գումարի պակասորդ հայտնաբերեց: Բայց դա էլ, ինչպես համարում է Տոլստոյի կենսագիր Նիկոլայ Նիկոլևիչ Գուսևը, ավելի շուտ «ոչ թե վատնման, այլ համընդհանուր անկարգության ու խառնաշփոթի հետևանք էր»: Բայց եթե նույնիսկ Իլյա Անդրեևիչը վատնած կամ յուրացրած էլ լիներ այդ փողը, միևնույն է, դա ոչ մի կերպ չի կարող համեմատվել այն գումարի հետ, որի համար դատի էին տվել Կազանի նահանգապետի պաշտոնում նրա նախորդին՝ Պյոտր Անդրեևիչ Նիլովին, որը երկու տարվա ընթացքում վատնել էր վաճառականական խնամակալություններին պատկանող 100 հազար ռուբլի:

Իլյա Անդրեևիչը չապրեց մինչև դատը: Պաշտոնաթողության հրամանը ստանալուց առաջ վայր դրեց լիազորություններն ու մահացավ՝ չհասցնելով որևէ բացատրություն տալ ներկայացված մեղադրանքների կապակցությամբ:

Վարկած կա նրա բռնի մահվան մասին, որն առաջարկել է կազանցի պատմաբան Նիկոլայ Պետրովիչ Ջագոսկինը: Բայց ավելի հավանական է, որ նա պարզապես չի դիմացել 62 տարեկանում իր վրա թափված խայտառակությանը, բացի այդ բարոյապես ճնշված է եղել ընտանիքի ապագայի համար տագնապով:

Իսկ տագնապելու պատճառ կա՞ր... Նրա միակ որդին՝ Նիկոլայը, մինչև Մարիա Վոլկոնսկայայի հոտ ամուսնանալը ոչ թե պարզապես աղքատ էր, այլ այնպես էր խճճվել վախճանված ծնողի պարտքերի մեջ, որ 1821 թվականին ստիպված էր ընդունել մոսկովյան զինվորական որբանոցի «վերակացուի օգնականի» պաշտոնը: Նրա՝ պաշտոնաթող գնդապետի համար անշուշտ նվաստացուցիչ էր այդ պաշտոնը: Նա համաձայնեց դրան միայն

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

պարտքերի համար բանտ չնստելու համար, որովհետև պետական ծառայողների նկատմամբ այդ պատիժը չէր կիրառվում:

Ընդամին, Նիկոլայ Իլյիչի երիտասարդությունը համարյա հերոսական էր եղել: Եվ Լև Նիկոլաևիչը չէր մեղանշում ճշմարտության դեմ՝ «Պատերազմ և խաղաղություն» վեպում հորը Նիկոլայ Ռոստովի հրաշալի կերպարում պատկերելով:

Ընտանիքի միակ տղան լինելով՝ նա ծնողների, հատկապես մոր պաշտամունքի առարկան էր: Նրանից բացի, տանը երկու քույրերն էին՝ Ալեքսանդրան ու Պոլինան, ինչպես և հեռավոր զարմուհին՝ երկկողմանի որբ Տանեչկա Յորգոլսկայան: Nikolas-ը դաստիարակվում էր միանգամայն ճորտատիրական ժամանակի ոգով: 16 տարեկանում, «նրա առողջության համար», ինչպես գրում է Տոլստոյը, դեռահասսին կապեցին Ալեքսանդրա քրոջ գեղջկուհի նաժիշտի հետ: «Այդ կապից ծնվեց Միշենկա որդին, որին փոստատար կարգեցին, և նա հոր կենդանության օրոք լավ էր ապրում, բայց հետո շեղվեց ճանապարհից ու հաճախ դիմում էր մեր՝ հասուն եղբայրների օգնությանը: Հիշում եմ տարակուսանքի այն տարօրինակ զգացումը, երբ ընչազրկության մեջ հայտնված այդ եղբայրս, որը շատ նման էր հորս (բոլորիցս ավելի), մեր օգնությունն էր խնդրում ու երախտապարտ էր 10, 15 ռուբլու համար...»:

Նիկոլայը վեց տարեկանում ծառայության գրվեց կոլեգիական մատենավարի աստիճանով, իսկ 17 տարեկանում նահանգային քարտուղարի աստիճան ստացավ՝ ըստ XII դասային ցուցակի: Դա 1811 թվականին էր: Սակայն հաջորդ տարի, Նապոլեոնի ներխուժման նախօրեին, նա, «չնայած ծնողների վախին ու անհամաձայնությանը», ինչպես գրում է Տոլստոյը «Հուշերում», զինվորական ծառայության անցնելու որոշում է կայացնում: Թեև այդ ժամանակ դեռ գործում էր Ֆրանսիայի հետ Տիլզիտում 1807 թվականին կնքած խաղաղության պայմանագիրը, Մոսկվայում արդեն լուրեր էին պտտվում անխուսափելի պատերազմի մասին:

Այնպես պատահեց, որ նա Ռուսաստանում չմասնակցեց ոչ մի ճակատամարտի: Սակայն 1813-1814 թվականների Արտասահմանյան արշավանքում Նիկոլայ Իվանովիչն իրեն արիաբար դրսևորեց: Նա մասնակցել է բոլոր ճակատամարտերին՝ գեներալ Անտոն Իվանովիչ Գորչակովի՝ իր մորեղբոր համհարզի պաշտոնում: «Թշնամուն Դրեզդեն քաղաքի մատույցներում կանգնեցնելու և Էլբա գետի գետանցման համար» պորուչիկի աստիճան ստացավ: Լայպցիգի մոտ Ժողովուրդների ճակատամարտին մասնակցելու համար ստացավ շտաբս-ռոտմիստրի կոչում: Պետերբուր-



զից վերադառնալիս, ուր ուղարկվել էր շտապ հաղորդագրությամբ, նրան գերի վերցրին... Ռուսական բանակը դիմավորեց արդեն Փարիզում:

Մի ուշագրավ մանրամասն ընտանեկան ավանդություններից, որը ներկայացնում է այն ժամանակ գերված ռուս սպաների նկատմամբ վերաբերմունքի պատկերը. փարիզյան գերության մեջ Ն.Ի. Տոլստոյն ապրում էր ոչնչի պակաս չզգալով, շնորհիվ նրա, որ սպասյակը հասցրել էր սապոզի մեջ թաքցնել տիրոջ ողջ ոսկին:

Նիկոլայ Իլյիչի վերաբերմունքը պատերազմի հանդեպ գերծ էր պաթոսից ու հերոսականությունից: Ռազմաճակատից ուղարկված նրա նամակները կանխում են պատերազմի՝ որպես մարդկային ողբերգության վերաբերյալ որդու հայացքները: 1812 թվականին նա նամակով հարազատներին հայտնում է. «Ոչ մի ճակատամարտի չմասնակցելով և շուտով մասնակցելու հույս չունենալով՝ ես տեսել եմ այն ողջ սարսափելին, որ ունի պատերազմը. տեսել եմ տասը վերստ տարածությամբ անշունչ մարմիններով ծածկված վայրեր. դուք չեք կարող պատկերացնել, որքան էին ընկած Սմոլենսկի ճանապարհին...»: «Ռազմական տրամադրությունս խիստ թուլացել է,- տուն է գրում մեկ տարի անց,- մարդկային ցեղի ոչնչացումն արդեն առաջվա պես չի գրավում ինձ, և մտածում եմ անվտանգության մեջ ապրելու մասին՝ սիրելի կնոջս հետ ու մեկը մեկից մանր երեխաներով շրջապատված»:

1819 թվականին Ն. Ի. Տոլստոյը պաշտոնաթող եղավ գնդապետի կոչումով: Ըստ երևույթին զինվորական ծառայությունը լրջորեն քայքայել էր նրա առողջությունը: Կազանի զինվորական հոսպիտալի գլխավոր բժշկի վկայությամբ նա «տառապում էր կրծքի թուլությամբ՝ թոքախտի բոլոր ակհայտ նշաններով, մրսածության հազով՝ զուգորդված արմահոսությամբ, ու մարմնի բոլոր անդամների վաղեմի ու շարունակական տնքոցով...»:

Հոր մահից հետո Նիկոլայ Իլյիչին, ինչպես «Հուշերում» գրում է նրա որդին, «մնացել էր բոլոր պարտքերի չափով ժառանգություն ու ծեր, շքեղության սովոր մայրը...»: Ամուսնությունը Մարիա Նիկոլաննա Վոլկոնսկայայի հետ ստիպողական քայլ էր ինչպես նրա, այնպես էլ կնոջ կողմից: 1822 թվականին, երբ եղավ հարսանիքը, Մարիա Նիկոլաննան մոտենում էր 32 տարեկանին: Դա, ժամանակակից լեզվով ասած, նրա «վերջին հնարավորությունն» էր: Բացի այդ, չնայած տղամարդկային դաստիարակությանը, նա չէր կարողանում կառավարել հորից ստացած ժառանգությունը: Իսկ ահա Նիկոլայ Իլյիչը, ի տարբերություն հոր, լավ կալվածատեր դուրս եկավ: Նա կառուցեց-վերջացրեց Յասնայա Պոլյանայի մեծ կալվածատունը, ստանձնեց տնտեսության բոլոր հոգսերը ու վարում էր հոր պարտքերի

ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

անվերջանալի գործերը և ի վերջո հետ գնեց մայրական Նիկոլսկոյե-Վյա-զեմսկոյե կավածքը՝ Տուլայի նահանգի Չեռնսկի գավառում: Հետ գնեց կնոջ փողերով: Բայց իզուր չի «Պատերազմ և խաղաղություն» վեպում հանդիպում Նիկոլայ Ռոստովը «գոհում է իրեն» արտահայտությունը: Պելագեյա Նիկոլանան հարսին անարժան էր համարում իր որդուն՝ ընդ որում շարունակելով Յասնայա Պոլյանայում վարել նույն շքեղ կյանքը, որ վարում էր ամուսնու օրոք:

Միրոն էին իրար Նիկոլայ Իլյիչն ու Մարիա Նիկոլանան՝ մեծ հարց է: Ամեն ինչ ազգականներն էին որոշել: Մինչև նշանադրությունը նրանք նույնիսկ ծանոթ չէին, չնայած Մարիա Նիկոլանան հեռավոր քույր էր գալիս փեսացուին: Սակայն Լև Նիկոլաևիչի կարծիքը, որ մայրը հորը սիրել է «ավելի շատ որպես ամուսնու և, գլխավորը, իր երեխաների հոր, բայց սիրահարված չի եղել նրան», հազիվ թե արդարացի է: Մարիա Նիկոլանան այդ տարիքում սիրո մեծ կարոտ ուներ ու պատրաստ էր նույնիսկ հեռակա սիրահարվել փեսացուին: Պահպանվել է ամուսնուն ուղղված նրա բանաստեղծությունը, որը շատ բան է ասում.

*Օ, դու, ում չեմ տեսել,  
Բայց չնայած դրան, սիրում եմ,  
Ում հեռակա եմ ճանաչել,  
Քեզ եմ հղում իմ բանաստեղծությունը:*

*Ծանոթությունն այս սովորական չէ,  
Իհարկե, այդպես ու անկասկած է,  
Բայց քո մասին, բարեկամս, ասում են  
Չես սիրում մեր դասը նորածն:*

*Սակայն մենք ճանաչում ենք իրար,  
Չնայած իրար չենք տեսել,  
Վաղուց ենք մենք ձգտում հանդիպման  
Ու պարապ գրույցի՝ քեզ հետ:*

*Ինչ արած, չի լինում այդպես էլ  
Թաթախել գրիչը թանաքում,  
Ու ողջը, որ մտքիդ է հասել,  
Գրառել ձեռագրով աննկուն:*

Այս բանաստեղծությունն անհայտ էր Տոլստոյին: Առավել ևս զարմանալի է, որ «Պատերազմ և խաղաղություն» վեպի վերջաբանում նա, չնայած և ոչ ակնհայտ, բայց համեմայնդեպս թափանցիկ ակնարկում է իշխանուհի Մարյայի և Նիկոլայ Ռոստովի սիրահարվածությունը. «Նրանք մի քանի վայրկյան լուռ նայում էին իրար: Եվ հեռավորը, անհնարինը հանկարծ մոտիկ դարձավ, հնարավոր և անխուսափելի»:

Ակնհայտ է մեկ բան. Մարիա Նիկոլանան և Նիկոլայ Իլյիչը երջանիկ էին ընտանիքում: Ընտանեկան երջանկությունը երկար չտևեց, բայց հինգ երեխա ունեցան, չորս տղա ու Մաշա դուստրը: Հետաքրքիր է, որ առաջին երեխան ստացավ հոր անունը, իսկ վերջինը՝ մոր: Լեզենդը, որ Մարիա Նիկոլանան առաջին որդուն անվանակոչել է ի պատիվ իր առաջին, վաղ մահացած փեսացուի՝ Նիկոլայ Գոլիցինի, ոչնչով չի հաստատվում: Բայց Տոլստոյը հավատում էր դրան, ճիշտ է, երկար ժամանակ համարելով, որ Գոլիցինին Լև էին կոչում, հետևաբար ինքը նրա անունն է կրում:

Ամուսինների սիրային նամակագրությունը բաժանումների ժամանակ, նրանց սենտիմենտալ զրոսանքները Նիժնի այգում կասկած չեն թողնում, որ հաշվարկով ամուսնությունը շուտով վերածվել է սիրով ամուսնության: Ի դեպ, Նիկոլայ Իլյիչը հաճախ էր մեկնում կալվածքից, բացի այդ, աչքի էր ընկնում ալկոհոլի անչափավոր օգտագործումով: Եռանդուն տնտեսական գործունեության ու հոր «ժառանգության» շուրջ մշտական դատական հոգսերի հետ՝ դա չէր կարող չազդել նրա առողջության վրա: Բացի այդ, երեսնամեթով զբաղվելու ժամանակ չէր մնում:

Խոսելով հոր հանդեպ սիրո ու նրանով հիանալու մասին՝ Տոլստոյը, չգիտես ինչու, չի նշում բնավորության որևէ գիծ, որ Նիկոլայ Իլյիչից անցած կլինեի իրեն: Եվ ավագ եղբոր՝ Նիկոլայի տղամարդկային խառնվածքն էլ ոչ մի կերպ չի կապում հոր ազդեցության հետ: (Բայց չէ՞ որ երբ հայրը մահացավ, Նիկոլայն արդեն 14 տարեկան էր): Միայն մոր: «Երկունս էլ բնավորության՝ ինձ շատ սիրելի մի հատկություն ունեին, որը ենթադրում եմ մորս նամակներից, բայց տեսա եղբորս մեջ՝ անտարբերությունը մարդկանց կարծիքի նկատմամբ և համեստությունը, որը հասնում էր այնտեղ, որ նրանք ջանում էին թաքցնել մտավոր, կրթական ու բարոյական առավելությունները, որ ունեին այլ մարդկանց հանդեպ»:

Մարդկանց կարծիքի հանդեպ անտարբերությունը Տոլստոյը նկատում է նաև մյուս ավագ եղբայրների մեջ: Դա այն է, ինչից ինքը երիտասարդ տարիներին զուրկ էր՝ ջանալով նմանվել շատերին, այդ թվում և եղբայրներին: Դրա պատճառն այն չէ՞ր, արդյոք, որ մայրը չհասցրեց նկատելի ազ-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

դեցություն ունենալ փոքր որդու վրա, իսկ հայրը պարզապես նրանով զբաղվելու ժամանակ չուներ, ինչպես և մյուս տղաներով:

Միակ բանը, որ նրանք հաստատ ժառանգել էին հորից, որսորդության կիրքն էր:

Հոր մահվան պատճառ դարձավ Պրիգոլո կալվածքը, որը նրան բաժին էր հասել խիստ «վիպական» հանգամանքներում: Տոլստոյը «չուշերում» այսպես է նկարագրում այդ իրադարձությունը.

«Չմռան գիշեր էր, թեյն արդեն խմել էինք, ու շուտով մեզ պիտի տանեին քնելու, աչքերս էլ փակվում էին, երբ հանկարծ սպասավորների սենյակից հյուրասենյակ, որտեղ բոլորս նստած էինք, և միայն երկու մոմ էր վառվում, ու կիսախավար էր, երկարաճիտ կոշիկների արագ քայլով բաց դռներով փափուկ ներս մտավ մի մարդ ու սենյակի մեջտեղը կանգնելով՝ ծնկի իջավ: Երկար ծխափողով ծխամորճը, որ ձեռքին էր, ընկավ հատակին, ու կայծերը սփռվեցին շուրջը՝ լուսավորելով ծնկաչոք մարդու դեմքը. Տեմեշովն էր: Չեմ հիշում՝ չոքելով հորս ինչ ասաց Տեմեշովը, չլսեցի էլ, միայն հետո իմացա, որ հորս առաջ ծնկի էր իջել, որովհետև հետը բերել էր իր ապօրինի աղջկան՝ Դունեչկային, որի մասին հորս հետ նախկինում պայմանավորվել էր, որ հայրս նրան դաստիարակության վերցնի իր երեխաների հետ: Այդ ժամանակից մեզ մոտ հայտնվեց լայն, պեպեմոտ դեմքով այդ աղջիկը, իմ հասակակից Դունեչկան, իր դայակի՝ Եպրաքսիայի հետ, որը բարձրահասակ, կնճռապատ պառավ էր, կախ ընկած կզակով, ինչպիսին հնդկահավերն են ունենում, կատիկով, որի մեջ գնդիկ կար, ու նա մեզ թույլ էր տալիս այն շոշափել»:

Պիրոգովո կալվածքը Նիկոլայ Իլյիչին էր փոխանցել նրա հեռու եղբայր Ալեքսանդր Ալեքսեևիչ Տեմյաշևը՝ մահվանից առաջ, բավական շահավետ կերպով, պայմանով, որ իր ապօրինի դուստր Դունյան մինչև չափահասություն կդաստիարակվի Տոլստոյների տանը: Պիրոգովոյի մասին ասում էին, որ դա «ոսկե հատակ» է: Այնտեղ ձիաբուծարան կար, այրադագ ու 472 ճորտ:

Բայց երբ Տիմյաշևը կաթվածահար եղավ, նրա քույր և օրինական ժառանգորդ Նատալյա Ալեքսեևնա Կարյակինան դատական գործ բացեց Նիկոլայ Իլյիչի դեմ: Դատավարությունը տևեց երկար ու խիստ ավարտ ունեցավ:

1837 թվականի հունիսի տասնիննին Ն.Ի.Տոլստոյը պիրոգովյան գործերի հետ կապված ինչ-որ անհետաձգելի պատճառով Մոսկվայից շտապ մեկնեց Տուլա: Մոսկվայի ու Տուլայի միջև տարածությունը (160 վերստից

ավելի) հաղթահարեց մեկ օրից պակաս ժամանակում: Հունիսի 21-ին այցելեց մի քանի պետական հաստատություն, հետո գնաց Տեմյաշևի բնակարան, և մի քանի մետրի վրա ընկավ ու մահացավ: Նիկոլայ Իլյիչի մահվան մեջ կասկածում էին նրա ծառաներին, որովհետև մահացածի մոտ փող չգտան, իսկ փող շատ պիտի լիներ: Սակայն վարկածը չհաստատվեց: Բժիշկները, մարմինը զննելով, հայտնաբերեցին, որ Նիկոլայ Իլյիչը վախճանվել է «արյան հարվածից»:

Հոր մահը ուժգին տպավորություն թողեց Լյովչկայի վրա: Եվ դա արդեն իրական ապրում էր, ի տարբերություն «Մանկություն» վիպակում պատկերված մոր մահվան, որը Տոլստոյը չէր կարող հիշել:

Տոլստոյը Պ.Բ. Բիրյուկովին ասել է, որ այդ վախճանը առաջին անգամ իր մեջ կրոնական սարսափի զգացում է առաջացրել կյանքի և մահվան հարցերի հանդեպ: Քանի որ հայրը տանը չէր մահացել, կրտսեր որդին երկար ժամանակ չէր կարողանում հավատալ, որ նա արդեն չկա: Գրանից հետո դեռ երկար ժամանակ, Մոսկվայի փողոցներում նայելով անծանոթ մարդկանց, Լյովան ոչ միայն հույս ուներ, այլև համարյա համոզված էր, որ ահա-ահա կհանդիպի հորը: Եվ այդ հույսն ու մահին չհավատալը նրա մեջ «խանդաղատանքի առանձնահատուկ զգացում» էին արթնացնում:

Գուցե մահին չհավատալը հենց հոր գլխավոր ազդեցությունն էր:

### *Հորաքույրները*

«Հուշերում» Տոլստոյը գրում է, որ ամենակարևոր կերպարը իր դաստիարակության մեջ («իմ կյանքի վրա ունեցած ազդեցության առումով») եղել է հորաքույր Տատյանա Ալեքսանդրովնա Յորգոլսկայան:

Բայց դա ինչպե՞ս կարող էր պատահել: Չէ՞ որ նա հեռավոր ազգական էր: Յորգոլսկայայի հայրը նրա հոր գծով տատիկի՝ Պելագեյա Նիկոլաննա Տոլստայայի եղբայրն էր:

Տանելիա Յորգոլսկայայի հայտնվելը Իլյա Անդրեևնայի և Պելագեյա Նիկոլաննայի ընտանիքում նկարագրված է «Հուշերում». «Նա և քույրը՝ Լիզան, ծնողների մահից հետո փոքրիկ աղջնակներ ու աղքատ ազգականներ էին: Եղբայրներ էլ ունեին, որոնց ազգականներն ինչ-որ կերպ տեղավորել էին, իսկ աղջիկների դաստիարակությամբ որոշեցին զբաղվել Չեռնուկի գավառի իրենց շրջանում հայտնի և իր ժամանակին իշխանատենչ ու ազդեցիկ Տատյանա Սեմյոնովնա Սկուրատովան ու իմ տատիկը: Թերթիկներ ոլորեցին, դրին սրբապատկերի տակ, աղոթելով հանեցին, ու Լիզենկան բաժին ընկավ Տատյանա Սեմյոնովնային, իսկ սևուկը՝ տատիկիս»:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

«Սուկը» Տանեչկան էր, Տուանետը, ինչպես նրան անվանում էին Տոլստոյները:

«Պատերազմ և խաղաղություն» վեպի հերոսների ու նախատիպերի տեղաբաշխաման բարդ համակարգում Տանյային հատկացված է Ռոստովների ընտանիքի սանուհու՝ Սոնյայի համեստ դերը: Դա վեպի ամենաանշան կանացի կերպարներից է: Նրանով հնարավոր չէ դատել իսկական Տատյանա Ալեքսանդրովնայի մասին: Սակայն ճիշտ է, որ ինչպես Սոնյան էր սիրահարված Նիկոլայ Ռոստովին, և Նիկոլայ Ռոստովը սիրում էր նրան, այդպես էլ Տոլստոյի հայրը՝ Նիկոլայ Իլյիչն ու Տատյանա Ալեքսանդրովնան մանուկ հասակից սիրում էին իրար:

Տատյանա Ալեքսանդրովնան իրականում ձրիակյաց էր, քեկուզև ոչ օտար ընտանիքում: Նա մեծանում էր Նիկոլայ Տոլստոյի հետ և, ինչպես հաճախ է պատահում վեպերում, սիրահարված էր նրան: Նիկոլայ Տոլստոյն էլ էր սիրահարված զարմուհուն, ընդ որում, շատ ավելի ուժեղ, քան Նիկոլայ Ռոստովն իր աղքատ ազգականուհուն: Նիկոլայ Իլյիչը ստիպված էր չսիրելով, հաշվարկով ամուսնանալ Մարիա Վոլկոնսկայայի հետ, բայց դա երջանիկ ամուսնություն էր: Կինը գիտեր Տուանետի հանդեպ նրա սիրո մասին: Յորզուսկայան գեղեցիկ կամ համենայնդեպս գրավիչ էր: Սակայն Մարիա Նիկոլանան, երբեք խանդ չցուցաբերեց Տուանետի հանդեպ, որը նրանց հետ սկսեց ապրել Յասնայա Պոլյանայում: Երբ Յորզուսկայան մեկնում էր Ելիզավետա քրոջ մոտ՝ Պոկրովսկոյե, Մարիա Նիկոլանան նամակներ էր գրում նրան, որոնց մեջ անկեղծ քնքշություն ու հարգանք է զգացվում: Բայց և այնպես սիրային եռանկյունու խնդիրն, ըստ երևույթին, համենայնդեպս կար: Պարզապես չէր զարգանում, քանի որ եռանկյունու բոլոր մասնակիցները գիտակցում էին առկա հանգամանքների ուժը:

Սակայն այդ հանգամանքները փոխվեցին Մարիա Նիկոլանայի մահվանից հետո: Տուանետն այդ ժամանակ 38 տարեկան էր, Նիկոլայ Իլյիչը՝ 36: Եվ նա առաջարկություն արեց: Նրան, ում սիրել էր ողջ կյանքում: Բայց Տուանետը մերժեց:

Նիկոլայ Իլյիչի անսպասելի մահից հետո նրա երեխաները որք մնացին: Հոր մահվան օրը լրացավ մեծի՝ Նիկոլայի, տասնչորս տարին: Նիկոլայ Իլյիչի մահվանից մի քանի ամիս առաջ՝ 1837 թվականի հունվարին, ընտանիքը տեղափոխվել էր Մոսկվա, որ տղաները «վարժվեն բարձրաշխարհիկ հասարակությանը»: Բացի այդ, ավագները պատրաստվում էին ընդունվել համալսարան: Մի ընդարձակ տուն վարձեցին Պլյուշչիխայում:

Մոսկվայում Պելագեյա Նիկոլանա տատիկը, որն անհոգ կյանքի էր սովորել և ամուսնու, և Նիկոլայ որդու մոտ, տարված էր ինքն իրենով ու սիրելի որդու կորստյան վշտով: Եղբայրները փաստորեն մնացին ֆրանսիացի դաստիարակ Տոմայի հույսին, որին փոքրը՝ Լևը, տանել չէր կարողանում:

Մոսկվան Լևին դուր չեկավ: Նրան զարմացնում էր, որ մարդիկ իրեն հանդիպելիս գլխարկ չեն հանում ու չեն բարևում: Կյանքում առաջին անգամ նրա մտքով հարց անցավ՝ ուրիշ ի՞նչ կարող է զբաղեցնել այս մարդկանց, «եթե բոլորովին հոգ չեն տանում մեր մասին»: Նա չէր գնահատում նաև քաղաքային զվարճությունների հմայքները: Նրան զարմացնում էր, որ պահակն իրենց թույլ չտվեց մտնել զբոսնելու մասնավոր այգում, որն այնքան դուր էր եկել երեխաներին: Մեծ թատրոնում, օբյակում նստած, չէր կարողանում հասկանալ, որ պետք կողքի նայել՝ բեմին, ու ողջ ներկայացման ընթացքում նայում էր դիմացի օբյակներին: Մոսկվան աղմկոտ էր, փոշոտ, մարդաշատ, և նա կարոտով էր հիշում «տան դիմացի մարզագետինը, այգու բարձր լորենիները, մաքուր լճակը, որի վրա պտտվում են ծիծեռնակները, կապույտ երկինքը, որի վրա անշարժացել են սպիտակ, թափանցիկ ամպերը, թարմ խոտի բուրավետ խրճերը» և շատ ուրիշ բաներ, ինչի համար նա ողջ կյանքում այդպես սիրում էր իր Յասնայա Պոլյանան:

Ամեն ինչ փոխվեց տատիկի մահվանից հետո, 1838 թվականի գարնանը: Տատիկի օրոք անհնար էր փոխել ճոխ ու շքեղ կենսակերպը Մոսկվայում: Բայց նրա վախճանվելուց հետո ծախսերի կրճատման հարց դրվեց:

Անչափահաս երեխաների խնամակալ դարձավ նրանց հորաքույրը՝ Ալեքսանդրա Իլյինիչնա Օստեն-Սակենը: Կնոջ համար դժվար էր վարել եղբոր խճճված գույքային գործերը: Բացի այդ, հենց ինքը խնդիրներ ուներ անձնական կյանքում: Ալեքսանդրա (Aline) Տոլստայան վաղ տարիքում ամուսնացել էր օստգեյյան հարուստ կոմսի հետ: Պարզվեց, որ նա հոգեպես հիվանդ մարդ է, որը առանց պատճառի խանդում էր կնոջը: Երբ կինը հղի էր, որոշեց, որ «թշնամիներն» ուզում են կնոջը խլել իրենից, նրան կառք նստեցրեց, իսկ ճանապարհին, արկղից երկու ատրճանակ հանելով, առաջարկեց սպանել մեկմեկու: Առաջինն ինքը կրակեց: Բարեբխտաբար վերքը մահացու չէր, սակայն նյարդային ցնցումից հետո Aline-ը մահացած երեխա ծնեց: Նրան չհայտնեցին դրա մասին, այլ մոտը բերեցին նույն ժամանակ ծնված՝ խոհարարի կնոջ աղջնակին: Ալեքսանդրա Իլյինիչնան թողեց ամուսնուն ու ծնողների հետ էր ապրում, իսկ Նիկոլայ եղբոր ամուսնանալուց հետո տեղափոխվեց Յասնայա Պոլյանա, ապա

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Տոլստոյների ողջ ընտանիքի հետ՝ Մոսկվա: Նրանց հետ էր ապրում նաև նրա հոգեդուստր Պաշենկան, այն նույն աղջիկը, ումով փոխարինել էին մեռած երեխային: Տոլստոյը, չգիտես ինչու, հիշում էր հորաքույր Ալեքսանդրա Իլյինիչնայի առանձնահատուկ թթվաշ հոտը, որը նրա հագուկապի փնթիությունից էր: Եվ դա այն գեղանի, կապտաշյա Aline-ն էր, որը սիրում էր կարդալ ու արտագրել ֆրանսիական բանաստեղծություններ, տավիղ էր նվագում ու միշտ մեծ հաջողություն ուներ ամենամեծ պարահանդեսներում...

Որոշվեց Ալեքսանդրա Իլյինիչնայի ու դաստիարակ Տոմայի հետ Մոսկվայում թողնել երկու մեծ տղաներին՝ Նիկոլային ու Սերգեյին, իսկ փոքրերին՝ Միտյային, Լևին ու Մաշա քույրիկին Տառյանա Ալեքսանդրովնայի ու դաստիարակ Ֆյոդոր Ռյոսսելի հետ, որին, չնայած հարբեցողության հակվածությանը, տուն էին վերադարձրել, տանել Յասնայա Պոլյանա: Ընտանիքի «մոսկովյան» մասը հրաժարվեց խոշոր առանձնատնից՝ տեղափոխվելով ոչ մեծ էժանագին բնակարան, իսկ «յասնոպոլյանական» մասը ուրախությամբ վերադարձավ «հայրենի օջախ»:

Դժվար է ասել, թե ինչպես կձևավորվեր Տոլստոյի աշխարհայացքը, եթե դա տեղի չունենար: Բայց ահա փաստը: Ավագ եղբայրները՝ Նիկոլայն ու Սերգեյը, որոնց դաստիարակել էր ֆրանսիացի Տոման, որը իր կարևորությունն ընդգծելու համար ստիպում էր իրեն Սեն-Տոմա, այսինքն «սուրբ» անվանել, հետագայում հավատի առումով անտարբեր մարդիկ, պարզ ասած՝ աթեիստներ դարձան: Իսկ Միտյան, Լևն ու Մաշան հասուն տարիքում, յուրաքանչյուրը յուրովի, անցան իրենց կրոնական ճանապարհը:

Տոլստոյի բոլոր հորաքույրները ջերմեռանդ հավատացյալներ էին: Ալեքսանդրա Իլյինիչնայի աստվածավախությունը կրոնական էկզալտացիայի գծեր ուներ: Երբ հոր մահից հետո նա բնակություն հաստատեց եղբոր մոտ՝ Յասնայա Պոլյանայում, իրեն շրջապատեց «ուխտավորներով, կրոնախներով, կուսակրոն վանականներով ու միանձնուհիներով, որոնցից մի քանիսը մշտապես ապրում էին մեր տանը, մյուսները միայն այցելում էին հորաքրոջս»: «Մշտական ապրողների թվում էր միանձնուհի Մարյա Գերասիմովնան՝ քրոջս կնքամայրը, որը ջահել ժամանակ ուխտ էր գնացել կրոնախն Իվանուշկայի տեսքով: Մարյա Գերասիմովնան քրոջս կնքամայրն էր, որովհետև մայրս խոստացել էր նրան սանամայր անել, եթե Աստծուց դուստր խնդրի, որին մայրս շատ էր ուզում չորս որդիներից հետո: Աղջիկը ծնվեց, ու Մարյա Գերասիմովնան նրա կնքամայրն էր և մասամբ



ապրում էր Տուլայի կանացի մենաստանում, մասամբ՝ մեր տանը»,- գրում էր Տոլստոյը «Հուշերում»: Ալեքսանդրա Իլյինիչնան սիրում էր շփվել նշանվոր վանականների հետ, օրինակ, Օպտինյան անապատի սրբահայր Լեոնիդի: Նա կատարում էր բոլոր պահքերը, շատ էր աղոթում: Երբեք սեփական միջոցներ չէր ունենում, քանի որ ամեն ինչ բաժանում էր մուրացողներին:

1841 թվականի ամռանը Օպտինյան անապատ այցելելով՝ ծանր հիվանդացավ: Նրա մոտ գնաց Տատյանա Ալեքսանդրովնան՝ Նիկոլայ ու Մաշա Տոլստոյների հետ: Չարմիկներին տեսնելով՝ հորաքույրն ուրախությամբ լաց եղավ ու մեկ օր անց մահացավ՝ առանց տառապանքի ու գիտակցությունը տեղը: Ըստ լեգենդի՝ տասնմեկամյա Մաշային օրհնելիս հորաքրոջ հոգևոր հայր սրբահայր Լեոնիդը (աշխարհիկ անունով՝ Լև Նագուկին) ասել էր. «Մաշա, մերը կլինես»: Մարիա Նիկոլաևնան 49 տարի անց դարձավ օպտինյան սրբահայր Ամբրոսիի, ում դաստիարակն էր եղել Լեոնիդը, հոգևոր դուստրը, հետո կուսակրոնություն ընդունեց Շամորդինոյի վանքում:

Ալեքսանդրա Իլյինիչնայի փոքր քույրը՝ Պելագեյա (Պոլինա) Իլյինիչնան, նույնպես հավատացյալ էր: Բայց նրա սերն առ Եկեղեցի ավելի աշխարհիկ բնույթ էր կրում: Կազանում ապրելով ամուսնու՝ պաշտոնաթող հուսարական գնդապետ ու կալվածատեր Վլադիմիր Իվանովիչ Յուշկովի հետ, նա սիրում էր հովվապետերին, վանքերը, ոսկեթելով ասեղնագործելը, որի արդյունքը բաժանում էր վանքերին: Սակայն ամենից ավելի նրան մտահոգում էին վարվելաձևերը, արդուզարդն ու կահույքի դասավորությունը մեծ տանը:

Մեծ քրոջ մահից հետո, 1841 թվականին նա զարմիկ Նիկոլայից մի հուսահատ նամակ ստացավ, որով վերջինս խնդրում էր մենակ չթողնել խեղճ որբերին, որովհետև իրենից բացի նրանք աշխարհում ոչ ոք չունեն: Նամակից հուզված, ինչպես գրում է Սոֆյա Անդրեևնա Տոլստայան, «որոշեց se sacrificer»<sup>9</sup>: Տոլստոյ եղբայրները քրոջ հետ տեղափոխվեցին Կազան, իսկ Տատյանա Ալեքսանդրովնա Յորզուկայան հրաժարվեց,- լեզու չէր գտնում Պելագեյա Իլյինիչնայի հետ,- ու մնաց Յասնայա Պոլյանայում:

Դժվար թե Պելագեյա Իլյինիչնան կարողանար լուրջ ազդեցություն ունենալ զարմիկի վրա: Նա ընդհանրապես մեծ հեղինակություն չունեի տա-

9. *Չոհաբերել իրեն (ֆր.)*:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

նը: Ամուսինը չէր սիրում նրան և անառակ կյանք էր վարում: Չարմիկները առանց հսկողության էին մեծանում, իսկ Մաշային տեղավորեցին ազնվագարն օրիորդաց Ռադիոնովյան ինստիտուտում: Երբ զարմիկներն ավարտեցին համալսարանն ու մեկնեցին Կազանից, իսկ Մարիան ամուսնացավ, Պելագեյա Իլյինիչնան թողեց անհավատարիմ ամուսնուն և ուխտ էր զնում վանքերը: Վերջապես հիմնավորվեց Տուլայից ոչ հեռու գտնվող կանանց մենաստանում: 1875 թվականին Պելագեյա Իլյինիչնան տեղափոխվեց Յասնայա Պոլյանա՝ ազգական Լևի մոտ, որն արդեն ամուսնացած ու բազմազավակ ընտանիքի հայր էր, և այնտեղ էլ շուտով վախճանվեց:

Երբ 1841 թվականին բոլոր երեխաները ստիպված էին մեկնել Կազան՝ նոր խնամակալի մոտ, Տատյանա Ալեքսանդրովնան մնաց մենակ: Նա օրագրում գրում է. «Սարսափելի միայնություն է: Բոլոր տառապանքներից ամենածանրը: Ո՞ւմ է պետք սիրտդ, եթե չկա մեկը, ում սիրես: Ինչի՞ տ պետք կյանքը, եթե չկա մեկը, ում այն տաս»:

Իսկ հինգ տարի առաջ՝ 1836 թվականի օգոստոսի 6-ին, թղթի կտորի վրա գրել էր. «Նիկոլայն ինձ այսօր տարօրինակ առաջարկ արեց՝ ամուսնանալ իր հետ, փոխարինել իր երեխաների մորը ու երբեք չլքել նրանց: Առաջին առաջարկը մերժեցի, երկրորդը խոստացա կատարել, քանի դեռ ողջ եմ»: Մտածե՞լ էր այն ժամանակ Տատյանա Ալեքսանդրովնան, թե ինչու այդ առաջարկն արվեց ոչ թե սահմանված մեկ տարին անցնելուց հետո, այլ Մարիա Նիկոլանայի մահվանից վեց տարի անց: Գրանից մեկ տարուց պակաս ժամանակ անց Նիկոլայ Իլյիչի մահն ամեն ինչ տեղը դրեց:

Հասկանալի դարձավ, որ Նիկոլայ Իլյիչի առաջարկը թելադրված էր խելամիտ դատողությամբ: Նա ըստ երևույթին կանխազգում էր իր մահը և ուզում էր, որ երեխաներն իրենց սիրող մարդու թևի տակ մեծանան... որպես նրա սիրած մարդու երեխաներ: Այդ դեպքում Տատյանա Ալեքսանդրովնան բոլոր օրինական իրավունքները կունենար և՛ երեխաների, և՛ ունեցվածքի հանդեպ: Տատյանա Ալեքսանդրովնան այլ կերպ էր մտածում ու սխալվեց:

Տոլտոյը «Հուշերում» գրում է. «Ըստ երևույթին նա սիրում էր հորս, ու հայրս էլ սիրում էր նրան, բայց հորս հետ չէր ամուսնացել երիտասարդ տարիքում, որպեսզի նա կարողանար ամուսնանալ իմ հարուստ մոր հետ, հետագայում էլ չամուսնացավ, որովհետև չէր ուզում փչացնել իր մաքուր, բանաստեղծական հարաբերությունները նրա և մեզ հետ»: «Նրա գլխավոր գիծը սերն էր, շարունակում է Տոլտոյը, բայց որքան էլ ցանկանայի, որ այլ կերպ լիներ, սերը մեկ մարդու՝ իմ հոր հանդեպ էր: Միայն այդ կենտրոնից

բխելով՝ նրա սերը տարածվում էր բոլոր մարդկանց վրա: Ջգացվում էր, որ մեզ էլ սիրում է հորս համար, նրա միջոցով էր սիրում բոլորին, որովհետև իր ողջ կյանքը սեր էր»:

Լև Նիկոլաևիչն իր «Հուշերում» իսկական օրհներգ է ձոնում իր կյանքում գլխավոր հորաքրոջ Տատյանա Ալեքսանդրովնա Յորգոլսկայայի աստվածավախությանը: Այդ տողերը պետք է ուշադիր կարդալ: Դրանց մեջ է այն հատիկը, որից աճել է այն, ինչն անհաջող կոչում են Տոլստոյի կրոն: Միայ ծույլը չի գրել, թե Տոլստոյը հորինել է իր կրոնը, հնարել է «Աստծուն իր մեջ»: Իրականում Տոլստոյի որևէ առանձնահատուկ կրոն չկար: Մակայն հոգևոր հիմքերը, որ պետք է այնպես հավատալ, որպեսզի կրոնը չվերածվի դատարկ ծեսի, նրա մեջ դրել էր Տատյանա Ալեքսանդրովնա Յորգոլսկայան:

«Մերը նրա ներսում էր հյուսվում, ուստի ոչ մի տեղ շտապելու կարիք չունեի: Եվ այդ երկու հատկությունները՝ սիրառատությունն ու անշտապությունը աննկատ կանչում էին նրա հետ մտերմության և առանձնահատուկ հմայք էին տալիս այդ մտերմությանը: Այդ իսկ պատճառով չգիտեմ մի դեպք, որ նա նեղացրած լիներ որևէ մեկին, ինչպես և չգիտեմ որևէ մեկին, որ չսիրեր նրան: Նա երբեք չէր խոսում իր մասին, երբեք՝ կրոնի մասին, այն մասին, թե ինչպես պետք է հավատալ, թե ինչպես է հավատում ինքը և աղոթում: Նա հավատում էր ամեն ինչին, սակայն մերժում էր միայն մեկ դոգմա՝ հավերժական տառապանքը: «Dieu qui est la bonte neme ne puet pas vouloir nos souffrances»<sup>10</sup>: Ես, մաղթանքներից ու հոգեհանգիստներից բացի, երբեք չեմ տեսել, թե նա ինչպես է աղոթում: Միայն առանձնահատուկ սիրալիրությունից, որով դիմավորում էր ինձ, երբ մեկ-մեկ ուշ երեկոյան, իրար բարի գիշեր մաղթելուց հետո մտնում էի նրա մոտ, կռահում էի, որ ընդհատել եմ աղոթքը»:

Հենց դա էլ կրոնական ազատության բարձրագույն աստիճանն էր, երբ հավատում ես այնպես, ինչպես հավատում ես, այլ ոչ այնպես, ինչպես սահմանված կամ մտածված է: Տատյանա Ալեքսանդրովնան ի տարբերություն ուշ շրջանի Տոլստոյի, չէր մերժում բոլոր եկեղեցական դոգմաները. գուցե և պարզապես երբեք չէր մտածել դրանց մասին: Բայց անդրշիրիմյան տառապանքների մասին դոգման վճռական ժխտում էր: Գուցե այն պատճառով, որ հենց այն էր հակասության մեջ մտնում իր հավատի էու-

10. Աստված, որ ինքը բարություն է, չի կարող ցանկանալ մեր տառապանքը (Ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

քյան հետ, որը բխում էր իր մարդկային ու նույնիսկ կանացի բնույթից: «Նա երբեք բառերով չէր սովորեցնում, թե ինչպես պետք է ապրել, երբեք բարոյական խրատներ չէր կարդում, ողջ բարոյական աշխատանքը կատարվում էր իր ներսում, իսկ երևում էին միայն նրա գործերը,- ո՛չ գործերը,- գործ չկար, այլ իր ողջ կյանքը՝ խաղաղ, հեզ, խոնարհ ու սիրող, ոչ թե տագնապալի, ինքն իրենով հիացած, այլ անաղմուկ, աննկատելի սիրով»:

Հենց դա էլ կրոնական իդեալն էր, որը Տոլստոյը երազում էր ողջ կյանքում: Եվ նրա բոլոր բարոյական տարածայնություններն իր դարաշրջանի ու նույնիսկ քաղաքակրթության ողջ պատմության հետ, բխում էին այստեղից՝ հորաքրոջ սենյակից, ուր նա մտնում էր ու չէր երեկոյան:

Ինչպես և Մարիա Նիկոլաևնա Տոլստայայի դեպքում՝ Տատյանա Ալեքսանդրովնայի ոչ մի դիմանկար չկա: Իսկ լուսանկարել իրեն ըստ երևույթին թույլ չէր տվել:

Երբ Տատյանա Ալեքսանդրովնան, մոռացության մեջ ընկնելով, իր սիրելի զարմիկ Լյովային Nicolas էր անվանում (կան այդպիսի վկայություններ), ի՞նչ պիտի զգար Տոլստոյը: Ի՞նչ էր նա իրականում մտածում հոր ու մոր մասին՝ հասկանալով, որ ծնվել է գուցե և երկնքում էր կնքված, բայց ոչ սիրով ամուսնությունից:

Երեխաների՝ Կազան մեկնելուց հետո Տատյանա Ալեքսանդրովնան հաստատվեց քրոջ մոտ՝ Պոկրովսկոյեում: Երբ կրտսերը՝ Լևը, Յասնայա Պոլյանայի տերը դարձավ, նրան հրավիրեց ապրելու իր մոտ: Եվ հորաքույրն անասելի երախտապարտ էր: Իր գրառումներում նա բացել է գաղտնիքը, թե ինչի, ավելի ճիշտ՝ ում համար էր երեկոները ադոթում իր սենյակում: «Ես այնքան երջանիկ էի՝ զգալու, որ սիրված եմ նրա (*Լևի-Պ.Բ.*) կողմից, որ այդ պահին մոռացա սիրտս քրքրող ծանր տառապանքը... Ինձ համար երջանկություն էր տեսնել, որ կա այդպես սիրող մի հոգի... Գիշեր ու ցերեկ երկնքի օրհնությունն եմ խնդրում նրա համար (1850 թվականի գրառում)»:

Չարմանալի էր նրա մահը... «Երբ արդեն ամուսնացած էի, ու նա սկսել էր տկարանալ,- գրում է Տոլստոյը,- մի անգամ որսաց պահը, երբ ես ու կինս իր սենյակում էինք, և շրջվելով (տեսնում էի՝ ուր որ է լաց կլինի), ասաց. «Ահա թե ինչ, mes chers ami, իմ սենյակը շատ լավն է ու պետք կգա ձեզ: Իսկ եթե այստեղ մահանամ,- ասաց նա դողացող ձայնով,- ձեզ տհաճ կլինի այդ հիշողությունը, այնպես որ, տեղափոխեք ինձ, որ այստեղ չմեռնեմ»: Հետագայում Տոլստոյը տանջվում էր, որ ինքն ու կինը լսել էին հորաքրոջը, ու նա տեղափոխվել էր սպասավորների սենյակին կից փոքրիկ սենյակը, որտեղ

նրա մահվանից հետո իսկապես ընտանիքից ոչ ոք չապրեց: Ձղջում էր, որ ժլատության պատճառով երբեմն մերժել էր նրա փոքրիկ ուրախությունները՝ արմավ ու շոկոլադ չէր գնել, ինչով հորաքույրը հենց իրեն էլ հյուրասիրում էր:

«Նա խաղաղ էր մահանում՝ աստիճանաբար ննջելով, ու մահացավ ինչպես ուզում էր, ոչ այն սենյակում, որտեղ ապրում էր, որպեսզի այն պահպանի մեզ համար: Մահանում էր՝ համարյա ոչ մեկին չճանաչելով: Իսկ ինձ ճանաչում էր միշտ, ժպտում էր, պայծառանում, ինչպես էլեկտրական լամպը, երբ սեղմում ես կոճակը, ու երբեմն շարժում էր շուրթերը՝ փորձելով ասել Nicolas, մահվանից առաջ ինձ արդեն լրիվ նույնացնելով նրա հետ, ում սիրել էր ողջ կյանքում»:

### *Եղբայրները*

«Նիկոլենկային հարգում էի, Միտենկայի հետ ընկերներ էինք, բայց Սերյոժայով հիանում էի և ընդօրինակում նրան, սիրում էի, ուզում էի ինքը լինել...»,- խոստովանում է Տոլստոյը «Հուշերում»:

Այստեղ հանգուցային բառը «ընդօրինակելն» է: «Ուզում էի ինքը լինելը»-ը, որը «Հուշերի» հեղինակն ընդգծել է շեղատառով, նշանակում է ընդօրինակման գերադրական աստիճան՝ բացարձակ ներքին և արտաքին նմանություն մեծարվող մարդու հետ: Պատահական չէ, որ հաջորդ տողերում Տոլստոյը նկատում է, որ «սիրել» հասկացությունը Սերգեյի վերաբերյալ ճիշտ չէ: «Նիկոլենկային ես սիրում էի, իսկ Սերյոժայով՝ հիանում, ինչպես ինչ-որ օտար, անհասկանալի բանով»:

Դա սեր չէր... Ավելի ճիշտ, միայն սեր չէր... Սերն, իհարկե, նույնպես կար: Լևը Սերգեյին սիրում էր ողջ կյանքում, ինչպես և Սերգեյը՝ Լևին: Մանավանդ, որ չորս եղբայրներից միայն Լևն ու Սերգեյը երկարակյաց եղան և կալվածքներով համարյա հարևաններ: Յասնայա Պոլյանան 35 վերստի վրա էր Պիրոգովից, որտեղ ապրում էր Սերգեյ Նիկոլակիչն ու մահացավ 1904 թվականին՝ վեց տարի առաջ անցնելով փոքր եղբորից: Կարդալով եղբայրների ինչպես երիտասարդ տարիների, այնպես էլ ծերության շրջանի նամակագրությունը, անմիջապես զգում ես այդ խոր, զգայուն կապը երկու արյունակիցների միջև, որը չես շփոթին ոչնչի հետ՝ ոչ տղամարդու և կնոջ սիրո, ոչ քրիստոնեական սիրո հետ: Պատահական չէ, որ ժողովուրդն ասում է՝ նույն արյունից:

1902 թվականին, մահվանից ոչ շատ առաջ, Սերգեյ Նիկոլակիչը վերջին անգամ այցելեց Յասնայա Պոլյանա: Նա, կարծես, հասկանում էր, որ դա

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

խսկապես վերջին անգամն է: Այնքան էլ չէր սիրում այցելել եղբորը, երբ նա ողջ աշխարհի ուշադրության ու ձգողականության կենտրոնն էր դարձել: Ոչ այն պատճառով, որ նախանձում էր: Նա երբեք ոչ մեկին չէր նախանձել: Դա խանգարում էր նրանց անմիջական եղբայրական շփմանը: Բացի այդ, խելացի և միշտ իր ու այլոց հանդեպ ազնիվ մարդ լինելով՝ հասկանում էր իր ու եղբոր միջև եղած տարածությունը:

Վերադառնալով Պիրոգովո՝ նա գրում է եղբորը. «...վաղուց ինձ ոչինչ այնքան հաճելի չէր եղել, որքան այցելությունն Յասնայա, բայց մտածում էի, թե ինչպես ականա չասեմ կամ չանեմ մի բան, որը տհաճություն կպատճառի ձեզ, ինչը հեշտությամբ կարող էր պատահել, քանի որ օտարացել եմ մարդկանցից, նույնիսկ ամենամտերիմներից, և դա իմ առաջին ելքն էր Պիրոգովից, ավելի քան երեք տարի անց, իսկ ձեզ մոտ հանդիպեցի և՛ հունգար քրեագետների, և՛ հրեա բանկիրների, և՛ Բուտուռլինի, և՛ Աբրիկոսովների, որոնց ուղարկել էր Չերտկովը, և այդ ամենը խիստ ուշագրավ, սակայն վայրիացած մարդու համար դժվար է, ուստի ես, ինչպես պարզվեց, անընդհատ տենդային վիճակում էի, և կարող էի որևէ այնպիսի բան ասել, որը պետք չէ, որ ասեի: Տուն վերադառնալով՝ հիշեցի, որ քեզ հետ չեմ խոսել շատ բաների մասին, ինչի մասին ուզում էի, բայց այնքան բան էի ուզում խոսել, որ ամեն դեպքում չէի հասցնի. հիմա արդեն երբ կվիճակվի հանդիպել, միայն Աստված գիտի»:

Նրա այցելության ժամանակ լուսանկար արեցին: Երկու ծերունի նստած են դեմ դիմաց: Արտաքինով նման են իրար, բայց նրանց միջև տարածությունն ահռելի է: Եվ պատահական չէ, որ ավագը հայացքը թեքել է: Ի տարբերություն կրտսերի, որը նայում է ակնդետ, ինչպես այդ ժամանակ արդեն նայում էր բոլորին՝ ոչ մեկից ու ոչնչից չվախենալով: Այդ նշանավոր հայացքը՝ քննախույզ, ծակող, ուղիղ հոգու մեջ թափանցող, շատերն են նկարագրել, ովքեր եղել են Յասնայա Պոլյանայում գրողի կյանքի վերջին տարիներին: Իհարկե, նա եղբորն այդպես չի նայում: Բայց հայացքը սևեռուն է: Իսկ Սերգեյ Նիկոլաևիչինը՝ շեղ:

Կյանքն ամեն ինչ փոխել ու տեղն էր դրել: Նա, ում Լյովան ցանկանում էր ընդօրինակել (ուզում էր ինքը լինել), Տուլայի շարքային կալվածատեր էր դարձել: Այո՛, յուրովի հետաքրքիր: Զմահած: Ազնվական՝ բառի ամենաճշգրիտ իմաստով: Ապրում էր իր կալվածքում, ինչպես վ դոլյակում, համարյա դուրս չէր գալիս, ինչպես ծեր Բոլկոնսկին «Պատերազմ և խաղաղություն» վեպում, ոչ ոքի ու ոչնչի կարիք չզգալով: Նույնիսկ Եկեղեցու, որը չէր սիրում, անտեսում էր՝ տասնյակ տարիներ չխոստովանելով ու հաղոր-

դուքյուն չընդունելով, բախման մեջ մտնելով Տուլայի կոնսիստորիայի<sup>11</sup> հետ:

Բայց մեկ է, ապրում էր որպես սովորական կալվածատեր:

Մահվանից հետո նրանից նշանավոր ոչինչ չմնաց: Նույնիսկ գեղեցիկ կալվածատունը Պիրոգովում, որտեղ սիրում էր լինել փոքր եղբայրը և այնտեղ էր հղացել «Հաջի Մուրադը», գեղջուկները վառեցին 1919 թվականին: Եվ, անկեղծ լինենք, վառեցին նաև այն պատճառով, որ այնքան էլ չէին սիրում հանգուցյալ տիրոջը. չափազանց խիստ էր նրանց հետ: Նույն դաստակերտում գտնվող քրոջ՝ Մարիա Նիկոլաևնայի տունը չվառեցին: Գեղջուկները նրան սիրում էին:

«...Սերյոժայի դեպքում միայն ուզում էի ընդօրինակել նրան,- գրում է Տոլստոյը «Հուշերում»՝ նորից ու նորից կրկնելով այդ բառը:- Հենց վաղ մակութունից սկսվեց այդ ընդօրինակումը: Նա սկսեց հավեր, ճուտիկներ պահել.ես էլ սկսեցի: Դա երևի իմ առաջին մուտքն էր կենդանիների աշխարհ: Հիշում եմ տարբեր տեսակի ճուտիկներին՝ գորշավուն, խատուտիկ, փոփոլավոր, ինչպես էին վագում մեր կանչին, ինչպես էինք կերակրում և ատում խոշորամարմին, հոլանդական, ծեր ու փետրաթափ աքաղաղին, որը նեղացնում էր նրանց: Հենց Սերյոժան, մեծերից խնդրելով, հավաքեց այդ ճուտիկներին, ես էլ նույնը արեցի՝ ընդօրինակելով նրան: Սերյոժան թղթի երկար թերթի վրա տարագույն հավեր ու աքլորիկներ էր նկարում ու գունազարդում (ինձ թվում էր՝ ապշեցուցիչ հաջող), ու ես էլ, ոչ պակաս հաջողությամբ, անում էի նույնը»:

Ընդօրինակման արդյունքը միշտ ավելի վատն է լինում: Այդպես էլ Կազանում Լևը անհաջող ընդօրինակեց Սերգեյին՝ մաթեմատիկայի ֆակուլտետի փայլուն ուսանողին, Նիկոլայ Իվանովիչ Լոբաչևսկու աշակերտին:

Սերգեյը հրաշալի երգում էր, նկարում, հետաքրքիր գրուցակից էր: Գլխավորը՝ *comme il faut*<sup>12</sup> էր: Կարողանում էր նրբաճաշակ հագնվել ու ներկայանալի լինել:

Լևը փորձում էր նույնն անել, բայց վատ էր ստացվում:

Ձանալով ընդօրինակել Սերգեյին՝ դառնում էր ծաղրանկար: Սերգեյը

11. Ռուս ուղղափառ եկեղեցու թեմերի կառավարման գծով եպիսկոպոսին կից հաստատություն:

12. *Տառացի՝ ինչպես հարկն է (ֆր.): Դաստիարակված, լավ վարվեցողության կանոններին համապատասխանող:*

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

հպարտ էր, ինքնավստահ: Թքած ուներ շրջապատի կարծիքի վրա: Տոլստոյը նշում է եղբոր այդ գլխավոր գիծը, որին ահավոր նախանձում էր՝ Եսասիրությունը: Բայց նշում է նաև անմիջականությունը: Նա այդպիսին էլ մնաց մինչև ծերություն, ինչպես նրա մասին գրում է կրտսեր եղբայրը. «...այնպիսին, ինչպիսին կար՝ խիստ յուրահատուկ, իրեն հավատարիմ, գեղեցիկ, ազնվացեղ, հպարտ ու, գլխավորը, այն աստիճան ճշմարիտ ու անկեղծ մարդ, ինչպիսին երբեք չեմ տեսել»:

Լյովան նույնպես ջանում էր *comme il faut* լինել: Շատ էր ջանում: Բայց այնպես էր ջանում, որ հաճախ ծիծաղելի էր ստացվում:

Կազանի համալսարանի 1840-ական թվականների նախկին ուսանող Վալերյան Նիկոլակիչ Նազարևի հուշերում պատանի Լևը նկարագրված է անողորմ հեզմանքով: Ի դեպ, հուշերը հրատարակվել են 1890 թվականին, երբ Տոլստոյն արդեն որպես մեծ մարդ էր ճանաչվել ողջ աշխարհում:

«Կյանքում առաջին անգամ էի այդպիսի պատանու հանդիպում, որը տոգորված էր ինձ համար խիստ տարօրինակ ու անհասկանալի՝ իր անձի կարևորության և բավարարվածության զգացումով»: Կոմսը միանգամից վանել էր նրան «շինձու սառնությամբ, թավ մազերով ու կկոցած աչքերի արհամարհոտ արտահայտությամբ»: Նազարևը խորաթափանցությամբ նկատում է նրա «անճարակությունն ու ամաչկոտությունը»: Սակայն, դրանով հանդերձ, ջանալով հարել ուսանողական ազնվականության խմբակին, երիտասարդ Տոլստոյը «մի կերպ էր պատասխանում մի ողջունին, ասես ուզում էր ցույց տալ, որ մենք բնավ հավասար չենք, քանի որ ինք ժամանել է վարզածիով, իսկ ես ոտքով եմ եկել»:

«Ամենադատարկ ջահելը». Լևին ուղղված նամակներում նրան բարեհոգաբար այդպես է կոչում Սերգեյը: Իսկ տնային ուսուցիչը՝ ուսանող Պոպլոնսկին, այսպես էր խոսում Տոլստոյ եղբայրների ունակությունների մասին. «Սերգեյը և՛ ուզում է, և՛ կարող է, Գ-միտրին ուզում է, բայց չի կարող, իսկ Լևը և՛ չի ուզում, և՛ չի կարող»:

Բայցևայնպես, Տոլստոյի կենսագիր Ն.Ն. Գուսևը նկատել է մի կարևոր հանգամանք: Կազանի համալսարանի արևելագիտական բաժանմունք ընդունվելիս Լևը ձախողեց առաջին քննությունները: Բայց և ոչ մի միջակ գնահատական չէր ստացել: Կամ «մեկ», կամ «հինգեր» ու «չորսեր»: «Մեկերը»՝ պատմությունից, աշխարհագրությունից, վիճակագրությունից: «Չորսերը»՝ մաթեմատիկայից ու լեզվից: Եվ լեզուների փայլուն իմացություն. ֆրանսերեն (հինգին գումարած), գերմաներեն, արաբերեն, թուրք-թաթարերեն: «Այնպիսի տպավորություն է,- գրում է Գուսևը,- որ քննվող



առարկաներից ոչ մեկին Տոլստոյը միջակ չէր տիրապետում. այն ամենը, որ հարցնում էին կամ գերազանց ու լավ գիտեր, կամ չգիտեր ընդհանրապես»:

Չորս Տոլստոյ եղբայրներից միայն Լևը ուսումնական հաստատություն չավարտեց ու կանոնավոր կրթություն չէր ստացել, ոչ գիմնազիական, ոչ համալսարանական: Արևելյան լեզուների բաժանմունքից տեղափոխվեց իրավաբանական, բայց այն էլ թողեց:

Իսկ ահա եղբայրներն ավարտեցին համալսարանը և կարող էին անցնել զինվորական կամ քաղաքացիական ծառայության: Այն ժամանակ երիտասարդ ազնվականները պետք է ծառայեին: Ավագը՝ Նիկոլայը, 1844 թվականին զինվորական ծառայության անցավ հրետանային զորամասերում ու շուտով տեղափոխվեց Կովկաս: Սերգեյը համալսարանից հետո մտավ կայսերական գվարդիա, որտեղ ծառայեց մեկ տարի, ապա, մինչև կապիտանի աստիճանով պաշտոնաթող լինելը, բարձրաշխարհիկ կյանք էր վարում Մոսկվայում ու Տուլայում, «զնչություն էր անում», ինչպես ասում էր նրա եղբայր Նիկոլայը, այսինքն տարվել էր նշանավոր գնչուական երգչախմբերով ու գնչեհիներով, որոնցից մեկի՝ Մարիա Շիշկինայի հետ էլ հետագայում ամուսնացավ...

Նիկոլայը՝ հոր անվանակիցն ու մոր սիրելին, փոքր եղբայրների համար յուրատեսակ անհասանելի իդեալ էր: Լև Նիկոլակիչը հիշում էր, որ «գութ»-ով էին դիմում նրան: Նա զգալիորեն մեծ էր եղբայրներից, նույնիսկ Սերգեյից, համարյա երեք տարով:

«Չարմանալի տղա էր, իսկ հետագայում՝ զարմանալի մարդ,- նրա մասին գրում է Տոլստոյը:- Տուրգենևը շատ ճիշտ էր ասում, որ նա գերծ է միայն այն թերություններից, որոնք անհրաժեշտ են գրող դառնալու համար: Նա չունեի դրա համար անհրաժեշտ գլխավոր թերությունը. փառասեր չէր, նրա համար անհետաքրքիր էր, թե մարդիկ իր մասին ինչ են մտածում»:

Տուրգենևն այստեղ հենց այնպես չի հիշատակվում: Նա հիսուն-վաթսունական թվականներին գերագույն գրական հեղինակությունն էր, այն ժամանակ, երբ երկու եղբայրները՝ Լևն ու Նիկոլայը, ոտք էին դնում գրողական ասպարեզ: Լևն առաջինն արեց այդ քայլը՝ 1852 թվականի սեպտեմբերին «Մովրեմեննիկ» ամսագրում հրապարակելով «Մանկություն» վիպակը: Մեկ ամիս անց Նիկոլայը նրա համար կարդում էր իր «Ռոս Կովկասում» ակնարկը, որը հենց Լևն էլ ուղարկեց «Մովրեմեննիկի» խմբագիր, բանաստեղծ Նեկրասովին: Նեկրասովը գտավ, որ Նիկոլայն «ավելի վստահ է տիրապետում լեզվին», քան կրտսեր եղբայրը: Նրան բարձր էր գնա-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

հատում նաև Տուրգենևը, որի հետ բարեկամներ էին: Գրող դառնալու բոլոր տվյալներն ուներ Նիկոլայը, ոչ թե Լևը: Չէ՞ որ Լյովան միայն ընդօրինակում էր: Նույնիսկ իր հավիկներին նկարել չէր կարողանում, թոցնում էր Մերյոժայից: Նիկոլենկան հորինեց «Անձնապարծների սարը», ուր խոստանում էր տանել եղբայրներին, եթե կատարեն երեք պայման. նախ՝ անկյուն կանգնել ու չմտածել սպիտակ արջի մասին, երկրորդ՝ առանց շեղվելու անցնել հատակի տախտակների ճեղքի վրայով, և երրորդ՝ տարվա ընթացքում նապաստակ չտեսնել՝ կենդանի կամ մեռած ու նույնիսկ տապակած: Հասկանալի է, որ առաջին իսկ պայմանն արդեն անիրագործելի էր: Նիկոլենկան լրիվ մորն էր քաշել: Անսպառ հորինող: «Նրա երևակայությունն այնպիսին էր, որ կարող էր ուրվականների մասին հեքիաթներ կամ երգիծական պատմություններ անել m-me Radcliff-ի<sup>13</sup> ոգով՝ անդադար ու սահուն, ժամեր շարունակ և պատմածի իրական լինելու այնպիսի վստահությամբ, որ մոռացվում էր, որ դա հորինվածք է»: Միևնույն ժամանակ նա ամենատարբեր կեցվածքներով չարքեր էր նկարում, և այդ նկարները «նույնպես լեցուն էին երևակայությամբ ու հումորով»:

Նիկոլայը, եթե կարելի է այդպես ասել, Կովկասն էլ Լյովայի համար էր «հորինել»: Չէ՞ որ նա ավագ եղբոր ետևից այնտեղ սլացավ 1851 թվականին, որովհետև իր կյանքն այդ ժամանակ «անհեթեթ ու փնթի էր, ինքը պատրաստ էր դրա ցանկացած փոփոխության»: Այսինքն այստեղ էլ ընդօրինակում էր եղբորը:

Նիկոլայը վաղ մահացավ՝ 1860 թվականին, թոքախտից, ֆրանսիական Հիեր քաղաքում, Լևի ձեռքերի վրա: Սակայն, «Մանկությունը» համեմատելով «Ռոս Կովկասում» ակնարկի հետ, վստահ կարելի է ասել, որ Նիկոլայը մեծ գրող չէր դառնա: Խոսքը հաստատուն է, բայց հանճարի շունչը չկա: Չկա այն սփոփող հրեշտակը, որը թռչում է երեխայի մահճակալի մոտ, որ սրբի մանկական արցունքները («Մանկություն»):

Նիկոլայի գլխավոր գիծը, որ նույնպես ժառանգել էր մորից, «միջինն» էր: «Ոչ եսասիրությունը և ոչ էլ անձնուրացությունը,- նրա մասին գրում է Տոլստոյը,- այլ խիստ միջնատարածքը: Նա իրեն ոչ մեկին չէր զոհաբերում, բայց և երբեք որևէ մեկին ոչ միայն չվնասեց, այլև չխանգարեց: Նա և՛ ուրախանում, և՛ տառապում էր զուտ իր մեջ»:

13. Աննա Ռադկլիֆ (1764-1823) - անգլիացի գրող, գոթական վեպի հիմնադիրներից:

Գուցե հենց այդ պատճառով էլ Տոլստոյը նրա համար հարմար կերպար չի գտել իր արձակում: Ինչը կյանքում լավ է, գրականության համար պիտանի չէ: Օրինակ, Սերգեյն արտացոլվել է Անդրեյ Բոլկոնսկու կերպարում: Անբասիր պահվածքը, արտաքին տեսքը, սրախտությունը: Սակայն Անդրեյ Բոլկոնսկին, ի տարբերություն Սերգեյի, կարիերիստ էր, իհարկե, ոչ գռեհիկ, այլ «նապոլեոնյան իմաստով»: Սերգեյը կարիերիստ չէր: Եվ նույն պատճառով՝ փառասիրություն չունեիր: Չափազանց անտարբեր էր «մարդկանց կարծիքի» հանդեպ:

Փառքի նկատմամբ անտարբեր էր նաև Գմիտրին: Միտյան մանկուց լուրջ էր: «Եվ ես էլ ուզում էի դրանում ընդօրինակել նրան», - խոստովանում է Տոլստոյը: Վաղ տարիքում Գմիտրին, գուցե հորաքույր Յորգուլսկայայի ազդեցությամբ, շափազանց կրոնասեր էր: «Կրոնական ձգտումները, բնականաբար, նրան ուղղորդում էին եկեղեցական կյանքին: Եվ նա դրան տրվեց այնպես, ինչպես ամեն ինչն էր անում, մինչև վերջ: Սկսեց պաս պահել, գնալ բոլոր եկեղեցական ծեսերին և ավելի խիստ վերաբերվել իրեն»: Նույնը կկատարվի նաև Տոլստոյի հետ յոթանասունականների վերջին, «հոգևոր հեղաշրջման» սկզբում: Նա նույնպես կսկսի պաս պահել ու գնալ եկեղեցական ծեսերին, մինչև որ կհիասթափվի Եկեղեցուց: Ստացվում է, որ այստեղ էլ Լյովան կարծես թե ընդօրինակում էր Միտյային:

Նույնիսկ նշանավոր տոլստոյական «հասարակացումն» էլ ոչ թե ինքն էր հնարել, այլ Միտյան: «Նա չէր պարում ու չէր ուզում պարել սովորել, երբ ուսանող էր, բարձրաշխարհիկ միջավայր չէր մտնում, միշտ կրում էր նույն ուսանողական սերթուկը՝ նեղ փողկապով...»: Մի անգամ Միտյան իշխան Գմիտրի Ալեքսանդրովիչ Օբոլենսկուն ներկայացավ շքազիխարկով ու նանկայե վերարկուով, որի տակ... ոչինչ չկար: «Նա դա ավելորդ էր համարում»: Օբոլենսկին հյուրեր ուներ, և այցելուին առաջարկեց հանվել, բայց նա վերարկուով մատեց սրահի մեջտեղում ու հյուրերի ներկայությունից չքաշվելով՝ հարցրեց իշխանին՝ իր համար որտեղ «ավելի լավ կլինի ծառայել, որպեսզի ավելի մեծ օգուտ քերի»:

Գմիտրին մահացավ Նիկոլայից առաջ, 1851 թվականին: Նույնպես թոքախտից: Մինչ այդ «հեղաշրջում» էր ունեցել. ճիշտ կենսակերպ ունեցած մարդը «հանկարծ սկսեց խմել, ծխել, փող մսխել ու գնալ կանանց մոտ»: Բայց այստեղ էլ «լուրջ» էր. «Այն կնոջը՝ մարմնավաճառ Մաշային, որին առաջինն էր մոտեցել, փրկագնեց ու տարավ իր մոտ»:

«Աննա Կարենինա» վեպում Գմիտրին դարձել է Կոնստանտին Լևինի եղբոր՝ Նիկոլայի նախատիպը: Եվ ինչպես վեպում՝ փոքր եղբայրը մահվա-

#### ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

նից առաջ այցելում է ավագին: Դմիտրին մահացավ Օրյոլում: «Սարսափելի էր,- գրում է Տոլստոյը «Հուշերում»:- Նրա ձեռքի հսկա բաթը պահում էին միայն արմունկի երկու ոսկորները, դեմքին բացառապես աչքերն էին, նույնքան սքանչելի, լուրջ, իսկ հիմա՝ խորաքնին: Նա անընդհատ հագում ու խարկում էր, ու չէր ուզում մահանալ, չէր ուզում հավատալ, որ մահանում է: Նրա փրկագնած չեչոտ Մաշան, գլխաշորը գլխին, կողքին էր ու խնամում էր նրան: Իմ ներկայությամբ նրա ցանկությամբ բերեցին հրաշագործ սրբապատկերը: Հիշում եմ դեմքի արտահայտությունը, երբ աղոթում էր սրբապատկերի վրա...»:

1804 թվականին, Պիրոգովում, դարձյալ կրտսեր եղբոր՝ Լևի ներկայությամբ մահանալիս, Մերգեյը խոստովանելու և հաղորդություն ընդունելու ցանկություն հայտնեց: Լևը գնաց քահանայի ետևից:

Եվ երբ Նիկոլայը անհողորդ, առանց հոգևորականների ու սրբատկերների մահանում էր Հիերում, նրա միակ օգնականն ու «խոստովանահայրը» կրտսեր եղբայր Լևն էր: Օգնում էր նրան հագնվելիս և լսում բոլոր տրտունջները: Սի տեսակ այնպես ստացվեց, որ հենց Լևն էր երեք ավագ եղբայրների կողքին նրանց մահվանից առաջ: Նա, որը միշտ ընդօրինակում էր: Որն «ամենադատարկ ջահելն» էր թվում: Նա դարձավ իր մանկության կուռքերի երկրային ուղու վախճանի վկան: Չէ՞ որ նրանք բոլորն ավելի լավը կամ, առնվազն, ավելի հետաքրքիր էին, քան ինքը...

Ինքը՝ Լև Տոլստոյը:

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

### ՓԱԽՍՏԱԿԸ (1847-1862)

#### *Կալվածատիրոջ առափոռը*

1847 թվականի հուլիսի սկզբին Տոլստոյ եղբայրները՝ Նիկոլայը, Սերգեյը, Դմիտրին ու Լևը հավաքվեցին Յասնայա Պոլանայում, որպեսզի ստորագրեն իրենց հովանավորի՝ կալվածատեր Ալեքսանդր Սերգեևիչ Վոյեյկովի պատրաստած բաժանման փաստաթուղթը՝ հորից մնացած ժառանգության վերաբերյալ:

Այն ժամանակվա օրենքներով՝ դուստրերը ծնողական ժառանգությունից ստանում էին շարժական գույքի մեկ տասնչորսերորդ մասը և անշարժ գույքի՝ մեկ ութերորդականը, մնացածը հավասար բաժանվում էր որդիների միջև: Տոլստոյ եղբայրները որոշեցին Մարիա քրոջը տալ ժառանգության իրենց հավասար մասը: Արդյունքում՝ Նիկոլայը ստացավ Նիկոլայովնեյե կալվածքը՝ Տուլայի նահանգի Չեռնոսկի գավառում, Սերգեյը՝ Պիրոգովոն՝ Կրասնիվենյան գավառում, ձիաբուծարանի հետ, Դմիտրին դարձավ Շերբաչովկայի սեփականատերը Կուրսկի նահանգում, իսկ Մարիային անցան 150 շունչ գյուղացիներ և 904 դեսյատին հող նույն Պիրոգովում, որտեղ մինչև կյանքի վերջը կհաստատվի Սերգեյը: Լևին բաժին ընկավ Յասնայա Պոլանան՝ 1470 դեսյատին հողով և 300 գյուղացիական շնչով:

Սերգեյ Նիկոլայևիչի բանավոր հուշերով՝ կրտսեր եղբայրն ինքն էր մյուսներին համոզել, որ իրեն տան Յասնայան, չնայած եկամտաբերությամբ այն չորս կալվածքներից ամենավատն էր: Հնարավոր է՝ դրա պատճառը ոչ միայն տոհմական օջախում հիմնավորվելու՝ Լևի ընտանեկան իդեալիզմն էր, այլև բնավորության մյուս գիծը, որ նրա մեջ նկատել էր նույն Սերգեյը՝ արհամարհանքը փողի հանդեպ:

Ժառանգության իրավունքների ստանձնումն ըստ երևույթին դարձավ գլխավոր պատճառը, որ Լևը՝ եղբայրներից միակը, բարձրագույն կրթություն չստացավ: Բաժանման փաստաթուղթը ստորագրելիս երեք ավագ եղբայրներն արդեն ավարտել կամ ավարտում էին Կազանի համալսարանը: Իսկ կրտսերը նոր միայն սկսում էր սովորել, այն էլ ֆակուլտետներ փո-

խելով: Իրենց լիարժեք կալվածատեր զգալով՝ երիտասարդներն անմիջապես մեկնեցին իրենց կալվածքները: Նույնն արեց նաև Լևը: Բայց դրա համար ստիպված էր թողնել համալսարանը:

Մակայն համալսարանական պատերից բաժանվելն այնքան էլ չվշտացրեց պատանուն: Դատելով Վ.Ն. Նազարևի հուշերից, ում հետ համալսարանը լքելուց քիչ առաջ Տոլստոյը հայտնվել էր պատժախցում՝ դասախոսություններին չհաճախելու համար, նա համալսարանական գիտության առանձնակի ձգտում չուներ: «Մենք ի՞նչ ենք տանելու համալսարանից,- ասում էր պատժախցում:- Մտածեք ու պատասխանեք խղճի մտոք: Ի՞նչ ենք տանելու գիտության այս տաճարից վերադառնալով գյուղ: Ինչի՞նչ ենք պիտանի լինելու, ո՞ւմ ենք պետք լինելու»:

1847 թվականի ապրիլի տասնիննին Տոլստոյի անունը հանվեց իրավաբանական ֆակուլտետի ուսանողների թվից, իսկ մայիսի 1-ին նա արդեն Յասնայա Պոլյանայում էր: Կազանից նրան ճանապարհում էին համերաշխ ընկերախմբով: Ինչպես պատմում է պատմաբան Ն.Պ. Չագոսկինը՝ «Տոլստոյ եղբայրների բնակարանում՝ Պետոնդիի տան կողաշենքում, հավաքվել էր ուսանողների մի ոչ մեծ խումբ, որոնք ցանկանում էին Լև Նիկոլևսկիին ճանապարհել այն ժամանակվա հաղորդակցության պայմաններում հեռավոր ու դժվար ուղևորության... Ինչպես ընդունված էր՝ մեկնողի կենացը խմեցին՝ նրան տարատեսակ մաղթանքներ հղելով... Ընկերները Լև Նիկոլևսկիին ուղեկցեցին մինչև հեղեղված Կազանկայի գետանցումն ու այնտեղ վերջին անգամ վերջին համբույրը տվեցին նրան»:

1847 թվականի ապրիլին Կազանը լքող Տոլստոյի վիճակը պատկերացնելու համար նայենք նրա օրագրի առաջին հայտնի գրառումը, որն արվել է դրանից մի քանի օր առաջ. «17-ը մարտի, 1847 թվական: Կազան: Արդեն վեց օր է՝ ընդունվել եմ հիվանդանոց, և արդեն վեց օր է՝ համարյա զոհ եմ ինձնից: Les petite causes produisent de grands effets<sup>14</sup>:- Վարակվել եմ զառնարեայով, հասկանալի է՝ նրանից, ինչից սովորաբար վարակվում եմ...»:

Տոլստոյի և նրա ստեղծագործության ինքնուրույն ուղու սկիզբը (ծեր հասակում նա կսկսի օրագիրը համարել իր կյանքի գլխավոր ստեղծագործությունը) համընկնում է ամենաամոթալի հիվանդությանը, որով կարող է վարակվել տասնութամյա պատանին: Նա հոնորեայով վարակվեց կա-

14. Փոքր պատճառները մեծ հետևանքներ են ծնում (ֆր.):

զանցի մարմնավաճառից: Մակայն, դրանով հանդերձ, «համարյա գոհ էր իրենից»: Ամոթալի հիվանդությունը չի ճնշում նրան, այլ վերածվում է հոգևոր օգուտի: Դա հրաշալի առիթ է կյանքի մասին խորհելու և իրեն հարց տալու՝ «Ո՞վ ես դու»: Հիվանդանոցի պայամանները նպաստում են դրան: «Այստեղ բացարձակ մենակ եմ, ոչ ոք ինձ չի խանգարում, այստեղ սպասավորներ չունեմ, ոչ ոք ինձ չի օգնում, հետևաբար դատողության ու հիշողության վրա կողմնակի ոչինչ ազդեցություն չունի, և իմ գործունեությունը անպայման պետք է զարգանա»:

Բայց ի՞նչ «գործունեության» մասին կարող է խոսք լինել հոնորեայի հիվանդանոցային բուժման ընթացքում: Ողջ խնդիրն էլ հենց այդ է: Առաջին իսկ օրագրային գրառումից Տոլստոյը տարանջատում է արտաքին ու ներքին գործունեությունը՝ նախապատվությունն, իհարկե, տալով երկրորդին: Նրա կարծիքով՝ միայն մենակ մնացած մարդն է ընդունակ, ինչ ֆիզիկական ու բարոյական վիճակում էլ լինի, ապրել իսկական կյանքով: Դա է մարդկային ազատության գլխավոր պայմանը:

«Թող բանականությունը գործի, նա ցույց կտա քո առաքելությունը, կտա կանոնները, որոնցով համարձակ կարող ես մտնել հասարակություն: Այն ամենը, որ համապատասխանում է մարդու առաջնային ունակությամբ՝ գիտակցությանը, կհամապատասխանի այն ամենին, ինչ գոյություն ունի. առանձին մարդու գիտակցությունը ողջ գոյություն ունեցողի մասն է, մասը չի կարող քայքայել ամբողջի կարգը: Իսկ ամբողջը կարող է սպանել մասը»:

Բայց ո՞վ է նա: Թերուս ուսանող, «ամենադատարկ ջահելը»: Ամբողջովին հյուսված կողմնակի ազդեցություններից: Ընդօրինակում է մեկ Նիկոլենկային, մեկ Սերյոժային, մեկ Միտյային: Եվ արդեն վարակված է նրանով, ինչն իր առաջին օրագրային գրառման մեջ դիպուկ անվանում է «հոգու վաղ անառակություն»: Եվ ահա, նա «գոհ է» այդ վիճակից: Որովհետև հենց այդ կետից է բացվում կյանքի ճշմարիտ, ոչ թե հորինված հեռանկարը:

Միայն պետք է մենակ մնաս քեզ հետ:

Երկու ամիս անց, Յասնայա Պոլյանայում, նա կձևակերպի գլխավոր սկզբունքը, համաձայն որի կկառուցի իր կյանքը: «Երբևէ կհասնե՞մ նրան, որ կախում չունենամ կողմնակի հանգամանքներից: Իմ կարծիքով դա անհեղին կատարելություն է, քանզի արտաքին ազդեցությունից կախում չունեցող ոգին իր պահանջվածությամբ միշտ կզերազանցի նյութին, և այդ ժամանակ մարդը կհասնի իր առաքելությանը»:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Բայց նա դեռ շատ հեռու է դրանից:

Իսկ առայժմ կալվածատեր է դառնում:

Քաղքենի պատկերացումներում հաստատվել է Տոլստոյի՝ հարուստ կալվածատիրոջ տարածված կերպարը: Իբր հենց հարուստ կալվածատիրոջ դիրքն էր նրան հնարավորություն տալիս անկախ գրել՝ ինչ մտածում է: Այդ հայացքը մեծապես հրահրել էր հենց ինքը՝ Տոլստոյը, որը «ժողովրդական հեղաշրջումից» հետո տանջալի ամոթ էր զգում իր «շքեղ կյանքի» համար՝ գեղջկական չքավորության կողքին: Հենց այդ լույսի տակ է նշանավոր տոլստոյական «հասարակացումը», «ժողովրդի հետ ձուլվելու» փորձը դիտվում որպես յուրահատուկ աղայական քմահաճույք: Հեշտ էր նրա համար հերկել ու հնձել, երբ տրամադրության տակ էր ծառաներով ու սպասավորներով կալվածատունը, գրասեղանն ու գրադարանը և երկու ռոյալները՝ երաժշտական լսողությունը շոյելու համար...

Իրականում կալվածատեր Տոլստոյի փորձը հենց սկզբից ողբալի էր: Դրա մասին հիսունական թվականների սկզբին նա երկու ինքնակենսագրական գործ ստեղծեց՝ «Կալվածատիրոջ առավուտը» և անավարտ «Ռուս կալվածատիրոջ վեպը»: Այդ գործերից ակնհայտ երևում է, որ ոչ խառնվածքով, ոչ այն ժամանակվա տնտեսական կյանքի պայմաններով Տոլստոյը չէր կարող կայանալ որպես կալվածատեր:

Նա մեկնեց գյուղ «իր գյուղացիներին հնարավորինս երջանկացնելու» մտադրությամբ: «Կալվածատիրոջ առավուտը» ստեղծագործության հերոսը՝ տասնիննամյա իշխան Նեխայուդովը համալսարանը լքելուց և իրեն գյուղական կյանքին նվիրելուց առաջ հորաքրոջը (նախատիպը Տ.Ա. Յորգոլսկայան էր) գրում է.

«Միրելի հորաքրոջը:

Ես որոշում եմ ընդունել, որից կախված կլինի իմ ողջ կյանքը: Ես թողնում եմ համալսարանը ինձ գյուղական կյանքին նվիրելու նպատակով, որովհետև զգում եմ, որ ծնվել եմ դրա համար: Աստծու սիրուն, սիրելի հորաքրոջը, չծիծաղեք վրաս: Դուք կասեք, որ ես երիտասարդ եմ, գուցե և դեռ պարզապես երեխա, բայց դա ինձ չի խանգարում զգալու իմ կոչումը, ցանկանալ բարին գործել և սիրել բարին»:

Հորաքրոջ պատասխանում, որը գրված է ֆրանսերեն (սիրելի զարմիկին այդ լեզվով էր գրում Տատյանա Ալեքսանդրովնան) մատնացույց է արվում երեք սխալ, որ գործում է Նեխայուդովը.

«Դու ասում ես, որ զգում ես գյուղական կյանքի քո կոչումը, որ ցանկանում ես երջանկացնել քո գյուղացիներին և հույս ունես բարի տեր լինել:



1) Պետք է քեզ ասեմ, որ մեր կոչումը զգում ենք միայն այն ժամանակ, երբ մեկ անգամ արդեն սխալված ենք լինում այդ հարցում. 2) որ ավելի հեշտ է կառուցել սեփական, քան ուրիշների երջանկությունը և 3) որ բարի տեր լինելու համար անհրաժեշտ է սառը ու խիստ մարդ լինել, ինչպիսին դժվար թե երբևէ լինես, չնայած և ջանում ես այդպիսին ձևանալ»:

Վերջին սխալը, թերևս, ամենագլխավորն էր: Երիտասարդ Տոլստոյը միայն ձևանում էր, թե կալվածատեր է, օտար դեր էր խաղում՝ մտածելով, թե խաղում է իր դերը:

Նեխյուդովը վաղ առավոտից, «սուրճ խմելուց հետո», նոթատետրը ձեռքին ու թղթադրամների տրցակը գրպանում, շրջում է գյուղում: Նոթատետրում նշված են գյուղացիների կարիքները, որոնք նա պատրաստվում է բավարարել ստրկական աշխատանքի շահագործումից ստացած թղթադրամներով: Գյուղացիները դա հասկանում կամ բնագրաբար զգում են: Դրա համար էլ բոլոր խոսակցությունները կալվածատիրոջ հետ վերածվում են աբսուրդի թատրոնի՝ «փչացած հեռախոսի» հնարքով: Նրա հետ խոսելիս գյուղացիները մեկ բան ունեն մտքում՝ բարի աղայից հնարավորինս շատ փող պոկել: Ընդամին նրանք խաղում են հյու ստրուկների դեր, որոնք համաձայն են իրենց հաշվին իրենց երջանկացնել ցանկացող տիրոջ բոլոր փաստարկներին: Իսկ Նեխյուդովը, որ զգայուն երիտասարդ է, հասկանում կամ դարձյալ բնագրով զգում է իր վիճակի կեղծությունը, «բարերարի» իր դերի ողջ արհեստականությունը, սակայն վախենում է խոստովանել:

Ահա Նեխյուդովի բնութագրական գրույցը հիսնամյա գյուղացի Իվան Չուրիսի հետ, որին երիտասարդը մտքում Չուրիսյոնոկ է անվանում:

«- Ահա եկել եմ տնտեսությունդ տեսնեմ,- մանկական մտերմությամբ ու ամաչկոտությամբ գեղջուկի հագուկապը զննելով՝ ասաց Նեխյուդովը:- Հապա ցույց տուր, թե ինչիդ են պետք հենակները, որ ժողովին խնդրում էիր ինձնից:

- Հենակները: Պարզ է, թե ինչի համար են հենակները, տեր իմ ձերդ պայծառափայլություն: Ասում էի գոնե մի քիչ դիմհար անեմ, ախր ձեր աչքով տեսեք, այ անկյունը փուլ է եկել, դեռ Աստված ողորմած է, որ էդ ժամանակ ներսը անասուն չի եղել: Մնացածն էլ մի կերպ կախ ընկած մնում է,- ասում էր Չուրիսը՝ քամահրանքով աչք ածելով իր ծուռտիկ ու փլեկ մարագները:- Հիմա կուգես ծպեղները հանի, կամ ցցերը, կամ էլ կոճերը, մեկ է, պետքական փետ դուրս չի գա: Գերան էլ որտեղի՞ց ճարես, էդ դուք էլ գիտեք:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

- Այդ դեպքում ինչի՞նչ է պետք հինգ հեռակը, երբ որ մի մարազն արդեն փլվել է, մյուսներն էլ ուր որ է կփլվեն: Քեզ ոչ թե հեռակ է պետք, այլ ծպեղներ, ցցեր, սյուներ, ու որ ամեն ինչ նոր լինի,- ասաց պարոնտերն՝ ըստ երևույթին պարծենալով գործի իմացությամբ:

Չուրխյունը լուռ էր:

- Դուրս է գալիս, որ քեզ փայտ է պետք, ոչ թե հեռակներ. այդպես էլ ուղիղ կասեիր:

- Պարզ է, որ պետք է, բայց որտեղի՞ց. հո ամեն անգամ ձեր դուռը չե՞մ գալու: Ամեն ինչի հետևից ձերդ պայծառափայլության մոտ գալը որ սովորեցի՞նք, էլ մենք ինչ գյուղացի: Իսկ թե որ ձեր ողորմածությունը բարի լինի կաղնու գերանների վերաբերմամբ, որ ձեր բակում պարապ թափած է,- ասաց նա՝ խոնարհվելով ու ոտնետոտ անելով,- ուրեմս մի քանի գերան կփոխեն, մեկերը կկտրեն, հնից նորը կսարքեն:

- Բայց հնից ինչպե՞ս կլինի: Դու ես ասում, որ ամեն ինչ հին ու փտած է, այսօր այս անկյունն է փլվելու, վաղը՝ մյուսը, վաղը չէ մյուս օրը՝ երրորդը. ավելի լավ չէ՞ նորը անես, որ չարչարանքը ջուրը չընկնի: Ասա՝ ինչ ես կարծում, այս տնտեսությունը ձմեռը դուրս կբերի՞, թե ոչ:

- Ո՞վ իմանա:

- Չէ, դու ինչ կարծիքի ես: Կփլվի՞, թե՞ չէ:

Չուրխյունը մի պահ մտքի մեջ ընկավ:

- Պիտի որ փուլ գա,- հանկարծ ասաց նա»:

Սա հիշեցնում է Գոգոլի «Մեռած հոգիների» սկիզբը, երբ Ն քաղաքի հյուրանոցի մոտ երկու գեղջուկ քննարկում են՝ «Որ պետքը լինի, ակը Մոսկվա կհասնի՞, թե չի հասնի»: «Կհասնի»՝ պատասխանում է մյուսը: «Կազան, կարծում եմ, չի հասնի»:- «Հա, Կազան չի հասնի»: Ի դեպ, «Մեռած հոգիներն» այն գրքերի ցանկում էր, որոնք առավել ազդեցություն են ունեցել Տոլստոյի վրա տասնչորսից քսան տարեկանում: Եվ միանգամայն հնարավոր է, որ այս տեսարանը գրելիս Տոլստոյը հիշում է Գոգոլի պոեմի սկիզբը: Մակայն, միևնույն ժամանակ, 1890 թվականին, իր առաջին արտասահմանյան կենսագիր Ռաֆայի Լյովենֆելդի հետ զրույցում Տոլստոյը պնդում էր, որ Նեխլյուդովի ու գյուղացիների զրույցների բոլոր դրվագները իրական են, վերցված իր իսկ փորձից:

1848 թվականի հոկտեմբերի կեսին Տոլստոյը մեկնեց Մոսկվա:

*Դատարկ ջահելը*

1847 թվական ամառվա կեսին Տոլստոյը դադարում է վարել օրագիրն ու դրան վերադառնում է միայն երեք տարի անց՝ 1850 թվականի հունիսին: Սակայն համարյա անմիջապես էլ կրկին դադարեցնում է, հիմա արդեն՝ հինգ ամսով, ու վերսկսում միայն ղեկտեմբերին: Ի՞նչ էր կատարվում նրա հետ այդ ժամանակ:

«Ցուփ ու շվայտ կյանք վարելով,- գրում է նա 1850 թվականի ղեկտեմբերի 8-ին,- նկատեցի, որ ամեն ինչում ինձնից ցածր մարդիկ այդ ոլորտում շատ ավելի բարձր են ինձնից. ցավոտ էր, ու համոզվեցի, որ դա իմ կոչումը չէ»:

Եվ կրկին գործ ունենք Տոլստոյի բնության ամենակարևոր գծերից մեկի՝ կյանքի պարտությունները հոգևոր օգուտի վերածելու ունակության հետ...

Նրա առաջին փորձը կալվածատիրոջ դերում կարծես նույնպես անհաջող էր: Տոլստոյը չափազանց տաքարյուն էր դրա համար, ի տարբերություն իր ապագա ընկեր Աֆանասի Ֆետի, որը կարողանում էր հանճարեղ քնարական շնորհը համատեղել գյուղական տիրոջ սառը հաշվենկատության հետ: Սակայն հենց այդ փորձը Տոլստոյին թույլ տվեց գրել «Կալվածատիրոջ առավոտը», ապա՝ «Պատերազմ և խաղաղություն» ու «Աննա Կարենինա» վեպերի գյուղական տեսարանները, «Պոլիկուշկան», «Խավարի իշխանությունը» և այլ ստեղծագործություններ: Այս զարմանալի «շրջոնքումը», երբ պարտությունը հանկարծ վերածվում է հաղթանակի, կատակով նկատում է գրողի ավագ եղբայր Սերգեյը զարմիկ Սերգեյ Լվովիչի հետ գրույցում. «Գործակատարը ձեր հորից 1000 ռուբլի կգողանա, իսկ նա կնկարագրի դա ու նկարագրության համար կստանա 2000 ռուբլի. հազար ռուբլի օգուտ մնաց»:

Տոլստոյը բոլոր պարտություններից «օգուտով էր դուրս գալիս»: Բացառություն չէին նաև Մոսկվայում ու Պետերբուրգում անցկացրած երեք ցուփ ու շվայտ տարիները, երբ նա «անփող ու համատարած պարտքերի մեջ էր»:

1850 թվականին նա օրագրում գրում է. «Երրորդ տարվա ձմռանը Մոսկվայում էի: Շատ փնթի էի ապրում, ոչ ծառայություն, ոչ զբաղմունք, ոչ նպատակ. և այդպես էի ապրում ոչ այն պատճառով, որ, ինչպես ասում ու գրում են շատերը, Մոսկվայում բոլորն են այդպես ապրում, այլ պարզապես այդտեսակ կյանքն ինձ դուր էր գալիս»:

Նրան դուր էր գալիս, որ «բոլոր հյուրասենյակները բաց են իր առաջ, կարող է ընտրել ցանկացած հարսնացուի», և «չկա ոչ մի երիտասարդ, որ

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

բարձրաշխարհիկ հասարակության կարծիքով բարձր լինի իրենից»։ Մոսկվայում նա բնակություն հաստատեց Արբատում, Գարյա Իվանովնա Իվանովայի տան կողաշենքում, Փոքր Նիկոլոպետկովսկի նրբանցքում, որտեղ ապրում էր Պերֆիլևների ընտանիքը։ Վասիլի Ստեպանովիչ Պերֆիլևը կամ «Վասենկան», ինչպես Տոլստոյը նրան անվանում է օրագրում, ամուսնացած էր սկանդավներով հայտնի Ֆյոդոր Իվանովիչ Տոլստոյ-Ամերիկացու դստեր հետ։ Ֆյոդոր Իվանովիչը Լև Տոլստոյի հորեղբայրն էր, որին Պուշկինը «Եվգենի Օնեգին» պոեմում պատկերել է մենամարտի սիրահար Ջարեցկու կերպարում, իսկ Գրիբոեդովը «Խելքից պատուհասի» մի պատահական կերպարում, որը հայտնվում է Ռեպետիլովի մենախոսության մեջ.

*Անունը պետք չի տալ՝ կիմանաս նկարով,  
Գիշերվա ավազակ ու մենամարտիկ,  
Աքտրվեց Կամչատկա, հետ եկավ՝ ալեուտ,  
Ու ձեռքն էլ անմաքուր է սաստիկ...*

Պերֆիլևը չհնովնիկ էր ու տարբեր վարչական պաշտոններ էր զբաղեցրել։ Յոթնասունական թվականներին նույնիսկ դարձավ Մոսկվայի նահանգապետ։ Միևնույն ժամանակ, անփույթ ու թեթևամիտ մարդ էր։ Նրա անունը Տոլստոյի վաղ շրջանի օրագրում հաճախ հիշատակվում է գինարբուքների առնչությամբ։ Պերֆիլևը նախատիպ էր ծառայել «Աննա Կարենինայի» ամենաշփերթ, բայց և ամենից համակրելի կերպարի՝ Ստիվա Օբոլենսկու համար։ Պերֆիլևին այդ կերպարը դուր չէր գալիս, ու Տոլստոյը նրբանկատորեն ժխտում էր, թե նա է։ Սակայն Տոլստոյի քենին՝ Տատյանա Անդրեևնա Կուզմինսկայան ու Պերֆիլևի ծառայակից Վլադիմիր Կոնստանտինովիչ Իստոմինը պնդում էին, որ անկասկած նմանություն կար Ստիվայի ու «Վասենկայի» միջև։

Բարձրաշխարհիկ կյանքը Մոսկվայում թրթախաղ էր ենթադրում, և Տոլստոյը տուրք էր տալիս այդ ավանդույթին։ Այստեղ ազդեցություն ունեցավ նաև Սերգեյ եղբոր նկատած՝ «փողի հանդեպ արհամարհանքը»։ «Ինձ դուր չի գալիս այն, ինչ կարելի է ձեռք բերել փողով, բայց դուր է գալիս, որ փող լինում է, իսկ հետո չի լինում՝ ոչնչացման գործընթացը»,- գրում էր Տոլստոյն օրագրում։

Արդյունքում Լևը մեծ գումար տանով տվեց ոմն Օռլովի։ Սակայն Յասնայա Պոլյանա մեկնելու փոխարեն, ինչպես ուզում էր ի սկզբանե և խոս-

տացել էր Յորգոլսկայային ուղարկած նամակում («Այս ամենն ինձ արդեն սհավոր ճանճրացրել է, կրկին երագում եմ իմ գյուղական կյանքի մասին և մտադիր եմ շուտով վերադառնալ դրան»), փախավ Սանկտ Պետերբուրգ:

Դա հենց փախուստ էր, ոչ թե գիտակցված արարք, ինչը հասկանալի է դառնում հորաքույր Յորգոլսկայային ուղղված մեկ այլ նամակից: Պետերբուրգ էին մեկնում մոսկովյան երկու ընկերները՝ Օգերովն ու Ֆերգենը: Տոլստոյը փող ուներ և «դիլիժանս նստեց ու գնաց նրանց հետ»:

Տոլստոյը Պետերբուրգից Սերգեյ եղբորը հուսահատությամբ լի նամակ է ուղարկում՝ խնդրելով ամեն գնով փող ճարել, քանի որ վրան կախված է «անիծյալ օռլովյան պարտքը»: Մյուս պարտքերի հետ միասին դա կազմում էր 1200 ռուբլի արծաթով, ու նա եղբորն աղաչում է օգնել իրեն ցորենի վաճառքի հաշվին, ու եթե միայն ցորենը բավական չլինի, ապա նաև «Մավինի անտառի»:

Տոլստոյը սկսում է վատնել հայրական ունեցվածքը:

Ինչ է անտառը կիսատափաստանային Տուլայի նահանգում: Տեղով ոսկի: Հիշենք Նեխլյուտովի ու Չուրիսյոնոկի խոսակցությունը «Կավածատիրոջ առավոտ»-ում: Փայտն ամենահեշտն է վաճառվում ու ամենից դժվար ճարվում: Յասնայա Պոլյանան գեղեցիկ անվանում է, բայց հիշենք, թե Տոլստոյն այն ինչպես է անվանում «Պատերազմ և խաղաղություն» վեպում՝ Լերկ լեռներ:

Սակայն թրթախաղի պարտքը պատվո պարտք է: Եվ ավագ եղբայրն ընթրնումով է մոտենում կրտսերի խնդրանքին: «Անտառը ծախեցի», - գրում է նա ու խոստանում «առաջիկայում 1100 ռուբլի»: Սակայն այդ ընթացքում Լևը, հրապուրվելով բիլյարդով, արդեն հասցրել էր նոր պարտքեր անել: Մայիսի 1-ին նա էլի մի հուսահատ նամակ է ուղարկում Սերգեյին՝ խնդրելով վաճառել Փոքր Վորոտինկա գյուղը, որը ժառանգություն էր ստացել Յասնայա Պոլյանայի հետ: «Կարծում եմ՝ արդեն ասում ես, որ ես ամենադատարկ ջահելն եմ, և ճիշտ ես ասում: Աստված գիտի՝ ինչե՞ր արեցի: Առանց որևէ պատճառի մեկնեցի Պետերբուրգ, այնտեղ խելամիտ ոչինչ չարեցի, միայն ծով փող վատնեցի ու պարտքերի տակ ընկա: Անտանելի հիմարություն: Չես պատկերացնի, թե դա ինձ ինչպես է տանջում: Գլխավորը պարտքերն են, որ անպայման պիտի վճարեմ, և որքան հնարավոր է շուտ, որովհետև շուտ չվճարելու դեպքում փողից բացի կկորցնեմ նաև վարկս»:

Եվ այդ նույն նամակում արդարացում է փնտրում իր համար. «Գիտեմ, որ կզարմանաս, բայց ինչ արած, հիմարությունը կյանքում մի անգամ եմ

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

անում: Պիտի վճարեի իմ ազատության ու փիլիսոփայության համար, ահա և վճարեցի»:

Իրականում Պետերբուրգը սկզբում սթափեցնող ազդեցություն գործեց նրա վրա: Պետերբուրգյան կյանքը խիստ տարբերվում էր մոսկովյանից: Մայր Մոսկվայում անվանի ու տիտղոսակիր ցանկացած երիտասարդ, որը ոչ մեծ եկամուտ ուներ և չուներ որևիցե կրթություն ու ծառայողական աստիճան, ցանկալի հյուր էր ուզածոյ բարձրաշխարհիկ հավաքություն: Իսկ Պետերբուրգն այլ հաշիվ էր ներկայացնում երիտասարդներին...

Հյուսիսային մայրաքաղաքում պետք էր կարիերա անել: Եվ դա Տոլստոյին դուր է գալիս: «Պետերբուրգյան կյանքը,- գրում է նա Սերգեյ եղբորը,- մեծ ու բարի ազդեցություն ունի ինձ վրա: Այն ինձ վարժեցնում է գործնականության և ակամա փոխարինում է կարգացուցակի. մի տեսակ՝ չի կարելի ոչինչ չանել, բոլորը զբաղված են, բոլորը եռուզեռի մեջ են, մարդ չես գտնի, ում հետ կարելի է շփերթ կյանք վարել, իսկ մենակ անհնար է»:

Եվ նա «մտադիր է ընդմիշտ մնալ» Պետերբուրգում: Լուրջ ծրագրեր ունի: Պետերբուրգի համալսարանում էքստենս հանձնել իրավունքի թեկնածուի քննությունները, իսկ եթե չստացվի, ամեն դեպքում անցնել ծառայության՝ քաղաքացիական կամ զինվորական:

Վերջինս նույնիսկ ավելի է գրավում նրան: Հենց այդ ժամանակ հեղափոխություն էր բռնկվել Հունգարիայում, և ավստրիական կայսրը օգնություն էր խնդրել Նիկոլայ I-ից: 1849 թվականի ապրիլի 28-ին հրապարակվեց ռուսական զորքերի մասնակի զորակոչի մանիֆեստը՝ հունգարական խռովությունը ճնշելու համար: Տոլստոյը պատրաստ էր որպես յունկեր ծառայության անցնել Կավալերգարդյան գնդում, «եթե պատերազմը լուրջ լիներ»: Սակայն դրա պատճառը բնավ էլ պատերազմելու անկեղծ ցանկությունը չէր: Բանն այն է, որ ծառայությունը պատերազմի ժամանակ հնարավորություն է տալիս արագ սպայական կոչում ստանալ: Տոլստոյը Սերգեյին գրում է, որ «երջանիկ բերումով, այսինքն եթե գվարդիան գործի մեջ լինի, կարող եմ 2-ամյա ժամկետից շուտ կոչում ստանալ»:

Սակայն այդ ծրագրերից ոչ մեկին վիճակված չէր իրականանալ: Համեմատաբար հեշտ հանձնելով առաջին քննությունները համալսարանում՝ Տոլստոյն անհայտ պատճառով հրաժարվեց մյուսները հանձնելուց: Պատերազմ էլ չգնաց:

Բայցևայնպես, Պետերբուրգն ամեն դեպքում բարերար ազդեցություն քողեց նրա վրա: Դա կատարվեց պարադոքսալիկ կերպով: Պետերբուրգում, ի տարբերություն Մոսկվայի, նրա ինքնասիրությունը վիրավորված

էր. համոզվեց, որ շվայտ կյանքում ինքը չի կարող առաջինը լինել:

1849/50 թվականների ձմեռն ու ամառը նա անցկացրեց Յասնայա Պոլյանայում. զբաղվում էր գյուղական տնտեսությամբ, մարմնամարզությամբ ու երաժշտությամբ՝ թունդ խմող գերմանացի երաժիշտ Ռուդոլֆի հետ, որին Մոսկվայից էր բերել: Հենց այդ ժամանակ էլ սկիզբ դրվեց նրա մանկավարժական գործունեությանը. գեղջուկ երեխաների համար դպրոց կազմակերպելու փորձ արեց: Դրա հետ մեկտեղ՝ կանոնավոր կերպով մեկնում էր Տուլա ու Մոսկվա, շարունակում էր թուղթ խաղալ՝ տանուլ տալով մինչև չորս հազար ռուբլի: Հենց այդ ժամանակ էլ հրապուրվում է գնչուական երգեցողությամբ, ինչը հետագայում արտացոլում գտավ «Կենդանի դիակ» պիեսում: Ընդհանուր առմամբ դա նույն շվայտ կյանքն էր, առանց իմաստի, առանց մշտական զբաղմունքի: Բայց չէ՞ որ նա արդեն 22 տարեկան էր՝ լուրջ տարիք այդ ժամանակի համար:

1850 թվականի դեկտեմբերին Տոլստոյը տեղափոխվում է Մոսկվա՝ ամիսը 40 ռուբլով բնակարան վարձելով Սիլվես Վրաժեկում: Օրագրում նա երեք խնդիր է դնում իր առաջ. 1) Ընկնել թուղթ խաղացողների շրջանն ու փող ունենալու դեպքում խաղալ, 2) Հայտնվել բարձրաշխարհիկ հասարակության մեջ և որոշակի պայմաններում՝ ամուսնանալ, 3) Ծառայության եկամտաբեր տեղ գտնել:

Դա էր ամբողջը, ինչին նա հանգել էր 22 տարեկան հասակում:

### *Ինքն իր լրտեսը*

Եվ ո՞ւմ մտքով կանցներ, որ այդ շփերթ երիտասարդը, այդ «ամենադատարկ ջահելը», իրականում հենց այնպես չէր ապրում, անդեկ ու անառագաստ: Ո՛չ, նա ենթարկվում էր խիստ «կանոնների», որոնք օրագիր վարելու ամենասկզբից ձևակերպել էր իր համար և մանրակրկիտ հետևում էր դրանց կատարմանը:

Արդեն 1847 թվականի մարտի 24-ին, դեռ համալսարանական հիվանդանոցից դուրս գրվելուց առաջ, նա օրագրում գրում է. «Ես շատ եմ փոխվել, բայց դեռ չեմ հասել կատարելության այն աստիճանին (գործի մեջ), որին կցանկանայի հասնել: Ես չեմ անում այն, ինչ նախատեսել էի ինձ համար, արածն էլ վատ եմ անում, հիշողությունս չեմ կատարելագործում: Դրա համար էլ այստեղ գրում եմ որոշ կանոններ, որոնք, ինչպես ինձ թվում է, շատ կօգնեն, եթե հետևեմ դրանց...»:

Եվ գրում է վեց «կանոն»: Դրանցից կարևորագույնների թվին կարելի է դասել հետևյալները. «Ինչ նախատեսված է, անպայման կատարել՝ ոչինչ

## ՊԸՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

հաշվի չառնելով», «Ինչ անում ես, լավ արա», «Երբեք մի դիմիր գրքին, եթե ինչ-որ բան մոռացել ես, այլ ջանա ինքդ հիշել», «Մի ամաչիք քեզ խանգարող մարդկանց ասել, որ խանգարում են. սկզբում զգալ տուր, իսկ եթե չեն հասկանում, ներողություն խնդրիր և ասա դրա մասին»:

1847 թվականի հունվարին Տոլստոյը սկսում է «Ամենօրյա զբաղմունքների մատյան» վարել: Կես տարվա ընթացքում երկու սյունակով գրանցում է, թե ինչ պետք է անել նախատեսված օրը և ինչպես անել: Մատյանից դատելով՝ դինամիկան դրական էր: Եթե սկզբում երկրորդ սյունակը լիքն էր «ուշինչ», «ուշացա», «քնով ամցա» գրառումներով, ապա մարտից սկսած շատ ավելի հաճախ սկսում է հանդիպել կայուն «կատարեցի»-ն:

Մինչև մայիս դա գերազանցապես վերաբերում էր համալսարանական պարապմունքներին: Սակայն Յասնայա Պոլյանա վերադառնալուց հետո հայտնվում են նոր գրառումներ՝ «հանձնարարություններ», «տնտեսություն», «ձիեր», «հաշվետարություն»: Միևնույն ժամանակ նա շարունակում է զբաղվել ինքնակրթությամբ՝ դարձյալ Կազանում նախանշած «պլանով»: Պլանում նախատեսված է իրավագիտության, բժշկության, ֆրանսերենի, ռուսերենի (այդպե՛ս), գերմաներենի, անգլերենի, իտալերենի ու լատիներենի, գյուղատնտեսության տեսական ու գործնական հիմունքների, պատմության, աշխարհագրության, մաթեմատիկայի ու վիճակագրության ուսումնասիրություն: Նախատեսում է գիտական ատենախոսություն գրել և «երաժշտության ու գեղանկարչության մեջ հասնել կատարելագործման միջին աստիճանի»:

Հասկանալի է, որ այդ ամենը նույնիսկ կիսով չափ իրագործվել չէր կարող: Բայց շատ կարևոր է, որ ինքնուրույն կյանքի հենց սկզբից Տոլստոյը հստակ տարանջատում է ինչ «պետք» է և ինչ «կա»:

Ինչպիսի «շվայտ» կյանք էլ վարեր երիտասարդ Տոլստոյը, բնավ երես չէր տալիս իր «ներքին» մարդուն: Եվ «արտաքինի» ու «ներքինի» այդ խզումը տանջում էր նրան:

Տոլստոյը դրանով էր տարբերվում ավագ եղբայրներից: Նիկոլայը կայացավ զինվորական ծառայության մեջ և իրեն միանգամայն հարմարավետ էր զգում: Մերգեյը սկզբում տրվեց արատավոր կյանքի, ծառայում էր գվարդիայում, անկանոն բարձրաշխարհիկ կյանք վարում Մոսկվայում ու Տոլվայում, «զնչություն էր անում», բայց հետո հիմնավոր հաստատվեց Պիրոգովում: Դմիտրին մեկնեց իր Շչերբաչովկա կալվածքը, որտեղ հենց նոր հրատարակված Գոգոլի «Ընտրյալ հատվածներ ընկերների հետ նամակագրությունից» ստեղծագործության ազդեցության տակ պատրաստ-



վում էր կրթել գեղջուկներին: «Նա,- գրում է Տոլստոյը «Հուշերում»,- քսանամյա տղա (երբ ավարտել էր դասընթացը)՝ ստանձնում էր հարյուրավոր գեղջկական ընտանիքների դաստիարակության և պատժի սպառնալիքով ու պատժով կառավարելու պատասխանատվությունը»:

Իսկ կրտսերի գլխավոր աշխատանքը ուղղվում է իր ներսը:

Եվ նա անբան փիլիսոփա չէ, որին մտքի ընթացքը գրավում է ինքնին: Գործնական փիլիսոփա է: Տասնութ տարեկանում, 1847 թվականի փետրվարին գրում է «Կյանքի կանոններ»-ի անավարտ հատվածը, որն ապշեցնում է հստակությամբ և աշխարհում մարդու նշանակության պատկերացման խորությամբ: «Մարդու գործունեությունը,- գրում է այդ պատանին,- արտահայտվում է երկու առումով. 1) Գերագույն գոյի հանդեպ, 2) իրեն հավասար արարածների հանդեպ, 3) իր հանդեպ: Մարդու գործունեության տեսակների այս բաժանումով իմ կանոններն էլ բաժանում եմ երեք մասի: 1) Աստծո հետ հարաբերությունների կամ կրոնական կանոններ, 2) մարդկանց հետ հարաբերությունների կամ արտաքին կանոններ, 3) ինքը քեզ հետ հարաբերությունների կամ ներքին կանոններ: Աստծո հետ հարաբերությունների կամ կրոնական հարաբերությունների խնդիրն է՝ ա) սահմանել ինչ է Աստված, բ) ինչ է մարդը և գ) ինչ հարաբերություններ կարող են լինել Աստծո ու մարդու միջև: Արտաքին կամ մարդկանց հետ հարաբերությունների կանոնները պետք է սահմանեն՝ ա) ստորադրյալների հետ հարաբերությունների կանոնները, բ) հավասարների հետ հարաբերությունները և գ) ղեկավարների հետ հարաբերությունները: Ինքն իր հետ հարաբերությունների կանոնների խնդիրն է՝ սահմանել՝ ինչպես վարվել ա) սեփական բարոյական կամ կրոնական դաստիարակության դեպքում, բ) արտաքին կրթության դեպքում և գ) ֆիզիկական ու մարմնական կրթության դեպքում»:

«Արտաքին» (մարդկանց հանդեպ վերաբերմունքի) և «ներքին» (ինքն իր հանդեպ վերաբերմունքի) կանոնները նա արձանագրում է աներևակայելի բժախնդրությամբ՝ դիմելով միայն իրեն հայտնի ինչ-որ աղյուսակների:

Նա առանց վերահսկողության նույնիսկ շարժվել չէր կարողանում. «Չանալ հաջորդ օրն անել նույն քանակի շարժումներ, որքան նախորդ օրը, եթե ոչ ավելի»: Դա վերաբերում էր մարմնամարզական վարժություններին: Տոլստոյը շատ մեծ նշանակություն է տալիս դրանց: Օրինակ, ծանրաքարերով կամ նույնիսկ սրբիչով վարժություններին. «Մրբիչը բռնած՝ ձեռքերը բարձրացնել գլխից վեր եւ տանել մեջքին»:

Դա վերաբերում է նաև հիշողությանը: Նա հիշողությունն էլ համարում

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

է մարմնամաս, որը նույնպես պետք է մարզել. «Ամեն օր բանաստեղծություններ անգիր անել այն լեզվով, որը վատ գիտես...»:

Դա վերաբերում է նաև զգացմունքներին: Անհրաժեշտ է, որ քո մեջ մարզես մարդկանց հանդեպ սերը, «որպեսզի քո սերն ամեն օր մարդկային ողջ ցեղի հանդեպ արտահայտվի որևէ բանով»: Իսկ մյուս կողմից «ջանա որքան հնարավոր է շատ մարդկանց գտնել, որոնց կկարողանայիր ավելի սիրել, քան բոլոր մերձավորներին...»:

Եվ վերջապես, դա վերաբերում է կամքի զարգացմանը, «որպեսզի ոչինչ արտաքին, մարմնական կամ զգացական ազդեցություն չունենա մտքիդ ուղղության վրա, այլ միտքը որոշարկի ինքն իրեն»: Տոլստոյը ձգտում է ասկետի վիճակի, «որպեսզի ոչ մի ցավ, ինչպես մարմնական, այնպես էլ զգացական, ազդեցություն չունենա մտքի վրա»:

1851 թվականի մարտին, Մոսկվայում, նա օրագրում նոր առաջադրանք է գրանցում. «Թուլությունների (ֆրանկլինյան) մատյան կազմել»: Բենջամին (այդ ժամանակ ասում էին Վենիամին) Ֆրանկլինը (1706-1790թթ.)՝ ամերիկյան լուսավորիչ ու քաղաքական գործիչ, ԱՄՆ Անկախության հռչակագրի ու Սահմանադրության հեղինակներից մեկը, երիտասարդ Տոլստոյի ուշադրությունը գրավել էր ոչ թե իր ծառայություններով, այլ նրանով, որ պատանեկությունից ջանում էր գիտակցաբար ձևավորել իրեն: Տոլստոյն իմացել էր, որ Ֆրանկլինը հատուկ գրքույկ էր պահում, որտեղ նշում էր, թե ինչ բարոյական կանոններ է խախտել անցած օրվա ընթացքում:

Տոլստոյի «Ֆրանկլինյան տետրը», որը նա «Ֆրանկլինյան աղյուսակներ» էր անվանում, մեզ չի հասել: Սակայն օրագիրն ու առանձին «կանոնների» տետրը թույլ են տալիս մոտավորապես պատկերացնել, թե ինչ աղյուսակներ էին: Ըստ էության, Տոլստոյն իր երևակայության մեջ «կրկնակ» է ծնել, խիստ լրտես, որը չարչարում էր նրան անվերջանալի դիտողություններով՝ ոչ միայն այն մասին, թե նա ինչ է արել, այլև ինչ չի արել օրվա ընթացքում:

Ահա մարտի 7-ի գրառումը. «Հիմա: Առավոտյան երկար ժամանակ վեր չեի կենում, ճմլկոտում էի, ինչ-որ կերպ խաբում ինձ: Վեպեր էի կարդում, երբ ուրիշ գործ կար, ինձ ասում էի. «Պետք է, չէ՞, սուրճ խմել», կարծես հնարավոր չէ այլ գործով զբաղվել, քանի դեռ սուրճ ես խմում: Կողմիցի հետ իրերն իրենց անունով չեմ կոչում, թեև երկուսս էլ գտնում ենք, որ քնությունների պատրաստվելը փուչիկ է, ես դա նրան պարզորոշ չասացի: Պուարեն չափազանց մտերմավար ընդունեց և իր նկատմամբ իշխանու-

թյուն տվեց անծանոթ լինելուն, Կոլոշինի ներկայությանն ու անտեղի grand-seigneur-ությանը<sup>15</sup>: Մարմնամարզությունը հապշտապ էի անում: Գորչակովների մոտ չգնացի fausse honte<sup>16</sup>: Կոլոշինների մոտ շատ վատ դուրս եկա հյուրասենյակից, չափազանց շտապում և ուզում էի որևէ սիրալիք բան ասել, չստացվեց: Մանեժում տրվեցի mauvais humeur<sup>17</sup> ու մոռացա գործի մասին: Բեգիչևի մոտ ուզում էի ինքնարտահայտվել և, համոթ ինձ, ցանկանում էի ընդօրինակել Գորչակովին: Fausse honte: Ուխտոմսկուն չհիշեցրի փողի մասին: Տանը ժոյակից նետվում էի դեպի գիրքը և գրքից՝ ծխամորճն ու ուտելիքը: Գեղջուկների մասին չէի մտածում: Չեմ հիշում՝ ստո՞ւմ էի: Պետք է որ: Պարֆիլևների ու Պանինի մոտ անմտածված չգնացի»:

Օրվա ընթացքում արած որոշ «սխալներ» պարզապես անհետք են: Օրինակ՝ չգնաց Պարֆիլևների ու Պանինի մոտ, հետո՞ ինչ: Ճիշտ նույն կերպ անհնար է չնկատել, որ միևնույն «մեղքի» համար Տոլստոյը իրեն բազմակի է պատժում՝ պարզապես «մեղքը» կոչելով այլ անունով: Նրա «կրկնակը» իրեն տաղտկալի դաստիարակի պես է պահում: Ու դրանով, թերևս, տհաճ է:

Տեսակետ կա, որ երիտասարդ Տոլստոյն այդկերպ իր մեջ դաստիարակում էր «արիստոկրատին»: Հնարավոր է, որ այդպես է: Երիտասարդ տարիներին նա հսկայական նշանակություն էր տալիս արտաքին պահվածքին և նրան, թե իրեն ինչպես են նայում բարձրաշխարհիկ հասարակության մեջ: Բայց ինքն իրեն «լրտեսելու», իր պահվածքի մասին ամենօրյա հաշվետվություններ գրելու սովորությունը նրա մեջ պահպանվել է նաև «արիստոկրատիզմից» հրաժարվելուց հետո: Դրա համար էլ հետաքրքիր է մեկ այլ տեսակետ, որը հոր մահվանից շատ տարիներ անց արտահայտել է նրա ավագ դուստրը՝ Տատյանա Լվովնա Սուխոտինա-Տոլստայան.

«...միակ պատճառը, թե հորս գրքերը, հայացքները ու կյանքը ինչու էին այդքան բարձր ընդհանուր մակարդակից ու նրա վրա էին սևեռել ողջ աշխարհի ուշադրությունը, այն է, ինչը նա ողջ կյանքում հստակ գիտակցում և ողջ ուժով պայքարում էր իր կրքերի, արատների և թուլությունների դեմ: Նրա ահռելի տաղանդը, հանճարը նրան գրական վաստակած հարգանք բերեցին այսպես կոչված «ուսյալ հասարակության» շրջանում, բայց և

15. Բարձրաշխարհիկ կարևորություն (ֆր.):

16. Կեղծ ամոթից (ֆր.):

17. Վատ տրամադրություն (ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

ցանկացած գեղջուկ ցանկացած խուլ անկյունում գիտեր, որ կարող է դիմել նրան և համակրություն ակնկալել հավատի, կատարելագործման, կասկածների և այլ հարցերում. դրան նա պարտական է նրանով, որ իր ոչ մի մեղք, ոչ մի թուլություն բաց չի թողել առանց դատապարտելու և հաղթահարման փորձի: Նրա բնավորությունը շատերից լավը չէր, գուցե և ավելի վատն էր: Բայց կյանքում երբեք իրեն թույլ չտվեց ասել, որ սևը սպիտակ է, իսկ սպիտակը՝ սև կամ գոնե գորշ: Կոտորակի համարիչը մարդու որակների և հայտարարը՝ իր մասին կարծիքի սրամիտ համեմատությունը շատ ավելի խորն է, քան թվում է:

Պապա՝ն հսկա համարիչ ու փոքր հայտարար ուներ, դրա համար էլ մեծությունն ահռելի էր»:

Մարդու համեմատությունը կոտորակի հետ Տոլստոյի ուշ շրջանի բանաձևն է: Համարիչն այն է, ինչ մարդն իրենից ներկայացնում է իրականում, իսկ հայտարարը՝ ինչ նա իր մասին մտածում է: Եվ այդ բանաձևն իսկապես շատ ավելի խորն է, քան թվում է: Դրա մեջ կարևոր է ոչ միայն և գուցե ոչ այնքան համարիչի մեծությունը: Շատ ավելի կարևոր է հայտարարի մեծությունը:

Ի վերջո, մարդը որպես համարիչ մեկ է: Համարել, որ 5 կամ 12 կամ 50 հազար է, չափազանց կամայական ու կասկածելի կլիներ: Բայց ահա իր մասին նրա կարծիքը կարող է անվերջ մեծ կամ անվերջ փոքր լինել: Ուստի մարդու իրական արժեքը որպես կոտորակ կախված է հայտարարից, ոչ թե համարիչից: Որքան հայտարարը փոքր է մեկից, այնքան մեծ է անհատի արժեքը: Եվ հակառակը, որքան այն մեծ է մեկից, այնքան քիչ անհատականություն է մնում:

Իր «Ֆրանկլինյան օրագիրը» սկսելիս Տոլստոյը դժվար թե մտածած լիներ դրա մասին: Բայց դրանով ազդակ տրվեց նրա ողջ ապագա կյանքին: Ամերիկացու պատահական ընդօրինակումից (դարձյալ ընդօրինակում) ծնվում էր նոր Տոլստոյը, որը բացահայտել էր հոգևոր ազատության օրենքը:

Պետք է լինել, ոչ թե թվալ:

### *Կովկասի գերիին*

Նոր, 1851 թվականը Տոլստոյը դիմավորեց ճանապարհին:

1850 թվականի դեկտեմբերի վերջին, եռամյա բաժանումից հետո, Կովկասից եկել էր Նիկոլայ Տոլստոյը և իջևանել Մաշա քրոջ ու նրա ամուսին Վալերիան Պետրովիչ Տոլստոյի (նրանց հեռավոր ազգականի) Պոկրովսկոյե կալվածքում: Եղբոր նամակը ստանալով՝ Լևը դեկտեմբերի 31-ին մեկ-

նեց Մոսկվայից և արդեն հունվարի 1-ին Պոկրովսկոյեում էր: Այնտեղ ժամանեց նաև Դմիտրին՝ Կուրսկից: Նիկոլայը Սերգեյին այցելեց Տուլայում և դժգոհ մնաց նրա վիճակից ու պահվածքից:

«Սերյոժան,- գրում էր նա Լևին՝ Մոսկվա,- շարունակում է զնչուություն անել, գիշերներն՝ այնտեղ, իսկ ցերեկները ժամեր շարունակ անվա ու թափփված նստում է պատուհանի առաջ: Աշխուժանում է միայն, երբ զնչուներից մեկնումեկը նրան լուր է բերում Մաշայի մասին (*զնչուի Մարիա Շիշկինայի-Պ.Բ.*)... Նկատել եմ, որ դու իրավացի ես՝ «Սերյոժան լրիվ բարոյալքվելու մեծ վտանգի մեջ է»: Նստել է Տուլայում, որտեղ, նրա կարծիքով, զնչուներից բացի բոլորը սրիկաներ են»:

Ըստ երևույթին Սերյոժայի մասին Նիկոլայի ու Լևի խոսակցությունը եղել է Պոկրովսկոյեում, Նոր տարին նշելիս: Եվ ուշագրավ է, որ հիմա արդեն փոքր եղբայրը՝ «ամենադատարկ ջահելն» էր անհանգստանում ավագ եղբոր համար:

1850 թվականի դեկտեմբերին Սերգեյը Լևին մի քանի ցամաք գրեց՝ խնդրելով դասավորել ֆինանսական և ծառայության հետ կապված իր գործերը: Բայց դա դերերի ընդամենը փոքրիկ փոփոխություն էր: Լևն ինքը խոստովանում էր, որ Կովկաս մեկնելուց առաջ միանգամայն «անասուն կյանք էր վարում» Մոսկվայում: Թղթախաղ, պարտքեր, մույն զնչուները... Եվ որևէ աշխատանքի բացակայություն...

Դա պարոնորդու կյանք էր, որը ցանկանում է արիստոկրատ դառնալ՝ ընկալելով այն որպես արտաքին պահվածքի և հասարկության մեջ իրեն ներկայացնելու ամբողջություն:

Երիտասարդ Տոլստոյի մտածումների մասին կարելի է դատել կազանյան մի դրվագից. Լևն ու Նիկոլայը այնտեղ էին հայտնվել Կովկասի ճանապարհին: Այդ դրվագը հենց Լև Նիկոլակիչի պատմածով ներկայացրել է Պ.Բ. Բիրյուկովը:

«Լև Նիկոլակիչն այդ ուղևորության ընթացքում շարունակում էր ամենահիմար, բարձրաշխարհիկ տրամադրության մեջ մնալ: Նա պատմում էր, որ հենց Կազանում եղբայրը ստիպել է զգալ իր հիմարությունը: Նրանք շրջում էին քաղաքում, երբ կողքից կառքով ինչ-որ պարոն անցավ՝ անձեռնոց ձեռքերը ձեռնափայտին դրած:

- Ըստ երևույթին անպետք մարդ է այս պարոնը:
- Ինչո՞ւ,- հարցրեց Նիկոլայ Նիկոլակիչը:
- Առանց ձեռնոցների է:
- Եվ ինչո՞ւ է անպետք, որ ձեռնոցներ չունի՞,- իր աննշմարելի խելացի

հեզնոտ ժպիտով հարցրեց Նիկոլայ Նիկոլակիչը»:

Տոլստոյն ինչո՞ւ էր մեկնում Կովկաս: Ամենայն հավանականությամբ, Նիկոլենկան էր համոզել: Սակայն Լևի օրագրից դատելով՝ եղբայրների միջև, Պոկրովսկոյեի հանդիպման ժամանակ, իսկական փոխըմբռնում չկար: «Պոկրովսկոյեում էի, հանդիպեցի Նիկոլային: Չի փոխվել, իսկ ես՝ շատ, և կարող էի ազդեցություն ունենալ նրա վրա, եթե նա այդքան տարօրինակ չլիներ. կամ ոչինչ չի նկատում ու չի սիրում ինձ կամ ջանում է ձևանալ, թե չի նկատում ու չի սիրում»:

Դեռ 1848 թվականի ամռանը Տոլստոյը քիչ էր մնում իր ապագա փեսա Վալերիան Տոլստոյի հետ մեկներ Սիբիր: Նրա կառքի մեջ թռավ միտակ բլուզով, առանց գլխարկի, ու չմեկնեց գուցե այն պատճառով, որ գլխարկը մոռացել էր: Նույն կերպ մեկ տարի անց Մոսկվայից փախավ Պետերբուրգ՝ ցատկելով ընկերներին տանող դիլիժանսի մեջ:

Հորաքույր Տ.Ա. Յորգոլսկայային ուղարկած նամակում Տոլստոյը Կովկաս մեկնելը անվանում է «coup de tete»՝ «անսպասելի ֆանտազիա»: Հորաքույրը նույնպես համարում էր, որ «Կովկաս մեկնելիս նա ոչ մի ծրագիր չուներ: Պատանի երևակայությունը նրան ասում էր՝ որոշ հանգամանքներում մարդը պիտի տրվի դիպվածի՝ ամենայն ինչի այդ վարպետ կարգավորողի կամքին» (օրագրային գրառում):

Հորաքույրը բոլորից լավ էր հասկանում զարմիկի խառնվածքը: Ամեն ինչում, որ չէր վերաբերում ներքին աշխարհին, Տոլստոյը բացարձակ ճակատագրապաշտ էր: Հեշտությամբ փոխում էր կյանքի արտաքին հանգամանքները՝ տրվելով դիպվածի կամքին: Հեշտ թողեց համալսարանը, հեշտությամբ թողեց տնտեսությունն ու հանգիստ հրաժարվեց բարձրաշխարհիկ կյանքից՝ հանուն կովկասյան խստաշունչ ծառայության: Իսկ Նիկոլենկա՞ն: Նա էլ դիպվածի օգնականի դեր խաղաց:

Հասկանալի է, որ այդ անսպասելի մեկնումը, ավելի պարզ ասած՝ փախուստը, իր պատճառներն ուներ: Դրանք ներկայացված են «Կազակներ» վիպակի սկզբում, ուր խոսվում է իշխան Օլենինի՝ հեղինակի ավտեր էգոյի, Կովկաս մեկնելու մասին: Տոլստոյը փախչում էր Կովկաս՝ խճճվելով պարտքերի, կանանց, «անասնական» կյանքի մեջ, հուսալով, որ ռուս բանաստեղծների և արձակագիրների գովերգած կովկասյան բնությունը, ինչպես և վտանգավոր ծառայությունը իրեն կդարձնեն ճշմարիտ ճանապարհի:

Պատահական չէ, որ վիպակի սևագիր վերնագիրն էր «Փախստականը»: Ուղևորությունը Կովկաս եղբայրները կազմակերպել էին ռոմանտիկ արկածի ոճով: Մինչև Սարատով գնացին ձիերով, այնտեղից Աստրախան՝

մի մեծ առագաստանավակ վարձեցին՝ լոցմանով ու երկու թիավարներով: Նավակն այնքան մեծ էր, որ, որ նրանց կառքն էլ տեղավորվեց: Համարյա մեկ ամիս տևեց այդ ուղևորությունը: Հետագայում Տոլստոյն այն հիշում էր որպես իր «կյանքի լավագույն օրեր»:

Ճանապարհին, Կազանում, ինչպես վայել է ռոմանտիկ ճամփորդությանը, նա սիրատածում է Չինաիդա Մոլոսովովային, որը Մաշա քրոջ ընկերուհին էր Ռոդիոնովյան ինստիտուտից: «Նա գեղեցկուհի չէր,- այդ աղջկա մասին գրում էր նրա ազգականուհին,- բայց սաշեցուցիչ բարեկամ էր, հմայիչ ու հետաքրքիր»: Չինաիդան հատուկ հանձնարարություններով պաշտոնյա Նիկոլայ Վասիլևիչ Տիլեի հարսնացուն էր, և դա նրանց սիրուն ինչ-որ անհաստատ, անիրական, ուստի և առանձնակի հուզիչ բնույթ էր տալիս: Ռոդիոնովյան ինստիտուտի պարահանդեսին Չինաիդա Մոլոսովովան մագուրկա էր պարում միայն Տոլստոյի հետ: Ըստ երևույթին նա էլ աղջկան էր դուր գալիս: Կովկասում նա օրագրում կգրի. «Հիշո՞ւմ ես Հայրապետական այգին, Չինաիդա, կողային ուղյակը: Լեզվիս ծայրին խոստովանություն էր, ու դու էլ պատրաստ էիր խոստովանանքի: Իմ գործը սկսելն էր. բայց գիտե՞ս, իմ կարծիքով ինչու չսկսեցի: Ես այնքան երջանիկ էի, որ ոչինչ չէի ցանկանում ու վախենում էի փշացնել իմ... ոչ իմ, այլ մեր երջանկությունը»:

Նա ուզում էր Չինաիդային նամակ ուղարկել Կովկասից, բայց... չգիտեր հայրանունը՝ Մոդեստ: Այդպես ոչնչով էլ ավարտվեց Տոլստոյի կյանքում առաջին սիրո պատմությունը:

Հայտնվելով կազակական Ստարոգլադկովսկի ստանիցայում, որտեղ ծառայում էր Նիկոլեյնկան, նա 1851 թվականի մայիսի 30-ին օրագրում գրում է. «Ինչպե՞ս եմ այստեղ ընկել: Չգիտեմ: Ինչի՞ համար: Նույնպես...»:

Ամեն դեպքում այդ երազանքներից մի քանիսը կատարվեցին: Կովկասի բնությունը գերում էր Տոլստոյին: Մանավանդ սարերը: «Հանկարծ նա քսան քայլի վրա տեսավ, ինչպես նրան թվաց առաջին պահին, մաքուր-սպիտակ վիթխարիներին՝ քնքուշ ուրվագծերով, և դրանց գազաթների ու հեռավոր երկնքի զարմանալի հստակ գիծը: Եվ երբ հասկացավ իր ու սարերի և երկնքի ողջ հեռավորությունը, և երբ զգացվեց ողջ անսահմանությունն այդ գեղեցկության՝ վախեցավ, որ դա ուրու է, երազ: Թափ տվեց իրեն, որ արթնանա: Նույն սարերն էին... «Ահա սկսվեց», - կարծես ասաց ինչ-որ մեկի հանդիսավոր ձայնը... («Կազակներ»):

Մակայն բուն Ստարոգլադկովսկի ստանիցան ցածրավայրում էր, որտեղից սարերը չէին երևում: Իսկ սպայական բարքերը ոչ այնքան խստաշ-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

ունչ, որքան կոպիտ էին: Այստեղ սպան հազիստ կարող էր մյուսին ասել. «Բարև, մռո՛րք»:

«Բոլոր սպաները,- գրում էր Տոլստոյը հորաքրոջը,- անկիրթ, բայց փառահեղ մարդիկ են, և գլխավորը՝ սիրում են Նիկոլենկային»: Բայց Նիկոլայն այդտեղ յուրային էր, իսկ կրտսեր եղբայրը ստիպված էր հարմարվել նոր հարաբերություններին:

«Սպաներից մեկն ասում էր, որ գիտի, թե ինչ է ուզում ցույց տալ տիկնանց, ու համոզված էր, որ չնայած իր կարճ հասակին ու փոքր չափերին, համենայնդեպս ցույց տալու բան ունի» (1851 թվականի հուլիսի 4-ի օրագրային գրառումը):

Կովկասում ծառայում էին շարքայինի աստիճանագրկված սպաներ, քրեական կամ քաղաքական հանցագործությունների համար ազնվական տիտղոսից զրկվածներ: Նրանց հավաքական կերպարը Տոլստոյը ներկայացրել է «Կովկասյան հուշերից: Աստիճանագրկվածը» պատմվածքում: Դա զինվոր Գուսկովն է՝ տհաճ ու նույնիսկ նողկալի, բայց և խղճուկ մի տիպ: «Խեղճ», «փոքրիկ» մարդուն նետված այս ուրիշ հայացքը տարբերվում էր ռուսական գրական ավանդույթի մեջ ընդունված մոտեցումից: Գուսկովը խղճահարություն է հարուցում, բայց ոչ գթասրտություն: Նա անծանոթ սպաներից փող է կորզում օդու, թղթախաղի համար: Ջանում է նրանց հետ մտերմավար լինել, բայց և շարունակ շողոքոքում է:

Գուսկովի նախատիպերից մեկը Ալեքսանդր Մատվեևիչ Ստասյուլևիչն էր՝ աստիճանագրկված անհայտ արարքի համար, որ գործել էր Թիֆլիսի բանտի պահակախմբի պետի պաշտոնում: Ըստ մի վարկածի՝ կաշառք վերցնելով օգնել էր փախչել մի քանի բանտարկյալի: Մյուս վարկածով՝ նրա ենթակաները գիշերներն արձակում էին անուղղելի ավազակներին, որոնք կողոպտում ու սպանում էին գիշերային Թիֆլիսում, իսկ ավարը կիսում պահակախմբի հետ: Նա հարազատ եղբայրն էր նշանավոր պատմաբան ու լրագրող Մ. Մ. Ստասյուլևիչի, որը հետագայում «Վեստնիկ Եվրոպի» հանդեսի խմբագիրն էր. հանդեսում տպագրվում էին Ի. Ս. Տուրգենևը, Ի. Ա. Գոնչարովը, Ա. Ն. Օստրովսկին, Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինը, Պ. Դ. Բոբորկինը և այլ գրողներ: Իսկ ահա եղբայրը որպես շարքային անցնելով Կովկասյան ու Ղրիմի ռազմարշավները և վերադարձնելով սպայական կոչումը, անսպասելիորեն ու բավական տարօրինակ կերպով ինքնասպան եղավ. մորթե մուշտակը հագին մտել էր գետն ու խեղդվել:

Գուսկովի մյուս նախատիպերը Ալեքսանդր Իվանովիչ Եվրոպետուն ու Նիկոլայ Սերգեևիչ Կաշկինն էին՝ Պետրաշևսկան խմբակի անդամներ.



այդ խմբակի անդամ էր նաև Ֆյոդոր Միխայլովիչ Դոստոևսկին: Տոլստոյի՝ Կովկասում ծառայելու ընթացքում Դոստոևսկին պատիժ էր կրում տաժանակրության մեջ, Օմսկում: Այդպես, անուղղակի հատվեցին երկու ռուս մեծ գրողների ճանապարհները:

Տոլստոյի ծառայությունը Կովկասում, որտեղ նա մնաց երկուսուկես տարի (1851 թվականի հունիսից մինչև 1854-ի հունվար), բարդ տպավորություն է թողնում: Կովկասյան ակնարկները (Բացի «Աստիճանագրկվածից», «Հարձակումը», «Անտառահատումը», «Քեռի Ժղանովն ու կավալեր Չեռնովը», «Թե ինչպես են մեռնում ռուս զինվորները») խիստ տարբերվում են այն գործերից, որ Տոլստոյը հետագայում գրեց պաշարված Սևաստոպոլում: «Թե ինչպես են մեռնում ռուս զինվորները» պաթետիկ պատմվածքից բացի, ակնարկներն ավելի շուտ քննադատական են, չնայած Տոլստոյը վստահ էր Կովկասյան պատերազմի արդարացիությանը: Բայց զգում էր, որ լեռնականներն էլ իրենց ճշմարտությունն ունեն: Դժվար թե Տոլստոյին դուր գար պատերազմի դաժան մարտավարությունը, երբ տեղի բնակչությանը բարեբեր հողերից հետևողական դուրս էին մղում անպտուղ կիրճերը՝ ավերելով աուլներն ու հատելով անտառները, որոնք կարող էին հարմար տեղ դառնալ դարանների համար: Այո՛, նա հասկանում էր, որ «լեռնականների հետ ռուսների պատերազմում ինքնապահպանման զգացումից բխող արդարությունը մեր կողմն է: Եթե չլիներ այդ պատերազմը, հարուստ ու լուսավորյալ ռուսական տիրույթներն ինչը կպահպաներ վայրի ու մարտաշունչ ժողովուրդների կողոպուտից, սպանություններից, հարձակումներից» («Հարձակում» ակնարկի սևագիր տարբերակ): Բացի այդ, լեռնականներին հնտորեն աջակցում էին Անգլիան ու Թուրքիան, որոնք իրենց շահերն ունեին այդ տարածաշրջանում:

Սակայն Տոլստոյը քաղաքական գործիչ չէր, ասենք, զինվորական էլ չէր իր բնույթով: Նա աստիճանաբար վարժվում էր ռազմերթի կենցաղին և նույնիսկ սկսել էր հաճելի կողմեր գտնել դրա մեջ՝ որսորդություն, ազատ կյանք, հինալի բնություն... Տոլստոյին գրավում էին իրենց կյանքն ամեն օր մահացու վտանգի ենթարկող մարդկանց պարզ հարաբերությունները: Ջինվորների ու սպաների շրջանում նա բացահայտեց բազում հրաշալի ու խիզախ մարդկանց: Օրինակ, մարտկոցի հրամանատար Ալեքսեևը, ում հետ նամակագրություն էր պահպանում Կովկասում ծառայելուց ինը տարի անց էլ, կամ ուրալյան կազակ Խիլկովսկին՝ «ծեր զինվոր, հասարակ, բայց ազնվագարն, քաջ ու բարի», կամ երիտասարդ սպա Բուեմսկին, որը նախատիպ է ծառայել «Հարձակում» ակնարկի Ալանինի, գուցե նաև Պետ-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

յա Ռոստովի համար «Պատերազմ և խաղաղություն» վեպում:

Բայց դիմենք «Հարձակում» ակնարկին, որտեղ նկարագրվում է լեռնցիների դեմ պատժիչ արշավանքներից մեկը, որին մասնակցել էր Տոլստոյը: Նրա աչքի առաջ անհեթեթ գոհվում է նույն «գեղեցկատես պրապորշչիկ Ալանինը, որն անընդհատ մոտենում էր կապիտանին և «ուռա»-ով գրոհի թույլություն խնդրում...»:

«- Մենք նրանց հետ կմղենք,- համոզված ասում էր նա,- հետ կմղենք:- Պետք չի,- խաղաղ պատասխանում էր կապիտանը,- պետք է նահանջել»:

Չեչենական աուլը գրավելիս ռուսները դիմադրության չհանդիպեցին, բայց նահանջի ժամանակ, առաջին իսկ անտառակում ծուղակն ընկան: Ահա թե ինչու էր պատանին այդպես մարտի մղվում... Չէր համբերում մասնակցելու իսկական գործի: Նա դեռ չէր հասկանում առկա մարտավարությունը: Նա արդար պատերազմ էր ուզում:

«Խիզախ փայլ կար նրա սքանչելի սև աչքերում»:

Ենթասպան «մահանալիս գունատ էր թաշկինակի պես, ու սիրունիկ գլուխը, որի վրա մեկ րոպե առաջ նրան ոգևորող մարտաշունչ ցնծության գուտ ստվերն էր մնացել, մի տեսակ տարօրինակ թաղվել էր ուսերի մեջ ու խոնարհիվել կրծքին...»:

Դրանից առաջ նա փրկել էր ուլիկին, որին կազակներն ուզում էին մորթել աուլում: Ուլիկի խղճալի մկկոցը երեխայի լացի տեղ էր դրել ու նետվել օգնության. «Չեռք մի՛ տվեք, մի՛ խփեք նրան,- ճշում էր մանկական ձայնով»:

Տոլստոյի կովկասյան ակնարկները բռնության քիչ տեսարաններ չունեն, այդ թվում և սեփական զինվորների նկատմամբ բռնության: «Քեռի Ժղանովն ու կավալեր Չեռնովը» անավարտ ակնարկում պատմվում է Սարատովի նահանգից զորակոչված տղայի մասին: Ով չէր ծուլանում՝ ծեծում էր նրան, որովհետև այդ «հիմարիկը» չէր կարողանում ծառայել: «Նրան ծեծում էին վարժանքի ժամանակ, ծեծում էին աշխատելիս, ծեծում էին գորանոցում: Հնազանդությունն ու խոսելու ձիրք չունենալը ամենավատ մտքերն էին հուշում պետերին, իսկ զորակոչիկները շատ պետեր ունեն. մի տարով մեծ ցանկացած զինվոր քշում է նրանց ուր կուզի և ինչպես կուզի... Նրան քշում էին վարժանքի, գնում էր, ձեռքն էին տալիս տապարն ու հրամայում՝ ձեռքդ այսպես շարժիր, անում էր, ինչքան կարող էր, ծեծում էին՝ դիմանում էր: Նրա համար չէին ծեծում, որ ավելի լավ անի, այլ որ զինվոր էր, իսկ զինվորին հարկ է ծեծել: Բշում էին աշխատանքի, գնում ու աշխատում էր, և նրան նորից ու նորից էին ծեծում, ոչ թե նրա համար, որ ավելի շատ ու լավ աշխատի, այլ որովհետև այդպես է պետք... Երբ ավագ զինվոր-

ըն մոտենում էր, նա հանում էր գլխարկը, լարի պես ձգվում և պատրաստ էր գլխապատառ վազել՝ ուր կիրամայեն, իսկ եթե զինվորը բարձրացնում էր ձեռքը, որ ծոծրակը քորի, արդեն սպասում էր, որ հիմա կսկսեն խփել, աչքերը կկոցում ու ճակատը կնճռոտում էր...»:

Տոլստոյի կովկասյան ակնարկներում ի հայտ եկավ այն, ինչը հետագայում կդառնա նրա աշխարհայացքի հիմքը: Ցանկացած բռնության մերժումը: Ուլիկի, երեխայի, թե զինվորի նկատմամբ: Այդ ամենը նրա մեջ կամ զգվանք, կամ ներհուն տխրություն է արթնացնում, ինչպես Ալանիհնի գոհվելու դեպքում: Այդ մահը տառաջիորեն հիշեցնում է Պետյա Ռոստովի մահը, որը նախորդ օրը սպաներին չամիչ էր հյուրասիրում ու խղճում գերված ֆրանսիացի տղային:

Պատահական չէ, որ ոչ «Հարձակումը», ոչ «Անտառահատումը», ոչ «Աստիճանագրկվածը», որոնք «Մովրենենիկ» ամսագրում տպագրվեցին, երբ լույս էին տեսնում «Մանկությունը», «Դեռահասությունը», «Պատանեկությունը» և «Սևաստոպոլյան պատմվածքները», որոնք հսկայական ընթերցողական հաջողություն բերեցին հեղինակին, համարյա ուշադրության չարժանացան հասարակության ու քննադատների կողմից: Այդպիսի Տոլստոյին դեռ պետք էր վարժվել: Ընդունե՞լ (թե՞ չընդունել), որ իրավացի է (կամ իրավացի չէ) նրա խիստ ծայրահեղ աշխարհայացքը, որտեղ ոչ մի բռնություն արդարացում ունենալ չի կարող:

Չնայած դրան, Տոլստոյը Կովկասում էլ հիմնականում շարունակում է նույն ապրելակերպը, որ վարում էր և՛ Մոսկվայում, և՛ Պետերբուրգում, և՛ Տուլայում: Դարձյալ թղթախաղ, աղջիկներ... Տանուլ է տալիս իր փողերը, եղբոր փողերը, պարտքերի տակ ընկնում ու մեղայական նամակներ գրում հորաքույր Յորգոլսկայային: Կովկասյան շրջանն, ավաղ, ավարտվում է նույն կերպ, ինչ կազանյանը՝ բուժում տհաճ հիվանդությունից: Սակայն Տոլստոյի այդ ժամանակվա օրագիրը կարդալիս, չխոսելով արդեն «Մանկության» մասին, տեսնում ենք, թե ինչ անսպասելի է աճում այդ ապագա հոգևոր հսկան: Եվ այդ ամենը հանկարծ է կատարվում:

Կովկասում գտնվելու առաջին իսկ օրերին նա հանկարծ ուժգին կրոնական ցնցում է ապրում, որը չի կարողանում ոչ թե բացատրել, այլ նույնիսկ նկարագրել ճշգրիտ բառերով:

Հունիսի 12-ի գրառումը. «Երեկ համարյա ամբողջ գիշեր չքնեցի. օրագիրը լրացնելով՝ սկսեցի աղոթել Աստծուն: Աղոթելիս ունեցած զգացումի քաղցրությունն անհնար է նկարագրել: Կարդացի աղոթքները, որ սովորաբար ուղղում եմ Հորը, Աստվածամորը, Երրորդությանը, Գթության Դռանը,

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Պահապան հրեշտակին ու դեռ շարունակում էի աղոթել: Եթե աղոթքը խնդրանք կամ երախտագիտություն են համարում, ապա ես չէի աղոթում: Ես ցանկանում էի մի բարձր ու լավ բան, բայց ի՞նչ՝ չեմ կարող ասել, չնայած և հստակ գիտակցում էի՝ ինչ եմ ցանկանում: Ուզում էի ձուլվել Համընդգրկուն Արարածի հետ: Խնդրում էի Նրան ներել հանցանքներս, բայց՝ ոչ, դա չէի խնդրում, քանզի զգում էի, որ եթե ինձ տվել է այս երանելի բույն, ուրեմն ներել է ինձ: Ես խնդրում ու դրա հետ մեկտեղ զգում էի, որ խնդրելու ոչինչ չունեմ, որ չեմ կարող ու չգիտեմ խնդրել: Ես երախտագիտություն էի հայտնում նրան, այո՛, բայց ոչ բառերով, ոչ մտքերով: Ես մի զգացմունքի մեջ էի միավորում ամենը՝ և՛ աղաչանքը, և՛ շնորհակալությունը: Վախի զգացումն իսպառ չքվեց: Հավատի, հույսի ու սիրո զգացումներից ոչ մեկը չէի կարող առանձնացնել ընդհանուր զգացմունքից: Ո՛չ, ահա այն զգացումը, որ ապրեցի երեկ. դա սերն է Աստծո հանդեպ: Մերը՝ վեհ, իր մեջ միավորող ամենայն լավը, մերժող ամենայն վատը»:

Այդ ցնցումը կարծես ավարտվեց ոչնչով. «...մարմնական, մանրախնդիր կողմը նորից հաղթեց, և մի ժամ էլ չանցած, ես համարյա գիտակցված լսեցի արատի, սնափառության, կյանքի փուչ կողմի ձայնը, գիտեի՝ որտեղից է այդ ձայնը, գիտեի, որ կկործանի երանությունս, պայքարում էի ու տրվեցի նրան: Քնեցի՝ երազելով փառքի, կանանց մասին. բայց ես մեղավոր չեմ, ես չէի կարող: Հավերժ երանությունն այստեղ անկարելի է: Տառապանքներն անհրաժեշտ են: Ինչո՞ւ. չգիտեմ...»:

Եվ դա նրան հիշեցնում է Կովկաս ժամանելու առաջին տպավորությունը. «Ինչպե՞ս եմ այստեղ ընկել: Չգիտեմ: Ինչո՞ւ՝ նույնպես»:

Կովկասն ինչ-որ բան արթնացրեց Տոլստոյի մեջ: Դա հզորությամբ երկրորդ ներքին ցնցումն էր համալսարանական հիվանդանոցում զգացածից հետո: Նրա հոգևոր ծննդի ևս մի փուլ:

Պատահական չէ, որ Տոլստոյը հենց Կովկասում է գրում «Մանկությունը»: Ավելի վաղ էր սկսել, դեռ Մոսկվայում ու Յասնայա Պոլյանայում, բայց ավարտել կարողացավ հենց Կովկասում: Ըստ երևույթին Կովկասի բնությունը, վճիտ լեռնային օդը, ինչպես և մարդկանց թափանցիկ փոխհարաբերությունները նպաստում էին դրան: «Մանկությունը» Տոլստոյի առաջին ավարտուն գործն է: Ու միանգամից՝ մեծագույն ստեղծագործություն: Հանկարծ ռուսական ու համաշխարհային գրականություն մտավ նոր հանճար:

«Մովրենենիկում» «Մանկության» տպագրության հետ մի ծիծաղաշարժ դեպք է կապված: Վիպակն ուղարկելով Պետերբուրգ՝ Տոլստոյը չէր

համարձակվել նշել իր լրիվ անունը ու ստորագրել էր «Լ.Ն.»։ Վիպակն ավարտել էր Պյատիգորսկում, որտեղ ջրաբուժություն էր անցնում։ Մշտական բնակության վայր չունենալով՝ նա Ստաբոգլադկովսկի ստանիցայից Նեկրասովին ուղղված նամակում նշում է նույնպես գրողությամբ տարված Նիկոլայ եղբոր հետադարձ հասցեն։ Նիկոլայը Տոլստոյների հարազատների ու ծանոթների շրջանում հայտնի էր որպես խելացի ու հիմնավոր մարդ, ինչպիսին չէր Լյովոչկան նրանց պատկերացմամբ։ Դրա համար էլ շատերը որոշեցին, որ «Մանկությունը» Նիկոլայի գրական մուտքն է։ Չէ՞ որ գլխավոր հերոսի անունն էլ Նիկոլենկա էր։

Չեռագիրը Նեկրասովին ուղարկելով՝ խորհրդավոր «Լ.Ն.» -ն նամակում պարզորոշ հասկանալ է տալիս, որ «Մանկությունը» միայն սկիզբն է «Չարագաման չորս շրջան» հսկա վեպի (Տոլստոյը նախատեսում էր, որ չորս մաս է լինելու՝ «Մանկություն», «Դեռահասություն», «Պատանություն» ու «Երիտասարդություն»)։ Դրա համար էլ նա համաձայն էր ցանկացած կրճատման, սակայն պահանջում էր վիպակը տպագրել «առանց հավելումների ու փոփոխությունների»։ Եվ դա հասկանալի է. հավելումներն ու փոփոխությունները կարող էին խախտել ապագա «շինության» ամբողջականությունը։ Բայց Նեկրասովը փորձառու լրագրող էր։ Նա ըստ արժանվույն գնահատեց անհայտ հեղինակի տաղանդը, բայց չխրախուսեց օղեղեն դրյակներ կառուցելու գործում։ Վիպակը հրապարակեց լրագրողական համեստ վերնագրով՝ «Իմ մանկության պատմությունը»։

Տոլստոյը զայրացած էր։ Նախ ցասկոտ նամակ գրեց Նեկրասովին, որը խելամտորեն չուղարկեց։ «Ծայրահեղ դժգոհությամբ «Սովրեմենիկի» IX N-ում կարդացի «Իմ մանկության պատմությունը» վերնագրով վիպակը և նրա մեջ ճանաչեցի «Մանկություն» վեպը, որն ուղարկել էի ձեզ»։ Ուղարկված նամակում Տոլստոյը էպես մեղմացրել էր տոնը, բայց, այնուամենայնիվ, չէր թաքցրել իր «դժգոհությունը»։ «Ո՞վ ինչ գործ ունի իմ մանկության պատմության հետ»։ Երիտասարդ գրողը խիստ պայման էր դնում հռչակավոր բանաստեղծի ու վաստակաշատ լրագրողի առաջ. «Կխնդրեմ Ձեզ, ողորմած պարո՛ն, ապագա գրվածքի վերաբերմամբ խոստանալ, որ եթե բարեհաճեք այն վերցնել Ձեր ամսագիր, դրա մեջ բացարձակապես ոչինչ չեք փոխի»։

Տոլստոյն արդեն որոշակիորեն ուներ դրա իրավունքը։ «Մանկության» հաջողությունը գերազանցեց ամենահամարձակ սպասումները։ Երիտասարդ կովկասյան սպայի տաղանդը գնահատեցին Ի.Ս.Տուրգենևը, Ի.Ի. Պանակը, Պ.Վ. Անենկովը և ժամանակի այլ գրական հեղինակություններ։

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Բայցևայնպես, առաջին անգամ ամբողջական անունով ստորագրելով «Սովրեմեննիկ» ուղարկած նամակը՝ Տոլստոյը Նեկրասովին խնդրում էր, որ «այն հայտնի լինի միայն խմբագրությանը»:

### *Սևաստոպոլյան փոխտեղակալը*

Կյանքն ու ծառայությունը Կովկասում ահռելի ազդեցություն ունեցան Տոլստոյի վրա: Հետագայում նա կխոստովանի իր «ցմահ սերը» Կովկասի հանդեպ: «Նա (*Լև Նիկոլայևիչը - Պ.Բ.*) ինձ հաճախ էր ասում, որ իր կյանքի լավագույն հիշողությունները Կովկասինն են»,- գրում էր կինը՝ Սոֆյա Անդրեևնան: Կովկասի մասին կգրվեն Տոլստոյի գլուխգործոցները՝ «Կազակներ» և «Հաջի Մուրադ» վիպակները, «Կովկասի գերին» պատմվածքը և այլն:

Իսկ առայժմ՝ 1854 թվականի հունվարի 20-ին, նա Ստարոգլադկովսկից մեկնում է Ստարի Յուրտ՝ Գեորգիևյան խաչ ստանալու հույսով: Բայց նրան պարզվեց չներկայացրին: Տոլստոյը Կովկասից հեռանում է որպես սովորական զինվոր և ունի «Գեորգի»։ Միայն Տուլայում «Տուլսկի ինվալիդ» թերթից տեղեկանում է, որ դեռ 1854 թվականի հունվարի 9-ին ամենացածր սպայական աստիճանի՝ ենթասպայի կոչում է ստացել: Ոչ այնքան նախանձելի կարիերա երկուսուկես տարի պատերազմին մասնակցելուց հետո:

Մի անգամ հրաշքով փրկվեց մահից: Այդ դեպքը նա պատմել է անձնական բժիշկ Դուշան Մակովիցկուն, կնոջ՝ Սոֆյա Անդրեևնայի ներկայությամբ:

«Մի անգամ գնում էինք Գրոզնի, զինվորներն՝ առջևից ու հետևից, իսկ ես իմ կունակ Սադոյի հետ էի՝ խաղաղ չեչենի:

- Եվ Պոլտորացկու,- ավելացրեց Սոֆյա Անդրեևնան:

- Հենց նոր մի կաբարդինյան մժույզ էի առել՝ մուգ մոխրագույն, լայն կրծքով, շատ գեղեցիկ, հսկա անցաքայլով (զիտե՞ք ինչ է անցաքայլը, որ հավասար է խոշոր վարզին, այդպիսի ձիերին գնացող են ասում), բայց թույլ է ձիարշավի համար: Իսկ հետևից գալիս էր Սադոն՝ իր բաց մոխրագույն ձիու վրա, տափաստանային, նողայական (այնտեղ նողայ-թաթարներ էին ապրում), երկար ոտքերով, մեծ գլխով, նիհար, շատ տգեղ, բայց աշխույժ ձի էր: Գնացինք երեքով: Սադոն կանչում է. «Իմ ձին փորձիր», ու տեղներս փոխեցինք: Եվ դրանից շատ չանցած անտառից, ձախ կողմից մեր ուղղությամբ դուրս պրծան ութ-տասը հոգի ու իրենց լեզվով ինչ-որ բան են գոռում: Սադոն առաջինը տեսավ ու հասկացավ: Հրետանային ձի հե-

ծած Պոլտորացկին փորձեց հետ դառնալ: Շուտով հասան ետևից ու թրատեցին: Իմ ձեռքին թուր էր, Մադկոյի մոտ՝ չլիցքավորված հրացանը: Նա թափ տվեց հրացանը, նշան բռնեց ու կարողացավ պոկվել հետապնդողներից: Մինչ նրանք գոռում էին իրար վրա, ես սլացա, իսկ Մադկոն՝ իմ ետևից: Ինձ փրկեց այն, որ նրա ձին էի նստել»:

Տոլստոյը ի՞նչ էր մտածում ու զգում որպես շարքային զինվոր Կովկասից հեռանալիս: Ավագ եղբայրը՝ Սերգեյը, մեկ տարի ծառայել էր զվարդիայում և այնտեղ բավական ազատ կյանք վարելով՝ պաշտոնաթող էր եղել կապիտանի աստիճանով: Տոլստոյը Կովկասը թողնում էր հակասական զգացումներով:

Ահա թե ինչ է գրում օրագրում 1854 թվականի հուլիսի 7-ին, Բուխարեստում.

«Ի՞նչ եմ ես: Պաշտոնաթող փոխգնդապետի չորս որդիներից մեկը, որ 7 տարեկանից մնացել է առանց ծնողների՝ կանանց ու կողմնակի խնամակալության տակ, որը չի ստացել ոչ աշխարհիկ, ոչ գիտական կրթություն և ազատ կյանք է սկսել 17 տարեկանում, առանց մեծ կարողության, առանց որևէ հասարակական դիրքի և գլխավորը՝ առանց կանոնների. մարդ, որն իր գործերը փչացրել է մինչև վերջ, աննպատակ ու առանց հաճույքի անցկացրել իր կյանքի լավագույն տարիները, վերջապես, իրեն արտաքսել է Կովկաս, որ փախչի պարտքերից և գլխավորը՝ սովորություններից, այնտեղից էլ, օգտագործելով հոր ու բանակի հրամանատարի ինչ-որ վաղեմի կապերը, 26 տարեկանում տեղափոխվել է Գունայական բանակ՝ որպես ենթասպա, համարյա առանց միջոցների, բացի ռոճիկից (որովհետև այն միջոցները, որ նա ունի, ծախսելու է պարտքերը վճարելու վրա), առանց հովանավորների, առանց բարձրաշխարհիկ հասարակության մեջ ապրելու ունակության, առանց ծառայության իմացության, առանց գործնական հմտությունների, բայց՝ ահռելի ինքնասիրությամբ»:

Տոլստոյն անխնա դատափետում է իրեն: Նա և՛ «տգեղ է», և՛ «անմաքրաբարո», «այլոց համար ձանձրալի», և՛ «անհամեստ», և՛ «անհամբեր», և՛ «երեխայի պես ամաչկոտ»: Նա «համարյա տգետ է», «անգուսպ», «անվճռական», «փոփոխամիտ», «հիմարաբար փառամոլ» ու «բռնկվող, ինչպես բոլոր թույլ մարդիկ»: Նա «խիզախ չէ»: Նա «ծույլ է»: Ու թեև «խելացի է», բայց «իմ խելքը երբեք ոչ մի բանում հիմնավոր չի փորձարկվել»: Ասենք, «ազնիվ է» ու սիրում է «բարին», «սովորություն է դարձրել այն սիրելը»: Սակայն դրա հետ մեկտեղ «այնքան փառասեր է», որ «վախենում եմ փառքից ու առաքինությունից ընտրել առաջինը, եթե ստիպված լինեմ ընտրել»:

Մի կողմից՝ սեփական թերությունների գիտակցումը հսկայական առաջընթաց է դրանց հաղթահարման ճանապարհին: Մյուս կողմից՝ մշտական ինքնաձաղկման վիճակում գտնվող մարդն ունակ չէ առարկայական գործունեության: Իր այդ վիճակը Տոլստոյը նկարագրել է օրագրում, 1851 թվականի հուլիսի 4-ին, կովկասյան ծառայության ամենասկզբում. «Երբ արթնանում եմ, այն զգացողությամբ ունեմ, ինչ վախկոտ շունը տիրոջ առաջ, երբ մեղք է անում»: Եվ ահա երեք տարի անց ոչինչ չի փոխվել: Ակամա մտածում ես, որ երիտասարդ Տոլստոյի համար լավագույն ընտրությունը վանական դառնալը կլիներ: Ուժեղ հոգևոր դաստիարակի ղեկավարությամբ նա կարող էր գտնել իրեն: Բայց այդ միտքը ոչ մի անգամ չի հանդիպում նրա օրագրում: Փոխարենը՝ կրկին գնում է կռվելու: Ռումինիայում ծառայելուց հետո, որտեղ քիչ էր մնացել մասնակցեր թուրքական Սիլիստրիա ամրոցի գրոհին (գրոհը չեղարկեցին սկսվելուց մեկ ժամ առաջ), նա հայտնվում է պաշարված Սևաստոպոլում:

1854 թվականի սեպտեմբերի 2-ին անգլո-ֆրանս-թուրքական զորքերի հայտնվելը Ղրիմում, Եվպատոռիայի մոտ, խորապես ցնցեց Տոլստոյին: «Սևաստոպոլի մոտ ավիհանումը տանջում է ինձ»՝ գրում է նա դեռ Քիչնևում: Եվ անմիջապես Ղրիմ տեղափոխվելու զեկուցագիր է ներկայացնում:

Տեղի է ունենում այն, ինչ չէր կատարվել Կովկասում. նա հայրենասիրական վերելք է ապրում:

Դրա պատճառը և՛ թուրքերի հետ Ղրիմում ավի իջած Անգլիայի ու Ֆրանսիայի նենգությունն էր, և՛ ռուսական բանակի պարտությունների շարքը Բալկաններում՝ թույլ հրամանատարության ու վատ տեխնիկական հագեցվածության պատճառով: Համարյա բոլոր ռազմական բախումներում ռուսները կրկնակի ավելի զինվոր էին կորցնում, քան հակառակորդները: Իսկ ռուսական բանակի հրամանատարական կազմը, Տոլստոյի կարծիքով, երկու գլխավոր թերություն ուներ՝ «ինքնահավանություն և փափկասունություն»: Եվ, վերջապես, երրորդ պատճառը զավթած տարածքներում թուրքերի դաժանության մասին լուրերն էին: Այդ տեղեկությունները նա ստանում էր դեռևս Կովկասում, իսկ Դունայական բանակ ժամանելով՝ անձամբ համոզվեց: Տ.Ա. Յորգոլսկայային հասցեագրած նամակում նա գրում է. «Հենց մենք թողնում էինք բուլղարական բնակավայրերը, հայտնվում էին թուրքերը և բացի երիտասարդ կանացից, որոնք պիտանի էին հարեմի համար, բոլորին կոտորում էին: Ես ճամբարից գնացի մի գյուղ՝ կաթ ու միրգ առնելու, և այնտեղի համարյա ողջ բնակչությունը մորթված էր»:



Բուլղարներն ամբողջ գյուղերով հեռանում էին ռուսական բանակի հետ՝ ցանկանալով ռուսական հպատակություն ընդունել, և դա լուրջ դժվարություններ էր հարուցում նահանջող զորքերի համար: Դուռնայական բանակի հրամանատար իշխան Միխայիլ Դմիտրևիչ Գորչակովը, ում Տոլստոյը խորապես հարգում էր ի տարբերություն շատ այլ հրամանատարների և երագում էր դառնալ նրա համհարզը, ստիպված էր «մերժել վերջինը եկողներին»: Իշխանն «առաջարկում էր թողնել սայլերն ու անասունը՝ նրանց ապահովելով սննդով մինչև Ռուսաստան հասնելը, ու սեփական միջոցներից նրանց տեղափոխման մասնավոր նպաստներ էր վճարում, անում էր ինչ կարող էր այդ դժբախտներին օգնելու համար»,- հորաքրոջը գրում է Տոլստոյը:

Բայց Կովկասում ու Բալկաններում տեսածից հետո էլ Տոլստոյին շարունակում էր գրավել պատերազմի գեղեցկությունը: Նա դրա մասին նույնիսկ որոշակի զարմանքով է հորաքրոջը գրում Բուխարեստից. «Ճշմարիտն ասած, տարօրինակ բավականություն է՝ նայել, թե ինչպես են մարդիկ սպանում իրար, բայցևայնպես, առավոտ թե երեկո իմ սայլակից ժամեր շարունակ հետևում էի դրան: Եվ ոչ միայն ես: Իսկապես հրաշալի տեսարան էր, մանավանդ՝ զիշերը... Ճամբարում գտնվելուս առաջին զիշերն այդ սարսափելի աղմուկն արթնացրեց ու վախեցրեց ինձ, մտածելով, որ հարձակում է, շտապեցի հրամայել զինվորներին, որ թամբեն ձիս, բայց արդեն որոշ ժամանակ ճամբարում գտնվող մարդիկ ասացին, որ անհանգստանալու կարիք չկա, որ և՛ այդպիսի հրետակոծությունը, և՛ հրաձգությունը սովորական բան են, ու դրանց կատակով «Ալլահ» են ասում: Պատկեցի, բայց չկարողացա քնել ու սկսեցի զբաղվել նրանով, որ ժամացույցը ձեռքիս հաշվում էի հրանոթների կրակոցները. բոպետում 100 պայթյուն հաշվեցի»: Տոլստոյը սառնասրտորեն նկատում է, որ այդ պատերազմը նման է «մրցույթի»՝ «ով ավելի շատ վառող կծախսի, իսկ այդ ընթացքում հազարավոր հրանոթային կրակոցներով սպանվեց ամենաշատը 30 մարդ այս ու այն կողմից»:

Այսինքն զոհերը քիչ էին: Հազարավոր կրակոցների դիմաց ընդամենը 30 մարդկային կյանք: Տոլստոյը դեռ պատերազմին ուղղված «վիճակագրական» հայացքի գերության մեջ է, որտեղ մարդու կյանքը կարող է չափվել նրա ոչնչացման վրա ծախսված վառողով:

Հաստատուն կարծիք կա, որ Տոլստոյի «դրիմյան շրջանն» աչքի է ընկնում հայրենասիրական զգացումների բուռն վերելքով: Ո՞վ է Տոլստոյը Դրիմում. ռուսական հայրենասեր, ռուսական բանակի երգիչ և, վերջապես, պարզապես խիզախ մարտական սպա: Պատերազմի՝ որպես մարդկանց

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

հակաբնական պահվածքի ընկալումը նրան հասու է դառնում ավելի ուշ՝ «հոգևոր հեղաշրջումից» հետո: Դա և՛ այդպես է, և՛ այդպես չէ: Ամեն դեպքում, ծայրահեղ մակերեսային հայացք է սևաստուպոլյան փոխտեղակալ Տոլստոյի համար:

Այո՛, նա հիացած էր ռուս ռազմիկների ոգու ուժով: Նրանով, թե ինչ արժանապատվությամբ են զոհվում, տառապանքներն ու զրկանքներ կրում: Դրա մասին նա Սևաստոպոլում գրում է «Ինչպես են մեռնում ռուս զինվորները» ակնարկը, որտեղ կան այսպիսի բառեր. «Մե՛ծ է ճակատագիրը պավոնական ժողովրդի: Նրան իզուր չի տրված հոգու այդ խաղաղ ուժը, այդ մեծ պարզությունն ու ուժի բնագրականությունը»: Սակայն ակնարկը գրվում էր կովկասյան հիշողություններով: Եվ գրվում էր հասուկ ամսագրի համար, որը Տոլստոյը, դեռևս Դունայական բանակում, Քիշնևում, մտահղացել էր հրատարակել մի քանի սպաների հետ, որոնց թվում էր, օրինակ, կապիտան Արկադի Գմիտրևիչ Ստոլիպինը՝ ապագա պետական գործիչ Պյոտր Ստոլիպինի հայրը: Հրատարակիչների խմբում յոթ մարդ կար:

Ամսագիրը կոչվելու էր «Վոեննի լիստոկ»: Նախատեսվում էր, որ խմբագիրներից մեկը լինելու է Տոլստոյը: Նրա գաղափարն էր՝ պատերազմի ու բանակի մասին գրել առավել ազատ ու գեղարվեստական եղանակով, քան պաշտոնական թերթում՝ «Ռուսակի ինվալիդում»: Տոլստոյը ողջ կրքով անցավ այդ գործին: Հենց դրա վրա էր պատրաստվում ծախսել 1500 ռուբլին, որ ստացել էր իր փեսա Վալերիան Տոլստոյից, որը նրա խնդրանքով՝ տեղափոխելու պայմանով վաճառել էր Յասնայա Պոլյանայի մեծ տունը: Դա հետաքրքիր է հայտնի փաստի առումով, որ Տոլստոյը Գրիմում թղթախաղում տանուլ է տվել հայրենի տունը: Տանուլ էր տվել: Բայց տունը դրա պատճառով չէր վաճառել, ասենք, ոչ էլ ամսագրի պատճառով: Վալերիանը տունը վաճառել էր, երբ Լևը դեռ ծառայում էր Կովկասում: Եվ ահա նա որոշել էր այդ վաճառքից ստացված փողը ծախսել զինվորական ամսագիր հրատարակելու վրա: Հենց այդ ամսագրի համար էլ գրվում էր հայրենասիրական ոգով տոգորված «Ինչպես են մեռնում ռուս զինվորները»: Բայց դրա հետ միասին նա մի ակնարկ էլ էր գրում՝ «Քեռի Ժրանովն ու կավալեր Չեռնովը», որտեղ պատմվում է մահացու հյուծված զինվորի խոշտանգումների մասին: Երկու ակնարկներն էլ անավարտ մնացին:

Ինչո՞ւ:

Ամսագրի նախագիծը ներկայացվեց Գրիմի բանակի գլխավոր հրամանատար իշխան Գորչակովի հաստատմանը, և նա այն ուղարկեց Պետերբուրգ՝ զինվորական նախարարի դիտարկմանը՝ հետո ցարին հանձնելու

համար: Նախարարի պատասխանն այսպիսին էր.

«Նորին Մեծությունը լիովին արժանին մատուցելով բարեմիտ նպատակին, որով ենթադրվում է հրատարակել հիշյալ ամսագիրը, բարեհաճեց աննպատակահարմար գտնել դրա հրատարակումը, քանզի մեր զորքերի մարտական գործողություններին վերաբերող բոլոր հոդվածները, նախքան դրանք ամսագրերում ու թերթերում գետեղելը, հրապարակվում են «Ռուսկի ինվալիդ» թերթում և այնտեղից արդեն վերցվում այլ պարբերական հրատարակությունների կողմից: Դրա հետ մեկտեղ, Նորին կայսերական Մեծությունը Չերոյ պայծառափայլությամբ վստահված զորքերի պարոնայք սպաներին թույլատրում է ուղարկել իրենց հոդվածները՝ «Ռուսկի ինվալիդում» գետեղելու համար»:

Վերջին դարձվածքն առանձնակի գայրացրեց Տոլստոյին: Ըստ էության, նրան ու մյուս սպաներին թույլատրվում էր իրենց հոդվածներն ուղարկել հատուկ մարմնին, ինչն առանց գերագույն համաձայնության էլ կարող էին անել:

Բայց ցարին էլ կարելի է հասկանալ: «Վոեննի լիստոկն» այսպես թե այնպես հղացվել էր որպես «Ռուսկի ինվալիդին» ընդդիմադիր ամսագիր և ուղղված էր պատերազմի ու բանակում տիրող վիճակի ազատ, անհատական ընկալմանը: Պատերազմական պայմաններում դա անհնար էր:

Տոլստոյը ծանր էր տանում ամսագրի արգելումը: Դա նրա հերթական անհաջողությունն էր՝ պայմանավորված կյանքի՝ չափազանց իդեալիստական ընկալումներով: Եվ ահա այդ ժամանակ, Սևաստպոլի մոտակա Բալբեկ գետի մոտ, գիշերակացին, անընդմեջ թոթախաղում տանուլ տվեց այն հազար հինգ հարյուրը, որ ուղարկել էր Վալերիանը: Տոլստոյը լավ էր գիտակցում այդ արարքի ամոթալիությունը: Նա օրագրում գրում է. «Երկու օր ու երկու գիշեր շտուս էի խաղում: Արդյունքը հասկանալի է՝ տանուլ տրվեց ամեն ինչ՝ յասնոպոլյանյան տունը: Կարծես թե գրելիք չկա: Այնպես եմ զգվում ինձնից, որ կցանկանայի մոռանալ իմ գոյության մասին»:

Եռահարկ տունը, որ սկսել էր կառուցել դեռևս Տոլստոյի պապը՝ Ն.Ս. Վոլկոնսկին, իսկ շինարարությունն ավարտել էր հայրը, մասնատվեց ու մաս-մաս տեղափոխվեց Դոլգոյե գյուղ, որտեղ անբնակ կանգնած էր մինչև 1913 թվականը, երբ այն քանդեցին տեղի գյուղացիները:

«Գրիմյան շրջանում» Տոլստոյը ներքուստ շարունակում է պատեպատ խփվել, ինչը մինչ այդ կատարվել էր Կովկասում: Նա թուրք է խաղում և ինչպես միշտ՝ անհաջող, այնպես որ, սպաները, խղճալով, հրաժարվում են խաղալ նրա հետ: Եվ միևնույն ժամանակ գրում է «Բանակի վերափոխման

մասին» հողվածը, որը պատրաստվում է ներկայացնել նոր ցարին: (Նիկոլայ I-ի մահանալուց և 1855 թվականի փետրվարի 18-ին Ալեքսանդր II-ի գահակալումից հետո ողջ ռուսական հանրությունն ապրում էր բարեփոխումների սպասումով): Մակայն ուշադրություն դարձնենք գրության երկրորդ խմբագրման տոնին.

«Ռուս սպան մեծամասամբ անընդունակ է գործունեության որևէ տեսակի, բացի զինվորական ծառայությունից: Ծառայության մեջ նրա գլխավոր նպատակը փող ստանալն է: Այդ նպատակին հասնելու միջոցը՝ կաշառակերությունն ու ճնշումները: Ռուս սպան անուս է. կամ այն պատճառով, որ կրթություն չի ստացել, կամ էլ, որ կորցրել է մի ոլորտում, որտեղ այն անօգուտ կամ նույնիսկ անհնարին է, կամ էլ որովհետև արհամարհում է կրթությունը՝ անպիտան համարելով ծառայության մեջ հաջողության հասնելու համար»:

Հասկանալի է, որ այդպիսի նախագիծը չէր կարող ներկայացվել կայսերը:

Տոլստոյի հետ Սևաստոպոլում ծառայած սպաների հուշերով՝ երիտասարդ փոխտեղակալը հեշտությամբ ընդհանուր լեզու էր գտնում մարտական սպաների հետ և սպայական հավաքությունների հոգին էր: Մեծամիտ չէր, սրամիտ էր, խաղի մեջ՝ կրքոտ, սիրում էր խմել (բայց երբեք նրան հարբած չէին տեսել), ամեկրոտներ էր պատմում, դաշնամուր նվագում ու սեփական ստեղծագործության բանակային կատակերգեր երգում, որոնցից ամենահայտնին Սև գետի մոտ 1855 թվականի օգոստոսի 4-ին տեղի ունեցած ճակատամարտի մասին երգն էր. «Թե ամսի չորսին / Սատանան մեզ ոնց / Տարավ սարերը գրավելու...»: Այդ երգում առանց չարության ծաղրվում էր ողջ բարձր ղեկավարությունը՝ ներառյալ և Տոլստոյի սիրելի իշխան Գորչակովը: Լեզենդ կա, որ այդ երգը երգում էին ոչ միայն սպաները, այլև շարքային զինվորները: Տոլստոյը խիզախ էր, ու միշտ կամավոր էր գնում արտելքերի: Սևաստոպոլում հայտնվելով ամենավտանգավոր 4-րդ բաստիոնում՝ նա ոչ մի անգամ վախկոտություն չցուցաբերեց:

Բայց ահա թե ինչն է հետաքրքիր: Տարեց հասակում, Յասնայա Պոլյանայում, հարազատների ու հյուրերի հետ զրույցներում Տոլստոյը պնդում էր, որ երկու պատերազմներին մասնակցելիս, Կովկասում ու Ղրիմում, մարդ չի սպանել: Ոչ թե խուսափում էր սպանությունից: Այդպես էր ստացվել:

Սևաստոպոլում Տոլստոյը ծառայությունը սկսեց որպես դասակի հրամանատար և ավարտեց որպես լեռնային մարտկոցի հրամանատար: Մակայն գերազանցապես գտնվում էր կամ Բելքեկ գետի մոտ, կամ պաշտպա-

նությունում, ինչպես 4-րդ բաստիոնում, սակայն ճակատամարտերին ուղղակի մասնակցություն չունեցավ: Միակ լուրջ բախումը թշնամու հետ Սև գետի տխրահռչակ ճակատամարտն էր 1855 թվականի օգոստոսի 4-ին, երբ ռուսական բանակի կորուստները կազմեցին ութ հազարից ավելի մարդ, և որի ընթացքում գոհվեց երեք գեներալ՝ Նիկոլայ Անդրեևիչ Ռեադը, Պյոտր Վլադիմիրովիչ Վեյմարնը և Պավել Ալեքսանդրովիչ Վրեսկին: (Ասում էին, որ բարոն Վրեսկին, որն այդ ճակատամարտի նախաձեռնողն էր, միտումնավոր մահ էր փնտրում): Ճակատամարտի օրը Տոլստոյը երկու լեռնային հրանոթներով միացավ Պորֆիրի Նիկոլաևիչ Գլեբովի հեծյալ մարտկոցին: Բայց կրակել չվիճակվեց. հրաման չեղավ:

Տոլստոյի զինվորական ծառայության մեկ այլ առանձնահատկությունն էլ այն էր, որ նա կտրականապես հրաժարվում էր յուրացնել պետական փողերը: Դա նորմ էր բանակում և ոչ միայն հանցագործություն չէր դիտվում, այլև համարվում էր սպայական եկամտի համարյա թե օրինական մասը: Չեռքը գնդային գանձարկղը տանելը կոչվում էր «անմեղ շահույթներ»: Օրինակ, դրանք ստացվում էին ձիերի կերի մնացորդից: Այդ «եկամտներից» ձևավորվում էր նաև «խելամիտ տնտեսումը» փողը, որ պետք է լիներ հրամանատարի ձեռքին՝ ստորաբաժանման չնախատեսված ծախսերի համար: Բոլոր սպաները հասկանում էին և՛ «անմեղ եկամտների», և՛ «խելամիտ տնտեսման» արդարացիությունը: Բայց՝ ո՛չ Տոլստոյը: Գնդապետ Յուլիան Իգնատևիչ Օդախովսկու հուշերով՝ «Երիտասարդ պորուչիկը, մարտկոցի հրամանատար նշանակվելով, բռնեց ու մուտք արեց մարտկոցում եղած կերի ողջ մնացորդը: Մյուս մարտկոցների հրամանատարները, որոնց գրպաններին դա խփում ու վարկաբեկում էր հրամանատարության աչքին, խռովություն բարձրացրին...»: Դրա մասին է գրում նաև մի ուրիշ վկա՝ Նիկոլայ Ալեքսանդրովիչ Կոնիովը. «Ասում էին՝ նա այն աստիճան էր զգվում պետական փողերից, որ սպաներին քարոզում էր գանձարկղ վերադարձնել պետական փողի մնացորդները, երբ սպայի ձին նախատեսված կերը չէր սպառում»:

Օդախովսկին նաև պնդում է, որ «իր ծառայակիցը շարունակ բախումների մեջ էր ղեկավարության հետ: Աստիճանով ավագի ցանկացած դիտողություն Տոլստոյի կողմից անհապաղ հակադարձվում էր կոպտելով կամ խայթող, վիրավորական կատակով»:

Այլ խոսքով, Տոլստոյը չափազանց բարդ ու փառասեր անձնավորություն էր, որպեսզի լիովին հարմարվեր սպայական միջավայրին: Եվ նա դարձյալ պատեպատ է խփվում, դարձյալ տեղը չի գտնում:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Ահա մի բնութագրական փաստ: 1854 թվականի նոյեմբերին ժամանելով Սևաստոպոլ՝ ցնծություն զգաց գիտակցությունից, որ հայտնվել է այն վայրում, որտեղ վճռվում է Ռուսաստանի պատմական բախտը: «Չորքերի ոգին,- գրում է նա եղբորը՝ Սերգեյ Նիկոլաևիչին,- բարձր է ցանկացած պատկերացումից: Հին Հունաստանի ժամանակներում անգամ չի եղել այսպիսի հերոսություն: Կռռնիլովը, զորքերի ստուգման ժամանակ «Ողջույն, տղերք» ասելու փոխարեն ասում էր «Պետք է մեռնել, տղերք, կմեռնե՞ք», ու զորքը գոչում էր. «Կմեռնենք, ձերդ գերագանցություն: Ուռա»:

Սա գրվել է նոյեմբերի 20-ին: Իսկ երեք օր անց, Էսքի-Օրդայում, ուր ուղարկվել էր պահեստագործը, լրիվ այլ բան է գրում. «Այս ուղևորության ընթացքում ես շատ ավելի, քան երբևէ, համոզվեցի, որ Ռուսաստանը կամ պետք կործանվի, կամ կատարելապես վերափոխվի: Ամեն ինչ հակառակ է գնում: Թշնամուն չեն խանգարում ամրացնել իր ճամբարը, այն դեպքում, երբ դա շատ հեշտ է, իսկ մենք, ավելի փոքր ուժերով, ոչ մի տեղից օգնություն չսպասելով, Գորչակովի պես գեներալներով՝ կորցրած և՛ խեղճ, և՛ զգացում, և՛ ուժ, չամրապնդվելով՝ կանգնած ենք թշնամու դիմաց և սպասում ենք հողմ ու փոթորկին, որ Նիկոլայ Հրաշագործն ուղարկելու է թշնամուն վնդդելու համար: Կազակներն ուզում են կողոպտել, բայց չկռվել, ուլաններն ու հուսարները զինվորական պատիվը տեսնում են հարբեցողության ու անառակության մեջ, հետևակը՝ գողության ու փող դիզելու: Տխուր է և՛ զորքի, և՛ պետության վիճակը»:

Եվ արդեն լրիվ անսպասելի, ռուս զինվորներին համեմատելով ֆրանսիացիների և անգլիացիների հետ, նա նախապատվությունը տալիս է թշնամուն. «Երկու ժամ գրուցում էի վիրավոր ֆրանսիացիների ու անգլիացիների հետ: Յուրաքանչյուր զինվոր հպարտ է իր դիրքով ու զնահատում է իրեն, քանզի իրեն իսկապես զորքերի զսպանակ է համարում: Լավ գենքը, այն օգտագործելու արվեստը, ջահելությունը, քաղաքականության և արվեստների ընդհանրական ընկալումը սեփական արժանապատվության զգացում են տալիս նրան: Մեզ մոտ անիմաստ վարժանքները գուլպաների ու գոտենարտերի մասին, անպետք գենքն ու ուտելիքը զինվորի մեջ սպանում են հպարտության վերջին կայծն ու նույնիսկ նրան չափազանց բարձր կարծիք ներշնչում թշնամու մասին»:

Մի՞թե երեք օրում տրամադրությունն այդպես փոխվել էր: Հենց նոր «Հին Հունաստան» էր...

Տրամադրության այդ վայրիվերումները կարելի է բացատրել մեկ բանով. նա իրեն չի գտնում բանակում: Իհարկե, այդտեղ էր հայտնվել նաև

զինվորական կարիերայի հաշվարկով: Ավագ եղբոր՝ Նիկոլայի օրինակը, հիշողությունը պապի՝ «Օչակովի ու Ղրիմի նվաճման ժամանակների» գեներալի մասին, հոր՝ Նապոլեոնի պատերազմի հերոսի մասին հիշողությունը ջերմացնում էին նրա առողջ փառասիրությունն ու հույս տալիս, որ կգնա նրանց ճանապարհով:

Բայց...

Մղվում է մարտի, իսկ նրան ուղարկում են պահեստագոր: «Բալբեկի գիշերակացը խիստ ձանձրալի էր,- հիշում էր Օդախովսկին:- Մարտկոցով պահեստագորում մնալն ըստ երևույթին ձանձրացնում էր կոմս Տոլստոյին. նա հաճախ, առանց հրամանատարության թույլտվության, ուրիշ ջոկատների հետ գնում էր արտելքի, գուտ հետաքրքրասիրությունից մղված, որպես ուժեղ զգացողությունների սիրահար, գուցե և պատերազմում զինվորի կյանքն ուսումնասիրելու համար»:

«Ղրիմյան շրջանում» Տոլստոյի մասնակցությունն այդ արտելքերին անորոշ է մնում: Նրան մի այդպիսի արտելքի մղեց կապիտան Արկադի Ստոլիպինը, երբ Տոլստոյը, առանց հրամանատարության թույլտվության լքելով պահեստագորը, երեք օրով եկել էր Սևաստոպոլ: Արտելքն արյունալի էր. ռուսները 387 զոհ ու մոտ հազար վիրավոր տվեցին: Բայց դրա մասին Տոլստոյն օրագրում ընդամենը գրում է. «Թուլություն ունեցա Ստոլիպինին թույլատրելու, որ ինձ հրապուրի արտելքի, չնայած հիմա ոչ միայն ուրախ եմ դրա համար, այլև ավստում եմ, որ չգնացի գրոհող շարասյան կազմում»:

Բայց այդ դեպքում ո՞րն էր նրա մասնակցությունն արտելքին:

Սևաստոպոլ մեկնելն ըստ երևույթին կապված էր շտաբում, իշխան Գորչակովի մոտ ծառայության անցնելու՝ Տոլստոյի ցանկության հետ: Հանդիպել էր նրան ու «լավ ընդունելության» արժանացել: Բայց «...շտաբ տեղափոխվելու մասին, ինչը շատ եմ ցանկանում, ոչինչ չգիտեմ: Չեմ խնդրելու, կապասեմ, որ ինքն առաջարկի...»:

Գլխավոր հարամանատարը տատիկի կողմից նրա ազգականն էր: Բայց ըստ երևույթին նրա հետ խոսակցությունը Տոլստոյին կարիերայի աճի հույս չէր տվել: Նա օրագրում գրում է. «Զինվորական կարիերան իմը չէ, ու որքան շուտ դրանից դուրս գամ, նորից գրականությանը տրվելու համար, այնքան լավ»:

1855 թվականի ապրիլին Տոլստոյի մարտկոցը տեղափոխվեց Սևաստոպոլ՝ ամենավտանգավոր 4-րդ բաստիոնը, որն ամենամոտն էր ֆրանսիական դիրքերին: մարտի վերջից մինչև ապրիլի կեսը այդ բաստիոնը հրետա-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

կոծեցին երկու անգամ. առաջին անգամ՝ տասն օր անընդմեջ: Հակառակորդի կորուստներն այդ ժամանակ կազմեցին 1850, ռուսներինը՝ 6130 մարդ:

Բաստիոնի հրամանատար, կապիտան-լեյտենանտ Վիլիելմ Գուստավովիչ Ռեյմերսը գրում էր. «Հրետակոծության սկզբից և կարելի է ասել մինչև վերջը բաստիոնը բոլորից ավելի էր հակառակորդի կրակի տակ, և իմ ութամսյա ծառայության ընթացքում օր չկար, որ անցներ առանց հրետակոծության: Իսկ մեծ տոներին ֆրանսիացիներն իրենց տեղն էին նստեցնում թուրքերին ու դրանով ոչ մի բուպե հանգիստ չէին տալիս մեզ: Ցերեկներ ու գիշերներ էին լինում, երբ մեր բաստիոնի վրա թափվում էր մինչև երկու հազար ռուբլի ու գործում էր մի քանի հարյուր հրանոթ»:

Բաստիոնում շուրջօրյա հերթապահության ժամանակ Տոլստոյն իրեն շատ խիզախ էր դրսևորում և նույնիսկ, ծառայակիցների հուշերով, ավելորդ «ջահելություն անում»: Նա իր համար զվարճանք էր հորինել՝ պատրույգը վառելու և արկի թռչելու արանքում անցնել հրափողի դեմով: Հերթապահությունից հետո գնում էր իր բնակարանը՝ Սևաստոպոլի կենտրոնում, որտեղ գրեց «Պատանեկություն» վիպակն ու Սևաստոպոլյան երեք ակնարկներից առաջինը՝ «Սևաստոպոլը դեկտեմբերին»:

Այդ ակնարկի հրապարակումը Նեկրասովի «Սովրեմեննիկում» իսկական փոթորիկ առաջացրեց ընթերցող հանրության շրջանում, գրական շրջանակներում և արքունիքում: Լեգենդ կա, որ Ալեքսանդր II-ը սուրհանդակ է ուղարկել Ղրիմ՝ հրամայելով ավելի անվտանգ վայր տեղափոխել տաղանդավոր սպային: Իբր այդ ակնարկի վրա արցունք է թափել պատանի արքայազնը՝ սպագա Ալեքսանդր III-ը:

Ակնարկի վրա լսցել էր նաև Տուրգենևը: «Սևաստոպոլի մասին Տոլստոյի ակնարկը հրաշք է,- Սպասակիից գրում է նա Իվան Իվանովիչ Պանսին:- Արտասովեցի կարդալիս ու գոռում էի ուռա... Տոլստոյի ակնարկն այստեղ համընդհանուր աղմուկ բարձրացրեց»:

Տոլստոյի Սևաստոպոլյան ակնարկները կարևոր են նաև նրանով, որ գրվել են անմիջապես իրադարձությունների կենտրոնում: Երկրորդ ակնարկը՝ «Սևաստոպոլը մայիսին» գրվել է մի քանի օր անց՝ 1855 թվականի հունիսին: Երրորդ և վերջին ակնարկը՝ «Սևաստոպոլը 1855 թվականի օգոստոսին» նույնպես սկսել է Ղրիմում, արդեն Սևաստոպոլի անկումից հետո և ավարտել Պետերբուրգում: Ակնարկը լույս տեսավ «Սովրեմեննիկի» 1856թ. առաջին համարում: Այդպես հայտնվեց այսօր «Սևաստոպոլյան պատմվածքներ» անունով հայտնի շարքը:



Դրանք ռեպորտաժներ էին ճակատամարտի վայրից: Բայց հենց դրանցով է Տոլստոյին հաջողվել իրականություն դարձնել իր միանգամից երկու երազանքները: «Սոլդատսկի լիստոկի» անհաջողությունից հետո նա այնուամենայնիվ դարձավ հայտնի զինվորական լրագրող ու միևնույն ժամանակ՝ ամենանշանավոր ռուս գրողներից մեկը:

Տոլստոյը պաշարված Սևաստոպոլում էր մինչև վերջին օրը: 1855 թվականի օգոստոսի 28-ին, երբ քաղաքը ծխացող ավերակների էր վերածվել, նա նշում էր իր ծննդյան օրը: Տոլստոյը 27 տարեկան էր:

«Ես լաց եղա՝ տեսնելով կրակով բռնված քաղաքն ու ֆրանսիական դրոշները մեր բաստիոնների վրա», - գրում էր նա Յորգոլսկայային:

Նոյեմբերի առաջին օրերին Տոլստոյը որպես սուրհանդակ Ղրիմից մեկնում է Պետերբուրգ: «Ուժգին հրետակոծության ժամանակ դրսևորած օրինակելի խիզախության և օրինակելի տոկունության համար» նա պարգևատրվեց Աննայի 4-դ աստիճանի շքանշանով, բայց դեռ փոխտեղակալ էր մնում: Նրան պորուչիկի աստիճան շնորհեցին միայն 1856 թվականի մարտի 26-ին, արդեն Պետերբուրգում: Հրամանում նշված էր. «Օգոստոսի 4-ին Սև գետակի մարտում դրսևորած օրինակելի խիզախության և արիության համար»: Այն մարտի, որի ընթացքում, ճակատագրի հեզմանքով, ոչ մի կրակոց չէր արձակել:

1855 թվականին մարտին, Բելլեկի դիմակայության ժամանակ Տոլստոյը օրագրում գրում է. «Երեկ աստվածայինի ու հավատի մասին խոսակցությունն ինձ մի ահռելի մտքի բերեց, որի իրագործմանը, զգում եմ, պատրաստ եմ նվիրել ողջ կյանքս: Դա նոր կրոն հիմնելու միտքն է, որը կհամապատասխանի մարդկության զարգացմանը, Քրիստոսի դավանանքին, բայց՝ մաքրված հավատից ու խորհրդավորությունից, գործնական կրոն, որը ոչ թե գալիք երանություն է խոստանում, այլ երանություն է պարգևում երկրի վրա»:

Տոլստոյի եկեղեցական քննադատները հաճախ այս արտահայտությունը բերում են որպես կրոնական գոռոզության նմուշ: Իսկապես, երիտասարդը մտադրվել է հիմնել ոչ այլ ինչ, քան «նոր կրոն»: Ընդամենը, չեն նկատում, որ այդ գրառումն անելուց առաջ Տոլստոյը, ըստ երևույթին, հաղորդություն է ստացել բանակային քահանայից (այստեղից էլ՝ «խոսակցությունը աստվածայինի ու հավատի մասին»): Այդ կարծիքին է, օրինակ, կրոնական հայացքների հետազոտող հոգևորական Գեորգի Օրեխանովը: Եթե այդպես է, ուրեմն Տոլստոյը ձևական չի մոտեցել խոստովանությանն ու տևական գրույց է ունեցել քահանայի հետ: Բայց շատ ավելի կարևոր է մեկ այլ համազամանք. երբ է արվել այդ գրառումը: Պատերազմի ժամանակ:

Առաջին իսկ սևաստոպոլյան ակնարկում (այն սկսել է հենց 1855 թվականի մարտին) Տոլստոյը նկարագրում է ոչ միայն զինվորների ու սպաների արիությունը, այլև սարսափելի փաստեր: Նա պատմում է Ազնվականական ժողովի շենքի մասին, որտեղ տեղավորվել էին վիրաբույժները և անընդհատության ռեժիմով անդամահատում էին զինվորների վերջույթները:

«Գուք կտեսնեք, թե սուր, կեռ դանակն ինչպես է խրվում սպիտակ, առողջ մարմնի մեջ. կտեսնեք՝ ինչպես է սարսափելի, ծվատող բղավոցով վիրավորը հանկարծ ուշքի գալիս, կտեսնեք բուժակն ինչպես է սենյակի անկյունը նետում կտրած ձեռքը, կտեսնեք, թե նույն սենյակում պատգարակին պառկած մի ուրիշ վիրավոր ընկերոջ վիրահատությանը հետևելով՝ ինչպես է գալարվում ու տնքում ոչ այնքան ֆիզիկական ցավից, որքան սպասման բարոյական տառապանքներից...»:

Շենքից դուրս գալուց հետո «վճիտ երկնքի, շողացող արևի, գեղեցիկ քաղաքի, դռնբաց եկեղեցու և տարբեր կողմեր շարժվող զինվորականների տեսքը ձեր ոգին արագ բերում է թեթևամտության, փոքրիկ հոգսերի ու հրապուրանքների բնականոն վիճակին»:

Եվ անմիջապես էլ սպայի թաղումն է՝ «վարդագույն դագաղով ու ծածանվող դրոշներով, հնարավոր է ձեր ականջին հասնեն հրետակոծության ձայները բաստիոններից, բայց դա ձեզ նախկին մտքերին չի վերադարձնի. թաղումը ձեզ շատ գեղեցիկ ռազմաշունչ տեսարան կթվա, ձայները՝ շատ գեղեցիկ ռազմաշունչ ձայներ, և դուք չեք զուգակցի ու ձեզ վրա չեք վերցնի ոչ այդ տեսարանի, ոչ էլ ձայների հետ կապված տառապանքների ու մահվան մասին հստակ մտքերը, ինչպես արեցիք վիրակապարանում»:

Իսկ Վոլինյան ռեդուտում «ռումբերը թափվում էին իրար ետևից: Ոչ ոք չէր գալիս ու չէր հեռանում, մեռածներին ոտ ու ձեռքից բռնած՝ նետում էին խրամաթմբից այն կողմ»: Իսկ չորրորդ բաստիոնում պայթյունը նավաստու «կրծքի մի մասն է պոկել», «նրա ցեխակոլով դեմքին միայն վախ ու ու տառապանքի ինչ-որ շինծու, վաղաժամ արտահայտություն է, որ մարդուն հատուկ է այդ վիճակում»:

«Եվ այսպես ամեն օր յոթ թե ութ մարդ», - հորանջելով ու դեղին թղթով ծխախոտ փաթաթելով՝ ասում է ծովային սպան՝ պատասխանելով ձեր դեմքին հայտնված սարսափի արտահայտությանը:

«Գործնական կրոնի» մասին Տոլստոյի գրափարը սառը մտքի ծնունդ չէր: Բայց միաժամանակ նա ջանում էր բանականությամբ հասկանալ տեղի ունեցողը: Եվ օրագրային գրառումն ավարտում է հետևյալ բառերով, որոնք չեն նկատում եկեղեցական քննադատները. «Գործել գիտակցաբար՝

միավորելու մարդկանց ու կրոնը, ահա մտքի հիմքը, որը, հուսով եմ, կգրավի ինձ...»:

1856 թվականի նոյեմբերի վեցին Տոլստոյը պաշտոնաթող եղավ:

Դրանով նրա զինվորական կարիերան ավարտվեց:

Տոլստոյը վերջապես արեց առաջին լուրջ, գիտակցված ընտրությունը. դառնում է գրող:

### *Տուրգենևն ու մյուսները*

Ամեն ինչ դրան էր մղում. և՛ գրական ճանաչման սրբթաց աճը, և՛ այն իսկապես բարեկամական տրամադրվածությունը, որով ժամանակի ամենանշանավոր գրողները նրան ընդունեցին մայրաքաղաքում:

Բավական է ասել, որ Պետերբուրգում Տոլստոյն անմիջապես իջևանեց Տուրգենևի բնակարանում՝ գլխավոր գրական հեղինակության և ամենաճանաչված ռուս գրողի, որի հետ մինչ այդ միայն հեռակա ծանոթություն ունեցրել էր:

1855 թվականի հոկտեմբերի երեքին, երբ Տոլստոյը դեռ Գրիմում էր, Տուրգենևը նրան մամակ գրեց՝ շնորհակալություն հայտնելով «Անտառահատում» պատմվածքն իրեն նվիրելու համար («Իմ ողջ գրական կարիերայում ոչինչ այդպես չի շոյել ինքնասիրությունս»)։ ամեն կերպ փառաբանում էր նրա տաղանդը, տազնապում նրա կյանքի համար, - հանկարծ չգոհվի՛, - և համառորեն խորհուրդ էր տալիս թողնել բանակն ու լիովին նվիրվել գրականությանը: Նա պատրաստակամություն էր հայտնում Պետերբուրգից անձամբ գնալ նրա մոտ՝ Տուլայի նահանգ՝ ծանոթանալու: Բայց դա Պետերբուրգում չէր գրվում, ուր Տուրգենևը դեռ պատրաստվում էր մեկնել, այլ Տոլստոյի հարագատ քրոջ՝ Մաշայի կալվածքում: Տուրգենևն անկասկած Մարիա Նիկոլաևնայի հանդեպ ավելի քան բարեկամական զգացմունքներ ուներ: Ու երբ նա հետագայում բաժանվեց ամուսնուց, որոշ ժամանակ նրա ու Տուրգենևի միջև պլատոնական սիրավեպ էր ծավալվում, որը, սակայն, ավարտվեց ոչնչով. Տուրգենևը ողջ կյանքում նվիրված մնաց երգչուհի Պոլինա Վիարդոյին: Հետագայում Տոլստոյը Տուրգենևին չի ների այդ «սիրավեպը» իր սիրելի քրոջ հանդեպ:

Մակայն Տուրգենևի առաջին նամակը, այն էլ Պոկրովսկոյեից, որը Յասնայա Պոլյանայի ու Սպասսկի-Լուտովինովայի ուղիղ արանքում էր, ասես իրար կապելով գրողի համար կարևոր այդ երկու վայրերը, անկասկած ոգևորում էր Տոլստոյին: Նրանք հանդիպեցին Պետերբուրգում, և Տուրգենևը երիասարդ գրչեղբորն անմիջապես հրավիրեց ապրելու իր մոտ:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Այդտեղ՝ գրողի բնակարանում, Տոլստոյը ծանոթանում է Նեկրասովի, ապա Նեկրասովի մոտ, ճաշին՝ հանրահռչակ քննադատ ու «Պոլինկա Սաքս» վիպակի հեղինակ Ալեքսանդր Վասիլևիչ Գրուժինինի հետ: Այնուհետև Տուրգենևը գրական երեկո է կազմակերպում իր մոտ՝ Տոլստոյին գրական լայն շրջանակ մտցնելու համար: Երեկոյին մասնակցում էին Իվան Ալեքսանդրովիչ Գոնչարովը, Ապոլոն Նիկոլևսկի Մայկովը, գրականության պատմաբան ու համատեղությամբ գրաքննիչ Ալեքսանդր Վասիլևիչ Նիկիտենկոն և այլք: Տոլստոյը կարճ ժամանակում դառնում է «Սովրեմենիկ» ամսագրի շրջանակի լիիրավ անդամ: Ծանոթությունների նոր շրջանի մեջ են մտնում Աֆանասի Աֆանասևիչ Ֆետը, Ալեքսանդր Նիկոլևսկի Օստրովսկին, Վասիլի Պետրովիչ Բոտկինը, Գմիտրի Վասիլևիչ Գրիգորովիչը, եղբայրներ Ալեքսանդր, Ալեքսեյ ու Վլադիմիր Միխայլովիչ Ժեմչուժնիկովները... Նրան բարեկամաբար են ընդունում նաև ավագ սերնդի գրողները՝ Յազիկովը, Օրոսկին, Պոլոնսկին: Բայց գրողներից միայն մեկի հետ Տոլստոյն անցավ «դու»-ի՝ դրամատուրգ Օստրովսկու:

Հավանաբար Տուրգենևն ու Նեկրասովը ցանկանում էին «հովանավորել» նոր տաղանդին: Տուրգենևի՝ Տոլստոյին ուղարկած առաջին նամակում ժամանակ առ ժամանակ վարժապետական շեշտեր են հայտնվում: Նեկրասովը գործնական հետաքրքրություն ուներ: Տոլստոյը ձեռնառու հեղինակ էր «Սովրեմենիկի» համար:

Սակայն «Սովրեմենիկի» շրջանակ երիտասարդ գրողը այդպես էլ չըջորեն չմտավ: Հետագայում նա կսկսի բավական սուր արտահայտվել իր նախկին «բարեկամներից» շատերի մասին՝ նրանց կոչելով «գրքացներ»: Բացի այդ, չընդունեց նաև «Սովրեմենիկում» լրագրողների նոր սերնդի հայտնվելը՝ Նիկոլայ Ալեքսանդրովիչ Գոբբոլյուբովի ու Նիկոլայ Գավրիլովիչ Չեռնիշևսկու՝ իրենց «իրական» քննադատությամբ, որը խորթ էր Տոլստոյի էսթետիզմին: Եվ երբ «Ռուսսկի վեստնիկ» ամսագրի խմբագիր Միխայիլ Նիկիֆորովիչ Կատկովը նրան «Սովրեմենիկից» շահավետ պայմաններ առաջարկեց, Տոլստոյը հեշտությամբ խզեց կապերը Նեկրասովի հետ: Իր նոր գործերը՝ «Կազակները», «Պատերազմ և խաղաղությունը» (ամսագրային վերնագիրը՝ «1805 թվական»), «Աննա Կարենինան», նա տվեց Կատկովին: Դա, անկասկած, վիրավորում էր Նեկրասովին, որը ժամանակին Տոլստոյին բացահայտել էր ընթերցող հասարակության համար:

Չստացվեց բարեկամությունը նաև Տուրգենևի հետ: Արդեն 1856 թվականի մարտի 12-ին, ծանոթությունից երեք տարի ու մոտ մեկ ամիս անց, նա օրագրում գրում է. «Կարծես թե վերջնականապես բաժանվեցի Տոլստոյից»:

Տոլստոյը սկզբում համակրելի էր Տուրգենևին: Հետաքրքրությամբ հետևում էր այդ տաղանդավոր սպային, որն այնքան մեծ չէր պետերբուրգյան մյուս գրողներին: Պետերբուրգ գալուց առաջ Տոլստոյը պարտքով տանուլ էր տվել երեքուկես հազար ռուբլի: Սակայն Պետերբուրգում էլ խելքի չի գալիս. երբեմն միայն վաղ առավոտյան է վերադառնում Տուրգենևի բնակարան, որ քնի ամբողջ օրը մինչև երեկո:

Տուրգենևին դա ավելի շուտ զվարճացնում էր: «Արդեն Նեկրասովից իմացել ես, որ Տոլստոյն այստեղ է և ապրում է ինձ մոտ...»,- գրում է նա Վ.Պ.Բոտկինին: Մեծապես համակրելի ու ինքնատիպ մարդ է»:

Բայց շատ շուտով Տուրգենևն սկսում է,- դեռ կատակելով,- դժգոհել այդ ինքնատիպից: Իր կենսակերպով Լևը հյուրընկալ տանտիրոջն էլ է հունից հանում, ինչի մասին Տուրգենևը հայտնում է նրա քրոջը՝ Մաշային. «Դե ինչ, զեկուցեմ Ձեզ, թե ինչ եղբայր ունեք: Ես նրան մոլեգնության, վայրագ համառության ու անբանության համար Տրոգլոդիտ եմ կոչել և նույնիսկ՝ գազազած Տրոգլոդիտ, ինչը, սակայն, չի խանգարում ինձ սրտանց սիրել նրան ու շարունակ փնթփնթալ վրան, ինչպես խելամիտ քեռին խելառ զարմիկի վրա»:

Դա Տուրգենևի սխալն էր: Այո՛, նա համարյա տասը տարով մեծ էր Տոլստոյից, փորձառու՝ գրական հարցերում: Նրան գիտեր ողջ ընթերցող Ռուսաստանը, մեծ հաջողություն ուներ Եվրոպայում: Նրա առաջ խոնարհվում էին Ֆլորենտն ու Գոնկուր եղբայրները: Իսկ Տոլստոյը, համեմայնդեպս, դեռ նորեղուկ էր և ինքն էլ հասկանում էր դա: Բայց իրենից գրական «զարմիկ» սարքել ոչ մեկին չէր թույլատրում: Տարածայնությունները նույնիսկ գաղափարական չէին, այլ բնավորությունների ու մտածելակերպի անհամատեղելիություն:

Ծանոթությունից արդեն երկու ամիս անց Տուրգենևը Բոտկինին ուղղված նամակում դառնությամբ նկարագրում է «Սովրեմեննիկում» բորբոքված սկանդալը: «Քիչ էր մնում գժտվելի Տոլստոյի հետ. չէ, եղբայր, անհնար է, որ անկրթությունը այս կամ այն կերպ ի հայտ չգա: Երրորդ օրը, Նեկրասովի մոտ ճաշելիս, նա այնքան գռեհկություններ ու կոպտություններ ասաց ժ. Սանդի հասցեին, որ անհնար է պատմել: Վեճը շատ հեռուն գնաց, մի խոսքով, գայրացրեց բոլորին և խիստ անբարենպաստ լույսի տակ դրսևորեց իրեն»:

Այդ նույն սկանդալի մասին իր հուշերում գրում է Գ.Վ.Գրիգորովիչը. «Տոլստոյը բավական լռակյաց էր, բայց վերջում չդիմացավ: Լսելով ժ. Սանդի նոր վեպի շռայլ գովաբանությունը, կտրուկ հայտարարեց, որ

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

ասում է նրան, ավելացնելով, որ նրա վեպերի հերոսուհիները, եթե իսկապես գոյություն ունենալին, դաս տալու համար հարկ էր նրանց կապել խայտառակության կառքին ու ման ածել պետերբուրգյան փողոցներով»:

Այդ թե մեկ ուրիշ սկանդալի մասին մա պատմել է մաև Ֆետին.

«- Ես չեմ կարող ընդունել,- հայտարարեց մա (*Տոլստոյը - Պ.Բ.*),- որ ձեր ասածը ձեր համոզմունքն էր: Ես սուրն ու դաշույնը ձեռքիս կանգնած եմ դռան մեջ և ասում եմ. «Քանի դեռ ողջ եմ, ոչ մեկն ախտեղ չի մտնի»: Այ դա համոզմունք է: Իսկ դուք ջանում եք իրարից թաքցնել ձեր մտքերի էությունը և դա համոզմունք եք կոչում:

- Այդ դեպքում ինչո՞ւ եք գալիս մեզ մոտ,- շնչահատ ու ծղրտոցի փոխվող ձայնով (տաք վեճերի ժամանակ միշտ այդպես էր լինում) ասաց Տուրգենևը:- Չեր դրոշն ախտեղ չէ: Գնացեք իշխանուհու մոտ:

- Ինչո՞ւ ձեզ պիտի հարցնեմ, թե ուր գնամ:

«Աղավնյա կս, աղավնյա կս,- արցունքն աչքերին ու ծիծաղից խեղդվելով՝ ասում էր Գրիգորովիչը (*Ֆետին - Պ.Բ.*) պատկերացնել չէք կարող, թե ինչ տեսարաններ էին լինում ախտեղ: Այս, Աստված իմ, Տուրգենևը ծղրտում է, ծղրտում, ձեռքով սեղմում է կոկորդն ու մեռնող վիթի ձայնով շշմաջում.

- Այլևս չեմ կարող, բրոնխիտ ունեմ,- ու հսկա քայլերով սկսում է չափել երեք սենյակները:

- Բրոնխիտ,- նրա ետևից փնթփնթում է Տոլստոյը,- բրոնխիտը երևակայական հիվանդություն է: Բրոնխիտը մետաղ է:

Իհարկե, տանտիրոջ՝ Նեկրասովի սիրտը մարում է. մա վախենում է բաց թողնել և՛ Տուրգենևին, և՛ Տոլստոյին, ում մեջ ամուր հեմարան է տեսնում «Սովրեմեննիկի» համար, ու ստիպված է խուսանավել... Աղետը կանխելու համար մոտենում եմ բազմոցին ու ասում.

«Աղավնյա կս, Տոլստոյ, մի հուզվեք: Չգիտեք՝ մա ձեզ ինչպես է գնահատում ու սիրում»:

- Ես թույլ չեմ տա,- ռունգերը փքած ասում է Տոլստոյը,- ի հեճուկս ինձ որևէ բան անել: Նա հիմա դիտմամբ է այդպես հետ ու առաջ քայլում իմ կողքով ու ցնցում իր դեմոկրատական ազդրերը»:

Հետագայում Տոլստոյի ու Տուրգենևի հարաբերություններն այն աստիճան սրվեցին, որը քիչ էր մնում բանն ավարտվեր մենամարտով:

Այդ չկայացած մենամարտի ժամանակագրությունն այսպիսին է...

1861 թվականի մայիսի քսանհինգին Տոլստոյը եկավ Սպասսկոյե՝ Տուրգենևի մոտ: Տուրգենևը բարձրաձայն կարդում էր իր նոր, ձեռագիր «Հայ-

րեր և որդիներ» վեպը: Ընթերցանության ընթացքում Տոլստոյը ցուցադրաբար քննեց:

Հաջորդ օրը նրանք գնացին Ֆետի մոտ՝ Ստեպանովկա կալվածքը: Առավոտյան սուրճ խմելիս Տուրգենևը պատմեց իր արտամուսնական դուստր Պոլինայի մասին, որն ապրում էր Ֆրանսիայում, Վիարդոյի տանը: Թե ինչ եղավ հետո՝ իր հուշերում գրում է Ֆետը.

«Տուրգենևը տանտիրուհու աջ կողմն էր նստած, իսկ Տոլստոյը՝ ձախ: Իմանալով կարևորության մասին, որ այդ ժամանակ Տուրգենևը տալիս էր դստեր դաստիարակությանը՝ կինս հարցրեց՝ գո՞հ է արդյոք անգլիացի դաստիարակչուհուց: Տուրգենևը սկսեց գովեստներ շռայլել դաստիարակչուհու հասցեին և իմիջիայլոց պատմեց, որ նա անգլիական ճշտապահությամբ խնդրել է սահմանել այն գումարը, որ դուստրը կարող է տնօրինել բարեգործական նպատակների համար:

- Հիմա, - ասաց Տուրգենևը, - անգլուհին պահանջում է, որ աղջիկս վերցնի աղքատների մաշված շորերը և անձամբ կարկատելով՝ վերադարձնի ըստ պատկանելվույն:

- Եվ դուք դա լա՞վ եք համարում, - հարցրեց Տոլստոյը:

- Իհարկե, դա բարեգործություն անողին մոտեցնում է հանապազօրյա կարիքին:

- Իսկ ես համարում եմ, որ զուգված աղջիկը՝ կեղտոտ ու գարշահոտ քրջերը ծնկներին, կեղծ, թատերական տեսարան է խաղում:

- Ես Ձեզ խնդրում եմ մնան բան չասել, - ռունգերը փքելով՝ գոչեց Տուրգենևը:

- Իսկ ինչո՞ւ չասեմ այն, ինչում համոզված եմ»:

Ֆետը հիշում է, որ գազազած Տուրգենևը խոստացավ «հասցնել Տոլստոյի մոռոթին», եթե նա անմիջապես չլռի:

Իրավիճակի նրբանկատությունը նրանում էր, որ դա ասվել էր Աֆանասի Աֆանասևիչի տիկնոջ ներկայությամբ: Անմիջապես հետո Տոլստոյը մեկնեց ընկերոջ Իվան Պետրովիչ Բորիսովի մոտ՝ Նովոսյուլկի կալվածքը, և այնտեղից Տուրգենևին նամակ ուղարկեց՝ պահանջելով ներողություն խնդրել: Ընդ որում, նշում էր, որ այդ գրավոր ներողությունն ուղարկելու է Ֆետերին: Նամակին սպասելու էր «Բոգոսլով» կայարանում: Տուրգենևն այդպիսի նամակ գրեց, բայց, չգիտես ինչու, ուղարկեց սխալ հասցեով: Երկար ժամանակ նամակը չստանալով՝ Տոլստոյը Տուրգենևին կանչեց մենամարտի: Այդ նամակը չի պահպանվել, բայց Մ.Ա. Տոլստայայի հուշերով՝ Լև Նիկոլևիչը նամակում ասում էր, որ «չի ցանկանում մենամարտել ճղճիմ

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

ձևով, այսինքն, որ երկու գրող ատրճանակներով գան երրորդ գրողի հետ, ու մենամարտն ավարտվի շամպայնով, այլ ուզում է իսկապես մենամարտել և Տուրգենևին խնդրում է Բոգոսլով, անտառի եզրը գալ զենքերով»։ Տուրգենևերը նոր նամակ գրեց՝ ներողություններով։ Ծրարը չբացելով՝ Տոլստոյը նամակն ուղարկեց Ֆետերին։

Թվում էր՝ միջադեպը սպառված է։ Բայց այդ պատմությունն անհեթեթ շարունակություն ստացավ։ Տուրգենևը մեկնեց Փարիզ։ Ըստ երևույթին իր արարքի համար ամաչելով՝ Տոլստոյը նրան հաշտության նամակ գրեց, որի տեքստը մեզ չի հասել։ Սակայն մինչև նամակն ստանալը Տուրգենևեն ինչ-ինչ լուրերից իմացել էր, որ Տոլստոյն իբր Մոսկվայում տարածում է մենամարտի հրավերով իր նամակի պատճենները և իրեն վախկոտ անվանում։ Եվ նա Տոլստոյին նամակ է գրում՝ առաջարկելով մենամարտել հաջորդ զարնանը, երբ ինքը կվերադառնա Փարիզից։

Այդ առաջարկը (մենամարտ կես տարի անց, երբ Տուրգենևը կբարեհաճի վերադառնալ Փարիզից), ծիծաղեցրեց Տոլստոյին։ «Քեռուն» պատասխանեց կարճ ու սպանիչ մի ուղերձով, որը հստակ բնութագրում է նրան.

«Ողորմած պարոն»։

Դուք ձեր նամակում իմ արարքը անագնիվ եք համարում, բացի այդ, անձամբ ինձ ասել եք, որ «կհասցնեք մոռոթիս», իսկ ես Չեզնից ներողություն եմ խնդրում, ընդունում իմ մեղավորությունը ու հրաժարվում մարտահրավերից»։

Իհարկե, բարոյական հաղթանակն այդ մենամարտում Տոլստոյի կողմն էր։ Տուրգենևը վախեցել էր։ Բայց այստեղ արտահայտվում էր նաև Տոլստոյի անտանելի բնավորությունը։ Ֆետի մոտ հյուրընկալվելիս նա խայթել էր Տուրգենևի ամենաթույլ տեղը։ Ապօրինի դստեր ճակատագիրը, որը ծնվել էր կարուհուց՝ նրա մոր՝ Վարվառա Պետրովնայի կալվածքում և այնտեղ ծաղրածանակի էր ենթարկվել տիրուհու կողմից, որն այդպիսով վրեժ էր լուծում որդուց արտասահման՝ Վիարդոյի մոտ փախչելու համար, Տուրգենևի ողջ կյանքի խաչն էր դարձել։ Նա աղջկան տեղափոխեց Ֆրանսիա՝ Վիարդոյի մոտ, և նրան կոչեց սիրելի կնոջ անունով։ Բայց ևայնպես, փոքրիկ Պոլինան խանդում էր հորն իր խնամակալուհու նկատմամբ։ Նա լրիվ մոռացել էր ռուսերենն ու կատարելապես ֆրանսուհի դարձել, խիստ անհաջող ամուսնացել էր ապակեգործական ֆաբրիկայի սեփականատեր Գաստոն Բրյուէրի հետ։ Ամուսինը խմում էր, արագ սնանկացավ ու ժամանակ առ ժամանակ սպառնում էր սպանել իրեն ու կնոջը։ Տուրգենևը պնդեց, որ դուստրը թողնի ամուսնուն ու երկու երեխաների հետ տեղափոխվի



Շվեյցարիա: Մինչև իր կյանքի վերջը նա օգնում էր դասերն ու թռռներին, որոնց շատ էր սիրում: Սակայն 1883 թվականին, գրողի մահից հետո պարզվեց, որ նրա օրինական ժառանգորդը Պոլինա Վիարդոն է: Դուստրը փորձեց վիճարկել Վիարդոյի իրավունքները, բայց տանուլ տվեց դատավարությունն ու երկու երեխաների հետ մնաց առանց գոյության միջոցների: Նա ստիպված էր երաժշտության դասեր տալ երեխաներին կերակրելու և կրթության համար: Պոլինան մահացավ 1918 թվականին: Պահպանվել է նրա մահվան վկայականը. «Հազար ինը հարյուր տասնութ թվականի հոկտեմբերի 12-ին, ժամը 7.30-ին մահացել է իր բնակարանում... Պելագեյա Պոլինա Տուրգենեֆ... առանց որոշակի զբաղմունքի, Իվան Տուրգենևի դուստրը»:

Ստեպանովկայում՝ Ֆետերի մոտ Տոլստոյը դաժան վարվեց: Իհարկե, նա չէր կարող իմանալ այդ աղջկա ծնվելու և տատիկի մոտ՝ Սպասկում նրա տառապանքների բոլոր հանգամանքները: Չէր կարող իմանալ, որ նրան ամենասև աշխատանքներն էին պարտադրում, բայց Վարվառա Պետրովնան երբեմն կարգադրում էր հագնել ամենաշքեղ շորերը, ու երբ աղջիկը կանգնում էր նրա առաջ, զարմացած հարցնում էր ծառաներին. «Ասացեք, ո՞ւմ է այսքան նման այս աղջնակը»:

Բայց նրա անտեղյակությունը թույլ արդարացում է: Ըստ երևույթին, Տոլստոյը սկզբունքորեն բախման էր տրամադրված Տուրգենևի հետ: Գուցե նրան դուր չէին գալիս նրա լիբերալ հայացքները: Հնարավոր է՝ խանդում էր նրա գրական հեղինակությանը: Իսկ գուցե և պարզապես վախենում էր հերթական անգամ ընկնել ավելի հաջողակ մարդու ազդեցության տակ:

#### *Տոլստոյն արտասահմանում*

Ռուս ազնվականը ռուս ազնվական չէր լինի, եթե զոնե մի անգամ չլիներ արտասահմանում: Այսինքն՝ Եվրոպայում: Տոլստոյը Եվրոպայում եղավ երկու անգամ. 1857 և 1860-1861 թվականներին: Սակայն դատելով նրանից, որ դրանից հետո այլևս այնտեղ չի մեկնել և առանձնապես չէր էլ ձգտում, Եվրոպական շրջագայությունները կարևորագույն իրադարձություն չէին նրա կյանքում: Պարզ ասած՝ Տոլստոյն «արևմտամետ» չդարձավ: Ասենք, «պլավոնաֆիլ» էլ չդարձավ, չնայած ռուսական մտքի այդ ուղղությամբ հետաքրքրվում ու շփվում էր նրա ներկայացուցիչների՝ Իվան և Կոնստանտին Սերգեևիչ Ակսակովների, Իվան Վասիլևիչ Կիրեևսկու, Յուրի Ֆյոդորովիչ Սամարինի հետ: Սակայն գաղափարական կուսակցակա-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

նությունը նրա սրտով չէր:

Սկզբում, բնականաբար, մեկնեց Փարիզ: Ուրիշ էլ ո՞ւր: Նրան Փարիզ էր ձգում ոչ միայն «աշխարհի մայրաքաղաքը տեսնելու» ձգտումը, այլև հիշողությունը հոր մասին, որն այդտեղ գերության մեջ էր եղել 1813-1814 թվականներին: Մեկնեց առանց ուղեբեռի ու ծառայի: Ֆրանսիայի մայրաքաղաքն ապշեցրեց նրան «պարահանդեսների մոլեգնությամբ», պատկերասրահներով, թանգարաններով, թատրոններով, տաճարներով: Նրան ամեն ինչ հետաքրքիր էր: Տոլստոյն այցելում է Ազգային գրադարան, կոնսերվատորիա, դասախոսություններ լսում Սորբոնում: Ինվալիդների տանը նայում է հսկա սարկոֆագը, որի մեջ հանգչում է Նապոլեոնի աճյունը: Նոթատետրում գրում է. «Չարագործի աստվածացում, սարսափելի է»:

Փարիզը նրան հեղեղում է ամենատարբեր տպավորություններով:

Այստեղ շատ են ռուսները, այդ թվում և ազգականներ՝ Տրուբեցկոյները, Մանսուրովները, Մեշչերսկիները... Այստեղ է ապրում նաև Տուրգենևը, որի հետ դեռ վերջնականապես չի գծովել: Տոլստոյն ամեն օր հանդիպում է նրա հետ: Միասին գնում են Պոլինա Վիարդոյի համերգներին: Տուրգենևը շարունակում է բարեհոգի հեզնությամբ հետևել գրական «գարմիկին»: Բարեկամներին ու ծանոթներին ուղարկած նամակներում նա անպայման հիշատակում է Տոլստոյին ու գովաբանում նրան որպես ռուս գրականության գլխավոր հույսի: Նրանք միասին մեկնում են Դիժոն, իջևանում նույն հյուրանոցում: Փետրվար էր, ցուրտ... Տուրգենևը Պավել Վասիլևիչ Անենկովից գրում է, որ Տոլստոյի հետ նստած են ոչ թե «բուխարու մոտ, այլ հենց բուխարու մեջ, վառ կրակի ուղիղ կենտրոնում»:

Տոլստոյը Փարիզում մնաց երկու ամիս: Ու փախավ: Բոլոր հաճելի տպավորությունները փլուզվեցին մեկ օրվա մեջ, մարտի 25-ին, երբ գիլիոտինով հրապարակային մահապատիժ տեսավ: Մահապատժի էին ենթարկում Ֆրանսուա Ռիշելիս՝ անուղղելի հանցագործի, որը մեղադրվում էր սպանությունների ու կողոպուտների համար: Այդ մահապատժի մեջ արտակարգ ոչինչ չկար: Ավելին, այդ ժամանակի բազմաթիվ իրավագետներ, այդ թվում և ռուս, հրապարակային մահապատիժն ավելի «բարոյական» էին համարում, քան սպանությունը գնդաններում կամ փակ բանտային բակերում: Հրապարակային մահապատժի դեպքում պատասխանատվությունն իրենց վրա էին վերցնում ոչ միայն դատավորներն ու դահիճները, այլև քաղաքային հանրությունը:

Բայց Տոլստոյը դրա մեջ միանգամայն այլ բարոյականություն տեսավ:

Նա օրագրում գրում է. «Արթնացա հիվանդացած, ժամը 7-ին: Ու գնացի

մահապատիժը նայելու: Հաստ, սպիտակ, առողջ վիզ ու կուրծք: Համբուրեց Ավետարանը, իսկ հետո՝ մահ. ինչպիսի՜ անմտություն»:

Հաջորդ օրը նա շտապ լքում է Փարիզը: Վ.Պ Բոսկիին ռոպրկած նամակում բացատրում է այդ հանկարծակի որոշումը. «Ես շատ սարսափներ եմ տեսել պատերազմում ու Կովկասում, բայց եթե իմ ներկայությամբ կտոր-կտոր անեին մարդուն, այոքան նողկալի չէր լինի, որքան այդ հմուտ ու նրբագեղ մեքենան, որի միջոցով մի ակնթարթում ուժեղ, ջահել, առողջ մարդուն... Իսկ ամբոխը զզվելի է, հայրը, որ դատերը բացատրում է, թե ինչ ճարտար, հարմար մեքենայով է դա արվում և այլն: Մարդկային օրենք. ցնդաբանություն: Ճիշտ է, որ պետությունը դավադրություն է ոչ միայն շահագործման, այլև գլխավորապես քաղաքացիների այլատերման համար»:

Նույն նամակում Տոլստոյը սկզբունքային եզրակացություն է անում իր համար. «...երբեք ոչ մի տեղ ոչ մի կառավարության չեմ ծառայի»:

Եվ նկատում է. «...ֆրանսիական կյանքն ու ժողովուրդը ինձ դուր են գալիս, բայց ոչ մի խելամիտ մարդ չհանդիպեցի ոչ հասարակությունից, ոչ ժողովրդից»:

Նա Փարիզից մեկնում է Շվեյցարիա: Ժնև, Կլարան: Ժնևի լճի ու սարերի տեսարանները, ուր մի քանի անգամ բարձրանում է, հիացնում են նրան՝ հիշողության մեջ կապվելով սիրելի Ռուսոյի արձակի պատկերների: Սակայն Լյուցեռնում (հետագայում նա կգրի «Լյուցեռն» պատմվածքը) Տոլստոյը հանկարծ բռնվում է միստիկական վախով, հնարավոր է՝ «արգամասյան սարսափի» նախակարապետը: Նա օրագրում գրում է. «Գիշերը հրաշք է: Ի՞նչ եմ ուզում, կրքոտ կամենում. չգիտեմ, միայն թե ոչ այս աշխարհի բարիքները: Ու չհավատալ հոգու անմահությանը, երբ հոգուդ մեջ այսպիսի անչափելի վեհություն ես զգում: Պատուհանից դուրս նայեցի: Սև է, պատառոտված ու պայծառ: Թեկուզ մեռիր: Աստված իմ: Աստված իմ: Ի՞նչ եմ ես, և ո՞ր, և որտե՞ղ եմ ես»:

Շվեյցարիայից՝ Գերմանիա: Անտեղ նա կրկին տրվում է մեղքին: Բադեն-Բադենում մի գիշերվա մեջ պտտախաղում տանուլ է տալիս երեք հազար ռուբլի: Նամակ է գրում Տուրգենևին՝ խնդրելով ուղարկել 500 ֆրանկ: Տուրգենևը մեկնում է փրկելու Տոլստոյին և նրան Բադեն-Բադենում գտնում ահավոր վիճակում, ինչի մասին նամակով հայտնում է Բոսկիին: Զիչ է որ տանուլ էր տվել բոլոր փողերը, մահ հիվանդացել էր ուժեղ... (հիվանդության անունը նամակի հրապարակված տեքստում խելամտորեն բաց է թողնված): Միևնույն ժամանակ նամակ է ստանում Սերգեյից. նա հայտնում էր, որ Մաշա քույրը հեռացել է ամուսնուց՝ իմանալով ուրիշ կանանց

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

հետ նրա բազմաթիվ կապերի մասին: Տոլստոյն օրագրում գրում է, որ այդ լուրը «խեղդեց» իրեն:

Նա սլանում է Ռուսաստան՝ քրոջը փրկելու: Ֆրանկֆուրտով, Դրեզդենով, Բեռլինով հասնում է Շտետին, այնտեղից շոգեմալով՝ Կրոնշտադտ: Ի դեպ, Դրեզդենում հասցնում է այցելել պատկերասրահ, որտեղ նրան «ցնցում է» Ռաֆայելի «Միքստինյան տիրամայրը»: Այդ նկարի վիճատպությունը հետո նրան կնվիրի հորաքույրը՝ ցարական արքունիքի ֆրեյլինա Ալեքսանդրա Անդրեևնա Տոլստայան, ում հետ Տոլստոյը ծանոթացել էր արտասահմանյան այդ առաջին ուղևորության ընթացքում: Նկարն այսօր էլ Տոլստոյի յասնոպոլյանյան առանձնասենյակի պատին է:

Բայց ի՞նչ կարող էր անել քրոջ համար: Նրա ամուսին Վալերիանի անառակ կենսակերպը ոչ մեկի համար գաղտնիք չէր: Տոլստոյի քննին՝ Տատյանա Անդրեևնա Կուզմինսկայան 1924 թվականին գրականագետ Մատիլավ Ալեքսանդրովիչ Յյավլովսկուն, որը հրատարակության էր պատրաստում նրա հուշերը, գրում է. «Մարիա Նիկոլաևնայի ամուսինն անտանելի էր: Կրոջը դավաճանում էր նույնիսկ ընտանեկան ստնտուներին, նաժիշտների և այլոց հետ: Պոկրովսկոյեի ձեռնհարկում նորածինների մի քանի կմախք էր հայտնաբերվել»:

Ի վերջո Մարիա Նիկոլաևնան ամուսնուն հայտարարեց. «Ես չեմ ցանկանում ավագ սուլթանուհի լինել ձեր հարեմում»:

Բայց XIX դարն էր: Ամուսնուց բաժանված կինը, այն էլ երեք երեխաներով, պերսոնա նոն գրատա էր դառնում բարձր հասարակության մեջ: Հիշենք, թե Աննա Կարենինան ինչպես էր Դոլլիին համոզում չբաժանվել Սթիվից, որը նույն մեղքերն էր գործում, ինչ Վալերիան Տոլստոյը: Ապահարզանն այն ժամանակ շատ բարդ ընթացակարգ էր: Բացի այդ, Վալերիանը մինչև 1864 թվականը ապահարզան չէր տալիս Մարիային:

Հատուկ քրոջ ու նրա երեխաների համար Տոլստոյը Մոսկվայում բնակարան վարձեց ու որոշ ժամանակ ապրում էր նրանց հետ: Եվ նրա երկրորդ արտասահմանյան ուղևորությունն էլ մասամբ կապված էր քրոջը Եվրոպա տանելու անհրաժեշտության հետ, որտեղ նրա «ամոթը» բարձրաշխարհիկ հասարակության աչքի փուշը չէր լինի:

Բայց ըստ երևույթին Մարիա Նիկոլաևնան ինքը բավական արկածախնդիր բնավորություն ուներ: Ֆրանսիական էքս-լե-Բենե առողջարանային քաղաքում նա ծանոթացավ շվեդ նավաստի Հեկտոր դը Կլենի հետ, որը ցուրտ էր առել լողարկության ընթացքում, հիվանդացել ունեցողով ու եկել էր բուժվելու: Կլենը գեղեցիկ, բայց հիվանդոտ մարդ էր. միշտ շրջում

էր տաք կոշիկներով ու ձեռնափայտով: Նրանց բարեկամությունը վերաճեց կրակոտ սիրո: Նրանք երեք ձմեռ անցկացրին Ալժիրում: 1863 թվականի սեպտեմբերի 8-ին Մարիան լույս աշխարհի բերեց ապօրինի դստերը՝ Ելենային:

Վալերիանի մահվանից հետո Մարիա Նիկոլանան տեղափոխվեց Պոկրովսկոյե, սկսեց լրջորեն զբաղվել տնտեսությամբ: Երեխաները մեծանում էին: 1871 թվականին դուստրը՝ Ելիզավետա Վալերիանովնան ամուսնացավ իշխան Լեոնիդ Գմիտրևիչ Օբոլենսկու հետ: Քառորդ դար անց նրանց որդի Նիկոլայ Լեոնիդովիչը կամուսնանա Տոլստոյի ամենասիրելի դստեր՝ Մարիայի հետ, որը... հեռու հորաքույր էր գալիս իր ամուսնուն: Այդպիսի զարմանահրաշ կերպով էին միահյուսվում ազնվականական ընտանիքների կապերն այդ ժամանակներում:

Երկու օրինական դուստրերին կնության տալով՝ Մարիա Նիկոլանան հաճախակի մեկնում էր արտասահման: 1873 թվականին Կլենը մահացավ: Մարիան ծանր էր տանում նրա մահը ու լրջորեն մտածում էր ինքնասպանության մասին: Հենց այդ ժամանակ էլ գրվեց Լև եղբորն ուղղված նամակը՝ ներշնչված «Ռուսկի վեստնիկում» մաս-մաս հրապարակվող «Աննա Կարենինա» վեպից. «Աստված իմ, եթե բոլոր Աննա Կարենինաներն իմանային ինչ է սպասում իրենց, ինչպես կփախչեին րոպեական հաճույքներից, որովհետև ամենը, որ ապօրինի է, երբեք չի կարող երջանկություն լինել»:

Տոլստոյի երկրորդ եվրոպական ուղևորության առավել կարևոր պատճառը ավագ եղբոր՝ Նիկոլայի հիվանդությունն էր: Նա թոքախտից մահանում էր գերմանական փոքրիկ Սոդեն քաղաքում: Լևը նրան տեղափոխեց Հիեր առողջարան՝ Նիսի մոտ, որտեղ Նիկոլայը տառապանքով մահացավ նրա ձեռքերի վրա 1860 թվականի սեպտեմբերի 20-ին:

Տոլստոյը համարում էր, որ այդ մահն իր կյանքի «ամենաուժեղ տպավորությունն էր»: Դրանից չորս տարի առաջ, նույնպես թոքախտից, Օբյուլում վախճանվել էր Գմիտրևին: Լևը եղբորն այցելել էր մահվանից առաջ, բայց Գմիտրևի Նիկոլակիչը հոգին ավանդեց նրա բացակայությամբ: Իսկ ահա Նիկոլենկայի հանգչելը Լևի աչքի առաջ էր: Ավագ եղբայրը արիաբար էր պահում իրեն, ցույց չէր տալիս տառապանքները: «Մինչև վերջին օրը իր բնավորության արտասովոր ուժով ու կենտրոնացածությամբ անում էր ամեն ինչ, որպեսզի հոգս չդառնար ինձ համար.- Մերգեյ եղբորը գրում էր Լևը:- Մահվան օրը անձամբ հազնվեց ու լվացվեց, և ես առավոտյան նրան գտա հազնված ու բազկաթոռում նստած: Մահվանից 9 ժամ առաջ էր, երբ

նա հնազանդվեց ու խնդրեց հանել շորերը... Մահացավ համարյա առանց տառապանքի (առնվազն՝ երևացող): Ավելի ու ավելի ընդհատ էր շնչում ու վախճանվեց: Հաջորդ օրը ես իջա նրա մոտ ու վախենում էի դեմքը բացել: Թվում էր՝ ավելի տառապած, սարսափելի է լինելու, քան հիվանդության ժամանակ, և չես պատկերացնի, ինչ սքանչելի դեմք էր՝ լավ, ուրախ ու հանդարտ արտահայտությամբ: Երեկ նրան թաղեցինք այստեղ»:

Ալեքսանդրա Անդրեևնա Տոլստայային ուղարկած նամակում, որը խիստ աստվածավախ ու հավատացյալ կին էր, նա նկատում է, որ եղբոր մահը իրեն ցույց տվեց կյանքի ողջ անիմաստությունը: «Ինչո՞ւ ապրել, եթե նա մահացել է,- ու մահացել է տառապանքով,- ուրեմն քեզ հետ ինչ կկատարվի:- Կլինի ավելի վատ: Չեզ համար լավ է: Չեր մեռյալներն ապրում են այդտեղ, դուք կհանդիպեք նրանց (չնայած ինձ շարունակ թվում է, որ անհնար է անկեղծորեն հավատալ դրան. չափազանց լավ կլիներ), իսկ իմ մեռյալները չքացել են վառված փայտի պես»:

Տոլստոյը հրաժարվում է մեռած եղբոր մարմինը տեղափոխել հայրենիք, և ինքն էլ մտածում է այլևս չվերադառնալ: «Ռուսաստան մեկնելն անիմաստ է: Այստեղ ես ապրում եմ, այստեղ կարող եմ ապրել: Ի դեպ, քույրս այստեղ է՝ երեխաների հետ»: Եվ այդ վիճակում նա օրագրում ևս մի գրառում է անում «նոր կրոնի» մասին, որը պատրաստվում է ստեղծել. «Թաղման ժամանակ մտածեցի մատերիալիստական Ավետարան գրել, մատերիալիստ Քրիստոսի կյանքը...»:

Ու կրկին, ինչպես 1855 թվականի դրինյան գրառման դեպքում, եկեղեցական քննադատություն է տեղում Տոլստոյի վրա նրա «գոռոզության» համար: Տեսեք ի՞նչ է մտածել՝ սեփական Ավետարան գրել: Այն էլ՝ մատերիալիստական: Բայց դրա հետ մեկտեղ հաշվի չի առնվում կենսական համատեքստը, որը ծնել է այդ գրառումը:

Նիկոլայ եղբայրն ասնկասկած աթեիստ էր: Մահվանից առաջ հաղորդություն չառավ: Մենք չզիտենք՝ ուղղափառ եկեղեցու ծիսակարգով են թաղել, և փոքրիկ Հիեր քաղաքում, որտեղ նույնիսկ այսօր մոտ յոթ հազար մարդ է ապրում, այդպիսի եկեղեցի կա՞ր:

Տոլստոյը պաշտում էր Նիկոլային, խոնարհվում նրա առաջ: Նա բոլոր եղբայրներից ավելի էր նմանակման օրինակ ծառայել փոքրին, իսկ հոր վաղ մահվանից հետո հայր էր դարձել նրա համար...

Եվ ահա եղբայրը մահանում է Լևի ձեռքերի վրա, որպես իսկական ստոնիկ, առանց վախի ու տրտունջի, բայց և առանց անդրջիրինյան կյանքի դույզն-ինչ հույսի: Փոքր եղբոր համար նա վախճանով էլ բարձր արիու-

քյան ու արժանապատվության օրինակ է մնում: Բայց Լևը այդպես չի կարող: Նույնիսկ եթե շատ ուզեմար: Եվ Կովկասում, և՛ Ղրիմում, և՛ առաջին արտասահմանյան ուղևորության ժամանակ նա մի քանի կրոնական ցնցում էր ապրել, որոնք հստակ հուշել էին՝ առանց Աստծո ապրել չի կարող: Բայց և չի կարող համաձայնել, որ եղբայրը ճիշտ չի ապրել: Այստեղից էլ այդ տարօրինակ գրառումը:

Ինչ վերաբերում է «մատերիալիստական Ավետարանին», ապա առաջինն այն կգրի ոչ թե Տոլստոյը, այլ ֆրանսիացի փիլիսոփա և գրող Էռնեստ Ռենանը, որը հենց 1860 թվականին, երբ Լևը կորցրեց եղբորը, հնագիտական արշավախմբի կազմում ճամփորդում էր Մերձավոր Արևելքում: Հենց այնտեղ էլ նրա մեջ սաղմնավորվեց Քրիստոսի կենսագրության գաղափարը, որից նա համեց բոլոր հրաշքները՝ ավարտելով Հիսուսի մահով խաչի վրա:

Տոլստոյը դեռ այդ գիրքը չի կարդացել, այն լույս կտեսնի 1863 թվականին: 1902 թվականին «Հիսուսի կյանքը» ռուսերեն կիրատարակվի Ռուսաստանում, մեկ տարի անց այն բանից, երբ համանման մտքերի համար Տոլստոյին կվտարեն եկեղեցուց, իսկ այդ հարցերի վերաբերյալ նրա բոլոր գրվածքները կարգելվեն գրաքննության կողմից: Ինչ թույլատրելի է ֆրանսիացուն, ռուսին արգելված է:

Նա, իհարկե, վերադարձավ Ռուսաստան: Եվ չնայած եղբոր մահվանը, երկրորդ արտասահմանյան ուղևորությունը շատ ավելի արդյունավետ էր, քան առաջինը: Նա արտասահմանում մնաց իննուկես ամիս, այցելեց Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա և Անգլիա՝ ուսումնասիրելով դպրոցական դասավանդման փորձը տարբեր երկրներում, որովհետև ցանկանում էր Ռուսաստանում վերադառնալ մանկավարժական գործունեության: 1861 թվականի փետրվարին նա Լոնդոնում ծանոթացավ Ալեքսանդր Իվանովիչ Գերցենի և Նիկոլայ Պլատոնովիչ Օգարյովի հետ ու հաճախ էր լինում նրանց տանը: Նա լրջորեն հրապուրվել էր երաժշտությամբ ու թատրոնով: Ապրիլին, Եվրոպան թողնելուց առաջ, հորաքույր Յորգոլսկայային գրում է. «Ինձ հետ այնքան տպավորություններ և այնքան գիտելիքներ եմ բերում, որ ստիպված կլինեմ երկար աշխատել այդ ամենը գլխումս կարգի բերելու համար»:

Գրառում օրագրում. «Մահմանը: Առողջ եմ, ուրախ»:

## ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

### ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐՁԱՆԿՈՒԹՅՈՒՆ (1862-1877)

#### *Պողկոլյուսինը*

1862 թվականի սեպտեմբերի քսաներեքին Աստվածամոր Ծննդյան կրեմլյան եկեղեցում Լև Տոլստոյը պսակադրվեց Սոֆյա Բերսի՝ մոսկովյան գերմանացի բժիշկ Անդրեյ Եվստաֆևիչ Բերսի ու նրա տիկնոջ՝ Լյուբով Ալեքսանդրովնայի (օրիորդական ազգանունը՝ Իսլավինա) դստեր հետ: Տոլստոյն այն ժամանակ 34 տարեկան էր, կնոջ ընդամենը 18-ն էր լրացել:

Պսակադրությանը ներկա ժողովուրդն ախ էր անում. «Ինչ ջահել է: Ծեռունու հետ է պսակվում: Երևում է՝ հարուստ է»:

Այդ իրադարձությանը նախորդել էին Տոլստոյի ամուսնության մի շարք փորձեր: Ի տարբերություն եղբայրների՝ անուղղելի ամուրի Նիկոլայի, զնչուիու հետ քաղաքացիական ամուսնությամբ ապրող Մերգեյի ու հասարակաց տնից փրկագնված մարմնավաճառի ձեռքերի վրա մեռած Դմիտրիի, ի տարբերություն Մարիա քրոջ, որի ընտանիքը քայքայվեց, Լևը հիմնավոր էր մոտենում ամուսնության խնդրին: Նա ցանկանում էր խախտել եղբայրների ու քրոջ ընտանեկան անհաջողությունների ավանդույթը:

Տոլստոյը մի անգամ խոստովանել է, որ ամուսնության մասին երազում էր տասնհինգամյա տարիքից: Համոզված էր, որ ընտանեկան երջանկությունն իր ուղին է: Նա շատ էր մտածում դրա մասին: 1852 թվականին Կովկասից Յորգոլսկայային ուղարկած նամակում մանրամասն նկարագրում է իր ապագա ընտանեկան կյանքը. «Ես ամուսնացած եմ, կինս՝ հեզ, բարի, սիրող և սիրում է Ձեզ ճիշտ այնպես, ինչպես ես: Մեր երեխաները Ձեզ «տատիկ» են ասում: Դուք ապրում եք մեծ տան մեջ, վերևում, այն սենյակում, որտեղ ժամանակին տատիկն էր ապրում. տանն ամեն ինչ առաջվա նման է, նույն կարգով, որ եղել է պապա՝-ի կենդանության օրոք, ու մենք շարունակում ենք նույն կյանքը՝ միայն տեղերը փոխելով. Դուք վերցնում եք տատիկի դերը, բայց ավելի բարի եք նրանից, ես՝ պապա՝-ի դերը, բայց հույս չունենմ երբևէ այն վաստակելու, կինս մամա՝-ն է»:



Այս «ընտանեկան ծրագրից» կարելի է հասկանալ, որ 24-ամյա Տոլստոյն իր ընտանեկան կյանքը պատկերացնում էր որպես ճշգրիտ պատճենն այն կյանքի, որ եղել էր Յասնայա Պոլյանայում՝ հոր ու մոր կենդանության օրոք: Նա Յորգոլսկայային է վերապահում այն դերը, որ նախկինում կատարում էր Պելագեյա Նիկոլաննա տատիկը: Իրեն՝ հոր՝ Նիկոլայ Իլյիչի դերը: Կնոջը՝ մոր՝ Մարիա Նիկոլաննայի դերը: Իսկ երեխաները. «...մեր երեխաները մեր դերերն են», - գրում է նա Յորգոլսկայային: Այսինքն նրա երեխաները նրա եղբայրներն են, քույրը, և ինքը մանկության տարիներին, բայց... ծնողների կենդանության օրոք: Այդպիսով, Տոլստոյի «ընտանեկան ծրագիրը» ենթադրում էր ոչ միայն անցյալի պատճենում, այլև նրա, եթե կարելի է այդպես ասել, շտկում: Ամեն ինչ նույնը, միայն առանց ընտանիքին պատուհասած դժբախտության, որը որբացրեց Տոլստոյների երեխաներին: Տոլստոյը կարծես ցանկանում է ուղղել Աստծո սխալը:

Այստեղից պարզ է դառնում, թե ունեցվածքը բաժանելիս նա ինչու էր ուզում ստանալ Յասնայա Պոլյանան՝ ամենամանկամտաբերը բոլոր կավածքներից: Տոլստոյը նպատակ էր դրել վերականգնել ընտանեկան դրախտը: Եվ, իհարկե, դա կարող էր արվել միայն տոհմական օջախում՝ Յասնայայում:

Բայց կյանքը ճշտումներ էր անում երիտասարդ Տոլստոյի «հանճարեղ» ծրագրի իրականացման մեջ. Կովկաս, Գրիմի պատերազմ, գրական գործեր, երկու ուղևորություն արտասահման... Բայց նա ծրագրից չէր հրաժարվում, միայն հետաձգում էր դրա իրականացումը: Եվ դա ոչ միայն արտաքին, այլև ներքին պատճառներ ուներ:

Նախ, իրեն տգեղ էր համարում. խոշոր ցցված ականջներ, բադի քիթ, իրար մոտ ու խոր ընկած աչքեր, չափազանց բարձր հասակ... Նա երկնչում էր կանանց ներկայությամբ, նույնիսկ պարտադիր չէ, որ բարձրաշխարհիկ: «Կազակներում» իշխան Օլենինը քաշվում է կազակուհի Մարյանայի հետ մենակ մնալուց, չնայած հանդիպման նպատակը հասկանալի է երկուսին էլ և միանգամայն հատուկ կազակական ստանիցայի էթիկային: Մակայն Օլենինը զգում է, որ դուր չի գալիս կանանց: Եվ խորամիտ Երոշկա պապը պատահմամբ չի հրաժեշտ տալիս նրան ասում. «Մի տեսակ չես սիրվում»: Տոլստոյի կովկասյան օրագրից գիտենք, որ Մարյանան իրական նախատիպ է ունեցել՝ Սոլոմոնիդա անունով, իսկ Տոլստոյը նրա հետ ունեցել է նույն խնդիրները, ինչ Օլենինը Մարյանայի հետ: Այդպես էլ ինքն իրեն համոզել էր, որ մի տեսակ չի սիրվում:

Եվ որ Կազանում, Կովկասի ճանապարհին, սեր չի խոստովանում Ջի-

## ՊԸՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

նախդա Մոլոսովովային, նույնպես պատահական չէ: Աղջիկը հիշում է Հովվապետական այգու իրենց հանդիպումների մասին. «Նրա հետ հետաքրքիր էր, բայց՝ դժվար»:

Նրա հետ դժվար էր ոչ միայն երիտասարդ աղջիկների համար: Երբ Տոլստոյը Շվեյցարիայում էր, քիչ էր մնում սիրահարվեր հորաքույր Alexandrine-ին՝ Ալեքսանդրա Անդրեևնա Տոլստայային: Նրանց միջև խոր հոգևոր մտերմություն ծագեց: Ընդամին անընդհատ վիճում էին հավատի, Եկեղեցու մասին: Հետո դա վերաճեց բազմամյա նամակագրության, որը Տոլստոյը մի առիթով անվանել է իր «հոգևոր կենսագրությունը»: Ավաղ, Alexandrine-ը նրանից մեծ էր ուղիղ 11 տարով: Ասեմք, նրա կյանքն էլ արքունիքում, որտեղ ֆրեյլինա էր ու դաստիարակում էր մեծ իշխանուհիներին, Տոլստոյի սրտով չէր: «Սևաստոպոլյան պատմվածքների» հաջողությունից հետո, որոնցից առաջինը ցարը կարգադրեց թարգմանել ֆրանսերեն ու հրատարակել Ֆրանսիայում, երիտասարդ հեղինակը ցարական ընտանիքի կողմից փայփայված լինելու հնարավորություն ստացավ: Դրա փոխարեն Տոլստոյը խուսափում էր արքունիքից և այն Խոդովսկ կոչեց: Հասկանալի է, որ Alexandrine-ի համար նրա հետ դժվար էր:

1856 թվականին Տոլստոյը որոշեց ամուսնանալ Վալերիա Արսենևայի հետ: Արսենևների՝ Սուդակովոյի կալվածքը Յասնայա Պոլյանայից տասը վերստի վրա էր, և Տոլստոյները բարեկամական հարաբերությունների մեջ էին նրանց հետ: Վլադիմիր Սիխայովիչի ու կնոջ՝ Եվգենիա Լվովնայի մահվանից հետո նրանց չորս երեխաները որբ մնացին, ու Լև Տոլստոյը ստանձնեց նրանց խնամակալությունը: Վալերիա Արսենևան 20 տարեկան էր, երբ Տոլստոյի օրագրում սկսեցին հայտնվել առաջին քնքուշ գրառումները նրա մասին: Մանկության ընկերը՝ Տոլստոյի կալվածատեր Գմիտրի Ալեքսեևիչ Դյակովը, նրան համոզում էր ամուսնանալ Վալերիայի հետ ու պատրաստ էր հանդես գալ որպես «խնամախոս»:

Դրա փոխարեն Տոլստոյն աղջկա հետ ինչ-որ տարօրինակ և, ինչպես պարզվեց հետագայում, դաժան խաղ սկսեց: Նա «ընտանեկան վեպ» էր հորինել, որի հերոսները երկուսն էին՝ Խրապովիցկին ու Դեմքիցկայան: Նրանք «սիրում են իրար» ու պատրաստվում են ամուսնանալ, սակայն «հակադիր հակումներ ունեցող» մարդիկ են: Վալերիայի հետ նամակագրության մեջ, որը տևեց մի ամբողջ տարի, Տոլստոյը նրա հետ խաղում էր այդ երևակայական «վեպը», ուր նկարագրում էր Խրապովիցկու ու Դեմքիցկայայի ապագա կյանքը ամենայն մանրամասնությամբ, ընդհուպ մինչև նրանց տան սենյակների դասավորությունը: Միևնույն ժամանակ

«դաստիարակում էր» աղջկան՝ նշելով նրա բոլոր թերությունները՝ նույնիսկ հագուստի ինտիմ մանրամասներում: Ի՞նչ պիտի մտածեր Վալերիան: Կարծես թե պարզ է: Գործը գնում է հարսանիքի: Պարզապես փեսացուն հարսնացուից մեծ է ութ տարով և ուզում է նրան պատրաստել ամուսնական կյանքին:

1857 թվականին, առաջին արտասահմանյան ուղևորությունից առաջ, Տոլստոյը նամակ գրեց Արսենևային.

«Որ ես մեղավոր եմ իմ առաջ ու Չեր առաջ՝ անկասկած է: Բայց ինչ արած... Մնաք բարով, սիրելի Վալերիա Վլադիմիրովնա: Քրիստոս Չեզ հետ. Չեր առջև, ինչպես և իմ առջև սեփական մեծ, հրաշալի ճանապարհն է, և տա Աստված՝ այդ ճանապարհով հասնեք երջանկության, որին 1000 անգամ արժանի եք:

Չեր կ. Լ. Տոլստոյ»:

Դժվար է ասել՝ ինչն էր շատ այդ «վեպում»՝ դաժանությունը, թե՞ անհեթեթությունը: Բայց ակնհայտ է, որ ինչ-որ պահի Տոլստոյը հասկացել է, որ Արսենևան չի կարող իր կինը լինել: Աղջկա համար դժվար կլինի իր հետ: Եվ նա վերջակետ է դնում Վալերիայի հետ հարաբերություններին:

Արսենևան դժբախտ ճակատագիր ունեցավ: Երկու անգամ ամուսնացավ, նախ՝ օրյուլցի, ապա պետերբուրգցի աստիճանավորների հետ: Վախճանվեց 73 տարեկանում, Բագելում, որտեղ էլ թաղվեց:

«Տյուտչևա, Սվերբեևա, Շչերբատովա, Չիչերինա, Օլսուֆևա. բոլորին սիրահարված եմ եղել», - գրում է Տոլստոյը օրագրում՝ Արսենևայից փախչելուց մեկ տարի անց: Նրա սիրային հետաքրքրությունների շրջանակում են նաև Լվովա քույրերը, Մեմգոենը, Տրուբեցկայան, Գոնդոլկովա-Կորսակովան... Առաջին հայացքից կարող է թվալ՝ Տոլստոյը բարձրաշխարհիկ կնամուղ է: Բայց այդպես չէ: Նա իր առաջ հստակ նպատակ էր դրել՝ ամուսնանալ, շարունակել հոր ու պապի գործը, շարունակել Տոլստոյների տոհմը: Հենց այդ պատճառով էլ չափազանց բժախնդիր է հարսնացուի ընտրության հարցում: Իսկ ինքը, չնայած ոչ գեղեցիկ արտաքինին, իհարկե, երևելի փեսացու էր: Կոմս, ժառանգը Տոլստոյների, Վոլկոնսկիների, Գորչակովների, Տրուբեցկոյների... բոլորին չես թվի: Մարտական սպա, Սևաստոպոլի հերոս: Ոչ աղքատ կալվածատեր: Եվ, իհարկե, նշանավոր գրող:

Դրա համար էլ հապաղում է: Ամենից ավելի մոտ էր Եկատերինա Տյուտչևայի՝ բանաստեղծ Ֆյոդոր Իվանովիչ Տյուտչևի դստեր հետ ամուսնությանը: Տոլստոյը պաշտում էր Տյուտչևին, Պուշկինի հետ՝ նրա սիրելի բանաստեղծն էր: Գուցե և այդ պատճառով էր հավանել դստերը:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Աղջիկը հաճախ է հիշատակվում 1857-1858 թվականների նրա օրագրում. «...շատ լավն է», «...գրավում է ինձ լրջորեն ու ամբողջովին», «...մտքիցս դուրս չի գալիս», «...սիրո պատրաստ՝ գնում էի Տյուտչևայի մոտ» և այլն: Ու միևնույն ժամանակ. «Տյուտչևան, ցնդաբանություն», «...սա սեր չէ, չունի սիրո հմայքը», «...ոչ այս է, ոչ այն», «Ընդհանրապես վատն է»: Նրան զայրացնում է աղջկա աստվածավախությունը. «Կ.Տ.-ն մարդկանց սիրում է միայն նրա համար, որ Աստված այդպես է պատվիրել»:

Բայցևայնպես, 1858 թվականի սեպտեմբերին նա առաջարկություն անելու մտադրությամբ գնում է Տյուտչևայի մոտ: Բայց չգիտես ինչու հենց այդ օրը աղջիկը սառն ընդունեց նրան: Եվ Տոլստոյը հրաժարվեց այդ գաղափարից:

Եկատերինա Տյուտչևան (Կիտին, ինչպես նրան կոչում էին մտերիմները) սիրունատես և ուսյալ աղջիկ էր, Սմոլնի ինստիտուտի շրջանավարտ: Տոլստոյի հետ ծանոթանալու պահին լրացել էր նրա 22 տարին: Գրում էր ամսագրերի համար, անգլերեն թարգմանում միտրոպոլիտ Ֆիլարետի (Դրոզդովի) քարոզները: Մորաքույր Դարյա Մուշկովայի գրական սալոնի աստղն էր: Նրան «Երեկո» բանաստեղծությունն է նվիրել Պյոտր Անդրեևիչ Վյազենսկին: «Հրաշալի խելք ու կրթություն ունեցող աղջիկ էր,- նրա մասին գրում է ժամանակակիցը,- հաճելի արտաքին ուներ, աշխույժ սև աչքեր. աներեր մտքի հետ՝ զուսպ բնավորություն ուներ, բայց օժտված չէր այն կանացի գեղանիությամբ, որը ձգողական ուժ ունի տղամարդկանց համար: Ու քանի որ նրա պահանջները, բնականաբար, բարձր էին, դժվարանում էր գույգ գտնել իր համար: Նա մեծերից երկար ապրեց ու մահացավ առանց ամուսնանալու»:

Տյուտչևան դարձավ կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի ֆրեյլինան: Կյանքի վերջում, իսկ ապրել է 47 տարի, զբաղվում էր բարեգործությամբ, անասնաբուժարան կառուցեց, ժողովրդական դպրոցներ էր բացում, դասագրքեր գրում գեղջուկ երեխաների համար:

Իսկ ի՞նչը դուր չէր եկել Տոլստոյին Կիտի Տյուտչևայի մեջ: Ավելի ուշ նա հորաքույր Ա.Ա. Տոլստայային գրում է. «Հրաշալի աղջիկ Կ.-ն. չափազանց ջերմոցային բույս է, չափազանց դաստիարակված «անպարտավոր հանույքներով», որպեսզի ոչ միայն կիսի, այլև սրտակցի իմ գործին: Նա սովորել է բարոյական կոնֆետներ պատրաստել, իսկ ես գործ ունեմ հողի, գոմաղբի հետ... Նրա համար դա կոպիտ և օտար է, ինչպես ինձ համար օտար ու չնչին են դարձել բարոյական կոնֆետները...»:

Կովկասից Յորգոլսկայային ուղարկած նամակում, ուր բաշխում էր դերերն իր ապագա ընտանեկան դրախտում, Տոլստոյը գրում էր, որ իր կինը «ջանք է թափելու»: Իսկ «Կավվածատիրոջ առավոտը» պատմվածքում կնոջը տեսնում էր հասարակ շորը հագին ցեխոտ ճամփով գեղջուկների ու գեղջկուհիների մոտ գնալիս: Նրանք նայում են նրան, «ինչպես հրեշտակի, ինչպես ուրուի»: Տուն վերադառնալով՝ ամուսնուց թաքցնում է, որ գնացել է գյուղացիների մոտ՝ օգնելու, բայց ամուսինն ամեն ինչ հասկանում ու քնքշորեն համբուրում է «նրա սքանչելի աչքերը, ամաչկոտ կարմրող այտերն ու ժպտացող վարդագույն շրթունքները»:

Ինչ-որ բան հուշում է, որ Եկատերինա Տյուտչևան ոչ մի կերպ չէր համապատասխանում այդ դերին:

Մյուս կողմից, հնարավոր է, պատահական չէ, որ «Աննա Կարենինայում» Կոնստանտին Լևինի կնոջ անունը Կիտի է:

Մարիա Նիկոլանան փորձում էր մասնակցություն ունենալ եղբոր գործերին: Շա՛տ էր ուզում ամուսնացնել նրան: «Մեր ընտանիքից գոնե մեկը երջանիկ լինի», - գրում է նա եղբորը համատեղ արտասահմանյան ուղևորության ընթացքում:

Այդ ժամանակ Տոլստոյը Բրյուսելում ծանոթանում է Եկատերինա Դոնդուկովա-Կորսակովայի՝ Գիտությունների ակադեմիայի փոխնախագահի զարմուհու հետ: Փոխնախագահի մասին Պուշկինը գրել է.

*Ակադեմիայում գիտությունների  
Իշխան Դոնդուկն է նիստ անում էլի:  
Մեծ պատիվ է, որ, ինչպես ասում են,  
Իշխան Դոնդուկին վայել չէ բնավ:  
Ինչո՞ւ է, սակայն, տեղը նստում իր.  
Նստում է, քանզի ք...մակ ունի նա:*

Իշխանուհին դուր եկավ Տոլստոյին, ինչի մասին նա տեղեկացրեց Հիենրում գտնվող քրոջը: Եվ Մարիա Նիկոլանան որոշեց ամեն գնով եղբորն ամուսնացնել Եկատերինայի հետ.

«Աստծո՛ւ սիրուն, մի փախիր քո երջանկությունից, - գրում է նա, - ավելի լավ ու քեզ հարմար աղջիկ չես գտնի, իսկ ընտանեկան կյանքը քեզ վերջնականապես կկապի Յասնայա Պոլյանային ու քո գործին»:

Բայց նա հրաշալի գիտեր եղբորը: Գիտեր նրա չափազանց «մտավոր» վերաբերմունքն ամուսնությանը: Գիտեր նրա անվճռականության մասին,

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

այն մասին, թե ինչպես է գլխում անվերջ խառնում «կողմն» ու «դեմը», ինչպես Պողկոլյոսինը Գոգոլի «Ամուսնություն» կատակերգությունում:

«Բայց ես քո միջի պողկոլյոսինյան մակարդից եմ վախենում,- գրում է Մարիան:- Եթե կազմակերպեմ, հանկարծ կմտածես, թե ինչու եմ անում այդ ամենը: Կ.Ա.-ն, եթե սիրահարված չի քեզ, ինչը չեմ կարծում, ապա հաստատ կսիրի՝ դառնալով քո կինը, և նրա տարիքում, իհարկե, կարելի է հաստատ ասել, որ չի հիասթափվի և ունի լավ, հասկացող կին ու օգնական ու լավ մայր դառնալու բոլոր տվյալները... Աստծու սիրուն, չափից դուրս մի վերլուծիր, որովհետև եթե սկսեցիր վերլուծել, անպայման ցանկացած հասարակ հարցի մեջ փորձաքար կգտնես, և չիմանալով ինչպես պատասխանես ինչ ու ինչու-ին, կդիմես փախուստի...»:

Մարիա Նիլովանան ճիշտ դուրս եկավ:

Տոլստոյը փախավ նաև Եկատերինա Կորսակովայից:

### *Դևը*

Ընտանեկան երջանկության ճանապարհին մի խոչընդոտ էլ կար:

Տարածված կարծիք է, որ Տոլստոյը և՛ ամուսնությունից հետո, և՛ իհարկե, դրանից առաջ անտանելի անառակ կյանք էր վարում: Դա նույնիսկ բանահյուսության է վերածվել՝ անեկրոտներ, խառիկներ ու զվարճալի ոտանավորներ Յասնայա Պոլյանայում Տոլստոյի իբր ցուփ ու շվայտ կյանքի մասին: Հասկանալի է՝ շուրջբոլորը գյուղական աղջիկներ են: Ռ՞նց դիմանաս:

Վերջնական վերջակետ դնենք այս հարցում:

Ամուսնանալով Սոֆյա Անդրեևնա Բերսի հետ և միասին ապրելով 48 տարի, Տոլստոյը ոչ մի անգամ չի դավաճանել կնոջը: Սոֆյա Անդրեևնան շատ խանդոտ էր, բայց նա էլ ուշ շրջանի «Իմ կյանքը» հուշերում գրում է, որ միշտ վստահ է եղել ամուսնու անարատությանը: Քանզի վեհանձնությունը կնոջ հանդեպ, գրում է նա, «Տոլստոյների տեսակի մեջ է»:

Այս հարցին կարելի է այլևս չվերադառնալ: Բայց ինչ վերաբերում է Տոլստոյի կյանքին մինչև ամուսնությունը... Այստեղ ամեն ինչ շատ ավելի բարդ է:

Տոլստոյի վաղ շրջանի օրագրում հեշտասիրության հարցը մեծ ու կարևոր տեղ է գրավում: Ըստ երևույթին այդ զգացումը, որը նա արտահայտիչ կերպով կոչում է «եղջերուի զգացում», խիստ զարգացած էր նրա մեջ, սակայն դժվար թե գերազանցեր ցանկացած ջահել ու առողջ տղամարդու համանման զգացմանը: Բայց ահա մեղքի և այրող ամոթի աստիճանը, որ

զգում էր ամեն անգամ, երբ զիջում էր հեշտասիրությանը, անցնում էր խելամիտ սահմանները: Տոլստոյն օրագրում այնքան մանրակրկիտ է նշում ցանկացած «մեղանշում», որ իսկապես ինչ-որ ծայրահեղ անմաքրության և անկանոն սեռական կապերի զգացողություն էս ունենում: Բայց հիշենք, թե Տոլստոյն ինչու էր որոշել օրագիր վարել դեռևս Կազանում և ինչու էր օրագրի մի մասն կոչել «ֆրանկլինյան»:

Նրա տրամադրության տակ էին գեղջկուհիները, հյուրանոցների սպասուհիները ու, վերջապես, մարմնավաճառները: Բայց չգիտես ինչու նրանց հետ կապը տհաճությունից ու տառապանքից բացի ուրիշ ոչինչ չէր պատճառում: Տոլստոյը համոզված էր, որ հեշտասիրությունը տառացիորեն «փանգարում է ապրել»: Թույլ չէր տալիս զարգանալ այն ուղղությամբ, որի մասին նա երագում էր ու որն իր նպատակ էր դարձրել: Իսկ նա երագում էր ներքին ազատության և արտաքին հանգամանքներից անկախության մասին: Բայց հեշտասիրությունն արտաքին հանգամանք չէր: Հեշտասիրության դեմ պայքարելը շատ ավելի դժվար էր, քան սնամիտության, և ինչպես ինքն էր կարծում՝ ավելի հաջողակ ու տաղանդավոր մարդկանց նմանակելու ցանկության դեմ պայքարելը: Հեշտասիրության դեմ անհնար էր պայքարել բանականությամբ: Դա արտաբանական, կենդանական բնագոյ էր՝ «եղջերուի զգացում»: Կարող էս քեզ ստիպել ուշադրություն չդարձնել շրջապատողների կարծիքին: Դժվար է, բայց՝ հնարավոր: Կարող էս հեզնանքով վերաբերվել փառաբանվելու ցանկությանը: Կարող էս արհամարհել փողը: Բայց ստիպել քեզ կին չցանկանալ, ֆիզիկապես անհնար է: Հասկանալով այդ՝ Տոլստոյը բարդ խաղի մեջ է մտնում գայթակղություններից հզորագույնի հետ: «Դևը» վիպակը Տոլստոյի՝ այդ թեմային մվիրված ամենաուժեղ ստեղծագործությունն է:

«Աղջիկները շեղեցին», «աղջիկները խանգարում են», «աղջիկների պատճառով... սպանում են կյանքիս լավագույն տարիները»,- վաղ օրագրի մշտական լեյտմոտիվն է: Դա ներքին «կուսակրոնի» օրագիր է: Նա սեռական կրքի մեջ ոչ մի լուսավոր կետ չի տեսնում: Բայց նրանից փախչելու տեղ չկա, ինչպես փախչում էր բարձրաշխարհիկ զվարճանքներից ու թղթախաղից: Այն ետևից հասնում է ամենուրեք՝ Յասնայա Պոլյանայում, Մոսկվայում, Պետերբուրգում, Կովկասում, արտասահմանում... Հնարավոր է, որ նրա համարյա երջանիկ վիճակը պաշարված Մևաստոպոլում՝ ռումբերի ու կարտեչի ներքո, բացատրվում է նաև նրանով, որ ռումբերն ու կարտեչը լավագույնն են թույլ տալիս մոռանալ հեշտասիրության մասին: Մահվան վախը սուր էր «եղջերուի զգացումից»:

1857 թվականի արտասահմանյան օրագիրը տպավորություն է ստեղծում, որ Տոլստոյը պարզապես ցանկամոլ է: Փարիզ, Ժնև, Կլարան, Բեռն... Զգիտես ինչու՝ նա ժլատ է գրում այդ վայրերի գեղեցկության ու տեսարժան վայրերի մասին, փոխարենը անընդհատ ուշադրություն է դարձնում «լավիկներին»: «Ճարպիկ տիկինը շփոթմունքից քարացավ», «սեթևեթում էի անգլուհու հետ», «սքանչելի, կապտաչյա շվեյցարուհին», «սպասուհին անհանգստացնում է ինձ», «ամենուր՝ ճերմակակուրծք գեղեցկուհիներ», «պեպենոտ գեղեցկուհին»: «Կին եմ ուզում, անտանելի՛»: «Գեղեցկուհին զրոսնելիս, չաղիկ»: «Աղջնակներ: Շտանցից երկու աղջնակ սիրախաղ էին անում, մեկը հրաշք աչքեր ունի»: «Փառահեղ եկեղեցի՝ երգեհոնով, լիքը լավիկներ են»: «Լիքը շփվող ու կիսավավիկներ...»: «Հանդիպում երիտասարդ գեղեցիկ գերմանացու հետ՝ խաչմերուկի հին տան մոտ, ուր երկու լավիկներ են...»: «Հանդիպեցի մի փոքրիկի, բայց փախա նրանից»:

Այդ ժամանակ Տուրգենևը երիտասարդ Տոլստոյի մասին Փարիզից գրում է Պ. Վ. Անենկովին. «...տարօրինակ մարդ է, ես այդպիսիներին չեմ հանդիպել ու նրան լավ չեմ հասկանում: Պոետի, կավիճիստի, մոլեռանդի, աղապարոնի խառնուրդ, Ռուսոյին հիշեցնող մի բան, բայց Ռուսոյից ազնիվ, բարձր բարոյականությամբ ու միևնույն ժամանակ անհամակրելի արարած»:

Ինչո՞ւ «անհամակրելի»: Որովհետև նրանից դուրս են ցցվում հակասությունները: Ամբողջականություն, ներդաշնակություն չկա: Ինչո՞ւ «բարձր բարոյականությամբ»: Տուրգենևը, որը հետո տանուլ տված, մեծ պարտքերի տակ ընկած ու նաև ամոթալի հիվանդությամբ վարակված Տոլստոյին պիտի փրկի Բադենում, հրաշալի հասկանում է, որ նա բարոյականության նմուշ չէ: Սակայն Տուրգենևը խոր հոգեբան էր: Նա տեսնում էր այդ տարօրինակ երիտասարդի ներքին առանցքը: Արատավոր կրքերը նրա ոլորտը չեն:

«Լավիկներ», «լիստիկներ», «սպիտակ կրծքով». սա սատանայից է, որին Տոլստոյը հաճախ տեղի է տալիս, բայց իրեն չի ներում ոչ մի պարտության համար: Ամեն ինչ գրանցում է օրագրում: Հետո, տարեց հասակում կարդալով իր երիտասարդության գրառումները՝ մտորում էր դրանք ոչնչացնելու մասին: Հասկանում էր, թե օրագրային գրառումներն ինչ տպավորություն կթողնեն անպատրաստ ընթերցողի վրա: Բայց՝ չոչնչացրեց: Ինչո՞ւ: Որպեսզի մարդիկ իմանան, որ նույնիսկ այդպիսի կեղտոտ, արատավոր ու զզվելի երիտասարդին, ինչպիսին իրեն համարում էր, Աստված չլքեց: Չէ՞ որ արդյունքում ինչ-որ բան դուրս եկավ նրանից: Ընդամենը Լև



Տոլստոյ, համաշխարհային մեծություն: Ուրեմն նա հաղթե՞ց սատանայի դեմ կռվում:

Ո՛չ, ամեն ինչ այդքան միանշանակ չէ: «Դևը» վերնագրով վիպակը Տոլստոյը գրել է 1889 թվականի նոյեմբերին, տասն օրվա ընթացքում: Եվ 20 տարի ձեռագիրը թաքցրել էր աթոռի պաստառի տակ՝ այդպես էլ չիրատարակելով: Բացատրությունը, թե պարզապես վախենում էր վիպակը ցույց տալ կնոջը, բավարար չէ: Բանն այն է, որ այդ վիպակը սատանայի հետ խաղի մեջ Տոլստոյի ամենամեծ պարտության վկայությունն է:

«Սոֆյա Անդրեևնան այսօր բռնված է չարությամբ,- գրում է Տոլստոյի բժիշկ Դուշան Մակովիցկին, 1909 թվականի մայիսի 13-ի-ին,- զայրագին, չար հանդիմանում էր Լ.Ն.-ին վիպակի համար, որը գտել էր նրա սեղանի դարակում, ու Տոլստոյը չէր հիշում ինչ ու երբ էր գրել»:

Ինչպե՞ս չէր հիշում: Նույն տարվա փետրվարի 19-ին Տոլստոյն օրագրում գրում է. «Նորից նայեցի «Դևը»: Ծանր է, տհաճ»:

Վիպակում պատմվում է ամուսնացած գեղջկուհի Աքսինյա Բազիկինայի հետ Տոլստոյի կապի մասին՝ ամուսնությանը նախորդած իր ամենատևական ու տանջալից սիրավեպի ընթացքում: Այդ կապի արդյունքը ապօրինածին որդին էր:

1909 թվականի ապրիլի քսանվեցին Տոլստոյի փեսա Սիխայիլ Սերգեևիչ Սուխոտինն օրագրում գրում է.

«Լ. Ն.-ի հետ գնում էի Չերտկովների մոտ: Ծանապարհին մտանք մի գեղջկուհու տուն, ում մոտ գիշերը մի անհայտ ուխտավոր էր մահացել: Հանգուցյալը պառկած էր գետնին, ծղոտի վրա, դեմքը ծածկված էր ինչ-որ լաթով: Լ.Ն.-ն հրամայեց բացել դեմքն ու երկար նայում էր նրան: Դեմքը բարետես էր, խաղաղ: Մենյակում մտած էին մի քանի գեղջուկներ: Լ.Ն.-ն դիմեց նրանցից մեկին.

- Դու ո՞վ ես:
  - Տանուտերը, ձերդ պայծառափայլություն:
  - Իսկ անունդ ի՞նչ է:
  - Տիմոֆեյ Անիկանով<sup>18</sup>:
  - Ախ, հա՛, հա՛,- ասաց Լ.Ն.-ն ու դուրս եկավ սենյակից:
- Տանտիրուհին հետևեց նրան:

18. Յասնայա Պոլյանայում այդպես էին անվանում Տոլստոյի՝ Աքսինյա Բազիկինայից ունեցած որդուն:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

- Այդ ի՞նչ Անիկանով է,- հարցրեց Լ.Ն.-ն:
- Դե, Տիմոֆեյը, Աքսինյայի տղան, ձերդ պայծառափայլություն:
- Ախ, հա՛, հա՛,- մտախոհ ասաց Լ.Ն.-ն:

Մենք մատեցինք կառքը:

- Բայց դուք, ախր, ուրիշ տանուտեր ունեիք, Շուկակը,- կառապան Իվանին դիմեց Լ.Ն.-ն::

- Հանեցինք, ձերդ պայծառափայլություն:
- Ինչո՞ւ հանեցիք:
- Շատ էր թուլացել, ձերդ պայծառափայլություն: Շատ էր խմում:
- Իսկ սա չի՞ խմում:
- Սա էլ է խմում, ձերդ պայծառափայլություն:

Ես այդ ամբողջ ընթացքում հետևում էի Լ.Ն.-ին ու որևէ մի շփոթմունք չնկատեցի: Բանն այն է, որ այդ Տիմոֆեյը Լ.Ն.-ի ապօրինի որդին էր՝ ապշեցուցիչ մման հորը, միայն թե ավելի հաղթանդամ ու գեղեցիկ: Տիմոֆեյը հրաշալի կառապան էր, հերթով ապրում էր իր երեք օրինական եղբայրների մոտ, բայց ոչ մի տեղ չէր հարմարվում օդու պատճառով: Գժվարանում եմ ասել՝ մոռացե՞լ էր Լ.Ն.-ն իր կրքոտ սերը գեղջկուհի Աքսինյայի հանդեպ, որի մասին այնքան բաց հիշատակում է իր հին օրագրերում, թե՞ հարմար գտավ կատարյալ անտարբերություն հանդես բերել իր անցյալի նկատմամբ»:

Տիմոֆեյ Բազիկինը ծնվել էր 1860 թվականին: Տոլստոյը գեղջկուհի Աքսինյայի հետ կապվել էր առաջին արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց մեկ տարի անց: Հոգեգալստյան տոնին էր, 1858 թվականի մայիսին: «Հոգեգալստի հրաշք օր,- օրագրում գրում է Տոլստոյը:- Թառամող բեկտենու ճյուղը կոշտուկապատ ձեռքերում. Վասիլի Գավիլկինի խզվող ձայնը: Հպանցիկ տեսա Աքսինյային: Շատ լավն է: Այդ բոլոր օրերին ապարդյուն սպասում էի: Հիմա՝ հին մեծ անտառում, հարսը, ես հիմար եմ: Անասուն: Վզի կարմիր այրուքը... Սիրահարված եմ ինչպես երբեք: Ուրիշ մտքեր չկան: Տառապում եմ: Վաղը բոլոր ուժերը...»:

Այդ կապը տևեց երկու տարի ու «բացառիկ» եղավ Տոլստոյի համար: Ամուսնացած գեղջկուհու մեջ նա առաջին անգամ զգաց այն, ինչ չէր գտել գավառական ու մայրաքաղաքային օրիորդների մեջ, ոչ թե կին, այլ կին: Ոչ թե օտար, այլ սեփական:

Եվ հասկացավ, որ վերջնականապես խճճվել է: «Ոչ մի տեղ չկա. փնտրում էի: Արդեն ոչ թե եղջերուի զգացում, այլ ամուսնու՝ կնոջ հանդեպ: Տարօրինակ է, ջանում եմ վերադարձնել նախկին հագեցածության զգացումը

ու չեմ կարողանում»:

Վերադառնալով Սևաստոպոլից ու բնակություն հաստատելով Յասնայա Պոլյանայում՝ Տոլստոյն իր մեջ արդեն «ոչ թե կրքոտություն է տեսնում», այլ «անառակության սովորույթ»: «Սարսափելի հեշտասիրություն, ֆիզիկական ցավի հասնող»: «Թրև էի գալիս այգում՝ մեկնումեկին թփերում բռնելու աղոտ, հեշտալի հույսով: Ինձ ոչինչ այդպես չի խանգարում աշխատել: Դրա համար էլ որոշեցի որտեղ և ինչպես կարելի է երկու ամսով սիրուհի ճարել»: «Ես ահավոր նողկալի եմ արատի հանդեպ այդ անգոր անկման մեջ,- խոստովանում է նա:- Ավելի լավ է՝ հենց արատը»:

«Դև»-ում կալվածատեր Եվգենի Իրտենեն անկասկած ինքն է: Տոլստոյը նույնիսկ չի թաքցնում դա: Եվգենին ավարտել է իրավաբանական ֆակուլտետը: Տոլստոյը փորձում էր Պետերբուրգում իրավաբանի դիպլոմ ստանալ էքստեռն քննություններով: Եվգենին ժառանգություն է ստանում եղբայրներից բաժանվելուց հետո, ճիշտ ինչպես եղել է Տոլստոյի կյանքում: Եվգենին ծառայությունը սկսել է ներքին գործոց նախարարությունում. ժամանակին այնտեղ էր ցանկանում ծառայել Տոլստոյը: Եվգենին ֆիզիկապես շատ ուժեղ է, «միջահասակ, ուժեղ մարմնով՝ մարմնամարզությամբ զարգացրած մկաններով, սանգվինիկ՝ այտերի վառ վարդագույնով, փայլուն ատամներով ու շրթունքներով»: Տոլստոյը շատ ուժեղ տղամարդ էր, մարմնամարզիկ: Պատանությունից մինչև ծերություն մարզաքարեր էր բարձրացնում, պտտվում մարզածողի վրա:

Գլխավորը, որ տանջում է Եվգենիին, հեշտասիրությունն է: «Նա անառակ չէր, բայց, ինչպես ինքն էր իրեն ասում, ճգնավոր էլ չէր: Դրան տրվում էր զուտ այնքանով, որքան անհրաժեշտ էր ֆիզիկական առողջության ու մտավոր ազատության համար, ինչպես ինքն էր ասում...»:

Եվ այդ ժամանակ Եվգենիի կյանքում հայտնվում է Ստեպանիդան: Վիպակի վերջում Եվգենին նրա մասին ասում է. «Չէ՞ որ նա սատանան է: Հենց սատանա: Չէ՞ որ նա իմ կամքին հակառակ տիրեց ինձ»: Մեկ այլ տարբերակում դա այսպես է հնչում. «Տե՛ր Աստված: Բայց ախր չկա ոչ մի Աստված: Կա սատանան: Եվ նա է սատանան: Նա տիրեց ինձ: Իսկ ես չեմ ուզում, չեմ ուզում: Մատանա, այո՛, սատանա»:

Վիպակի ավարտի առաջին տարբերակում Եվգենին ինքնասպան է լինում: երկրորդում սպանում է Ստեպանիդային Երկու տարբերակներում էլ Եվգենիին խելագար են համարում: Երկու տարբերակների վերջին դարձվածքները համարյա նույնական են: «Եվ իսկապես, եթե Եվգենի Իրտենենը հոգեկան հիվանդ էր, ապա բոլոր մարդիկ նույնպիսի հոգազարներ են, իսկ

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

հոգեկան հիվանդներն, անկասկած, նրանք են, որ ուրիշ մարդկանց մեջ հոգեգարության նշաններ են տեսնում, որոնք չեն տեսնում իրենց մեջ»:

Աքսինյայի հետ կապից հետո Տոլստոյը հանկարծ հասկանում է, որ յուրահատուկ վիճակում է: Դա ծուղակ է բոլոր տղամարդկանց համար: Հնարավոր է՝ վախենալով այդ մտքից, նա 1859 թվականին օրագրում իր համար հստակ նպատակ է դնում. «Պետք է ամուսնանալ այս տարի կամ երբեք»:

Բայց նրան դեռ երեք տարվա որոնումներ էլ պետք եղան, որպեսզի գտներ այն աղջկան, որը կկարողանար իր կինը դառնալ:

### *Բերսերը*

Ի վերջո, հարսնացուի որոնումներում Տոլստոյի հայացքը կանգ առավ Բերս ընտանիքի վրա:

1856 թվականից սկսած՝ նա հաճախ է լինում Պոկրովսկոյեում, Մերձ-մոսկվայում, որտեղ Բերսերը ամառանոց էին վարձում: Նա այնտեղ է գալիս մայիսին, Կոնստանտին Իսլավինի՝ իր ապագա զոքանչ Լյուբով Ալեքսանդրովնա Բերսի եղբոր հետ: Տոլստոյի համար Լյուբով Ալեքսանդրովնան պարզապես Լյուբոչկա էր, մանկության ընկերուհի, որին, ըստ որոշ տեղեկությունների, երեխավարի սիրահարված էր եղել և խանդի պոռթկման մեջ Յասնայա Պոլյանայի տան պատշգամբից ցած էր հրել, որովհետև ոչ թե իր, այլ ուրիշ տղաների հետ էր խոսում:

Լյուբոչկան բարդ ճակատագիր էր ունեցել: Հայրը՝ կալվածատեր Ալեքսանդր Միխայլովիչ Իսլենկը՝ Նիկոլայ Իլյիչ Տոլստոյի կալվածքի հարևանը, իսկական ռուս պարոնտեր էր: Նույնիսկ տեսակետ կա, որ «Մանկություն» վիպակում ավելի շուտ նա է Նիկոլենկայի հոր նախատիպը, քան Նիկոլայ Իլյիչը:

Իսլենկի Կրասնոյե կալվածքը Յասնայա Պոլյանայից 35 վերստի վրա էր: Հարևանները միասին որսի էին գնում ու երբեմն շաբաթներ շարունակ հյուրընկալվում մեկմեկու՝ իրենց խոհարարներով, սպասավորներով ու սպասուհիներով: Գիշերում էին սենյակներում ու միջանցքներում, քնում էին հատակին՝ կաճյակների ու խսիրների վրա: Այնպես որ, Տոլստոյը մանկուց գիտեր Իսլենկներին:

Լյուբով Ալեքսանդրովնան Ալեքսանդր Միխայլովիչի ապօրինածին դուստրն էր՝ իշխանուհի Սոֆյա Պետրովնա Կոզլովսկայայից, որն ամուսնուց փախել և Իսլենկի հետ գաղտնի պսակվել էր Կրասնոյե գյուղում: Այս պատմությունը մեծ աղմուկ բարձրացրեց, որովհետև Կոզլովսկայան աղջիկ ժամանակ արքունիքում ֆրեյլինա էր եղել: Կոզլովսկու բողոքի հիման

վրա կնոջ երկրորդ ամուսնությունն անօրինական ճանաչվեց: Անօրինական կնոջից ծնված Իսլեմի երեխաները ազգանունը պետք է «ուղղեին» Իսլավիմի:

Լյուբով Ալեքսանդրովնայի ամուսինը՝ Անդրեյ Եվստաֆևիչ Բերսը, ծագումով գերմանացի, կրեմլյան բժիշկ էր, ինչպես և մոսկովյան թատրոնների արտահաստիքային բժիշկը: Ու չնայած հոֆ-բժշկի կոչում ունեւ, արքունական բժիշկ չի եղել: Մինչև հեղափոխությունը Կրեմլը Մոսկվայի բնակելի թաղամաս էր, և ամենահարուստ մարդիկ չէ, որ ապրում էին այնտեղ՝ վաճառականներ, քաղքենիներ, արհեստավորներ: Ժամանակակից լեզվով ասած՝ Տոլստոյի ապագա աները շրջանային բժիշկ էր: Ընտանիքը բավական դժվար էր ապրում՝ ծվարած նեղլիկ սենյակներում:

Անդրեյ Եվստաֆևիչ Բերսը ազնիվ մարդ էր, ուղղամիտ ու բռնկվող: Ըստ երևույթին, ծանր բնավորություն է ունեցել, ինչը նրան չէր խանգարում սիրել երեխաներին ու կնոջը, բայց միևնույն ժամանակ լավելասի համարում ուներ: Մի հանելուկային պատմություն կար նրա կյանքում: Համալսարանն ավարտելուց հետո, 1827 թվականին, նա որպես ընտանեկան բժիշկ, ապագա գրող Տուրգենևի ծնողների հետ մեկնում է Փարիզ: Այդ ուղևորությունից հետո Վարվառա Պետրովնա Տուրգենևան նրանից աղջիկ ունեցավ՝ Իվան Սերգեևիչ Տուրգենևի քույրը: Նա հետաքրքիր հուշեր է թողել: Լուրեր էին պտտվում, որ Բերսի ապօրինի որդին էր նաև անարխիստ Պյոտր Կրոպոտկինը, ում մայրը նույնպես Բերսի հիվանդներից էր:

Այսպես թե այնպես, Բերսերի ընտանիքը հաշտ էր ապրում: Լյուբով Ալեքսանդրովնան հրաշալի տանտիրուհի էր (գերազանց տանտիրուհի դարձավ նաև Մոֆյա Անդրեևնան): Բերսերը շփվում էին իշխան Սերգեյ Միխայլովիչ Գոլիցինի, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Նիկոլայ Բոգդանովիչ Անկեի, Ա.Ա. Ֆետի, Ի.Ս. Տուրգենևի հետ: Վերադառնալով Սևաստոպոլից՝ հաճախակի Բերսերի տանն էր լինում նաև Տոլստոյը:

Բերսերի տուն առաջին այցելության ժամանակ նրա ուշադրության կենտրոնում հայտնվեցին երեք դուստրերը՝ Լիզան, Սոնյան ու Տանյան: Լիզան 13 տարեկան էր, Սոնյան՝ 11, Տանյան՝ 9: Երեքն էլ «լուրջ-լուրջ» սպասավորում էին սեղանի շուրջը նստած հյուրերին: Կարելի է միայն ենթադրել, թե ինչ էին զգում այդ ընթացքում: Չէ՞ որ Տոլստոյը նրանց աչքին արդեն նշանավոր գրող ու Սևաստոպոլի հերոս էր:

Տոլստոյն օրագրում գրում է. «Երեխաները սպասավորում էին մեզ, ինչ լավ, ուրախ աղջնակներ են»:

Երկրորդ արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց հետո,

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

որի ընթացքում կորցրեց սիրելի Նիկոլայ եղբորը, Տոլստոյն իրեն միայնակ էր զգում: Եղբորը Գիերում հուղարկավորելով՝ նա Ֆետին գրում է. «Ինչի՞ համար ջանալ, եթե նրանից, որ Ն.Ն. Տոլստոյն էր... ոչինչ չի մնացել»:

Նա որոշում է հրաժարվել գրական գործունեությունից: Ինչի՞ է պետք: Չէ՞ որ «վաղը կսկսվեն մահվան տառապանքները՝ իրենց նողկալիությամբ, ստով, ինքնախաբեությամբ, և կավարտվեն ոչնչությամբ, զրոյով»:

Բերսերի ընտանիքում նա հոգեկան խաղաղություն է գտնում: Այստեղ հաճելի է նրա համար: Հաճելի է, օրինակ, այսպիսի հրավերներ ստանալ.

«1862 թվականի օգոստոսի 20: Պոկրովսկոյե:

Բոլոր գրողներից առավել, սիրելի կոմս Լև Նիկոլաևիչ, սրտագին շնորհավորանքս Ձեր ծննդյան օրվա առթիվ և խնդրում եմ այսօր գաք ճաշելու ու գիշերելու: Պարտավորվում եմ չորեքշաբթի առավոտյան Ձեզ հասցնել Մոսկվա, եթե Ձեզ հաճո լինի գալ ինձ հետ: Հուսով եմ, որ բարի Լև Նիկոլայևիչը չի հրաժարվի սփոփել բոլորիս, մանավանդ մի այնպիսի օր, որը շատերին է սփոփել Ձեր ծնվելով և լույս աշխարհում լինելով: Եվ այսպես, հուսամ՝ մինչ հանդիպում:

Ձեզ անկեղծ սիրող Բերս»:

Թղթի հակառակ երեսին՝ ուրիշ ձեռագրով.

«Հնում Լյովոչկան ու Լյուբոչկան պարում էին այս օրը, իսկ հիմա, օր ծերության, վատ չէր լինի միասին խաղաղ ճաշել Պոկրովսկոյեում, իմ ընտանիքի շրջանակում հիշել երիտասարդությունն ու մանկությունը

Լ. Բերս»:

1860-ական թվականների սկզբում քույրերից ավագը՝ Լիզան, չափահաս դարձավ: Կարգը պահանջում էր, որ առաջինն ամուսնանա ավագ քույրը: Լիզան հաճելի, լուրջ աղջիկ էր: Նրան միշտ գիրքը ձեռքին էին տեսնում:

- Լիզա, արի խաղանք,- կանչում էին փոքր քույրերը:

- Սպասի՛ր, ուզում եմ կարդամ-վերջացնեմ:

Թվում էր՝ հենց Լիզայի լրջությունը պիտի գրավեր Տոլստոյին: Եվ նա սկզբում նկատեց ու համագործակցության հրավիրեց Լիզային իր «Յասնայա Պոլյանա» մանկավարժական ամսագրում: Ու միևնույն ժամանակ քրոջը, որը շատ մտերիմ էր Լյուբա Բերսի հետ, ասաց.

- Մա՛շենկա, Բերսերի ընտանիքը համակրելի է ինձ, եթե երբևէ ամուսնանամ, ապա միայն նրանց ընտանիքում:

Սա լսեց Մարիա Նիկոլաևնայի երեխաների դաստիարակչուհին ու փոխանցեց իր քրոջը՝ Բերսերի երեխաների դաստիարակչուհուն: Ու ծնողները որոշեցին, որ խոսքն, իհարկե, Լիզայի մասին է:

Բերսերի մոտ Տոլստոյը «պարում էր» բոլոր երեք քույրերի հետ: Իսկ Սոնյայի հետ մահ մվագում էր: Իսկ ամենափոքրը՝ Տանեչկան, նրան որպես մեծույց էր օգտագործում՝ նրա մեջքին, մարտաշունչ աղաղակով սենյակից սենյակ անցնելով:

Տոլստոյին որպես ձի օգտագործելու զվարճանքը Տանյան պահպանեց մահ Սոնյայի հետ Տոլստոյի ամուսնանալուց հետո: «Ու հեծելավազք կսկսվի մեր սրահում,- գրում էր Անդրեյ Եվստաֆևիչը Յասնայա Պոլյանա՝ Լև Նիկոլաևիչին ու Սոնյային համոզելով գալ Մոսկվա:- Տանկան զուտ դրան է սպասում, որ մագլցի ամուսնուդ մեջքին»:

Տոլստոյը երեք քույրերի կուռքը դարձավ: Նրա յուրաքանչյուր այցը իրադարձություն էր աղջիկների համար:

Եվ Տոլստոյը դա հասկանում, զգում ու շնչում էր իր հանդեպ սիրահարվածության այդ օդը:

Եվ ահա, 1862 թվականի օգոստոսին որոշեց, որ իր բախտը վճռված է: Սակայն ընտրությունն արվեց ոչ թե ավագի՝ Լիզայի, այլ միջնեկի՝ Սոֆյայի օգտին:

Բերսերը դասական ընտանիք էին: Պապա՝-ն երես էր տալիս աղջիկներին, իսկ նրանցից իսկական կին, ապագա տանտիկին դաստիարակում էր մամա՝-ն: Տանեչկային, որպես ամենափոքրի, ամենաշատն էին երես տալիս: Լիզան գիտունիկ, «գրքի աղջիկ» էր համարվում: Իսկ ահա միջնեկին՝ Սոնյային, վաղ մանկությունից վարժեցրել էին տնտեսության: «Բացի դասերից,- հիշում էր Սոֆյա Անդրեևնան,- երկու քույրերով պիտի ինքներս կարենք ու կարկատենք սպիտակեղենը, ասեղնագործեինք... Տնտեսությունը նույնպես մասամբ իմ ու Լիզա քրոջս ձեռքին էր: Արդեն տասնմեկ տարեկանից պետք է շուտ վեր կենայինք ու սուրճ եփեինք հայրիկի համար: Հետո մառանից մթերք էինք տալիս խոհարարուհուն, իսկ ժամը իննին մոտ ամեն ինչ պատրաստվում էր դասերի համար... Հայրս ընդհանրապես երես էր տալիս մեզ ու սիրում էր մեզ համար բերել ոչ միայն անհրաժեշտը, այլև շքեղը: Մայրս սեփական, բավական յուրահատուկ հայացքներն ուներ: Նա վախենում էր մեզ պերճանքի սովորեցնել, վախենում էր, որ կվարժվենք դրան, մեզ սոխում էր սպիտակեղեն կարել, կարկատել, տնտեսություն վարել, հավաքել-սրբել... Եվ, միևնույն ժամանակ, չէր կարող պատկերացնել, որ մենք՝ աղջիկներս, կարող ենք զբոսնել առանց սպասավորի կամ շրջել կառքով»:

Սոնյան իր պատկերացումներն ուներ, թե ինչպիսին պետք է լինի ամուսինը: «Երբ 15 տարեկան էի,- հուշերում գրում է Սոֆյա Անդրեևնան,- մեզ

մոտ հյուրընկալվեց մեր հորեղբոր աղջիկ Լյուբա Բերսը, որի քույրը՝ Նատաշան, հենց նոր էր ամուսնացել: Այդ Լյուբան ինձ ու Լիզա քրոջս ծածուկ ու ոչ մեկին չասելու պայմանով հայտնեց ամուսնական հարաբերությունների բոլոր գաղտնիքները: Այդ հայտնագործությունը սարսափելի էր ինձ՝ ամեն ինչ իդեալականացնող աղջկա համար: Հիստերիա սկսվեց, ընկա անկողնում ու այնպես էի հեկեկում, որ վազելով եկավ մայրս, իսկ ես բոլոր հարցերին, թե ինչ է պատահել, կարողանում էի պատասխանել միայն. «Մայրի՛կ, այնպես արեք, որ մոռանամ...»:

...Եվ ահա այդ ժամանակ որոշեցի, որ եթե երբևէ ամուսնանամ, ապա միայն այնպիսի մարդու հետ, որը նույնքան մաքուր կլինի, որքան ես...»:

Նա ի՞նչ գիտեր այն ժամանակ Տոլստոյի մասին: Կարո՞ղ էր լրջորեն մտածել, որ այդ կյանք տեսած, պատերազմին մասնակցած 34-ամյա տղամարդը «նույնքան մաքուր է», որքան ինքը: Դրան դժվար է հավատալ: Առավել ևս, որ նա բժշկի դուստր էր և, իհարկե, գիտեր՝ ինչպես են աշխարհ գալիս երեխաները:

Բայց իզուր չէ, որ տատիկը՝ Մարիա Իվանովնա Վուլֆերտը Սոնեչկայի մասին, որին բոլորից շատն էր սիրում, ասում էր. «Sophie a la tete abonnee» (բառախաղ է. «Սոնյան գլխանոցով է») կամ «Սոնյայի գլուխը կանխավարձած է»): Դա նշանակում էր, որ Սոնյան առաջինը մարդու կզգնա:

Տոլստոյը սևեռում հետևում էր քույրերին: Նույնիսկ Սոնյայի հետ ամուսնանալուց հետո էլ չդադարեց հետևել Տանյային, որը դարձավ «Պատերազմ և խաղաղության» Նատաշա Ռոստովայի նախատիպը: Նատաշա Ռոստովայի կերպարը առավելագույնս է արտացոլում Տոլստոյի վերաբերմունքը Բերս քույրերի հանդեպ: «Ես վերցրի Տանյային, շողախեցի Սոնյայի հետ ու ստացվեց Նատաշան»,- կատակում էր Տոլստոյը:

Ու նաև կնոջ ու քենու ներկայությամբ սիրում էր ասել. «Եթե դուք ձիեր լինեիք, ապա ձիաբուծարանում թանկ կվճարեին այդպիսի գույզի համար. զարմանալի սագում եք իրար, Սոնյա և Տանյա»: Դժվար թե Սոֆյա Անդրեևնան ուրախ լիներ կարդալու Տոլստոյի՝ ամուսնությունից երեք ամիս անց արած օրագրային գրառումը. «Շարունակ հետևում եմ Տանյային»: Եվ էլի երեք ամսից. «Տանյայի վախը զգայականությունն է»:

Այդ դասավորության մեջ ամենից աննախանձելի դերը վերապահվում էր Լիզային: Նա իրեն համոզել էր, որ կոմսն իրեն առաջարկություն կանի, ու պատրաստվում էր դրան: Ինչպես հիշում էր Տատյանա Անդրեևնան՝ «նրա մեջ խոսում էր ոչ այն է կանացի ինքնասիրությունը, ոչ այն է սիրտը... Նա ավելի աշխույժ դարձավ, բարի, ավելի մեծ ուշադրություն էր դարձնում



իր արդուգարդին, քան առաջ: Երկար նստում էր հայելու առաջ՝ ասես հարցնելով. «Ո՞նցն եմ: Ի՞նչ տպավորություն եմ թողնում»: Նա փոխում էր սանրվածքը, լուրջ աչքերը երբեմն երազկոտ նայում էին հեռուն:

Տանեչկան համակրում էր նրան: Իսկ Սոնյա՞ն: Սոնյան գիտեր, որ ավագ քրոջ հետ մրցակցության մեջ իր կողմն են կանացի հմայքն ու գրավչությունը: Նա գեղեցիկ չէր, բայց նրան սիրահարվում էին և՛ տղեկները, և՛ հասուն տղամարդիկ: Չվարճալի դեպք եղավ Պոկրովսկոյեում: Բերսերին այցելեցին նրանց ընկերները՝ Պերֆիլևները, ու նրանց հետ՝ տասնչորսամյա Սաշան՝ «թերգարգացած, պարզունակ մի տղա»: «Նա նստել էր Սոնյայի կողքին,- հուշերում գրում է Տատյանա Կուզմինսկայան,- գորովանքով անընդհատ նայելով նրան: Հանկարծ բռնելով նրա թևքը, սկսեց ուժով տրորել: Սոնյան շփոթված ժպտում էր՝ չիմանալով, թե դա ինչ կարող է նշանակել:

- Pourquoi touchez la robe m-lle Sophie<sup>19</sup>,- հանկարծ լսվեց Անաստասիա Սերգեևնայի՝ Սաշայի մոր կտրուկ բացականչությունը:

- Միրահարվել եմ»:

Եվ 35-ամյա պրոֆեսոր Նիլ Ալեքսանդրովիչ Պոպովը՝ «չափավոր, դանդաղկոտ շարժումներով և արտահայտիչ մոխրագույն աչքերով», նույնպես սիրահարվեց Սոնեչկային: Եվ ռուսաց լեզվի ուսուցիչ Վասիլի Իվանովիչ Բոգդանովը, նույնիսկ ստիպված էին տան դռները փակել նրա առաջ: Եվ արքունական դեղագործի որդին: Եվ պարտիզան ու պոետ Դենիս Դավիդովի որդին: Եվ Յանիխինը՝ մանկաբարձի որդին:

Սոնյայի մեջ խիստ զարգացած էր կանացի սկիզբը: Նա իրեն վաղ դրսևորեց որպես մայր:

«Լիզան միշտ, չգիտես ինչու, թեթև քամահրանքով էր վերաբերվում ընտանեկան, առօրյա հոգսերին,- հիշում էր Կուզմինսկայան:- Փոքր երեխաները, նրանց կերակրելը, տակաշորերը, այդ ամենը նրա մեջ զգվանք, թե ձանձրույթ էր հարուցում: Սոնյան, հակառակը, հաճախ նստում էր մանկական սենյակում, խաղում փոքր եղբայրների հետ, զբաղեցնում նրանց, երբ հիվանդ էին լինում, սովորեց նրանց համար հարմոնիկ նվագել ու հաճախակի մորն օգնում էր տան գործերում»:

Ինչ-որ առեղծված կար Սոնյայի մեջ:

«Նա շատ աշխույժ բնավորություն ուներ,- գրում է Տատյանա Անդ-

19. Ինչո՞ւ եք ձեռք տալիս Սոֆիի զգեստին (ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

րեննան,- սենտիմենտալության թեթև երանգով, որը հեշտությամբ փոխարկվում էր տխրության: Սոնյան երբեք լրիվ չէր տրվում ուրախության կամ երջանկության, ինչով նրան երես էր տալիս պարմանությունը... Նա մի տեսակ չէր հավատում երջանկությանը, չգիտեր ինչպես վերցնել և ամբողջովին տնօրինել: Նրան շարունակ թվում էր՝ հիմա ինչ-որ բան կխանգարի իրեն... Հայրը գիտեր նրա բնավորության այդ գիծը և ասում էր. «Խեղճ Սոնեչկան երբեք լիովին երջանիկ չի լինի»:

Բայց Սոնեչկան երջանիկ ու խելամիտ էր:

- Սոնյա, tu aimes le conte Je ne sais pas?<sup>20</sup>, - մի անգամ քրոջը հարցրեց Տանեչկան:

- Je ne sais pas<sup>21</sup>, - բնավ չգարմանալով՝ կամացուկ պատասխանեց նա:

- Ախ, Տանյա, - մի քիչ հապաղելով ասաց նա, - նրա երկու եղբայրները մահացել են թոքախտից:

Սոնյան արդեն սիրահարվածություն էր զգում կաղետ Միտրոֆան Պոլիվանովի՝ Սաշա եղբոր ընկերոջ հանդեպ: «Բարձրահասակ, շիկահեր տղա էր, խելացի, համակրելի, միանգամայն օրինավոր»: Սոնյան թաքուն «նշանված» էր նրա հետ, ինչպես որ Տանյան՝ իր զարմիկ Սաշա Կուզմինսկու հետ:

Սոնյան ու Տանյան ծնողներից ու Լիզայից շուտ կռահեցին կոմսի սիրահարվածության մասին: Մոսկվայում արդեն լուրեր էին պտտվում Լիզա Բերսի հետ Տոլստոյի մոտակա ամուսնության մասին: Տոլստոյն ինքը ոչ միայն իրեն սիրահարված չէր զգում, այլև համոզված էր, որ Լիզայի հետ չի ամուսնանա:

1861 թվականի սեպտեմբերի քսանվեցին նա գրում է. «Լիզա Բերսը գայթակղում է ինձ. բայց դա չի լինի»: Դրանից հետո նա դադարեցնում է գրառումները ու վերսկսում 1862 թվականի մայիսին, երբ մեկնում է սամարյան տափաստանները՝ կումիսով բուժվելու: Նա իսկապես էլ լուրջ հիվանդ էր, նիհարում է, թոշնում աչքի առաջ: Երկու եղբայրներին կործանած թոքախտի ուրվականը հետապնդում էր նրան:

Սակայն ուղևորությունը Բաշկիրիա ըստ երևույթին նաև փախուստ էր Լիզայից: Նա այդպես ժամանակին փախել էր Արսենևայից: Շոգենավում Տոլստոյը «վերածնվում է կյանքի համար» և «նրա գիտակցման համար»:

20. Դու սիրո՞ւմ ես կոմսին (ֆր.):

21. Չգիտեմ (ֆր.):

«...Ինձ մի քիչ ազատություն տվեցին»,- գրում է նա օրագրում՝ նկատի ունենալով Լիզայի հետ հարաբերությունները: «Աստված իմ: Որքան գեղեցիկ դժբախտ կլինեք, եթե լինեք իմ կինը»: «Ես սկսում եմ ողջ ուժով ատել Լիզային»:

Եվ վերջապես նրա օրագրում գրառում է հայտնվում Սոնյայի մասին. «Միրահարված եմ, ինչպես չէի հավատա, որ կարելի է սիրել...»:

1862 թվականի սեպտեմբերին Տոլստոյը գիշերներ շարունակ չի քնում ու տառապում է: Նա վախենում է: Ոչ թե նրանից, որ սխալ ընտրություն կանգնի, այլ որ իրեն կմերժեն: Նա խանդում է Սոնյային Պոլիվանովի նկատմամբ: Նա իրեն շատ ծեր ու միևնույն ժամանակ «16-ամյա տղա է զգում»: Միրո բացատրությամբ նամակը միշտ մոտն է, բայց չի համարձակվում տալ Սոնյային: Պարզ ասած՝ խելագարվում է: «Ես խելագար եմ, ես ինքնասպան կլինեմ, եթե այսպես շարունակվի»:

Բոլորը հիշում են «Աննա Կարենինայում» Կոնստանտին Լևինն ինչպես էր թղթախաղի սեղանիկին Կիտիի համար գրում սիրո բացատրության սկզբնատառերը: Իրական կյանքում այդ պատմությունը մի շարք մանրամասներ է ունեցել, որոնք վեպի մեջ չեն մտել:

Նախ, վեպում չկան Լիզան ու նրա հետ մրցող քույրերը, այն դեպքում, երբ Սոնյան, ըստ էության, փեսացուին խլում է քրոջից:

Երկրորդ, այդ տեսարանում չկա երրորդ անձը՝ Տանեչկան, ապագա Նատաշա Ռոստովան: Երբ Տոլստոյը Բերս քույրերի պապին՝ Իսլենկին պատկանող Իվիցի գյուղակում թղթախաղի սեղանիկին գրում էր «Չ.ե.ու.ե.պ.ի.թ.հ.հ.ի.ծ.ու.ե.ա.» («Չեր երիտասարդությունն ու երջանկության պահանջը ինձ շատ հստակ հիշեցնում են իմ ծերության ու երջանկության անհնարինության մասին»), նրանք հյուրասենյակում մենակ չէին: Դաշնամուրի տակ նստած էր Տանյան՝ թաքնվելով մեծահասակներից: Նա վկան դարձավ այն բանի, ինչը Տոլստոյը թաքցրել է իր վեպում: Սոնյան, ի տարբերություն Կիտիի, չհասկացավ բարդ հապավումը: Որոշ բառեր Տոլստոյը հուշեց: Հետո Սոնյան քրոջը խոստովանեց, որ ընդհանրապես չէր կարողացել հասկանալ, թե կոմսն ինչ է գրել սեղանիկին:

Իրականում Տոլստոյը թղթախաղի սեղանիկին միայն բառեր չէր գրել «անհնարին երջանկության» մասին: Գրել էր նաև այն մասին, որ Բերսերի ընտանիքում սխալ պատկերացում է ձևավորվել Լիզայի հետ նրա հարաբերությունների վերաբերյալ, և Սոնյային ու Տանյային խնդրում էր օգնել իրեն դուրս գալու նուրբ իրավիճակից: Ըստ էության, նա Սոնեչկային առաջարկում էր դավադրության մեջ մտնել ավագ քրոջ դեմ:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

«Իվիցի գալուց առաջ,- հիշում էր Կուզմինսկայան,- Բերսերն իջևանեցին Յասնայա Պոլյանայում: 1862 թվականի օգոստոսն էր: Աղջիկներին տեղավորեցին «կամարակապ սենյակում», որտեղ առաջ խորդանոցն էր, իսկ հիմա՝ Տոլստոյի առանձնասենյակը: Մի քնելու տեղ չէր հերիքում, և տանտերն առաջարկեց օգտագործել բացովի բազկաթոռը:

- Իսկ այստեղ ես կքնեմ,- անմիջապես առաջարկեց Սոնյան:

- Հիմա ինքս ամեն ինչ կպատրաստեմ,- ասաց տանտերը:

Եվ Տոլստոյն սկսեց անկողին բացել Սոնյայի համար: Կուզմինսկայայի հուշերում հումորով պատկերված է. թե Տոլստոյն ինչպես «անսովոր, անփորձ մատներով սկսեց բացել սավանները, դնել բարձերը, և այնպես հուզիչ էր ստացվում այդ նյութական, տնային հոգատարությունը»: Սակայն Սոֆյա Անդրեևնայի հուշերում այդ տեսարանն այլ կերպ է ներկայանում.

«Գունյաշայի՝ հորաքրոջ նաժիշտի հետ անկողին էինք բացում, երբ հանկարծ ներս մտավ Լև Նիկոլաևիչը, և Գունյաշան նրան ասաց, որ երեք հոգու համար բազմոցներին են անկողին բացել, իսկ այ չորրորդին տեղ չկա»: - «Կարելի է բազկաթոռի վրա», - ասաց Լև Նիկոլաևիչը ու բացեց երկար բազկաթոռը՝ դրան դիմհարելով աթոռակը: «Ես բազկաթոռին կքնեմ», - ասացի ես: «Ինքս անկողին կբացեմ ձեզ համար», - ասաց Լև Նիկոլաևիչն ու անհմուտ շարժումներով սկսեց բացել սավանը: Եվ ամաչում էի, և ինչ-որ հաճելի, մտերմիկ բան կար գիշերակացի այդ համատեղ պատրաստության մեջ...»:

Երբ Տոլստոյը դուրս եկավ, Լիզան տեսարան սարքեց Սոնյայի դեմ:

Բայց արդեն ուշ էր:

Տոլստոյը տասնհինգ տարեկանից երագում էր ամուսնության մասին: Սոֆյա Անդրեևնայի հետ նա ապրեց համարյա կես դար: Իսկ ահա փեսացուական շրջանը տևեց ընդամենը մեկ ամիս, 1862 թվականի օգոստոսի վերջից մինչև սեպտեմբերի վերջը: Ո՛չ Տոլստոյն իրեն իսկապես փեսացու զգաց, ո՛չ Սոնեչկան՝ հարսնացու: Միանգամից՝ այր ու կին:

1862 թվականի սեպտեմբերի տասնվեցին Տոլստոյը եկավ Բերսերի մոտ՝ գրպանում՝ ձեռքի և սրտի առաջարկությամբ նամակը: «Առաջարկը գրված էր սովորական գրելաթղթի կեղտոտ քառորդի վրա, ու Լև Նիկոլաևիչը մի շաբաթ այն պահել էր գրպանում՝ չհամարձակվելով հանձնել», - հիշում էր նրա տիկինը:

«Սոֆյա Անդրեևնա:

Ինձ համար անտանելի է դառնում: Արդեն երեք շաբաթ ամեն օր կրկնում եմ՝ «Հիմա ամեն ինչ կասեմ», և հեռանում եմ նույն տխրությունը, գղ-

ջումը, վախն ու երջանկությունը հոգուս մեջ: Եվ ամեն գիշեր, հիմա էլ, փորփրում եմ անցյալը, տառապում ու հարցնում եմ. ինչո՞ւ չասացի, և ինչ-պես ու ինչ էի ասելու: Վերցնում եմ այս նամակը, որ տամ Ձեզ, եթե նորից չկարողանամ կամ չհամարձակվեմ Ձեզ ասել ամեն ինչ: Ձեր ընտանիքին սխալմամբ թվում է, թե ես սիրահարված եմ Ձեր քույր Լիզային: Անարդար է: Ի վիցիում ես գրում էի. «Ձեր ներկայությունը չափազանց հստակ է հիշեցնում ինձ իմ ծերությունը ու երջանկության անհնարին լինելը, և հատկապես Դուք...»:

Բայց և դրանից առաջ, և դրանից հետո էլ ես խաբում էի ինձ: Դեռ այն ժամանակ կարող էի խզել ամեն ինչ ու կրկին գնալ միայնակ աշխատանքի ու գործով տարվելու իմ մենաստանը: Հիմա ես ոչինչ չեմ կարող, այլ զգում եմ, որ շփոթություն եմ զգել Ձեր ընտանիքում, որ պարզ, թանկ հարաբերությունները Ձեզ հետ՝ որպես բարեկամի, ազնիվ մարդու՝ կորսված են: Եվ ես չեմ կարող մեկնել ու չեմ համարձակվում մնալ: Դուք ազնիվ մարդ եք, ձեռքը խղճին, առանց շտապելու, Աստծու սիրուն՝ առանց շտապելու, ասացեք ինչ անեմ: Ինչ ցանես, այն կհնձես: Ծիծաղից կմեռնեի, եթե մի շաբաթ առաջ ասեի, որ կարելի է տառապել այնպես, ինչպես ես եմ տառապում ու երջանիկ եմ տառապում այս ընթացքում: Ասացեք որպես ազնիվ մարդ՝ ուզո՞ւմ եք իմ կինը լինել: Միայն եթե ողջ սրտով է, համարձակ կարող եք ասել՝ «այո», թե չէ՝ ավելի լավ է ասեք «ոչ», եթե նշույլ իսկ կասկած ունեք Ձեր մեջ:

Աստծու սիրուն, լավ հարցրեք Ձեզ: Ինձ համար սարսափելի կլինի «ոչ» լսել, բայց ես այն կանխատեսում եմ և իմ մեջ ուժ կգտնեմ դիմանալու. բայց եթե երբևէ որպես ամուսին սիրված չլինեմ, ինչպես ես եմ սիրում, ավելի սարսափելի կլինի»:

Նամակը ստանալով՝ Սոնյան անցավ աղջիկների սենյակն ու բանալիով կողպեց դուռը: Լիզան սկսեց թակել դուռը:

- Սո՛նյա, - գոչում էր նա: - Բա՛ց դուռը, հենց հիմա բաց արա:

Դուռը բացվեց: Սոնյան լուռ էր՝ նամակը ձեռքին:

- Ասա՛ ինչ է գրում le comte<sup>22</sup>, - ճչաց Լիզան:

- Il m'a fait la proposition<sup>23</sup>:

- Մերժի՛ր: Անմիջապես մերժի՛ր:

Սոնյան մտավ սենյակ, որտեղ նրան սպասում էր Տոլստոյը:

22. Կոմսը (ֆր.):

23. Նա ինձ առաջարկ արեց (ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

- Բնականաբար՝ «այո»,- ասաց նա:

Մի քանի թուրքից սկսվեցին շնորհավորանքները: Լիզան հեկեկում էր իր սենյակում: Հետո, իմանալով Սոնյայի որոշման մասին, կսկսի հեծկլտալ կաղեռ Պոլիվանովը: Երբ Սոնյան ու Տոլստոյը պսակվում էին Կրեմլի եկեղեցում, նա հարսնացուի գլխավերևում պահել էր պսակը: «Պոլիվանովը գավաթը խմեց մինչև վերջ»,- հիշում էր Սոֆյա Անդրեևնան:

Նորապսակները հենց պսակադրության օրը մեկնեցին Յասնայա Պոլյանա: Սոնյային ճանապարհելիս Բերսերի ողջ ընտանիքը լալիս էր, բացի Անդրեյ Եվստաֆևիչից, որը հիվանդ էր ու անտրամադիր: Նորապսակները մտան նրա սենյակը՝ հրաժեշտ տալու

Ուղևորության համար Տոլստոյը հատուկ դորմեզ էր գնել՝ հսկա կառեթ, որտեղ կարելի էր պառկել հասակով մեկ: «Հարսանիքի օրը՝ վախ, անվստահություն ու փախչելու ցանկություն: Ծեսի հանդիսավորությունը: Նա՛ արտասովակալած: Կռռեթում: Նա ամեն ինչ գիտի ու պարզ է: Բիրյուլովում: Նրա վախվորությունը: Հիվանդագին մի բան: Յասնայա Պոլյանան... Գիշեր, ծանր քուն: Ոչ նա»:

Ոչ նա՞: Ի՞նչ են նշանակում այդ բառերը:

Ու նաև Տոլստոյն իր օրագրում գրում է տարօրինակ տեսիլքի մասին, որը հայտնվել էր Բերսերի տանը, երբ Սոնյայի հետ մենակ էին մնացել, որպես հարս ու փեսա: «Անհասկանալի է, թե ինչպես անցավ շաբաթը: Ոչինչ չեմ հասկանում. միայն համբույրը դաշնամուրի մոտ ու սատանայի հայտնվելը»:

1862 թվականի սեպտեմբերի քսանչորսին կոմս Լև Տոլստոյն ու կոմսուհի Սոֆյա Տոլստայան ժամանեցին Յասնայա Պոլյանայի կալվածք...

### *Ճակատագրական սխալ*

«Հարսանիքի օրը՝ վախ, անվստահություն ու փախչելու ցանկություն»:

Իրականում նա քիչ էր մնում փախչելու, ինչպես Պողոկոյսինը «Ամուսնություն»-ում: Մանավանդ, որ առիթ էլ հայտնվեց: Հանկարծ պարզվեց, որ մաքուր վերնաշապիկ չկա, բոլոր իրերը ճամպրուկներով արդեն կառեթում էին: Հո հին վերնաշապիկով չէ՞ր պսակվելու: Ի վերջո վերնաշապիկ ճարեցին: Բայց եկեղեցում երկար սպասում էին Տոլստոյին, և ընթացքը խախտվեց:

Հարսանիքի օրվա առավոտյան նա անսպասելի հայտնվեց Բերսերի տանը և անցավ ուղիղ Սոնյայի մոտ: Տանյան վազեց մորը զեկուցելու փեսացուի չնախատեսված այցի մասին: Լյուբով Ալեքսանդրովնան դժգոհ էր.

հարսանիքի օրը փեսացուն չպիտի գար հարսնացուի տուն: Նա զնաց աղջիկների սենյակ ու երկուսին գտավ «հակերի, ճամպրուկների ու դասավորված իրերի միջև»: Սոնյան լալիս էր: Պարզվեց, որ փեսացուն չի քնել ողջ գիշեր ու հիմա հարցնում էր՝ աղջիկը սիրո՞ւմ է իրեն, «գուցե Պոլիվանովի մասին անցյալի հուշերը հուզում են նրան» և «այդ դեպքում ավելի լա՞վ չէր լինի բաժանվել»: Սոնյան նրան համոզում էր, որ այդպես չէ: Ի վերջո, պարզապես լաց եղավ:

Բայց այդ ամենը՝ և՛ վերնաշապիկի բացակայությունը, և՛ հարսանիքի օրը փեսացուի՝ Բերսերի տուն գալը, և՛ նույնիսկ փեսացուի անհեթեթ առաջարկը՝ դադարեցնել հարսանիքը, որովհետև ինքն արժանի չէ հարսնացուին, դատարկ բաներ էին այն ճակատագրական սխալի համեմատությամբ, որ Տոլստոյն արեց հարսանիքի նախօրեին:

Ըստ երևույթին, Սոնյան ինչ-որ օրհորդական օրագիր էր վարում, ինչպես որ նրա շրջանակի համարյա բոլոր աղջնակներն ու աղջիկները: Բայց խելամտորեն ոչնչացրել էր օրագիրը: Գիտեր, որ եթե ամուսինը կարդա, նրան հաճելի չեն լինի, օրինակ, Պոլիվանովի հանդեպ սիրո մասին գրառումները կամ թեկուզև ամմեղ, բայց համեմայնդեպս մասնավոր կյանքի այլ մանրամասներ: Իսկ ահա Տոլստոյն իր վաղ օրագիրը ոչ միայն չոչնչացրեց, այլև ցույց տվեց հարսնացուին ու ստիպեց կարդալ: Այդպես է վարվում նաև Կոնստանտին Լևինը «Աննա Կարենինա»-ում: Ու մենք գիտենք, թե դա ինչպես է ցնցում Կիտիին:

Ինչո՞ւ էր այդպես վարվում: Որքան էլ տարօրինակ է, բայց հենց այստեղ արտահայտվեց Տոլստոյի այն գիծը, որի մասին Տուրգենևը գրում էր Անենկովին՝ «բարձր բարոյական ու անհամակրելի արարած»:

Տոլստոյը ցանկանում էր ազնիվ լինել հարսնացուի հանդեպ, բայց, դրա հետ մեկտեղ, չէր խնայում նրա զգացմունքները: Անմիջապես նրան հասկանալ տվեց, որ ամուսնանում է բավական հարուստ սեռական փորձով տղամարդու հետ: Իրականում XIX դարի էթիկան իրերի նման վիճակը ոչ միայն չէր դատապարտում, այլ նույնիսկ ողջունում էր: Սեռական առումով փորձառու ամուսինն ավելի լավ է, քան այդ հարցերում ոչինչ չիմացող պատանին: Իհարկե, Բերսերը (հավանաբար և ինքը՝ Սոնեչկան) կռահում էին, որ կոմսը կապեր է ունեցել կանանց հետ: Հնարավոր է, նրանք գիտեին նաև, որ Յասնայա Պոլյանայում է ապրում Տոլստոյի արտամուսնական որդին: Դրանք «կմախքներ էին պահարանում», որոնք վաղ թե ոչ բացահայտվելու էին: Բայց Տոլստոյը չէր պատրաստվում ձգձգել: Նա անմիջապես հարսնացուի վրա թափեց ողջ ճշմարտությունը:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

«Այն ամբողջ անմաքուրը, որ իմացա ու կարդացի Լև Նիկոլակիչի նախկին օրագրերում, երբեք չջնջվեց իմ սրտից ու որպես տանապանք մնացող կյանքում»,- գրում է նա «Իմ կյանք»-ում:

«Նրա (ամուսնու) ողջ անցյալն այնպես սարսափելի է ինձ համար, որ կարծում եմ՝ երբեք չեմ հաշտվի դրա հետ,- տրտնջում է նա օրագրում՝ ամուսնության առաջին տարում:- Գուցե երբ այլ նպատակներ լինեն կյանքում, երեխաներ, որ այնպես ուզում եմ, որ ես մի ամբողջ ապագա ունենամ, որ իմ երեխաների մեջ կարողանամ տեսնել այդ մաքրությունը՝ անանցյալ, առանց աղտեղության, առանց այն ամենի, որ հիմա այնպես դառն է տեսնել ամուսնուս մեջ: Նա չի հասկանում, որ իր անցյալը մի ամբողջ կյանք է՝ հազարավոր լավ ու վատ զգացումներով, որոնք արդեն իմը լինել չեն կարող, ճիշտ ինչպես ինձ չի պատկանելու նրա Աստված գիտի ինչի վրա մասնավորապես արդյունքը...»:

Իհարկե, նրան զայրացնում էին Աքսինյայի մասին գրառումները: Ոչ «կնկա», ոչ «սիրուհու», այլ «կնոջ»: Այդ բառը տառացիորեն կատաղեցնում էր նրան:

Եվ ահա, նրանց տանը, այլ գեղջկուհիների հետ, որպես օգնական սկսում է հայտնվել Աքսինյան: Ու չնայած Տոլստոյի հետ վաղուց այլևս ոչ մի կապ չունի, Սոնյան ահավոր տառապում է, երբ տեսնում է այդ կնոջը:

«Ինձ թվում է՝ երբևէ խանդից կվնասեմ ինձ,- գրում է նա օրագրում՝ հարսանիքից երեք ամիս անց Աքսինյային տեսնելով իր տանը:- Սիրահարված եմ ինչպես երբեք: Սովորական էլ կնիկ է, չաղ, սպիտակ, սարսափելի: Այնպիսի հաճույքով էի նայում դաշույնին, հրացաններին: Մի հարված՝ հեշտությամբ: Քանի դեռ երեխա չունենք: Եվ նա այստեղ է, մի քանի քայլի վրա: Ասես խելագար լինեմ... Եթե կարողանայի նրան էլ սպանել, հետո ստեղծել նորը, ճիշտ այդպիսին, ապա հաճույքով դա էլ կանեի»:

Հարսանիքից չորս ամիս անց օրագրում նկարագրում է իր մղձավանջային երազը.

«Մեզ մոտ, մեր ինչ-որ հսկա այգին են եկել Յասնայա Պոլյանայի գեղջուկ աղջիկներն ու կնանիք, ու բոլորը մեծահարուստի պես են հագնված: Ինչ-որ տեղից դուրս են գալիս իրար ետևից, վերջինը դուրս եկավ Աքսինյան՝ մետաքսե սև շորով: Ես խոսեցի նրա հետ, և այնպիսի չարություն բռնեց ինձ, որը սկսեցի պատառոտել շորը: Եվ պոկեցի ոտքերը, գլուխը, և սարսափելի կատաղության մեջ եմ: Եկավ Լյովոչկան, նրան ասում եմ, որ ինձ Միքիլ կաքտրեն, իսկ նա հավաքեց պոկոտած ոտքերը, ձեռքերը, բոլոր մարմնամասերը և ասում է՝ բան չկա, տիկնիկ էր»:



Բայց դա «տիկնիկ» չէր: Երկամյա տղա էր՝ Լև Նիկոլակիչի առաջնեկը: Եվ նա նույնպես ապրում էր Յասնայա Պոլյանայում: Սոնեչկան հենց նրան էր պատահաբար երագում: Նա անկարող էր ներել ամուսնուն, որ նրա առաջին որդին իրենից չի ծնվել, այլ ինչ-որ «կնկանից» «սպիտակ», «սարսափելի»:

Եվ նաև, օրագրի շնորհիվ, իրեն երկրորդ կին էր զգում Աքսինյայից հետո:

Իր երիտասարդության օրագրերը հարսնացուին տալով՝ Տոլստոյը մի ճակատագրական սխալ էլ էր գործել: Նա Սոնյային պարզել էր իրեն «գոհ» զգալու իրավունքը: Չոհի այդ զգացումը Սոֆյա Անդրեևնան իր մեջ փայփայում էր համատեղ կյանքի ամենասկզբից: Օրագրերը Տոլստոյին «կիեռապնդեն» ամուսնական հարաբերությունների ողջ ընթացքում: «Պահարանի կմախքը» մարմին կառնի, կլցվի արյունով ու ծանր բախումների պատճառ կդառնա:

Բայց, ըստ երևույթին, Տոլստոյն այլ կերպ վարվել չէր կարող: Նախորդ կյանքի մասին հարցերն այս կամ այլ կերպ բարձրանալու էին:

Այդպես էլ սկսվեց նրանց ընտանիքը:

### *Չտեսնված երջանկություն*

Յասնայա Պոլյանայում ամեն ինչ վատ սկսվեց:

Դա Մոսկվայից ծանր մեկնումի յուրատեսակ շարունակությունն էր: Տոլստոյը դժգոհ էր, որ ջահել կինը դառը լալիս էր նախկին ընտանիքից բաժանվելիս: «Նա այն ժամանակ չհասկացավ, - գրում է Սոֆյա Անդրեևնան, - որ եթե այդպես կրքոտ, ջերմ սիրում եմ իմ ընտանիքը, ապա նույն սերը նաև իրենն ու մեր երեխաներինն է լինելու»:

Նրանց ադուհացով դիմավորեցին Յորգոլսկայան ու եղբայրը՝ Սերգեյ Նիկոլակիչը: Տատյանա Ալեքսանդրովնան բժախնդի դնում էր նոր տանտիրուհուն: Դժվար թե երջանիկ լիներ, որ նրան է զիջել իր գլխավոր կնոջական տեղը տանը: Իսկ նորաթուխ կոմսուհու 18 տարին նոր-նոր էր լրացել: Տնից գլուխ կհանի<sup>6</sup>:

Ըստ երևույթին Յորգոլսկայան ինքը օրինակելի տանտիրուհի չէր, առավել ևս, որ այդ տանը միշտ իրեն կենվոր էր զգացել: Տունը Սոնյային կեղտոտ թվաց: Ժամանակին Տոլստոյ եղբայրներն այնտեղ պարզապես հատակին էին քնում, խոտի վրա, առանց սավանների: Ու ողջ տանը խոտի հոտ էր կանգնած, ինչպես հարդանոցում: Տան շուրջը մոլախոտ էր աճում: Ծառաները թափթփված ու փնթի էին: Տանտերն ինքը տանը շրջում էր մի-

տակ, արձակ փեշերով խալաթով, որը նաև գիշերազգեստ էր: Ուտում էին երկաթե պատառաքաղներով: Խահարարը հաճախ հարբած էր: Մի անգամ Սոնյան իր ապուրի ափսեում սարսափով «զզվելի մակաբույժ» գտավ:

Երիտասարդ կնոջ հետ կալվածատանն անցկացրած առաջին իսկ գիշերը «ծանր» էր Տոլստոյի համար: Առավոտյան սուրճ խմելիս երկուսն էլ անհարմար էին զգում: Մի խոսքով, ամեն ինչ մի տեսակ այն չէր...

Բայցևայնպես, Սոնյայի հետ Յասնայա Պոլյանայում գտնվելու առաջին օրը Տոլստոյն օրագրում գրում է. «Չտեսնված երջանկություն... Չի կարող այնպես լինել, որ այդ ամենը միայն կյանքով վերջանա»:

«Անդադրում Sophien», ինչպես Սոնյային անվանում էր Ալեքսանդրա Անդրեևնա Տոլստայան, հրաշալի տանտիրուհի դուրս եկավ: Տանը կատարյալ կարգուկանոն հաստատվեց, որքան որ դա հնարավոր է գյուղում: Սավաններ հայտնվեցին, սփռոցներ, արծաթե ճաշասպասք (Սոնեչկայի միակ օժիտը): Բոլոր ծառաները սկսեցին սպիտակ թասակներ կրել, որպեսզի «զզվելի մակաբույժներն» այլևս չընկնեն ապուրամանների մեջ: Սպասավորները սպիտակ ձեռնոցներ էին հագնում: Տան շուրջը բոլոր ուղյակները մաքրվեցին, մոլախտոն արմատախիլ արվեց ու ծաղիկներ տնկվեցին:

Տանտիրուհու գոտկատեղից մշտապես կախված էր տան բոլոր բանալիների մեծ կապը: Երբ Սոնեչկան հղիացավ, գոտկատեղի այդ կապը բավական զվարճալի զնգզնգում էր: Փողը ամուսինն էր տնօրինում, բայց միշտ կնոջը տալիս էր այնքան, որքան նա խնդրում էր, առանց հարցնելու՝ ինչի համար է:

Տոլստոյն իր առանձնասենյակը նախ տեղավորեց «կամարակապ սենյակում» (հայտնի է Իլյա Եֆիմովիչ Ռեպինի հանրահայտ նկարը, որտեղ Տոլստոյը գրում է «կամարակապ սենյակում»): Իրականում այդ սենյակը նախապես կիսանկուղ էր եղել, որտեղ մթերք էին պահում: Այսօր էլ պատերի մեջ կարելի է տեսնել օղակները, որոնցից առաջ ապխտած ազդրեր էին կախում:

Արագ հարմարվելով տանն ու տնամերձ տնտեսությանը ու սիրելով Յասնայա Պոլյանայի բնությունը՝ Սոնեչկան համեմայնդեպս նեղվում էր գյուղական կյանքից: Այն չափից դուրս էր տարբերվում Մոսկվայում, Կրեմլում ու նույնիսկ սիրելի Պոկրովսկոյեում տեսածից:

1863 թվականի ապրիլին, Չատկին, նա գրում է փոքր քրոջը՝ Մոսկվա. «Չանձրությով էի սպասում տոներին, չէ՞ որ հասկանում ես՝ տոներին միշտ ավելին ես զգում, և ահա զգացի, որ ձեզ հետ չեմ, ու տխրեցի: Ոչ ձու ներկելու ուրախություն եղավ, ոչ երեկոյան ժամասացություն՝ ձանձրալի 12 Ավե-

տարաններով, ոչ վարչամակ, ոչ Տրիֆոնովման (Բերսերի տնտեսուհին)՝ հսկա կուլիչը փոքին, ոչ առավոտյան ժամերգություն, ոչի՛նչ... Եվ այնպիսի տխրություն իջավ վրաս Չարչարանաց Շաբաթվա երեկոյան, որ սկսեցի հայիոյել ու հեկեկալ: Տխուր էր, որ տոն չկա: Եվ ամաչում էի Լյովոչկայից, և ինձ գապել չէի կարողանում...»:

Իհարկե, գյուղական կյանքը շատ էր տարբերվում մոսկովյանից: Յասնայա Պոլյանայում վաղեմի ժամանակներից շատ տարօրինակ մարդիկ էին ապրում: Օրինակ, Ագաֆյա Միխայլովնան՝ Տոլստոյի տատիկի՝ Պելագեյա Նիկոլանայի նախկին սպասուհին: Մշտական կոֆտան հագին պառավը ողջ շրջանից հավաքում էր անտուն շներին, որոնք հետո կողաշենքում ապրում էին նույն իրավունքներով, ինչ և տիրուհին: Նրան «շան դաստիարակչուհի» էին ասում: Ագաֆյա Միխայլովնան «աղջիկ» էր և ապրում էր բացառապես հանուն ուրիշների: Ու ոչ միայն մարդկանց, այլև ճանճերի, մկների, ուտիճների, որոնց կերակրում էր, ու դրանք ձեռնասուն էին դառնում: «Ագաֆյա Միխայլովնան մահացավ, երբ մեզնից ոչ մեկը Յասնայա Պոլյանայում չէր,- հիշում էր Տոլստոյի դուստրը՝ Տատյանա Լվովնան:- Խաղաղ մահացավ, առանց դժգոհության ու վախի: Մահվանից առաջ պատվիրել էր մեր ողջ ընտանիքին շնորհակալություն հայտնել սիրո համար: Ասում էին, որ երբ նրան տարել են գերեզմանատուն, բոլոր շները ոռնոցով ուղեկցել են նրան գյուղից դուրս՝ գերեզմանոցի ճանապարհին»:

«Տարօրինակ մարդիկ էին ապրում տանը...- գրում է Տատյանա Լվովնան:- Երկար ժամանակ կենում էր վանական Վոյեյկովը: Նա հորս, նրա եղբայրների ու քրոջ խնամակալն էր: Վոյեյկովը շրջում էր վանականի պարեգոտով, ինչը բնավ չէր բռնում խմիչքի հանդեպ նրա կրքին: Նաև մի գաճաճ էր ապրում: Նրա պարտականություններից էր փայտ ջարդելը, բացի այդ միշտ մեծ դեր էր խաղում Յասնայա Պոլյանայի տարբեր զվարճանքներում ու դիմակահանդեսներում: Կենում էր պառավ ուխտավոր Մարյա Գերասիմովնան, որ տղամարդու հագուստ էր հագնում: Նա իմ հորաքույր Մարյա Նիկոլանայի կնքամայրն էր:

Յասնայայում կարելի էր նաև արջ պար ածող գնչուների հանդիպել...

- Միխայլո Իվանիչ, հապա խոնարհվիր պարոններին:

Արջը տնքալով կանգնում էր հետևի թաթերին ու շղթաները զնգացնելով՝ խորին խոնարհում անում:

- Տույց տուր տերտերի տղերքը ոնց են սիսեռ գողանում:

Արջը պառկում էր գետնին ու սողեսող գնում դեպի երևակայական սիսեռը:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

- Յույց տուր՝ օրիորդները ոնց են սիրունանում:

Արջը կանգնում էր ետևի թաթերին, նրա առաջ պահում էին հայելին, ու նա առջևի թաթերով տրորում էր մռութը:

- Մեռի՛:

Արջը տնքալով պառկում ու անշարժանում էր:

«Սովորաբար այդ ամենն ավարտվում էր նրանով,- գրում էր Տոլստոյների ավագ որդին՝ Սերգեյ Լվովիչը,- որ բոլորին, այդ թվում և արջին օղի էին մատուցում: Խմելով՝ արջը բարեհոգի էր դառնում, պառկում մեջքին և ասես ժպտում էր...»:

Սոֆյա Անդրեևնան էլ էր հիշում. «Գյուղից մի խելառ էր գալիս՝ Ալյոշա Գորշոկ անունով, ու նրան ստիպում էին անպարկեշտ ձայներ հանել, ու բոլորը քրքջում էին, իսկ ինձ համար զգվելի էր, ու լացս գալիս էր»: Դա այն նույն Ալյոշա Գորշոկն էր, որին ամուսինն անմահացրեց համանուն պատմվածքում:

Նրանք տարբեր մարդիկ էին: Սոնյային երբեմն թվում էր, որ ամուսինը ճնշում է իրեն: Ե՛վ տղամարդկային հեղինակությամբ, և՛ պարզապես տղամարդկային, «անասնական» ուժով: «Ֆիզիկական հզորությունն ու սեր տեսած տղամարդու փորձառությունը,- գազանային կրքոտությունն ու ուժը,- ֆիզիկապես ճնշում էին ինձ», - հիշում էր նա:

Բայց նրա կողմն էին ջահելությունն ու գեղեցկությունը: Գեղեցկուհի չլինելով՝ Սոֆյա Անդրեևնան հրապուրիչ էր մնում նաև կյանքի ուշ տարիներին:

Տոլստոյի ամուսնական կյանքի առաջին տարիների անակնկալներում երբեմն նորապսակի երջանկության սենտիմենտալ ու նույնիսկ հիմար շեշտեր էին հնչում: Ահա նա գրում է քե՛նուն. «Տա՛նյա: Գիտե՞ս, որ Սոնյան մտերմության պահերին ինձ պորտիկ է ասում, վիրավորական է: Իսկ ես այնպես եմ սիրում, երբ դու ու Սոնյան ինձ Նիհարիկ եք կոչում...»:

Ե՛վ Սոնյայի հետ համատեղ կյանքի առաջին տարիներին Տոլստոյի համարյա բոլոր նամակներում հնչում են այդ սենտիմենտալ մոտիվները. նա երջանիկ է: Անասելի երջանիկ է:

«...գրում ու վերևում լսում եմ կնոջս ձայնը, որը խոսում է եղբորս հետ, ու որին սիրում եմ աշխարհում ամենքից ավելի,- հայտնում է նա Ա.Ա. Տոլստայային:- Ես ապրեցի մինչև 34 տարեկան ու չգիտեի, որ հնարավոր է այսպես սիրել և այսպես երջանիկ լինել... Հիմա շարունակ այնպիսի զգացում ունեմ, կարծես չվաստակած, անօրինական, ինձ համար չնխատեսված երջանկություն եմ գողացել: Ահա նա գալիս է, ես լսում եմ նրան և այն-

քան լավ է»:

Ա.Ա.Ֆետին. «Ֆե՛տուշկա, քեռիս ու պարզապես սիրելի բարեկամ Աֆանասի Աֆանասիչ: Ես երկու ամիս է ամուսնացած եմ և երջանիկ եմ ու նոր, լրիվ նոր մարդ»:

Ե.Պ.Կովալսկուն. «...սահա մի ամիս է՝ ամուսնացած եմ ու այնքան երջանիկ եմ, ինչպես երբեք չէի հավատա, որ մարդիկ կարող են երջանիկ լինել»:

Մ.Ն. Տոլստայային. «Ես շա՛տ խոզն եմ, սիրելի Մա՛շա, որ այսքան վաղուց քեզ չէի գրում: Երջանիկ մարդիկ եսասեր են»:

Ի.Պ.Բորիսովին. «Մեր տանը ամեն ինչ, փառք Աստծո, լավ է, և ապրում ենք այնպես, որ մեռնելը չի գալիս»:

Նույնը կարդում ենք նաև օրագրում. «Սիրում եմ նրան, երբ գիշերը կամ առավոտյան արթնանում ու տեսնում եմ՝ նայում է ինձ ու սիրում է: Ու ոչ ոք, գլխավորը՝ ես, չեմ խանգարում նրան սիրել այնպես, ինչպես ինքն է կարող, յուրովի: Սիրում եմ նրան, երբ նստած է կողքիս, ու գիտենք, որ սիրում ենք իրար՝ ինչպես կարող ենք, և նա կասի՝ Լյո՛վուշկա,- ու դադար կտա,- բուխարու խողովակներն ինչո՞ւ են ուղիղ շարած կամ՝ ինչո՞ւ են ձիերն ու ձ մեռնում և այլն: Սիրում եմ, երբ երկար ժամանակ մենակ ենք, ու ես ասում եմ՝ ի՞նչ անենք, Սո՛նյա, ի՞նչ անենք: Եվ նա ծիծաղում է: Սիրում եմ, երբ հանկարծ բարկանում է վրաս, ու հանկարծ, մի ակնթարթ կտրուկ են և՛ միտքը, և՛ խոսքը՝ հանգիստ թող, ձանձրալի է, իսկ մի րոպեից արդեն երկչոտ ժպտում է ինձ: Սիրում եմ, երբ չի տեսնում ինձ ու չգիտի, իսկ ես իմպես եմ սիրում նրան: Սիրում եմ, երբ աղջնակ է՝ դեղին շորով, ու լեզու է ցույց տալիս, սիրում եմ, երբ տեսնում եմ նրա հետ ընկած գլուխը և վախեցած, և մանկական, և կրքոտ դեմքը, սիրում եմ, երբ...»:

Նրանց փոխադարձ սերն այնքան ուժեղ էր, որ... մահվան վախ է ծնում: Տոլստոյը մեռնելուց չէր վախեցել Կովկասում ու Սևաստոպոլում, իսկ այստեղ հանկարծ սկսում է վախենալ: Չէ՞ որ մահը նրանց երջանկության վախճանն է: Իսկ դա անարդար է:

«Այս գիշեր արթնացա, նա լալիս ու ձեռքերս է համբուրում: Ի՞նչ է պատահել: Երագիս մեջ մահացել էիր... Սիրում եմ նրան ավելի խոր ու ավելի շատ»:

«Վերջերս զգացիմք, որ սարսափելի է մեր երջանկությունը: Մահ՝ և ամեն ինչ վերջացած է: Մի՞թե վերջացած է, Աստվա՛ծ իմ: Մենք աղոթում էինք»:

*Յաշա Պոլյանովները*

Տոլստոյի «ընտանեկան նախագիծն», իհարկե, երեխաների ծնունդ էր ենթադրում: «Մեր երեխաները մեր դերերն են»,- գրում էր Տոլստոյը սիրելի հորաքրոջը՝ նկատի ունենալով, որ իր ընտանիքը ծնողների ընտանիքից պակաս բազմազավակ չի լինելու: Տոլստոյը հենց սկզբից նպատակադրված էր իր տոհմի բազմացմանը: Նա չէր պատկերացնում ընտանեկան կյանքն առանց երեխաների: Երիտասարդ կինն անխոս համաձայնեց այդ «ծրագրին»: Սոնյան ինքն էլ մեծացել էր բազմանդամ ընտանիքում: Չարմանալի կերպով Սոֆյա Անդրեևնան ճշգրիտ կրկնում էր իր մոր ճակատագիրը: Ինչպես և Սոնյան՝ Լյուբով Ալեքսանդրովնան շատ երիտասարդ էր ամուսնուց՝ 18 տարով: Ամուսնական կյանքում նա 13 երեխա ունեցավ, որոնցից հինգը մահացան մանուկ հասակում: Այն ժամանակների առողջապահության մակարդակով մանկական մահացությունը նույնիսկ ազնվականական ընտանիքներում սովորական երևույթ էր: Երեխաներից ողջ մնացին միայն երեք դուստրերն ու հինգ որդիները: Ծիշտ այդպես եղավ նաև Սոֆյա Անդրեևնայի հետ:

Առաջինն աշխարհ եկավ Սերգեյը: Նա ծնվեց Յասնայա Պոլյանայում, որտեղ ծնվել են Տոլստոյների համարյա բոլոր երեխաները: Նա երկար կյանք ապրեց ու մահացավ 1947 թվականին, Մոսկվայում՝ վերջին տարիները փաստացի ապրելով Յասնայա Պոլյանայում, որն արդեն սովետական դաստակերտ-թանգարան էր: Նրա ծննդյան հետ մի զվարճալի պատմություն է կապված: Լև Նիկոլաևիչը ծնվել է 1828 թվականի օգոստոսի 28-ին: Տոլստոյը սնապաշտ էր ու 28-ը իր համար երջանիկ թիվ էր համարում: Սոնեչկան ծննդյան ցավերով բռնվեց հունիսի 27-ին: Ծննդկանի կողքին նստած Տոլստոյն արցունքն աչքերին համոզում էր.

- Հոգյակս, համբերիր մինչև կեսգիշեր:

Հավատարիմ կինը կատարեց նրա խնդրանքը: Սերգեյը ծնվեց կեսգիշերն անց՝ 1863 թվականի հունիսի 28-ին:

Հաջորդը Տանյա դուստրն էր (1864): Հետո Իլյա որդին (1866): Ու նորից տղա՝ Լևը (1869): Հետո՝ աղջիկ՝ Մաշան (1871)... Վերջին՝ տասներեքերորդ երեխային՝ Վանեչկային, Սոֆյա Անդրեևնան ունեցավ 1888 թվականին, քառասունչորս տարեկանում:

Իլյա Լվովիչ Տոլստոյը հուշերում հաշվել էր, թե մայրը որքան ժամանակ է տվել երեխաների ծննդին ու կերակրելուն. «Աշխարհ բերած տասներեք երեխաներից տասնմեկին նա կրծքով է կերակրել: Ամուսնական կյանքի առաջին երեսուն տարիներից հղի է եղել հարյուր տասնյոթ ամիս, այսինքն՝

տասը տարի, և կրծքով կերակրել է տասներեք տարի...»:

Իլյա Լվովիչը միևնույն ժամանակ նշում է. «Նա հասցնում էր վարել ընտանիքի ողջ բարդ տնտեսությունն ու անձամբ արտագրում «Պատերազմ և խաղաղությունը», «Աննա Կարենինան» և այլ գործեր, յուրաքանչյուրը ութ, տասը, երբեմն նաև քսան անգամ»:

Այստեղ որոշակի չափազանցություն կա: Սոֆյա Անդրեևնան չի արտագրել «Պատերազմ և խաղաղությունն» ու «Աննա Կարենինան» ոչ քսան, ոչ տասը, ոչ ութ անգամ: Դա ֆիզիկապես անհնար կլիներ: Նա մասնաա արտագրում էր Տոլստոյի մեծ վեպերի առանձին գլուխները: Տոլստոյի ձեռագիրը սարսափելի էր: Ինքն էլ երբեմն չէր կարողանում կարդալ իր սևագրերի որոշ բառեր: Սոֆյա Անդրեևնան հրաշալի ձեռագիր ուներ: Տոլստոյն անողոք էր խմբագրում բնագրերը: Եվ ահա, նրա գործը թեթևացնելու համար, կինը գիշերները արտագրում էր ձեռագրերը, որպեսզի նա առավտից սկսի ուղղումներ անել: Բայց համենայնդեպ՝ մաս-մաս: Երբ դրա կարիքն առանձնապես էր զգացվում: Խոսակցություններն այն մասին, որ Սոֆյա Անդրեևնան քսան անգամ արտագրել է «Պատերազմ և խաղաղությունը», հերոսական միջ է: Սակայն միջ չէ, թե ինչքան ժամանակ է տվել երեխաների ծննդին ու կերակրմանը: Չխոսելով արդեն դաստիարակության մասին:

Իհարկե, նա օգնականներ ուներ: Հասարակ գեղջկուտի Մարիա Աֆանասևնա Արբուզովան, որը դայակություն էր արել դեռ Լև Նիկոլաևիչին: Հետո, երեխաների մեծանալու հետ նրանց հանձնում էին դաստիարակչուհի Հաննա Թարդգեին, մի երիտասարդ աղջկա, որը Լոնդոնի Վինձորյան պալատի այգեպանի դուստրն էր: Եվ եթե Նիկոլայ, Մերգեյ, Գմիտրի ու Լև Տոլստոյներին կրթել էին գերմանացի ու ֆրանսիացի դաստիարակներ (այստեղից էլ՝ գերմաներենի ու ֆրանսերենի ազատ իմացությունը), ապա Մերգեյին, Իլյուշային, Լևին ու Մաշային «ղեկավարում էր» անգլուհին: Այնպես որ, օրինակ, Մաշան երեխա ժամանակ անգլերեն ավելի լավ էր խոսում, քան ռուսերեն:

Սակայն երեխաների դաստիարակության հոգը գլխավորապես Սոֆյա Անդրեևնայի ուսերին էր: Պատահական չէ, որ երեխաների հուշերում մայրը համարյա գլխավոր տեղ էր զբաղում: Հայրը համենայնդեպ հեռու էր: «Կամա՛ց: Պապա՛ն գրում է», - այս բառերը հաճախ էին հնչում տանը: Վեպերը ծանր էին գրվում: Դրա համար էլ Տոլստոյի հոգեվիճակն ու վերաբերմունքը ընտանիքի հանդեպ մեծապես կախված էին այն բանից, թե նրան հաջողվո՞ւմ էր այս կամ այն դրվագը, թե ոչ: Եթե՝ այո, ապա Տոլստո-

յը պայծառ և ուրախ էր: Եվ տանն ամեն ինչում իշխում էր բարձր տրամադրությունը: Իսկ եթե ոչ... «Պապա՛ն անտրամադիր է, անտրամադիր է», - այս բառերն էլ բավական հաճախ էին հնչում:

Բացի այդ, Տոլստոյն այդ ժամանակ կրկին սկսում է լքոջրեն հրապուրվել գյուղական տնտեսությամբ: Նա որոնում է, փորձարարություն անում... Ճապոնական խոզերի հատուկ տեսակ է գնում: Սակայն բոլոր խոզերն անսպասելի սատկեցին: Պարզվեց՝ խոզապահը, որ նախկին կառապան էր... չէր կերակրել նրանց՝ նեղանալով, որ իրեն կառապանից խոզապահ են կարգել: Տոլստոյը անտառներ, խնձորի այգիներ է տնկում: Նրան գրավում է մեղվաբուծությունը, օրեր շարունակ մնում է մեղվնոցում, ուր կինը նրա համար հաց ու կաթ է բերում:

Տոլստոյը վերսկսեց մանկավարժական գործունեությունը. Յասնայա Պոլյանայում դպրոց բացեց գեղջուկ երեխաների համար՝ ռազմոչինեց ուսուցիչներ հրավիրելով: Բայց երիտասարդներն այնքան էին աղմկում ու ծխում, որ դա դուր չեկավ արդեն հոյի Սոնեչկային: Ու Լև Նիկոլաևիչն առժամանակ ստիպված էր հրաժեշտ տալ իր, ինչպես ինքն էր ասում, «վերջին սիրուհուն»՝ մանկավարժությանը:

Տոլստոյը միշտ աշխատանքի մեջ է, գործերով ծանրաբեռնված: Բայց անում է միայն այն, ինչ ուզում է, ինչն իրեն դուր է գալիս: Յասնայոլյանյան աշխարհն ինքնին այնպես է կազմակերպվում, որ ամեն ինչ պտտվում է Տոլստոյի շուրջը, ինչպես մոլորակներն՝ արեգակի: Իսկ արևը կարող է լուսավորել երկիրը, տաքացնել, բայց և կարող է ամպերի ետևն անցնել:

«Պապա՛ն ցերեկը մտնում էր աշխատասենյակն ու «պարապում», - հիշում էր Իլյա Լվովիչը, - և այդ ժամանակ մենք չպիտի աղմկեինք, ու մեզնից ոչ մեկը չէր համարձակվում մտնել նրա մոտ: Թե այնտեղ ինչ էր «պարապում», իհարկե, չգիտեինք, սակայն վաղ մանկությունից սովորել էինք հարգել ու վախենալ նրանից: Մամա՛ն ուրիշ էր: Նա մերն է, ու նա էլ է վախենում պապա՛ից: Նա պետք է ամեն ինչ անի մեզ համար: Նա հետևում է մեր սննդին, նա կարում է մեր շապիկները, կրծքակալները, կարկատում մեր գուլպաները, բարկանում մեզ վրա, երբ ցողով թրջում ենք կոշիկները, նա «արտագրում է»: Նա ամեն ինչ է: Ինչ էլ պատահի. «Կզմամ մամա՛ի մոտ», «Մամա՛, Տանյան ջղայնացնում է»: -«Կանչիր այստեղ»: «Տանյա, մի նեղացրու Իլյուշային, նա փոքրիկ է»: «Ո՞ր է մամա՛ն»: Խոհանոցում, կամ կար է անում, կամ մանկասենյակում է, կամ արտագրում է: Նրա թեթև քայլերը ժամանակ առ ժամանակ լսվում են տան բոլոր սենյակներում, և նա ամենուր հասցնում է ամեն ինչ անել ու հոգալ մեր մասին... Մեզնից ոչ մեկի



մտքով անգամ չէր կարող անցնել, որ մամա՛ն երբևէ կարող է հոգնել կամ անտրամադիր լինել, կամ որ մամա՛ն ինչ-որ բան ցանկանա իր համար: Մամա՛ն ապրում է ինձ համար, Սերյոժայի համար, Տանյայի համար, Լյուլյայի համար, մեզ բոլորիս համար, և ուրիշ կյանք նրա համար չի կարող լինել ու չպիտի լինի»:

Մի անգամ Սոֆյա Անդրեևնան վիրավորված գրեց օրագրում. «Ե՛վ իմաստուն, և՛ երջանիկ է Լ.Ն.-ն: Նա միշտ աշխատել է սեփական ընտրությամբ, ոչ թե ըստ անհրաժեշտության: Ուզել է՝ գրել է, ուզել է՝ հերկել է: Մտքով անցավ սապոգ կարել, համառորեն կարում էր: Մտածեց կրթել երեխաներին՝ կրթում էր: Չանձրացավ՝ թողեց: Այ թե ես փորձեի այդպես ապրել»:

Արդեն վաթսուհանգյակի թվականներին, փոքր քրոջն ուղարկված նամակներում նա սկսում է տրտնջալ իր կյանքից. «...մեկ կերակրում եմ, մեկ դադում, մեկ լվանում, բացի այդ՝ երեխաները, մուրաբան, թթուն, սունկը, պաստեղները, արտագրությունը Լյովոչկայի համար, իսկ beaux arts-ի<sup>24</sup> համար հազիվ է մի րոպե մնում, այն էլ՝ եթե անձրև է գալիս»:

Տոլստոյը կտրականապես դեմ էր, որ երեխաների համար ստնտու վարձեն, չնայած իրեն ստնտուներն էին կերակրել: Սոնեչկան հիվանդացավ կրծքացավով: Ստիպված էին Սերյոժայի ու մյուս երեխաների համար ստնտուներ վերցնել: Դա առիթ դարձավ ամուսինների առաջին լուրջ բախման համար: Սկզբում Տոլստոյը նույնիսկ դեմ էր Սերյոժայի համար դայակ վարձելուն, համարելով, որ երիտասարդ կինն անձամբ պիտի զբաղվի երեխայով: Բնականաբար, դայակ գտան: Իսկ երեխաների համար դաստիարակչուհի Տոլստոյն ինքը ճարեց:

Միֆ կա, որ ընտանեկան կյանքը Յասնայա Պոլյանայում կառուցվում էր խիստ տղամարդկային դեսպոտիզմի վրա, բարդացած նրանով, որ Տոլստոյը հանճարեղ գրող էր: Նույնիսկ այսպիսի արտահայտություն հայտնվեց. «Հե՞շտ է արդյոք ապրել հանճարի հետ»: Այո՛, հեշտ չէ: Ու Սոնյան դա հասկանում էր: Նա հաճախ է տրտնջում օրագրում. «Մեր չկա, կյանք չկա...»: «Չոհաբերման եմ զնում տղայիս մոտ...»: «Իսկ նա այլևս երեխաներ չի ունենա»: «Ես գոհացում եմ, ես՝ դայակ, ես՝ սովորական կահույք, ես՝ կին»:

Մակայն բավական է Տոլստոյը մի կարճ ժամանակով մեկնի Յասնայա Պոլյանայից, և կինը համարյա ամեն օր գրում է նրան, ինչպես և նա՝ կնո-

24. Գեղեցիկ արվեստներ (ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

ջը: Ու նամակներում լրիվ ուրիշ բառեր են հնչում...

«Ես քեզ անպայման սպասում եմ այս գիշեր: Կգա՞ս արդյոք: Կարծես՝ չեմ դիմանա մինչև գառ, իսկ այնպես եմ ուզում հանդիպել քեզ հետ»:

«Քո նամակն այնպես ուրախացրեց ինձ, որ ասել չեմ կարող»:

«Այնպիսի տխրություն է իջել վրաս, սիրելի Լյո՛վոչկա, իմ ողջ զվարթությունն անհետացել է, և այնպես ուզեցի շուտ, շուտ տեսնել քեզ: Այդ ամենն արեց քո սրտագին նամակը, քո սերն իմ հանդեպ և այն, որ մենք ավելի ու ավելի լավն ենք դառնում մեր տեղում»:

«Ինչ լավ էր մեզ համար վերջին օրերին, այնպես երջանիկ, այնքան հաշտ... Ահավոր տխուր է առանց քեզ, ու մտքովս ինչ ասես անցնում է. նա չկա, ուրեմն ինչի՞՞ համար է այս ամենը: Ինչի՞՞ համար առաջվա պես կերպ ճաշել, ինչո՞ւ են նույն կերպ վառվում վառարանները, և բոլորը ձեռ ու ոտ ընկել, և նույնպիսի վառ արև է...»:

Առանց նրա արևն էլ այնպես չի լուսավորում:

Սակայն ընտանեկան հարաբերությունների լավագույն ստուգումը երեխաներն են: Ի դեպ, նրանք հորից ոչ միայն վախենում, ինչպես գրում է Իլյա Լվովիչը, այլև անկասկած սիրում էին: Գուցե նույնիսկ աստվածացնում էին: Նրա հետ ավելի հետաքրքիր էր, քան մամա՛-ի: Չե՞ր հայրը միայն աշխատասենյակն ու «Կամա՛ց: Պապա՛ն գրում է»-ն չի: Հայրը որսորդությունն է, ձկնորսությունը, մարմնամարզությունը: Առաջկտրուկի վազքն է՝ զնգուն ծիծաղով, որը կայտառ տղեկներին թույլ չէր տալիս հաղթել ծանրաքաշ հորը: Չմռանը սահադաշտ մաքրելն է Մեծ լճակում, ապա չնուշկներով սահելը, ինչի մեծ վարպետն էր հայրը: Դա («pas-de-geant»)-ն է («հսկա քայլեր»), որ հայրը բերել է Մոսկվայից: Դա բազում այլ հաճույքներ են:

Տոլստոյը փոքրիկ երեխաների սրտի ինչ-որ թաքուն բանալի ուներ: Տատյանա Լվովնան հիշում էր.

«Մի խաղ կար, որ պապա՛ն խաղում էր մեզ հետ, ու որը մենք շատ սիրում էինք: Այդ խաղը նրա հորինածն էր: Ահա այն. առանց որևէ նախագուշացման պապա՛ն հանկարծ դեմքին վախեցած արտահայտություն էր տալիս, սկսում էր անհանգիստ նայել շուրջը, գրկում էր մեզմից երկուսին, ու վեր թռչելով, ոտնաձայրերին, ոտքերը բարձր վեր-վեր անելով ու ջանալով չաղմկել վագում ու թաքնվում էր անկյունում՝ հետը քաշելով ձեռքի տակ ընկածներին»:

«Գալի՛ս է... գալի՛ս է...»,- վախեցած շշուկով ասում էր նա:

Մեր երեքիցս նա, որին չէր հասցրել տանել իր հետ, գլխապատառ նետվում էր նրա մոտ ու կառչում շապիկից: Մենք բոլորս, չորսով, վախեցած

կծկվում ենք անկյունում ու սրտատրոփ սպասում, որ «նա» անցնի: Պապա՛ն մեզ հետ նստած է հատակին ու ձևացնում է, թե լարված հետևում է երևակայական մեկին, որն էլ հենց այդ «նա»-ն է: Պապա՛ն հայացքով ուղեկցում է նրան, իսկ մենք լուռ նստած ենք, իրար սեղմված, վախենալով, թե «նա» մեզ կտեսնի: Մեր սրտերն այնպես են տրոփում, որ ինձ թվում է՝ «նա» կարող է լսել զարկերն ու դրանցով գտնել մեզ: Վերջապես, լարված լռության մի քանի րոպեներից հետո, պապա՛-ի դեմքը խաղաղվում ու պայծառանում է...

- Գնա՛ց,- ասում է «նրա» մասին:

Մենք ուրախացած վեր ենք թռչում ու պապա՛-ի հետ կտրում սենյակը, երբ հանկարծ... պապա՛-ի հոնքերը վեր են քաշվում, աչքերը չլվում են, դեմքին սարսափ է հայտնվում, ու նա կանգ է առնում. պարզվում է՝ «նա» նորից հայտնվել է ինչ-որ տեղից:

- Գալի՛ս է, գալի՛ս,- շնչում ենք բոլորս ու սկսում դետուդեն վազել՝ ծածուկ տեղ փնտրելով, որ թաքնվենք «նրանից»: Նորից ինչ-որ անկյուն ենք խցկվում ու կրկին տազնապած սպասում, մինչև պապա՛-ն հայացքով կուղեկցի «նրան»: Վերջապես «նա» նորից գնում է՝ մեզ չգտնելով, մենք կրկին վեր ենք թռչում, և ամեն ինչ սկսվում է սկզբից, մինչև պապա՛-ին չի ձանձրացնում մեզ հետ խաղալն ու նա մեզ չի քշում Հաննայի մոտ»:

Կարդալով ավագ երեխաների հուշերն իրենց յասնոպոլյանյան կյանքի մասին, հանգում ես այն մտքին, որ եթե Տոլստոյը երագում էր առանձին վերցրած դրախտ կազմակերպել Յասնայա Պոլյանայում, ապա դա նրան հաջողվել էր: Երեխաների համար...

Եվ պատահական չէ, որ նրա որդու՝ Լև Լվովիչի, որը նույնպես ուզում էր գրող դառնալ, լավագույն գործը վերնագրված է «Յաշա Պոլյանով»: Այդ հրաշալի անվանում-վերնագրում միավորված են երեխայի անհատականությունն ու կալվածքի անհատականությունը: Նրանք դառնում են մեկ ամբողջություն: Լևը հուշերում գրում էր. «Մայրս, հայրս, եղբայրներ, քույրեր, դայակներ, դաստիարակչուհիներ, սպասավորներ, հյուրեր, շներ, երբեմն արջը՝ պարածողի հետ, ձիեր, որսորդություն հորս ու եղբայրներիս հետ, Ծննդյան տոներ, տոնածառ, Բարեկենդան ու Չատիկ, ձմեռը՝ ձյունով, սահնակներով, խածկտիկներով ու չնուշկներով, գարունը՝ պղտոր առվակներով ու հավիտի արձաթյա ձյան փայլիլուն գորգերով, կեչու առաջին տերևով ու հաղարջով, առաջին գույներով ու առաջին «անվերարկու» գրոսանքով, ամառը՝ սունկով, լողով, տարատեսակ խաղերով, ձիավարությամբ ու ձկնորսությամբ, աշունը՝ դասերի սկսվելով ու ողջ ընտանիքի աշխա-

տանքով, դեղին տերևներով՝ այգու ծառուղիներում, ու համով անտոնովյան խնձորներով, առաջին փուխը ձյունով. ահա իմ մանկության երջանիկ կյանքը»:

*Արևը գեղիքում*

Վաթսունականների կեսից ու մինչև յոթանասունական թվականների վերջը նա համարյա չի գրում օրագրում: Տոլստոյի կյանքում դա միշտ հաստատուն նշան է, որ նրա մեջ հոգեկան լուրջ փոփոխություններ չեն կատարվում, ամեն ինչ գնում է իր հունով: Եվ այդպիսի կյանքը նրան ընդհանուր առմամբ բավարարում էր: Բայց դրա հետ մեկտեղ նոր հոգեկան ու մտավոր փորձի կուտակման գործընթաց էր գնում:

«Պատերազմ և խաղաղության»՝ 1863-1869 թվականներին գրված վեպ-էպոպեայի ահռելիությունը այսօր էլ ցնցող է: Կարծես թե չկա մի համաշխարհային գրող, որի վրա այդ վեպը դույզն-ինչ ազդեցություն թողած չլինի: Եվ Տոլստոյը խոստովանում էր, որ «բացառիկ աշխատանքն» ինքը կատարել է «կյանքի լավագույն պայմաններում»:

Աշխատանքի «բացառիկությունն» այնպիսին էր, որ ժամանակակիցներն այն միանգամից գնահատել չկարողացան: Մամավանդ, որ վեպը մաս-մաս լույս էր տեսնում «Ռուսսկի վեստնիկում» ու սկզբում «1805 թվական» համեստ վերնագիրն ուներ: Բայց երբ նույնիսկ ամբողջությամբ հրատարակվեց, միայն քննադատ Նիկոլայ Նիկոլակիչ Ստրախովը գրեց վեպի մասին. «Ի՛նչ ահռելիություն և ինչպիսի կառուցիկություն: Հազարավոր դեմքեր, հազարավոր տեսարաններ, պետական ու մասնավոր կյանքի բոլոր հնարավոր ոլորտները, պատմություն, պատերազմ, բոլոր սարսափները, որ կան աշխարհում, բոլոր կրքերը, մարդկային կյանքի բոլոր պահերը՝ նորածնի ճիչից մինչև մեռնող ծերունու զգացումի վերջին բռնկումը, մարդուն հասու բոլոր ուրախություններն ու վշտերը, հնարավոր բոլոր հոգեվիճակները՝ ընկերոջից տասանոց թոցրած գողի զգացողությունից մինչև հերոսության ու ներքին պայծառացման խոհերի գերագույն ընթացքը. այս ամենն առկա է այդ պատկերում... «Պատերազմ և խաղաղությունը» հանճարեղ ստեղծագործություն է»:

Ստրախովի վրա ծիծաղում էին: «Պետերբուրգսկի լիստոկ» թերթում գրում էին. «Կոմս Տոլստոյին հանճար է համարում միայն Ստրախովը»: «Պետերբուրգսկայա գազետան» պնդում էր, որ այդպիսի «քննադատների վրա երբեմն կարելի է ծիծաղել, երբ նրանք որևէ առանձնապես տարօրինակ բան են մտածում, ինչպես, օրինակ, կոմս Լև Տոլստոյի վեպերի հա-

մաշխարհային նշանակության մասին հայտարարությունը»: Նմանակող Դմիտրի Միմակը բանաստեղծություն հրապարակեց.

*Վ ն ա ս վ ա ծ ք ն ն ա դ ա տ (գառանցում է).  
Այո՛, հանճար է նա...*

*Սպասիր, սպասիր,  
Ո՞վ, Բենեդիկտո՞վը:*

*Ք ն ն ա դ ա տ.  
Լև Տոլստոյը...*

*Ո մ ն  
Տեսնում եմ՝ կարմրեցիր... Ինչ արած...  
չես կարող լեզվիդ տալ առանց կարմրելու:*

Դոստոևսկին սկզբում «Պատերազմ և խաղաղությունը» կալվածատիրական գրականություն կոչեց ու միայն ավելի հետո, «Պուշկինյան ճառում» նույն շարքում դրեց Տատյանա Լարինային ու Նատաշա Ռոստովային:

Սալտիկով-Շչեդրինն ասում էր, թե դա «դայակների ու մայրիկների շատախոսություն է», որ բոլոր ռազմական տեսարանները՝ «սուտ են և ունայնություն», իսկ Բագրատիոնն ու Կուտուզովը՝ «տիկնիկային գեներալներ»:

Տուրգենևը գրում էր. «...ինչ մանր ու խորամանկ է այս ամենը, և մի՞թե Տոլստոյին չեն ձանձրացրել վախկո՞տ եմ ես, թե՞ ոչ կարգի անվերջանալի դատողությունները»:- Ծակատամարտի այս ամբողջ պաթոլոգիան: Ո՞ւր են այստեղ դարաշրջանի գծերը: Որտե՞ղ են պատմական գույները»: Հետո նա խոստովանում է, որ «այդ վեպում այնքան առաջնակարգ գեղեցկություններ կան, այնպիսի կենսականություն, և ճշմարտություն, և թարմություն, որ անհնար է չհամաձայնել, որ «Պատերազմ և խաղաղության» ի հայտ գալով Տոլստոյը կանգնեց առաջին տեղում մեր բոլոր ժամանակակից գրողների մեջ»:

«Պատերազմ և խաղաղություն»-ը գրելու ընթացքը քայքայեց Տոլստոյի առողջությունը: Վերջին գլուխները գրում էր անտանելի գլխացավերը հաղթահարելով:

Ի վերջո դա հանգեցրեց լուրջ հոգեբաբանական ճգնաժամի, որը Տոլստոյի մասին կենսագրական գրականության մեջ կոչում են «արգամասյան

սարսափ»՝ կարևոր ու ճակատագրական նշանակություն տալով այդ իրադարձությանը: «Արզամասյան սարսափում» փորձում են գտնել Տոլստոյի «հոգևոր հեղաշրջման» հանելուկի լուծումը, որը կկատարվի տասը տարի անց, և նույնիսկ 1910 թվականին Յասնայա Պոլյանայից նրա հեռանալու բացատրությունը: Իրականում դա նույնպես առասպելաբանություն է:

Ահա թե ինչ էր պատահել: 1869 թվականի սեպտեմբերին, երբ Տոլստոյը «Պատերազմ և խաղաղության» վերջին խմբագրումն էր անում, որոշեց կտրվել գործից և թերթում հայտարարություն գտնելով, որ Նիժեգորոդի նահանգում էժան գնով կալվածք է վաճառվում, մեկնեց այն «ձեռք բերելու»: Այդ ժամանակ Տոլստոյը ոչ միայն գրող է, այլև կալվածատեր, «ընչակուտակ», իր հոր հավատարիմ հետևորդը, որը մեծ ջանքեր էր քափում հող ձեռք բերելու վրա:

Տոլստոյը ամուսնական կյանքի առաջին յոթ տարիներին հազվադեպ էր լքում Յասնայա Պոլյանան: Եվ այդպիսի յուրաքանչյուր մեկնում նրա համար հասարակ դեպք չէր: Կյանքը կալվածքում չափավոր էր, ժամակարգված. վաղ առավոտյան զբոսանքներ ու սուրճ, ուշ նախաճաշեր ու ճաշեր, գրողություն, աշխատանք կալվածքում, զբաղմունքներ երեխաների հետ և այլն: Եվ ահա, 1869 թվականի սեպտեմբերին արզամասյան հյուրանոցի հանարում Տոլստոյն անսպասելի «սարսափ» է ապրում: Նա հաջորդ օրը դրա մասին գրում է կնոջը. «Երրորդ օրվա վերջին գիշերեցի Արզամասում, և ինձ հետ մի արտասովոր բան պատահեց: Գիշերվա ժամը 2-ն էր, ահավոր հոգնել էի, ուզում էի քնել, ու ոչ մի տեղս չէր ցավում: Եվ հանկարծ այնպիսի տխրություն, վախ, սարսափ իջավ վրաս, որ առաջ երբեք չէի զգացել»:

Նրա հետ էր ծառան՝ Սերգեյ Արբուզովը: Կոմսի կյանքի մասին՝ հետագայում հրապարակված հուշերում Սերգեյը ոչ մի բառ չի ասում «արզամասյան սարսափի» մասին, չնայած երևում է, որ սուր աչք է ունեցել: Հաջորդ օրը, ճանապարհին Տոլստոյը նորից ապրում է այդ զգացումը, բայց, ինչպես գրում է կնոջը, արդեն պատրաստ էր, դրա համար էլ չվախեցավ:

Սակայն 15 տարի անց, «Խելագարի նոթերում» Տոլստոյը հիշեց «արզամասյան սարսափը» ու բոլորովին ուրիշ իմաստ տվեց դրան: Նա դա բացատրում էր «մահվան վախով»: Բայց 1869 թվականին կնոջն ուղարկած նամակներում ոչինչ չի ասում մահվան վախի մասին: Այն ժամանակ այդ խնդիրը դեռ այդքան չէր հուզում նրան, ինչպես կլինի 15 տարի անց, 1884 թվականին, «հոգեկան հեղաշրջման» բուռն շրջանում:

Կասկած կա, որ Տոլստոյը «գրողաբար» խաբել է «արզամասյան սարսափի» հարցում: Իր կյանքի թեկուզև արտասովոր, բայց ոչ բացառիկ դեպ-

քը նա օգտագործում գեղարվեստական գործում՝ արդեն խորհրդանշական կերպով:

Յոթանասունական թվականներին գրվեցին «Աննա Կարենինան» ու «Կովկասի գերին»՝ Տոլստոյի երկու մեծ ու փոքր գլուխգործոցները: «Աննա Կարենինայի» մասին Վլադիմիր Նաբոկովն ասել է, որ դա «լավագույն ռուսական վեպն է», ապա հավելել. «Չնայած, ինչո՞ւ միայն ռուսական: Նաև համաշխարհային»: Հենց այդ ժամանակ էլ ստեղծվում է «Այբբենարան» գիրք-քրեստոմատիան, որը, ինչպես հպարտորեն համարում էր Տոլստոյը, պետք է կարդան բոլոր երեխաները՝ գեղջկականից մինչև կայսերական:

Տոլստոյը փառքի զենիթում է: Այդ շրջանի նրա կերպարը ճշգրիտ է արտացոլված Իվան Նիկոլակիչ Կրամսկոյի դիմանկարում: Մեր առաջ ռուս հսկա է՝ և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես: Այդ դիմանկարի ստեղծման պատմությունն ուշագրավ է: Տոլստոյը կտրականապես չէր ուզում «բնորոշել»: Սակայն մեկենաս Պավել Միխայլովիչ Տրետյակովն էր իր հավաքածուի համար Տոլստոյի դիմանկարը պատվիրել այդ ժամանակ հայտնի նկարիչ Կրակսկոյին: Կրամսկոյը պատասխանեց նամակով. «...գործի կղնեմ բոլոր ջանքերս կոմս Տոլստոյի դիմանկարն անելու համար»: Բայց ինչպե՞ս: «Բնորոշը» քմահաճություն է անում: Եվ ահա 1873 թվականի ամռանը Կրամսկոյն ամառանոց է վարձում Կոզլովա Չասեկա կայարանում՝ Յասնայա Պոլյանայի մոտ: Նա սկսում է հետևել Տոլստոյին՝ ջանալով որսալ նրա իրական գծերը: Վերջապես միջամտեց Սոֆյա Անդրեևնան: Նա ամուսնուն համոզեց բնորոշել Կրամսկոյին, բայց մի պայմանով, որ նա պատճեն անի՝ անձամբ իր համար:

Զվարճալի է Կրամսկոյի անդրադարձը Տոլստոյի հետ ծանոթանալուն: Նա Ի.Ե. Ռեպինին գրում է. «Իսկ կոմս Տոլստոյը, ում նկարում էի, հետաքրքիր մարդ է... Նույնիսկ հանճար է հիշեցնում»:

Ըստ Սերգեյ Լվովիչ Տոլստոյի հուշերի՝ հայրը համենայնդեպս հոգնել էր բնորոշելուց, և Կրամսկոյն իրանը նկարում է արդեն առանց գրողի՝ հարդ լցնելով նրա շապիկի մեջ: Եվ դա զգացվում է դիմանկարում. գլուխն ու ձեռքի թաթը կարծես իրանից առանձին են ապրում:

«Աննա Կարենինայից» հետո Տոլստոյը կրկին ձեռնամուխ է լինում պատմական աշխատության: Նա ցանկանում է վեպ գրել Պյոտր I-ի մասին: Ավելի քան երեսուն անգամ սկսել է վեպը՝ ահռելի քանակի փաստագրական նյութ հավաքելով: Սակայն Պյոտր I-ի՝ Տոլստոյի վարկածն այդպես էլ չունենք: Այդ առաքելությունը կկատարի մեկ այլ, «երրորդ» (Ալեքսեյ Կոնստանտինովիչից ու Լև Նիկոլակիչից հետո) Տոլստոյ՝ «կարմիր կոմս»

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Ալեքսեյ Տոլստոյը:

Մի քանի բացատրություն կա, թե ինչու «առաջին» Տոլստոյը չհաղթահարեց առաջին Պյոտրին:

Նախ, հասկացավ, որ ողջ խորությամբ չի զգում այդ դարաշրջանի կենցաղն ու լեզուն: Դա խանգարում էր նրան ոգով թափանցել ժամանակի մեջ:

Երկրորդ. «Պատերազմ և խաղաղության» համարյա բոլոր հերոսները փաստորեն նրա ազգականներն են: Պապերը (Ռոստոլն ու ծերունի Բուկոնսկին), մայրը (իշխանուհի Մարյան), հայրը (Նիկոլայ Ռոստոլը), Տանյա և Սոնյա Բերսերը (Նատաշա): Նույնը՝ նաև «Աննա Կարենինա»-ում, ուր Լևինի ու Կիտիի սիրո, ամուսնության և ընտանեկան կյանքի ողջ պատմությունը ճշգրիտ կրկնում է հենց Լև Նիկոլաևիչի ու Սոնեչկայի պատմությունը:

Իսկ ո՞վ էին նրա համար Պյոտր I-ն ու Սենչիկովը: Ընդամենը պատմական կերպարներ: Գեղարվեստական շնորհի ողջ ծավալով ու հզոր երևակայությամբ հանդերձ՝ Տոլստոյը շատ ինտիմ գրող է: Հնարավոր է, որ դրա մեջ է գաղտնիքն այն բանի, թե ինչու «Պատերազմ և խաղաղություն» ու «Աննա Կարենինան» այսօր էլ ընթերցվում են որպես կենդանի ու հուզիչ ժամանակակից գործեր:

Երրորդ. Տոլստոյը խոստովանել է, որ Պյոտր I-ը զգվելի էր իրեն որպես անհատականություն: 1905 թվականին նա իր քարտուղար և կենսագիր Ն.Ն. Գուսևին կասի. «Ըստ իս նա ոչ թե դաժան էր, այլ հարբած հիմար: Գերմանացիների մոտ էր եղել, դուրը եկել էր, թե այնտեղ ինչպես են խմում...»: Բայց դա, իհարկե, չափազանց պարզունակ ու կոպիտ բացատրություն է: Պարզապես վեպը չէր ստացվել:

Շատ ավելի տևական ու լրջորեն էր հետաքրքրում նրան դեկաբրիստների մասին վեպի գաղափարը, որից էլ սկզբում աճեց «Պատերազմ և խաղաղությունը»: Դեկաբրիստների ճակատագիրը նրան տանում է Սիբիր: 1870-ական թվականների վերջին Տոլստոյը վեպ է մտմտում ռուսների՝ դեպի Արևելք՝ ընդհուպ մինչև Չինաստան մեծ վերաբնակեցման մասին:

Վաթսուն-յոթանասունական թվականներին Տոլստոյն ապրում է աներևակայելի լարված ստեղծագործական կյանքով: Նրա հենարանն ընտանիքն է: Աշխարհի ամենասիրելի վայրը՝ Յասնայա Պոլյանան: Ջգացողություն կա, որ կյանքը ստացվել է: Ահա այն՝ երջանկությունը:

Այդ ամենը փուլ եկավ մեկ ակնթարթում:



## ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

### ՀԵՂԱՇՐՁՈՒՄ

(1877-1892)

#### *Դեռ ոչ աղետ*

Համենայնդեպս՝ ոչ մեկ ակնթարթում:

Կարդալով Տոլստոյի երջանիկ ընտանեկան կյանքի սկզբի օրագրերը, հանկարծ նկատում ես այս բառերը.

«Ինձ սկսում է ծանրություն անել այս պարապությունը: Ես չեմ կարողանում հարգել ինձ... Ես անընդհատ սրտնեղում եմ և իմ կյանքից, և նույնիսկ նրա: Անհրաժեշտ է աշխատել...»:

«Ես շատ դժգոհ էի նրանից, համեմատում էի ուրիշներին հետ, համարյա զոջում էի, բայց գիտեի, որ դա ժամանակավոր է, և սպասում էի, և անցավ...»:

«Առավոտից՝ զգեստը: Ինձ դրդում էր, որ դեմ խոսեմ, ես հենց դեմ էլ էի, ասացի՝ արցունքներ, ճղճիմ բացատրություններ... Մի կերպ սվաղեցինք: Ես մնան դեպքերում միշտ դժգոհ եմ ինձնից, մանավանդ համբույրներից, այդ կեղծ սվաղե՛լը... Ճաշին սվաղը թափվեց, արցունքներ, հիստերիա...»:

«Նրա բնավորությունն օրեցօր փչանում է... Նայեցի նրա օրագիրը. թաքցված չարությունն իմ հանդեպ շնչում է քնքուշ բառերի տակից...»:

««Առավոտից երջանիկ եմ (*զրոսանքից հետո - Պ.Բ.*), ուրախ, ու տեսնում եմ կոմսուհուն, որը զայրացած է, ու գեղջկուհի Դուշկան սանրում է նրա մազերը... ու ես եռջրով խաշվածի պես վախենում եմ ամեն ինչից ու տեսնում, որ ինձ համար լավ ու բանաստեղծական է միայն այնտեղ, որտեղ մենակ եմ»:

«Արդեն գիշերվա 1-ն է, իսկ ես չեմ կարողանում քնել, առավել ևս՝ գնալ քնելու նրա սենյակում, այն զգացումով, որ ճնշում է ինձ, նա հառաչում է, երբ լսում եմ, իսկ հիմա հանգիստ խոմփացնում է»:

Հանկարծ ընտանեկան երջանկության գագաթնակետին՝ «Պատերազմ և խաղաղության» սկզբում, հայտնվում է իշխան Անդրեյի մեծախոսությունը՝ ուղղված Պյեռ Բեզուխովին. «Երբեք, երբեք չամուսնանաս, բարեկամս. ահա քեզ իմ խորհուրդը. չամուսնանաս այնքան ժամանակ, մինչև քեզ չա-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

սես, որ արել ես ամենը, ինչ կարողացել ես, մինչև չդադարես սիրել այն կնոջը, որին ընտրել ես, մինչև հստակ չտեսնես նրան, թե չէ կսխալվես դաժանորեն և անդառնալի: Ամուսնացիր, երբ կլինես ծեր ու ոչ մեկին պիտանի... Թե չէ կկորչի այն ամեն լավն ու վեհը, որ կա քո մեջ: Ամեն ինչ կվատնվի մանրուքների վրա... Իմ կինը... հրաշալի կինը: Այն հազվագյուտ կանանցից, ում հետ կարող ես հանգիստ լինել պատվիդ համար, բայց, Աստված իմ, հիմա ինչ ասես չէի տա, որ ամուսնացած չլինեի»:

Հանկարծ «Աննա Կարենինա»-ում կարդում ենք. «Եվ երջանիկ ընտանիքատեր, առողջ մարդ Լևինը մի քանի անգամ այնքան մոտ էր ինքնասպանությանը, որ թաքցրել էր կոշկաթելը, որպեսզի դրանով չկախվի, ու վախենում էր գենք պահել մոտը, որ չկրակի իր վրա»:

Որտեղի՞ց այս մտքերը:

Տոլստոյի համար նեղվածք է ընտանիքում: Նեղություն է կալվածատեր լինելը: Եվ նույնիսկ գրող լինելը: Նրա հզոր խառնվածքն էլ ինչ-որ տեղ է ձգտում: Միայն թե չի կարողանում հասկանալ՝ ո՞ր: Ընդամին, նա զարմանալիորեն բոլոր ուժերը տալիս է գրողական գործին, կալվածատիրական տնտեսությանը ու պնդում, որ կինն անընդհատ ծննդաբերի ու ծննդաբերի:

Եվ չգիտես ինչու հունարեն է սովորում:

Իբր, որ բնագրով Հոմերոս կարդա: Նրա ընկեր Ֆետը, որն ի տարբերություն Տոլստոյի, դասական բանասիրական կրթություն էր ստացել, կատակում էր, որ եթե Տոլստոյը հունարեն սովորի, ինքն իր ձեռամբ նրան կհանձնի սեփական մաշկով կազմած դիպլոմը:

Տոլստոյը լեզուն սովորեց մեկուկես ամսում, 1870/71 թվականների ձմռանը:

Այդ ժամանակ կինն արդեն ծննդկան էր: 1871 թվականի փետրվարի 12-ին ծնվեց Մաշան՝ Տանյայից հետո երկրորդ դուստրը և հինգերորդ երեխան: Մաշան թույլ, հիվանդոտ երեխա էր, իսկ Սոֆյա Անդրեեևնան հիվանդացավ հետծննդյան տենդով ու քիչ էր մնում մեռնել: Բժիշկները խորհուրդ էին տալիս այլևս երեխա չունենալ: Եվ նա, ընդհանուր առմամբ, համաձայն էր: Հոգնել էր: Բայց ամուսինը խռովություն բարձրացրեց: Նա չէր պատկերացնում ընտանեկան կյանքը առանց տոհմի անընդհատ շարունակության: Ընտանեկան բախումը քիչ էր մնում հասներ ամուսնալուծության:

Մաշայից հետո Սոֆյա Անդրեեևնան ևս ութ երեխա ունեցավ: Առաջին երեքը՝ Պյոտրը (1872), Նիկոլայը (1874) և Վարյան (1875) մահացան մանուկ հասակում: Ըստ երևույթին բժիշկները հիմքեր ունեին Տոլստոյի կնոջը խորհուրդ տալու, որ այլևս երեխա չունենա: Բայց հետո ծնվում է Անդրեյը

(1877): Նա բավական երկար կապրի, մինչև 1916 թվականը ու կմահանա սակավադեպ արյան վարակումից: 1879 թվականին ծնվում է Միխայիլը, որը նույնպես երկարակյաց կլինի ու կվախճանվի վտարանդության մեջ, Մարոկոյում: Սակայն 1881 թվականին ծնված Ալյոշան մահացավ հինգ տարեկանում: Երկարակյաց էր 1884 թվականին ծնված Սաշան: Վերջապես վերջին երեխան՝ Վանեչկան (1888) յոթ տարի էլ չապրեց:

Ո՞վ հաղթեց 1871 թվականի կոնֆլիկտում: Մենք չէ, որ պետք է դատենք: Այսօր ողջ աշխարհում՝ Ռուսաստանից մինչև Արևմտյան Եվրոպա ու Ամերիկա, ապրում են Տոլստոյի 350 ուղիղ ժառանգներ:

Լև Նիկոլաևիչը ծանրագույն խաչ էր դրել կնոջ վրա: Եվ կինն ընդունեց այդ խաչը: 1871 թվականից հետո նրանց կյանքը նորից կարգի ընկավ:

#### *Կյանքի կանգ*

Մինչ այսօր չլուծված է մնում հարցը, թե ինչ էր պատահել Տոլստոյին յոթանասունական թվականների վերջին-ութսունականների սկզբին: Ինչո՞ւ է նա երջանիկ ամուսնուց, վեց երեխաների հորից, հաջողակ գրողից վերածվում աշխարհի դժբախտագույն մարդուն: Համենայնդեպս մինչև այն պահը, երբ կգիտակցի իր նոր աշխարհատեսությունն ու կհետևի դրան մինչև կյանքի վերջը: Այդ պահից Տոլստոյը, հակառակը, կսկսի երջանիկ մարդ համարել իրեն, որը ձեռք է բերել մի ամբողջ կյանք: Իսկ ձեռք չբերածներին, ներառյալ կնոջն ու ընտանիքի շատ անդամների, չասենք դժբախտ, բայց խելագար կհամարի: Այդպես էլ կզրի օրագրում. իրեն թվում է՝ ապրում է ինչ-որ խենթանոցում, որը ղեկավարում են խելագարները:

Ուշ տարիքում Տոլստոյը պնդում էր, որ իր հոգեկոր հեղաշրջումը հանկարծ չի եղել: Նա ասում էր, որ ճգնաժամ, բեկում իր կյանքում չի եղել, որ ինքը միշտ ձգտել է կյանքի իմաստը փնտրելուն և միայն բարդ արտաքին երևույթներն ու իրադարձությունները և իր կրքերն ու գայթակղություններն են հետաձգել կյանքի հարցերի լուծման այդ որոշումը, և ուժերը կուտակվում էին մեկ հզոր ներքին պոռթկման մեջ, որն էլ կործանեց քայքայված շինությունը:

Բայց այդ «քայքայված շինությունը», պարզվեց, ընտանիքն էր. գրակա-նությունն ու գյուղատնտեսությամբ զբաղվելը, այսինքն այն ամենը, ինչով Տոլստոյն ապրում էր 1862-ից մինչև 1877 թվականը (հենց 1877 թվականն էր նա համարում իր հոգևոր ճգնաժամի սկիզբը): Արժե՞ր, արդյոք, ավերել «քայքայված շինությունը»: Հանուն ինչի՞: Երկի թե սա ամենացավոտ հարցն է:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Հանուն ինչի՞:

Փաստը փաստ է: Մինչև 1877 թվականը Տոլստոյն ապրում էր գրական հաջողության ու ընտանեկան երջանկության ալիքի կատարին: Յոթանասունականների վերջից և՛ ինքը դժբախտացավ, և՛ դժբախտացրեց իր ընտանիքը:

Տոլստոյն ինքը դա կոչում էր կյանքի կանգ: Ասես մարդն ապրում էր ու հանկարծ դադարեց ապրել, ընդ որում՝ ֆիզիկապես առողջ մնալով: Նա այդ զգացումը նկարագրել է իր առաջին կրոնական ստեղծագործության մեջ՝ «Խոստովանություն»-ում.

«...ինձ հետ սկսեց ինչ-որ տարօրինակ բան կատարվել. նախ տարակուսանքի, կյանքի կանգի պահեր էի ունենում, կարծես չգիտեի՝ ինչպես ապրեմ, ինչ անեմ, և ինձ կորցնում ու վիատվում էի: Բայց դա անցնում էր, ու շարունակում էի ապրել առաջվա նման: Հետո տարակուսանքի այդ րոպեները սկսեցին ավելի ու ավելի հաճախ կրկնվել ու միշտ՝ նույն կերպ: Կյանքի այդ դադարները միշտ արտահայտվում էին նույնատիպ հարցերով՝ ինչո՞ւ, իսկ հետո ի՞նչ... Հարցերն այնքան հիմար, պարզունակ, մանկական էին թվում: Բայց հենց դիպա նրանց ու փորձեցի լուծել, անմիջապես համոզվեցի, նախ, որ մանկական ու հիմար հարցեր չեն, այլ ամենակարևոր ու խոր հարցերը կյանքում, և երկրորդ՝ որ ես չեմ կարող, որքան էլ մտածեմ, չեմ կարող լուծել դրանք: Նախքան Սամարայի կալվածքով, որդուս դաստիարակությամբ, գիրք գրելով զբաղվելը, պետք է իմանամ՝ ինչու եմ դա անելու: Տնտեսությանը վերաբերող մտքերի մեջ, որոնք այդ ժամանակ զբաղեցնում էին ինձ, հանկարծ հայտնվում է մի հարց. «Լա՛վ, կունենաս 6000 դեսյատին Սամարայի մահանգում, 300 գլուխ ձի, իսկ հետո՞»: Եվ ես կատարելապես ապշում էի ու չգիտեի՝ հետո ինչ մտածեմ: Կամ սկսելով մտածել, թե ինչպես դաստիարակեմ երեխաներին, ինձ ասում էի. «Ինչի՞ համար»: Կամ մտածելով այն մասին, թե ժողովուրդն ինչպես կարող է հասնել բարեկեցության, հանկարծ ասում էի ինձ. «Իսկ ի՞նչ գործն է»: Կամ մտածելով այն փառքի մասին, որն ինձ կբերեն իմ ստեղծագործությունները, ասում էի. «Լա՛վ, դու Գոգոգոլից, Պուշկինից, Շեքսպիրից, Մոլիերից, աշխարհի բոլոր գրողներից փառաբանված կլինես և ի՞նչ»: Եվ ոչինչ ու ոչինչ չէի կարողանում պատասխանել: Կյանքս կանգ էր առել: Ես կարող էի շնչել, ուտել, խմել, բայց կյանք չկար...»:

Սոֆյա Անդրեևնան նկատել էր ամուսնու տրամադրության այդ փոփոխությունները: Նա օրագրում և փոքր քրոջն ուղարկած նամակներում գրում է.

«Լյովոնչկան մի տեսակ մռայլ է. կամ օրեր շարունակ որսի է, կամ լուռու-մունջ նստում է մյուս սենյակում ու կարդում, կամ վիճում է, այն էլ խոժոռ և անուրախ»:

«Լյովոնչկան անընդհատ ասում է, որ իր համար ամեն ինչ վերջացած է, շուտով կմեռնի, ոչինչ չի ուրախացնում, կյանքից այլևս սպասելիք չկա»:

«Լյովոնչկան լրիվ թաղվել է իր գրությունների մեջ: Աչքերը սառած, տա-րօրինակ են, համարյա չի խոսում, լրիվ ուրիշ աշխարհից է դարձել ու բա-ցարձակ անկարող է մտածել կենսական հարցերի մասին»:

Այդ ի՞նչ գրություններ են: «Աննա Կարենինան» ավարտված է, հրա-տարակված ու անասելի հաջողություն է բերել հեղինակին՝ նրան նույն շարքում և անգամ բարձր դնելով այդ ժամանակի գլխավոր գրական հեղի-նակության՝ Տուրգենևի հետ: Բայց այդ հաջողությունը չի ջերմացնում Տոլս-տոյին: Այլ մտքեր են տանջում նրան: Ծանր, անհասկանալի, երբեմն՝ պար-զապես սարսափելի մտքեր:

Յոթ տարի անց, 1884 թվականին, երբ հոգևոր հեղաշրջումը փաստորեն վերջնականապես կատարված կլինի, նա կհիշի «արգամասյան սարսա-փը» և կփորձի բացատրել, թե ինչն էր տանջում իրեն այդ ճգնաժամի սկզ-բում: Դա մահվան վախն էր:

Ինչո՞ւ ապրել, եթե պիտի մեռնես:

«Ես փախչում եմ ինչ-որ սարսափելի բանից ու չեմ կարողանում փախ-չել: Ես միշտ ինձ հետ եմ և հենց ես էլ տառապանք եմ ինձ համար: Ահա ես, ահա ամբողջովին: Ոչ Պենգալի, ոչ որևէ այլ կալվածք ոչինչ չի ավելացնի ու ոչինչ չի նվազեցնի ինձնից: Իսկ ես, ես ձանձրացրել եմ ինձ, անտանելի, տառապալի: Ես ուզում եմ քնել, մոռացության տրվել ու չեմ կարողանում: Չեմ կարողանում հեռանալ ինձնից... Դուրս եկա միջանցք՝ մտածելով հե-ռանալ նրանից, ինչն ինձ տանջում էր: Բայց այն դուրս եկավ իմ ետևից ու մթագնեց ամեն ինչ: Ինձ համար նույնքան, նույնիսկ ավելի սարսափելի էր: «Սա ինչ հիմարություն է, ասացի ինձ: Ինչո՞ւ եմ տխուր, ինչի՞ց եմ վախե-նում»: - «Ինձնից,- անլսելի պատասխանեց մահվան ձայնը,- ես այստեղ եմ»... («Խելագարի նոթերը»):

Յոթանասունական թվականների կեսին, հոգևոր ճգնաժամի նախօրեին, տեղի ունեցավ «արգամասյան սարսափի» կրկնությունը: Տոլստոյը մոլոր-վեց... սեփական տանը: Հանկարծ զհշերվա կեսին լավեց նրա սարսափելի ճիչը. «Մո՛նյա, Մո՛նյա»: Կինը մոմը ձեռքին նետվեց աղաղակի ուղղու-թյամբ և սանդուղքին տեսավ տազնապած ու դողացող ամուսնուն: «Ի՞նչ է պատահել, Լյովոնչկա»: Ամուսինը պատասխանեց, «Ոչինչ, մոլորվել եմ...»:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Յոթանասունականների վերջին Տոլստոյը մոտենում է իր հիսնամյակին: Ամրակազմ, ուժեղ և, ընդհանրապես, առողջ մարդ է, այրական ուժերի ծաղկման շրջանում: Բայց... մոլորվել է: Կյանքը զրկվել է իմաստից: Նա հասկանում է, որ կյանքն, ըստ էության, հենց մահն է:

Եվ այն միշտ քո մեջ է:

Այն հենց դու ես:

Բայց այդ դեպքում ինչի՞ համար է այս ամենը:

Կարող ես քո մեջ հաղթել ազահությանը, փառասիրությանը: Կարող ես, վերջապես, հաղթահարել հեշտասիրությունը՝ թույլ չտալով, որ բնագործ հաղթի քեզ: Բայց ինչ անես մահվան հետ:

Այդ հարցի պատասխանը նա դեռ չունի: Դրա համար էլ, ինչպես Լևինը, որսի է գնում առանց հրացանի՝ վախենալով, որ կապանի իրեն: Իրենից քաքցնում է թոկերը՝ վախենալով, որ կկախվի...

### *Գայթակցություն և խելագարություն*

Երբեմն զարմանքով հարցնում են՝ մի՞թե Դոստոևսկին ու Տոլստոյը ծանոթ չեն եղել: Ինչպե՞ս: Չէ՞ որ ապրել են նույն ժամանակում ու համարյա նույն սերնդից էին. Դոստոևսկին ծնվել է 1821, իսկ Տոլստոյը՝ 1828 թվականին: Ընդհանուր ընկեր են ունեցել՝ քննադատ և փիլիսոփա Ն.Ն.Ստրախովը: Ընդհանուր, այսպես ասենք, ընդդիմախոս ու մրցակից էլ կար, որի հետ հարաբերությունները երկուսի համար էլ հենց սկզբից չստացվեցին, Ի.Ս. Տուրգենևը: Երկուսն էլ, թեև տարբեր ժամանակներում, «սնվում էին» «Սովրենննիկ» ամսագրի հրատարակիչ ու գլխավոր խմբագիր Ն.Ա. Նեկրասովի մոտ:

Վերջապես, ուղղակի տրամաբանական էր, որ աշխարհի երկուսն մեծագույն արձակագիրները ծանոթանային, եթե վիճակվել էր ծնվել նույն երկրում ու ժամանակում: Ծիշտ է, Տոլստոյն ապրում էր Տուլայի մոտ, իսկ Դոստոևսկին՝ Պետերբուրգում կամ արտասահմանում: Բայց Տոլստոյը գործերով այցելում էր Պետերբուրգ, իսկ Յասնայա Պոլյանա, նրա մոտ գալիս էին նաև Դոստոևսկուց ավելի ցածր կարգի գրողներ, և նա հաճույքով ընդունում էր բոլորին: Մի՞թե Ստրախովի մտքով չէր անցել հաղիլեցնել մեր երկու հանճարներին: Մի՞թե հենց իրենց մտքով չէր անցել, որ պետք է հանդիպել ու խոսել: Մանավանդ, որ երկուսն էլ կարդում ու գնահատում էին իրար: Հետաքրքիր հանդիպում կլիներ:

Ո՛չ, նրանց չհաջողվեց ծանոթանալ: Չնայած երկու անգամ այդպիսի հնարավորություն կար:

«Խոստովանությունում» Տոլստոյն աղոտ հիշատակում է Սամարայի նահանգում ձեռք բերած ինչ-որ վեց հազար դեսյատին հողի և այնտեղ պահվող ձիերի մասին: Դա Տոլստոյի «շահադիտական» քայլն էր. որոշել էր հարստանալ սամարյան խոպան ու էժան հողերի հաշվին, որոնք, ինչպես նա ենթադրում էր (ու չսխալվեց), «ոսկերեր» էին ու ժամանակի հետ ավելի էին քանկանալու:

Սամարյան տափաստանները յուրատեսակ Մեքքա էին Տոլստոյի համար: Առաջին անգամ այնտեղ մեկնեց 1862 թվականին՝ ապագա աներ Ա.Ե. Բերսի խորհրդով: Թոքախտի ուրվականը միշտ հետապնդել էր Տոլստոյին. դա տոհմային հիվանդություն էր: 1862 թվականին Տոլստոյը վատ զգաց ու հաստատապես որոշեց, որ տառապում է թոքախտով: Բերսը խորհուրդ տվեց մեկնել բաշկիրյան տափաստանները՝ կումիսով բուժվելու: Տափաստանային կյանքը դուր եկավ Տոլստոյին: Կիսամերկ ու շատ սիրած ձիու կաթի մշտական օգտագործումից կիսահարբած Տոլստոյը ման էր գալիս տափաստանում կամ էլ շրջում՝ կարճահասակ, բայց դիմացկուն «բաշկիրցիներ» հեծած, և համարյա անտիկ հերոս էր զգում իրեն: Նրա կարծիքով՝ տափաստանը «Հերոդոտոս էր բուրում»:

Ասեմք, նա դա կգրի յոթանասունական թվականներին: 1871 թվականից սկսած ու մինչև հոգևոր հեղաշրջումը նա համարյա ամեն տարի գնում է սամարյան տափաստանները՝ կումիսով բուժվելու: Հետո սկսում է ինքնուրույն կումիս պատրաստել իր խուտորներից մեկում:

Ուղևորություններից մեկի ընթացքում նրան ուղեկցում էր մեծ տղան՝ Սերգեյը: Նա հուշերում նկարագրում է, թե հայրն ինչպես էր տառացիորեն վերածնվում տափաստանում՝ և՛ հոգեպես, և՛ ֆիզիկապես: Բաշկիրների շրջանում նա իսկական հերոսի համարում ուներ: Մի անգամ, օրինակ, քանկարժեք մրցանակներով ձիարշավ կազմակերպեց, իսկ ձիարշավից առաջ՝ «մահակներով մրցում»: Ըմբիշները նստում էին դեմ դիմաց, պինդ բռնում մահակի ծայրերից ու փորձում մեկմեկու կտրել գետնից: «Հայրս հաղթեց բոլորին,- հիշում էր Սերգեյ Լվովիչը,- բացի համայնքի ավագից. պարզապես չկարողացավ բարձրացնել նրան, որովհետև ավագն առնվազն տասը փութ էր կշռում (160 կիլոգրամ-Պ.Բ.)»:

Սամարյան հողերն այնքան դուր եկան Տոլստոյին, որ նա որոշեց կալվածք ձեռք բերել այդտեղ և ձիերի հատուկ ցեղ բուծել՝ «բաշկիրցիներին» խաչասերելով «անգլուտիների» հետ: «Բաշկիրցիները» դիմացկուն են, բայց ցածրահասակ, «անգլուտիներն» արագոտն են ու գեղեցիկ: Ինչպես երագում ր Տոլստոյը՝ կատարյալ նժույզ կստացվեր ռուսական հեծելագործի

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

համար: Այդ «պրոժեկտից», ի դեպ, բան դուրս չեկավ, ինչպես և Տոլստոյի բազում այլ մտահղացումներից:

Բայց սամարյան հողերը ձեռք բերելը քիչ էր մնում բերել Տոլստոյի ու Դոստոևսկու ծանոթանալուն:

1878 թվականի մարտի տասին, Պետերբուրգում, որտեղ նա ձևակերպեց բարոն Բիստրոմից սամարյան հողերի գնման կայքագիրը, Տոլստոյը գնաց նորաձև դարձող քսանչորսամյա փիլիսոփա, Պետերբուրգի համալսարանի մագիստրոս Վլադիմիր Սոլովյովի՝ ռուսական սիմվոլիզմի ապագա «հոր» հրապարակային դասախոսությանը: Դասախոսությանը ներկա էին նաև Ստրախովն ու Դոստոևսկին: Թվում էր ամեն ինչ նրա օգտին է, որ և՛ Տոլստոյի, և՛ Դոստոևսկու հետ մտերիմ Ստրախովը հանդիպեցներ արդիականության երկու խոշորագույն արձակագիրներին, որոնք վաղուց էին ուզում հանդիպել:

Բայց Ստրախովը դա չարեց:

Դոստոևսկու այրու՝ Աննա Գրիգորևնայի հուշերում դա բացատրվում է նրանով, որ Տոլստոյն ինքն էր Ստրախովին խնդրել իրեն ոչ մեկի հետ չծանոթացնել: Դա հարազատ էր Տոլստոյի պահվածքին ատելի Պետերբուրգում, որտեղ իրեն օտար էր զգում:

Բայց ինչո՞ւ դասախոսությունից հետո էլ Ստրախովը չսասց կամ չգրեց Տոլստոյին, որ Դոստոևսկին սրահում էր: Հետագայում, Ստրախովի մահվանից հետո, տեղեկանալով Աննա Գրիգորևնայի պատմածի մասին, Տոլստոյը զայրացավ՝ ինչո՞ւ Ստրախովն իրեն չէր ծանոթացրել Դոստոևսկու հետ: Վարկած կա, որ Ստրախովին ձեռնտու չէր նրանց ծանոթացնել: Չէ՞ որ նրանց միակ միջնորդն էր և նամակագրություն ուներ երկուսի հետ էլ՝ նամակներում Տոլստոյին պատմելով Դոստոևսկու ու Դոստոևսկուն՝ Տոլստոյի մասին: Նրանց անձնական ծանոթության դեպքում միջնորդն ավելորդ կդառնար: Ստրախովը կհայտնվեր «երրորդ ավելորդի» վիճակում:

Բայց դա թույլ վարկած է:

Հետաքրքիր էր Դոստոևսկու արձագանքը Տոլստոյի հոգևոր հեղաշրջմանը: 1880 թվականի մայիսին, Մոսկվայում, Պուշկինի հուշարձանի հանդիսավոր բացման ժամանակ Դոստոևսկին կլարդաց նշանավոր «Պուշկինյան բանախոսությունը»: Տոլստոյը հավաքված գրողների մեջ չէր: Այդ ընթացքում Մոսկվայում լուր էր տարածվել, թե Տոլստոյը... խելքը թոցրել է: Մայիսի 27-ին Դոստոևսկին գրում է կնոջը. «Այսօր Գրիգորովիչը հայտնեց, որ Լև Տոլստոյի մոտից վերադարձած Տուրգենևը հիվանդ է, իսկ Տոլստոյը համարյա, կամ գուցե լրիվ խելագարվել է»:



Դա նշանակում է, որ Տոլստոյի «խելագարության» մասին լուրը, հնարավոր է, Տուրգենևը տարածած լիներ: Մինչ այդ նա այցելել էր Տոլստոյին Յասնայա Պոլյանայում, հաշտվել էին, ու տանտերը պատմել էր իր նոր հայացքների մասին: Բայց ի՞նչ թեթևությամբ էին ընդունել երբայր-գրողներն այդ լուրը, եթե հաջորդ օրը կնոջը գրած նամակում Դոստոևսկին հայտնում է. «Լև Տոլստոյի մասին Կատկովն էլ է հաստատել, որ ասում են, թե նա լրիվ խելագարվել է: Յուրևն<sup>25</sup> ինձ համոզում էր գնալ նրա մոտ, Յասնայա Պոլյանա. մինչև այնտեղ ու հետ՝ երկու օրից էլ պակաս ճանապարհ է: Բայց չեմ գնա, չնայած շատ հետաքրքիր կլիներ»:

Տոլստոյի «խելագարության» մասին լուրերից անհանգստացած՝ նա որոշեց ռիսկի չդիմել: Այդպիսով, գրողների ծանոթանալու ևս մի հնարավորություն բաց թողնվեց... Բարձրաշխարհիկ շարախոսության պատճառով:

Սակայն Տոլստոյն ու Դոստոևսկին մի ընդհանուր բարեկամ էլ ունեին՝ կոմսուհի Alexadrine Տոլստայան: 1881 թվականի ձմռանը, Դոստոևսկու մահվանից մի քիչ առաջ, նա շատ էր մտերմացել գրողի հետ: «Նա սիրում է Չեզ.- գրում էր Տոլստոյին,- շատ է հարցուփորձ անում Չեր մասին, շատ բան է լսել Չեր իսկական ուղղության մասին և, վերջապես, հարցրեց ինձ՝ գրավոր ոչինչ չունե՞մ, որից ինքը ավելի լավ կծանոթանար այդ ուղղությանը, որը նրան չափազանց հետաքրքրում է»: Alexadrine-ը նրան տվեց Տոլստոյի՝ 1881 թվականի փետրվարի նամակները, գրված այն շրջանում, երբ նա, բոլորի կարծիքով, «խելագարվել էր»: Նա «Հուշերում» գրում է.

«Դեռ աչքիս առաջ է Դոստոևսկին, ինչպես էր բռնել գլուխն ու հուսահատ կրկնում էր. «Այն չէ, այն չէ...»: Նա չէր համակրում Լև Նիկոլաևիչի մտքերից ոչ մեկին»:

Միանգամայն այլ էր Տոլստոյի արձագանքը Դոստոևսկու մահվանը: 1881 թվականի փետրվարի 5-ին (Դոստոևսկին մահացավ հունվարի 28-ին) Լև Նիկոլաևիչը Ստրախովին, ի պատասխան նրա նամակի, Տոլստոյը գրում է. «Ես երբեք չեմ տեսել այդ մարդուն և ուղիղ կապ չեմ ունեցել նրա հետ, ու հանկարծ, երբ նա մահացավ, հասկացա, որ ինձ ամենահարագատ, ամենաթանկ, ամենահարկավոր մարդն էր... Ու երբեք մտքովս չէր

25. Մերգեյ Անդրեևիչ Յուրև (1821-1888) - գրող, թարգմանիչ, Մոսկվայի համալսարանին կից ռուս գրականության սիրահարների ընկերության նախագահ, Տոլստոյի ծանոթը:

անցել չափվել նրա հետ. երբեք: Չէ՞ որ այն ինչ նա անում էր (լավը, իսկականը, որ անում էր), այնպիսին է, որ ինչքան ավելի աներ, այնքան լավ կզգայի: Արվեստն իմ նախանձն է հարուցում, խելքը՝ նույնպես, բայց սրտի գործը միայն բերկրանքն է: Ես նրան հենց այդպես էլ իմ ընկերն էի համարում, և այլ կերպ չէի մտածում, քան որ կհանդիպեմք, բայց չվիճակվեց, և դա արդեն իմն է: Եվ հանկարծ ճաշին,- մենակ էի ճաշում՝ ուշացել էի,- կարդում եմ. մահացել է: Ինչ-որ հենարան կորցրի: Շփոթվեցի, իսկ հետո պարզ դարձավ, թե որքան թանկ էր նա ինձ համար, և ես լալիս էի, ու հիմա էլ լալիս եմ»:

Գրանից երկու օր առաջ Ստրախովը գրում է Տոլստոյին. «Նա միայնակ (ընթերցողների վրա ունեցած ազդեցությամբ) հավասար էր մի քանի ամսագրի: Նա մեկուսացած էր համարյա համատարած թշնամական գրականության մեջ ու համարձակ խոսում էր այն մասին, ինչը վաղուց ի վեր ընդունված էր որպես «գայթակղություն և խելագարություն»:

Բայց ի՞նչն էր «գայթակղություն և խելագարություն» այդ ժամանակվա գրական միջավայրի տեսանկյունից: Հենց քրիստոնեության քարոզը՝ որպես վերջին ատյանի ճշմարտության:

Գրողների կարծիքով՝ մահից առաջ այդ խելագարությամբ էր բռնվել Գոգոլը, դա դարձել էր Դոստոևսկու «խելագարության» պատճառը, ու հենց դրանից էր «խելքը թոցրել» Տոլստոյը: Եվ Տոլստոյն իսկապես Դոստոևսկուց ընդունում է «խելագարության» էստաֆետը: Պատահմամբ, թե ոչ, բայց հենց նրա մահից հետո, 1881 թվականին գրած «Ինչով են կենդանի մարդիկ» պատմվածքից էլ սկսվում է «ուշ» Տոլստոյը, որի՝ կյանքի, կրոնի, արվեստի վերբերյալ հայացքները հակառակ էին այսպես կոչված «լուսավորյալ» հասարակության մեջ ընդունված հայացքներին:

### *Հրաժարում Եկեղեցուց*

Հաստատուն հանգմունք կա, մանավանդ եկեղեցական միջավայրում, թե Տոլստոյի առճակատումը Ռուս ուղղափառ եկեղեցու հետ ծագել է համարյա թե վաղ պատանեկության շրջանում: Որ հոգևոր հեղաշրջումն ամենասկզբից նշանակում էր խզում քրիստոնեական հավատի ընկալման եկեղեցական ավանդույթից: Որ, այլ կերպ ասած, Տոլստոյը միշտ հերետիկոս է եղել: Տոլստոյի եկեղեցական քննադատները որպես անառարկելի փաստ նշում են նրա խոստովանությունը, որ արդեն 15 տարեկանում, Կազանում խաչի փոխարեն Ժամ Ժակ Ռուսոյի պատկերով մեղալյոն էր կրում: Բայց որտեղի՞ց է այս խոստովանությունը:

Պ.Ի.Բիրյուկովը հայտնում է, որ 1901 թվականին Տոլստոյին է այցելել ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Բուայեն (Paul Boyer), որը հետո ժնկյան «Լը Տենպս» թերթում հրապարակեց Յասնայա Պոլյանայում անցկացրած երեք օրերի տպավորությունները: Այդտեղ բերվում է Տոլստոյի բանավոր խոսքը.

«Ռուսոյի հանդեպ անարդար էին, նրա մտքի վեհությունը չընդունվեց, նրան ամեն կերպ զրպարտում էին: Ես կարդացել եմ ողջ Ռուսոն, բոլոր տասներկու հատորները, ներառյալ «Երաժշտության բառարանը»: Ես ավելի քան հիացած էի նրանով. աստվածացնում էի նրան: Ես 15 տարեկանում վզիս նրա պատկերով մեղալյոն էի կրում՝ խաչի փոխարեն»:

Բայց այստեղ բազմաթիվ առարկություններ են ծագում:

Նախ. այդ խոստովանությունը ստացել ենք երկրորդ ձեռքից: Երկրորդ. չմոռանանք, որ որք մնացած Տոլստոյ եղբայրներին դաստիարակել են աստվածավախ հորաքույրերը, որոնցից մեկի՝ Յուշկովայի մոտ, Կազանում ապրել են քառասունական թվականներին, երբ պատանի Լևն իբր պարանոցին կրում էր Ռուսոյի դիմանկարը: Յուշկովան կարո՞ղ էր, արդյոք, չտեսնել զարմիկի աստվածանարզ արարքը: Եթե նկատել է, ինչպե՞ս է արձագանքել դրան: Մենք դրա մասին ոչինչ չգիտենք: Երրորդ. Բուայենի հետ զրույցում Տոլստոյը փոքր-ինչ նվազեցրել է իր այն ժամանակվա տարիքը, իրականում նա առաջին անգամ Ռուսո կարդացել էր 18 տարեկանում:

Մենք Տոլստոյի թանգարանային հավաքածուներից ոչ մեկում «մեղալյոնով» Ռուսո չենք գտնի: Փոխարենը՝ մինչ օրս էլ Յասնայա Պոլյանայում են պահվում Տոլստոյների ընտանիքի 20 սրբապատկերները: Դրանցից հինգը պատկանել են անձամբ Լև Նիկոլաևիչին: Միայն Տոլստոյի՝ Եկեղեցուց հրաժարվելուց հետո դրանք «աքսորվեցին» Սոֆյա Անդրեևնայի սենյակը: Այդ սրբապատկերներից մեկն առանձնապես կարևոր է:

Դա նույնիսկ սրբապատկեր էլ չէ, այլ Աստվածամոր փոքրիկ պատկերը՝ «Երեք բերկրանք»՝ Տ.Ա. Յորգոլսկայայի նվերը սիրելի զարմիկին: Տոլստոյի մոտ դրա հայտնվելու պատմությունն այնքան էլ հստակ չէ: Սոֆյա Անդրեևնայի պատմածով՝ սրբապատկերն ընծայվել է, երբ Տոլստոյը մեկնում էր Ղրիմյան պատերազմին: Դա հիշեցնում է «Պատերազմ և խաղաղության» այն տեսարանը, երբ իշխանուհի Մարյան Անդրեյ եղբորը համոզում է վերցնել սրբապատկերը, որը պատերազմում դեռևս նրա պապիկն էր կրել: Իշխանն այդ ժամանակ բացարձակ աթեիստ էր, բայց հանուն քրոջ համաձայնում է:

Մակայն Կովկասյան պատերազմի շրջանում զարմիկի հետ Յորգոլսկայայի նամակագրությունից տեղեկանում ենք, որ դեռևս 1853 թվականի մայիսին նա զարմիկին է ուղարկել «Երեք բերլրանք» սրբապատկերը: Կից նամակում Յորգոլսկայան գրում էր. «...քեզ հանձնում են Նրա (*Աստվածամորը - Պ.Բ.*) սուրբ հովանավորությանը, թող Նա քեզ օգնական լինի կյանքի բոլոր հանգամանքներում, թող Նա ղեկավարի քեզ, սատարի քեզ, պահպանի և ողջ ու առողջ վերադարձնի մեզ: Այս ջերմ աղոթքը զօրուզիչ էր հղում են Նրան քեզ համար, իմ սիրելի զավակ, իմ պաշտելի Լյովա»:

Հենց այդ սրբապատկերը, ոչ թե Ռուսոյի դիմանկարը պարանոցին Տոլստոյը երկու պատերազմ անցավ: Եվ ո՛չ գնդակը, ո՛չ սուրը չդիպան նրան:

Յորգոլսկայան խորապես հավատացյալ կին էր: Եվ իշխանուհի Մարյայի եկեղեցական տրամադրությունները (ինչպես և սև ճառագող աչքերը) «Պատերազմ և խաղաղությունում» արտագրված են նրանից, ոչ թե Տոլստոյի մորից: Մակայն իշխանուհի Մարյայի գլխավոր նախատիպն, անկասկած, մայրն էր, որին Տոլստոյը չգիտեր, բայց հիշում էր, ու, հետևաբար, ստիպված էր հորինել նրա կերպարը: Շատ կարևոր է, թե «Պատերազմ և խաղաղության» հեղինակը որ ուղղությամբ էր իդեալականացնում նրան:

Անվիճելի է նաև, որ հոգևոր ճգնաժամի սկզբում Տոլստոյը ոչ միայն հրաժարվում է Եկեղեցուց, այլև գալիս է դեպի Եկեղեցի: Տոլստոյն իր կասկածների ու հիասթափությունների ծովում, ինչպես փրփուրից, կառչում է Եկեղեցուց:

1877 թվականի հուլիսի քսաներկուսին նա առաջին անգամ մեկնում է Օպտինյան անապատ (եթե չհաշվենք դեռ երեխա ժամանակվա այցելությունը, երբ այնտեղ հուղարկավորում էին հորաքույր Օստեն-Սակենին): Դա համընկնում է հոգևոր ճգնաժամի սկզբի հետ: Նա մի քանի ժամ գրուցում է օպտինյան նշանավոր սրբահայր Ամբրոսիի հետ: Թե ինչի մասին էր խոսքը՝ չգիտենք: Այս հարցում կենսագիրների կարծիքները բաժանվում են. Վ.Ա. Ժդանովը համարում է, որ խոսքը վերաբերել է ընտանեկան բախմանը: Ն.Ն. Գուսևը գրում է, որ 1878 թվականին ոչ մի ընտանեկան առճակատում էլ չկար: Այդ տարի ամուսինները մեծ տագնապով սպասում էին երեխայի (Անդրեյի) ծննդին՝ նախորդ երեք երեխաների մահվանից հետո: Այդ ժամանակ Տոլստոյը դեռ «հերետիկոս» չէր, դեռ չէր գրել իր կրոնական ստեղծագործություններից ոչ մեկը:

Սոֆյա Անդրեևնայի հուշերից գիտենք, որ Տոլստոյը հանդիպումից «շատ գոհ էր մնացել՝ ընդունելով սրբահայրերի իմաստությունն ու հայր

Ամբրոսիի հոգևոր ուժը...»:

Տոլստոյի հետ Օպտինյան անապատ էր մեկնել Ն.Ն. Ստրախովը: Հետո (ճիշտ է, դա հայտնի է ուրիշի պատմածով) նա Տոլստոյին գրում է. «Մուրբ հայրերը աննկարագրելի գովում են Չեզ, Չեր մեջ սբանչելի հոգի տեսնում: Նրանք ձեզ համեմատում են Գոգոլին հետ ու հիշում, որ նա ահավոր հպարտ էր իր խելքով, իսկ Դուք ընդհանրապես զուրկ եք այդ հպարտութունից...»:

Գոգոլը երեք անգամ եղել էր Օպտինյան անապատում: Բայց նրա ջերմ վերաբերմունքը Եկեղեցու հանդեպ, ըստ էության, նախամահու գործողություն էր: Իսկ Տոլստոյը մենաստան է գալիս ուժերի ծաղկման շրջանում: Եկեղեցու համար անշուշտ կարևոր էր իր կողմը գրավել այդպիսի գրողին, որն արդեն «մտքերի տիրակալ» էր հռչակվել: Խոսքն այստեղ նույնիսկ շահի մասին չէր (չնայած դա նույնպես կարող էր լինել), այլ այն մասին, որ Եկեղեցու և հասարակության խզումը թուլացնում էր Ռուսաստանը, «ճոճում նավակն» ու դարձավ ռուսական հեղափոխության հիմնական պատճառներից մեկը: Այսպես թե այնպես, Տոլստոյին Օպտինյան անապատում ընդունեցին ուրախությամբ ու հույսով, որ Գոգոլից հետո Եկեղեցուն է վերադարձել ևս մեկ նշանավոր ռուս գրող:

Թե այնտեղ ինչ է կատարվել իրականում, մենք, համեմայնդեպս, ստույգ չգիտենք: Օպտինյան մենաստանի տարեգրության մեջ Տոլստոյի առաջին այցելության մասին ընդամենը մի քանի բառ կա: Գրողը 1887 թվականին օրագիր չէր վարում: Սակայն բոլոր կողմնակի վկայությունները հաստատում են, որ իր ճգնաժամի սկզբում Տոլստոյը սիրալիր է ընդունվել Ռուսաստանի հոգեպես ամենաուժեղ մենաստաններից մեկում: Եվ նա գնահատեց դա: Ռուս ուղղափառ եկեղեցու հետ առճակատման մասին ոչ մի խոսք չկար:

Բայց ահա մի նշանակալի օրինակ: Մեկ տարի անց առաջին անգամ Օպտինյան անապատ է գալիս Ֆ.Մ. Դոստոևսկին: Եվ նրան նույնպես փիլիսոփա է ուղեկցում՝ դեռ երիտասարդ Վլադիմիր Սոլովյովը: Դրանից ոչ շատ առաջ մեծ դժբախտություն էր պատուհասել Դոստոևսկու ընտանիքին. նրանց կրտսեր որդի Ալյոշան մահացել էր ընկնավորությունից՝ սարսափելի հիվանդությունից, որ ժառանգել էր հորից: Մենաստանում անցկացրած երկու օրը և հանդիպումները սրբահայր Ամբրոսիի հետ անջնջելի տպավորություն թողեցին Դոստոևսկու վրա:

Աննա Գրիգորևնա Դոստոևսկայան հիշում է. «Ֆյոդոր Միխայլովիչը Օպտինյան անապատից վերադարձավ մի տեսակ խաղաղված ու երկար

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

պատմում էր մենաստանի սովորույթների մասին, որտեղ նրան վիճակվել էր մնալ երկու օր: Այն ժամանակի նշանավոր սրբահայր Ամբրոսիի հետ Ֆյոդոր Միխայլովիչը հանդիպել էր երեք անգամ՝ մի անգամ բազմության մեջ ու երկու անգամ էլ՝ առանձին, և այդ գրույցներից խոր ու սրտառուչ տպավորություն էր ստացել: Երբ Ֆյոդոր Միխայլովիչը սրբահորը պատմել էր իրենց ընտանիքին հասած դժբախտության և իմ շատ բուռն վշտի մասին, սրբահայրը նրան հարցրել էր՝ ես հավատացյալ՞ եմ արդյոք, ու երբ Ֆյոդոր Միխայլովիչը դրական էր պատասխանել, խնդրել էր ինձ փոխանցել իր օրհնությունը, ինչպես և այն խոսքերը, որ հետո վեպում սրբահայր Չոսիման ասում է վշտահար մորը... Ֆյոդոր Միխայլովիչի պատմություններից երևում էր, թե ինչ խորունկ ռազմավար ու պայծառաստեպ էր բոլորից հարգված «սրբահայրը»: Սրբահայր Ամբրոսիին Ֆյոդոր Միխայլովիչին խոստացել էր «աղոթքներում հիշատակել Ալյոշային» և «տխարությունն իմ», ինչպես և «հիշատակել ու ողջություն խնդրել մեզ ու մեր երեխաների համար»: Ֆյոդոր Միխայլովիչը խիստ զգացված էր սրբահոր հետ գրույցից և մեզ համար աղոթելու խոստումից»:

Միանգամայն այլ տոնայնություն... Ավելի անձնական, ջերմ: Եվ հայր Ամբրոսիին պատահմամբ չի դառնում սրբահայր Չոսիմայի նախատիպը «Կարամազով եղբայրներ»-ում: Տոլստոյի ստեղծագործության մեջ մենք սրբահայրերի երկու վառ կերպար գիտենք՝ հայր Սերգիև ու Ֆյոդոր Կուզմիչը՝ «Սրբահայր Ֆյոդոր Կուզմիչի հետմահու նոթեր»-ում: Ընդ որում, երկրորդ վիպակը կապված է Տագանուգում Ալեքսանդր I-ի կեղծ մահվան կասկածելի լեգենդի հետ, իբր հրամայելով իր փոխարեն ներկայացնել հանգուցյալ «կրկնակին»՝ կայսրն ուխտի է գնում Միբիր:

Տոլստոյը հայր Ամբրոսիի հետ հանդիպել է երեք անգամ: 1881 թվականին նա Օպտինյան անապատ է գնում ոտքով, գեղջուկի հագուստով, ծառա Սերգեյ Արբուզովի հետ: Ուզում էր տեղավորվել ամենաաղքատ ուխտավորաց տանը, բայց վանականներն արագ ճանաչեցին նրան և ուղեկցեցին լավագույն հյուրատան լավագույն սենյակը: Բայց այս անգամ հանդիպումը Ամբրոսիի հետ ավելի շուտ հիասթափեցրեց Տոլստոյին: Նա Սուրբ գրքի շուրջ վեճի բռնվեց սրբահոր հետ և նույնիսկ սկսեց մերկացնել նրան չիմացության մեջ: Դա արդեն լրիվ ուրիշ Տոլստոյ էր՝ «բողոքական» ու վիճող:

Նրանց երրորդ՝ վերջին հանդիպումը տեղի ունեցավ 1890 թվականին: Եվ այդ ժամանակ Տոլստոյն օրագրում գրառում արեց, որ «սրբահայրն անտանելի խղճուկ է իր գայթակղություններով»: Աստված, գրում էր նա, մի-

այն երիտասարդ մոնթերի հետ է, իսկ սրբահայրերի հետ սատանան է: Տոլստոյի հետ այս վերջին հանդիպումը վշտացրեց հայր Ամբրոսիին: Սրբահայրն արդեն կարդացել էր նրա կրոնական ստեղծագործությունները կամ լսել էր դրանց մասին: Նա Տոլստոյին խնդրեց զոջալ իր հերետիկոսական հայացքների համար: Բայց Տոլստոյը նույնիսկ օրհնությունից խուսափեց խցից դուրս գալուց առաջ: «Շատ հպարտն է,- ասաց Ամբրոսին Տոլստոյի հեռանալուց հետո:- Այլև երբեք մեզ մոտ չի գա»: 1877 թվականին նա հակառակն էր ասում: 1891 թվականին հայր Ամբրոսին վախճանվեց: Իսկ մեկ տարի առաջ Տոլստոյը մտահղացել էր «Հայր Մերգին»: Բայց այդ վիպակը ոչ թե ճգնավորության փառաբանումն, այլ մեղակցումն է:

Բայցևայնպես Տոլստոյի կապը Ռուս ուղղափառ եկեղեցու հետ նրա հոգևոր հեղաշրջման սկզբում բավական երկար տևեց: Ավելին, հեղաշրջումն էլ սկզբում, ըստ էության՝ արտահայտվում էր նրանով, որ Տոլստոյը եկել է դեպի Եկեղեցի:

Դա մարտահրավեր էր այն հասարակական միջավայրին, որտեղ նա մինչ այդ ապրում էր: Չէ՞ որ ոչ մոսկովյան ու պետերբուրգյան ազնվականության ոլորտում, ոչ «Սովրեմեննիկի» գրողների շրջանում ճշմարիտ եկեղեցական հավատը չէր ծաղկում, հնացած, «միջնադարյան» մի բան էր համարվում: Տաճար էին գալիս կամ ծիսակարգով, կամ անհրաժեշտաբար: Առանց դրա անհնար էր պսակադրվել, օրինականացնել երեխայի ծնունդը և նույնիսկ հուղարկավորվել սովորական գերեզմանոցում: Ազնվականների վերաբերմունքը հոգևորականների, «տերտերների» հանդեպ լավագույն դեպքում ներողամիտ էր: Երբ տոներին մաղթանքի կարգ էին կատարում կալվածատերերի տներում, նրանց սեղանի մոտ չէին հրավիրում, այլ ուտելիքն ուղարկում էին դուրս, ինչպես մշակներին: Ծեր տարիքում Տոլստոյը պատմում էր, որ դա միշտ զարմացրել է իրեն, և իրենց ընտանիքում հոգևորականներին միշտ սեղանի շուրջ էին նստեցնում: Բայց ինչո՞ւ: «Ժողովրդավարական նկատառումներից» ելնելով:

Երբ քույրը՝ Մարիա Նիկոլաևնան միանձնուհի դարձավ, Մերգեյ Նիկոլակիչը նրա միանձնուհու կնգուղին «ցիլինդր» էր ասում: Ինքը քսան տարի չէր խոստովանել ու հաղորդություն չէր ստացել, այնպես որ, մի անգամ նրան ներկայացավ հոգևոր կոնսիստորիայի ներկայացուցիչն ու պահանջեց, որ կատարի ուղղափառ քրիստոնյայի իր պարտքը, որպիսին պաշտոնապես համարվում էր: Այդ այցելության մասին Մերգեյ Նիկոլակիչը գայությոթով գրում էր Լև եղբորը:

Ո՛չ Լևը, ո՛չ Մերգեյը հիմնավոր եկեղեցական դաստիարակություն չէին

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

ստացել: Չնայած, ինչպես գրում է Ն.Ն. Գուսևը, Տոլստոյի մոր կենդանության օրոք «Ուխտավոր տղամարդիկ ու կանայք հյուրընկալ օբևան էին գտնում Յասնայա Պոլյանայի տանը»: Երբ Յասնայա Պոլյանայում բնակություն հաստատեց հորաքույր Օստեն-Սակենը, նրանց թիվն ավելի մեծացավ: «Կիսախենթ Մարյա Գերասիմովնան էր, նաև ոմն Օլգա Ռոմանովնա, Ֆեդոսեյա, Ֆյոդոր, Եվդոկիմուշկա և ուրիշներ: Նիկոլայ Իլյիչը չէր ընդդիմանում քրոջը ուխտավորներին ընդունելու հարցում, սակայն, իրեն հատուկ ողջամտությամբ, չէր կիսում նրա խանդավառ վերաբերմունքն այդ մարդկանց հանդեպ»:

«Խոստովանություն»-ում Տոլստոյը պնդում է, որ մինչև հոգում կատարված հեղաշրջումն ինքը աթեիստ է եղել: Դա, իհարկե, ճիշտ չէ: Մենք նրա օրագրերից գիտենք, որ և՛ Կովկասում, և՛ Մասստոպոլում, և՛ ընտանեկան կյանքի առաջին տարիներին նա մեկ անգամ չէ, որ աղոթքով, երբեմն կրքոտ աղոթքով դիմել է Աստծուն: Նա Աստծո հետ կենդանի հաղորդակցման կարիք ուներ, փնտրում էր Նրան: Հոգևոր ճգնաժամի սկզբում Տոլստոյը որոշեց, որ Նրան կգտնի Եկեղեցում:

Ու ջախջախիչ պարտություն կրեց:

Դժվար, իսկ երբեմն և անհնար է դատել, թե մեղքն ումն էր: Կարելի է հասկանալ Տոլստոյի հոգեկան ու մտավոր անհատականության առանձնահատկությունները: Նա չէր կարող հենց այնպես հավատալ ամեն ինչի: Պետք է համոզված լիներ, որ եթե Աստված մարդկանց բանականություն է տվել, ապա ոչ նրա համար, որ մթազնեն ծիսական ծառայությունների ու պարտականությունների մեքենայական կատարումով: Նա կենդանի շփում էր փնտրում Աստծո հետ և ուզում էր մտքով հասկանալ Նրան: Ինչո՞ւ է ստեղծել մարդուն: Ինչի՞՞ համար են երկրային տառապանքները: Եթե Աստված ինքը գթասրտություն է, կյանքը պիտի բերկրանք լինի, ոչ թե մահվան սպասում: Եթե չգիտենք՝ ինչ է մեզ սպասում մահից հետո, ինչպե՞ս կարող ենք կյանքի բարոյախոսությունը կառուցել հիմքի վրա, որը չգիտենք: Դա նույնն է, թե գուշակություն անես սուրճի մրուրով: Այդ և բազմաթիվ այլ, շատ ավելի բարդ հարցեր հանգիստ չէին տալիս նրան: Դրանցով լեցուն է Տոլստոյի օրագիրը հոգևոր հեղաշրջումից հետո ու մինչև կյանքի վերջին օրերը: Տոլստոյը կատարելապես ազատ մտքի մարդ էր: Եթե իր դրած հարցի պատասխանը չէր գտնում, շարունակում էր փնտրել: Նա չէր կարող պարզապես ասել իրեն՝ ես այ սա չեմ հասկանում, ուրեմն արի հավատամ նրան, ինչ ասում են ուրիշները (օրինակ, Եկեղեցին): Արդյունքում պարզվեց, որ Տոլստոյն ու Եկեղեցին «անհամատեղելի» են:



Նա ինքն էլ տանջվում էր դրանից: «Քանի անգամ եմ,- գրում է «Խոստովանությունում»,- նախանձել գեղջուկներին նրանց անգրագիտության և անգիտության համար: Հավատի այն դրույթներում, որոնցից ինձ համար ակնհայտ անիմաստություններ էին բխում, նրանց համար կեղծ ոչինչ չկար. նրանք կարող էին ընդունել դրանք ու հավատալ ճշմարտությանը, որին ես չէի հավատում: Միայն ինձ` դժբախտիս էր պարզ, որ ճշմարտությունը նրբագույն թելերով միահյուսված է ստի հետ, ու ես չեմ կարող այդ տեսքով ընդունել այն»:

Կարելի է ասել, որ Եկեղեցի էլ սկզբում եկել էր` հավատալով ժողովրդի զգացողությանը, որին անսահման սիրում էր: Բայց Տոլստոյը «ժողովուրդ» չէր: Նա մնում էր Տոլստոյ` ազատ մարդ:

Սոֆյա Անդրեևնան, որն ինքն էլ հավատացյալ էր, ապշած էր նրանից, թե ամուսինն ինչպիսի կրքով փարվեց Եկեղեցուն:

«Նա այնքան խիստ էր պաս պահում, որ Չարչարանաց շաբաթվա վերջին գուտ տարեկանի հաց էր ուտում ու ջուր խմում և ժամանակի մեծ մասն անցկացնում էր եկեղեցում,- հիշում էր Սոֆյա Անդրեևնան, թե ինչ էր կատարվում 1877 թվականին:- Երեխաներին էլ վարակեց դրանով, ու ես էլ, նույնիսկ հղի, խստագույն պահքի մեջ էի»:

Կոչակովյան եկեղեցու քահանայի դուստրը (այդ եկեղեցու տարածքում էր Տոլստոյների ընտանեկան գերեզմանոցը) բժիշկ Մակովիցկուն պատմել է. «Պատահում էր` հայրս գնում է առավոտյան ժամերգության, իսկ Լև Նիկոլակիչն արդեն նստած է քարին: Հայրս հաճախ էր գնում Լև Նիկոլակիչի տուն, վերադառնում գիշերվա ժամը երկուսին: Նրանք Լև Նիկոլակիչի հետ շատ էին խոսում հավատի մասին»:

Գլխավոր պրիստավ Վ.Ռ. Չակսկին մի պատմություն էր լսել գյուղացիներից. «Մեր պարոններն, ուրեմն, կոմսն` ընտանիքով, ամեն տոնի եկեղեցում են. գալիս են առավելապես ընտանիքավորները, կոմսն ինքը` միշտ ոտքով... Ժամերգությունը սկսելուց առաջ է գալիս: Մենք գեղջուկներով նստոտում ենք եկեղեցու մուտքի մոտ, նայում ենք, ու կոմսն էլ նստում է մեզ հետ, այդպես նստում զրից է անում, խոսում, ուրեմն, զործերի կամ աստվածայինի մասին»:

Իսկ ծառա Մերգեյ Արբուզովը, որը 1881 թվականին Տոլստոյի հետ գնացել էր Օպտինյան անապատ, հիշում էր, որ 1877 թվականին, վաղ առավոտյան եկեղեցի գնալիս կոմսն ինքն էր թամբում ձին, որ չարթնացնի ձիապաններին:

«Կատարելով Եկեղեցու ծեսերը,- գրում էր Տոլստոյը «Խոստովանու-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

թյունում»,- ես սանձում էի բանականությունս և ինձ հանձնում այն ավանդույթին, որ ուներ ողջ մարդկությունը: Ես մեկանում էի իմ նախնիների հետ, սիրելիներիս հետ՝ հորս, մորս, պապերիս, տատիկներիս: Բոլոր նախնիներն էլ հավատում ու ապրում էին, և ինձ ծնունդ տվեցին: Ես մեկանում էի նաև իմ կողմից հարգված բոլոր միլիոնավոր ժողովրդական մարդկանց հետ»:

Բայց Տոլստոյի համառ միտքը չէր կարող կանգ առնել այն բանի վրա, որ վարվում է բոլորի պես, հետևաբար ճիշտ է վարվում: Հաղորդության առաջին իսկ փորձը, տևական ժամանակ դրանից հրաժարվելուց հետո, հոգեպես վանում է նրան: «Երբեք չեմ մոռանա այդ օրն ապրած տառապալի զգացումը, երբ երկար տարիներից հետո առաջին անգամ հաղորդություն էի ընդունում: Ծիսակատարություններ, խոստովանություն, կանոններ, այդ ամենն ինձ հասկանալի էր և բերկրալի գիտակցություն էր արթնացնում իմ մեջ, որ կյանքի իմաստը բացվում է ինձ համար: Բուն հաղորդությունն ինձ բացատրում էի որպես ի հուշ Քրիստոսի կատարվող ծես, որը նշանակում էր ազատում մեղքից և Քրիստոսի ուսմունքի կատարյալ ընկալում: Եթե նույնիսկ այդ բացատրությունն արհեստական էլ էր, ես չէի նկատում արհեստականությունը: Ինձ համար բերկրանք էր՝ նվաստանալով ու հնազանդվելով հոգևոր հոր՝ շարքային երկշտ քահանայի առաջ, դուրս տալ հոգուս ողջ կեղտը՝ զղջալով արատներիս համար, այնպես բերկրալի էր բոլոր մտքերով ձուլվել կանոնների աղոթքները գրած հայրերի ձգտումներին, այնպես ցնձագին էր միասնացումը բոլոր հավատացողների ու հավատացյալների հետ, որ չէի զգում իմ բացատրության արհեստականությունը: Բայց երբ մոտեցա Թագավորական դարպասներին, ու քահանան ստիպեց կրկնել, որ հավատում եմ, թե այն, ինչ կլլելու եմ, ճշմարիտ մարմին ու արյուն է, սիրտս ծակեց. դա պարզապես կեղծ նոտա չէր, դա այնպիսի մեկի խիստ պահանջն էր, որն, ակնհայտորեն, երբեք չի էլ իմացել, թե ինչ է հավատը...»:

Տոլստոյի համար «անասելի ցավոտ» էր: Բայց՝ «ես իմ հոգում զգացնումնք գտա, որը օգնեց ինձ դիմանալ այդ ամենին: Դա ինքնանվաստացման ու հնազանդվելու զգացումն էր: Ես հնազանդվեցի, կուլ տվի այդ արյունն ու մարմինը առանց սրբազօնության զգացման, հավատալու ցանկությամբ, բայց հարվածն արդեն հասցվել էր: Եվ ի սկզբանե իմանալով՝ ինչ է սպասում ինձ, արդեն հաջորդ անգամ գնալ չէի կարող»:

Իսկ ի՞նչ էր պատահել այդ օրը: Ո՛չ պասերը, ոչ աղոթքները, ո՛չ խոստովանությունը, ո՛չ ինքնին հաղորդությունը նրան չէին վանում, հակառակը,

բերկրանքի զգացում էին արթնացնում: Նա բերկրանք էր ապրում վարքագրություն, մանավանդ Հայսմավուրք ընթերցելուց: Սակայն քահանայի պահանջը՝ հաստատել, որ գիմին ու հացը Հիսուսի մարմինն ու արյունն են, «անասելի ցավոտ» էր: Այստեղ Տոլստոյի ինտելեկտուալ խիղճը սայթաքում է և դա ընդունել չի կարող:

Սա Տոլստոյի «Խոստովանության» ամենահանելուկային տեղն է: Անհնար է կարծել, որ «երկչոտ» գյուղական քահանան հաղորդության եկած պարոնտիրոջը «ստիպում» է իր ետևից «կրկնել» ինչ-որ բան, առավել ևս, որ հաղորդության պահին, ճիշտն ասած, լքում են: Ավելի շուտ խոսքը Հովհան Ոսկեբերանի աղոթքի մասին է, որը քահանան (ու նրա հետ ծխականները) կարդում են հաղորդությունից առաջ: Այդ աղոթքում այսպիսի բառեր կան. «Հավատում եմ նաև, որ սրբազան Մարմինն է Քո, և սա ամենասուրբ Արյունն է Քո»: Ըստ երևույթին հենց այդ բառերն էլ շփոթմունքի մեջ էին զգել Տոլստոյին: Բայց ինչո՞ւ: Մի՞թե երբեք չէր լսել:

Երկրորդ կարևոր պահը, որ Տոլստոյին վանեց Եկեղեցուց, տաճարում իշխանավորների ու զորքի համար աղոթելու պահանջն էր: Տոլստոյն Ավետարանում այդպիսի պահանջ չէր գտնում: Ու նորից բանականությունն ապստամբում է, դիմադրում բռնությանը, չի կարողանում կուրորեն ընդունել այն, ինչը չի տեսնում ու չի հասկանում:

«Հորս ուղղափառությունն անսպասելի ավարտվեց,- հիշում է Իլյա Լվովիչը:- Պահք էր: Այդ ժամանակ հորս ու պաս պահել ցանկացողների համար պասուց ճաշ էր պատրաստվում, իսկ փոքր երեխաներին և դաստիարակչուհիներին ու ուսուցիչներին մսեղեն էր մատուցվում: Սպասավորը հենց նոր էր բերել մսի կոտլետներով սկուտեղը, դրել սեղանիկին ու ներքև իջել՝ էլի ինչ-որ բանի ետևից: Հանկարծ հայրս դիմում է ինձ (ես միշտ նրա կողքին էի նստում) և սկուտեղը ցույց տալով՝ ասում է.

- Իլյո՛ւշա, հապա ինձ փոխանցիր այդ կոտլետները:
- Լյո՛վոչկա, մոռացե՞լ ես, որ հիմա պահք է,- միջամտեց մամա՛ն:
- Չէ, չեմ մոռացել: Ես այլևս պաս չեմ պահելու, և խնդրում եմ ինձ համար այլևս պասուց ոչինչ մի պատվիրիր:

Ի սարսափ բոլորիս նա ուտում ու գովում էր կոտլետները: Տեսնելով հորս այդպիսի վերաբերմունքը՝ շուտով մենք էլ սառանք պահքի հանդեպ, և մեր աղոթական տրամադրությունը փոխարինվեց կատարյալ կրոնական անտարբերությամբ»:

*Հրաժարում գրականությունից*

Հոգևոր ճգնաժամի հետ Տոլստոյը նաև լուրջ ստեղծագործական ճգնաժամ է ապրում: «Աննա Կարենինա»-ից հետո, որն ավարտեց 1877 թվականին, մինչև 1881 թվականը Տոլստոյը գեղարվեստական համարյա ոչինչ չի գրում: Այդ շրջանի նրա գլխավոր ստեղծագործությունը «Խոստովանությունն» է՝ ապշեցուցիչ ազնիվ, անկեղծ, ի սրտե, բայց ընդհանուր ոչինչ չունեցող «գեղեցիկ գրականության» հետ:

Տոլստոյը թողնում է սկսված կամ հղացված գործերը: Այն ամենից, որ արդեն գրվել ու փառք է բերել, հրաժարվում է հրապարակային արհամարհանքով: Նույնպիսի արհամարհանքով է արտահայտվում գրական սրբությունների, նույնիսկ Պուշկինի մասին: Դա երբեմն խուլիզանություն է հիշեցնում: Տոլստոյն իրեն enfant terrible-ի՝ անտանելի երեխայի պես է պահում:

Գրական երկրպագուների ներկայությամբ ծաղրական արտահայտություններով է խոսում «Պատերազմ և խաղաղություն» ու «Աննա Կարենինա» վեպերի մասին: Օրինակ, Մոսկվայում, Պոլիվանովի գիմնազիայի տնօրենի առանձնասենյակում, ուր եկել էր որդիներին՝ Իլյային ու Լևին տեղավորելու համար: Առանձնասենյակում էին տնօրենի կինն ու Տուլայի գիմնազիայի նախկին ուսուցիչ, Տոլստոյի հին ծանոթ Մարկովը:

Մարկովը հարցրեց՝ ճի՞շտ է, որ հիմա ոչինչ չի գրում:

- Ճիշտ է,- մարտահրավերով պատասխանեց Տոլստոյը:- Եվ ի՞նչ:

- Բայց անկարելի է,- գոչեց Մարկովը,- հասարակությանը զրկել ձեր ստեղծագործություններից:

Տոլստոյը հանգիստ պատասխանեց.

- Եթե ես զզվելի բաներ եմ արել, մի՞թե պետք է շարունակեմ անել: Այ ջահել ժամանակ գնում էի գնչուների մոտ, մի՞թե նորից պիտի նույնն անեմ:

Վիրավորված Եվգենի Մարկովը հարցրեց.

- Ինչպե՞ս կարելի է նման համեմատություններ անել:

Ու նորից լսեց Տոլստոյի անվրդով ձայնը.

- Իսկ եթե իմ ստեղծագործությունները ցնդաբանություն են համարում ու «գեղարվեստով» զբաղվելը՝ անվայել գո՞րծ:

Պոլիվանովի կնոջ հուշերից հետևում է, որ Տոլստոյը միայն սեփական ստեղծագործությունները չէր ցնդաբանություն համարում:

«- Այ, թեկուզ Պուշկինը: Ամեն կարգի ցնդաբանություն է գրել: Նրան հուշարձան կանգնեցրին: Կանգնած է հրապարակում, ինչպես սենեկապանը զեկույցով, որ սեղանը պատրաստ է... Գնացեք բացատրեք գեղջուկին այդ արձանի նշանակությունը, ու թե Պուշկինն ինչու է դա վաստակել»:

1881 թվականին Տոլստոյը գրում է «Ինչով են մարդիկ կենդանի» պատմվածքը թե խրատական հեքիաթը:

Աստված հրեշտակ է ուղարկում երկիր՝ հասկանալու, թե ինչով են մարդիկ կենդանի: Նա ենթավարպետ է աղքատ կոշկակարի մոտ ու հասկանում է, որ նրանք «կենդանի են միայն սիրով: Ով սիրո մեջ է, Աստծո մեջ է, և Աստված նրա մեջ է, որովհետև Աստված սեր է»:

Դա լավ կհնչեր «Պատերազմ և խաղաղություն» Պլատոն Կարատակի շրթունքներից: Սակայն Պլատոն Կարատակն ընդամենը վեպի կերպարներից մեկն է ու ոչ գլխավորը: Իսկ պատմվածքում զգացվում է, որ համընդհանուր սիրո քարոզը, այսպես ասած՝ սիրո վարդապետությունը դարձել է Տոլստոյի վարդապետությունը, և այն միակն է, որին նա հավատում է կամ առնվազն ցանկանում է հավատալ:

Ընդամին, «Ինչով են մարդիկ կենդանի» պատմվածքը հանգուցային ստեղծագործություն է Տոլստոյի համար: Դրանից է սկսվում նոր Տոլստոյը, ոչ նա, որ հասարակությանը հիացնում էր «Մանկություն»-ով, «Կազակներ»-ով, «Պատերազմ և խաղաղություն»-ով ու «Աննա Կարենինա»-ով: Տոլստոյը, որը հրաժարվել է գրականությունից՝ բառի առտնին իմաստով:

1881-ից մինչև 1885 թվականը՝ կրկին փաստացի քառամյա ընդմիջում: Տոլստոյն ամբողջովին թաղվում է հոգևոր ստեղծագործությունների մեջ՝ «Ինքնատիկ աստվածաբանության հետազոտություն», «Չորս Ավետարանների միավորում, թարգմանություն և հետազոտություն», «Որն է իմ հավատը», «Ուրեմն ինչ անենք»: Այս ստեղծագործություններից ոչ մեկը Ռուսաստանում չի հրատարակվում: Գրաքննության պայքարը Տոլստոյի դեմ սկսվում է նրանից, որ «Ռուսսկայա միսլ» ամսագրի մայիսյան համարից հանվում է «Խոստովանության» արդեն պատրաստի շարվածքը: Նույն ճակատագիրն է ունենում նաև «Ուրեմն ինչ անենք» հոդվածը՝ գրված Մոսկվայի մարդահամարի տպավորության տակ, որին Տոլստոյը մասնակցել էր՝ ընտրելով ամենաաղքատ շրջանները: «Աշխատանքի բաժանման» ջախջախիչ քննադատության հետ (Տոլստոյն այն խաբեություն էր համարում, որի դեպքում հարուստ բնակչության չնչին մասն ապրում է չքավոր գյուղացիների հաշվին) հոդվածում առկա էր նաև եկեղեցական դոգմատների քննադատություն, մասնավորապես՝ Քրիստոսի արյունով մարդկության մեղքերի քավության մասին: Դա նաև ընդհանուր առմամբ քաղաքակրթության քննադատություն է և որևէ կապ չունի ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև սովորական իմաստով հրապարակախոսության հետ:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Դա յուրահատուկ տղստոյական ժանր է:

Տոլստոյը նույնիսկ հույս չունի, որ օրինական կարգով կիրապարակի «Որն է իմ հավատը» հոդվածը և դիմում է նրան, ինչն ավելի ուշ «սամիզ-դատ» կկոչեն. Կուշներովի տպարանում նա իր ծախսով բրոշյուրը տպագրում է 50 օրինակով: Հոդվածը տարածվում է Մոսկվայի ու Պետերբուրգի ազնվականական շրջանակներում ու մեծ հաջողություն վայելում: Տոլստոյն, ըստ էության, դառնում է կրոնական այլախոհ:

Այդ ամենը շատ վախեցրեց Սոֆյա Անդրեևնային: Նա բոլորովին չէր ուզում կրոնական այլախոհի կին լինել: Չմոռանանք, որ ուղղափառությունը ոչ թե պարզապես «դավանանքներից մեկն» էր, այլ Ռուսաստանի պետական գաղափարախոսությունը, և անհամաձայնությունը Եկեղեցու ու նրա դրոշմների հետ հավասարեցվում էր քաղաքական հանցագործության:

Սկզբում Սոֆյա Անդրեևնան ընդհանրապես չի հասկանում՝ ինչով է զբաղվում ամուսինը: Քրոջն ուղարկած նամակում հայտնում է, որ Լյովուչկան «հանդարտ է և ինչ-որ հոդվածներ է գրում»: Սակայն «Դոգմատիկ աստվածաբանության հետազոտությունը» մաքրագրելիս հանկարծ վերցնում է ձեռագիրը, տանում ամուսնու աշխատասենյակ ու հայտարարում, որ հրաժարվում է արտագրել, որովհետև դա իրեն չափազանց «անհանգստացնում» է: Իրականում ոչ թե անհանգստացնում, այլ վախեցնում էր:

Հոդվածը սկսելով միտրոպոլիտ Մակարիոսի «Ուղղափառ աստվածաբանության ներածություն» և «Ուղղափառ-դոգմատիկ աստվածաբանություն» աշխատությունների քննադատությունից, որոնք հանրամատչելի գրականություն չէին, այլ հոգևոր ճեմարանների և ակադեմիաների դասագեքեր, Տոլստոյը հետո էջեր շարունակ նույնիսկ ոչ թե քննադատում, այլ մերժում է Եկեղեցին որպես այդպիսին: Եվ ոչ թե պարզապես մերժում է, այլ մեղադրում չարամիտ դարավոր ստի մեջ:

«Ուսուցանող Եկեղեցու մասին ուսմունքը ներկայումս զուտ քրիստոնեությանը թշնամի տեսություն է: Նահանջելով ուսմունքի ոգուց, ուսմունքը խեղաթյուրել է այն աստիճանի, որ հասել է դրա ժխտմանը՝ նվաստության փոխարեն վսեմություն, աղքատության փոխարեն՝ ճոխություն, չղատելու փոխարեն՝ բոլորի խստագույն դատապարտում, վիրավորանքը ներելու փոխարեն՝ ատելություն, պատերազմներ, չարին չհակառակվելու փոխարեն՝ մահապատիժներ: Եվ բոլորը ժխտում են բոլորին: Էլ ի՞նչ եք ուզում: Քրիստոսի եկեղեցու անունը չի կարող փրկել նրան: Եկեղեցին բառ է, խաբեության անունը, որի միջոցով որոշ մարդիկ ուզում են իշխել մյուսների

վրա: Եվ այլ Եկեղեցի չկա ու չի կարող լինել: Միայն այդ խաբեության, բռնության եկեղեցիներով անցած ճշմարիտ ուսմունքի վրա են կառուցվել այն այլախոսակ դոգմաները, որոնք աղճատում ու թաքցնում են ողջ ուսմունքը: Եվ Հիսուսի աստվածայնությունը, և՛ Սուրբ Հոգին, և՛ Երրորդությունը, և՛ Կույս Աստվածածինը, և՛ բոլոր տարօրինակ ծեսերը հենց դրա համար էլ գաղտնախորհուրդ են կոչվում, որովհետև իմաստ չունեն և ոչ մեկին պետք չեն, բացի սրբության խորհուրդից, որը պետք է տերտերներին՝ ձու հավաքելու համար»:

Դա գրականություն չէր, հրապարակախոսություն ու աստվածաբանություն չէր: Դա բացահայտ պատերազմի հայտարարություն էր:

Բայց գուցե չափազանցում ենք: Գուցե Տոլստոյն ընդհանրապես չէ՞ր մտածում, որ պատերազմ է հայտարարում:

«...Ես ինքս,- գրում է նա հորաքույր Ա.Ա. Տոլստայային 1882 թվականի մարտի 3-ին,- խաբեբաների մերկացումն եմ, այն սուտ մարգարեների, որոնք գառան մորթի հազած կզան, և որոնց կճանաչենք պտուղներից: Ուստի մերկացնողի և մերկացվողի միջև համաձայնություն լինել չի կարող: Մեղադրվողները միայն երկու ելք ունեն՝ արդարանալ և ապացուցել, որ իմ բոլոր մեղադրանքներն անարդար են... Պետք է արդարանալ ամեն կարգի բռնությունների համար՝ մահապատիժների, սպանությունների, մարդասպանության համար հավաքած և ասես Աստծուն ծաղրելով քրիստոսասեր գորականություն հորջորջվող ամբոխի, բոլոր սարսափների համար, որ հիմա կատարվում են բանտերում՝ ձեր հավատի օրհնությամբ, կամ էլ ապաշխարել: Եվ ես գիտեմ, որ խաբեբաները ո՛չ կարդարանան, ո՛չ կզոջան: Ո՛չ դուք, ո՛չ նրանք չեք ուզում զոջալ, որովհետև այդ դեպքում անհնար կլինի ծառայել մամոնային ու համոզել զինքը, թե ծառայում ես Աստծուն: Խաբեբաները կանեն այն, ինչ միշտ են արել՝ կռեն, բայց երբ արդեն անհնար կլինի լռել, նրանք կսպանեն ինձ...»:

Հորաքրոջն ուղարկած երկրորդ նամակում Տոլստոյը կրկին պնդում է, որ ապագայում իրեն անպայման «կսպանեն»: «Նրանք կռեն, քանի հնարավոր է, իսկ երբ արդեն անհնար կլինի, նրանք կսպանեն մեզ... Եվ ես կարող եմ ֆիզիկապես գոհվել, բայց Քրիստոսի գործը չի կործանվի, և ես չեմ ուրանա այն, որովհետև միայն դրանում է իմ կյանքը՝ ասել այն, ինչ հասկացել եմ ողջ կյանքիս մոլորություններով ու տառապանքներով»:

Հասկանալի է, որ այդ հոգեվիճակում Տոլստոյի հոգսը գրականությունը չէր: Նա իրեն միայնակ ռազմիկ էր տեսնում, որը ելել է Եկեղեցու համաշխարհային դավադրության դեմ և պատրաստվում է այդ ճակատամարտին

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

տալ կյանքի մնացած մասը: Մինչև որ նրան «կսպանեն»:

Այդ բորբոքված, տենդագին վիճակում Տոլստոյը մի արարք է կատարում, որն այսօր էլ մեղսագրվում է նրան որպես ամենասրբապիղծը ոչ միայն Եկեղեցու վերաբերմամբ, այլև՝ ընդհանրապես քրիստոնեության: Օգտվելով հին հունարենի իմացությունից, որը աներևակայելի կարճ ժամանակում (մեկուկես ամիս) սովորել էր 1871/72 թվականների ճմռանը, նա Կտակարանի սեփական թարգմանության համարձակ նպատակ է դնում: Նրա կարծիքով՝ գոյություն ունեցող սինոդական թարգմանությունը սխալ էր և թաքցնում էր Քրիստոսի ճշմարիտ ուսմունքը: Այդպես 1880-1881 թվականներին հայտնվում է «Չորս կտակարանների միավորումն ու թարգմանությունը» նախնական վերնագրով գիրքը, որից հետո պատրաստվեց կրճատ տարբերակը՝ «Ավետարանի համառոտ շարադրանքը»: Դժվար է որոշել այդ ստեղծագործության ժանրը:

Մինչ օրս հավատացյալների շրջանում մի առասպել է պտտվում, թե Տոլստոյը համարձակվել է գրել «սեփական Կտակարանը»: Իբր նրա գոռոզությունն այնքան հեռուն է գնացել, որ որոշել է մրցակցության մեջ մտնել առաքյալ-ավետարանիչների՝ Հովհաննեսի, Մատթեոսի, Մարկոսի ու Դուկասի հետ: Իրականում Տոլստոյը ոչ մի սեփական Ավետարան չի գրել և չէր կարող գրել այն պարզ պատճառով, որ ամեն ինչ հիմնվում էր արդեն գրված տեքստի հունարեն տարբերակի վրա:

Բայց Տոլստոյը, թերևս, ավելի հանդուգն էր վարվել, ոչ թե վերստին թարգմանել, այլ խմբագրել էր Ավետարանը՝ դուրս թողնելով այն ամենը, ինչը իրեն անհասկանալի, տարատեսակ փոխբացատրող մեկնություններ հարուցող էր թվացել, և արդյունքում, ժամանակակից բանասեր Իգոր Վոլգինի խոսքով, Ավետարանում ոչնչացրել է ոչ միայն ողջ մետաֆիզիկական, այլև պոեզիան:

Ընդամին, նրան առաջնորդում էր ճշմարտության հատիկը գտնելու բարի ցանկությունը, և դա բնավ գոռոզություն չէր, ինչպես ընդունված է համարել: Տոլստոյն ուզում էր Ավետարանի այնպիսի թարգմանություն անել, որը կվերացներ տարբեր քրիստոնեական եկեղեցիների և աղանդների դավանաբանական թշնամանքը: Դրա համար էլ վերնագրի բանալի-բառը ոչ թե «թարգմանությունն» էր, այլ «միավորումը»: Ոչ միայն Քրիստոսի կյանքի չորս շարադրանքների միավորումը, այլև բոլոր քրիստոնյա հավատացյալների միավորումը գիտակցական հիմքի վրա:

«Իրականում,- գրում է նա «Թարգմանության» երկրորդ հրատարակության առաջաբանում,- հազարավոր ավանդություններ կան, և յուրաքանչ-



յուրը ժխտում, անհծում է մյուսին ու ճշմարիտ համարում իրենը. կաթոլիկները, լյութերականները, բողոքականները, կալվինիստները, շեքերները, մորմոնները, հունական ուղղափառները, հնաժխականները, երիցականները, երիցամերժները, մոլեկանները, մեն(ն)ոնիստները, բապտիստները, կրտաղանդավորները, դուխոբորները և այլն, բոլորն իրենց հավատի մասին նույն կերպ պնդում են, որ այն միակ ճշմարիտն է ու միայն նրա մեջ է Սուրբ Հոգին, որ նրա գլուխը Քրիստոսն է, ու մնացած բոլորը մոլորված են»:

Սակայն Ավետարանի բազմաթիվ կտորներ անհնար է բանականությամբ հասկանալ. դրանց կարելի է կամ անվերապահորեն հավատալ, կամ չհավատալ, կամ հետաձգել այդ հարցերը, խույս տալ դրանցից՝ խոստովանելով, որ բանականությունը բավարար չէ դրանց պատասխանելու համար: Տոլստոյն այդպես վարվել չէր կարող:

Բնականաբար, «Թարգմանությունը» Ռուսաստանում չտպագրվեց: Այն առաջին անգամ հրատարակվեց 1891 թվականին, արտասահմանում: Առաջին հրատարակության առաջաբանում Տոլստոյը խոստովանում է, որ այդ աշխատանքը «բնավ ավարտուն չէ ու բազում թերություններ ունի»: Բայց ի՞նչ է նշանակում «ավարտուն չէ»: Ըստ էության այն հասցվել է ավարտին: Խոսքը, թերևս, տեքստի նոր խմբագրման ու սրբագրման մասին էր: Բայց Տոլստոյը հենց այդ ի վիճակի չէր անել 1891 թվականին, երբ տպագրվում էր «Թարգմանությունը», որովհետև «այն կենտրոնացած, մշտապես խանդավառ (*ընդգծումն իմն է-Պ.Բ.*) հոգեկան լարվածությունը, որ զգում էի այդ տևական աշխատանքի ողջ ընթացքում, արդեն չի կարող կրկնվել...»:

Տոլստոյը խոստովանում էր, որ ստեղծագործությունը գրել է ուժեղագույն հոգեկան հուզմունքի վիճակում, որը խանդավառություն էր անվանում: 1902 թվականին, արտասահմանյան երկրորդ հրատարակության առաջաբանում նա գրում է. «Ես այս գիրքը գրել եմ ինձ համար անմոռանալի խանդավառության (*ընդգծումն իմն է-Պ.Բ.*) շրջանում, այն գիտակցությունից, որ Ավետարաններում արտահայտված քրիստոնեական ուսմունքն այն տարօրինակ, ինձ իր հակասություններով չարչարող ուսմունքը չէ, որ ուսուցանում է Եկեղեցին, այլ կյանքի հստակ, խորունկ ու պարզ ուսմունք, որը համապատասխանում է մարդու հոգու բոլոր գերագույն պահանջներին»:

Ընդամին, դեռևս Ա.Ս. Պուշկինն էր ըմբոստանում խանդավառությունն ու ոգեշնչումը շփոթելու դեմ: «Ոգեշնչումը հոգու հակումն է տպավորություն-

ների կենդանի ընկալմանը, հետևաբար՝ հասկացությունների արագ ըմբռնմանը, ինչն էլ նպաստում է դրանց բացատրությանը»,- գրում էր նա:

«Թարգմանության» հսկա հատորը՝ մեկնաբանություններով, գրվել էր կարճ ժամանակում: Դա աներևակայելի մտավոր լարում էր, որը կարելի է համեմատել, թերևս, միայն «Պատերազմ և խաղաղություն»-ը գրելու հետ: «Թարգմանությունը» ստեղծելիս իր վիճակի մասին Տոլստոյը գրում էր Ն.Ն. Ստրախովին. «Անընդհատ աշխատում եմ ու չեմ կարողանում պոկվել և հաճախ երջանիկ եմ իմ աշխատանքով, բայց շատ հաճախ գլուխս թուլանում է»:

Ամուսնու մտավոր գերհոգնածության մասին նույն Ստրախովին գրում էր նաև Սոֆյա Անդրեևնան. «Լև Նիկոլաևիչն իրեն լրիվ տանջահար է արել աշխատանքով, ահավոր հոգնում է ու գլխացավեր ունի, ինչն ինձ շատ է անհանգստացնում»: Նույնը հայտնում էր քրոջը. «Լյովոչկան... հաճախ է քողոքում գլխից, որովհետև շատ է աշխատում»:

Տոլստոյին անհրաժեշտ էր, որ հաստատեր՝ Ավետարանի իմաստը համեմատական է կյանքի այն ընկալմանը, որին հանգել է ինքը: Բայց նա դրան հանգել է ոչ միայն ու ոչ այնքան Ավետարանի, որքան իր կյանքի ողջ փորձի միջոցով: Իսկ ինչու էր պետք Ավետարանը հարմարեցնել անձնական հոգևոր փորձին: Չէ՞ որ այն գումարվում էր բազում բաղադրիչներից՝ մանկությունից, հավատացյալ հորաքույրների հետ շփումներից, Կովկասի ու Դրիմի ծառայությունից, ընտանեկան կյանքից...

Հենց այդ փորձն արտահայտելու համար գոյություն ունի գրականությունը: Բայց հենց դրանից էլ Տոլստոյը հրաժարվել էր:

Ամենատարօրինակն այն է, որ Քրիստոսի կերպարը, որն առաջարկում է Տոլստոյը, հենց գեղարվեստական առումով չափազանց հետաքրքիր է. կասկածելի է կրոնական առումով:

«Հիսուս Քրիստոսի ծնունդն այսպես է եղել. երբ նրա մորը տվել են Հովսեփին, մինչ նրանք կմերձենային, պարզվեց, որ նա հղի է: Հովսեփը՝ նրա ամուսինը, բարեպաշտ մարդ էր, չէր ուզում կնոջը մերկացնել ու որոշեց առանց աղմուկի արձակել նրան: Բայց երբ մտածում է դրա մասին, երազ է տեսնում, որ Աստծո առաքյալը հայտնվեց իրեն և ասաց. մի վախեցիր ընդունել Մարիամին, կնոջը քո, որովհետև նրանից ծնվածը կծնվի Սուրբ Հոգուց»: Մեկնաբանություններում Տոլստոյը շատ ավելի կոպիտ է նկարագրում այդ դեպքը. «Մի կույս Մարիամ կար: Այդ կույսը հղիացավ հայտնի չէ ումից: Ամուսինը խղճաց նրան ու թաքցնելով նրա խայտառակությունը, ընդունեց կնոջը: Նրանից ու անհայտ հորից էլ տղա ծնվեց»:

Այլ խոսքով, Հին Հրեաստանում անհայտ հորից, բայց այլ տղամարդու հետ օրինական ամուսնության մեջ, տղա ծնվեց: Նա գիտի, որ հայրը Հովսեփը չէ, բայց չգիտի ով է իր հայրը, որովհետև դա մայրն էլ չգիտի: Այդ տղային բոլորը, Մարիամից ու Հովսեփից բացի, համարում են Հովսեփի՝ սովորական հրեա հյուսնի որդի: Բայց տղա՞ն ինչպես է ընկալում իրեն: Եվ ասա, պարզվում է, որ նա հանգում է այն մտքին, որ եթե հայր չունի, ապա Հայրը Տեր Աստված է, առանց որի այս աշխարհում ոչինչ չէր հայտնվի:

Տոլստոյն այսպես է հասկանում «Աստծո Որդի» բառերը, որոնք վերագրվում են Քրիստոսին: Նա Աստծո նույնպիսի որդի է, ինչպես և մենք բոլորս: Բայց իր դժբախտ վիճակի բերումով Քրիստոսը հասկանում է դա, իսկ մենք՝ ոչ: Եթե Տոլստոյը պարզապես գրող մնար և ավետարանական տեքստը չքննաբարեր հասկացությունների նոր թարգմանությամբ, առավել ևս չկրճատեր՝ դեն նետելով իր տեսանկյունից կասկածելի տեղերը, եթե պարզապես այդ զարմանալի սյուժեն փոխադրեր ռուսական հողի վրա, դրանից գուցե հրաշալի վեպ կամ վիպակ ստացվեր: Պատմություն տղայի մասին, որը չգիտեր իր հորը, բայց չէր հուսահատվում, գտավ նրան Աստծո մեջ և այդ հոգևոր փորձը փոխանցեց այլ մարդկանց: Դա կարող էր ռուս ուխտավորի կամ կրոնախևի պատմություն լինել:

Բայց Տոլստոյը որպես գրող օգտագործում էր ուրիշի տեքստը՝ առաջարկելով իր «վարկածը»: Վերջապես, նա բացահայտ խուլիգանություն արեց՝ օրինակ, «փարիսեցիները» թարգմանելով «ուղղափառներ»: Լեզվաբանական առումով դա սխալ չէ: «Փարիսեցիներ» բառը թարգմանվում է որպես «ուղղափառ հրեաներ», այսինքն «ուղղափառներ»: Սակայն, դրա հետ մեկտեղ, վատ բառախաղ է ստացվում ու հավասարության նշան է դրվում հուդայական և ուղղափառ հոգևորականների միջև: Արդյունքում ստացվում է, որ «ուղղափառները» խաչել են Քրիստոսին:

Տոլստոյի Քրիստոսը գուցե և սքանչելի էր որպես մարդ՝ իր «ամոթալի» ծննդի հանգամանքներով դժբախտ, առլեցուն հոգևոր բարձր թռիչքով ու սիրով առ մարդիկ: Բայց ինչո՞ւ է, ասենք, Ղազարոսի հարության կարգի հրաշքներ գործում: Ինչո՞ւ է աշակերտներին պատվիրում ուտել ու խմել հացն ու զինին՝ այն էլ դրանք իր մարմինն ու արյունը կոչելով:

Եվ Տոլստոյը շատ պարզ է վարվում. ջնջում է Ավետարանի այդ դրվագները՝ դրանք «անպիտան» (նրա սիրած բառն է) հայտարարելով: Բայց դա արդեն բացարձակ գրաքննություն է: Ինչից տուժում էր ինքը՝ Տոլստոյը: Օրինակ, նա Ավետարանի թարգմանությունն ավարտում է խաչի վրա Հիսուսի մահով: Հարություն չի եղել: Բայց «Ռուսսկի վեստնիկի» խմբագիր

Կատկովը ճիշտ այդպես ավարտել էր «Աննա Կարենինա»-ի հրապարակումը՝ գնացքի տակ գլխավոր հերոսուհու գոհվելով, դեն նետելով Վռոնսկու՝ թուրք-սերբական պատերազմ գնալու պատմությունն ու ողջ «լիկնյան» վերջնամասը: Դա «անպիտան» էր համարել: Եվ ինչպե՞ս էր զայրանում այդ կապակցությամբ Տոլստոյը:

Գեթսեմանի այգու ցնցող տեսարանը, երբ Քրիստոսը, տեղի տալով իր մարդկային էությանը, Երկնային Հորը խնդրում է հեռու տանել «այդ գավաթը», ազատել Իրեն՝ Աստծո Որդուն, ֆիզիկական տառապանքներից, Տոլստոյի գրչի տակ վերածվում է սեփական գայթակղությունների դեմ Հիսուսի պայքարին: Մեծ գրողի ականջը չի լսում սուրբ ստեղծագործության դեմ իր իսկ գործած բռնությունը: Գեղարվեստական լողությունը հանկարծ դավաճանում է Տոլստոյին:

Ուսուցիչ Իվան Միխայլովիչ Իվակինի հուշերում, ում հետ Տոլստոյը խորհրդակցում էր որպես բանասերի, ներկայացված է գրողի աշխատանքի ընթացքը.

«Առաջին իսկ անգամից ինձ թվաց, որ սկսելով գրել Ավետարանը, Լև Նիկոլաևիչն արդեն որոշակի հայացքներ ուներ... Գիտական բանասիրական տեսանկյունը, եթե նույնիսկ ամբողջովին օտար չէր նրան, համենայնդեպս մնում էր երկրորդ, նույնիսկ երրորդ պլանում... Ավետարանի պատմական, սքանչելի, լեգենդական կողմը, ինչպես հայտնի է, նա հանեց, անկարևոր, անպիտան էր համարում:

- Ի՞նչ հետաքրքիր իմանալ, որ Քրիստոսը բակ էր ելնում,- ասում էր նա:- Իմ ի՞նչ գործն է, որ նա հարություն է առել: Ինձ համար կարևոր է հարցը, թե ինչ անեմ, ինչպես ապրեմ»:

Ավետարանի «Թարգմանության» անհաջողությունը Տոլստոյի համար յուրատեսակ պատիժ դարձավ գրականությունից հրաժարվելու համար: Մեծ գրողը չէր կարող ապրել գրականությունից դուրս: Չէր կարող ազատ ապրել ու շնչել առանց նրա: Եվ դա նրբորեն զգում էր նրա գրական մրցակից Իվան Տուրգենևը: Նա 1883 թվականին մահանում էր Վիարդոյի ամառանոցում, Բուժիվարում: Ահավոր տառապանքներ էին, որ դադարում էին միայն մորֆիի հերթական չափաբաժինը ներարկելուց հետո: Բայց երբ հասավ լուրը, որ Տոլստոյը հրաժարվել է գրականությունից, Տուրգենևը նամակ գրեց նրան, որը գրողի արիության ու վեհանձնության նմուշ է: Հենց միայն այդ նամակի համար կարելի է ներել Տուրգենևի բոլոր թուլությունները.

«Միրելի և թանկագին Լև Նիկոլաևիչ: Վաղուց չեմ գրել Ձեզ, քանզի, ուղիղն ասած, մահվան մահճում եմ... Իսկ գրում եմ Ձեզ, ըստ էության, որ

ասեմ, թե որքան ուրախ եմ Ձեր ժամանակակիցը լինելու համար, և արտահայտեմ վերջին անկեղծ խնդրանքս: Բարեկամս, վերադարձեք գրական գործունեության: Չէ՞ որ այդ շնորհը Ձեզ տրված է այնտեղից, որտեղից՝ մնացած բոլորը... Բարեկամս, ռուսաց երկրի մեծ գրող, ականջալուր եղեք իմ խնդրանքին: Տեղեկացրեք ինձ, երբ ստանաք այս գրությունը, և թույլ տվեք մեկ անգամ ևս ամուր, ամուր գրկել Ձեզ, Ձեր կնոջը, բոլոր Ձերայիններին, այլև չեմ կարող, հոգնեցի»:

Տոլստոյը չպատասխանեց:

### *Հրաժարում պետությունից*

1881 թվականին Տոլստոյը վաստակում է մի հզոր թշնամի, ամենահզորը, որ կարող էր լինել այդ ժամանակ (բացի թագավորից, իհարկե)՝ Սրբազան սինոդի ավագ դատախազ, կայսրության գլխավոր գաղափարախոս Կոնստանտին Պետրովիչ Պոբեդոնոսցևը:

Հիսունական թվականներին սևաստոպոլյան պատմվածքները հրապարակելուց հետո, որոնք այնպես դուր էին եկել Ալեքսանդր II-ին ու նրա որդուն՝ այն ժամանակ դեռ պատանի գահաժառանգին, Տոլստոյն ուներ բոլոր հնարավորությունները դառնալու եթե ոչ արքունական գրող, ապա գուրգուրված լինել ցարական արքունիքի կողմից: Գահ բարձրանալով՝ Ալեքսանդր III-ը չմոռացավ իր վաղեմի հիացմունքը Տոլստոյի ստեղծագործության հանդեպ և նրա երկրպագուն էր մնում նույնիսկ այն ժամանակ, երբ Տոլստոյն ապստամբեց Եկեղեցու ու պետության դեմ: «Իմ Տոլստոյը», «խնդրում եմ ձեռք չտալ իմ Տոլստոյին» արտահայտությունները բնական էին հնչում ցարի շրթունքներից: Վկայություններ կան, որ նա արտասվում էր «Խավարի թագավորություն» պիեսի գեղարվեստական ընթերցանության ժամանակ: Չնայած դա գրաքննությանը չխանգարեց արգելելու պիեսի բեմադրությունը հանրային թատրոններում (ընտանեկան թատրոններում կարելի էր) համարյա տասը տարի: Գրելուց անմիջապես հետո, 1886 թվականին Ալեքսանդրյան թատրոնում արդեն ողջ թափով գնում էր առաջնախաղի նախապատրաստությունը. դերերը բաժանվել էին, պատրաստվում էին փորձերին... Բայց միջամտեց Պոբեդոնոսցևը: Պիեսը ներկայացվում էր Բելիևում ու Փարիզում, Իտալիայում, Շվեյցարիայում ու Հոլանդիայում: Բայց ոչ Ռուսաստանում: Գրող ու լրագրող Վլադիմիր Ալեքսեևիչ Գիլյարովսկին այդ առիթով էքսպրոմտ ունի.

*Երկու աղետ կա Ռուսաստանում.  
Ներքևում՝ խավարի իշխանությունը,  
Իշխանության խավարը՝ վերևում:*

Ինչն էր այդ մարդկանց՝ Տոլստոյի ու Պոբեդոնոսկի բախման պատճառը: Նրանք բացառիկ անհատականություններ էին: Պոբեդոնոսկի մասին ինչ ասես կարելի է խոսել, բայց նա անկասկած խելացի ու կրթված մարդ էր: Հրաշալի հասկանում էր ոչ միայն ռուսական, այլև եվրոպական քաղաքական իրավիճակը, կարողում էր բոլոր եվրոպական գլխավոր թերթերը: Իհարկե, ավելի գիտակ էր ուղղափառ գրականության ոլորտում, քան Տոլստոյը, և անկեղծորեն սիրում էր ռուսական Եկեղեցին: Նա խորապես բարոյական մարդ էր: Անհնար է պատկերացնել, որ Պոբեդոնոսկը կաշառք ստանար, և նույնիսկ՝ որևէ մեկը համարձակվեր առաջարկել: Նա անձնական շահերը կարողանում էր տարանջատել պետականից և անկեղծորեն ցավում տերության համար:

Պոբեդոնոսկը երկու մեծ իշխանների՝ Ալեքսանդր II-ի որդիների՝ Նիկոլայի և Ալեքսանդրի դաստիարակն էր: Բայց Նիկոլայը, որի հետ նա մեծ հույսեր էր կապում, մահացավ 1866 թվականին: Դա սարսափելի հարված էր Պոբեդոնոսկի համար, ում բնավ դուր չէին գալիս Ալեքսանդր II-ի բարեփոխումները, և նա դա չէր թաքցնում:

«Հույսը նրա վրա էր,- արքայազն Նիկոլայի մահից հետո գրում է նա Աննա Տյուտչևային՝ բանաստեղծի դստերը, ում հետ կիսում էր իր գաղտնիքները,- որ մենք նրա մեջ դիմակայություն էինք տեսնում, նրա մեջ հակառակ բևեռ էինք փնտրում: Աստված այդ հույսն առավ մեզանից: Ի՞նչ կլինի մեզ հետ: Եղիցի սուրբ կամքը Նրա...»:

«Մենք»-ը, հավանաբար, սլավոնաֆիլների մոսկովյան կուսակցությունն էր, որին համակրում էր հակաարևմտական Պոբեդոնոսկը:

Պոբեդոնոսկը չէր սիրում Ալեքսանդր II-ին ոչ միայն բարեփոխումների, այլև, ինչպես ինքն էր համարում, անբարոյականության համար: Կնոջ մահից հետո, չսպասելով, որ սգո տարին անցնի, ցարը մորգանատիկ<sup>26</sup> կա-

26. Ամուսնություն տարբեր սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց միջև, որի դեպքում ամուսինը (կինը) և երեխաները չեն ժառանգում տիտղոսը: Այդպես իշխանուհի Դոլգոռուկովան ամուսնանալով դարձավ ոչ թե կայսրուհի, այլ միայն պայծառափայլ իշխանուհի Յուրևսկայա, իսկ նրա և Ալեքսանդր II-ի երեխաները չէին կարող ժառանգել գահը:

այի մեջ մտավ Եկատերինա Դուգոռուկովայի հետ, որից չորս արտամուսնական երեխա ուներ:

Պրեդոնոսկին զայրացնում էր նաև Ալեքսանդր II-ի սառը վերաբերմունքը ուղղափառության հանդեպ: Նրա համար վիրավորական էր, երբ նա 1867 թվականին գահաժառանգին արգելել էր գնալ Մոսկվա՝ միտրոպոլիտ Ֆիլարետի թաղմանը: Արդեն այնտեղ էր մեկնել նրա մյուս որդին՝ մեծ իշխան Վլադիմիրը, ու թագավորը որոշել էր, որ դա միանգամայն բավարար է:

Յարի զոհվելը 1881 թվականի մարտի 1-ին, ռուսի պայթյունից, որը նրա ոտքերի տակ էր նետել «Նարոդնայա վոյա» կուսակցության անդամ Գրիգենվիցկին, օբյեկտիվորեն ձեռնառու էր Պրեդոնոսկին: Դա թույլ էր տալիս կասեցնել բարեփոխումներն ու քննադատել ողջ լիբերալ Մինիստրների կոմիտեն (Միխայիլ Տարիելովիչ Լոռիս-Մելիքովին, Դմիտրի Ալեքսեևիչ Միլյուտինին, Ալեքսանդր Ազեևիչ Աբազիին և այլն):

Նրա անձնական ազդեցությունը նոր կայսեր վրա չափազանց մեծ էր: Եվ Պրեդոնոսկն օգտվեց դրանից: Ալեքսանդր II-ի դեմ կազմակերպված ահաբեկչական գործողության հաջողությունը Պրեդոնոսկին թույլ տվեց Ալեքսանդր III-ին ներշնչել, որ անհրաժեշտ է, մեկ այլ պահպանողականի՝ Կոնստանտին Նիկոլևիչ Լեոնտևի արտահայտությամբ, «ցրտահարել» Ռուսաստանը: Եվ դա հաջողվեց: Քառորդ դար, գրում էր Ալեքսանդր Բլոկը, «Պրեդոնոսկը Ռուսաստանի վրա/Տարածեց բվի թևերը»: Եվ առաջինը, ով փորձեց նրան խանգարել, թերևս Լև Տոլստոյն էր:

Հիշենք, թե ինչ էր զգացել նա 1857 թվականի մարտին Փարիզում մահապատիժ տեսնելով: Սարսափ ու նողկանք: Եվ նույնիսկ ոչ այնքան բուն մահապատիժ, որքան մթնոլորտից, ուր դա կատարվում էր: Տոլստոյն ատում էր ցանկացած բռնություն: Սակայն «օրենքով» բռնությունը, այսինքն կանխավ արդարացված և նույնիսկ օժված (չէ՞ որ մահապատիժն պարտադիր ներկա էր քահանան) բռնությունը առանձնապես զզվելի էր նրա համար:

Տոլստոյը հպարտանում էր, որ Ելիզավետա Պետրովնա կայսրուհու 1753 թվականի մայիսի 25-ի հրամանագրով դադարեցվել է մահապատիժ կիրառումը բոլոր քրեական հանցագործների, այդ թվում՝ մարդասպանների նկատմամբ: Այդ առումով Ռուսաստանը Արևմտյան Եվրոպայից առաջադեմ էր, որը մահապատիժը չեղարկեց միայն XX դարի երկրորդ կեսին:

Բայց Ելիզավետայի հրամանագիրը չէր նշանակում, որ մահապատիժը ազատվում են քաղաքական հանցագործները, որոնք ոտնձգել են «պետական անդորրի, Գահի անվտանգության և Նորին մեծության Սրբության

դեմ»: Մահապատժի էին ենթարկել և՛ Պուգաչովին, և՛ դեկաբրիստներին: Պետրաշևևաններին, այդ թվում Ֆ.Մ. Դոստոևսկուն նույնպես կարող էին մահապատժի ենթարկել, եթե վրա չհասներ ներումը:

Տոլստոյը հրաշալի էր հասկանում այդ ամենը: Բայց ևայնպես 1881 թվականի մարտին նոր կայսերը նամակ է գրում՝ խնդրելով մահապատժի չենթարկել իր հորը սպանողներին: Դա չսված մարտահրավեր էր:

Ամնիջական արքայասպան Գրիգեվիցկին նույն օրը մահացավ իր իսկ նետած ռումբի պայթյունից ստացած վերքերից: Սակայն այդ գործով կալանավորված հինգ մարդավորեցներ՝ Անդրեյ Ժեյլաբովը, Սոֆյա Պերովսկայան, Նիկոլայ Կիրպաչևը, Տիմոֆեյ Միխայլովն ու Նիկոլայ Ռիսակովը, բնականաբար, դատապարտված էին կախադանի: Պետք էր շատ միամիտ մարդ լինել այլ կերպ մտածելու համար:

Բարեփոխիչ ցարի սպանությունը վրդովել էր հասարակությանը: Չայրացած էր նաև Տոլստոյը: Հակառակ դեպքում Ստրախովը, որը լավ գիտեր Տոլստոյի տրամադրությունները, նրան չէր գրի. «Ինչպիսի՜ հարված, անգի՜ն Լև Նիկոլակիչ: Մինչ օրս տեղս չեմ գտնում ու չգիտեմ՝ ինչ անեմ: Ամմարդկայնորեն սպանեցին ծերուկին, որը երագում էր լինել ամենալիբերալ և ամենից վեհանձն ցարն աշխարհում: Տեսական սպանություն, ոչ չարության բերումով, ոչ իրական անհրաժեշտությամբ, այլ որովհետև գաղափարապես դա շատ լավ է...»:

Հենց գյուղացիներին ճորտական ստրկությունից ազատագրած և Ռուսաստանի եվրոպական ուղիով զարգացումը ցանկացող ցարի սպանությունը սառեցրեց բազմաթիվ լիբերալ բարեփոխումները և 1905-1907 ու 1917 թվականների հեղափոխական ցնցումների պատճառ դարձավ:

Հավանաբար Տոլստոյը դա էլ էր տեսնում ու կանխատեսում: Ուրեմն ի՞նչը ստիպեց նրան նամակ գրել ցարին, որի բնօրինակը չի պահպանվել, բայց բովանդակությունը գիտենք սևագրից:

Նամակի ամենասկիզբը հանդուգն էր. «Ես չեմ գրելու այն տոնով, որով սովորաբար գրվում են տիրակալներին ուղղված նամակները... Գրելու եմ պարզ, ինչպես մարդը մարդուն...»: Բայց ցարը Ռուսաստանում պարզապես «մարդ» չէր, այլ «Աստծո օծյալ»: Ցարի հոգևոր իշխանությունը պակաս կարևոր չէր, քան քաղաքական բաղկացուցիչը: Նամակն ուղղակի մարտահրավեր էր ցարական իշխանությանը և ամբողջությամբ վերցրած՝ միապետությանը: Պատահական չէ, որ Սոֆյա Անդրեևնան ահավոր վախեցած էր այդ նամակի պատճառով ու սպառնում էր «վռնդել» տնային ուսուցիչ Վասիլի Իվանովիչ Ալեքսեևին, որը աջակցություն էր հայտնել Տոլս-



տոյի այդ գաղափարին: Ամուսինը կրոնական այլախոհից, միանգամայն տրամաբանորեն, վերածվում էր քաղաքական այլախոհի:

Բայց ինչի՞ վրա էր հիմնված այդ տրամաբանությունը: Տոլստոյն «ընդամենը» Ալեքսանդր III-ին առաջարկում էր վարվել ոչ թե ցարի պես, այլ մարդկայնորեն, և մարդկային օրենքներ ասելով՝ նկատի ուներ բարձրագույն քրիստոնեական ճշմարտությունները: «Ցարի պարտականություններից առաջ կան մարդու պարտականություններ,- գրում էր նա,- և դրանք պիտի լինեն ցարի պարտականությունների հիմքը ու պետք է զուգորդվեն դրանց: Աստված չի հարցնի Ձեզ ցարական պարտականությունների կատարման մասին, այլ կհարցնի մարդկային պարտականությունների մասին»:

Նամակում Տոլստոյը խոսք չի խնայում ահաբեկիչներին դատապարտելու համար՝ «հայրենիքի թշնամիներ», «անարգ տղեկներ», «անաստված արարածներ»: Բայց հենց այդ դատապարտման մեջ է տեսնում ցարի գլխավոր գայթակղությունը: «Հենց այդ գայթակղության մեջ է Ձեր վիճակի ողջ ահավորությունը: Ով էլ որ մենք լինենք, ցարեր, թե հովիվներ, մարդիկ ենք՝ լուսավորված Քրիստոսի ուսմունքով»: «Բարին գործեք չարության դիմաց, մի դիմադրեք չարին, ներեցեք բոլորին», - կոչում էր Տոլստոյը:

Տոլստոյն առաջարկում էր ոչ թե պարզապես ներում շնորհել արքայասպաններին, ոչ թե պարզապես մեղմել նրանց պատիժը, այլ «կանչել» այդ մարդկանց, փող տալ և ուղարկել «ինչ-որ տեղ, Ամերիկա»: Այդ դեպքում ինքը պատրաստ է դառնալ հավատարիմ միապետական. «...չգիտեմ՝ ուրիշներն ինչպես, բայց ես՝ վատ հպատակս, Ձեր շունը, Ձեր ստրուկը կլինեի: Ես խանդաղատանքից կլացեի Ձեր անունը լսելիս, ինչպես հիմա եմ լալիս»:

Միայն Տոլստոյը չէր դեմ նարոդավոլեցներին կախաղան բարձրացնելուն: Մայիսի 28-ին, մահապատժից վեց օր առաջ, Վարկային ընկերության դահլիճում հանրային դասախոսություն էր կարդում Վլադիմիր Սոլովյովը: «Այսօր դատվում են ու հավանաբար մահապատժի կրատապարտվեն արքայասպանները: Բայց ցարը կարող է և, եթե իսկապես զգում է իր կապը ժողովրդի հետ, պետք է ների արքայասպաններին: Ռուս ժողովուրդը երկու ճշմարտություն է ճանաչում: Եթե նա ընդունում է Աստծո ճշմարտությունը, ապա ուրիշը չունի, իսկ Աստծո ճշմարտությունն ասում է. «Մի՛ սպանիր...»:

Դատավճիռը մեղմելու մասին խոսում էին նաև արքունիքի լիբերալ շրջանակներում: Եվ այսօր դժվար է դատել, ինչ կլինեի, եթե... Եթե ցարը ներքեր հորը սպանողներին: Կարելի է ենթադրել միայն մեկ բան. հեղափոխա-

կան տեռորի ալիքը կխեղդվեր բարոյական հակասության մեջ: Ցանկացած նոր քաղաքական սպանություն արդեն որևէ բարոյական հիմք չէր ունենա ու կղատապարտվեր ողջ ռուսական հանրության կողմից: Նարոդավոլեցների մահապատիժը, ընդ որում, մաև նրանց, ովքեր ուղղակի չէին սպանել ցարին, նրանց դարձնում էր իշխանության գոհեր ու բարոյապես արձակում էր ձեռքերը նոր ահաբեկչությունների համար: Ընդամենը, XIX դարի ահաբեկիչների համար բարոյականության պատկերացումները, թեկուզ և խեղաթյուրված, կարևոր էին: Նրանք կյանքեր էին գոհաբերում հանուն Ռուսաստանի, առաջընթացի, արդարության, ինչի համար կուգես: Այսպես էին հասկանում նրանք իրենց «առաքելությունը»: Օրինակ, սոցիալ-հեղափոխականների կուսակցության Մարտական կազմակերպության, որը տարբեր ժամանակներում ղեկավարել են Ազեֆը, Գերշունին ու Սավինկովը, Բարոյական կողեքսի հիմքում մի դրույթ էր, ըստ որի ահաբեկիչն ինքն էլ պարտավոր է գոհվել ահաբեկչական գործողության ժամանակ կամ դրանից հետո: Ըստ էության, դա հանուն ուրիշների սեփական անձը գոհելու քրիստոնեական ուսմունքի խեղաթյուրումն էր:

Տոլստոյի նամակը ցարին առաջին հայացքից կարող է միամիտ թվալ: Բայց երիտասարդ ցարը ցնցված ու շփոթված էր հոր սպանությունից: Սկզբունքորեն նոր իրավիճակ էր, ու ոչ ոք չգիտեր ճիշտ ելքը: Հինգ նարոդավոլեցներին ներում շնորհելու մերժումը դարձավ նոր միապետի առաջին քաղաքական որոշումը: Այնուհետև Ռուսաստանում միայն բարձրանում էր ահաբեկչության ալիքը և արագանում էր բռնաճնշումների թափանիվը: 1887 թվականին, Ալեքսանդր III-ի դեմ մահափորձ նախապատրաստելու համար Շլիսելբուրգյան ամրոցում մահապատժի ենթարկվեցին «Նարոդնայա վոլյա» կուսակցության Ահաբեկչական ֆրակցիայի անդամ Ալեքսանդր Ուլյանովն ու նրա չորս ընկերները: Ահաբեկչական գործողությունը նախատեսված էր 1886 թվականի մարտի 1-ին: Բնականաբար, օրը պատահական չէր ընտրված: 1917 թվականին ռուսական միապետությունը կործանվեց: 1918 թվականին Եկատերինբուրգում ողջ ընտանիքով մահապատժի ենթարկվեց Ալեքսանդր III-ի որդին: Այսպես թե այնպես, բայց Տոլստոյն իրավացի էր, երբ ցարին գրում էր. «Չեք ների, մահապատժի կենթարկեք հանցագործներին, հարյուրավորներից կխլեք 3-ին, 4-ին, և չարիքը չարիք կծնի, և 3-ի, 4-ի տեղում կբարձրանան 30-ը, 40-ը...»: Չարիքը չարիք է ծնում:

Բայց ով կարող էր փոխանցել նամակը: Միայն Պոբեդոնոսկը: Հենց նա էր այդ օրերին առավել մոտ ցարին և պարբերաբար զեկույցով զնում էր

նրա մոտ: Մակայն Պոբեդոնոսցը խնդրանքը չկատարեց, այլ Տոլստոյին պատասխանեց սեփական ուղերձով, որից երևում է, որ լավ էր հասկանում ինչի մասին է խոսվում Տոլստոյի նամակում:

*Խոսքը նոր միապետի հոգու համար պայքարի մասին էր:*

Պոբեդոնոսցն էլ պատասխան Տոլստոյի գրում էր. «...մի մեղադրեք, որ խուսափեցի Ձեր հանձնարարությունը կատարելուց: Այսպիսի կարևոր գործում ամեն ինչ պիտի արվի ըստ հավատքի: Իսկ Ձեր նամակը կարդալով՝ տեսա, որ Ձեր հավատը այլ է, իսկ իմ ու եկեղեցական հավատը՝ այլ, ու որ մեր Զրիստոսը Ձեր Զրիստոսը չէ: Իմ Զրիստոսին գիտեմ որպես ուժի և ճշմարտության, թուլացածներին զորացնող այր, իսկ Ձերի մեջ ինձ երևացին թուլացման գծեր, և ինքը զորացում է պահանջում»:

Այդ նամակում ոչ մի խոսք չկար քաղաքականության մասին: Ոչ մի խոսք այն մասին, որ, որ ահաբեկիչների մահապատիժը քաղաքական անհրաժեշտություն է: Պոբեդոնոսցի համոզմունքն էր, որ մահապատիժը հենց բարոյական, քրիստոնեական անհրաժեշտություն է: Պոբեդոնոսցը նամակը չփոխանցեց կայսերը, բայց և խույս չտվեց Տոլստոյի մարտահրավերից: Ավելին՝ ընդունեց որպես անձամբ իրեն ուղղված մարտահրավեր:

Բայցևայնպես, նամակի բովանդակությունը հասավ Ալեքսանդր III-ին: Տեղեկանալով դրա մասին՝ Պոբեդոնոսցը լրջորեն տազնապեց: Նա գրում էր ցարին.

«Ձերդ կայսերական մեծություն: Ներեցեք Աստծու սիրուն, որ այսպես հաճախ եմ անհանգստացնում Ձեզ:

Այսօր շրջանառության մեջ է դրվել մի միտք, որ սարսափեցնում է ինձ: Մարդկանց մտքերն այնպես են այլասերվել, որ ոմանք հնարավոր են համարում դատապարտված հանցագործներին մահապատիժից ազատելը: Ռուս մարդկանց մեջ արդեն տարածվում է վախը, որ կարող են Ձերդ մեծությանը ներկայացնել այլասերված մտքերն ու համոզել Ձեզ ներում շնորհել հանցագործներին: Այդ լուրը հասել է ծեր կ(ոմս) Ստրոգանովին, որը հուզմունքով բռնված այսօր եկել էր ինձ մոտ:

Կարող է արդյոք դա տեղի ունենալ: Ո՛չ, ո՛չ և հազար անգամ ո՛չ. չի կարող պատահել, որ դուք հառաջի ողջ ռուս ժողովրդի այսպիսի պահին ներեք Ձեր հոգու ռուս ինքնակալին սպանողն ու ինչի համար ողջ երկիրը (բացի փոքրաթիվ՝ մտքով ու սրտով թուլացածներից) վրեժ է պահանջում ու բարձր տրտնջում, որ պատիժն ուշանում է:

Եթե դա տեղի ունենար, հավատացե՛ք ինձ, տեր թագավոր, կընդունվեր որպես մեծ մեղք ու կխախտեր Ձեր հպատակների սրտերի ամրությունը:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Ես ռուս մարդ եմ, ապրում եմ ռուսների մեջ և գիտեմ ինչ է զգում ժողովուրդը և ինչ է պահանջում: Այս պահին բոլորը վրեժ են տենչում»:

Այս գրության վրա կայսեր ձեռքով մակագրված է. «Հանգիստ եղեք, ոչ ոք չի համարձակվի այդպիսի առաջարկով գալ ինձ մոտ, և բոլոր վեցն էլ կախաղան կբարձրացվեն, ինչը երաշխավորում եմ»:

Կախաղան բարձրացվեցին հինգը, ոչ թե վեցը, բայց դա կարևոր չէ: Կարևոր է, որ ցարն, ըստ երևույթին, չէր կարողացել Տոլստոյի նամակը և այդպիսով, Պոբեդոնոսցևի շնորհիվ ազատվել էր նրա հետ ներքին վեճից, չխոսելով արդեն պատասխանելու մասին: Վեճի ողջ բարոյական, քրիստոնեական բովանդակությունը Պոբեդոնոսցևը վերցրեց իր վրա:

Նա իր վրա էր վերցրել նաև վեճի «ժողովրդական» կողմը, որն իր դասախոսության մեջ գլխավորն էր համարում Վլադիմիր Մոլոժյովը: «Այդ ժամանակից,- գրում է պատմաբան Յու.Վ. Գոտյեն,- ընդհուպ մինչև Ալեքսանդր III-ի կյանքի վերջը Պոբեդոնոսցևը, կայսերը հուշելով այս կամ այն մտքերն ու ծրագրերը և ձգտելով այդ մտքերն ու ծրագրերը ամրապնդել նրա գիտակցության մեջ, անընդհատ խոսում է «ժողովրդի» մասին, որը մտածում է հենց այնպես, ինչպես մտածում է ինքը՝ Պոբեդոնոսցևը»: Բայց ինչն է «ժողովուրդը» մտածում հենց այնպես, ինչպես Պոբեդոնոսցևը, և ոչ այնպես, ինչպես մտածում է մարտական սպա, կալվածատեր ու գրող Տոլստոյը, պարզ չէր:

Փոխարենը պարզ էր, որ Տոլստոյի ուղղակի կապը ռուս միապետի հետ խզվել էր՝ չհասցնելով հաստատվել: Հաղթեց Պոբեդոնոսցևը: Տոլստոյը Ստրախովին գրում էր. «Պոբեդոնոսցևն ահավոր է»:

Ռուս կայսրերից ոչ մեկի հետ Տոլստոյը երբեք չհանդիպեց: Դառնալով Եկեղեցու թշնամին՝ նա դարձավ նաև պետության թշնամին:

### *Հրաժարում սեփականությունից*

Մինչև հոգևոր հեղաշրջումը Տոլստոյը հանդես չէր գալիս որպես փողի ու մասնավոր սեփականության հակառակորդ: Ավելին, նա շահատենչ էր՝ ձգտելով բազմապատկել ունեցվածքն ու հարստացնել իր ընտանիքը: Իհարկե, նա դրանում չէր տեսնում իր գլխավոր առաքելությունը: Բայց դա ընտանեկան նախագծի կարևոր բաղադրիչն էր: Նույնիսկ գրողական գործունեությունը նաև փող վաստակելու միջոց էր դիտում: Տոլստոյը հոնորարի հարցով սակարկում էր Նեկրասովի հետ՝ սպառնալով հեռանալ «Սովրեննենիկից», և ի վերջո տեղափոխվեց Կատկովի «Ռուսսկի վեստնիկ», որտեղ ավելի շատ էին վճարում: «Կազակներ» վիպակը, որը գրվել է վաթսու-

նականների ամենասկզբին, հրապարակել է Կատկովը: Բայց ասե՛նք, որ այդ ժամանակ Տոլստոյի շահատենչությունը զուգորդվում էր վատնելու հետ: «Կազակների» համար ստացած գումարով նա վերադարձրեց չինական բիլյարդում տանուլ տված փողը: Ընտանեկան մարդ դառնալով՝ Տոլստոյը վերածվեց բարեվարք կալվածատիրոջ ու գրողի, որն այնքան էլ վատ չէր վաստակում իր ստեղծագործություններով: «Պատերազմ և խաղաղություն» վեպի հրապարակման համար նա Կատկովից կարգին հոնորար ստացավ՝ 500 ռուբլի մեկ տպագրական մամուլի համար (Դոստոևսկին «Ապուշի» համար մամուլին 150 ռուբլուց մի քիչ ավելի է ստացել): Այդ հոնորարի մի մասը Տոլստոյը հանգիստ նվիրեց զարմուհիներին՝ Վարյային ու Լիզային՝ Մարիա Նիկոլաննայի դուստրերին, տասը հազարական ռուբլի, բանկային արժետոմսերով:

Գյուղատնտեսության մեջ Տոլստոյը պակաս հաջողակ էր: Փոխարենը մեծապես առաջադիմել էր նոր հողեր ձեռք բերելու հարցում: Նիկոլայ եղբոր մահից հետո նրան բաժին հասավ հարուստ ու գեղեցիկ Նիկոլսկոյե-Վյազենսկոյե կալվածքը: Ինքն էլ խուտորներ էր գնում Յասնայա Պոլյանայի շուրջը: Սամարայի նահանգում վեց հազար դեսյատին հող ձեռք բերեց, ընդ որում, գործարքը վերջնականապես ձևակերպվեց 1878 թվականին, հոգևոր հեղաշրջման ամենասկզբին: Արդյունքում՝ հոր ժառանգությունից բաժին հասած սեփականությունը, բոլոր թղթախաղային պարտություններից ու որոշ հողերի վաճառքից հետո, Տոլստոյը բազմապատկեց վեց անգամ...

Ութսունական թվականների սկզբին նրա վերաբերմունքը փողի ու սեփականության հանդեպ կտրուկ փոխվում է: «Այն, ինչ Տոլստոյի համար բարիք էր, հիմա նրա համար փոխարկվել էր չարիքի»,- գրում է կենսագիր Ժդանովը: Նրա համար ամոթալի է դառնում ռուս գյուղացիության մակարոյծը լինելը:

Տոլստոյը հանգում է սեփականությունից հրաժարվելու և սկզբունքորեն նոր կյանք սկսելու մտքին: 1884 թվականի օրագրում նա նոր ընտանեկան նախագիծ է ստեղծում:

Սևագիր տարբերակով.

«Ապրել Յասնայայում: Սամարյան եկամուտը տալ աղքատներին ու Սամարայում դպրոց բացելուն՝ հենց վճարողների (*այսինքն՝ գյուղացիների-Պ.Բ.*) տնօրինությամբ ու հսկողությամբ: Նիկոլսկոյեի եկամուտը (հողը գեղջուկներին հանձնելով)՝ ճիշտ նույն կերպ: Սեզ, այսինքն՝ ինձ, կնոջ ու փոքր երեխաներին, առայժմ թողնել Յասնայա Պոլյանայի եկամուտը, 2-

ից 3 հազար ռուբլի»։ (Թողնել առժամանակ, բայց մեկ ցանկությամբ՝ այն էլ տալ ուրիշներին, իսկ ես անձամբ պետք է բավարարվեմ, այսինքն՝ հնարավորինս սահմանափակեմ պահանջմունքներս և ավելի շատ տամ, քան վերցնեմ, ինչին էլ ուղղել բոլոր ուժերը և տեսնել կյանքի նպատակն ու բերկրանքը)։ Ավագ երեքին (*երեխաներին-Պ.Բ.*) ազատություն տալ՝ Սամարայի կամ Նիկոլսկոյեի աղքատներից վերցնելու փողի մնացած մասը կամ ապրելով այնտեղ՝ աջակցել նրան, որ այդ փողերը բարուն ծառայեն, կամ ապրելով մեզ հետ՝ օգնեն մեզ։ Փոքրերին դաստիարակել այնպես, որ վարժվեն քիչ պահանջել կյանքից։ Նրանց սովորեցնել՝ ինչի ցանկությունն ունեն, բայց ոչ միայն գիտությունների, այլև գիտությունների և աշխատանքի։ Միայն այնքան սպասավոր պահել, որքան պետք է, որպեսզի օգնեն մեզ վերափոխվելու ու սովորեցնեն մեզ և այն էլ՝ ժամանակավոր, վարժվելով ապրել առանց նրանց։ Բոլորը պետք է ապրեն միասին, տղամարդիկ՝ մեկ, կանայք ու աղջիկները՝ մյուս սենյակում։ Սենյակ, որտեղ գրադարան պիտի լինի մտավոր զբաղմունքների համար, և աշխատանքային, ընդհանուր սենյակ։ Նաև առանձին սենյակ թույլերի համար... մեզ ու երեխաներին կերակրելուց և կրթությունից բացի, աշխատանք, տնտեսություն, օգնություն հացով, բժշկությամբ, գիտելիքով։ Կիրակի օրերը ճաշ չբավորների և աղքատների համար և ընթերցանություն ու զրույցներ։ Կյանքը, կերակուրը, հագուստը՝ ամենապարզը... Ողջ ավելորդը՝ դաշնամուր, կահույք, կառքեր՝ վաճառել, բաժանել։ Չբաղվել միայն այնպիսի գիտությամբ ու արվեստով, որոնք կարելի է կիսել բոլորի հետ։ Շփումը բոլորի հետ՝ նահանգապետից մինչև մուրացկան՝ նույնը։ Նպատակը մեկն է՝ երջանկություն, սեփական և ընտանիքի՝ գիտենալով, որ այդ երջանկությունը նրանում է, որ բավարարվես քչով ու բարին գործես ուրիշների համար»։

Դ-ա, ըստ էության, «ընտանեկան կոմունայի» նախագիծ էր։

Բայց ոչ Սոֆյա Անդրեևնան, ոչ երեխաները այդ նախագծի մեջ նոր երջանիկ ընտանեկան կյանքի սկիզբ չէին տեսնում։ Ասենք, երեխաները նախագիծը թեթևամտորեն ընդունեցին։ Օրինակ, Տատյանան օրագրում գրում էր, որ սկզբունքորեն հնարավոր է համարում սեփականությունից հրաժարվելը, բայց չի կարծում, որ դա լրջորեն կփոխի իրենց բնավորությունները։ «Բոլորս կմնանք նույն գաղափարներով ու ձգտումներով, միայն, թերևս, ոմանց մեջ չարություն ծնվի, որ իրենց այդ վիճակի մեջ են դրել»։

Այդ գաղափարին շատ ավելի լուրջ էր վերաբերվում Տոլստոյի կինը։ Ութսունականների սկզբին ընտանիքում յոթ երեխա կար՝ ուսանող Մերյո-

ժայից մինչև փոքրիկ Ալյոշան: Բոլորն իրենց կենսական պահանջներն ունեին, որոնք շատ տարբեր էին, բայց հաստատ չէին համապատասխանում հոր ասկետիկ իդեալին: Ասենք, ինքը՝ Սոֆյա Անդրեևնան էլ ոչ մի կերպ իրեն աշխատանքային կոմունայի տիրուհի չէր տեսնում: Համարյա 20 տարվա համատեղ կյանքի ընթացքում, որը սկսել էր տասնութ տարեկանում, ամուսինը նրան միանգամայն այլ բանի էր սովորեցրել: Ավելին, նրանից պահանջել էր այլ բան: 180 աստիճանի շրջադարձն անհնար էր նույնիսկ հոգեբանորեն: Եվ Տոլստոյի կինն ապստամբե՛ց:

Իլյա Լվովիչ Տոլստոյը հուշերում գրում է.

«Բայց ի՛նչ պիտի ապրած լինեք այդ ժամանակ իմ մայրը: Նա ամուսնուն սիրում էր ողջ էությամբ: Նա համարյա ամբողջովին ստեղծված է ամուսնու կողմից: Փափուկ ու բարորակ կավից, ինչպիսին էր տասնութամյա Սոնեչկա Բերսը, հայրս իր համար այնպիսի կին էր ծեփել, ինչպիսին ցանկացել էր ունենալ. կինը նրան նվիրվեց լիովին ու միայն նրա համար էր ապրում, և ահա տեսնում է, որ ամուսինն ահավոր տառապում է ու տառապելով՝ սկսում է ավելի ու ավելի հեռանալ իրենից: Իր հետաքրքրությունները, որ առաջ ընդհանուր հետաքրքրություններ էին, արդեն նրան չեն հետաքրքրում է, նա սկսում է քննադատել դրանք, սկսում է նեղվել իրենց ընդհանուր կյանքից: Վերջապես, սկսում է վախեցնել բաժանումով ու վերջնական խզումով, իսկ այդ ժամանակ կնոջ ուսերին հսկայական ու բարդ ընտանիքն է: Երեխաները՝ կրծքի փոքրիկից մինչև տասնյոթամյա Տանյան ու տասնութամյա Սերյոժան: Ի՞նչ անել: Կարո՞ղ էր, արդյոք, նա այդ ժամանակ հետևել ամուսնուն, բաժանել ողջ ունեցվածքը, ինչպես նա էր կամենում և երեխաներին մատնել աղքատության ու սովի:

Հայրս այդ ժամանակ հիսուն տարեկան էր, մորս միայն երեսունհինգն էր լրացել: Հայրս՝ զոջացող մեղսավոր, իսկ մայրս զոջալու ոչինչ չունի: Հայրս՝ ահռելի բարոյական ուժով ու խելքով, մայրս՝ սովորական կին: Հայրս՝ հանճար, որը ձգտում է հայացքով ընդգրկել համաշխարհային մտքի ողջ հորիզոնը, մայրս՝ սովորական կին՝ իր բույնը հյուսած ու պահպանող էգի պահպանողական բնագղներով:

Ո՞ր է այն կինը, որն այլ կերպ կվարվեր: Ես այդպիսին չգիտեմ ո՛չ կյանքում, ո՛չ պատմության, ո՛չ գրականության մեջ»:

Ամուսինների միջև կոնֆլիկտ է ծագում, որը չի հանգուցալուծվի մինչև Տոլստոյի կյանքի վերջը: Սոֆյա Անդրեևնան հնազանդ կնոջից վերածվում է ամուսնու հակառակորդի՝ այն ամենում, ինչ վերաբերում է փողին ու սեփականությանը: Եվ խնդիրը նրա անձնական հավակնությունները չեն:

Որքան էլ կուպիտ հնչի, նա իսկապես դառնում է «էգ», որը պահպանում է իր բույնը: «Արուից»՝ իր ամուսնուց:

Սակայն խնդիրն այն է, որ ողջ սեփականությունը գրանցված է ամուսնու անունով: Եվ ամբողջ փողը նրա ձեռքին էր (ասենք, կնոջն էր տալիս առաջին իսկ պահանջով, չհարցնելով, թե ինչի վրա է ծախսվելու): Իսկ Սոֆյա Անդրեևնան որևէ սեփականություն չունեի, բացի ոչ մեծ Գրինյովկա խուտորից, որն ամուսինը ձեռք էր բերել նրա անունով: Իսկ Տոլստոյն ընտանիքին լրջորեն համոզում է համաձայնել իր նոր հայացքներին ու հետևել իրեն: Ութսունականների սկզբին նա «ճնշում է գործադրում» ընտանիքի վրա: Նա վիրավորված է տնեցիների անըմբռնողությունից, հեռանում է նրանցից, փակվում իր մեջ, և եթե սկսում է խոսել, ապա դա ավարտվում է սկանդալով: Մինչ այդ երջանիկ ընտանեկան կյանքը մղձավանջի է վերածվում:

Իրավիճակն այնքան տագնապալի էր, որ Սոֆյա Անդրեևնան պատրաստ է դիմել ամենավճռական միջոցների: Նա ամուսնուն սպառնում է, որ կզնա ցարի մոտ, կչոքի նրա առաջ և կխնդրի պաշտպանել իրեն ու երեխաներին: Բայց ի՞նչ է նշանակում պաշտպանել: Ամենապարզը՝ հոգեկան հիվանդ հայտարարել Տոլստոյին: Մանավանդ, որ այդպիսի լուրեր արդեն պտտվում են հասարակության մեջ ու դրանց հավատում են նույնիսկ գրողները: Բերսերի հարազատները թափանցիկ ակնարկներ են անում Սոֆյա Անդրեևնային, որ ամուսինը խելագարվել է, և ինքն ինչ-որ բան պիտի անի մուրացկան չղառնալու համար:

1885 թվականին Սոֆյա Անդրեևնան հանդիպում է Պոբեդոնոսցևին, որի հետ Տոլստոյը կյանքում երբեք չէր հանդիպել: Սոֆյա Անդրեևնան ընդունելության գնաց նրա մոտ, որ հասնի Տոլստոյի «Որն է իմ հավատը» տրակտատի հրապարակմանը: «Իմ կյանք»-ում նա բերում է Պոբեդոնոսցևի հետ խոսակցությունը.

«- Պետք է ասեմ, որ շատ եմ խղճում ձեզ, ես ձեզ ճանաչել եմ երեխա ժամանակ, շատ էի սիրում ու հարգում ձեր հորը և դժբախտություն եմ համարում այդպիսի մարդու կին լինելը:

- Այ դա ինձ համար նորություն էր,- պատասխանեցի ես:- Բայց ես ոչ միայն ինձ երջանիկ եմ համարում, այլև բոլորն ինձ նախանձում են, որ այդպիսի տաղանդավոր ու խելացի մարդու կինն եմ:

- Պետք է ձեզ ասեմ,- ասաց Պոբեդոնոսցևը,- որ ձեր ամուսնու խելքն էլ չեմ ընդունում: Խելքը ներդաշնակություն է, իսկ ձեր ամուսնու մեջ ամենուր ծայրահեղություններ ու սուր անկյուններ են:



- Հնարավոր է,- պատասխանեցի ես:- Բայց Շոպենհաուերն ասում է, որ միտքը լապտեր է, որ մարդը պահում է իր առաջ, իսկ հանճարն արև է, որ ծածկում է ամեն ինչ»:

Դա հանճարի կնոջն արժանի պատասխան էր: Չէ՞ որ «Ես ձեր ամուսնու խելքն էլ չեմ ընդունում բառերը» չէին նշանակում, թե Տոլստոյը անխելք է, այլ՝ մի տեսակ «խենթ», որն էլ հենց «ճերքաշնակությունն» է՝ հոգու հանդարտ, հավասարակշռված վիճակ: «Անխելքն» ու «խենթը» այնքան մոտ են իրար: Եթե Սոֆյա Անդրեևնան տեղի տար, թեկուզ երեսանց համաձայնեք Պրեբոդնոսկի հետ, լուրերն այն մասին, որ Տոլստոյը «խելքը թոցրել է» և որ կինն ընդունում է դա, շատ արագ կտարածվեին արքունիքում, կհասնեին ցարին... Եվ այդ ժամանակ իսկական պահը կլիներ, որ Սոֆյա Անդրեևնան ծնկի գար նրա առաջ և աղերսեր, որ պաշտպանի ամուսնուց:

Բայց նա ոչ միայն տեղի չտվեց, այլև, ինչպես տեսնում ենք, հասավ ամուսնու տրակտատի հրապարակման թույլտվությանը: Դա խոսում է այն մասին, որ նրա դիրքորոշումը պարզունակ չէր:

Իննսունական թվականներին Տոլստոյը կգրի «Ու լույս է տալիս լույսը խավարում» պիեսը: Այդ անավարտ, Տոլստոյի համար խիստ անձնական պիեսը ինքնակենսագրականությամբ համադրելի է «Դևին»: Պիեսում հարուստ Նիկոլայ Իվանովիչ Սարինցևը, Ավետարանի ազդեցության տակ որոշում է տառացի հետևել Քրիստոսի քարոզին, ընտանիքին առաջարկում է հրաժարվել սեփականությունից, ամեն ինչ բաժանել աղքատներին և ապրել սեփական աշխատանքով: Տուժող կողմ են դառնում կինը՝ Մարյա Իվանովնան ու երեխաները՝ Ստյոպան, Վանյան, Լյուբան, Միսսին ու Կատյան: Պիեսում շատ են կերպարները՝ կալվածատերեր, աստիճանավորներ, հոգևորականներ, ժանդարմներ, բժիշկներ: Բայց ամենակարևոր կերպարներն են Սարինցևի քենին՝ Ալեքսանդրա Իվանովնա Կոխովցևան և նրա ամուսինը՝ Պյոտր Սեմյոնովիչը: Բոլոր հերոսների նախատիպերը ճանաչելի են. Տոլստոյը, կինը, նրանց երեխաները և Սոֆյա Անդրեևնայի քույրը՝ Տատյանան, որն ամուսնացած է իր զարմիկ Կուզմինսկու հետ...

Հատկապես նշանակալի է Ալեքսանդր Իվանովիչի կերպարը: Ի տարբերություն քրոջ՝ նա ոչ մի վայրկյան չի կասկածում, որ Նիկոլայ Իվանովիչը պարզապես խելառություն է անում (խելագարվել է), և Մարյա Իվանովնան սեփականությունը պետք է գրի իր անունով: Այսպես Տոլստոյը բարձրաձայնում է Տատյանա Կուզմինայի նախկին դիրքորոշումը:

Մարյա Իվանովնայի կերպարը շատ ավելի բարդ է: Նա պատրաստ է կիսել ամուսնու համոզմունքները: Նա անսահման սիրում է ամուսնուն:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Բայց նրա հոգսը երեխաներն են: Նրան բոլորովին չի հետաքրքրում սեփականությունը որպես այդպիսին: Սեփականությունն ատելի է նրան: Այն գծատություն է ծնում նրա ու սիրելի մարդու միջև: Սեփականությունը նրա համար խաչ է, որը պետք է կրի հանուն երեխաների: Այսպիսով, նրանց կոնֆլիկտի էությունը ոչ այնքան բարոյական համոզմունքների տարբերությունն է, որքան սեփական խաչի ու երեխաների բարօրության տարբերակումը:

Սարինգսը (Տոլստոյը) իր խաչը տեսնում է Աստծուն ու բոլոր մարդկանց ծառայելու մեջ, իսկ Մարյա Իվանովնան (Մոֆյա Անդրեևնա)՝ իր երեխաներին ծառայելու մեջ: Սարինգսը կուզենար աղքատ դարձնել իր երեխաներին, իսկ Մարյա Իվանովնան հարստություն ու բարգավաճում է ցանկանում նրանց:

Բայց դրա հետ մեկտեղ, ի տարբերություն քրոջ, նա ընդհանրապես չի համարում, որ ամուսինը խելագարավել է ու պետք է խելագար հռչակել նրան՝ սեփականությունը խլելու համար: Դա ազահության ու իդեալիզմի բախում չէ, այլ երկու լուրջ ու սկզբունքային կենսական դիրքորոշումների բախում, որտեղ յուրաքանչյուրը, սիրելով մյուսին, փորձում է սիրաբար պնդել իրենը, բայց՝ ապարդյուն:

Իսկ իրականության մեջ ահա թե ինչ էր կատարվում:

1882 թվականին, հոգևոր հեղաշրջման բարձրակետին, Տոլստոյն անպասելիորեն կատարում է իր կյանքի վերջին խոշոր ձեռքբերումը՝ 27 հազար ռուբլով Մոսկվայում, Խամովնիկյան նրբանցքի թիվ 15 տունը գնելու փաստաթուղթ է ստորագրում:

Մոսկվա տեղափոխվելը պարտադրված էր: Սերգեյն ընդունվում էր Մոսկվայի համալսարան: Անփորձ, գյուղում մեծացած պատանուն մեծ քաղաքում մենակ թողնելը, որտեղ այնքան շատ են գայթակղությունները, վտանգավոր էր: Իլյան ու Լևը ընդունվում էին Պոլիվանովի գիմնազիան: Դա, թերևս, Մոսկվայի լավագույն մասնավոր գիմնազիան էր, որը տարբեր ժամանակներում ավարտել են Անդրեյ Բեյին, Մաքսիմիլիան Վոլոշինը, Վադիմ Շերշենևիչը: Այնտեղ է սովորել նաև մեծ շախմատիստ Ալեքսանդր Ալեխինը: Բայց Իլյան ու Լևը դեռ անչափահաս էին: Նրանց կյանքը Մոսկվայում առանց ծնողների աներևակայելի էր: Եվ, վերջապես, Տատյանան: Նրա մեջ նկարչի տաղանդ էր ի հայտ եկել, որն ընդունում էր Իլյա Ռեպինը: Նա պատրաստվում էր ընդունվել Գեղանկարչության, քանդակագործության ու ճարտարապետության ուսումնարան (ավելի ուշ այնտեղ սովորել է Վլադիմիր Մայակովսկին): Բացի այդ, նա արդեն նշանելու աղջիկ էր, պետք էր նրան հասարակության մեջ մտցնել: Մոֆյա Անդրեևնան՝ բժշկի

դուստրը, դա չէր կարող անել: Եվ Տոլստոյը, չնայած նոր հայացքներին, ինքն է առաջին անգամ Տատյանային տանում մայրաքաղաքային պարահանդեսի, որտեղ նա ծանոթանում է մոսկովյան «ուսկի» երիտասարդության շրջանակի հետ ու հսկայական հաջողություն ունենում: Տատյանան խելացի է, բարետես, վառ, աշխույժ բնավորություն ունի: Փեսացուներից պրծում չկար...

Տոլստոյը խիստ ցավոտ էր տանում Մոսկվա տեղափոխվելը: Գյուղական կյանքի երկու տասնամյակում հետ վարժվելով հին մայրաքաղաքից, ասես այն առաջին անգամ էր տեսնում, սարսափեց քաղաքային քաղաքակրթության վիճակից: Մուրացկաններ, թուրցիկ անառակներ, իսկ հարևանությամբ՝ շքեղ ռեստորաններ, որտեղ ճարպակալում են «պարոնները»: Թաքուն գիշերային կյանքը՝ վատ հոտեր, փոշի ու կեղտ՝ անխուսափելի է մեծ քաղաքի համար, որտեղ այդ ժամանակ նույնիսկ պարզունակ կոյուղի չկար: Ահա թե նա առաջին հերթին ինչ տեսավ Մոսկվայում ու բնավ՝ նրա վեհաշուք տաճարներն ու վանքերը: Դա, իհարկե, խիստ միակողմանի, քննադատական հայացք էր, բայց Տոլստոյն այդ ժամանակ ամեն ինչին էր քննադատաբար նայում:

«Գարշահոտություն, քարեր, պերճանք, չքավորություն,- Մոսկվայի մասին գրում է նա օրագրում:- Այլասերություն: Հավաքվել են ժողովրդին կողոպտած չարագործները, զինվորներ, դատավորներ են հավաքել, որ պահպանեն իրենց խրախճանքը, ու խրախճանում են: Ժողովուրդն արդեն այլ ելք չունի, քան, այդ մարդկանց կրքերից օգտվելով, նրանցից քաշել կողոպտածը: Գեղջուկները դրա վարպետն են: Կանանիք տանն են, տղամարդիկ՝ հատակ ու բաղնիքներում մարմին են կոկում, կառապանություն անում...»:

Ուրեմն ինչո՞ւ էր Տոլստոյը տուն առնում Մոսկվայում:

1881 թվականի ամռանը տուն վարձել փորձեց Սոֆյա Անդրեևնան, որն արդեն հույսը կտրել էր ամուսնուց: Տոլստոյը բուժվում էր սամարյան տափաստաններում, իսկ կինը հղիության վեցերորդ ամսում մեկնեց Մոսկվա՝ նոր «բույն» որոնելու: Արդյունքում՝ տուն վարձեց Դենեժնի նրբանցքում:

«Տունն իրականում խաղաթղթե տնակի պես բան դուրս եկավ,- հիշում էր որդին՝ Մերգեյ Լվովիչը:- Մենյակների դասավորությունն այնպիսին էր, որ ամեն սենյակում լավում էր հարևան սենյակների աղմուկն ու խոսակցությունները: Դա խանգարում էր հորս աշխատելուն, ինձ էլ էր խանգարում. համարյա դաշնամուր նվագելու ժամանակ չէի գտնում, իսկ երբ ժամանակ էր լինում, վախենում էի խանգարել հորս...»: Տոլստոյը ստիպված էր առանձին գումարով վարձակալել տան հարևանությամբ գտնվող կողաշենքը, որ-

տեղ էլ գրվեց «Ինչով են մարդիկ կենդանի» պատմվածքը: Պատմվածքից հետևում էր, որ «նրանք կենդանի են միայն սիրով»: Բայց հենց սերն ու ըմբռնումն էին բացակայում Տոլստոյների ընտանիքում: Սոֆյա Անդրեևնան, ցանկանալով սիրաշահել ամուսնուն, աշխատասենյակի համար ընտրեց մեծ սենյակը, որի պատուհանները բակ էին նայում: «Բայց հենց այդ հրաշալի աշխատասենյակը,- գրում է նա հուշերում,- հետագայում հուսահատեցրեց Լև Նիկոլաևիչին նրանով, որ չափազանց ընդարձակ էր ու չափազանց փառահեղ»:

Բայց միայն աշխատասենյակի խնդրով չի բացատրվում Տոլստոյի քայլը: Նա ոչ թե պարզապես տուն է գնում, այլ մի ամբողջ կալվածք՝ Մոսկվայի խաղաղ շրջանում, հսկա պողատու այգով, և անմիջապես սկսում է վերակառուցել ու ընդարձակել մեծ ընտանիքի համար: Նա անձամբ է մտնում ջեռուցման համակարգի վերակառուցման և կարգավորման բոլոր նրբությունների մեջ, ինքն է թանկարժեք կահույք գնում ու նույնիսկ ընտրում պաստառները: Սոֆյա Անդրեևնան երեխաների հետ այդ ժամանակ Յասնայայում էր, անհանգստանում ու մի քիչ էլ բարկանում էր ամուսնու վրա, որ իրեն մեկուսացրել է նոր «բույնը» բարեկարգելուց: Տոլստոյը տունը մանրակրկիտ է պատրաստում, ընտանիքի հանդեպ մեծ սիրով ու խնամքով: Երբ 1882 թվականի հոկտեմբերին ընտանիքը մտնում էր «Առնատտովկա» (կալվածքի նախկին տիրոջ՝ վաճառական Առնատտովի անունով), բոլոր տնեցիները ցնծում էին: «Մենք Առնատտովկա եկանք երեկոյան,- օրագրում գրում է Տատյանա Լվովնան:- Շքամուտքը լուսավորված էր, սրահը՝ նույնպես: Ճաշի սեղան էր բացած, սեղանին, սկահակում՝ մրգեր: Ընդհանրապես, առաջին տպավորությունն ամենափառահեղն էր. ամենուր լուսավոր է, ընդարձակ և ամեն ինչից երևում էր, որ պապա՝ն ամեն ինչ կշռադատել ու ջանացել է հնարավորինս լավ կազմակերպել, ինչին միանգամայն հասել է... Ես շատ զգացված էի մեր հանդեպ նրա հոգատարությունից. ու դա առավել հաճելի էր, քանի որ նման չէր նրան»:

Բայց այդ տունը Տոլստոյի վերջին և վերն էր ընտանիքին, նախկին փութաջան տանտիրոջ ու շահառուի յուրատեսակ «կարապի երգը»: Գուցե նրա համար էր այդպես հոգի դնում այդ տան մեջ, որպեսզի ընտանիքին ցույց տա, որ իր «հեռացումը» աշխարհիկ խնդիրներից թուլության ու «բոլորի պես ապրելու» անկարողության նշան չէ: Որ թուլամտությամբ չի տառապում ու «գժություն չի անում»: Որ նոր հայացքները պատահական չեն, այլ՝ ապրված: Որ դրանց հասել է բանական ճանապարհով, ոչ թե մտավոր ու հոգեկան բեկման հետևանքով:

Մակայն Տոլստոյի այդ քայլի մեջ, իհարկե, լուրջ հակասություն էլ կար: Ինչն<sup>օ</sup>ւ ընտանիքի համար հարուստ տուն ստեղծել՝ անմիջապես էլ առաջարկելով հրաժարվել դրանից:

1883 թվականին, մի շարք ընտանեկան բախումներից հետո ամուսինները եկան փոխգիշման, որն իրականում կողմերից ոչ մեկին չէր բավարարում: Տուլայի նոտարի ներկայությամբ Սոֆյա Անդրեևնային զխավոր լիազորագիր տրվեց վարելու բոլոր գույքային գործերը, ներառյալ Տոլստոյի ցանկացած սեփականություն ամբողջությամբ կամ մաս-մաս վաճառելու իրավունքը: Այդուհետ կինը կարող էր եկամուտ ունենալ դրանից, ծախսել սեփական հայեցողությամբ ու ստորագրել ցանկացած պայմանագիր:

Տոլստոյը դե ֆակտո (դեռ ոչ դե յուրե) հրաժարվում էր սեփականությունից: Նա ասես թոթափում էր այդ «չարիքն» աճյունափոշու պես: Բայց «չարիքն» ընկնում էր կնոջ ուսերին:

Դա դառը փոխգիշում էր, որը դանդաղեցված գործունեության ական դրեց: Լիազորագիրը ստորագրելով՝ Տոլստոյն ըստ երևույթին վարվում էր բռնություն չգործելու՝ իր դավանած սկզբունքով: Նա կնոջն ու երեխաներին թույլ էր տալիս՝ իրենք որոշեն, թե ինչպես են ապրելու՝ զան իր ետևի<sup>օ</sup>ց, թե՞ «պարոններ» մնան: Բայց դրա հետ մեկտեղ նա մնում էր ընտանիքում և կամա թե ակամա նրանց հետ կիսում առտնին կյանքը: Իսկ ինքը պատրաստվում էր նոր կյանքին. ինքն էր փայտ սղոցում, սապոգ կարել էր սովորում, վար ու հունձ էր անում գյուղացիների հետ: Բայց հետո վերադառնում էր տուն (մոսկովյան ու գյուղական), որտեղ ոչինչ չէր փոխվել:

1884 թվականի ամռանը նա տնից հեռանալու առաջին փորձն արեց: Դա յուրատեսակ «սևագիրն» էր նրա նշանավոր հեռացումի: Եվ այն անհեթեթ ստացվեց:

Հունիսի տասնութին Տոլստոյը Յասնայա Պոլյանայում գնաց հնձելու տան շրջակայքի խոտը, հետո՝ լճակում լողալու: Վերադարձավ առույգ և ուրախ: Ու հանկարծ նրա ու կնոջ միջև վեճ բռնկվեց սամարյան ձիերի կապակցությամբ, որոնք նա սկսել էր բուծել, բայց հետո թողել էր այդ գործը: Սոֆյա Անդրեևնան ճշում էր, որ այդ ձիերից միայն կորուստներ են ունենում, որ նրանց կոտորել են, ու հենց ամուսինն է ցանկանում այդպես ազատվել ձիերից: Տոլստոյը մտավ աշխատասենյակ, հավաքեց մախաղը, որով ժամանակին գնացել էր Օպտինյան անապատ, դուրս եկավ տնից ու կեչիների ծառուղով գնաց դեպի Սպիտակ սյուները՝ Յասնայա Պոլյանայի մուտքը: Սոֆյա Անդրեևնան հասավ ետևից ու հարցրեց, թե ուր է գնում: «Չգիտեմ, ուր պատահի, գուցե Ամերիկա, և ընդմիշտ: Ես այլևս չեմ կարող

ապրել տանը»,- արտասովակալաժ՝ բղավեց Տոլստոյը: Կինը հիշեցրեց, որ ինքը հողի է և ուր որ է պիտի ծննդաբերի: Տոլստոյը չէր լսում և արագացրեց քայլը:

Տուլայի խճուղու կեսից նա հետ դարձավ: Տանը Սերգեյն ու Իլյան բուրբ էին խաղում: «Տանը վիճոտ են խաղում մորուքավոր տղամարդիկ՝ իմ երկու որդիները»,- նրանց մասին, ինչպես օտարների, գրում է նա օրագրում: Գիշերվա ժամը երեքին Սոֆյա Անդրեևնան արթնացրեց նրան. «Կներես, ծննդաբերում եմ, գուցե և մեռնեմ»: Այդ գիշեր ծնվեց նրանց վերջին դուստրը՝ Ալեքսանդրան: Բայց դա չուրախացրեց ոչ մեկին:

Տատյանա Լվովնան իրավացի էր, երբ օրագրում գրում էր, որ սեփականությունից հրաժարվելը չի փոխի ընտանիքի անդամների բնավորությունները, այլ չարացածություն կծնի նրանց մեջ:

Առաջինը չարացավ Իլյան: Նա վաղ էր ամուսնացել, Սոնեչկա Ֆիլոսոֆովայի՝ Գեղարվեստի ակադեմիայի փոխնախագահի դստեր, Տոլստոյի կարծիքով՝ «փառահեղ, հասարակ, առողջ, մաքուր», բայց, ավաղ, ոչ հարուստ աղջկա հետ: Ըստ էության՝ անօժիտի հետ: Տոլստոյի որդիներին հատուկ էր հարուստ հարսնացու չփնտրելն ու միայն սիրով ամուսնանալը: Ժամանակին այդպես էր վարվել նաև նրանց հայրը:

Նորասակները բնակություն հաստատեցին Գրինյովկայում, որը պատկանում էր Սոֆյա Անդրեևնային: Առաջին ժամանակները նրանք կատարելապես երջանիկ էին: Իլյային դուր էր էր գալիս գյուղական տնտեսությունը: Բայց շուտով տրամադրությունը փոխվեց:

Նա սկսում է իրեն «կառավարիչ» զգալ մոր կալվածքում: Եվ դա նրան դուր չի գալիս: Ակնարկով, իսկ հետո նաև բացահայտ խոսք է բացում հոր սեփականությունը բաժանելու մասին: Տոլստոյների ընտանիքում կատարվում է նույնը, ինչ գեղջկական ընտանիքներում. ամուսնանալով՝ որդիներն ուզում էին ինքնուրույն ապրել, ոչ թե հոր ղեկավարությամբ, և ընտանեկան սեփականության բաժանում էին պահանջում: Առաջին հերթին՝ հողի...

Միայն թե «հայրն» այս դեպքում Սոֆյա Անդրեևնան էր:

Նրա ու Իլյայի միջև վեճեր սկսվեցին: Մոր խոստորում Իլյան ձիեր էր պահում, որոնց կաթից կումիս էին պատարստում հոր համար: Ահա Սոֆյա Անդրեևնայի օրագրի գրառումը՝ արված Իլյայի այցի ժամանակ.

«Իլյան հանկարծ ասում է. «Իսկ ես ձեզ մատակներ չեմ տա կումիսի համար»: Ես պայթեցի և ասում եմ. «Ես քեզ չեմ հարցնի, այլ կիրամայեմ կառավարչին»: «Կառավարիչը ես եմ»: «Իսկ տիրուհին՝ ես»: Հոգնած էի, թե նա չարչարեց ինձ փողի ու կալվածքի մասին խոսակցությամբ, բայց սհա-

վոր զայրացա, ասում եմ. «Տես ուր ես հասել, հորդ կումիսի համար մատակ ես խնայում: Ինչո՞ւ ես գալիս, կորիք գրողի ծոցը, տանջեցիր ինձ»:

Բոլոր որդիներից Տոլստոյն ամենաշատը Իլյային էր սիրում: Ե՛վ արտաքինով, և՛ բնավորությամբ Իլյան նման էր հորը. նույնքան համառ և անկառավարելի: Տոլստոյը չգիտես ինչու, խղճում էր Իլյային: Կանխավ հանդուժում էր, որ նա դժբախտ կլինի: (Այդպես էլ եղավ): Եվ Տոլստոյը բաժանման որոշում կայացրեց:

Դա աննախադեպ քայլ էր: Ոչ թե պարզապես բաժանում, այլ Տոլստոյի անշրջելի հրաժարումը ողջ սեփականությունից, «այնպես, ասես մեռած լինեի»:

«1891 թվականի հուլիսին,<sup>27</sup>- հիշում է Սերգեյ Լվովիչը,- բոլոր եղբայրներով ու քույրերով հավաքվեցինք Յասնայա Պոլյանայում՝ հորս առաջարկած կալվածքների բաժանումը քննարկելու: Հայրս իր բոլոր կալվածքները, մորս գնած՝ Օվսյաննիկովո ու Գրինյովկա ոչ մեծ կալվածքների հետ, գնահատում էր մոտ 500000 ռուբլի և որոշել էր այդ բոլոր կալվածքները հավասար բաժանել ինը հոգու միջև՝ մեր մոր ու նրա ութ երեխաների: Յուրաքանչյուր մասը նա գնահատեց 55000 ռուբլի: Այդ գործի համատեղ քննարկումից հետո հորս առաջարկով որոշվեց յուրաքանչյուրի բաժնի հետևյալ բաշխումը. Յասնայա Պոլյանան բաժանվեց երկու մասի. մի մասը փոխանցվում էր մորս, մյուսը՝ մանկահասակ Իվանին, որը նրա խնամակալության տակ էր. Նիկոլսկոյե-Վյազենսկոյեն, Գրինյովկայի հետ, բաժանվում էր երեք մասի. ես ստանում էի մի մասը՝ կալվածքի հետ, Տանյա քրոջս 28000 վճարելու պայմանով, Մաշան ստանում էր Նիկոլսկոյեի միջին մասը, Իլյան՝ Պրոտասովյան խուտորը՝ մորս գնած Գրինյովկայի հետ, որտեղ նա բնակություն էր հաստատել, Տատյանան՝ ինձնից 28000 և մորս գնած Օվսյաննիկովոն, Լևը՝ մոսկովյան տունն ու սամարյան կալվածքի մի մասը, երեք փոքրերը, մորս խնամակալության տակ գտնվող Իվանից բացի, ստանում էին մնացած սամարյան կալվածքը: Մաշան, որը կիսում էր հորս հանդմունքները, հրաժարվեց իր բաժնից, ու նրա մասը տրվեց մորս:

Այդ ժամանակ ես մորս առաջարկեցի, ինչին նա համաձայնեց, ինձ տալ Նիկոլսկոյե-Վյազենսկոյեի Մաշայի մասը, ինչի համար պարտավորվում էի վճարել նրա արժեքը, այսինքն 55000 ռուբլի: Այսպիսով, պարտավորվեցի քույրերիս վճարել  $28000+55000=83000$ , ինչը կազմում էր մոտ

27. Իրականում՝ ապրիլի վերջին:

հարյուր ռուբլի՝ կավածքի դեսյատինից»:

Այս չոր թվերի ետևում իսկական դրամա էր թաքնված: Տոլստոյի ընտանիքի անդամները բաժանում էին նրա ունեցվածքը որպես ժառանգություն, այնպես, ասես նա մահացած լիներ: Բայց Տոլստոյը չէր մահացել և նույն տանն էր, որտեղ կինն ու երեխաները բաժանում էին իր ժառանգությունը...

Տոլստոյն, այսպիսով, կատարեց կնոջ ու զավակների հանդեպ պարտքը: Չէ՞ որ նրանց «ժառանգություն» էր տալիս շատ ավելի, քան ժամանակին ստացել էր հորից: Եվ ահա տարօրինակ զուգադիպություն: «ժառանգությունը» կազմեց կես միլիոն ռուբլի: Ճիշտ այնքան, որքան կազմում էին նրա պապ Իլյա Անդրեևիչի պարտքերը, որ նա «ժառանգություն» էր թողել հորը՝ Նիկոլայ Իլյիչին:

Բայց այդ ամենը ծանր էր: բոլորի համար: Երբ Տատյանան ու երկու ավագ եղբայրները մտան հոր առանձնասենյակը, որ նրան հայտնեն սեփականությունը բաժանելու մասին, Տոլստոյը շատ խղճալի տեսք ուներ: Նա սկսեց արագ-արագ խոսել. «Այո՛, գիտեմ, պետք է ստորագրեմ, որ ամեն ինչից հրաժարվում եմ ձեր օգտին»: «Այնքան խղճալի էր,- օրագրում գրում է Տատյանան,- նա նման էր դատապարտյալի, որը շտապում է գլուխը խցկել օղակի մեջ, որից, գիտի, չի խուսափելու»:

Տոլստոյի՝ ունեցվածքից ազատագրվելու գինը վերջնական բաժանումն էր ընտանիքից: Այդ կոտորվածքն արդեն անհնար էր տեսնել: Տոլստոյի ընտանիքը չզնաց նրա ճանապարհով: Կինն ու երեխաները դարձան «պարոններ», ինքը՝ չքավոր: Չրիակյաց՝ ընտանիքում...

### *Հրաժարում գրական իրավունքներից*

Տոլստոյի կյանքի վերջում արտասահմանյան հրատարակիչները նրա բոլոր ստեղծագործությունների նկատմամբ բացառիկ իրավունքների համար առաջարկում էին տասը միլիոն ոսկե ռուբլի: Արտասահմանյան հրատարակիչները, քանի որ հայրենականներն, ըստ երևույթին, այդպիսի գումար առաջարկել չէին կարող:

Ոսկե ռուբլին դրամական միավոր է, որը Ռուսաստանում մտցվել է 1879 թվականի բարեփոխման արդյունքում, և հավասարեցված էր 0,77 գրամ ոսկուն: Ոչ բարդ հաշվարկներից հետո կարելի է ասել, որ հրատարակիչները պատրաստ էին Տոլստոյին վճարել համարյա ութ տոննա ոսկի: Նրա բոլոր ստեղծագործությունների համաշխարհային գինը 1910 թվականին մոտ տասը միլիոն այսօրվա ռուբլի կամ մոտավորապես 150 միլիոն այսօրվա դոլար էր:



Դա շա՞տ է, թե՞ քիչ: Այսօր ամերիկյան դետեկտիվների որոշ հեղինակներ մեկ գրքի համար 50 միլիոն դոլարից սկսած հոնորար են ստանում: Նախահեղափոխական Ռուսաստանում բարբերն ու պահանջմունքները էապես տարբերվում էին այսօրվանից: Աշխատավարձերի տարբերությունն այն ժամանակ զգալի էր: Օրինակ, խոհարարուհին ստանում էր ամիսը մոտ ութ ռուբլի, դռնապանը՝ 18, տարրական դպրոցի ուսուցիչը՝ 25, քաղաքին հսկիչը (ներկայիս տեղամասային տեսուչը)՝ 50, գնդապետը՝ 300-ից ավելի, իսկ գաղտնի խորհրդականն ու բանակի գեներալը՝ արդեն 500-ից բարձր:

Անիմաստ է համեմատել մաև նախահեղափոխական և այսօրվա Ռուսաստանների գները: Դա ուրիշ աշխարհ էր: Ցարական Ռուսաստանում մեկ ֆունտ (0,4 կիլոգրամ) հացը արժեր 5-7 կոպեկ, մեկ լիտր կաթը՝ 4-6 կոպեկ, տասը ձուն՝ 10-25 կոպեկ, խոճկորը՝ 50 կոպեկից 3 ռուբլի, կենդանի ոչխարը՝ մինչև 3 ռուբլի, սև ձկնկիթի ֆունտը՝ 1 ռուբլի 50 կոպեկից 2 ռուբլի 50 կոպեկ, իսկ կենդանի թառափի ֆունտը՝ 1-ից 2 ռուբլի:

Սակայն տվյալ դեպքում խնդիրն այն չէ, որ Տոլստոյի ստեղծագործությունների նկատմամբ բացառիկ իրավունքների համար արտասահմանյան հրատարակիչների առաջարկած գինը 20 անգամ բարձր էր այն սեփականության արժեքից, որ նա բաժանել էր կնոջ ու զավակների միջև:

Այդ թվերն անհրաժեշտ է իմանալ հասկանալու համար, թե ինչու Տոլստոյի հրաժարումը սեփական ստեղծագործությունների նկատմամբ իրավունքներից ընտանիքի և առաջին հերթին Սոֆյա Անդրեևնայի համար շատ ավելի ցավոտ էր, քան սեփականությունից հրաժարվելու փորձը:

1883 թվականից, բոլոր գործերը վարելու լիազորագիր ստանալով ամուսնուց, Սոֆյա Անդրեևնան միայն տնտեսական գործերով չի զբաղվում Յասնայա Պոլյանայում ու Խամովնիկիի դաստակերտում: Նա փաստացի դառնում է ամուսնու հրատարակիչը: Ինքն է նրա ստեղծագործությունները հանձնում տպարաններին, ինքն է կարդում խմբագրված օրինակները, ինքն է սահմանում գրքերի գները: Գրքերը պահեստավորվում են Խամովնիկիում՝ հատուկ նախատեսված շինություններում, և փոքր խմբաքանակներով հանձնվում գրավաճառներին: Դա կամ նորից Սոֆյա Անդրեևնան է անում, կամ էլ, նրա բացակայության դեպքում, պահեստի կառավարիչ Մատվեյ Ռումյանցևը: 1891 թվականին, երբ Տոլստոյը սեփականությունից հրաժարվելուց անմիջապես հետո դնում է մաև գրական իրավունքներից հրաժարվելու հարցը, Սոֆյա Անդրեևնայի կողմից հրատարակվող նրա երկերի ժողովածուն արդեն հասնում է տասներկու հատորի: Հրատա-

րակության էր պատրաստվում տասներեքերորդ հատորը: Եվ ահա պայթեց ամպրոպը:

1891 թվականի հուլիսի տասնմեկին Տոլստոյը Յասնայա Պոլյանայից կնոջը նամակ է ուղարկում՝ համոզելով նրան, որ հենց ինքը թերթերում նամակ հրապարակի գրական իրավունքներից հրաժարվելու մասին: Բայց դա ի՞նչ էր նշանակում: Դա նշանակում էր, որ ցանկացած իշխանություն կարող է անհատույց վերահրատարակել Տոլստոյի ցանկացած ստեղծագործություն, առանց հարցնելու հեղինակի կամ նրա գործակալի համաձայնությունը, որը նույնպես Սոֆյա Անդրեևնան էր. չէ՞ որ պաշտոնապես իրավունքներ չունեի ամուսնու ստեղծագործությունների նկատմամբ, այլ միայն տնօրինում էր հրատարակման և հոնորարներ ստանալու լիազորագիրը: Գործակալ և հրատարակիչ՝ նույն դեմքով:

«Ես այդ ամբողջ ընթացքում մտածում էի կազմել ու հրապարակել հայտարարություն իմ վերջին գրվածքների նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու մասին, բայց մի տեսակ չէր ամբողջանում. իսկ հիմա կարծում եմ, որ դա կարող է նույնիսկ լավ լինել այն հանդիմանության վերաբերմամբ, որ հանրությունն ունի շահագործման մասին, ինչպես գրում է արտելականը, եթե քո կողմից թերթերում այդպիսի հայտարարություն հրապարակես՝ կարելի է խմբագրին ուղղված նամակի տեսքով. Ո(ղորմած) Տ(եր), խնդրում եմ Ձեր հարգարժան թերթում հրապարակել հետևյալը: Իմ ամուսինը՝ Լև Նիկոլևսկի Տոլստոյը հրաժարվում է իր վերջին ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքից՝ ցանկացողներին թույլ տալով անհատույց տպագրել ու հրատարակել դրանք»:

Այդ ժամանակ բանակցություններ էին գնում արտելական Ռումյանցևի և գրողի կնոջ միջև, թե ինչ գին պիտի սահմանվի տասներեքերորդ հատորի համար: Ռումյանցևը տիրուհուն զգուշացնում էր, որ եթե նա իջեցնի հատավաճառի հատորի գինը (այդ հատորը մեծ հետաքրքրություն էր առաջացրել, որովհետև ընդգրկում էր Տոլստոյի վերջին ստեղծագործությունները, ներառյալ սկանդալաին «Կրեյցերյան տոնատը»), ապա հատորը բաժանորդագրությամբ ստացող գնորդները, դժգոհ կմնան և կարող են ջարդել պահեստի ապակիները, ինչպես եղել էր Սուվորինի մոտ, էրբ նա «էժանագին» Պուշկին էր հրատարակել:

«Շահագործման» մասին խոսելով՝ Տոլստոյը շրջոնքում էր հիմնախնդիրը: Կամ ավելի լավ է ասել՝ շրջում էր 180 աստիճանով: Կինն ու արտելականը վիճում էին գինն իջեցնելու կամ բարձրացնելու շուրջ՝ առավելագույն օգուտի հասնելու համար, իսկ Տոլստոյն առաջարկում էր ընդհանրապես

հրաժարվել ցանկացած օգուտից: Դժվար է հասկանալ, թե ինչն էր առաջնորդում Տոլստոյին, երբ գրում էր այդ նամակը...

Տոլստոյն ավելի շուտ չգիտեր (կամ չէր ուզում մտածել դրա մասին), որ ընտանիքը (և ինքը նույնպես) Յանայա Պոլյանայի եկամուտների հաշվին չի ապրում: Յանայան վնասաբեր կալվածք էր: Համաձայն «Ելից-մտից մատյանի», որը մանրակրկիտ վարում էր Սոֆյա Անդրեևնան, նա տարեկան երկու հազար ռուբլի և նույնիսկ ավելի ներդրում էր անում Յանայա Պոլյանայում: Եկամուտները, որոնք թույլ էին տալիս փակել ծախսերը, այդ թվում և կալվածքի, ստացվում էին միայն գրքերից:

Շահութաբեր սամարյան կալվածքը տնօրինում էր որդին՝ Լև Լվովիչը, Նիկոլսկոյե-Վյագենսկոյեն բաժին էր հասել Սերգեյ Լվովիչին, Պիրոգովոն նախապես պատկանում էր Տոլստոյի եղբորը՝ Սերգեյ Նիկոլասիչին ու քրոջը՝ Մարիային: Նույնիսկ Խամովնիկիի տունը, որը Տոլստոյի նստավայրն էր դարձել Մոսկվայում, իրավաբանորեն Լև Լվովիչի սեփականությունն էր, իսկ ծախսերն անում էր Սոֆյա Անդրեևնան:

1884 թվականի հոկտեմբերին նա Յանայա՝ ամուսնուն ուղարկեց «Ամենամայա պարտադիր ծախսերի» ցանկը.

«Ռուբլով

Անգլոսիին 30

Madame 50

Ապահովագրություն 267

Կաշկակայա 40

Դումային 200

Գիմնազիա և համալսարան 47

Պետական 80

Ռուս. ուսուցչուհի Մաշային 36

Դաստիարակություն 203

Ռոճիկ

Սպասավորների ռոճիկ. 98

Խոհարարին 15

Լվացարարուհուն 40

Սպասավորին 15

Փայտ 60

Կառապանին 16

ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Սերյոժային 40  
Դայակին 8  
Միս ու սնունդ սպասավորներին ու մեզ 150  
Դռնապանին 8  
Չոր սննդամթերք, լուսավորություն, ածուխ, ծխախոտ 150  
Դունյաշային 8  
Խոհարարուհուն 4  
Հացագործին 25  
Վարյային 5  
Հատակ մաքրողներին 5  
Տատյանային 6  
Ձիեր, կովեր 75  
Վլասին 8  
Գիշերապահակ 2  
Ստնտուին 5  
Ռոճիկ Իլյային, Տանյային, Լյուլյային ու Մաշային 12  
Տան պահակներ 50  
Ընդամենը՝ ամսական 910»:

Այդ ցանկում կոմսի ուշադրությունն է գրավում Իլյայի, Տանյայի, Լյուլյայի (Լևի) ու Մաշայի «ռոճիկի» մասին տողը: Սոֆյա Անդրեևնան երեխաներին երես չէր տալիս: Նրանք կատարում էին իրենց տնային պարտականությունները ու դրա համար «ռոճիկ» ստանում, որը սպասավորի աշխատավարձից ցածր էր:

Տոլստոյի պատասխանը նամակին այսպիսին էր.

«Ես չեմ կարող, հոգի՛ս, չբարկանաս, որևէ կարևորություն տալ այդ փողային հաշիվներին: Այդ ամենը իրադարձություն չէ, ինչպես, օրինակ, հիվանդությունը, ամուսնությունը, ծնունդը, մահը, ձեռքերված գիտելիքը, վատ կամ լավ արարքը, մեզ թանկ ու հարազատ մարդկանց վատ կամ լավ սովորությունները, դա մեր օրակարգն է, որն այդպես ենք կազմակերպել և կարող ենք այլ կերպ ու էլի 100 ձևով կազմակերպել»:

Իրականում Տոլստոյի կարծիքը ընտանիքի «վերակազմակերպման» մասին միայն մեկն էր ու բավական արմատական: Հենց 1884 թվականին նա գրում է ընտանեկան աշխատանքային կոմունայի նախագիծը:

Եվ ահա սեփականությունը բաժանելուց վեց տարի անց, երբ կինը երկու փոքրերի՝ Մաշայի ու Վանեչկայի հետ, միայն Յասնայա Պոլյանայի

սեփականատերն էր, Տոլստոյը նրան առաջարկում է, որ անձամբ նամակ ուղարկի թերթերին գրական իրավունքներից հրաժարվելու մասին:

Դժվար չէ պատկերացնել Սոֆյա Անդրեևնայի արձագանքն այդ առաջարկին: Ինչպես և ութսունականների սկզբին՝ նա ապստամբեց:

Եվ դա չնայած նրան, որ Տոլստոյը նորից համաձայն էր փոխզիջման: Նա կնոջն առաջարկում էր հրաժարվել միայն այն ստեղծագործությունների իրավունքներից, որ գրվել կամ գրվելու էին 1881 թվականից հետո: Այն ամենը, որ գրվել էր մինչև 1881 թվականը ներառյալ, կինն իրավունք ուներ հրատարակել և նյութական շահ ստանալ դրանից:

Բայց ինչո՞ւ 1881 թվականը: Այդ տարի Տոլստոյը գրեց «Ինչով են մարդիկ կենդանի» պատմվածքը, որը բեկումնային էր նրա ստեղծագործության համար: Դրանից հետո նա հինգ տարի ոչ մի գեղարվեստական գործ չի գրում: 1885-1886 թվականներին սկսում են հրատարակվել նրա ժողովրդական պատմվածքները՝ «Թշնամին՝ շատվոր, Աստված՝ գորավոր», «Որտեղ սերն է, այնտեղ՝ Աստված», «Երկու եղբայր ու ոսկին», «Իլյաս», «Մոմը», «Կրակը թողիր, էլ չես հանգցնի», «Պյոտր Խլեբնիկ» և այլն: Դրանք կրոնական, բարոյախրատական տեքստեր են, գրված Տոլստոյի համար նոր գեղագիտությամբ, որը կանխորոշվել է «Ինչով են մարդիկ կենդանի» պատմվածքով: Բայց արդեն այդ տարիներին նա վերադառնում է «մաքուր» գրականությանը:

Նրա գրչի ծնունդն են այնպիսի գլուխգործոցներ, ինչպես «Խոլստոմենը» և «Իվան Իլյիչի մահը» վիպակները, «Խավարի իշանություն» պիեսը, որը շրջեց թատերական գեղագիտության մասին պատկերացումները: 1889-1890 թվականներին գրում է «Դևը» և «Կրեյցերյան սոնատ» վիպակները: Առաջինը հրատարակվեց միայն նրա մահից հետո, իսկ երկրորդը լույս տեսավ 1891 թվականին ու հարուցեց հասարակության կատաղի, սկանդալային հետաքրքրությունը: Իննսունական թվականներին ռուս ինտելիգենցիան երկու գլխավոր հարց ուներ, որոնց շուրջ անվերջ վիճում էին: Ովքե՞ր են իրավացի՝ մարքսիստներ՞ը, թե՞ մարդնիկները: Եվ ինչ էր ուզում ասել Տոլստոյն իր «Կրեյցերյան սոնատով»:

Սա նոր Տոլստոյ է՝ արմատական արվեստագետ: Նա արդեն էպիկական կտավներ չի ստեղծում, նրա համար դա... ձանձրալի է: Գրում է կամ մինիմալիստական ժողովրդական պատմվածքներ, կամ փիլիսոփայական բովանդակության տեսակետից խիստ սեղմ վիպակներ, որտեղ միայն նպատակն է արդարացնում միջոցները, իսկ նպատակն է՝ նոր բան ասել մարդկանց, ինչը նրանք չգիտեն ու չեն կռահում: «Գեղեցիկ գրակա-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

նությունն» այլևս չի հետաքրքրում Տոլստոյին: Միմիայն իմաստ և իմաստ:

Եվ ահա այդ նա «նոր Տոլստոյին» խլում է հրատարակիչ-կնոջ ձեռքից՝ նրան թողնելով միայն «հինը»: Սոֆյա Անդրեևնայի տնօրինության տակ այնքան էլ քիչ բան չէր մնում: Ավելին, դրանք առավելապես «դասական» ստեղծագործություններն են՝ «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդություն», «Սևաստոպոլյան պատմվածքներ», «Կազակներ», «Պատերազմ և խաղաղություն»... Բայց հասարակությունն արդեն կարդացել է այդ գրքերը: Նրան հետաքրքրում է «նոր Տոլստոյը»: Չնայած Ռուսաստանում Տոլստոյի կրոնական ստեղծագործությունների արգելմանը, նրա փառքը տարեցտարի աճում է: Իննսունական թվականների սկզբին փաստորեն չկա որևէ թերթի որևէ համար, որտեղ այս կամ այն համատեքստում չի շատակվի նրա անունը: Արգելված պտուղը քաղցր է և ճշմարտությունը իշխանություններից հալածվածներիցն է. սա էր ռուս ինտելիգենցիայի համոզմունքը և՛ XIX, և՛ XX դարում: Եվ Տոլստոյը դառնում է նրա գլխավոր կուռքը:

Սոֆյա Անդրեևնան որպես կին հավանություն չի տալիս ամուսնու հայացքներին ու դիրքորոշմանը: Բայց որպես հրատարակիչ խիստ հետաքրքրված է նրա նոր ստեղծագործություններով: Այո՛, նրան դուր չի գալիս «Կրեյցերյան սոնատը»: Թերևս նույնիսկ ատում է այդ սարսափելի վիպակը, որտեղ ամուսինը խանդից սպանում է կնոջը, ապա սպանության համար արդարանում նրանով, որ չեն լինում քրիստոնեական ամուսնություններ, որ համարյա յուրաքանչյուր ընտանիքի ստեղծման հիմքում ընկած են հեշտասիրությունն ու կնոջ սեռական շահագործումը, և կանայք սկզբում խրախուսում են այն, իսկ հետո սկսում են դիմադրել: Սոֆյա Անդրեևնան այդ վիպակում տեսնում է իրենց ընտանեկան կյանքի արտացոլումը: «Ի՞նչ անտեսանելի թել է կապում Լյովոչկայի հին օրագրերը նրա «Կրեյցերյան սոնատի» հետ,- գրում է նա օրագրում:- Իսկ եթե ես պատահամբ այդ սարդոստայնն ընկած և այնտեղ բզզացող ճա՞նճ եմ, որից սարդը ծծում էր արյունը»: «Հին», այսինքն վաղ շրջանի օրագրերը: Որոնք ժամանակին ցնցել էին պարմանուհի Սոնեչկային:

Բայց դա չի խանգարում, որ նա Պոբեդոնոսցևի կողմից վիպակն արգելելուց հետո անձնական ընդունելության հասնի Ալեքսանդր III-ի մոտ՝ նրան համոզելու տպագրել «Կրեյցերյան սոնատը» իր հրատարակված՝ ամուսնու երկերի տասներեքերորդ հատորում: Եվ նա հպարտանում է այդ հանդիպման հաջողությամբ՝ օրագրում առանձին պատմություն մվիրելով

դրան՝ «Իմ ուղևորությունը Պետերբուրգ»։ Տոլստոյին զայրացնում են ոչ միայն հին, այլև նոր ստեղծագործությունների հետ կապված՝ կնոջ ֆինանսական մեքենայությունները։ Եվ նա յուրովի իրավացի է։ Եթե կինը դեմ է իր հայացքներին, ինչպե՞ս է համարձակվում շահ ստանալ դրանցից։

Բայց Սոֆյա Անդրեևնան էլ յուրովի իրավացի է։ Ինչո՞ւ իր հետ ապրող ամուսնու ստեղծագործություններից կարող են շահ ստանալ կապիտալիստ-հրատարակիչները, իսկ ընտանիքը դրա իրավունքը չունի։ Չէ՞ որ նրան արգելվել է շահույթ ստանալ նոր ստեղծագործությունների հրատարակումից, Տոլստոյը չէր կարող հրատարակիչներին արգելել դրանք վաճառել ամենաբարձր գնով։

Դա գորոյան հանգույց էր։ Այն անհնար էր քանդել, կարելի էր միայն կտրել։ 1891 թվականի հունիսի 21-ին Տոլստոյը աներկբա հայտարարում է կնոջը, որ ինքը ուղերձ կուղարկի թերթերին՝ հրաժարվելով 1881 թվականից հետո գրված գործերի գրական իրավունքներից։

«Մենք իրար շատ տհաճություններ ասացինք,- գրում է Սոֆյա Անդրեևնան։- Ես նրան մեղադրում էի փառք տեղալու, սնափառության մեջ, նա գոռում էր, որ ինձ ռուբլիներ են հարկավոր, որ ավելի ազահ ու հիմար կին չի տեսել»։ Ի վերջո նա գոռաց. «Հեռացի՛ր։ հեռացի՛ր»։ Կինը հեռացավ։ Որոշելով նետվել գնացքի տակ։ Ինչպես Կարենինան։

Բարեբախտաբար Կոզլովա Չասեկա կայարանի ճանապարհին Սոֆյա Անդրեևնային հանդիպեց քրոջ ամուսինը՝ Կուզմինսկին։ Սոֆյա Անդրեևնան խնդրում էր իրեն մեռակ թողնել, խոստանում էր, որ շուտով կվերադառնա տուն։ Սակայն տեսնելով նրա խելահեղ վիճակը՝ Կուզմինսկին ստիպեց վերադառնալ իր հետ։

Ու նորից Տոլստոյը գնում է փոխզիջման... Նա համաձայնում է չուղարկել նամակը խմբագրություններին, մինչև Սոֆյա Անդրեևնան չավարտի «Կրեյցերյան սոնատը» պարունակող «դժբախտ» տասներեքերորդ հատորի վաճառքը։ Այդպես կնոջ ամենաչսիրած ստեղծագործությունը վերջինն է դառնում, որն ամուսինը «նվիրում է» նրան նյութական շահ ստանալու համար։

Եվ այն էլ՝ ժամանակավոր։ 1891 թվականի սեպտեմբերի 19-ին «Ռուսսկին վեդոմոստի» թերթում հայտնվում է Տոլստոյի նամակը, որը հետո վերատպում են բոլոր ռուսական թերթերը. «Բոլոր ցանկացողներին իրավունք են տալիս Ռուսաստանում և արտասահմանում, ռուսերեն ու թարգմանաբար անհատույց հրատարակել, ինչպես և բեմադրել իմ այն բոլոր ստեղծագործությունները, որոնք գրել են 1881 թվականից և հրատարակված են

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

1886թ. երկերի լիակատար ժողովածուի XII և այս՝ 1881 թվականին հրատարակված XIII հատորում, ինչպես և Ռուսաստանում չհրատարակված իմ բոլոր ստեղծագործությունները, որ կարող են կրկին ի հայտ գալ այսօրվանից հաշված»:

Նա կատարեց իր խոստումը՝ երկու ամսով հետաձգեց նամակի հրատարակումը: Բայց այսուհետ «Կրեյցերյան սոնատն» ու ինչ գրել էր 1881 թվականից հետո և այն ամենը, որ գրվելու էր ապագայում, խլվում էր կնոջից ու հանձնվում բոլորին:

### *Չերտկովը*

«Freedom is not free»,- ասում են ամերիկացիները: Տառացի՝ «Ազատությունն ազատ չի լինում»: Ծիշտ թարգմանությունը՝ «Ազատությունը ձրի չի տրվում»:

Տոլստոյի հրաժարումը սեփականությունից և հոգևոր հեղաշրջումից հետո գրված բոլոր ստեղծագործությունների գրական իրավունքներից, հնարավոր է, որ նրան ազատում էր սեփականության ու փողի «չարիքից», բայց, միևնույն ժամանակ, ծանր ընտանեկան խնդիրներ էր առաջացնում:

Չէ՞ որ Տոլստոյը չհեռացավ տնից: Շարունակում էր ապրել կնոջ հետ, որը չէր կիսում նրա նոր համոզմունքները: Եվ կամա թե ակամա օգտվում էր նաև իր նախկին սեփականությունից (Յասնայա Պոլյանան, Խամովնիկիի տունը) ու փողերից, որ կինը ստանում էր իր ստեղծագործություններից:

Բացի այդ, Տոլստոյի տունը միշտ հյուրընկալ կամ, ինչպես ժողովուրդն է ասում, ադուհացով տուն էր եղել: Այնտեղ սիրում էին հյուրերին և ուրախ էին ընդունել նրանց, լավ հյուրասիրել ու նույնիսկ անորոշ ժամանակով օթևան տալ:

Յասնայա Պոլյանայում ու Խամովնիկիում հազվադեպ էին ընթրում առանց հյուրերի:

Ով ասես չէր եղել Խոնավնիկիում՝ Տոլստոյների տանը: Նկարիչներ Ռեպինն ու Գեն, քանդակագործ Տրուբեցկոյը, գրողներ Ֆետը, Չեխովը, փիլիսոփաներ Ստրախովն ու Սոլովյովը, կոմպոզիտորներ Ռուբինշտեյնը, Ռիմսկի-Կորսակովը, Ռախմանինովը, Սկրյաբինը: Եվ դա՝ չհաշված ազգականներին, ընտանիքի բարեկամներին, որդիների և դուստրերի ընկերընկերուհիներին:

«Խամովնիկիի տունը» գրքի հեղինակ Ա.Ի. Օպոլսկին գրում է.

«Տոլստոյները նախաճաշում էին ցերեկվա ժամը մեկին մոտ, ճաշում



էին վեցին, իրիկնաթեյի հավաքվում էին իննին մոտ: Մեղանը բացված էր 12 հոգու համար: Մեղանի շուրջն ու պատերի տակ վիեճակաբաններ են: Տանտիրուհին՝ Սոֆյա Անդրեևնան, նստում էր սեղանի գլխին, մեջքով դեպի պատուհանը: Նրա դիմաց ավագ որդին է՝ Մերգեյ Լվովիչը, ձախից փոքր տղան՝ Վանեչկան, աջից՝ կրտսեր դուստրը՝ Սաշան: Լև Նիկոլակիչը սովորաբար նստում էր Վանեչկայի մոտ, կողքին՝ Տատյանա ու Մարիա դուստրերը, իսկ դիմացը՝ Իլյա, Լև, Սիխայիլ ու Ալեքսեյ որդիները: Ասենք, զուտ ընտանիքով շատ քիչ էին սեղան նստում. միշտ հյուրեր էին լինում»:

Ճաշի ժամանակ Սոֆյա Անդրեևնայի առաջ դրվում էր մսի ապուրով ճաշամանը, իսկ ձախ կողմից՝ խոր ափսեների կիսուկը: Նա կանգնած՝ ապուր էր լցնում ափսեները, իսկ սպասավորը տանում ու դնում էր սեղանի շուրջը նստածների առաջ՝ ոչ խոր ափսեների վրա:

Ընտանեկան սեղանին խմիչք չէին մատուցում, բայց ջրամանն ու տնական կվասով ապակե սափորը միշտ սեղանին էին:

Իսկ ահա թե ինչ էր հիշում «Սևերնի վեստնիկ» ամսագրի հրատարակիչ Լյուբով Գուրկիչը. «Ես այնքան հատակ եմ տեսնում նրան (*Տոլստոյին-Պ.Բ.*)՝ նստած երկար ճաշի սեղանի մոտ, հաց է ծամում արդեն անատամ բերանով, ինչ-որ բան է պատմում ու ծիծաղում... Երբ բոլորը հավաքվում էին, ուրախ ու աղմկոտ էր լինում ճաշի ժամանակ: Կատակում էին, ձեռ առնում իրար, փոստ էին խաղում: Փոքրերը լիաթոք, համարյա ծորտոցով քրքջում էին... Երբեմն հենց տեղում որևէ լուրջ վեճ էր սկսվում»:

Բայց դա, համենայնդեպս, ընտանիքի կյանքի «ճակտոնն» էր կամ, շարունակելով ճարտարապետական համեմատությունը, «հյուրասենյակը» կամ «ճաշասենյակը»: Իսկ ի՞նչ էր կատարվում «ճակտոնից» այն կողմ ու մյուս «սենյակներում»:

Ութսունականների սկզբին Մոսկվա տեղափոխվելուց հետո Տոլստոյն իրեն ահավոր միայնակ է զգում ընտանիքում: Ոչ մեկը չի կիսում նրա համոզմունքները: Տանյա և Մաշա դուստրերը, որոնք շուտով կդառնան նրա զինակիցը (հատկապես Մաշան) դեռ շատ փոքր են նրան հասկանալու համար: Մաշան շիկահեր, հիվանդոտ դեռահաս է, իսկ Տանյան՝ գրավիչ աղջիկ, որը տարված է պարահանդեսներով ու զգեստներով, ինչի համար նրան այդ տարիքում դժվար է հանդիմանել: Ահա նա օրագրում գրում է. «Մի քանի օր առաջ պապա՝ն երեկոյան վիճում էր մամա՝ի ու մորաքույր Տանյայի (*Կուզնիսկայայի-Պ.Բ.*) հետ և շատ լավ խոսում այն մասին, թե ինչպես է տեսնում լավ ապրելը, հարստությունն ինչպես է խանգարում լա-

վը լինելուն: Մամա՛ն արդեն մեզ քշում էր քնելու, և ես ու Մանյան ու մորաքույր Տանյան արդեն գնում էինք, բայց նա բռնեց մեզ, ու կանգնել-խոսում էինք էլի համարյա մի ամբողջ ժամ: Նա ասում էր, որ մեր կյանքի գլխավոր մասը ծախսվում է նրա վրա, որ ջանում ենք նմանվել Ֆիֆի Դոլգորուկայային (բարձրաշխարհիկ օրիորդի-Պ.Բ.), ու որ մենք գոհում ենք լավագույն ինչ-որ շորի համար: Ես ասացի, որ համաձայն եմ այդ ամենի հետ և մտքով ամենը հասկանում եմ, բայց հոգիս կատարելապես անտարբեր է մնում ամենայն լավի հանդեպ, ու դրա հետ մեկտեղ, սկսում է թայտալ, երբ ինձ նոր զգեստ ու գլխարկ են խոստանում»:

Ավագ որդին՝ Սերգեյը Մոսկվայի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ջանասեր ուսանող է, կրքոտ տարված երաժշտությանը ու միևնույն ժամանակ անխուսափելիորեն տուրք տվող ուսանողական հեղափոխական տրամադրություններին: Միևնույն ժամանակ՝ համոզված դարվինիստ է, և հոր հավատն առ Աստված նրան հետամնաց բան է թվում, իսկ նրա վերաբերմունքը գիտությունների հանդեպ պարզապես վիրավորում է երիտասարդին:

«Գիտնականները չեն տարբերում օգտակար գիտելիքն անպիտանից, - ասում է հայրը, - նրանք այնպիսի անպետք առարկաներ են ուսումնասիրում, ինչպես ամեռքայի սեռական օրգանները, որովհետև դրա շնորհիվ կարող են աղայավարի ապրել»: Եվ դա ասում է որդուն, որը պատրաստվում է գիտնական դառնալ:

Ավագությանը երկրորդ որդին՝ Իլյան, նույնպես չի հասկանում հորը, ասենք չի էլ փորձում հասկանալ: Իլյան վատ գիմնագիտ է, փոխարենը՝ կրքոտ որսորդ: Եվ գիմնագիտուհիները նրան շատ ավելի են գրավում, քան հոր ծանր խոսակցությունները ռուս գեղջուկների աղետալի վիճակի մասին:

«Շչյոկինցի գեղջուկը: Թոքախտ: Փռշտոց արնախորխով, քրտինք: Արդեն 20 տարի արյուն է թքում»: «Կռնատ Եգորի հարսը: Եկել էր ձիու փող խնդրելու»: «Հարբած գեղջուկը փայտ տաշելիս, կտրել է քիթը»: «Տղան Կոլպենսկոյեից, 12 տարեկան: Մեծը, փոքրերը՝ 9 ու 6 տարեկան: Հայրն ու մայրը մահացել են»: «Շչյոկինցի զինվորը՝ տենդի մեջ»: «Կրակի ճարակ դառած Իվան Կոլչանովը»: «Գեղջկուհին՝ Սուդակովից: Տունը վառվում է: Դուրս է թռչում միտակ շորով: Տղան մտնում է կրակի մեջ: Մեկ է՝ կորչելու ենք: Չի չկա: Չին խլել են դատական կատարածուները»: «Հիվանդը Շչյոկինոյից աղջկա հետ 3 օր եկել է, որ տեսնի ինձ: Պողիվանկայից՝ հիվանդ աղջկա եղբայրը: Քրոջ քիթը փտում է»:

Տոլստոյը սա գրել է ութսունականների սկզբի օրագրում, որը անվանում էր «Քրիստոնյայի նոթեր»: Եվ դա միանգամայն այլ հայացք է աշխարհին, ինչ-որ բանով նման Նեկրասովի ու Դոստոևսկու հայացքներին: Նա միայն աստառապանք է տեսնում շուրջը:

Իսկ տանը ցնծությո՜ւն է:

«Մեզ մոտ հսկա ճաշկերույթ է՝ շամպայնով: Տանյաները (*դուստրն ու քեռին-Պ.Բ.*)՝ զուգված-զարդարված: Բոլոր երեխաները 5 ռուբլանոց գոտիներով են: Ճաշում են, իսկ սայլն արդեն պիկնիկի վայր է գնում՝ տանջված աշխատավոր ժողովրդին տեղափոխող սայլերի հետ»:

Սա Յասնայա Պոլյանան է: Մոսկվայում ավելի վատ է: Ընտանիքի կյանքը հին մայրաքաղաքում՝ պարահանդեսներով, դեպի թատրոն արշավանքներով, երիտասարդական երեկույթներով, աղմկոտ կերուխումներով, «տրաքոցով» ու ցնծությամբ, նա օրագրում «խրախճանքներ» է անվանում, իսկ իր վիճակը նկարագրում է այսպես. «Ավելի լավ է մեռնել, քան այսպես ապրել»: Մահվան միտքը օրագրի կրկնատողն է. «Ուզում եմ մեռնել», «Լավ է մեռնել»...

«Տխրություն, մահ»:

Եվ վերջապես, Տոլստոյին ահավոր նեղացնում է, որ իր գաղափարները սեփական ընտանիքում ընկալվում են որպես ծերունական գառաձախտ, քմահաճույք, որպես մտքի ժամանակավոր մթազնում:

«Լյովոչկան անընդհատ աշխատում է, ինչպես ինքն է ասում,- գրում է Սոֆյա Անդրեևնան քրոջը,- բայց, ավաղ, ինչ-որ կրոնական դատողություններ է գրում, որ ցույց տա, թե Եկեղեցին որքան անհամապատասխան է Ավետարանի ուսմունքին: Դժվար թե Ռուսաստանում գտնվի տասը մարդ, որ կհետաքրքրվեն դրանով: Բայց ինչ անես, ես մի բան եմ ուզում, որ շուտ վերջացնի, և այդ ամենն անցնի հիվանդության պես»:

«Նրանք մարդ չեն»,- բացականչում է Տոլստոյն օրագրում ամենամերձավորների՝ իր կնոջ ու երեխաների մասին:

Դա արդեն ընտանեկան աղետ է:

Հետո շատ բան կփոխվի, կփոխվի ինքնին կամ Տոլստոյի և կնոջ փոխզիջման արդյունքում, ու կյանքը կհոսի նոր հունով: Ավագ դուստրերը հոր օգնականները կդառնան, իսկ կրտսերը՝ Մաշան՝ պարզապես մոլի կողմնակից: Որդիները կհաշտվեն այն բանի հետ, որ հայրը համաձայն չէ իրենց կենսակերպին: Սոֆյա Անդրեևնան կհասկանա, որ ամուսնու մտքերը հետաքրքրում են ոչ թե մեկ տասնյակ, այլ հարյուր հազարավոր մարդկանց ողջ աշխարհում: Բայց ութսունականների սկզբում Տոլստոյը

մենակ է...

Եվ այդ ժամանակ հայտնվում է Չերտկովը:

Դժվար է գուշակել՝ ինչ կլիներ, եթե Չերտկովը մի քանի տարի ուշ հայտնվեր, երբ Տոլստոյի գաղափարներն արդեն լայնորեն տարածված կլինեին ռուս հասարակության մեջ, ապա և ողջ աշխարհում: Ավելի ճիշտ կլինի հարցն այլ կերպ դնել: Այդ գաղափարները նման տարածում կստանային, եթե չհայտնվեր Չերտկովը:

Պարզ է մեկ բան. նա հայտնվեց ժամանակին:

Տոլստոյի ու Չերտկովի բազմամյա բարեկամության մասին խոսվում է Մ.Վ. Մուրատովի «Լ.Ն. Տոլստոյն ու Վ.Գ. Չերտկովը իրենց նամակագրության մեջ» հանգամանակից գրքում: Այն հրատարակվել է 1934 թվականին՝ Տոլստոյի թանգարանի կողմից, ու մինչ օրս Ռուսաստանում չի վերահրատարակվել: Մուրատովը Չերտկովին նկարագրում է որպես բարդ, հակասական անձնավորություն, որը, համեմայնդեպս, դրական դեր է խաղացել Տոլստոյի կյանքում:

Չերտկովը միանգամայն այլ հայացքով է ներկայացված հոգևորական և աստվածաբան Գեորգի Օրեխանովի «Ռուսաստանի դաժան դատը. Վ.Գ. Չերտկովը Լ.Ն. Տոլստոյի կյանքում» ժամանակակից գրքում: Այստեղ Չերտկովը ներկայացված է որպես բացառիկ տհաճ կերպար, որը բացասաբար է ազդել Տոլստոյի վրա և օգտագործել է նրան:

Վլադիմիր Գրիգորևիչ Չերտկովի մասին ընդհանրապես քիչ է գրվել, իսկ ինչ էլ գրվել է, որպես կանոն, օբյեկտիվ չէ: Չափազանց մեծ նշանակություն է ունեցել այդ մարդը Տոլստոյի ճակատագրում ու նրա ողջ ընտանիքի կյանքում, որպեսզի հնարավոր լինի սառնասրտորեն նկարագրել նրան: Բայց առնվազն նշենք երկու հանգամանք, որ ակնհայտ են վեճի մասնակիցների համար:

Չի կարելի, անարդար է չգնահատել նրա ներդրումը Տոլստոյի ժառանգության պահպանման ու համակարգման գործում: Չերտկովի գլխավոր «գործը» Տոլստոյի երկերի, նամակների, օրագրերի իննսուն հատորանոց ժողովածուն է, որը անգերազանցելի է մինչ օրս: Նրա դերը Տոլստոյի կյանքի վերջին երեսուն տարիներին այնքան մեծ է, որ աներևակայելի է ուշ շրջանի Տոլստոյին պատկերացնել առանց Չերտկովի, ինչպես անհնար է պատկերացնել նրան առանց Մոֆյա Անդրեևնայի: Եվ միևնույն ժամանակ պետք է խոստովանել, որ Տոլստոյի ընտանեկան կյանքում Չերտկովը մոռալ դեր է ունեցել:

Ըստ էության հենց դրանում է այդ կերպարի գլխավոր հակասությունը:

Տոլստոյին անմնացորդ նվիրված մարդը թունավորում էր նրա ընտանիքի և ի հետևանք՝ Տոլստոյի կյանքը:

Հայտնի է Տոլստոյի 931 ուղերձ Չերտկովին, ներառյալ հեռագրերը: Դրանք ծանոթագրություններով հրատարակելու համար պետք եղավ հինգ հատոր՝ ավելի քան 175 մամուլ: Չերտկովն ավելի հաճախ է գրել Տոլստոյին, և դրանք մեծամասամբ բազմաթեթև նամակներ են:

Չերտկովի առաջին հայտնությունը, թվում է, որևէ վտանգ չէր կանխատեսում ընտանիքի համար:

«Փայլուն հեծզվարդիական, երկգլխանի արծիվ կրող սաղավարտով, գեղեցկատես, չափազանց հարուստ ընտանիքի զավակ Վլադիմիր Գրիգորևիչը եկել էր Տոլստոյի մոտ՝ ասելու, որ լիովին կիսում է նրա հայացքներն ու ցանկանում է ընդմիջտ նրան նվիրել իր կյանքը,- հիշում էր Տոլստոյի որդին՝ Լև Լվովիչը:- Մեր ընտանիքի հետ ծանոթության սկզբում Չերտկովը հնայիչ էր: Միրված բոլորի կողմից: Ես նրա հետ մտերիմ ու «գրու»-ով էի»:

Իրականում, առաջին անգամ Տոլստոյի մոտ գնալիս Չերտկովը շատ քիչ բան գիտեր նրա հայացքների մասին, դեռ չէր կարդացել նրա փիլիսոփայական ստեղծագործությունները, միայն գեղարվեստական գործերը: Նրանց առաջին հանդիպումը տեղի ունեցավ Խամովնիկիում:

Սևաստոպոլի պաշտպանի ներկայությամբ Չերտկովը սկսեց խոսել զինվորական ծառայության հանդեպ իր բացասական վերաբերմունքի մասին: Տոլստոյն «ի պատասխան սկսեց ինձ համար կարդալ սեղանին դրված «Որն է իմ հավատ»-ի ձեռագիրը»,- հիշում էր Չերտկովը: Նա խոստովանում է, որ «այնպիսի բերկրանք է զգացել այն գիտակցությունից, որ իմ հոգևոր մեղքային շրջանը վերջապես ավարտվեց, որ իմ սեփական մտորումների մեջ սուզված՝ չէի կարող հետևել հաջորդ հատվածներին, որ կարդում էր, և ուշքի եկա միայն այն ժամանակ, երբ կարդալով իր գրքի վերջին տողերը, առանձին հստակությամբ արտասանեց ստորագրությունը՝ «Լև Տոլստոյ»»:

Չերտկովը շատ երիտասարդ էր Տոլստոյից, բայց համանման կենսափորձ ուներ: Նա էլ էր կալվածատեր ու սպա եղել: Նա սոցիալական սանդուղքի վրա Տոլստոյից բարձր էր կանգնած: Ծնվել էր ոչ միայն նշանավոր, այլև հարուստ ընտանիքում: Մայրը՝ Ելիզավետա Իվանովնա Չերտկովան, ծնունդով՝ Չերնիշևա-Կրուզիկովա, ազդեցություն ուներ ազնվականական շրջանակներում: Հորեղբայրը՝ կոմս Զախար Չեռնիշևը, դեկաբրիստ էր, արքայազն էր Միքիլ: Հորաքույր Ալեքսանդրան (Ալեքսանդրինա) ամուսնա-

ցած էր մեկ այլ դեկաբրիստի՝ Նիկիտա Մուրավյովի հետ, և ամուսնու ետևից գնաց աքսոր: Ելիզավետա Չերտկովայի առաջին արքունական պարահանդեսին Նիկոլայ I-ը քննախույզ հարց էր տվել քեռու մասին: Չերտկովան համարձակ պատասխանել էր, որ այսօր էլ ամենարտագին վերաբերմունք ունի նրա հանդեպ: Այդ օրվանից արքունիքում նրան հարգում էին: Բայց երբ առաջարկեցին պալատական տիկին դառնալ, հրաժարվեց: Նա ջերմեռանդ քրիստոնյա էր, նորածն անգլիացի քարոզիչ լորդ Ռեդսթոքի հետևորդ: Ալեքսանդրա քրոջ ամուսնուն՝ գվարդիայի գնդապետ Պաշկովին նա էր ծանոթացրել Ռեդսթոքի հետ՝ այդպիսով նպաստել Ռուսաստանում պաշկովականների աղանդի<sup>28</sup> ծագմանը:

Ելիզավետա Իվանովնան պաշտում էր որդուն: Մյուս տղաները՝ Գրիշան ու Սիխայիլը, շուտ էին մահացել, ու Վոլոդյան ծնողների միակ կուռքն էր: Հայրը՝ Գրիգորի Իվանովիչ Չերտկովը, արքայահամհարզ էր եղել Նիկոլայ I-ի և գեներալ-համհարզ՝ Ալեքսանդր II-ի օրոք: Գնդի, ապա դիվիզիայի հրամանատար էր եղել և հեղինակը գորքերում լայն տարածում ստացած «Ձիմվորական հուշագրի»: Փոստիստից ու ոտքերի անդամահատությունից հետո կյանքի վերջին տասը տարին Գ.Ի. Չերտկովը դեկավարում էր գորքերի կազմակերպման ու կրթության կոմիտեն: Նրա հարազատ քույրը՝ Ելենան, ամուսնացած էր Ալեքսանդր II-ի դարաշրջանի նշանավոր պահպանողական գաղափարախոս ու գործիչ կոմս Պյոտր Անդրեևիչ Շուվալովի հետ, իսկ Սիխայիլ եղբայրը Դոնի գորքերի վարչական առաման էր, ապա՝ Կիևի ու Վարշավայի գեներալ-նահանգապետ:

Կրտսեր Չերտկովը երջանիկ մանկություն էր ունեցել: Նրան պաշտում էին ոչ միայն ծնողները, այլև դայակներն ու դաստիարակչուհիները: Պատանին շատ գեղեցիկ էր. բարեկազմ, մյուսներից մի գլուխ բարձր, խոշոր գորշ աչքերով: Սրամիտ էր, փափուկ, բայց զնգուն ձայն ուներ ու վարակիչ ծիծաղ: Ճշմարտասեր էր ու երբեմն նույնիսկ չափազանց ուղղախոս: Նրա դրամապանակը միշտ ընկերների տրամադրության տակ էր: Գվարդիական սպա դառնալով՝ խրախճանում էր, թուղթ ու պտտախաղ խաղում, սիրուհիներ պահում...

---

28. Պաշկովականներ - լորդ Գրենվիլի Ռեդսթոքի ազդեցությամբ հիմնված աղանդի անդամներ: Ռեդսթոքը 1874 թվականին ժամանել էր Սանկտ Պետերբուրգ և մեծ հաջողությամբ քարոզչություն էր ծավալում քարճրաշխարհիկ հասարակության մեջ: Ռեդսթոքի հետևորդների թվում էր պաշտոնաթող գվարդիական գնդապետ Վասիլի Ալեքսանդրովիչ Պաշկովը, ում անունով կոչվեց աղանդը:

Մակայն գվարդիական սպաների պարտականությունների մեջ էր մտնում հերթապահությունը զինվորական հոսպիտալներում: 1877 թվականին (այն նույն ժամանակ, երբ սկսվեց Տոլստոյի հոգևոր հեղաշրջումը) Չերսկովը հանկարծ ցնցում է ապրում մահացող զինվորի տեսքից, որի համար բարձրաձայն Ավետարան էին կարդում: Այդ պահից արդեն նա չէր կարող ապրել առաջվա նման: Նրա հետ կատարվել էր նույնը, ինչ Տոլստոյի հետ, միայն թե երիտասարդ տարիքում:

Դրանում էր Չերսկովի առավելությունը Տոլստոյի հանդեպ, որին գրողը բարի նախանձով էր նայում: Չերսկովի հոգևոր հեղաշրջումը կատարվեց, երբ 23 տարեկան էր: Նա երիտասարդ էր, հոգով առույգ, եռանդուն: Իսկ Տոլստոյը հեղաշրջման սկզբում դարձել էր 50 տարեկան, և չէր կարող վստահ լինել, որ կապրի մինչև խոր ծերություն: Նա ամեն օր պատրաստ էր մեռնելու և ութսունականների սկզբին նույնիսկ ցանկանում էր մեռնել: Չերսկովի հայտնվելը նրա համար կանխանշանի պես էր: Տոլստոյը որոշեց, որ իր մտքերն ու գործը չեն մեռնի իր հետ:

Բայց դրանում էր նաև Չերսկովի թուլությունը Տոլստոյի հանդեպ: Տոլստոյն իր գաղափարներին հանգել էր երկար ու դժվարին կենսափորձով: Նա որբություն էր տեսել, փորձել համալսարանական պարապմունքները և զինվորական ծառայությունը Կովկասում ու Ղրիմում, գրողական ուրախություններ ու դառնություններ էր ապրել, գյուղական տնտեսության հոգսեր և, վերջապես, ընտանեկան կյանք: Նրա նոր հայացքները պատահական ցնցման արդյունք չէին, ինչպես Չերսկովի դեպքում: Չերսկովը ջերմոցային բույս էր: Մանուկ օրերին՝ հարազատների պաշտամունք, տնային կրթություն (Աստված չանի, հանկարծ դպրոցում հիվանդանա), ազատ ծառայություն գվարդիայում:

Տոլստոյն իր կրոնին հասել էր ջահել արեիզմով: Կրոնական զգացումը հասունանում էր, երբ նա զնդակների տարափի տակ էր ու կողքին մեռնում էին հազարավոր մարդիկ: Երբ նրա ձեռքերի վրա մահանում էր ավագ եղբայրը, մահանում էին իր ու Սոֆյա Անդրեևնայի երեխաները: Դա պետք էր ինչ-որ կերպ բացատրել, ինչ-որ կերպ արդարացնել: Հակառակ դեպքում կյանքն անիմաստ էր դառնում: Իսկ Չերսկովը դաստիարակվել էր խիստ կրոնական միջավայրում: Մայրը համոզված աղանդավոր էր: Լորդ Ռեդսթոքի քարոզների հիմքում ընկած էր Հիսուսի արյամբ մարդկային մեղքերը քավելու գաղափարը: Դա բացարձակապես օտար էր Տոլստոյի կրոնական հայացքներին, բայց փոխարենը շատ մոտ ու հասկանալի էր այն ազնվականական միջավայրին, որտեղ լորդը քարոզում էր: Չնայած ինքն էլ բարդ

մարդ էր:

Տոլստոյի պես՝ Ռեդսթրոքն էլ էր մասնակցել Ղրիմի պատերազմին, միայն թե՛ մյուս կողմից: Պատերազմի ժամանակ արմատապես վերանայել էր քրիստոնեության վերաբերյալ հայացքները: Վերադառնալով Անգլիա՝ բարոնի տիտղոս ժառանգեց, բայց տասը տարի անց ունեցվածքը բաժանեց աղքատներին և անցավ քարոզչական գործունեության Եվրոպայում ու Հնդկաստանում: 1874 թվականին ժամանեց Սանկտ Պետերբուրգ և ահռելի ճանաչում էր վայելում բարձրաշխարհիկ շրջանակներում: Ռեդսթրոքի հետևորդներն էին իշխանուհի Նատալյա Ֆյոդորովնա Լիվենը ու նրա քույրը՝ իշխանուհի Վերա Ֆյոդորովնա Գագարինան, կոմսեր Ալեքսեյ Պավլովիչ Բոբրինսկին ու Մոդեստ Մոդեստովիչ Կորֆը և ուրիշներ: Հենց այդ ժամանակ Տոլստոյը գրում էր «Աննա Կարենինան»: Վեպի հետազոտողները կարծում են, որ Լիդիա Իվանովնայի (համահունչ է Ելիզավետա Իվանովնա Չերսկովային) բարձրաշխարհիկ խմբակի նախատիպը Ռեդսթրոքի՝ Պետերբուրգում կազմակերպած խմբակն է, իսկ լորդն ինքը վեպում պատկերված է սրը Ջոն անունով: Եթե այդպես է, ուրեմն գրողի հեզմական վերաբերմունքը Ռեդսթրոքի ու «ռեդսթրոքյանների» հանդեպ ի հայտ է եկել նրա հոգևոր հեղաշրջումից առաջ: Եվ այդ ժամանակ միանգամայն հասկանալի է դառնում, թե Ելիզավետա Իվանովնան ինչու էր կտրականապես դեմ որդու մտերմությանը Տոլստոյի հետ ու գտնում էր, որ նա իրենից խլել է որդուն:

«Ես խորապես համոզված եմ ու տեսնում եմ Ավետարանից, որ ցանկացած ոք, ով ընդունում է Հարություն առած Փրկչին, ներծծված է այդ ոգով, և քանի որ նույն աղբյուրից չի կարող անուշ ու դառը ջուր հոսել, ես չեմ կարող առողջ համարել այդպիսի աղբյուրից բխող ուսմունքը»,- գրում էր Ելիզավետա Իվանովնան որդուն:

Ռեդսթրոքի կերպարն ընդհանրապես լայն արտացոլում է գտել ռուս գրականության մեջ: Նիկոլայ Սեմյոնովիչ Լեսկովը «Բարձրաշխարհիկ պառակտում» հոդվածում նրա մասին գրում էր. «Շիկամազ է, բավական հաճելի, հեզ, կապույտ աչքերով... Ռեդսթրոքի հայացքը մաքուր է, պարզ, խաղաղ: Դեմքը գերազանցապես մտախոհ է, բայց նա երբեմն շատ ուրախ ու կատակախոս է լինում և այդ ժամանակ ծիծաղում ու նույնիսկ քրքջում է զնգուն ու անհոգ մանկական ծիծաղով: Նրա պահվածքը գերծ է ցանկացած պաճուճանքից... Ծանոթի հանդիպելիս ողջույնը սերտած ու միշտ նույնն է. «Հոգեպես ինչպե՞ս եք զգում ձեզ»:- Հետո երկրորդ հարցը. «Ի՞նչ նորություն կա ի փառս Տիրոջ»: Հետո անմիջապես գրպանից հանում է



Աստվածաշունչը և բացելով այս կամ այն էջը՝ սկսում է կարդալ ու մեկնաբանել կարդացածը: Տնից դուրս գալուց առաջ, մինչև տանտերերին հրաժեշտ տալը, բոլորի ներկայությամբ ծնկի է իջնում ու բարձրաձայն կարդում սեփական ստեղծագործություն-աղոթքը, որը հաճախ հենց տեղում էլ հորինվում է, հետո ներկաներից մեկնումեկին հրավիրում է ուրիշ աղոթք կարդալու և նրան լսելով՝ աղոթում է... Աղոթքը միշտ ուղղված է Հայր Աստծուն, Երրորդությանը կամ Հիսուս Քրիստոսին ու երբեք որևէ այլ մեկին, քանի որ Սբ. Կույսի, առաքյալների ու սրբերի կոչումը լորդ Ռեդսթոքը կարևոր ու թույլատրելի չի համարում...»:

Ռեդսթոքի մասին ավելի կտրական է արտահայտվել Դոստոևսկին «Գրողի օրագրում»։ «Ինձ վիճակվել է այն ժամանակ լսել նրան մի «սրահում», քարոզի ժամանակ, ու հիշում եմ՝ առանձնահատուկ ոչինչ չգտա նրա մեջ. ոչ առանձնապես խելացի էր խոսում, ոչ առանձնապես ճանճրալի: Բայց կայնապես հրաշքներ է գործում մարդկանց սրտերում. ձգվում են նրա կողմը, շատերը ցնցված են. աղքատներ են փնտրում որ շուտով բարեգործություն անեն ու համարյա թե ուզում են բաժանել իրենց կալվածքները: Ասենք, նման բան կարող է լինել միայն մեզ մոտ՝ Ռուսաստանում. արտասահմանում կարծես նա այնքան էլ նշանավոր չէ: Թեև դժվար է ասել, որ նրա հմայքի ողջ ուժը միայն նրանում է, որ լորդ է և անկախ մարդ ու, այսպես ասած, «մաքուր, աղայական...» հավատ» է քարոզում:

Երիտասարդ Չերտկովը՝ փայլուն հեծգվարդիականը, իհարկե, ոչ «ռեդսթոքյան» էր, ոչ «պաշկովական»: Բայց աղանդավորական մակարդ էր ստացել մորից, ում սիրում էր, ու որը նյութապես ապահովում էր որդուն նաև Տոլստոյի մոտ «հեռանալուց» հետո: Այդ մակարդը ազդեցություն թողեց նրա ողջ ապագա գործունեության վրա՝ որպես «տոլստոյականություն» առաջնորդի:

Սա կարևոր պահ է: Տոլստոյը երբեք «տոլստոյականների» առաջնորդ չի եղել: Նա աջակցում էր նրանց ու բարեկամական հարաբերություններ ուներ որոշ «տոլստոյականների» հետ (բացի Չերտկովից, Պավել Իվանովիչ Բիրյուկովի, Միխայիլ Ալեքսանդրովիչ Նովոյույովի, Պավել Ալեքսանդրովիչ Բուլանժեի, Դուշան Պետրովիչ Մակովիցկու): Բայց իր հոգևոր բնույթով Տոլստոյը չէր կարող աղանդավորական շարժում ղեկավարել՝ դրա անխուսափելի պայմանանշաններով, նշանաբառերով և կատարյալ հնազանդությամբ առաջնորդին: Նա անձնական հոգևոր ազատության և հավատի բանական ընկալման երկրպագու էր: Տոլստոյի ընտանիքին մտերիմ փաստաբան և հասարակական գործիչ Վասիլի Ալեքսեևիչ Մակլակովը մի առի-

քով սրամտորեն նկատել է. «Ով հասկանում է Տոլստոյին, չի հետևի նրան: Իսկ ով հետևում է, նրան չի հասկանում»: Կարծես այս պարադոքսով է բացատրվում, թե ինչու Տոլստոյը չէր սիրում «տոլստոյականներին»: «Մի անգամ,- հիշում է նրա դուստր Տատյանան,- հորս այցելող մարդկանց մեջ մի անծանոթ երիտասարդի տեսա: Ռուսական վերնաշապիկով էր, մեծ սապոգներով՝ շավարի փողքերը ճտքերը խցկած: - Ո՞վ է,- հարցրի հորս: Պապա՛ն կռացավ իմ կողմն ու բերանը ձեռքով ծածկելով՝ ականջիս շշնջաց:- Այդ երիտասարդը պատկանում է ամենից անըմբռնելի և ինձ խորթ աղանդին՝ տոլստոյականների աղանդին»:

Բայցևայնպես ամենակրակոտ տոլստոյականը նրա մվիրական բարեկամը դարձավ:

Չափից դուրս սերտ շփումը «սիրելի բարեկամի» հետ, ինչպես առաջին իսկ նամակից Չերտկովին կոչում է Տոլստոյը, Մի փոքր տագնապեցնում է գրողին: Նրան դուր չի գալիս տարօրինակ երիտասարդ հեծվարդիականի համար լիակատար հոգևոր պատասխանատվություն ստանձնելու գաղափարը: Սակայն Չերտկովին մերժել չի կարող: Նաև չի ցանկանում, որովհետև առաջին իսկ հանդիպումից հմայված է իրեն այնքան նման երիտասարդ սպայով: Ահա ընտանիքում նրան չհասկացան, իսկ Չերտկովը հասկանում է: Ավելին, նա Տոլստոյի կարիքն ունի և նրան հրավիրում է Վորոնեժի նահանգում գտնվող իր Լիզինովկա կավածքը: Լիզինովկայում Չերտկովը ծանոթացել էր երեք գեղջուկ պատանիների հետ, որոնք պատրաստ են կիսել իր ու Տոլստոյի հայացքները: Բայց նա այդպիսի հոգևոր առաջնորդության իրավունք ունի՞:

«Ոչ, Լև՝ Նիկոլասիչ, եկեք, ոգևորեք, օգնեցեք... Դուք այստեղ պետք եք»: Դուք այստեղ պետք եք, սա արդեն սկիզբն է այն մռայլ դերի, որ Չերտկովը կխաղա Տոլստոյների ընտանիքում: Որտե՞ղ է ավելի պետք Տոլստոյը, ընտանիքո՞ւմ, որը նրան չի հասկանում, թե՞ ազնիվ պատանիների շրջանում, որոնք պատրաստ են կյանքը դնել նրա ոտքերի տակ:

«Մտացել եմ Ձեր նամակը, Ձեր գիրքը ու չեմ պատասխանել նամակին: Չեմ պատասխանել, որովհետև պատասխանել չգիտեմ: Այն ինձ վրա տպավորություն թողեց, որ Դուք (աղավնյակս, լրջորեն ու խոնարհ ընդունեք իմ բառերը), որ Դուք տարակուսանքի ու մերքին պայքարի մեջ եք ամենից անձնական, ամենաանկեղծ գործով՝ ինչպես կազմակերպել, վարել սեփական կյանքը, և անձնական հարցն ուղղում եք ուրիշներին՝ նրանցից օգնություն ու աջակցություն խնդրելով: Իսկ այդ գործում դատավորը միայն Դուք եք ու կյանքը: Ես չեմ կարող նամակներից պարզորոշ հասկա-

նալ՝ բանն ինչ է, բայց եթե նույնիսկ հասկանալի ու Չեզ մոտ լինեի, ոչ թե չէի համարձակվի, այլ չէի կարող միջամտել՝ հավանություն տալ կամ չտալ Չեր կյանքին ու արարքներին: Ուսուցիչը մեկն է՝ Քրիստոս»:

Կարծես թե ակնհայտ էր Չերտկովի անընթացակատությունը, որը ծանոթանալուց քիչ անց Տոլստոյին հայտարարել էր, թե նա հետևողներին ավելի «պետք է», քան իր ընտանիքին: Տոլստոյը դա զգո՞ւմ էր: Ավելի շուտ՝ այո: Լև Նիկոլակիչի պատասխանը հարգալից ակնարկ էր առ այն, որ հրաժարվում է դառնալ նրա «հոգևոր հայրը»:

Եվ Չերտկովն առժամանակ մահանջեց: 1886 թվականին նա ամուսնանում է Աննա Կոնստանտինովնա Դիտերիխսի՝ Բեստուժևսկան բարձրագույն կանանց դասընթացների ունկնդրի հետ: Գալյայի արտաքինը, ինչպես նրան կոչում էին մտերիմները, լավ հայտնի է Նիկոլայա Ալեքսանդրովիչ Յարոշենկոյի «Կուրսիստկան» մկարից (1883): Գեղեցիկ, բարալիկ Գալյան Տոլստոյի հայացքների կրքոտ երկրպագուն էր և վճռական դեր էր ունեցել Չերտկովի ընտրության հարցում: Մինչև ամուսնանալը նա այդ հարցը բազմիցս քննարկում է Տոլստոյի հետ: Չերտկովն իրեն ընդունակ չէր համարում ամուսնական կյանքի և վախենում էր կրկնել ուսուցչի «սխալը»: Բայց Տոլստոյը հավանություն տվեց Դիտերիխսի հետ ամուսնությանը: 1887 թվականին ծնվեց Չերտկովների դուստր Օլյան: Թույլ ու հիվանդկախ Գալյան չէր կարող կերակրել երեխային: Ստնտու էր պետք: Եվ չզիտես ինչու, Մոսկվայի մահանգի Կրեկչինո գյուղում, որտեղ այդ ժամանակ ապրում էին երիտասարդները, ստնտու չգտնվեց: Մոլորված Չերտկովը Տոլստոյին խնդրում է ստնտու գտնել Մոսկվայում:

«Թանկագին Լև՝ Նիկոլակիչ, կրկին Չեր օգնությունն եմ խնդրում մի բարի գործում, որն այդ գործին առավել մոտիկից շփվողների համար բարի գործ է մնում, չնայած նրան, որ մաքուր չէ պատճառը, որն ինձ ստիպել է մասնակցել դրան: Արխանգելսկայայի<sup>29</sup> մոտ, քաղաքային հոսպիտալ գնալիս, իջևանել ու ծննդաբերել է մի միայնակ, աղքատ կին: Նա կանխապես որոշած է եղել երեխային հանձնել դաստիարակիչ տուն, որպեսզի ձմեռով նրա հետ մուրալու չգնա: Այդպես էլ արեց, սակայն ծննդաբերելով՝ հասցրել էր այնպես կապվել երեխայի հետ, որ անտանելի վշտով բաժանվեց նրանից, բայցևայնպես բաժանվեց, թույլ տվեց, որ տանեն դաստիա-

29. Ալեքսանդրա Գավրիլովնա Արխանգելսկայա (1851-1905) – համայնքային հիվանդանոցի բժիշկ, Տոլստոյի ծանոթը:

րակիչ տուն, ձմեռով, առանց որևէ կացարանի նրա հետ մուրացկանությամբ գնալու հնարավորություն չտեսնելով: Նա առատ կաթ ունի, ու եթե բժիշկը, որին սպասում ենք, անհրաժեշտ համարի այլ կնոջ կաթ փորձել, ապա դա կարող է շատ օգտակար լինել մեզ, չնայած ուզում ենք, եթե միայն դույզն-ինչ հնարավորություն լինի, բավարարվել Գալյայի կաթով... Կրկին դիմում եմ Ձեզ հույսով, որ Ձեր տնեցիներից կամ մերձավորներից որևէ մեկը կհամաձայնի կատարել այդ հանձնարարությունը, որպեսզի Ձեզ ազատի հոգսերից, որոնք Ձեզ կարող են շեղել Ձեր զբաղմունքներից, որոնք ավելի ներհատուկ են Ձեզ և անհրաժեշտ՝ մարդկանց, և որոնցում ոչ ոք չի կարող Ձեզ փոխարինել: Ահա թե ինչ է պետք: Կից գրությամբ անհապաղ մեկնել դաստիարակիչ տուն և այնտեղ հայտարարություն տալ, որ այդ համարով երեխային մայրը հետ է վերցնում, ու որպեսզի այդ պատճառով նրան չարտաքսեն գյուղ: Եթե Մոսկվայում համապատասխան ծանոթ մարդ ունեք, հանձնարարեք նրան անմիջապես վերցնել երեխային ու բերել այստեղ»:

Եվ այսպես, Չերտկովներին ստնտու է պետք, հակառակ դեպքում առաջնեկին կորցնելու վտանգ կա: Սակայն հարցի էությունը երիտասարդ հայրը այնքան ու այնպիսի դարձվածքներով է համեմտում, որ միանգամից չես հասկանա ինչի մասին է խոսքը: Ի՞նչ պիտի անի Տոլստոյը: Երեխային վերադարձնի մո՞րը, թե՞ ուրիշի կաթ հասցնի Գալյային: Առաջինը բարի գործ է: Երկրորդը՝ անբարոյական՝ Տոլստոյի աչքին, որը ուրիշի կաթով կերակրելու սկզբունքային հակառակորդ էր: Չերտկովը դա լավ գիտի: Դրա համար էլ գրում է «բարի գործի» մասին, բայց՝ «անմաքուր պատճառով»:

Տոլստոյն ուրախությամբ նետվում է կատարելու հանձնարարությունը: «Հենց նոր ստացա Ձեր նամակը երեխայի մասին (ժամը 3-ին) և անմիջապես գնում եմ անելու ինչ կարող եմ: Եվ շատ, շատ ուրախ եմ այդ ամենի համար»: Եվ սա Տոլստոյն է, որը, Սոֆյա Անդրեևնայի ասելով, «անասելի վատ է վերաբերվում կնոջը, երբ նա կրծքաբորբի պատճառով հրաժարվում է կերակրել Սերյոժային»:

Ի՞նչ էր պատահել:

Անկեղծ լինենք. Տոլստոյը պակաս չէր զգում Չերտկովի կարիքը, քան Չերտկովը՝ Տոլստոյի: Չերտկովը հոգեպես անազատ ու անինքնուրույն էր: Նրան դաստիարակ էր պետք: Իսկ Տոլստոյն այնպիսի մարդու կարիք ուներ, որն իր կյանքը լիովին կնվիրեր նրա նոր հայացքների տարածմանը:

Վերջապես, հոգեպես ամենից ազատ մարդն անգամ ի գորտու չէ դիմանալ պաշտամունքի գայթակղությանը: Չերտկովն աստվածացնում էր

Տոլստոյին, որը նրա համար վերջին ատյանի ճշմարտություն էր դարձել՝ Բուդդա, Քրիստոս, Մուհամեդ՝ մի դեմքով:

Չերտկովի մեջ միավորվել էին Տոլստոյի հանդեպ մոլեռանդ հավատն ու աներևակայելի գործնականությունը այն ամենում, ինչ վերաբերում էր հրատարակչական գործունեությանը: Տոլստոյի հետ նոր-նոր ծանոթացած՝ Չերտկովը երազում է սեփական հրատարակչություն հիմնել նրա համար: Սկզբում տնայնագործ եղանակով է զբաղվում դրանով՝ հեկտոգրաֆով բազմացնելով «Որն է իմ հավատը» տրակտատը: Բայց մի նամակում Տոլստոյին խորհուրդ է տալիս պատմվածքներ գրել ժողովրդի համար. «Ես շարքերով կհրատարակեի այդ պատմվածքները»:

Չերտկովը Մոսկվայում հանդիպում է հրատարակիչ Վլադիմիր Նիկոլաևիչ Մարակուևի ու նարողնիկներին մոտ Նիկոլայ Նիկոլաևիչ Ջլատով-րատսկու և Ալեքսանդր Ստեպանովիչ Պրուզավինի հետ: Նրանք առաջին անգամ քննարկում են հզոր ժողովրդական հրատարակչություն հիմնելու պլանը:

Այդպիսիք արդեն կային, բայց ցածրարվեստ գրականություն էին հրատարակում. նկարներ՝ արտասահմանյան հեքիաթների փոխադրությամբ. դրանք «Բովա Կորոլևիչի» և «Միլորդ Գեորգի» կարգի գործեր էին, որոնք Նեկրասովը ծաղրել է «Ով է Ռուսաստանում լավ ապրում» պոեմում: Չերտկովը փորձում է հրատարակիչներին համոզել, որ այդպիսի էժան եղանակով շահավետ է նաև Լև Տոլստոյի և այլ ռուս հեղինակների ստեղծագործությունների հրատարակումը:

Եվ այդպիսի հրատարակիչ գտնվեց՝ Իվան Սիտինը: 1884 թվականի նոյեմբերին Չերտկովը մտնում է Սիտինի մոսկովյան գրախանութն ու ծանոթանում նրա հետ: Սիտինին հետաքրքրում է ռուս գրողների գործերը ցածրարվեստ կերպով հրատարակելու և նույն գնով վաճառելու գաղափարը: Այդպես Սիտինի օգնությամբ ի հայտ եկավ «Պոսրեդնիկ» հրատարակչությունը:

1885 թվականի մարտին լույս տեսան «Պոսրեդնիկի» առաջին երեք գրքույկները՝ Տոլստոյի երեք ժողովրդական պատմվածքները՝ կարմիր ու կապույտ շապիկներով, հավաքած խոշոր տառատեսակով: Գրքույկներն էժան էին՝ մեկ ու մեկուկես կոպեկ:

Նույն տարվա մայիսին Չերտկովը մեկնում է Անգլիա և պայմանավորվում Տոլստոյի Ռուսաստանում արգելված ստեղծագործությունները անգլերեն հրատարակելու մասին: Օգնում է ընկերը՝ լորդ Բաթերսբին: Մի գրքով անգլերեն լույս են տեսնում «Խոստովանությունը», «Որն է իմ հավա-

տը» և «Ավետարանի համառոտ շարադրանքը»: Տոլստոյի կրոնական ստեղծագործությունները մատչելի են դառնում ողջ աշխարհում:

Դա չէր կարողանա անել Տոլստոյն ինքը, առավել ևս՝ Սոֆյա Անդրեևնան, նույնիսկ եթե կիսեր ամուսնու համոզմունքները: Չերտկովը մոր շնորհիվ հզոր կապեր ուներ Ռուսաստանի և Անգլիայի ազնվականական շրջանակներում:

Մինչև Ալեքսանդր III-ի մահը Չերտկովն անխոցելի է իր հակառակորդների և Տոլստոյի թշնամիների համար: Կայսրը, ինչպես որ հայրը, բարեկամական հարաբերությունների մեջ էր Չերտկովների ընտանիքի հետ: Եվ երբ Ալեքսանդր III-ի մահվանից հետո համեմայնդեպս որոշեցին Չերտկովին պատժել իշխանության կողմից հալածվող դոկտորներին օգնելու համար, այդ կայսրուհի Մարիա Ֆյոդորովնան պնդեց, որ սիբիրյան աքսորը փոխարինվի Անգլիա արտաքսելով:

Անգլիայում հաստատվելով Քրայսթչերչ փոքրիկ քաղաքում՝ Չերտկովը հիմնեց «Սվոբոդնոյե սլովո» հրատարակչությունը, որի գլխավոր խնդիրը ռուսերեն լեզվով Տոլստոյի ստեղծագործությունների տարածումն էր: Հրաշալի սարքավորված տպարանում տպագրվեցին Ռուսաստանում արգելված կամ գրաքննության կողմից աղճատված Տոլստոյի ու շրջանի ստեղծագործությունները: Օրինակ, «Հարություն» վեպի հինգ հրատարակություն և «Լ.Ն. Տոլստոյի՝ Ռուսաստանում արգելված երկերի լիակատար ժողովածուն» տասը հատորով: Միևնույն ժամանակ նա կազմակերպում է «Free Age Press» հրատարակչությունը, որը լույս էր ընծայում Տոլստոյի գրքերը օտար լեզուներով, և մասնաճյուղեր ուներ մի քանի երկրում: Չերտկովն այդ գործում ներգրավեց լավագույն թարգմանիչներին և ինքն էլ Տոլստոյի անգլերեն թարգմանիչներից էր: Չերտկովի շնորհիվ Տոլստոյի ու շրջանի գործերը կարողացան կարդալ միլիոնավոր մարդիկ՝ աշխարհի տարբեր մասերում: Ռուսերեն հրատարակված գրքերն անլեզալ ուղարկվում էին Ռուսաստան:

«Եթե Չերտկովը չլիներ, նրան հարկ կլիներ հորինել», - մի նամակում կատակել է Տոլստոյը: Բայց այդ կատակում ճշմարտություն կար, որը Տոլստոյը չէր կարող չընդունել:

Չերտկովին «հորինել» պետք չէր. նա ինքն էր իրեն «հորինել»: Նա իդեալական միջնորդ եղավ Տոլստոյի և ողջ քաղաքակիրթ աշխարհի միջև: Նա նոր Տոլստոյ բացահայտեց նաև Ռուսաստանի համար, թեկուզև անլեզալ կերպով: Նա Տոլստոյին ազատեց իր ստեղծագործությունների տարածման ծանրությունից ու վտանգերից: Ազատեց թարգմանիչներ և արտա-

սահմանյան հրատարակիչներ փնտրելու մանրիկ հոգսերից: Չերտկովի հետ ծանոթությունը նվեր էր Տոլստոյի համար:

Բայց՝ ոչ ընտանիքի...

*Չերտկովն ու Սոֆյա Անդրեևնան*

Տոլստոյին ուղարկված՝ Չերտկովի առաջին իսկ նամակներից Սոֆյա Անդրեևնան վատ բան կասկածեց: Արդեն 1884 թվականի հունվարի 30-ին, Չերտկովի հետ ծանոթանալուց երեք ամիս անց, նա Մոսկվայից գրում է ամուսնուն, Յասնայա Պոլյանա. «Քեզ եմ ուղարկում Չերտկովի նամակը: Մի՞թե շարունակելու ես միտումնավոր աչք փակել մարդկանց վրա, որոնց մեջ լավից բացի ուրիշ ոչինչ չես ուզում տեսնել: Չէ՞ որ դա կուրություն է»:

Ի՞նչ նամակի մասին է խոսքը: Այն նույն նամակի, որով Չերտկովը Տոլստոյին համոզում էր մեկնել Լիզիևովկա, որտեղ իրենց ընդհանուր հավատին էր բերել երեք գեղջուկ պատանիների: Դա նրա առաջին անընթաց կատ ներխուժումն էր Տոլստոյների ընտանիքի կյանք: Տոլստոյի հետ նոր-նոր ծանոթացած երիտասարդը երեք ամիս անց պնդում է, որ համարյա վաթսուամյա գրողը ձմեռով գնա իր մոտ՝ Վորոնեժի նահանգ:

Այդ նամակն ապշեցրեց Տոլստոյին: Նա չգնաց Չերտկովի մոտ: Չերտկովը նահանջեց. «Ինչ վերաբերում է իմ վերջին նամակին, ապա Դուք, ըստ երևույթին, ավելի շուտ իրավացի եք: Ես հիշում եմ, որ այն ուղարկելու հաջորդ օրը քիչ էր մնում մի նամակ էլ գրեի դրա փոխարեն»:

Չերտկովը հասկանում է, որ չափն անցել է: Բայց արդեն չի կարող և չի էլ ցանկանում Տոլստոյից թաքցնել իր զգացումները. «...անընդհատ ուզում եմ իմանալ՝ որտեղ եք Դուք, ինչ եք անում...»:

Տոլստոյն էլ չի թաքցնում զգացումները. «Ինձ հետաքրքրում է Չերտկովի կացած նամակ»: Միևնույն ժամանակ նա տեսնում է, որ Չերտկովը հոգեպես անառողջ մարդ է. «Ասեմ Ձեզ իմ զգացումների մասին՝ Չերտկովի նամակները ստանալիս. ահավոր է, սարսափում եմ՝ հանկարծ չխելագարվե՞ք»:

Տոլստոյը երազ է տեսնում Չերտկովի մասին. «Նա հանկարծ սկսեց պարել, ու նիհար-նիհար է, ու տեսնում եմ, որ խելագարվել է»:

Չերտկովի հոգեկան խնդիրների մասին հիշում է Տոլստոյների երեխաների լատիներենի ու հունարենի ուսուցիչ Վլադիմիր Ֆյոդորովիչ Լագուրսկին. «...նա ինձ վրա նյարդային հիվանդ մարդու տպավորություն թողեց: Չերտկովն ասում էր, որ չի կարող օբյեկտիվ դատել ջրի ջերմաստիճանի մասին, քանի որ չի հավատում իր զգայունակությանը: Երբեմն նրա նյար-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

դային վիճակն այնպիսին է, որ ցուրտը չի զգում, ինչ աստիճանի էլ լինի. երբեմն առանց որևէ պատճառի վախենում է ջուրը մտնել»:

Չերտկովը խոստովանում էր, որ տառապում է հետապնդման մոլազարության: Նա անասելի գործունակ էր, բայց ակտիվության նույնպիսի մշտապես փոխարինում էր անտարբերությունը: Կարող էր օրեր շարունակ աշխատել առանց որևէ անհրաժեշտության, իսկ հետո հանկարծ ընկնում էր ընկճախտի մեջ:

1898 թվականին, երբ Տոլստոյն ու Չերտկովը զբաղվում էին դուխոբորներին Կանադայում վերաբնակեցնելով, Լև Նիկոլաևիչը նրան գրում էր.

«Դուք չափազանցված ճշտպահության պատճառով ծանրաշարժ եք, դանդաղկոտ, բացի այդ՝ ամեն ինչին վերևից եք նայում, grandseigneur-արար<sup>30</sup>, և դրա համար էլ շատ բան չեք տեսնում, նաև՝ բնախոսական պատճառներով փոփոխական տրամադրություն ունեք. մեկ եռանդուն գործունյա եք, մեկ անտարբեր»:

1885 թվականի մարտին Սոֆյա Անդրեևնան Մոսկվայից գրում է ամուսնուն՝ Յաննայա Պոլյանա. «Այսօր շատ հաճելի նամակ ստացա Չերտկովից: Խնդրում է ուղարկել քո հողվածի էջերը, որ ինքն էր բերել, և, օրինակ, ասում է. «Ես միշտ մտածում եմ Ձեր ու Ձեր ընտանիքի մասին որպես հարազատների, ընդ որում՝ մերձավոր հարազատների: Լա՞վ է դա, թե ոչ՝ չգիտեմ, կարծես թե լավ է»: Ինչ հատուկ է նրան»:

Բայց ահա այդ շատ հաճելի նամակը.

«Կոմսուհի՛, անհանգստացնում եմ Ձեզ մի խնդրանքով. խնդրում եմ փոստով ինձ ուղարկեք Լև Նիկոլաևիչի վերջին հողվածի առաջին վիմատիպ էջերով տետրերը: Դրանք կգտնեք նրա գրասենյակի ետևի պահարանում: Ընդամենը 10 թե 12 տետր է»:

Չերտկովն այնպես էր հարմարվել Տոլստոյների մոսկովյան տան՝ գրողի աշխատասենյակում, որ տանտիրուհուն բացատրում է, թե ինչը որտեղ է:

1877 թվականին Տոլստոյը կնոջը խնդրում է գտնել Ռեպինի նամակները: Նամակների արանքում Սոֆյա Անդրեևնան պատահմամբ տեսնում է Չերտկովի նամակը, ուր նա փառաբանում է իր կնոջը՝ Գալյային, ու խղճում Տոլստոյին:

«Այդ նամակն ինձ տառացիորեն պայթեցրեց»,- հիշում է նա:

---

30. Կարևոր անձ, բարձրատեսակ (Ֆր.):



Ընդամին Չերտկովը չէր հիշատակում Սոֆյա Անդրեևնային: Ասես գրում էր զուտ Գալյայի մասին, թե ինքն ինչքան երջանիկ է նրա հետ. «...չկա այնպիսի ոլորտ, որտեղ մենք զուրկ լինենք փոխադարձ շփումից ու միասնությունից: Չգիտեմ ինչպես շնորհակալ լինեմ Աստծուն այն երանության համար, որ ստանում եմ կնոջս հետ այդ միասնացումից... Միևնույն ժամանակ, միշտ հիշում եմ նրանց, ովքեր զրկված են կանանց հետ այդպիսի հոգևոր շփումից, և, ինձ թվում է, շատ ու շատ ավելի են արժանի այդ երջանկությանը»:

Ակնարկը չափազանց թափանցիկ էր: 1887 թվականի օրագրում Սոֆյա Անդրեևնան արդարացիորեն գրում է. «Նամակ էր եկել Չերտկովից: Չեմ սիրում նրան. խելացի չէ, խորամանկ է, միակողմանի ու չար: Լ.Ն.-ն նրա երկրպագության պատճառով անաչառ չէ նրա հանդեպ»: Երեք օր անց. «Չերտկովի հետ հարաբերությունները պետք է դադարեցնել: Այնտեղ ամեն ինչ սուտ ու չար է, իսկ դրանից պետք է հեռու մնալ...»:

Բայց ինչո՞ւ էր Չերտկովն ընդհանրապես համարձակվել իր նամակներում խղճալ Տոլստոյին նրա կնոջ պատճառով: Մինչև 1887 թվականը նա հազվադեպ էր լինում Տոլստոյների տանը: Ինչի՞ց էզրակայցրեց, որ իր ուսուցիչը դժբախտ է անձնական կյանքում:

Դեռևս 1884 թվականի մարտին Տոլստոյը «սիրելի բարեկամին» ուղարկած նամակում նկարագրում է օրվա երկու սարսափելի «պատկեր». անչափահաս մարմնավաճառը, որին տարել են ոստիկանություն, և քաղցից ու ցրտից մահացած լվացարարուհու մերկ մարմինը: Այդ ուղերձում նա տրտմջում էր. «Ինձ համար ամոթալի է գրել սա, ամոթ է ապրել: Տանը թառափի սկուտեղ, հինգերորդը, որ թարմ չի համարվել: Դրա մասին ասածս մերձավորներն ընդունում են տարակուսանքով. ինչո՞ւ խոսել, եթե շտկել հնարավոր չէ: Ահա թե երբ եմ աղոթում. Տե՛ր Աստված, սովորեցրու ինձ ինչ անեմ, ինչպես ապրեմ, որ կյանքս նողկալի չլինի ինձ»:

1883-1887 թվականներին Տոլստոյը քանիցս բողոքում է Չերտկովին, որ ընտանիքում մենակ է: Դա ինչպե՞ս պիտի հասկանար նրա հավատարիմ գաղափարական աշակերտը:

Իհարկե, դա Չերտկովին իրավունք չէր տալիս միջամտել Տոլստոյների ընտանեկան գործերին: Բայց դրա ճանապարհը հենց Տոլստոյն էր բացել իր մշտական տրտունջներով:

1885 թվականին Չերտկովը գրում է Տոլստոյին. «Ինչո՞ւ Չեր ավագ որդուն չեք խնդրում օգնել Չեր թղթերը կարգի բերելու և կանոնավոր պահելու գործում: Այնքան կարևոր է, որ Չեր թղթերը կարգուկանոնով պահի Չեր

տնեցիներից որևէ մեկը... Ամենը, որ գրում եք, այնքան թանկ է մեզ համար, այնքան մոտ ամենայն լավին, որ մենք գիտակցում ու պարզապես փշաքաղվում ենք այն մտքից, որ Ձեր որոշ գրվածքներ կարող են կորչել անբավարար հոգածության պատճառով»:

Տոլստոյի ավագ որդին՝ Սերգեյը այդ ժամանակ ստուգում էր սամարյան կալվածքի իր բաժինը, որ կարգավորի դրանից ստացվող մշտական եկամուտը: 1887 թվականի հունվարին նա ընտրվում է Գյուղացիական հողային բանկի Տուլայի բաժանմունքի անդամ, տեղափոխվում Տուլա, շրջում բանկի միջոցով վաճառվող կալվածքներում: Հոր գործերը բոլորովին չեն հետաքրքրում նրան:

Տոլստոյը սուր ու դառնորեն էր զգում որդիների անուշադրությունն իր գաղափարական ու ստեղծագործական որոնումների և ընդհանրապես իր աշխատանքի հանդեպ: Քանի՜ անգամ է օրագրում բողոքում որդիներից: Երբեմն ընդարձակ մամակներ է գրում նրանց, յուրաքանչյուրին առանձին-առանձին ու բոլորին միասին՝ փորձելով ճիշտ ճանապարհի բերել, փրկել աթեիզմից, եսասիրությունից, հարբեցողությունից, թղթախաղից: Ասես ոչ թե նրանց հետ է ապրում, այլ ինչ-որ անմարդաբնակ կղզում:

Իսկ Չերտկովն ապրում է միայն Տոլստոյով: Նույնիսկ Սոֆյա Անդրեևնան ստիպված է ընդունել դա. «Ես իրավացի չեի՝ մտածելով, որ ք ծ ն ա ն ք ն է ստիպում Չերտկովին շփվել Լև Նիկոլաևիչի հետ: Չերտկովը մոլեռանդ է սիրում Լև Նիկոլաևիչին և համառորեն երկար տարիներ ապրում է նրանով, նրա մտքերով, ստեղծագործություններով և նույնիսկ անձով, որը պատկերում է անթիվ լուսանկարներում: Չերտկովը մտակերտվածքով սահմանափակ մարդ է և ս ա հ մ ա ն փ ա կ վ է Լ և Նիկոլաևիչի ստեղծագործություններով, մտքերով ու կյանքով: Շնորհակալություն նրան դրա համար»:

1885 թվականի հուլիսին, դեռևս Անգլիայում, դեռ չամուսնացած Չերտկովը հարազատների վերաբերյալ Տոլստոյի հերթական տրտունջին ի պատասխան ուղղակի խորհուրդ է տալիս լքել ընտանիքը. «Դուք ասում եք, որ ապրում եք մի իրավիճակում, որը կատարելապես հակառակ է ձեր հավատին: Միանգամայն արդարացի եք: Ուստի բնական է, որ ժամանակ առ ժամանակ փախչելու և ընտանեկան իրավիճակը փոխելու պլաններ եք ունենում: Բայց ես չեմ կարող համաձայնել, թե դա հաստատում է, որ Դուք թույլ ու վատն եք: Հակառակը, գիտակցելով հնարավորությունը, որ հարկ եղած դեպքում կարող եք լրիվ անկախանալ շրջապատող իրավիճակից, փաստացի կյանքն ուղղել նոր գծով, միայն հաստատում է ուժի առկայու-

թյունը: Եվ... փախչելը կամ կյանքը շրջելը իմ աչքին բնավ ի սկզբանե դատապարտելի գործողություններ չեն: Քրիստոս այդպես արեց և այլոց տարավ հենց այդ ուղով»:

Եվս մեկ թափանցիկ ակնարկ: Եթե Դուք, Լև՝ Նիկողակիչ, ցանկանում եք դառնալ նոր Հիսուս Քրիստոս, «թողեք մեռելները թաղեն իրենց մեռելներին»՝ լքեք Չեր ընտանիքը:

Սոֆյա Անդրեևնան չգիտեր այդ նամակի մասին: Որոշ ժամանակից ի վեր Տոլստոյը սկսել էր կնոջից թաքցնել նամակներն ու օրագրերը: Չերսկովի ու «գորշերի» հայտնվելը (Սոֆյա Անդրեևնան այդպես էր կոչում «տոլստոյականներին»)՝ նրանց տարանջատելով «լուսավորներից», այսինքն «բարձրաշխարհիկ» մարդկանցից) խախտել էր նախկին ընտանեկան պայմանագիրը՝ հարաբերություններն ընտանիքում պետք է թափանցիկ լինեն, ամուսինն ու կինը մեկմեկու մասին գիտեն ամեն ինչ:

Սոֆյա Անդրեևնայի ու Չերսկովի հարաբերությունների լարվածությունը տարեցտարի աճում էր: Տոլստոյի կողքին իր դերի խանդոտ ընկալումով միշտ աչքի ընկած Սոֆյա Անդրեևնայի բնավորությունը փչանում էր: Մինչև վերջ չհասկանալով Տոլստոյի ու «սիրելի բարեկամի» իրական հարաբերությունները, որոնք գերազանցապես պարզապես գործնական էին՝ կապված արտասահմանում Տոլստոյին հրատարակելու և Ռուսաստանում արգելված գործերը տարածելու հետ (այդ առումով Տոլստոյի կինն անգոր էր), նա ինչ ասես երևակայում էր: Ի վերջո, Սոֆյա Անդրեևնան սկսում է որպես կին խանդել ամուսնուն Չերսկովի հանդեպ:

1892 թվականին Տոլստոյը դուստրերի հետ աշխատում է Ռ-յազանի նահանգի Բեգիչևկա գյուղում, որտեղ սով էր սկսվել, ճաշարաններ է բացում նվիրատվության գումարներով: Միջոցներ հավաքելու գործում նրան օգնում է կինը: Այդ աշխատանքը հաշտություն բերեց ընտանիքին: Տոլստոյը գալիս է Մոսկվա՝ կնոջ մոտ, կինը ամուսնուն այցելում է Բեգիչևկայում: Նրանք փոխադարձ սեր են զգում: «Մոնյան շատ անհանգիստ է, բաց չի թողնում ինձ, և մենք հաշտ ու սիրով ենք, ինչպես վաղուց չէր եղել»,- գրում է նա հորաքույր Ալեքսանդրա Անդրեևնային:

Չերսկովը նույնպես «աշխատում էր սովի դեմ» (այդպես էին ասում այն ժամանակ) Վորոնեժի նահանգում: Նրա և Սոֆյա Անդրեևնայի հարաբերությունները կարգավորվում են: Այդ ժամանակ Տոլստոյն գրում էր «Աստծո արքայությունը մեր մեջ» գիրքը: Նա ձեռագիրն ուղարկում է Չերսկովին, ապա խնդրում է վերադարձնել հետագա խմբագրման համար: Չերսկովը հուսալիության համար ձեռագիրն ուղարկում է Մոսկվայով, Տոլստոյի

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

կնոջ միջոցով: Կարծես թե ամեն ինչ կարգին է: «Աստծո արքայությունը» Ռուսաստանում չի տպագրվի, ինչպես և Տոլստոյի մնացած կրոնական ստեղծագործությունները: Եվ «արգելված» Տոլստոյով զբաղվում է Չերտկովը: Կարծես թե ընդամենը պետք է իրար մեջ բաժանեին՝ հրատարակչական «լիազորությունները»: Սիրաբար պայմանավորվեին՝ ով ինչով է զբաղվելու: Բայց Չերտկովն անկարեկից ու աննրբանկատ է: Նա իրեն իրավունք է վերապահում Տոլստոյի կնոջն օգտագործել որպես «փոխանցման օղակ»:

Չերտկովին ուղղված՝ Սոֆյա Անդրեևնայի չարացած նամակը չի պահպանվել: Բայց բովանդակությունը կարելի կռահել պատասխան ուղերձից: Նա զայրանում էր, որ Չերտկովն անխնա շահագործում է «հոգնատանջ ջղային ծերունուն»: Բայց Չերտկովը տվյալ դեպքում որևէ մեղք չունեի: Դա Տոլստոյի կամքն էր:

Սոֆյա Անդրեևնայի նամակն ու իր պատասխանը նրան Չերտկովն ուղարկեց Տոլստոյին: Չերտկովն ուզում է նրան Սոֆյա Անդրեևնայի կողմից իր հանդեպ ակնհայտ անարդարության վկան դարձնել:

Տոլստոյը փորձում է հաշտեցնել թշնամի կողմերին: Չերտկովին գրում է. «Դուք իրավացի եք, բայց նա էլ մեղավոր չէ: Նա իմ մեջ չի տեսնում այն, ինչ Դուք եք տեսնում...»:

Իսկ ի՞նչ էր գրել Չերտկովը Սոֆյա Անդրեևնային: «Անձամբ նրան վերաբերող բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրա ցանկությունների առավելագույն կատարողը»: Նա գտնում է, որ Սոֆյա Անդրեևնան ոչինչ չի հասկանում ամուսնու առողջությունից: «Ես Լև Նիկոլաևիչի մեջ ոչ միայն ջղային ծերունի չեմ տեսնում, այլև հակառակը, սովոր եմ նրա մեջ տեսնել և ամեն օր ստանում եմ դրա փաստացի հաստատումը՝ ավելի երիտասարդ և հոգով առույգ ու պակաս ջղային, այսինքն ավելի մեծ հոգեկան հավասարակշռություն ունեցող մարդու, քան առանց բացառության նրան շրջապատող ու հարազատ մարդիկ»: Կինը տանջում է ամուսնուն. «...Դուք հակառակ եք գործում Լև Նիկոլաևիչի ցանկություններին, թեկուզ ամենաբարի նպատակներով: Դուք ոչ միայն անձամբ նրան մեծ տառապանք եք պատճառում, այլև նույնիսկ գործնականում, կյանքի արտաքո պայմաններում վնասում եք նրան»:

Վերադարձված Սոֆյա Անդրեևնան բողոքում է ամուսնուն. «Չերտկովն ինձ մի տհաճ նամակ է գրել, որին չափազանց խիստ պատասխանեցի: Նա, ամենայն հավանականությամբ, զայրացել է իմ հանդիմանության համար, որ շտապեցնում է քեզ հողվածի հարցում, իսկ ես չգիտեի, որ ինքը ես

հանձնարարել: Ես ներողություն խնդրեցի նրանից. բայց ի՛նչ բուժ ու միակողմանի մարդ է: Ե՛վ վիրավորական է, և՛ ավստս, որ մարդիկ նեղ ու քիչ են տեսնում. նրանց համար ձանձրալի է...»:

Եվ նա գրում է Չերտկովին. «Եթե ես 30 տարի պահպանել եմ նրան, ապա հիմա ոչ Չեզնից, ոչ որևէ մեկից չպիտի սովորեմ, թե ինչպես անել դա»:

Եվ սա արդեն հայացքների և Տոլստոյի՝ գրողի ու փիլիսոփայի կողքին իրենց դերի ընկալման բախում չէ: Երկու մարդ՝ կինն ու աշակերտը, սկսում են պայքարել Տոլստոյի մոտ իրենց տեղի համար: Նրանցից ո՞րն է գլխավորը: Որի՞ն է ավելի սիրում ու գնահատում: Եվ այդ ամենից հասունանում է վերջին հարցը: Ո՞վ է լինելու նրա կտակարարը: Չէ՞ որ 1892 թվականին Տոլստոյը դարձավ 64 տարեկան:

## ՄԱՍ ՀԻՆՔԵՐՈՐԴ

### ՀԵՌԱՅՈՒՄ ԵՎ ՄԱՀ (1892-1910)

#### *Տոլստոյը իննսունական թվականներին*

Իննսունական թվականները Տոլստոյի և նրա ընտանիքի կյանքի ամենահետաքրքիր ու լարված շրջաններից է: Այն համընկավ «ոսկե» XIX դարի վերջին ու Ռուսական կայսրության մայրամուտի սկզբին: 1894 թվականին մահանում է Ալեքսանդր III-ը և գահ է բարձրանում նրա թուլակամ որդին՝ վերջին ռուսական կայսր Նիկոլայ II-ը: Ռուս գրականության պատմության մեջ ընդունված է իննսունական թվականները համարել Արժաթե դարի սկիզբը: Հայտնվում են ռուս սիմվոլիստների առաջին հոդվածները և նրանց փիլիսոփայական նախակարապետի՝ Վլադիմիր Սոլովյովի գլխավոր աշխատանքները, միևնույն ժամանակ՝ հեղափոխական գրող Մաքսիմ Գորկու առաջին հրապարակումներն ու գրքերը: Իննսունականների սկզբին մահանում է XIX դարի վերջին մեծ ռուս բանաստեղծ Ա.Ֆանասի Ֆետը և վաղ շրջանի բանաստեղծություններն է գրում պոետական նոր հանճարը՝ Ալեքսանդր Բլոկը: Դա Չեխովի արձակի գերագույն ծաղկման և «նոր իրապաշտների»՝ Բունինի, Կուպրինի, Անդրեևի և այլոց առաջին հրապարակումների շրջանն է: Եվ միևնույն ժամանակ նախահեղափոխական Ռուսաստանի երկու գլխավոր սոցիալ-քաղաքական հոսանքների՝ մարքսիստների ու նարոդնիկների պայքարի շրջանն է: Ինչպես և ավանդական կրոնական հայացքների ճգնաժամի և նոր կրոնական մտքի ծննդի (Բերդյաև, Բուլգակով, Ստրուվե, Ֆրանկ և այլք) շրջանը, որն իր մասին բարձրագույն կիսյտարարի XX դարի սկզբին ու վերջնական հասունության կհասնի հետհեղափոխական վտարանդության մեջ:

Տոլստոյը XIX դարի այդ գաղափարական, կրոնական, գրական ու սոցիալ-քաղաքական հոսանքներից ոչ մեկում չի տեղավորվում: Միևնույն ժամանակ, հենց նա է բոլորից ավելի՝ ահռելի ազդեցություն գործում դրանց վրա: Նրան չի կարող շրջանցել Ռուսաստանի մտածող ու ստեղծագործող մարդկանցից՝ բանաստեղծներից, արձակագիրներից, հրապարակախոսներից, հասարակական, քաղաքական, կրոնական գործիչներից

ոչ մեկը: Տոլստոյի կերպարը վեճեր, բողոքներ, դժգոհություն է հարուցում, բայց, այսպես թե այնպես, ներկա է բոլոր գաղափարական ու գեղարվեստական մարտերում, որոնց առումով առանձնապես շռայլ է այդ ժամանակը:

Ընդամին, Տոլստոյն ինքը կարծես հասնում է հոգևոր ազատության գերագույն աստիճանին: Նա կաշկանդված չէ ոչ փողով, ոչ սեփականությամբ: Փառասիրությունը, ճանաչման ծարավը, որոնք այնպես էին հուզում երիտասարդ տարիքում, որ դրանք իր գլխավոր արատն էր համարում, արդեն չեն մտահոգում, ոովհետև թիվ մեկ գրող է ճանաչված ոչ միայն Ռուսաստանում, այլև ողջ աշխարհում: Երբ 1885 թվականին, միլիոնատեր Աֆրեդ Նոբելի կտակի համաձայն սահմանվեց Նոբելյան մրցանակը, կասկած չկար, թե ով է լինելու առաջին դափնեկիրը գրականության ոլորտում: Բաց Տոլստոյը հեշտությամբ հրաժարվում է մրցանակից, և այն բաժին է ընկնում ֆրանսիացի բանաստեղծ և էսսեիստ Սյուլլի-Պրյուդոմին:

Տոլստոյի հայացքները հանրաճանաչ են Եվրոպայում ու Ամերիկայում, երկրպագուներ են հայտնվում Ճապոնիայում, Չինաստանում, Հնդկաստանում: Դա մեծապես Չերտկովի վաստակն է, բայց անհնար է բացատրել Տոլստոյի ստեղծագործությունների տարածմանն ուղղված գուտ նրա եռանդուն գործունեությամբ: Ինչո՞ւ Տոլստոյի գաղափարներն, օրինակ, Ամերիկայում ավելի տարածված էին, քան Եվրոպայում: Ինչո՞ւ դրանք այդպես համընկան հնագույն քաղաքակրթությունների ներկայացուցիչների՝ հնդիկների ու չինացիների տրամադրվածությանը: Պատասխանները կարելի է գտնել միայն Տոլստոյի բուն մտքերում, ոչ թե արտաքին հանգամանքներում:

Իննսունական թվականներին Տոլստոյի համար ստեղծվել էին բոլոր պայմանները, որ ապրեր ազատ ու անկախ, հղանար իր գաղափարներն ու վերևից նայեր նրան, ինչ կատարվում էր Ռուսաստանում ու ամբողջ աշխարհում: Որոշ առումով նրան նույնիսկ ձեռնտու էր, որ Եվրոպական քաղաքակրթությունը ու դրա հետ մեկտեղ Ռուսաստանը դեպի աղետ են գնում: Չէ՞ որ հենց ինքն էր դատապարտել այդ քաղաքակրթությունը, զգալիացրել բոլորին...

«Մենք մի կերպ ենք դիմանում մեր մակույկում՝ փոթորկվող և արդեն մեզ ծածկող ծովի վրա, որն ուր որ է գազազած կուլ կտա ու կխժռի մեզ: Բանվորական հեղափոխությունը՝ ավերածությունների ու սպանությունների սարսափներով, ոչ միայն սպառնում է մեզ, այլև արդեն 30 տարի ապ-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

րում ենք այդ վիճակում և առայժմ, մի կերպ, տարբեր խորամանկություններով առժամանակ հետաձգում ենք նրա պայթյունը»:

Տոլստոյը սա գրել է 1885 թվականին:

Հանճար է, մարգարե, նրանից է՞լ ինչ է պահանջվում:

Բայցևայնպես, իննսունականների ամենասկզբին Տոլստոյը մի արարք է կատարում, որը հակասում է նրա հայացքներին: Նա, արդեն XX դարի մեկ այլ հանճարի՝ Մայակովսկու խոսքով, կանգնում է սեփական երգի կոկորդին:

1891 թվականի վերջին Կենտրոնական և Արևելյան Ռուսաստանի մի քանի նահանգներում սարսափելի գյուղացիական սով սկսվեց: Պատճառները մի քանիսն էին՝ անբերրիությունը, հողագործության ընդհանուր ցածր մակարդակն ու հողագործներին օգնելու՝ կառավարության անպատրաստ լինելը: Սակայն գլխավոր պատճառն այն անարդարությունն էր, որի մասին անընդհատ խոսում ու գրում էր Տոլստոյը: 1861 թվականին գյուղացիներին ազատություն տվեցին, բայց փաստորեն առանց հողի: Բարեբեր հողերի մեծ մասը կալվածատերերի սեփականություն էր մնում, որը գյուղացիները ստիպված էին վարձակալել: Բերքառատ տարիներին ծայրը ծայրին հասցնում էին՝ կալվածատերերին վճարում էին ցորենով, փողով կամ մշակություն անելով, իսկ մնացածը գնում էր ընտանիքը կերակրելուն ու տնտեսությունը պահելուն: Անբերրիության իրարահաջորդ երեք տարիները՝ 1891, 1892 և 1893 թվակնները ցույց տվեցին այդ համակարգի աղետալիությունը ճգնաժամային պայմաններում: Եվ դա արդեն առաջին դեպքը չէր: Այսպես կոչված սովյալությունը Ռուսաստանը ցնցում էր յոթանասունական թվականների վերջից:

Կալվածատեր-ճորտատերն այսպես թե այնպես ստիպված էր կերակրել գյուղացիներին, որովհետև նրանք իր սեփականությունն էին, որոնց համար պատասխանատու էր: «Ազատ» գյուղացիները մնացին իրենք իրենց հույսին: Նրանք պարտավոր էին հողի վարձակալման համար վճարել օրենքի համաձայն: Սակայն անբերրիության դեպքում վճարելու բան չէր լինում: Նրանք ծախում էին կովերը, ձիերը, այն ամենը, ինչ ունեին, որ վճարեն կալվածատիրոջը և ինչ-որ ուտելիք գնեն իրենց ընտանիքի համար: Արդեն հաջորդ տարի հերկելու և ցանելու ոչինչ չէր լինում... Դա արատավոր շրջան էր:

Տոլստոյը դրա մասին գրել է «Մովի մասին» հոդվածում: Հոդվածը մտահղացել էր 1891 թվականի ամռանը, երբ հայտնվեցին վերահաս աղետի առաջին կանխատեսումները: «Երեխաներին ձի են տվել՝ իսկական,



կենդանի ձի, ու նրանք գնացել են քշելու և ուրախանալու: Գնացին, գնացին, քշում են սարնիվար, սարնիվեր: Բարի ձիուկը քրտինքի մեջ կորչում է, շնչակտուր լինում, բայց տանում, տանում է նրանց, ենթարկվում է նրանց, իսկ երեխաները ճշում են, հոխորտում, պարծենում իրար առաջ՝ ով է ավելի լավ վարում, և մտրակում, և սլանում: Ու նրանց թվում է, ինչպես որ միշտ է թվում, երբ ձիուկը վարգում է, որ այդ իրենք են վարգում, ու հպարտանում էին իրենց վարգով... Երկար զվարճացան երեխաները՝ մոռանալով, որ ձիուկն ապրում է, բանում ու տառապում, ու եթե նկատում էին, որ կանգ է առնում, միայն ավելի ուժեղ էին թափահարում մտրակը, ձողկում ու բղավում: Բայց ամեն ինչ վերջ ունի, եկավ նաև բարի ձիուկի ուժերի վերջը, և նա, չնայած մտրակին, սկսեց կանգ առնել: Այստեղ միայն երեխաները հիշեցին, որ ձիու կենդանի արարած է, ու հիշեցին, որ ձիերին կերակրում ու ջրում են, բայց երեխաները չէին ուզում կանգ առնել, ու սկսեցին մտածել, թե ինչպես ընթացքում կերակրեն ձիուն: Մի երկար մահակ ճարեցին ու ծայրին խոտ կապեցին, ու հենց մատիքից, ընթացքի ժամանակ խոտը մոտեցրին ձիուն: Բացի այդ, երեխաներից երկուսը, նկատելով, որ ձիու օրոքվում է, սկսեցին պահել նրան, օգնել, որ աջ կամ ձախ չտապալվի: Երեխաները շատ բաներ հորինեցին, բացի մեկից, որ առաջինը պիտի մտածեին՝ որ իջնեն ձիուց, դադարեն քշել, ու եթե հաստատ խղճում են, արձակեն ու ազատություն տան նրան»:

Նա գյուղացիներին առանց հողի ազատություն տալն ազատություն չէր համարում: Դա նոր և նույնիսկ ավելի վատ կախվածություն էր:

Բայց երբ Տոլստոյը գրում էր «Սովի մասին» հոդվածը, արդեն այլ հարց էր դրված՝ իսկ ի՞նչ անել: Ինչպե՞ս փրկել սովից մեռնող գյուղացիներին: Անհրաժեշտ է նրանց սննդամթերք հասցնել, իսկ դրա համար փող է հարկավոր: Բայց նույնիսկ փողի առկայության դեպքում՝ ինչպե՞ս մթերք գնել, ինչքա՞ն և առաջին հերթին ի՞նչ: Եվ վերջապես, ինչպե՞ս բաշխել: Բոլորին հավասա՞ր, ինչպես անում էին համայնքներն ու Կարմիր խաչը: Սակայն հարուստ, սովից չմահացող գյուղացին երբեք չի հրաժարվի այլուրի կամ ցորենի ձրի պարկից: Անիմաստ է գյուղացիներին հարցնել իրենց իրական կարիքների մասին: Յուրաքանչյուրը կասի, որ ինքն ամենից վատն է ապրում, որպեսզի հնարավորինս շատ ձրի ստանա, ոչ միայն իրական կարիքների, այլև հոգեպահուստի համար:

Տուլայի նահանգում սովի խնդիրն այդքան սուր չէր: Տոլստոյը դուստրերի՝ Տանյայի ու Մաշայի և առավել հավատարիմ «տոլստոյականների» մի խմբի հետ մեկնեց Ռյազանի նահանգ՝ իր երիտասարդության ընկերոջ՝

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

կալվածատեր Իվան Իվանովիչ Ռասկոլնիկովը:

Երկու տարուց ավելի, միայն ժամանակ առ ժամանակ Մոսկվա ու Յասնայա Պոլյանա մեկնելով, նա Ռասկոլնիկովը կալվածում՝ Դանկովո գավառի Բեզիլեկայում խանդավառ երիտասարդների հետ «աշխատում էր սովի դեմ»:

Այդ ընթացքում նրանք սովամահությունից փրկեցին տասնյակ հազարավոր մարդկանց՝ երեխաների, ծերերի, կանանց ու տղամարդկանց: Չարմանալի է, որ Տոլստոյի ու նրա մերձավորների կենսագրության այդ հերոսական էջերը առ այսօր քիչ են հայտնի Ռուսաստանում: Եվ համարյա ուսումնասիրված չեն:

Պատկերացնելու համար, թե ինչ վտանգի էին ենթարկվում սովի դեմ պայքարի մասնակիցները, բերենք մի քանի փաստ: Ինքը՝ Ռասկոլնիկովը 1891 թվականի աշնանը, սովյալ գյուղերի տեսչական ստուգման ժամանակ մրսեց ու մահացավ: Տոլստոյը, որը շարունակում էր նրա գործը, մի անգամ, ձմռանը, սահնակով մոլորվեց տափաստանում ու քիչ էր մնում զոհվեր: Այդ դեպքը խթան դարձավ «Տերն ու մշակը» վիպակը գրելու համար: «Սովի դեմ աշխատանքի» ժամանակ տիֆից մահացավ Մարյա Պետրովնա Բերսը՝ Սոֆյա Անդրեևնայի եղբայրներից մեկի երիտասարդ կինը, որը Բեզիլեկայում օգնում էր Տոլստոյին: Տոլստոյի որդին՝ Լևը փաստորեն միայնակ սովից փրկում էր գյուղացիներին՝ հայրական ունեցվածքի բաժանումից ստացած՝ Սամարայի նահանգի կալվածքում: Տուն վերադառնալով՝ Լև Լվովիչը ծանրագույն ընկճախտի մեջ ընկավ, որը տևեց չորս տարի, ու մի կերպ բուժվեց:

Տոլստոյի կողմից հավանության արժանացած՝ Ռասկոլնիկովը գաղափարն այն էր, որ ոչ թե մթերք բաժանվի գյուղացիներին, այլ նրանց համար կազմակերպվեն անվճար ճաշարաններ: Գաղափարը նոր չէր, պարզ ու կատարյալ էր միաժամանակ, բայց՝ դժվար իրականացնելի: Ենթադրվում էր, որ ցանկացած գեղջուկ նախևառաջ ճաշարան կուղարկի իր երեխաներին ու ծերերին, հետո միայն ինքը կգնա, իսկ հարուստը չի էլ գնա. ինչի՞ համար: Դաշարաններում կարելի է ճիշտ սննդակարգ պահել, որպեսզի ավիտամինոզ ու լնդախտ չլինի: Սնվելու համար ոչ միայն հաց է հարկավոր, այլև տաք կերակուր ու բանջարեղեն: Դաշարանները գյուղացիներին շեղում էին սովամահության սպասման տանջալի անգործությունից ու անգործությունից, երբ առողջ, ուժեղ գեղջուկները կյանքին վերջ էին տալիս ինքնասպանությամբ՝ տեսնելով ինչպես են մահանում իրենց երեխաներն ու ծերերը: Չէ՞ որ ճաշարաններում իրենք ու իրենց կանայք էին աշխատում:

Մակայն ճաշարանները դեռ պետք էր կազմակերպել, ժամանակին մթերք հասցնել սովից զերծ մնացած մահանգներից ու մշտական վերահսկողություն իրականացնել ճաշարաններում: Դրա համար էլ Տոլստոյն ու օգնականները երբեք զույգով ստուգման չէին գնում, այլ միշտ մեկական, ցանկացած եղանակի, որպեսզի հասցնեն ստուգել Ռասակու կալվածքի շուրջը տասնյակ վերստերի վրա տեղակայված ճաշարանները:

Տոլստոյի համար այդ աշխատանքը ծանր էր մաև բարոյապես: Գյուղացիներին օգնելու համար փող էր պետք, իսկ նա մերժել էր փողը: Հենց 1891 թվականին նա ունեցվածքը բաժանել էր կնոջն ու երեխաներին: Նույնիսկ Բեգիչևկա ուղևորվելու համար Տոլստոյը փող պիտի խնդրեր Սոֆյա Անդրեևնայից: Հենց նրա միջոցով էլ մամուլում հանդես եկավ սովյալների համար նվիրատվություններ անելու խնդրանքով: 1891 թվականի նոյեմբերի 3-ին «Ռուսակիե վեդոմոստի» թերթում հրապարակվեց Սոֆյա Անդրեևնայի նամակը, որն ավարտվում էր հետևյալ բառերով. «Ես՝ մեղավորս չեմ, որ պետք է երախտագիտություն հայտնեմ բոլոր նրանց, ովքեր արձագանքեցին իմ խոսքին, այլ այն դժբախտները, որոնց կկերակրեն բարի հոգիները»:

Առաջին առավոտը նրան բերեցին 400 ռուբլի, իսկ օրվա ընթացքում ստացավ մեկուկես հազար: Մինչև նոյեմբերի 11-ը հավաքվել էր ինը հազար ռուբլի: Սովի տարիներին Տոլստոյի ու կնոջ անունով ընդհանուր առմամբ ստացվեց ավելի քան 200 հազար ռուբլի:

Սոֆյա Անդրեևնան ամուսնուն գրում էր. «Շատ հուզիչ են բերում փողը, մեկը, մտնելով, խաչ է անում ու արծաթե ռուբլանոց տալիս. մի ծերունի համբուրեց ձեռքս և ասում է՝ ընդունեք, ողորմած կոմսուհի՛, շնորհակալությունս և ուժերիս ներած օգնությունս: 40 ռուբլի տվեց: Մի քանի ուսուցչուհի գումար բերեցին, ու մեկն ասում է. «Ես երեկ լալիս էի ձեր նամակի վրա»: Մի ձիավոր, ճոխ հագած պարոն էլ դրան մեջ հանդիպեց Անդրյուշային ու հարցրեց՝ դուք Լև Նիկոլաևիչի որդի՞ն եք: - Այո՛: - Չեր մայրը տա՞նն է: Փոխանցեք նրան: Ծրարում 100 ռուբլի էր: Երեխաներ են գալիս, 3, 5, 15 ռուբլի բերում: Մի օրհորդ հագուստեղենով կապոց բերեց: Մի զարդարված օրհորդ, արցունքներից խեղդվելով, ասում էր. «Ա՛խ, ինչ հուզիչ նամակ էիք գրել: Ահա վերցրեք, սրանք իմ փողերն են, հայրիկս ու մայրիկս չգիտեն, որ տալիս եմ, իսկ ես այնքան ուրախ եմ»: Ծրարում 101 ռուբլի 31 կոպեկ էր»:

Ողջ Ռուսաստանն արձագանքեց Տոլստոյի կնոջ կոչին: Նամակը վերահրապարակվեց արտասահմանում: Արդեն նոյեմբերի սկզբին անգլիա-

ցի խոշոր հրատարակիչ Անուին Ֆիշերը Տոլստոյին գրավոր խնդրում էր վստահված անձ ու միջնորդ դառնալ Անգլիայում նվիրատվություններ հավաքող ու սովյալներին օգնող Ռուսաստանի կազմակերպությունների դեկավարների միջև: Միացյալ Նահանգներում միջոցների հավաք կազմակերպվեց Ռուսաստանի սովյալների համար: Ամերիկայից եզիպտացորենով յոթ շոգենավ ուղարկվեց:

Սոֆյա Անդրեևնան երջանիկ էր ամուսնուն օգնելու այդ բարի գործում: Բայց Տոլստոյն իր աշխատանքը բնավ բարի գործ չէր համարում: Նա Բեզիլեկայից «տոլստոյական» Իսահակ Բորիսովիչ Ֆեյներմանին գրում է. «Զզվելի եմ ապրում: Ինքս էլ չգիտեմ ինչպես ներքաշվեցի սովյալներին կերակրելու այդ ծանր գործի մեջ: Ես՝ նրանցից կերակրվողը չեմ, որ պիտի կերակրի նրանց: Բայց այնպես ներքաշվեցի, որ բաշխողը դարձա հարուստների փսխածի»:

Նկարիչ Նիկոլայ Նիկոլևսկի Գեին գրում է. «Մենք ապրում ենք այստեղ ու կազմակերպում ճաշարաններ, որտեղ սնվում են սովյալները: Հանկարծ ինձ չմեղադրեք: Այստեղ շատ բան այնպես չէ, ինչպես պետք է լիներ, այստեղ Սոֆյա Անդրեևնայի ու նվիրատվության փողերն են, այստեղ կերակրողների ու կերակրվողների հարաբերություններն են, այստեղ մեղքը վերջ չունի, բայց չեմ կարող ապրել տանը, գրել: Մասնակցելու, ինչ-որ բան անելու պահանջ եմ զգում: Եվ գիտեմ, որ այն չեմ անում, բայց ոչինչ անել չեմ կարող: Վախենում եմ մարդկային փառքից և ամեն պահ հարցնում ինձ՝ սրանով մեղք չե՞մ գործում, և ջանում եմ խիստ դատել ինձ և գործել Աստծո առաջ և հանուն Աստծո...»:

Տոլստոյը հասկանում է, որ մասնակցելով սովյալների փրկությանը և այդ գործում ներգրավելով հարուստ մարդկանց, ինքը «անվակն» է դառնում երկրային բարիքների բաշխման անարդար կառուցված մեխանիզմի, որը հենց ինքն էլ դատապարտել էր: Նա ստիպված է գործ ունենալ մեծ փողերի հետ՝ դրանացից, որպես «չարիքից» հրաժարվելուց հետո: Նա հասկանում է, որ ժամանակավոր օգնությունը սովյալներին նահանգներից մեկում (իսկ մյուսները) ընդհանուր առմամբ ոչինչ չի փոխի համակարգում, հակառակը՝ կերկարաձգի նրա գոյությունը: Բայց չի կարող չմասնակցել դրան՝ իմանալով, որ կողքին ինչ-որ տեղ սովից մահանում են մարդիկ:

«Մովի դեմ աշխատանքն» ի հայտ բերեց Տոլստոյի գուցե թե ամենաարժեքավոր հատկությունը. նա դոգմատիկ չէր իր համոզմունքներում: Տարբեր իրավիճակներում ինքն էլ հանդես էր գալիս դրանց դեմ, երբ այդ էր պահանջում պարզ բարոյական զգացումը:

Իննսունական թվականները Տոլստոյի ստեղծագործության ամենաբեղուն շրջաններից էին: Կրոնական մտածողն ու գրողը արդեն անհաշտ հակադրության մեջ չեն մտնում նրա հոգում, ինչպես եղել էր ութսունականների առաջին կեսին, այլ լրացնում ու հարստացնում են իրար: Սկզբունքորեն նոր գրող Տոլստոյ է ծնվում: Իննսունականներին նա ստեղծում է իր գլխավոր կրոնական աշխատությունը՝ «Երկնային արքայությունը ձեր մեջ է»:  
Այդ նույն ժամանակ հայտնվում են նրա գեղարվեստական գլուխգործոցները՝ «Կրեյցերյան տոնատը», «Դևը», «Տերն ու մշակը», «Հայր Սերգի»:  
1896 թվականին Տոլստոյը գրում է «Կոծոծը» պատմվածքը, որից, ինչպես կոկոնից, հետագայում կրացվի «Հաջի Մուրադ» ծավալուն պատմական վիպակը: 1905 թվականին ավարտվելով՝ այն կդառնա Տոլստոյի վերջին խոշոր ստեղծագործությունը, նրա կարապի երգը...

Տոլստոյ-մտածողն ու Տոլստոյ-գրողը թերևս առավել ներդաշնակ միավորվում են 1894-1895 թվականներին գրված «Տերն ու մշակը» վիպակում:

Վաճառական Վասիլի Բրեխունովը մշակ Նիկիտայի հետ ձնամրրիկին մոլորվում է տափաստանում: Առջևում երկար գիշերն է, ու նրանք անխուսափելիորեն սառչելու են: Կամ միայն մեկը կփրկվի, որին մյուսը կծածկի իր մարմնով: Այդ մելոդրամատիկ հանգուցալուծման բոլոր կանոններով տիրոջը պետք է փրկի մշակը՝ հասարակ, աղքատ ու ազնիվ մի մարդ, իսկ խորամանկ ու փողատեր հարուստը պետք է ողջ մնա ու մեղա գա: Բայց Տոլստոյը շրջում է դասական բարոյախրատական սյուժեն: Տերն է փրկում մշակին՝ նրան իր սառչող մարմնով տաքացնելով: Թե ինչու է այդպես վարվում՝ հանելուկ է:

Այդ վիպակը երկու չափում ունի: Առաջինը՝ հորիզոնական. դրանք տիրոջ ու մշակի՝ Վասիլիի ու Նիկիտայի երկրային հարաբերություններն են: Այստեղ ամեն ինչ պարզ է: Երկրորդ, ուղղահայաց չափումը բոլոր մարդկանց հարաբերություններն են Աստծո հետ՝ որպես երկնային տիրոջ «մշակներ»:

Նիկիտան որպես «մշակ» անպարտ է Աստծո առաջ: Նա ավելի շատ տվել է ուրիշներին, քան վերցրել: Վասիլին, հակառակը, բոլոր ուժերն ու հնարամտությունը ծախսել է նրա վրա, որ վերցնի, ոչ թե տա: Ծառայի փրկությունը Տիրոջ համար «բանելու» միակ հնարավորությունն է: Եվ նա ծառային է տալիս ամենաթանկը, որ ունի՝ իր կյանքը: Դրա համար նա «անհապաղ» կհայտնվի Երկնային արքայությունում:

«Եվ հանկարծ բերկրանքը կատարվում է. գալիս է նա, ում սպասում էր, և դա արդեն Իվան Մատվեիչը չի, այլ մեկ ուրիշը, բայց հենց նա, ում սպա-

սում էր: Եկել ու կանչում է նրան, և նա, որ կանչում է, հենց նա է, որ ձայն էր տվել ու պատվիրել էր պառկել Նիկիտայի վրա: Եվ Վասիլի Անդրեիչն ուրախ է, որ այդ ինչ-որ մեկը եկել է իր ետևից: «Գալիս եմ» ցնծագին գոչում է նա, և այդ կանչը արթնացնում է նրան: Եվ նա արթնանում է, սակայն արթնանում է բնավ ոչ այն, որ քնել էր: Ուզում է վեր կենա ու չի կարողանում, ուզում է ձեռքը շարժի՝ չի կարողանում, ոտքը՝ էլի չի կարողանում: Ուզում է գլուխը շրջի՝ դա էլ չի կարողանում: Ու զարմանում է, բայց բոլորովին չի վշտանում դրանից: Հասկանում է, որ դա մահն է, ու բոլորովին չի վշտանում դրանից: Ու հիշում է, որ Նիկիտան պառկած է իր տակ, ու որ նա տաքացել ու ողջ է, ու նրան թվում է՝ ինքը Նիկիտան է, Նիկիտան՝ ինքը, ու որ իր կյանքը ոչ թե իր, այլ Նիկիտայի մեջ է: Նա լարում է ուժերն ու լսում Նիկիտայի շնչառությունը, նույնիսկ թույլ խռպոցը: «Ողջ է Նիկիտան, ուրեմն ողջ եմ և ես», - հանդիսավոր ասում է ինքն իրեն: Ու հիշում է փողերը, կրպակը, տունը, առքն ու վաճառքը և Միրոնովների միլիոնները, նրա համար դժվար է հասկանալ՝ ինչու էր այդ մարդը, որին Վասիլի Բրեխտունով էին կոչում, զբաղվում այն ամենով, ինչով զբաղվում էր: «Դե ինչ, չե՞ որ նա չգիտեր՝ բանն ինչ է, - մտածում է նա Վասիլի Բրեխտունովի մասին: - Չգիտեի՝ հիմա գիտեմ: Հիմա արդեն՝ անսխալ: Հիմա գիտեմ»: Ու կրկին լսում է նրա կանչը, ով արդեն կանչել էր նրան: «Գալի՛ս եմ, գալի՛ս», - ցնծագին, զորովանքով ասում է նրա ողջ էությունը: Եվ նա զգում է, որ ազատ է ու ոչինչ արդեն իրեն չի պահում»:

Այդ վիպակում ամենաապշեցուցիչն այն է, թե ինչ թեթև ու պարզ է Վասիլին քայլ անում Երկնային արքայություն: Ընդամենը պետք է ողջ ունեցածը տալ ուրիշին: Հրաժարվել ամենից, որ ունես: Բայց դա սովորական պայմաններում անել չէր կարող: Ինչպե՞ս հրաժարվես փողից, կրպակից, ամենից, որ վաստակել ես: Դժվար է, համարյա անհնար: Բայց միայն այդպիսի գնով են ձեռք բերվում մարդու ազատությունն ու անկախությունը:

Հենց այդպիսի ազատություն էր երագում Տոլստոյը, երբ հրաժարվեց սեփականությունից ու գրական իրավունքներից: Սակայն իրական կյանքում դա անհնար է: Հենց «Տերն ու մշակը» վիպակի հրապարակման հետ էր կապված Տոլստոյների ընտանիքում տեղի ունեցած ամենատհաճ սկանդալներից մեկը:

Վիպակն առաջին անգամ տպագրվել է 1895 թվականին, «Սևերնի վեստնիկ» ամսագրում: Իննսուրանական թվականներին «Սևերնի վեստնիկը» նարողնիկական ամսագրից դառնում է ռուս դեկադենտների առաջին տպագիր օրգանը: Այստեղ տպվում են Մերեժկովսկին, Գիպիուսը, Բալուն-

տը, Սուրբուրբը, այստեղ լույս են տեսնում Լու-Անդրեաս Սալոմեի հուշերը Ֆրիդրիխ Նիցշեի մասին: Այստեղ են հայտնվում Գորկու «նիցշեական» շրջանի պատմվածքները, երբ նա գովերգում էր Չելկաչի ու Մավվայի կարգի ուժեղ ու անբարոյական անձնավորություններին: Թվում է՝ Տոլստոյն իր ստեղծագործությունները չպիտի տար այդ ամսագրին...

Մանավանդ, որ Սոֆյա Անդրեևնան հիացած է «Տերն ու մշակ»-ով: Նա ամուսնուն համոզում էր իրեն տալ վիպակը առաջին հրապարակման համար: Բայց Տոլստոյն անողոք էր. ընտանիքը չի կարող վաստակել իր նոր ստեղծագործություններով: Չայրացած Սոֆյա Անդրեևնան որոշեց, որ ամուսինն անտարբեր չէ «Սևերնի վեստնիկի» երեսնամյա գեղեցկուհի հրատարակչի՝ Լյուբով Յակովլևնա Գուրևիչի հանդեպ: Նա Տոլստոյների տուն էր այցելում Մոսկվայում, Սոֆյա Անդրեևնայի քիկունքում բանակցություններ վարում Լև Նիկոլաևիչի հետ:

1895 թվականի փետրվարի քսանմեկին Մոսկվայում Տոլստոյը Սոֆյա Անդրեևնային հայտնից տնից հեռանալու իր որոշման մասին: Վիճել էին «Տերն ու մշակը» վիպակի հրապարակման պատճառով, որը Տոլստոյը չէր զիջել կնոջը: «Լյովոչկան այնպես բարկացած էր, որ վազեց վերև, հագնվեց և ասաց, որ ընդմիջտ կհեռանա տնից ու չի վերադառնա»: Եվ այդ ժամանակ Սոֆյա Անդրեևնայի «մտքով անցավ, որ դա ընդամենը պատրվակ է, որ Լյովոչկան ուզում է լքել ինձ ինչ-որ ավելի կարևոր պատճառով: Ամենից առաջ եկավ կնոջ մասին միտքը... Ես կորցրի ողջ ինքնատիրապետումս, ու որպեսզի թույլ չտամ ինձ առաջինը լքել, դուրս թռա ու վազեցի նրբանցքով: Նա՝ իմ ետևից: Ես խալաթով եմ, նա միայն շալվարով ու ժիլետով, առանց շապիկի: Նա ինձ խնդրեց վերադառնալ, իսկ ես միայն մի բան էի մտածում՝ որևէ կերպ մեռնել: Ես հեկեկում ու, հիշում եմ, ճշում էի՝ թող ինձ ոստիկանատուն տանեն, խենթանոց: Լյովոչկան քաշում էր ինձ, ընկնում էի ձյան մեջ, ոտքերս բոբիկ էին կոշիկների մեջ, խալաթի տակ՝ միայն զիշերանոց»:

Իսկ այդ ժամանակ տանը քուրթեշից մահանում էր նրանց վերջին և ամենասիրելի երեխան՝ Վանեչկան: Ու մահացավ երկու օրից: Նա յոթ տարեկան էլ չկար:

Ծնվել էր 1888 թվականի մարտի 31-ին, երբ Սոֆյա Անդրեևնան մոտենում էր իր 44-ամյակին, իսկ Լև Նիկոլաևիչը համարյա վաթսույն տարեկան էր: Տոլստոյը հենց սկզբից այդ որդու մեջ տեսել էր իր հոգևոր ժառանգորդին: Երբ նա ծնվեց, Սոֆյա Անդրեևնան գրում էր քրոջը. «Լյովոչկան ձեռքերին առավ նրան ու համբուրեց. մինչ օրս չտեսնված հրաշք...»:

Վանեչկան հիվանդոտ երեխա էր: Սակայն բոլորն ընդծում էին նրա նմանությունը հորը: «Ապշեցնում էին այդ մանկական փոքրիկ դեմքի վրա խորունկ, լուրջ, գորշ աչքերը, դրանց հայացքը, մանավանդ երբ տղան մտքի մեջ էր ընկնում, հայացքն ավելի խոր ու թափանցող էր դառնում, և այդ ժամանակ նմանությունը Լև Նիկոլակիչի հետ ավելի էր ուժգնանում: Երբ ես միասին տեսա նրանց, զարմանալի զգացում ունեցա: Մեկը՝ ծեր, կորացած, աստիճանաբար կյանքից հեռացող, մյուսը՝ երեխա, իսկ աչքերի արտահայտությունը նույնն է,- նկատում է Տոլստոյի երկրպագու Գավրիիլ Անդրեևիչ Ռուսանովը:- Լև Նիկոլակիչը համոզված էր, որ իրենից հետո Վանյան է անելու «Աստծո գործը»:

Վանեչկան հոգեպես միավորեց այդ ամբողջ բարդ ու բազմադեմ ընտանիքը: Նրա բնավորության գլխավոր գիծը խաղաղարարությունն էր: Նա տանել չէր կարողանում ընտանեկան վեճերն ու ձգտում էր հաշտեցնել բոլորին: Բոլոր մարդկանց հանդեպ սիրո զգացումը, որ Տոլստոյը դժվարությամբ դաստիարակել էր իր մեջ, Վանեչկային տրված էր ծննդյան օրից: Նա կարող էր համբուրել խոհարարուհու որդի Կուզկայի ձեռքերը ուրախությունից, որ տեսնում է նրան: Նա սիրում էր տոներ կազմակերպել ու նվերներ պատրաստել:

Նա հորն ասում էր. «Պապա՛, երբեք չնեղացնես իմ մայրիկին»: Իսկ մորը՝ «Մի բարկանա, մամա՛: Մի՞թե ավելի հեշտ չէ մեռնել, քան տեսնել, որ մարդիկ զայրանում են...»:

Վանեչկան օժտված էր արտակարգ ունակություններով: Վեց տարեկանում ազատ խոսում էր անգլերեն, հասկանում էր գերմաներեն ու ֆրանսերեն: Լավ նկարում էր, երաժշտական լսողություն ուներ, սկզբում թելադրում, ապա ինքն էր նամակներ գրում հարազատներին: Յոթ տարի էլ չսարած՝ նա թողեց «Փրկված տաքսը» գեղարվեստական պատմվածքը, որը Սոֆյա Անդրեևնան տպեց նրա մահից հետո:

Ու մահն էլ արտասովոր էր... Մահվանից ոչ շատ առաջ հարցրել էր մորը՝ ճի՞շտ է, որ մինչև յոթ տարեկանը մահացած երեխաները հրեշտակներ են դառնում: Այո՛,- պատասխանեց մայրը: «Ավելի լավ է ես էլ մինչև յոթ տարեկանը մեռնեմ, մայրիկ»։ Վանեչկան մահվան վախ չուներ. («Լաց մի լինի, մայրիկ, չէ՞ որ դա Աստծո կամքն է»): Բայց դրա հետ մեկտեղ, մահվան մահճում տխրություն էր զգում: Նրա վերջին բառերն էին. «Այո՛, տխուր է»:

Նրան թաղեցին եղբոր՝ Ալյոշայի կողքին՝ Նիկոլսկոյե գյուղի գերեզմանատանը, Պոկրովսկո-Ստրեչնենկի մոտ, որտեղ ծնվել էր Սոֆյա Անդ-



րեննան: 1932 թվականին այնտեղով մայրուղի գցեցին Մոսկվա-Վոլգա ջրանցքի շինարարության համար: Երեխաների աճյունները վերաթաղեցին Կոչակիում՝ Յասնայա Պոլյանայի մոտ, որտեղ հանգչում են Տոլստոյների ընտանիքի անդամները: Ինչպես ականատեսն էր պատմում. «Պագաղները հանվեցին չոր ավազահողից, և Վանեչկայի դագաղը բացելուց հետո ապ- շեցրեց, որ խոպոպներով գլուխն ասես կենդանի լիներ, սակայն օդի հետ շփումից տառացիորեն աչքի առաջ դեմքի մաշկը սկսեց մգանալ ու մազե- րը թափվեցին»:

Սոֆյա Անդրեևնան երկար տարիներ ուշքի չէր գալիս ցնցումից: Հենց այդ պահից սկսվեց լուրջ հոգեկան խանգարումը: Նրան տանջում էին գիշ- երային հալյուցիցիաները, իջնում էր այգի ու մեռած Վանեչկայի հետ խոսում ինտիմ կանացի թեմաներով: Իսկ Տոլստոյը սկզբում չէր կարողա- նում որոշել իր վերաբերմունքն այդ մահվան հանդեպ. «Թաղեցինք Վանեչ- կային: Սարսափելի՞ է, ո՛չ, ո՛չ սարսափելի, այլ մեծ հոգեկան իրադարձու- քյուն: Շնորհակալ եմ քեզ, Հա՛յր: Շնորհակալ եմ քեզ»:

Փոքր-ինչ ավելի ուշ Տոլստոյն օրագրում կգրի. «Վանեչկայի մահն ինձ համար Նիկոլենկայի (*ավագ եղբոր-Պ.Բ.*) մահվան պես էր, ո՛չ, ավելի՛, ինձ համար Աստծո երևակումն էր, մղումը Նրան: Դրա համար էլ ոչ միայն կա- րող եմ ասել, որ դա տխուր, ծանր իրադարձություն էր, այլև ուղիղ ասում եմ, որ դա (բերկրալի), ոչ բերկրալի, վատ բառ է, այլ Աստծո կողմից գթա- սիրտ, կյանքի սուտը բացահայտող, ինձ Նրան մոտեցնող իրադարձու- քյուն է»:

Այնուհետև. «Երեխաների մահը՝ օբյեկտիվ տեսանկյունից, բնությունը փորձում է տալ լավագույններին ու, տեսնելով, որ աշխարհը դեռ պատ- րաստ չէր նրանց համար, հետ է առնում: Բայց պետք է փորձի, որպեսզի առաջ գնա: Դա հարցում է: Ինչպես չափից դուրս շուտ եկած ծիծեռնակ- ներն են սառչում: Բայց համենայնդեպս պիտի թռչեն-գան: Այդպես էլ Վա- նեչկան: Բայց դա օբյեկտիվ հիմար դատողություն է: Իսկ խելամիտ դատո- ղությունն այն է, որ նա Աստվածային գործ արեց՝ Աստծո թագավորության հաստատումն իր մեծ սիրտ միջոցով, ավելին, քան կես դար ու ավելի ապ- րած շատերը»:

Այնուհետև նրա օրագրում գրառում է հայտնվում. «Այո՛, միշտ պետք է ապրել այնպես, ասես կողքիդ, սենյակում մահանում է սիրելի երեխադ: Նա միշտ մահանում է: Ու միշտ մահանում եմ և ես»:

Որդու մահվան երրորդ օրը նա ասաց. «Կյանքում առաջին անգամ անելանելիություն եմ զգում...»:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Սոֆյա Անդրեևնան պնդում էր, որ հենց Վանեչկայի մահվանից հետո Լև Նիկոլաևիչը ծերացավ:

Բայցևայնպես, երկուսուկես տարի անց այդ ծերունին տնից հեռանալու նոր փորձ է անում: Եվ այս անգամ դա խենթ փախուստ չէ ինչ-որ տեղ «Ամերիկա»: Ամեն ինչ շատ լուրջ է: 1897 թվականի հուլիսին Տոլստոյը Յասնայա Պոլյանայում նամակ է գրում, որը պետք է թողնի կնոջը՝ տունը լքելուց առաջ.

«Թանկագին Սոնյա.

Ինձ վաղուց արդեն չարչարում է իմ կյանքի ու հավատքի անհամապատասխանությունը: Ես չէի կարող ձեզ ստիպել, որ փոխեք ձեր կյանքը, ձեր սովորույթները, որոնց հենց ինքս էլ վարժեցրել եմ, մինչ այս ձեզնից հեռանալ նույնպես չէի կարող՝ մտածելով, որ կգրկեմ երեխաներին, քանի դեռ նրանք փոքր էին, թեկուզ այն փոքր ազդեցությունից, որ կարող էի ունենալ նրանց վրա, և կվշտացնեմ ձեզ, սակայն շարունակել ապրել այնպես, ինչպես ապրել եմ այս 16 տարիներին, մեկ պայքարելով, մեկ զայրացնելով ձեզ, մեկ ինքս ընկնելով այն գայթակղությունների տակ, որոնց սովորել եմ ու որոնցով շրջապատված եմ, ես նույնպես այլևս չեմ կարող, ու որոշեցի հիմա անել այն, ինչ վաղուց էի ուզում անել՝ հեռանալ, նախ, որովհետև ինձ համար, իմ շատացող տարիների հետ, ավելի ու ավելի է ծանրանում այս կյանքը և ավելի ու ավելի եմ մեռնություն ցանկանում, և 2-րդ, քանի որ երեխաները մեծացել են, տանն իմ ազդեցությունն արդեն պետք չէ, և դուք բոլորդ ավելի կարևոր հետաքրքրություններ ունեք, որոնք ձեզ համար անկատելի կդարձնեն իմ բացակայությունը...»:

Սա բավական ծավալուն նամակի սկիզբն է: Դրանից կարելի է բավական հետաքրքիր հետևություններ անել: Պարզվում է՝ տնից չհեռանալու գլխավոր պատճառներից մեկը երեխաներն էին: Տոլստոյը զգում էր իր պատասխանատվությունը նրանց համար, քանի դեռ «փոքր էին»: Վանեչկայի մահվանից հետո իրավիճակը փոխվել էր: 1897 թվականին որդիներից ամենափոքրը՝ Միխայիլը դարձել էր 18 տարեկան: Մեծերը՝ Մերգեյը, Իլյան ու Լևը այդ ժամանակ արդեն իրենց ընտանիքներն ունեին, իսկ չորրորդ որդին՝ Անդրեյը, բանակում ծառայությունը դատապարտող՝ հոր հայացքներին հակառակ ընտրել էր զինվորական ծառայությունն ու որպես հոժարական ծառայում էր Կովկասում:

Ավելի բարդ էր դուստրերի հարցը: Տատյանան արդեն 33 տարեկան էր և այդպես էլ չէր ամուսնացել: Գլխավոր պատճառները հոր գաղափարներով չափազանց տարված լինելն ու նրան որպես օգնական ծառայելն էր:

«Այո՛, դա իմ սերերի այնպիսի մրցակից էր, որին ոչ մեկը չհաղթեց»,- գրում է նա հոր մասին օրագրում: Բայց կանացի բնությունն իրենն էր անում: Տատյանան շատ էր ուզում ամուսին ու երեխաներ ունենալ: 1899 թվականին նա համենայնդեպս ամուսնացավ հասակավոր կավածատեր Միխայիլ Սերգեևիչ Սուխոտինի հետ: Նրանք վաղուց ծանոթ էին ու միմյանց հանդեպ քնքուշ զգացմունքներ էին տածում, բայց Սուխոտինն ամուսնացած էր ու վեց երեխա ուներ: 1897 թվականին նրա կինը մահացավ: Տատյանայի ու Սուխոտինի ամուսնությունն անխուսափելի էր:

1897 թվականի հունիսին տեղի ունեցավ նաև Տոլստոյի ամենավիրյալ դստեր, նրա հավատարիմ օգնականի ու քարտուղարուհու՝ Մարիայի պսակադրությունը: Նա համոզված «տոլստոյական» էր, սակայն, դրա հետ միասին, կրքոտ ու հրապուրվող աղջիկ: Ոչ այնքան գեղեցիկ Մարիան օժտված էր ինչ-որ աներևակայելի հմայքով, իրեն էր սիրահարեցնում Տոլստոյների տուն այցելող տղամարդկանցից շատերին ու նույնիսկ նրանց հետ անմեղ «սիրավեպեր» ունենում: Ի վերջո, նա ամուսնացավ իր զարմիկի՝ Նիկոլայ Լեոնիդովիչ Օբոլենսկու հետ, որը հորաքրոջ՝ Մարիա Լվովնայի թոռն էր: Նա փոքր էր Մարիա Լվովնայից և աղքատոգ ինչպես այն ժամանակ ասում էին «մերկ ու բոբիկ»: Մանուկ հասակում ապրել էր Տոլստոյների տանը, որովհետև մայրը՝ Ելիզավետա Վալերյանովնան իր բոլոր երեխաներին պահելու հնարավորություն չուներ: Ե՛վ Տոլստոյը, և՛ Սոֆյա Անդրեևնան դեմ էին այդ ամուսնությանը:

Տոլստոյը ծանր էր տանում Մաշայի ամուսնանալը: Մաշան ամուսնու հետ բնակություն հաստատեց Պիրոգովո կավածքում, որտեղ ապրում էր հոր ավագ եղբայրը՝ Սերգեյ Նիկոլաևիչը: Տոլստոյը ոչ միայն բաժանվել էր սիրելի աղջկանից, այլև զրկվել հավատարիմ համախոհից ու աշխատակցից:

Այդ նույն ժամանակ մի աներևակայելի բան է կատարվում: Սոֆյա Անդրեևնան, որը 53 տարեկան էր, հրապուրվեց հայտնի կոմպոզիտոր, Պյոտր Իլյիչ Չայկովսկու աշակերտ Սերգեյ Իվանովիչ Տանենով: 1897 թվականի ամռանը Տանենը Յասնայա Պոլյանայում էր, ապրում էր կողաշենքում, շախմատ խաղում Տոլստոյի հետ, նվագում և, ըստ ամենայնի, չէր էլ կասկածում, թե իր նկատմամբ ինչ զգացումներ ունի տանտիրուհին: XIX դարի չափանիշներով դա կատարյալ խելագարություն էր: Դա կարելի է բացատրել միայն այն ցնցումով, որ Սոֆյա Անդրեևնան ապրել էր Վանեչկայի մահվան պատճառով: Նա օրագրում գրում է, որ իջնում էր այգի ու մահացած Վանեչկայի հետ խորհրդակցում, թե իրեն ինչպես պահի Տա-

մեկի հանդեպ: Իսկ Տոլստոյն այդ ընթացքում լրջորեն խանդում էր կնոջը: Յոթ տարի առաջ գրված «Կրեյցերյան տնտատի» սյուժեն զարմանալիորեն կրկնվում էր Տոլստոյների ընտանիքում: Չէ՞ որ «Մոնատի» գլխավոր հերոս Պոզդնիշևն էլ խանդում է կնոջը երաժշտի հանդեպ:

Այսպիսով, ոչ միայն Տոլստոյի «հավատալիքները», այլև ընտանեկան իրավիճակն էր նրան մղում հեռանալու: Որդիները մեծացել են, դուստրերն ուզում են ամուսնանալ, կինը սիրահարված է Տանեկին: Բայց կնոջն ուղղված նամակում նա հեռացումը բացատրում է գաղափարական պատճառներով.

«...ինչպես հնդիկները 60 տարին լրանալիս հեռանում են անտառները, ինչպես ցանկացած ծեր, աստվածավախ մարդ ցանկանում է իր կյանքի վերջին տարիները նվիրել Աստծուն, ոչ թե կատակների, բառախաղերի, բանբասանքների, թենիսի, այնպես էլ ես, թևակոխելով 70 տարիս, հոգուս բոլոր ուժերով ցանկանում եմ այդ անդորրը, մենությունը ու եթե ոչ կատարյալ ներդաշնակություն, ապա գոնե չճացող տարածայնություն իմ կյանքի, իմ հավատքի, իմ խղճի հետ...»:

Ի՞նչ է նշանակում՝ հեռանալ անտառները: Ռուսաստանն արևադարձային Հնդկաստանը չէ: Այստեղ ապրելու համար տաք տուն է հարկավոր: Ռ՞ր կարող էր հեռանալ Տոլստոյը: Որտե՞ղ կարող էր ապրել, Յասնայա Պոլյանայից բացի: Չէ՞ որ իր բոլոր կալվածքներն ու Մոսկվայի տունը տվել էր կնոջն ու զավակներին:

Իհարկե, Տոլստոյը ցանկալի հյուր կլիներ Չերտկովների ընտանիքում: Բայց 1897 թվականի փետրվարին Չերտկովն արտաքսված էր արտասահման...

Ու Տոլստոյը մնաց: Բայց չոչնչացրեց կնոջն ուղղված նամակը. քաղցրեց բազկաթռռի պաստառի տակ: Նա հետաձգեց հեռանալը՝ դրանից չիրաժարվելով: Մոֆյա Անդրեևնան այդ նամակը կկարդա արդեն ամուսնու մահից հետո:

1899 թվականին Տոլստոյն ավարտում է «Պատերազմ և խաղաղություն»-ն ու «Աննա Կարենինայից» հետո երրորդ և իր վերջին վեպը՝ «Հարությունը», որը, մեծ ընդմիջումներով, գրում էր տասը տարի: Վեպի հիմքում ընկած էր նշանավոր իրավաբան ու հասարակական գործիչ Անատոլի Ֆյոդորովիչ Կոնիի պատմածը, թե ինչպես էր երդվյալ ատենակալներից մեկը դատավարության ընթացքում հանձին գողության մեջ մեղադրվող մարմնավաճառի ճանաչել աղջկան, որին ժամանակին գայթակղել էր: Տեսածից ցնցված՝ նա որոշում է ամուսնանալ աղջկա հետ ու փորձում է լուծել

այդ խնդիրը, բայց աղջիկը բանտում մահանում է: Տոլստոյին խորապես հուզել էր այդ պատմությունը, և նա Կոնիին խնդրել էր իրեն մվիրել այդ սյուժեին: Սևագիր տարբերակում վեպը հենց այդպես էլ վերնագրված էր «Կոնիի վիպակը»:

Այդ վեպն առանձնապես դժվար էր գրվում: Պատահական չէ, որ նա երեք անգամ մի քանի տարով թողեց աշխատանքը: Վեպը դուր չէր գալիս նաև Սոֆյա Անդրեևնային, որը կասկածում էր, որ գայթակղված աղջկա պատմությունն ամուսնու համար անձնական բնույթ ունի: Եվ նա իրավացի էր: Երիտասարդ տարիքում Տոլստոյի հետ կատարվել էր նույն պատմությունը, բայց այն տարբերությամբ, որ նրա գայթակղած աղջիկը՝ Գաշան, մարմնավաճառ չէր դարձել, այլ սպասուհի էր նրա քրոջ՝ Մարիա Նիկոլևնայի մոտ:

Բայցևայնպես նա ողջ կյանքում իրեն մեղադրում էր այդ արարքի համար և իշխան Նեխլյուդովի կերպարում ինչ-որ առումով պատկերել էր իրեն: Բայց դրա հետ մեկտեղ, վեպն այնքան բարոյախրատական էր ստացվել, որ Տոլստոյ-արվեստագետը տվյալ դեպքում ապստամբեց Տոլստոյ-բարոյախոսի դեմ, և աշխատանքը շարունակ ընդհատվում էր:

Այդ ստեղծագործությունն ավարտելու ազդակը դրսից եկավ: 1898-1899 թվականներին Տոլստոյն ավագ որդու՝ Սերգեյի և ընտանիքի բարեկամ, բեմադրիչ ու հեղափոխական Լեոպոլդ Սուլերժիցկու հետ զբաղվում էր ութ հազար դուխոբորների Կանադա վերաբնակեցնելու հարցով: Այդ կրոնական աղանդն առանձնակի հալածանքների էր ենթարկվում Ռուսաստանում՝ զինվորական ծառայությունից հրաժարվելու և զենքը հրապարակավ այրելու համար: Դուխոբորներին արտաքսում էին Կովկաս ու Սիբիր, իսկում էին երեխաներին, որոնց նրանք հրաժարվում էին մկրտել ուղղափառ ծեսով, պատժիչ առաքելությամբ կազակական զորքեր էին ուղարկվում նրանց գյուղերը...

Սկզբում մոտ երկու հազար դուխոբորներ տեղափոխվեցին Կիպրոս: Բայց հունական կղզու կլիման ու հողը բոլորովին հարմար չէին ավանդաբար հողագործությամբ զբաղվող մարդկանց: Եվ այդ ժամանակ նրանց Կանադայի ամայի վայրերը վերաբնակեցնելու որոշում ընդունվեց, որտեղ եղանակային ու հողային պայմանները նման էին ռուսականին:

Բայց դրա, ինչպես սովյալներին օգնելու համար փող էր պետք, ընդ որում՝ ոչ փոքր գումար: Թերթերին դիմելու միջոցով մվիրատվություններ հավաքելն անհնար էր, քանի որ դուխոբորների աղանդն արգելված էր Ռուսաստանում: Գումարի մի մասը անգլիական քվակերների միջոցով Անգլի-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

այում հավաքեց Չերտկովը: Մնացածը Տոլստոյը տվեց: Հանուն դրա ստիպված էր պայմանագիր կնքել ռուսական խոշորագույն հրատարակիչ Ադոլֆ Ֆյոդորովիչ Մարքսի հետ «Հարությունը» XIX դարի վերջի-XX դարի սկզբի ամենից ճանաչված «Նիվա» ամսագրում մաս-մաս հրապարակելու վերաբերյալ: Այդ պայմանագրով նախատեսվում էր 12 հազար ռուբլի վճարել Տոլստոյին, որն էլ գնաց դուխոբորների վերաբնակեցմանը: Այդ դեպքում Տոլստոյը համարձակվեց խախտել ստեղծագործությունների համար փող չվերցնելու՝ իր իսկ սահմանած պայմանը:

Եվ պատժվեց դրա համար: Մարքսն անընդհատ շտապեցնում էր Տոլստոյին՝ անընդհատ հերթական գլուխն ուղարկելու հիշեցումով նամակներ հղելով: Արտասահմանից Տոլստոյի վրա ճնշում էր գործադրում Չերտկովը՝ պնդելով հակառակը՝ հետաձգել գլուխները Մարքսին ուղարկելը, որպեսզի ինքը հասցնի վեպի ձեռագիրը վաճառել արտասահմանյան հրատարակիչներին: Չէ՞ որ Տոլստոյը հրաժարվել էր հեղինակային իրավունքներից, և այն, ինչ արդեն հրատարակված էր, կարելի էր անհատույց թարգմանել ու հրապարակել: Տոլստոյը հայտնվեց երկու կրակի արանքում՝ կտոր-կտոր լինելով հրատարակիչ-մագնատի ու հրատարակիչ-բարեկամի միջև...

Դրա վերաբերյալ Տոլստոյի խորաթափանց փեսան՝ Մ.Ս.Սուխոտինը օրագրում գրում էր. «Հայտարարությունը, որ Լ.Ն.-ն վաղուց (1891թ.) արել էր այն մասին, որ իր գրվածքները պատկանում են բոլորին, ըստ էության, հանուն Չերտկովի կորցրեց ցանկացած իմաստ: Իրականում Լ.Ն.-ի գրվածքները պատկանում են Չերտկովին: Նա դրանք վերցնում է, վաճառում ում հարմար է, արտասահման՝ թարգմանության համար, պնդում է, որ Լ.Ն.-ն շտկի՝ ինչը Չերտկովին դուր չի գալիս, Ռուսաստանում տպում է այնտեղ, որտեղ հարմար է գտնում, և միայն այն բանից հետո, երբ դրանք լույս են տեսնում Չերտկովի ձեռքով, դառնում են հանուրի սեփականությունը... Եթե ես փորձեի հիշել Լ.Ն.-ի այն բոլոր արարքները, որ առավելագույնս գայրացրել էին մարդկանց, կպարզվեր, որ դրանք կատարվել են Չերտկովի ճնշման տակ: Օրինակ, «Հարություն» վեպում պատարագը ծաղրող գլուխներ գետեղելը»:

Խոսքը վեպի 39 և 40 գլուխների մասին էր, որտեղ Տոլստոյը ծաղրանքով է պատկերել գլխավոր եկեղեցական խորհուրդներից մեկը՝ եվխարիստիան կամ հաղորդությունը: Դա Տոլստոյի գրչի լավագույն արգասիքը չէ: Այդ գլուխներում զգացվում է նրա գայրույթը, հնարավոր է՝ կապված այն բանի հետ, որ Եկեղեցին անմիջաբար մասնակցել էր դուխոբորների և այլ

աղանդների հալածանքներին: Ռուսաստանում այդ գլուխներն, իհարկե, չտպագրվեցին: Բայց վեպի անգլիական հրատարակության մեջ Չերտկովը վերականգնեց դրանք, ինչն այդ գլուխներն առանձնակի ընդգծված դարձրին:

Վեպի շուրջ հրատարակչական գովառույթը զայրացնում էր Տոլստոյին: «Ծանր հարաբերություններ «Հարության» տպագրության ու թարգմանությունների պատճառով», - գրում է նա օրագրում՝ նկատի ունենալով Չերտկովի ու Մարքսի կոնֆլիկտը: - Բայց առավելապես հանգիստ եմ»:

Վեպի հրապարակումն ուրախություն չբերեց Տոլստոյին, և այն պատճառով, որ ստիպված էր փող վերցնել դրա համար, և որովհետև քոֆիռայքը, որից նա հրաժարվել էր, դե ֆակտո անցել էր Չերտկովին:

Հրատարակությամբ պայմանավորված լուրջ խնդիրներ ծագեցին:

1901 թվականին Տոլստոյին վտարեցին Եկեղեցուց:

#### *Վտարում Եկեղեցուց*

Տոլստոյի վտարումը Եկեղեցուց նրա կենսագրության ամենահայտնի դրվագներից է, որն առավել շատ վեճեր է հարուցում: Միևնույն ժամանակ, ավելի քան հարյուր տարի առաջ կատարված այդ իրադարձության մեջ անհասկանալի շատ բան կա: Հանրահայտ տեսակետը, որ Տոլստոյին Եկեղեցուց չեն վտարել, ինքն է կտրվել՝ նրանից, իսկ Եկեղեցին պարզապես ստիպված է եղել արձանագրել այդ փաստը, բացառապես ժամանակից հայացք է այդ խնդրի վերաբերյալ:

Ճիշտ է, որ Տոլստոյի վերաբերյալ բանադրանք չեն հռչակել: XX դարի սկզբին ոչ մեկին անվանական չէին բանադրում: Վերջին անգամ բանադրել էին հետման Մազեպային, XVIII հարյուրամյակում: 1801 թվականից հերետիկոսների անունները չէին հիշատակվում եկեղեցական արարողությունների ժամանակ: Անիծվածների ցուցակներից հոգևորականները հանեցին նույնիսկ Կեղծ Դմիտրի I-ի՝ Գրիգորի Օտրեպկի անունը: Տարօրինակ կլիներ, եթե նրա տեղում հայտնվեր Տոլստոյը:

Բայցևայնպես, կարդալով XX դարի սկզբի թերթերը, հուշագրությունն ու մասնավոր նամակագրությունը, խիստ հազվադեպ ենք հանդիպում «կտրվել» բառը: Բոլորը հենց «վտարում» էին գրում: Բոլորը հրաշալի հասկանում էին՝ ինչի մասին է խոսքը: Մրբագույն Սիմոնի 1901թ. փետրվարի 22-24-ի «Վճիռը» ուղղափառ եկեղեցուց կայսրության հպատակի վտարում էր՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Այդ «Վճռով» Տոլստոյը պերսոնա մոն-գրատա էր հայտարարվում ուղղափառ պետության մեջ՝ մինչև այն

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

պահը, երբ կզոջար իր համոզմունքների համար: Չմոռանա՞ք նաև, որ Սուրբ հոգու, Հիսուս Քրիստոսի և Սուրբ Կույս Մարիամի «ամարգումը», որը «Վճռում» ներկայացվում է որպես Տոլստոյի հայացքներ, համարվում էր պետական հանցագործություն:

Բայց Տոլստոյին բանտ չդրեցին, չաքսորեցին Սիբիր և նույնիսկ չարտաքսեցին Անգլիա, ինչպես նրա բարեկամ Չերտկովին: Նա ապրում էր Յասնայա Պոլյանայում, շարունակում էր գրել Եկեղեցու մասին՝ ավելի կտրուկ արտահայտություններով, քան մինչև «Վճիռը»: Սակայն բանտ էին նստեցնում և Կովկաս ու Սիբիր աքսորում նրանց, ովքեր կիսում էին նրա հայացքները: Եվ դա ամենածանր պատիժն էր Տոլստոյի համար, որ մտածել էր Պոբեդոնոսցևը, սակայն բնավ այն պտուղները չտվեց, որ նա ակնկալում էր: Տոլստոյի կրոնական ստեղծագործությունների արգելումը Ռուսաստանում և այդ հայացքները տարածողների հետապնդումները նպաստում էին Տոլստոյի գաղափարների հանրայնացմանը. այդ հայացքներում տեսնում էին պետության ու պաշտոնական Եկեղեցու կողմից թաքցվող ճշմարտությունը: Այնպես որ, Տոլստոյի գլխավոր հանրայնացնողը դարձավ... Պոբեդոնոսցևը:

Ութսունական թվականների սկզբից եկեղեցական գործիչներ ծայրագույն վարդապետ Անտոնին (Խրապովիցկի), Խերսոնի և Օդեսայի արքեպիսկոպոս Նիկոնորը (Բրովկովիչ), Խարկովի և Ախտիրի արքեպիսկոպոս Ամբրոսին (Կլյուչարով), Կազանի և Սվյաժսկի արքեպիսկոպոս Պավելը (Լեբեդև), նշանավոր հոգևորականներ, հոգևոր ակադեմիաների պրոֆեսորներ հրապարակավ վիճում էին Տոլստոյի հայացքների հետ, երբ նրա կրոնական ստեղծագործություններից ոչ մեկը տպագրված չէր նույնիսկ արտասահմանում: Դեռ մինչև «Վճիռը» Տոլստոյի հայացքների դեմ հրապարակված հոդվածների ու գրքերի մատենագիտությունը մոտ երկու հարյուր անուն է:

«Ցերկովնիե վեդոմոստիում» Տոլստոյի՝ Եկեղեցուց «կտրվելու» մասին «Վճռի» հրապարակումից հետո եկեղեցական քննադատության հեղեղը ոչ միայն չնվազեց (ինչ ասես, եթե մարդ ինքն է «կտրվել»), այլ աճեց երկրաչափական պրոգրեսիայով: Առիթ էր հայտնվել խոսելու նաև «կտրվելու» մասին, որը, չգիտես ինչու, հենց քննադատներն իրենք «վտարում» էին անվանում: Այդ «սխալը» սողոսկեց նույնիսկ «Միսիոներսկոյե օբոզրենիե» հոդվածների ժողովածու՝ «Կոմս Լ.Ն. Տոլստոյի՝ Եկեղեցուց կտրվելու առթիվ» վերնագրով, որը կազմել էր Պոբեդոնոսցևի խորհրդական Վասիլի Միխայլովիչ Սկվորցովը: «Բովանդակություն» բաժնում այդ գիրքը կոչվում է



«Կոմս Լ.Ն. Տոլստոյի՝ Եկեղեցուց վտարվելու առթիվ»:

Տոլստոյի վեճը Եկեղեցու հետ կամ Եկեղեցու վեճը Տոլստոյի հետ ամենասկզբից «փչացած հեռախոսի» մնուշ էր: Տոլստոյն իրեն տեսնում էր Եկեղեցուն մեղադրողի դերում, և Եկեղեցին պետք է մեղա գար իր մեղքերի՝ հավատաքննության, պատերազմների ու մահապատժի արդարացման և այլնի համար: Բայց արդյունքում հենց ինքը հայտնվեց մեղադրյալի դերում, այն էլ՝ առանց ազատ խոսքի իրավունքի: Ի վերջո, Տոլստոյի «վնասակար» ուսմունքի մասին լայն հասարակությունը տեղեկանում էր մեղադրանքի կողմից, որը Տոլստոյը մեղադրվող կողմ էր համարում:

Սա բազմաթիվ խնդիրներ ծնեց, որոնք Սինոդը ստիպված էր լուծել իր «Վճռով»: Պետք էր ողջ Ռուսաստանի առաջ (և առաջին հերթին ուղղափառ հոգևորականության, որը հանձին ծխական քահանաների նույնպես սկսել էր հրապուրվել Տոլստոյի գաղափարներով) ընդգծել Եկեղեցու սկզբունքային տարածայնությունը Տոլստոյի հետ: Ու չնայած այդ տարածայնությունը բազմիցս նշված է եկեղեցական հրապարակախոսների հողվածներում ու նշանավոր հոգևորականների քարոզներում (օրինակ, հայր Հովհան Կրոնշտադցու), այդ հարցում դեռ շարունակում էր անորոշություն մնալ:

Տոլստոյի վտարումը ռուս ուղղափառ եկեղեցուց ընթանում էր մի քանի փուլով: Առաջին անգամ այդ հարցը ծագեց 1888 թվականին, երբ արքեպիսկոպոս Նիկոնորը «Փիլիսոփայության և հոգեբանության հարցեր» ամսագրի խմբագիր Նիկոլայ Յակովլևիչ Գրոտին ուղղված նամակում հայտնում էր, որ Սինոդում Տոլստոյի «բանադրման» նախագիծ է պատրաստվում: Տոլստոյը «բանադրվելու» միակ թեկնածուն չէր: Յուրաքանչյուր էին հայտնվել նաև բանաստեղծ Կոնստանտին Սիխայլովիչ Ֆոֆանովն ու աղանդավոր Վասիլի Ալեքսանդրովիչ Պաշկովը: Բայց այդ նախագիծի տեքստն անհայտ է:

1891 թվականին Խարկովի ավագերեց Տիմոֆեյ Իվանովիչ Բուտկևիչը կայսր Ալեքսանդր III-ի գահակալման տասներորդ տարեդարձին խոսք ասաց «Կոմս Լ.Ն. Տոլստոյի կեղծ ուսմունքի մասին», որտեղ մեջբերում էր Պողոս առաքյալին. «Բայց եթե նույնիսկ մենք կամ երկնից հրեշտակը սկսի ավետել մեզ ոչ այն, ինչ մենք ավետում էինք ձեզ, բանադրանք կլինի»: Այս քարոզը լուրջ նշանակություն չէր ունենա, եթե դրա մասին չգրեին թերթերը: Տոլստոյի դեմ եկեղեցական քարոզներն այդ ժամանակ արդեն հազվադեպ երևույթ չէին: Իրավաբան և Տոլստոյների ընտանիքի բարեկամ Ալեքսանդր Վլադիմիրովիչ Ժիրկևիչը 1891 թվականի դեկտեմբերի 10-ին

օրագրում գրում է. «Աներևակայելի՝ է: M-me Կրեստովսկայան ինձ ասաց՝ իբր հայր Հովհան Կրոնշտադցին «փակ քարոզի»<sup>31</sup> ժամանակ անիծել է Տոլստոյին, նրա ուսմունքն ու հետևորդներին: Իհարկե, մեր հոգևորականները միայն այդպիսի անհեթեթության չէ, որ ընդունակ են. բայց մի տեսակ հավատս չի գալիս, որ հ. Հովհանը, ում բարության ու գթասրտության մասին լեզունդներ են պտտվում, այդպիսի ոչբրիստոնեական գոեհկություն է ասել»:

1892 թվականի փետրվարին սկանդալ պայթեց՝ կապված «Դեյլի տելեգրաֆում» Տոլստոյի «Սովի մասին» հոդվածի հրատարակման հետ: Ռուսաստանում այն արգելված էր, բայց հոդվածի որոշ հատվածներ, անգլերենից արված թարգմանությամբ, գետեղվեցին «Մոսկովսկիե վեդոմոստիում»՝ խմբագրության այսպիսի մեկնաբանությամբ. «Տոլստոյի հայացքները բացահայտ քարոզություն են՝ ուղղված ողջ աշխարհում գոյություն ունեցող սոցիալական ու տնտեսական կարգի տապալմանը»: Դա բացահայտ մատնագիր էր, որը հասավ կայսրին: Ալեքսանդր III-ը հրամայեց «ձեռք չտալ» Տոլստոյին: Բայց դրա հետ մեկտեղ համառորեն լուրեր էին պտտվում, որ նրան ուզում են արքայի Սուզդալի վանք՝ «առանց գրելու իրավունքի»: Դրա մասին իր օրագրում հայտնում է Սոֆյա Անդրեևնան. «Վերջապես սկսեցի նամակներ ստանալ Պետերբուրգից, որ պետք է շտապեմ որևէ բան ձեռնարկել մեր փրկության համար, որ մեզ ցանկանում են արքայի և այլն, և այլն»: Ա.Վ. Ժիրկևիչը նույնպես օրագրում գրում է. «Հանրության մեջ ամենաաշխատասեր լուրեր են պտտվում Տոլստոյի մասին... իբր նա բանտարկված է Սոլովկիում»:

Այսօր դա բավական անհեթեթ է հնչում: Սակայն սուզդալյան Սպաս-Եվֆիմյան մենաստանը XVIII դարում կրոնական հանցագործների բանտարկության վայր էր: Օրինակ, այնտեղ են պատիժ կրել հնածիսական եպիսկոպոսներ Արկադիև, Կոնոնև ու Գեմադին: Տոլստոյը 1879 թվականին հորաքույր Ալեքսանդրա Անդրեևնային խնդրում էր նրանց համար միջնորդել կայսրուհուն. «Նրա միջոցով ինքնակալին հասցնել խնդրանքս՝ երեք ծերունիների, աղանդավոր ավագերեցների համար (մեկը 90 տարեկան է,

31. Փակ քարոզ - ծես մարդու վրա, որը հիվանդության կամ որևէ այլ պատճառով գրկված է խոստովանաձող հարցերին պատասխանելու հնարավորությունից: Տվյալ դեպքում Ժիրկևիչը նկատի ունի նշանավոր «ընդհանրական քարոզները», որ կարդում էր հայտնի հոգևորական Հովհան Կրոնշտադցին, քանի որ հնարավորություն չունեի առանձին-առանձին հաղորդություն տալու բոլոր ցանկացողներին:

մյուս երկուսը՝ մոտ 60, չորրորդը մահացել է կալանավայրում), որոնք 23 տարի նստած են Սուզդալի վանքում»:

Սակայն Տոլստոյին պատժելու մասին լուրերն այդպես էլ լուրեր մնացին: Իրականում ուղղափառ հովվապետերն այդ հարցում միական չէին:

1892 թվականի մարտին Մոսկվայում Տոլստոյին այցելեց ավագերեց Անտոնին (Խրապովիցկի)՝ նրա ամենալուրջ ու հետևողական ընդդիմախոսը մամուլում: Այդ հանդիպման մանրամասներն անհայտ են: Սակայն ապրիլին Սոֆյա Անդրեևնան գրում է ամուսնուն. «Երեկ Գրոտը բերեց Անտոնիի նամակը, ուր նա գրում է, որ այստեղի միտրոպոլիտը ցանկանում է քեզ հանդիսավորությամբ վտարել Եկեղեցուց: Իբր Ռուսաստանին քիչ են արհամարհում արտասահմանում, հիմա էլ, պատկերացնում եմ, ինչ ծիծաղ կբարձրանա: Ինքը՝ Անտոնին շատ է գովում «Առաջին աստիճանը» (*Տոլստոյի հոդվածը-Պ.Բ.*) և խելացի ու սրամիտ է արտահայտվում նրա ու հոդվածի հանդեպ միտրոպոլիտի և հոգևորականության վերաբերմունքի մասին»:

Ըստ երևույթին, Անտոնիի հանդիպումն ուժեղ տպավորություն չէր թողել Տոլստոյի վրա: Բայց որպես մարդ դուր էր եկել Լև Նիկոլաևիչին: Նա Մոսկվայի հոգևոր ակադեմիայի ուսանող, ապագա «տոլստոյական» Իվան Միխայլովիչ Տրեգուբովին գրում է. «Շատ կուզեի միասնության մեջ լինել Ձեզ ու սիրելի Անտոնի Խրապովիցկու հետ, բայց չեմ կարող չխոստովանել. այն ամենը, որ կատարվում ու գրվում է ձեզ մոտ, և՛ շատ հիմար է, և՛ շատ վնասակար: Եվ, բացի այդ, իմ գործն անելով՝ դժբախտաբար չեմ կարող լիովին անտարբեր մնալ.- ինչպես կուզեի.- իմ այդ գործունեության հանդեպ, քանի որ այդ ամենը սպանում է ամենաարժեքավորը մարդկանց մեջ՝ նրանց բանական գիտակցությունը...»: Իսկ իր հետևորդ իշխան Գմիտրի Ալեքսանդրովիչ Խիլկովին ուղղված նամակում ավելի խիստ է արտահայտվում հայր Անտոնիի մասին. «Նա Մոսկվայում եկել էր ինձ մոտ: Եվ խղճալի էր: Նա ամենաահավոր մարդկային գայթակղություններից մեկի՝ վարժապետության ազդեցության տակ է... Ու դրա հետ մեկտեղ՝ բնույթով բարի մարդ, գուսպ ու քրիստոնյա լինել ցանկացող...»:

1896 թվականի ապրիլի վեցին Պոբեդոնոսցևն ընկերոջը՝ Սերգեյ Ալեքսանդրովիչ Ռաչինսկուն ուղղված նամակում գրում է. «Միևնորում մտադրություն կա նրան (*Տոլստոյին-Պ.Բ.*) Եկեղեցուց վտարված հայտարարել՝ խուսափելու համար ցանկացած կասկածից ու տարակուսանքից ժողովրդի մեջ, որը տեսնում ու լսում է, որ ամբողջ մտավորականությունը խոնարհվում է Տոլստոյին»:

Դա Պոբեդոնոսցևի խիստ բնութագրական «ձեռագիրն» է՝ խուսափողական, անդեմ: «Մտադրություն կա...»: Վ.Մ. Սկվորցովը հիշում էր, որ «իր պատրոնը դեմ էր հայտնի սինդոգական փաստաթղթին, որի հրապարակումից հետո էլ նույն կարծիքին մնաց: Միայն զիջեց կամ, ավելի ճիշտ, ընդունելի համարեց ու չհակառակվեց, ինչպես դա կարողանում էր անել այլ դեպքերում, իրագործելու այդ գաղափարը»: Պարզ ասած, Պոբեդոնոսցևը «վանում էր ձեռքերը»՝ որոշում կայացնելու պատասխանատվությունը դնելով Սինոդի վրա: Բայց հենց ինքն էր Սինոդի ավագ դատախազը:

Չմայած, Կոնստանտին Պետրովիչին կարելի է հասկանալ: Նա հոգևորական չէր, ինչպես Սինոդի մյուս անդամները, և չէր կարող Եկեղեցուն պարտադրել այդ որոշումը: Բացի այդ, նրա անձնական դիրքորոշումն այդ հարցում մշուշոտ էր: Եթե հավատանք Սկվորցովին, Պոբեդոնոսցևը ոչ միայն դեմ էր Տոլստոյի վտարմանը, այլև ընդհանրապես չէր ցանկանում եկեղեցական իշխանությունների որևէ պատասխան քայլ այդ «հերետիկոսի» նկատմամբ՝ ելնելով իր, հարկ է խոստովանել, բավական իմաստուն կարծիքից՝ «Մեկ էլ տեսար ծերուկն ուշքի եկավ, ախր խենթ է և ինքն էլ երբեք չգիտի՝ ուր կհասնի և ինչի վրա կանգ կառնի»:

Երբ 1901 թվականի փետրվարյան իրադարձություններից ոչ շատ առաջ Տոլստոյը լուրջ հիվանդացավ, Սկվորցովը Պոբեդոնոսցևին զեկուցեց մոսկովյան հոգևորականի նամակի մասին. հարցում էր արվում՝ կարելի<sup>9</sup> է տաճարում հոգեհանգիստ կատարել, եթե Տոլստոյը վախճանվի: Պոբեդոնոսցևը սառնասրտորեն ասաց. «Բայց եթե այդպես դատենք, նա ուրիշ էլ ո՞ւմ համար պիտի հոգեհանգիստ կատարի: Իբր քիչ է աղմուկը Տոլստոյի անվան շուրջ, ու եթե հիմա էլ, ինչպես նա է ցանկանում, արգելի հոգեհանգիստը, ինչպիսի՛ խառնաշփոթ կսկսվի, ինչքան գայթակղություն ու մեղք կլինի այդ խառնակշիռությունից: Իսկ իմ կարծիքով, այստեղ ավելի ճիշտ է հետևել հայտնի ասացվածքին՝ ձեռք մի տուր...»:

Ոչ միայն Պոբեդոնոսցևը, այլև ողջ Սինոդը բավական երկար խուսափում էր վերջնական որոշում կայացնելուց: Վերջապես, 1899 թվականի նոյեմբերին, Խարկովյան և Ախտիրյան արքեպիսկոպոս Ամբրոսին «Վերա ի Ցերկով» ամսագրում հրապարակեց Տոլստոյի «վտարման» նախագիծը: Հրապարակման առաջաբանում ասվում էր, որ «Հարություն» վեպի լույս տեսնելուց հետո Ամբրոսիին է այցելել Սրբազան Սինոդի առաջատար անդամ, Կիևյան միտրոպոլիտ Իոանիկոսը (Ռուդն): Նրա խորհուրդով որոշվել էր, որ Ամբրոսին Սինոդում հարց «կբարձրացնի» Տոլստոյի մասին: Սա-

կայն Սինոդում «Տոլստոյի մասին հարցի բարձրացման» կամ քննարկման որևէ հետք չկա:

1900 թվականի մարտին, Մեծ պահքի սկզբում, երբ Եկեղեցին նշում է Ուղղափառության Հաղթության Շաբաթը և բանադրանք հղում հերետիկոսներին<sup>32</sup>, միտրոպոլիտ Իոանիկոսը բոլոր եպիսկոպոսներին «շրջաբերական նամակ» ուղարկեց Տոլստոյի հնարավոր մահվան կապակցությամբ՝ կապված նրա ծանր հիվանդությունների մասին խոսակցությունների հետ: Նամակում ասվում էր՝ քանզի Տոլստոյի շատ երկրպագուներ միայն լսելով են ծանոթ նրա հայացքներին, հնարավոր է գրողի մահվան դեպքում խնդրեն հոգեհանգիստ կատարել նրա համար, այն դեպքում, երբ նա Եկեղեցու թշնամի է: «Ուղղափառ եկեղեցին այդպիսի մարդկանց հանդիսավորությամբ, իր հավատարիմ զավակների ներկայությամբ, Ուղղափառության շաբաթին օտար է հայտարարում եկեղեցական հաղորդակցությանը»: Ուստի Սրբազան Սինոդն արգելում էր Տոլստոյին պատարագով ու հիշատակումով հուղարկվորելը: Բայց դրա վերաբերյալ ոչ մի պաշտոնական որոշում չհրապարակվեց: Պատարագի արգելքը գաղտնի էր, ոչ թե «հավատարիմ զավակների ներկայությամբ»: Դա նոր խնդիրներ առաջացրեց: Եթե Տոլստոյը մահանա, իսկ նրա համար տաճարում աղոթել չի կարելի, ապա ինչի՞ հիման վրա: Շրջաբերական նամակի՞:

Տոլստոյը ողջ մնաց, փոխարենը 1900 թվականի հունիսին մահացավ ինքը՝ ծերունագարդ միտրոպոլիտ Իոանիկոսը: Սինոդի առաջատար ան-

32. Ուղղափառության Հաղթության տոնը նշվում է Մեծ Պահքի առաջին կիրակի օրը և կապված է 843 թվականի Կոստանդնուպոլսի վեհաժողովի հետ, որը հրավիրվել էր սրբապատկերի պաշտամունքը Բյուզանդիայում վերականգնելու համար: Արարողությունը նշանավորում է եկեղեցու հաղթանակը բոլոր աղանդների ու հերձվածների նկատմամբ: Այնտեղ հատուկ տեղ է գրավում բանադրման կարգը: Ռուսաստանում Ուղղափառության հաղթության կարգը մտցվել է XIV դարում և բաղկացած էր հունական սինոդիկից՝ հավելած նոր հերետիկոսների անունները, օրինակ, Կասախանի՝ նովգորոդյան Յուրևի վանքի հովվապետի: Հետո հավելվեցին Ստեֆան Բազիլի, Գրիշկա Օտրեպկի, ավագերեց Ավակումի և այլոց անունները: Բոլոր բանադրումները 20-ն էին, իսկ անունները՝ մինչև չորս հազար: XVIII դարի վերջին Ուղղափառության Հաղթության կարգը խմբագրեց ու լրացրեց Նովգորոդյան ու Սանկտպետերբուրգյան միտրոպոլիտ Գավրիիլը, ցանկից հանվեցին բազմաթիվ անուններ: Զգալի կրճատումից հետո, 1801 թվականին դրանում հերձվածներն արդեն թվարկվում էին առանց անունների հիշատակման, իսկ 1869 թվականին ցանկից հանվեցին պետական հանցագործների անունները:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

դամ դարձավ 54-ամյա սանկտպետերբուրգյան միտրոպոլիտ Անտոնիոսը (Վադկովսկին): Նա եկեղեցական շրջանակներում «լիբերալ» էր համարվում: Օրինակ, կարականապես դեմ էր Եկեղեցու և պետական իշխանության սերտաճմանը:

Դժվար թե Անտոնիոսը անկեղծորեն ցանկանար Տոլստոյի վտարումը: Բայց նա «մեղավոր նշանակվեց» այդ պատմության մեջ: 1901 թվականի փետրվարին նա գրում է Պոբեդոնոսցևին. «Սինոդում բոլորը եկել են այն կարծիքին, որ անհրաժեշտ է «Յերկովնիե վեդոմոստի»-ում հրապարակել սինոդական քննարկումները կոմս Տոլստոյի մասին: Դա պետք է հնարավորինս արագ անել: Լավ կլիներ Տոլստոյի մասին լավ պատրաստված խմբագրումը հրապարակել «Յերկովնիե վեդոմոստի» շաբաթօրյա համարում, մարտի 17-ին, Ուղղափառության շաբաթվա նախօրեին: Դա արդեն մեռյալի դատ չի լինի, ինչպես ասում են գաղտնի հանձնարարականի մասին (*Իռանդիկոսի նամակի-Պ.Բ.*), և ոչ էլ մեղադրանք, առանց արդարացումները լսելու, այլ «նախազգուշացում ողջին»:

Միտրոպոլիտ Անտոնիոսը Սինոդի առաջատար անդամի տեղում փաստացի «ժառանգություն» էր ստացել Տոլստոյի պատրաստի, բայց գաղտնի ընդունված վտարումը: Եվ այդ վտարումը պատրաստված էր հիվանդ ծերունու համար՝ նրա մահվանը սպասելով: Այդ տհաճ պահը հովվապետի սրտով չէր: Նա որոշեց գաղտնի ակնհայտ դարձնել՝ հասարակության և ամենից առաջ հոգևորականների առաջ բացել այն, ինչը դանդաղ ու թաքուն (նկատենք՝ առանց նրա ուղղակի մասնակցության) հասունանում էր Սինոդի ընդերքում:

Միտրոպոլիտ Անտոնիոսի քայլը հարգանք է հարուցում: Հենց նա իր վրա վերցրեց այդ ձգձգված հարցի լուծման պատասխանատվությունը ու հանրայնացրեց այն, ինչ կատարվում էր փակ դռների ետևում: Բայց ամենագլխավորը՝ նա շտապեց այդ հարցը հանել «մեռածի նկատմամբ հեռակա դատի» տհաճ համատեքստից: Եթե Տոլստոյն իսկապես մահանար, ապա նամակը կմնար միակ եկեղեցական փաստաթուղթը, որը դարերի համար կարձանագրեր Եկեղեցու վերջին խոսքը Տոլստոյի մասին. հոգեհանգիստ չանել «թշնամու» համար, չաղոթել նրա հոգու հանգստության համար. ահա թե ինչն է գլխավորը:

Ուշադրություն դարձնենք միտրոպոլիտ Անտոնիոսի խմբագրությամբ կազմված «Վճռի» վերջին դարձվածքին. «Ուստի, վկայելով նրա՝ Եկեղեցուց կտրվելը, միասին էլ աղոթենք, որ Տերն ապաշխարություն ու ճշմարտության գիտակցում պարգևի նրան: Աղոթում ենք քեզ, գթասիրտ Աստ-

ված, մի կամեցիր մահը մեղավորաց, լսիր ու գթա, և դարձրու նրան Քո սուրբ Եկեղեցուն: Ամեն»:

Պրեբերոնուցևի արձագանքն Անտոնիոսի նամակին անսպասելի էր: Նա իր ձեռքով գրեց Տոլստոյին Եկեղեցուց վտարելու շատ կոշտ նախագիծը, որը փաստորեն բանադրանք էր նշանակում: Այդ նախագիծը մանրակրկիտ խմբագրվեց Սինոդի անդամների կողմից՝ Անտոնիոսի գլխավորությամբ: Տեքստից հանեցին ոչ միայն «վտարում» եզրույթը, փոխարինելով «կտրվելով», այլև ողջ փաստաթղթին միանգամայն այլ հուզական բնույթ տվեցին: Եկեղեցին ոչ թե պարզապես փաստում էր, եկեղեցին ողբում էր ռուս մեծ գրողի կտրվելու համար: Եկեղեցին աղոթում էր նրա հոգու համար՝ հուսալով նրա գոջումն ու վերադարձը: Միտրոպոլիտ Անտոնիոսն արեց ամեն հնարավորը, որպեսզի հարցը տեղափոխի «ընդհատված հարդրակցման» վիճակի:

Այդ ակտում խիստ, միջնադարյան ոչինչ չկար: Ավելին, դա Ռուսական ուղղափառ եկեղեցու սկզբունքորեն մոր քայլ էր այդ մեծության հերետիկոսի հանդեպ, որն անկասկած վտանգավոր էր նրա համար: Չէ՞ որ նա հուզում էր առաջացնում ոչ միայն մտավորականության, այլև ժողովրդի, և նույնիսկ հոգևորականների մեջ: Բոլորը խոստովանում էին, որ «վճիռը» «խելացի» է գրված: Այնտեղ Տոլստոյի նկատմամբ «հաշվեհարդարի» ակնարկ անգամ չկար: Վերջապես, չկար որևէ սուտ տող նրա հայացքների վերաբերմամբ:

«Վճռի» մեղմությունը Տոլստոյին էլ զարմացրեց: Երբ իմացավ դրա մասին, առաջին հարցն էր՝ բանադրանք հայտարարված է: Տեղեկանալով, որ՝ ոչ, Տոլստոյը դժգոհ մնաց: Այսպես, մահվանից ոչ շատ առաջ, Կ.Ն. Լենոնտևի հետ զրուցելիս, խնդրում էր նրան. «Աստծու սիրուն, գրեք, որ ինձ աքսորեն: Դա իմ երազանքն է»:

Սինոդին ուղղված Տոլստոյի «Պատասխան»-ը առարկություն չէ պաշտոնական փաստաթղթին, որի հետ նա համաձայն է կամ համաձայն չէ, այլ խորապես անձնական խոսք մի հարցով, որը նրա համար գլխավորն էր՝ մահվան հարցով: Ի տարբերություն լայն հասարակության, որը ծիծաղում էր «Վճռի» վրա, ծափահարում Տոլստոյին ու ծաղկեփնջեր նետում նրա ռեպլիկայի դիմանկարի վրա XXIV Պրեբերովիժնիկների ցուցահանդեսում, 1901 մարտին, Տոլստոյը հրաշալի հասկանում էր՝ ինչ է դրված խաղասեղանին Եկեղեցու հետ իր վեճում: «Ես իմ հավատը,- գրում էր նա «Պատասխան»-ում,- նույնքան քիչ կարող եմ փոխել, որքան իմ մարմինը: Ես ինքս պետք է ապրեմ և ինքս էլ մեռնեմ (ու շատ շուտով), ուստի և չեմ կարող այլ կերպ

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

հավատալ, քան հավատում եմ՝ պատրաստվելով գնալ Աստծո մոտ, Ումից ելել եմ: Չեմ ասում, որ իմ հավատը միակն ու անկասկածելի է բոլոր ժամանակների համար, բայց ես չեմ տեսնում ուրիշ մեկը՝ ավելի պարզ, հստակ և արձագանքող իմ մտքի ու սրտի բոլոր պահանջներին. եթե իմանամ այդպիսին, անմիջապես կընդունեմ այն, որովհետև Աստծուն ոչինչ պետք չէ, ճշմարտությունից բացի: Իսկ վերադառնալ նրան, ինչից այսպիսի տառապանքներով հենց նոր դուրս եմ եկել, ես արդեն ոչ մի կերպ չեմ կարող, ինչպես չի կարող թևակալած թռչունը կրկին վերադառնալ այն ձվի մեջ, որից դուրս է եկել»:

1901 թվականի փետրվարի քսանչորսին Տոլստոյը Մոսկվայի առևտրային բանկի տնօրեն Ալեքսանդր Նիկիֆորովիչ Գումակի հետ անցնում էր Լուբյանկայի հրապարակով: Գումակը հիշում է. «Ինչ-որ մեկը Լ.Ն.-ին տեսնելով՝ ասաց. «Ահա նա, սատանան մարդու կերպարանքով»: Շատերը շուրջը նայեցին, ճանաչեցին Լ.Ն.-ին ու սկսվեցին գոչյունները. «Ուռա՛ Լ.Ն.-ին, ողջություն Լ.Ն.-ին: Ողջո՛ւյն մեծ ռուս մարդուն: Ուռա՛»:

Բայց դա Տոլստոյին չէր ուրախացնում: Ավելի քիչ դուր էր գալիս Սոֆյա Անդրեևնային: Նրա երեխաները հոր ազդեցությամբ հեռանում էին եկեղեցուց: Եվ նա հասկանում էր, որ «վճիռն» այդ առումով բացասական դեր կունենա, որովհետև երիտասարդությունը «Տոլստոյի կողմն» է լինելու: Հենց «Վճռի» հրապարակումից հետո հնչեց առաջին բողոքի ձայնը Տոլստոյների դատեր՝ տասնվեցամյա Մաշայի կողմից, որը հրաժարվեց մոր հետ գնալ Մեծ պահքի ավարտի ժամերգությանը: «Ես նույնիսկ լաց եղա, օրագրում գրում է Սոֆյա Անդրեևնան: Նա գնաց հոր մոտ՝ խորհուրդ հարցնելու, հայրն ասաց. «Բնականաբար՝ գնա, և գլխավորը՝ մի վշտացրու մորդ»:

Միևնույն ժամանակ Սոֆյա Անդրեևնային չէր կարող չմտահոգել, թե ինչպես կհուղարկավորվի ամուսինը: Հանրահայտ է, որ Տոլստոյը կտակել էր իրեն հուղարկավորել առանց եկեղեցական ծեսի՝ մարմինը թաղելով յասնոպոլյանյան անտառում, այն տեղում, որտեղ Նիկոլենկա եղբայրը մանուկ օրերին թաքցրել էր «կանաչ ձողիկը»: Սակայն բոլորը չգիտեն, որ այդ կարգադրությունը Տոլստոյն արել է միայն կյանքի ամենավերջում, արդեն սինոդական «Վճռից» հետո: 1901 թվականին ուժի մեջ էր մտնում 1895 թվականի կտակը, որ նա խնդրում էր իրեն թաղել «ամենաէժան գերեզմանատանը, եթե դա քաղաքում է, և ամենաէժան դագաղով, ինչպես թաղում են չքավորներին: Ծաղիկներ, պսակներ չդնել, ճառեր չասել: Եթե կարելի է, ապա առանց քահանայի ու հոգեհանգստի: Բայց եթե դա տհաճ



է հուղարկավորողներին, ապա թող թաղեն սովորականի պես՝ հուղարկավորման կարգով (ընդգծումն իմն է-Պ.Բ.)...»: Իսկ ահա 1908 թվականի տարբերակում Տոլստոյն արդեն պնդում է, որ «իմ մարմինը հողը դնելու ժամանակ ծեսեր չկատարվեն: Փայտե դագաղ, և ով ուզում է տանի կամ տեղափոխի Ձակազ (Յասնայա Պոլյանա կալվածքի անտառը) ձորակի դիմաց»:

1895 թվականի կտակում Տոլստոյն ընտանիքին իրեն ուղղափառ ծեսով թաղելու հնարավորություն էր թողնում, ինչպես թաղել էին նրա նախնիներին ու մահացած երեխաներին: Իռանիկոսի նամակը եպիսկոպոսներին գրկում էր այդ հնարավորությունից: Սինոդի «Վճիռն», իր ողջ մեղմությամբ հանդերձ, ամրագրում էր այդ վիճակը մինչև Տոլստոյի զոջումը: Բայց Սոֆյա Անդրեևնան լավ գիտեր ամուսնու համար բնույթը:

*Մահվան խաղափորձ*

1901 թվականի աշնանը Տոլստոյը առողջության վատթարանալու պատճառով ընտանիքով տեղափոխվում է Ղրիմ՝ Գասպրա, ու բնակություն հաստատում գրողի երկրպագուհի, կոմսուհի Սոֆյա Վլադիմիրովնա Պանինայի առանձնատանը: Բայց այդ տեղափոխությունը միայն վատացրեց գրողի ինքնագագաղությունը: Թոքերի բորբոքում սկսվեց, որը նրա տարիքում մահացու հիվանդություն էր:

1902 թվականի հունվարի քսանվեցին Տոլստոյի կինը գրառում է անում օրագրում. «Իմ Լյովոչկան մահանում է»:

Տոլստոյը ծանր էր «մահանում»: Ֆիզիկական տառապանքներից բացի, զգում էր այն, ինչը կոչվում է մահվան թախիծ: «Նա երբեք չի տրտնջում, բայց ահավոր թախծում ու տառապում է»,- գրում է Սոֆյա Անդրեևնան: Նա կորցրել էր ժամանակի զգացողությունը: Տենդի մեջ տեսնում էր վառվող Սևաստոպոլը:

Գասպրայում հավաքվեցին Տոլստոյի բոլոր որդիները՝ հորը հրաժեշտ տալու: Իլյա Լվովիչը հուշերում նկարագրել է այդ հուզիչ հրաժեշտը.

«Իրեն թույլ զգալով՝ նա բոլորին հրաժեշտ տալու ցանկություն հայտնեց ու հերթով իր մոտ էր կանչում յուրաքանչյուրիս ու տալիս իր օրհնությունը: Նա այնքան թույլ էր, որ խոսում էր կիսաշշուկով, ու մեզնից մեկին հրաժեշտ տալով՝ որոշ ժամանակ հանգստանում և ուժ էր հավաքում մինչև մյուսին կանչելը: Երբ հասավ իմ հերթը, մոտավորապես հետևյալն ասաց. «Դու դեռ երիտասարդ ես, կրքերով լեցուն, կրքերով փոթորկվող: Դրա համար էլ չես հասցրել խորհել կյանքի գլխավոր հարցերի մասին: Բայց այդ ժամա-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

նակը կգա, վստահ եմ: Այդ դեպքում իմացիր, որ ճշմարտությունը կգտնես ավետարանական ուսմունքում: Ես հանգիստ եմ մեռնում միայն այն պատճառով, որ գիտեցա այդ ուսմունքը ու հավատում եմ նրան: Ասոված տա՛ շուտ հասկանա»:

Ես համբուրեցի նրա ձեռքն ու անձայն դուրս եկա սենյակից: Մանդղամուտից գլխապատառ նետվեցի մեկուսի քարաշեն աշտարակն ու այնտեղ, մթության մեջ սկսեցի հեծկլտալ երեխայի պես... Երբ շուրջս նայեցի, տեսա, որ կողքիս մեկը նստել աստիճաններին ու նույնպես լալիս է»:

Բայց հենց Տոլստոյն ուշքի էր գալիս, սկսում էր շրջապատողներին գրառումներ թելադրել իր օրագրում:

«Ծերունական իմաստնության արժեքը բարձրանում է, ինչպես ադամանդներինը, կարատներով, ամենակարևորն ամենավերջում է, մահվանից առաջ: Պետք է գնահատել դրանք, պահպանել ու տալ մարդկանց»:

«Ասում եմ՝ ապագա կյանք: Եթե մարդ հավատում է Աստծուն ու Նրա օրենքին, ապա հավատում է նաև նրան, որ աշխարհում ապրում է Նրա օրենքով: Եվ եթե այդպես է, ապա մահն էլ լինում է նույն օրենքով և ընդամենը վերադարձ է Նրան»:

«Հոգևոր ոչինչ ձեռք չի բերվում հոգևոր ճանապարհով. ոչ կրոնասիրությունը, ոչ սերը, ոչինչ: Ողջ հոգևորն արարվում է նյութական կյանքով, տարածության ու ժամանակի մեջ: Հոգևորն արարվում է գործով»:

Տոլստոյը մահից չի վախենում: Մահը վերջնական ազատագրումն է եսասիրական «ես»-ից: «Կյանքի հուսահատությունից միակ փրկությունը քո միջից քո «ես»-ը հանելն է»: Եվ մարդը բնականաբար ձգտում է դրան սիրո միջոցով: Բայց մահկանացու արարածների հանդեպ սերը չի ազատագրում: «Միակ ազատագրումը սերն է Աստծո հանդեպ: Հնարավոր է արդյոք այն: Այո՛, եթե կյանքը միշտ որպես շնորհ ընդունես, գերազույց շնորհ, այդ դեպքում բնական է երախտագիտությունը ճշմարտության աղբյուրի հանդեպ, Նրա հանդեպ սերը, ուստի և սերն անտարբեր է բոլորի և ամենայնի հանդեպ, ինչպես արևի շողերը...»:

Տոլստոյը «մահանում է» որպես կրոնասեր մարդ: Բայց Եկեղեցու հետ հաշտվելու ոչ մի նշան չկա: «Խաղաղ մահերը եկեղեցական ծեսերի ազդեցության տակ նման են մորֆիի ազդեցությանը մահվանը»,- թելադրում է Տոլստոյը: Եվ այդ ժամանակ նրան մորֆիի ներարկում են անում, որ ազատեն մարմնական տառապանքներից: «Ուշքի եկեք հիպնոսից, ասում է նա հոգևորականության մասին: - Հարցրեք ձեզ՝ ինչ կմտածեիք, եթե ծնվեիք այլ հավատի մեջ: Աստծուց վախեցեք, Աստծուց, որը ձեզ բա-

նականություն է տվել ոչ թե մթագնելու համար, այլ՝ ճշմարտությունը պարզելու»:

Պետերբուրգյան միտրոպոլիտ Անտոնիոսը հեռագիր է ուղարկում Ղրիմ՝ Սոֆյա Անդրեևնային. «Կոմսուհի՛, մի՞թե գործի չեք դիմ Ձեր բոլոր ուժերը, Ձեր համակ սերը առ այն, որ Քրիստոսին դարձնեք Ձեր ջերմորեն սիրած, ողջ կյանքում փայփայված Ձեր ամուսնուն: Մի՞թե թույլ կտաք, որ նա մահանա առանց Եկեղեցու հետ հաշտվելու, առանց օրհնության Խորհրդավոր ընթրիքով Քրիստոսի մարմնի և արյան, որ խաղաղություն, ուրախություն ու կյանք է տալիս հավատացյալ հոգուն: Օ՛ր, կոմսուհի՛: Աղաչեք կոմսին, պաղատեք, որ անի դա: Նրա հաշտությունը Եկեղեցու հետ պայծառ տոն կլինի ռուսական ողջ երկրի համար, ողջ ուղղափառ ռուս ժողովրդի համար, ցնծություն երկնքում ու երկրի վրա»:

«Տոլստոյականների» շրջանում հեռագիրն ընդունվեց որպես Պոբեդոնոսցևի մտածած սադրանք. իբր նա է որիմյան հոգևորականին հրամայել Տոլստոյի մահվանից հետո մտնել տուն, իսկ դուրս գալիս կեղծ հայտարարել, որ Տոլստոյը զոջացել ու վերադարձել է Եկեղեցու գիրկը: Սոֆյա Անդրեևնան այլ կերպ որոշեց: Նա ամուսնուն հայտնեց միտրոպոլիտի հեռագրի մասին:

«Ես Լյովոչկային հայտնեցի այդ նամակի մասին, և նա ինձ ասաց գրեմ Անտոնիոսին, որ իր գործը հիմա Աստծո հետ է, գրիր նրան, ասաց, որ իմ վերջին աղոթքն այսպիսին է. «Քեզանից ելել, Քեզ եմ գալիս: Թող Քո կամքը լինի»: Իսկ երբ ասացի, որ եթե Աստված մահ ուղարկի, ասպա պետք է մահանալ՝ հաշտվելով ամենայն երկրայինի հետ, ու նա Եկեղեցու, ի պատասխան Լ.Ն.-ն ասաց. «Հաշտության մասին խոսք լինել չի կարող: Ես մահանում եմ առանց որևէ թշնամանքի ու չարության, իսկ ի՞նչ է Եկեղեցին: Ի՞նչ հաշտություն կարող է լինել այդպիսի անորոշ առարկայի հետ»: Հետո Լ.Ն.-ն ինձ մոտ ուղարկեց Տանյային (*դստերը-Պ.Բ.*)՝ փոխանցելու, որ ոչինչ չգրեմ Անտոնիոսին»:

Տոլստոյի հզոր օրգանիզմը և կնոջ ու մերձավորների անդադրում հոգատարությունը հաղթեցին մահին: Բայց Ղրիմը բաց չէր թողնում Տոլստոյին: 1902 թվականի մայիսի 1-ին նա վարակվեց նաև որովայնային տիֆով: Հենց նոր տարած թոքերի բորբոքումից հետո 73-ամյա ծերունու համար տիֆը հաղթահարելը, բժշկության այն ժամանակվա չափազանց ցածր կարողությունների պայմաններում, աներևակայելի էր թվում: Տոլստոյը լավացավ մեկ ամսվա ընթացքում: Դա կենսաբանական հրաշք էր, բայց ոչ այնքան բժշկության, որքան Սոֆյա Անդրեևնայի և ավագ դստեր՝ Տատյանայի

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

ծառայությունը, որոնք հերթով շուրջօրյա հերթապահում էին հիվանդի անկողնու մոտ:

1902 թվականի ձմեռն ու գարունը երկրորդ «որիմյան քննություն» դարձան Տոլստոյի համար 1854-1855 թվականներին Սևաստոպոլի պաշտպանությանը մասնակցելուց հետո: Երկու անգամն էլ նա հայտնվեց մի վիճակում, երբ կյանքի ու մահվան միջև տարածությունը մեկ քայլ էր, մեկ ակնթարթ: Բայց երկրորդ քննությունն ավելի ծանր էր: Մի բան է խիզախ պահվածքը պատերազմում, այն էլ երիտասարդ տարիներին, ու լրիվ այլ՝ իրար հետևից երկու մահացու հիվանդությունները ծեր տարիքում: Երկրորդ անգամ առողջանալուց հետո Սոֆյա Անդրեևնան ցավով գրում է օրագրում. «Խեղճը, նայել չեմ կարողանում. համաշխարհային հոշակ ունեցող մարդ, իսկ սովորական կյանքում՝ միևար, խղճալի ծերուկ»:

Բայց այդ «ծերուկը» բռնեց իր հայացքների քննությունը: Գերեզմանի եզրին ամենակզբունքային աթեիստներն անգամ դիմում են Եկեղեցուն, ձեռքը նրան զցում, ինչպես փրփուրներին: Տոլստոյն այդպես չվարվեց: Չհաշտվեց: Բայց դա խռովություն չէր, այլ հաստատումը նրա, որ գրել էր Սինոդի «Պատասխանում». «Իսկ վերադառնալ նրան, ինչից այսպիսի տառապանքներով հենց նոր դուրս եմ եկել, արդեն ոչ մի կերպ չեմ կարող»:

### *Կտակ*

Տոլստոյը վեց կտակ է գրել՝ 1895, 1904, 1908, 1909 (երկուսը) և 1910 թվականներին: Առաջին ոչ պաշտոնական կտակը նա թողել է օրագրային գրառման տեսքով:

1895 թվականի փետրվարի քսանմեկին մահացավ Ն.Ս. Լեսկովը: «Իմ հետմահու խնդրանքը» գրության մեջ նա խնդրում էր իրեն թաղել «ամենացածրագույն, վերջին կարգով»: Տոլստոյը գիտեր այդ գրությանի մասին և դրա շուրջ մտորելով՝ մարտի 27-ին որոշեց անել իր նախամահու կարգադրությունը:

«Իմ կտակը մոտավորապես այդպիսին կլիներ: Քանի դեռ ուրիշը չեմ գրել, այն միանգամայն այդպիսին է»:

Նա խնդրում է իրեն թաղել «ամենաէժան գերեզմանոցում և ամենաէժան դագաղով, ինչպես թաղում են չքավորներին: Ծաղիկներ, պսակներ չդնել, ճառեր չասել»: Նա խնդրում է մահախոսականներ չգրել իր մասին: Իր թղթերը կտակում է կնոջը, Չերտկովին ու Ստրախովին (սկզբում նաև դուստրերին՝ Տանյային ու Մաշային, բայց հետո ջնջում է՝ հավելելով. «Պետք չէ, որ աղջիկներս դրանով զբաղվեն»): Որդիներին ոչ մի հանձնա-

բարություն չի տալիս. նրանք «ամբողջությամբ չգիտեն իմ մտքերը, չեն հետևել դրանց ընթացքին և կարող են իրենց առանձնահատուկ հայացքներն ունենալ, որոնց հետևանքով կարող են պահպանել այն, ինչ պետք չէ պահպանել, և դեն նետել, ինչը պետք է պահպանել»:

Ամուրի կյանքի օրագրերը սկզբում խնդրում է ոչնչացնել. «...ոչ այն պատճառով, որ ուզում էի մարդկանցից թաքցնել իմ տգեղ կյանքը... այլ որովհետև այդ օրագրերը, որտեղ գրառել էի միայն այն, ինչն ինձ տանջում էր մեղքի գիտակցությամբ, միակողմանի տպավորություն են թողնում»:  
Բայց հետո խորհուրդ է տալիս պահպանել. «Դրանցից համենայնդեպս երևում է, որ չնայած իմ ջանքերիս ողջ գռեհկությանն ու անպետքությանը, ես չեմ լքվել Աստծուց ու գոնե ծերության շեմին սկսել եմ թեկուզ մի քիչ հասկանալ ու սիրել Նրան»:

Տոլստոյն իր ժառանգներին խնդրում է հրաժարվել այն ստեղծագործությունների հանդեպ իրավունքներից, որոնք նամակի ու թերթերի միջոցով թողել է կնոջ տնօրինությանը, այսինքն մինչև 1881 թվականը գրածները: Դա հենց խնդրանք է, ոչ թե կարգադրություն: «Կանեք՝ լավ: Դա լավ կլինի նաև ձեզ համար, չեք անի՝ ձեր գործն է: Նշանակում է՝ չեք կարողացել»:

Դրա հետ մեկտեղ, Տոլստոյն անկեղծորեն համոզված է, որ իր «կտակն» ինչ-որ իրավաբանական իմաստ ունի: Օրինակ, համոզված է, որ թերթերին ուղարկած նամակը՝ հեղինակային իրավունքներից հրաժարվելու մասին, ուժը կպահպանի նաև իր մահից հետո, ուրեմն մահից հետո էլ հրատարակիչները կկարողանան անհատույց հրապարակել նրա տեքստերը:

Համարյա 70 տարի ապրելով աշխարհի երեսին՝ նա իրավաբանական հարցերից փոքրիկ երեխայից ավելի չէր գլուխ հանում: Նրա մտքով անգամ չէր անցնում, որ հեղինակային իրավունքներից հրաժարվելու մասին նամակն օրինական ուժ ունի այնքան ժամանակ, քանի դեռ ողջ է հեղինակը, որն ինքն է հրաժարվում հոնորարներ ստանալ հրատարակիչներից, բայց նրա մահից հետո այդ իրավունքները կանցնեն նրա օրինական ժառանգներին, նրանց, ում կնշի ոչ թե օրագրում, այլ պաշտոնական կտակում՝ գրված վկաների ներկայությամբ կամ հաստատված նոտարի կողմից: Իսկ եթե այդպիսի կտակ չլինի, ապա իրավունքներն ինքնին կանցնեն նրա այրուն ու երեխաներին:

Դա ոչ միայն ինքը չէր հասկանում, այլև՝ ընտանիքի անդամները, և դա կտակի հետ կապված սարսափելի քաշքշուկ առաջացրեց, որը դետեկտիվ պատմություն է հիշեցնում:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

1895 թվականի կտակի պատճենը մորից թաքուն արել էր դուստրը՝ Մարիա Լվովնան, 1901 թվականին: Սոֆյա Անդրեևնան գիտեր, բայց մոռացել էր այդ գրության մասին: Նա 1895 թվականին օրագիրը ամուսնու այլ ձեռագրերի հետ պահպանության հանձնեց Ռուսյանցկյան թանգարանին: Մաշան նրան ցույց չտվեց իր պատճենած ու Տոլստոյի ստորագրած այդ տեքստը: Վախենում էր մոր արձագանքից:

Մակայն Ղրիմից հետո կտակը թաքցնելը դժվար էր: Ղրիմյան պատմությունը ցույց տվեց, որ Տոլստոյը ցանկացած պահի կարող է մահանալ: 1902 թվականի հոկտեմբերին կտակի մասին հայտնի դարձավ Սոֆյա Անդրեևնային, և նա զայրացած էր:

«Ինձ համար չափազանց տհաճ էր, երբ պատահմամբ իմացա դրա մասին,- գրում է նա օրագրում:- Լև Նիկոլաևիչի ստեղծագործություններն ընդհանրական սեփականության հանձնելը վատ և անիմաստ եմ համարում: Սիրում եմ իմ ընտանիքն ու առավել բարեկեցություն եմ ցանկանում նրան, իսկ ստեղծագործությունները հանրային սեփականության հանձնելով՝ մենք կպարզևատրենք Մարքսի, Յեյտլինի և այլոց հրատարակչությունների կարգի հարուստ հրատարակչություններին: Ես Լ.Ն.-ին ասացի, որ եթե ինձնից շուտ մահանա, ես չեմ կատարի նրա ցանկությունը և չեմ հրաժարվի նրա ստեղծագործությունների հանդեպ իրավունքից, և եթե լավ ու արդար համարեի, մի՞թե նրան չէի՞ պարզևի իրավունքներից հրաժարվելու այդ ուրախությունը, իսկ մահվանից հետո դա արդեն նշանակություն չունի նրա համար»:

Դա նրա ճակատագրական սխալն էր: Կինը փաստորեն հայտարարում էր, որ չի կատարի Տոլստոյի նախամահու կարգադրությունը, որն ամուսինը ամենակարևորն էր համարում: Չի հրաժարվի նույնիսկ այն ստեղծագործությունների իրավունքից, որոնք ամուսինը գրել է հոգևոր հեղաշրջումից հետո:

Սոֆյա Անդրեևնան ամուսնուց պահանջեց, որ Մաշայից վերցնի կտակն ու տա իրեն: Եվ Տոլստոյը չկարողացավ մերժել: Մաշան զայրացավ մոր արարքից:

Ամուսնու կտակը չընդունելու պատճառները մի քանիսն էին: Նախ, Սոֆյա Անդրեևնան նեղացած էր նրանից ու աղջկանից: Երկրորդ, այդ ժամանակ նա մտահոգացել էր Տոլստոյի նոր երկերի ժողովածուի հրատարակությունն ու 50 հազար ռուբլի էր ներդրել այդ գործում: Եթե հանկարծ Տոլստոյը մահանար, ու թերթերում հայտնվեր բոլորի օգտին նրա կտակը, Սոֆյա Անդրեևնան ֆինանսական կորուստ կկրեր: Այդպես էր մտածում նա՝

նույնպես չհասկանալով հարցի իրավաբանական կողմը:

1902 թվականի հուլիսին նրա մոտ եկավ «Պրոպեդեգիստներ» հրատարակչության սեփականատեր Նաբան Սերգեևիչ Ցեյտլինը և հայտնեց, որ պատրաստ է մեկ միլիոն ռուբլով «ընդմիջտ տիրապետման» պայմանով գնել ամուսնու վաղ շրջանի ստեղծագործությունների հանդեպ Սոֆյա Անդրեևնայի իրավունքները: Տոլստոյի կինը մերժեց նրան: Ու հանկարծ պարզվեց, որ երբ նա հրաժարվում էր այդ հսկայական գումարից, քիչուքում դուստրը խարդավանքներ էր նյութում հոր կտակի շուրջ՝ պատրաստվելով մորը գրկել Տոլստոյի ստեղծագործությունների վերջին եկամուտներից:

Մական Տոլստոյի գրական ժառանգության հետ կապված պատմության մեջ մի կարևոր գործող անձ էլ կար. Չերտկովը: 1895 թվականի կտակով նրա իրավունքները հավասարեցվում էին Սոֆյա Անդրեևնայի ու Ստրախովի իրավունքներին: 1896 թվականի հունվարին Ստրախովը մահացավ: Տոլստոյի կտակարարներ մնացին կինն ու հոգևոր բարեկամը, որոնք այդ ժամանակ արդեն պատերազմի մեջ էին:

Մեկ տարի անց Չերտկովին արտաքսեցին Անգլիա: Տասը տարուց ավելի նա գրկված էր Տոլստոյի հետ անմիջական շփման հնարավորությունից. միայն նամակներով: Ընդամիս, Սոֆյա Անդրեևնան միշտ ամուսնու կողքին էր: Բայց հենց դա էլ զարմանալիորեն ուժեղացնում էր Չերտկովի դիրքերը որպես կտակարարի: Նախ, ըստ Տոլստոյի՝ նա տուժել էր իր՝ Տոլստոյի հայացքների պատճառով: Երկրորդ, անկեղծորեն պատրաստ էր անվերապահորեն կատարել ուսուցչի կամքը ամեն ինչում, որ վերաբերում էր գրական իրավունքներից հրաժարվելուն: Խնդիրն այլ էր. կի՞նը, թե՞ հոգևոր բարեկամն է օրինական հիմքերով «անհատույց» կամ փողով հրատարակիչներին հանձնելու Տոլստոյի կենդանության օրոք հրատարակված ստեղծագործությունները, օրագրերը, նամակները:

1904 թվականի մայիսին Չերտկովն Անգլիայում փորձում է օրինականացնել «հոգևոր կտակարարի» (իր արտահայտությունն է) իր դիրքը: Հասկանալով, որ իրավաբանական առումով դա ընտանիքից թաքուն անել անհնար է, նա իր քարտուղարի՝ անգլիացի Բրիգսի հետ Յասնայա Պոլյանա է ուղարկում «հարցարան»: Չերտկովի հարցերը մեքենագիր էին, պատասխանները՝ գրված Տոլստոյի ձեռքով:

«1. Ցանկանո՞ւմ եք, արդյոք, որ «Ռուսակին վերոմոստիում» 1891 թվականի սեպտեմբերի 16-ին հրատարակված Ձեր հայտարարությունը մնա ուժի մեջ և՛ ներկայում, և՛ Ձեր մահից հետո:

*Յանկանում եմ, որ իմ բոլոր ստեղծագործությունները, 1881 թվականից սկսած, ինչպես և իմ մահից հետո մնացածները, ոչ մեկի մասնավոր սեփականությունը չլինեն, այլ վերահրատարակվեն ու հրատարակվեն բոլոր ցանկացողների կողմից:*

2. Ո՞ւմ կցանկանայիք վերապահել Ձեր հետմահու գրվածքների խմբագրման հետ կապված հարցերի վերջնական լուծումը, որոնցով այս կամ այն պատճառով լիակատար համաձայնություն հնարավոր չի լինի:

*Կարծում եմ, որ կինս և Վ. Գ. Չերտկովը, որին հանձնարարել եմ ինձնից հետո մնացած թղթերի մշակումը, համաձայնության կգան՝ ինչը թողնել, ինչը դեն նետել, ինչը հրատարակել և ինչպես:*

3. Յանկանում եք, արդյոք, որ Ձեր մահից հետո էլ, եթե Չեզնից երկար ապրեմ, ուժի մեջ մնա Ձեր կողմից ինձ տրված գրավոր լիազորությունը՝ որպես Ձեր միակ արտասահմանյան ներակայացուցչի:

*Յանկանում եմ, որ իմ մահից հետո էլ միայն Չերտկովը տնօրինի իմ ստեղծագործությունների հրատարակությունն ու քարգմանությունը արտասահմանում:*

4. Թույլատրո՞ւմ եք ինձ Ձեր մահից հետո, ինչպես իմ կենդանության օրոք հրատարակելու, այնպես էլ իմ մահվանից հետո վստահված անձին փոխանցելու պայմանով, անձնական հայեցողությամբ լիովին տնօրինել այն բոլոր ձեռագրերն ու թղթերը, որ ստացել ու կստանամ Չեզնից մինչև Ձեր մահը:

*Վ. Գ. Չերտկովի տնօրինությանն եմ հանձնում նրա մոտ եղած իմ բոլոր ձեռագրերն ու թղթերը: Իսկ նրա մահվան դեպքում, կարծում եմ, ավելի լավ է այդ թղթերն ու ձեռագրերը փոխանցել կնոջս կամ որևէ ռուսական հաստատության՝ հանրային գրադարան, ակադեմիա:*

5. Յանկանում եք, արդյոք, որ ինձ հնարավորություն տրվի բնագրով կարդալ առանց բացառության Ձեր բոլոր ձեռագրերը, որ Ձեր մահից հետո կհայտնվեն Սոֆյա Անդրեևնայի կամ Ձեր ընտանիքի անդամների մոտ:

*Շատ կուզեի, որ Վ. Գ. Չերտկովը նայեր ինձնից հետո մնացած բոլոր ձեռագրերն ու դրանցից դուրս գրեր այն ամենը, որ անհրաժեշտ կհամարեի հրատարակման համար»:*

Այդ նամակը Տոլստոյի երկրորդ ոչ պաշտոնական կտակն էր: Այն նույնպես իրավական արժեք չուներ, որովհետև Տոլստոյը շարունակում էր պնդել, որ 1881 թվականից հետո գրված ստեղծագործությունների իրավունքները պատկանեն բոլորին: Բայցևայնպես, այն հետաքրքրական է որպես Տոլստոյի նոր կամարտահայտություն: Նա Չերտկովի իրավունքնե-



ընդ տարածում է բոլոր ձեռագրերի վրա: Այդ թվում և կնոջ մոտ եղածների: Չերտկովի մոտ, արտասահմանում գտնվող իր ձեռագիր ժառանգությունը նա հանձնում էր միայն Չերտկովին: Սոֆյա Անդրեևնան այդ ձեռագրերը կարող էր ստանալ միայն Չերտկովի մահից հետո, բայց Չերտկովը ցանկության դեպքում դրանք կարող էր կտակել ցանկացած հանրային գրադարանի: Իսկ ձեռագրերը երեխաներին հանձնելու մասին խոսք անգամ չկար...

Ըստ էության ձեռագրերի միակ ժառանգորդ ու տնօրինող այդ կտակում հռչակվում էր Չերտկովը: Կնոջը օգնականի և ամուսնու բոլոր ձեռագրերը նրան փոխանցելու միջնորդի համեստ դեր էր վերապահվում: Բայց նրան էին մնում մինչև 1881 թվականը գրված ստեղծագործությունների գրական իրավունքները:

Տոլստոյն այդ նամակը գրել էր Չերտկովի ճնշման տակ: Նա ցանկանում էր սիրաշահել հոգևոր բարեկամին, բայց դա ճնշող էր: Այնքան ճնշող, որ երկրորդ նամակում, որը Չերտկովը թաքցրել ու որդու մոտ պահում էր «գաղտնի» մակագրությամբ (այն տպագրվեց միայն 1961 թվականին), Տոլստոյը գրում էր. «Չեմ թաքցնի Ձեզնից, սիրելի բարեկամ Վլադիմիր Գրիգորևիչ, որ Բրիգաի հետ ուղարկած Ձեր նամակը տհաճ էր ինձ համար... Տհաճ էր ոչ այն, որ խոսք է գնում իմ մահվան մասին, իմ չնչին թղթերի, որոնց կեղծ կարևորություն է վերագրվում, այլ տհաճ է, որ այստեղ կա ինչ-որ պարտավորություն, բռնություն, անվստահություն, չարություն մարդկանց հանդեպ: Եվ ես, չգիտեմ ինչպես, զգում եմ ինձ անբարյացակամության մեջ ներքաշելը, ինչ-որ բան բաժանելու մեջ, որը կարող է չարություն ծնել: Ես գրել եմ Ձեր հարցերի պատասխանները և ուղարկում եմ: Բայց եթե գրեք ինձ, որ դրանք պատռել եք, վառել, ինձ շատ հաճելի կլինի»:

Չերտկովն իր համար վտանգավոր այդ նամակը թաքցրեց... Ուսուցչի ձեռագիրը ոչնչացնելը նրա ուժից վեր էր:

Տոլստոյի դիրքորոշումը հակասական զգացումներ է հարուցում: Նա իր ձեռագրերի ճակատագրի հարցը թողնում է ուրիշների խղճին, փոխանակ ինքը արմատապես լուծի, ինչպես որ լուծել էր իր սեփականության հարցը՝ հավաքելով ընտանիքն ու հայտարարելով իր վճիռը: Նա գործում է չհակառակվելու սկզբունքով և դրանով փաստորեն տեղի է տալիս Չերտկովին, չնայած դա իր համար չափազանց ցավալի է:

Չէ՞ որ նա բոլոր հնարավորություններն ուներ մեկընդմիջտ լուծելու այդ հարցը՝ կնոջը թողնելով հին, իսկ Չերտկովին՝ նոր ստեղծագործություններ:

րի իրավունքը: Հների ստեղծմանն օգնել էր կինը, իսկ նորերի մասին աշխարհը չէր իմանա առանց Չերտկովի: Իհարկե, այդպիսի «երկիշխանությունը» տարօրինակ կլիներ: Բայց հնարավոր է, որ հենց դա բշտանական կողմերին ստիպեր հաշտվել: Երկերի երկու տարբեր ժողովածուներ չէին հրատարակելու, չէ՞:

Տոլստոյի երրորդ կտակը, կրկին որպես օրագրային գրառում, 1908 թվականի օգոստոսի 11-ին թելադրվեց քարտուղար Ն.Ն. Գուսևին: Իր ութսունամյա հոբելյանից երկու շաբաթ առաջ Տոլստոյը ծանր հիվանդացավ: Ուտքերը թուլացել էին, և նա գամվել էր հաշմասայլակին: Կարծելով, որ մեռնում է, նա որոշեց մի անգամ էլ խմբագրել իր նախամահու կտակը:

«Նախևառաջ, լավ կլիներ, եթե ժառանգներս իմ գրվածքները հանձնեին ընդհանուր օգտագործման, իսկ եթե ոչ բոլորը, ապա անպայման ողջ ժողովրդականը, ինչպես «Այբբենարանը», «Ընթերցանության համար գրքերը»: Երկրորդ, չնայած դա ամենադատարկ բանն է՝ մարմինս թաղելիս որևէ ծիսակատարություն չանեն: Փայտե դագաղ, և ով ցանկանում է, թող տանի կամ փոխադրի Չակագ, ձորակի դիմաց, կանաչ ձողիկի տեղը: Համենայնդեպս առիթ կլինի ընտրելու այս կամ այն տեղը»:

Դա Տոլստոյի առաջին կտակն էր, որը կարող էր ինչ-որ ուժ ունենալ նրա մահից հետո: Խոսքը այն տեղի մասին է, որտեղ կտակում էր իրեն թաղել ու թաղվեց: «Կանաչ ձողիկի»՝ մարդկային երջանկության ու եղբայրության խորհրդանիշի պատմությունը, որը Ստարի զակագի անտառում թաղել էին Լյովոչկա ու Նիկոլենկա եղբայրները, հայտնի է գրողի ինքնակենսագրական եռագրության ընթերցողներին:

Մնացած առումներով երրորդ կտակը կրկնում էր առաջին երկուսի սխալները: Նա խնդրում էր, ոչ թե կարգադրում: Եվ ուզում էր իր ստեղծագործությունների իրավունքները հանձնել բոլորին, ինչը իրավական առումով անհնարին էր:

Տոլստոյն ու «իրավաբանությունը» անհամատեղելի դուրս եկան, ինչպես հանճարն ու չարագործությունը Պուշկինի «Մոցարտ և Սալյերի» դրամայում: Բայցևայնպես, Տոլստոյի առաջին երկու կտակներում ինչ-որ դիրքորոշում կար: Եվ նա պետք է մինչև վերջ պիտի պահպաներ այդ դիրքորոշումը՝ ժառանգներին իրավունք տալով արդեն խղճի մտքը տնօրինելու իր գրական ժառանգությունը: Նա ցանկանում էր էր այդպես վարվել: Բայց դա ոտնահարում էր իրավունքներն այն մեն-միակ մարդու, որին սիրում էր Տոլստոյը և ասում էր Սոֆյա Անդրեևնան՝ Չերտկովի: Այդ սերն անտեսելու նա չէր կարող ոչ հոգով, ոչ խղճով:

Չերտկովն էլ չէր կարող կամավոր հրաժարվել Տոլստոյի ժառանգության հանդեպ իր իրավունքներից: Պետք է մտնել նրա դրության մեջ: Նա Տոլստոյին է նվիրել իր ողջ կյանքը: Տոլստոյի ժառանգությունից հրաժարվելը համագոր է կյանքից հրաժարվելուն: Սոֆյա Անդրեևնայի հետ անհնար էր պայմանավորվել: Նրանք չափազանց տարբեր մարդիկ էին, ու չափազանց շատ վիրավորվածություն էր կուտակվել նրա մեջ: Վերջապես, որդիների հանդեպ անսահման սերը վախեցնում էր, որ Տոլստոյի գրական ժառանգությունն այնպես չեն տնօրինի, ինչպես կցանկանար Տոլստոյը: Որդիները վատ կալվածատերեր դուրս եկան, շարունակ փողի կարիք էին ունենում ու խնդրում մորից: Ընդունենք Չերտկովի տեսակետը: Հանուն ո՞ւմ պիտի նա հրաժարվեր Տոլստոյի ժառանգությունից: Հանուն խենթ, ամեն ինչում անտրամաբանական գործող կնոջ: Հանուն փող վատնող որդիների՞: Ի՞նչ կպատահի ձեռագրերին, որոնք Չերտկովն աչքի լույսի պես պահպանում էր Անգլիայում՝ դրանց նկատմամբ որևէ իրավաբանական իրավունք չունենալով:

Գրական իրավունքներից հրաժարվելու փորձով Տոլստոյն աննախահեղեպ իրավաբանական վիճակ էր ստեղծել. մինչև 1909 թվականը այս պատմության մասնակիցներից ոչ մեկը, չբացառելով նաև փորձառու Չերտկովին, չէր հասկանում հարցի իրական իրավաբանական կողմը: Բոլորը կուրորեն էին գործում:

1909 թվականի հուլիսին վրա հասավ ճշմարտության պահը: Այդ ժամանակ Սոֆյա Անդրեևնան որոշեց դատավեճի մեջ մտնել «Պոստեդնիկի» և այլ հրատարակչությունների հետ, որոնք վերահրատարակել էին Տոլստոյի յոթանասունական թվականների որոշ ստեղծագործություններ (օրինակ, «Կովկասի գերին»): Նա դրանք իր սեփականությունն էր համարում և դատական բողոք գրելու խնդրանքով դիմեց փաստաբանին: Փաստաբանը հետաքրքրվեց՝ ի՞նչ փաստաթղթի հիման վրա է հարուցվում դատական հետապնդումը: Լիազորագրի հիման վրա՝ պատասխանեց Սոֆյա Անդրեևնան: Լիազորագրի հիման վրա չի կարելի՝ պատասխանեց փաստաբանը: Հրատարակչության իրավունքների փոխանցումով փաստաթուղթ է պետք ամուսնուց: Բայց Տոլստոյը ոչ միայն հրաժարվեց այդպիսի փաստաթուղթ տալ կնոջը, այլև ահավոր բարկացած էր ժողովրդական հրատարակչությունների հանդեպ նրա վերաբերմունքից: Եվ նա որոշեց ընդհանրապես իրավունքներից զրկել կնոջը...

Իրավաբան և Տոլստոյի ազգական Իվան Վասիլևիչ Դենիսենկոն հիշում էր.

«1909 թվականի հուլիսին, երբ ես Յասնայա Պոլյանայում էի, Ս.Ա.-ն ինձ կանչեց իր մնչասենյակն ու ցույց տալով գործերի կառավարման ընդհանուր լիազորագիրը, որ վաղուց նրան էր տվել Լև Նիկոլակիչը, հարցրեց՝ կարո՞ղ է ինքը այդ լիազորագրով երրորդ անձի վաճառել Լև Նիկոլակիչի ստեղծագործությունները հրատարակելու իրավունքը, և ամենազլխավորը՝ հետապնդում հարուցել Սերգեենկոյի և զինվորական գիմնազիայի ինչ-որ ուսուչի նկատմամբ Լև Նիկոլակիչի ստեղծագործություններով ինչ-որ ժողովածուներ ու քրեստոմատիաներ կազմելու համար, նկատի ունենալով, որ այդ ժողովածուները կարող են նյութական մեծ վնաս պատճառել իրեն՝ Ս.Ա.-ին...

Կարծես թե դրա հաջորդ օրը, ցերեկը, ես կնոջս ու երեխաներիս հետ հատապտուղ էի հավաքում զբոսայգում: Կինս խնդրեց չեմ հիշում ինչ բերել կողաշենքից: Ես քայլեցի ծառուղով և շատ անապաստի տեսա Լև Նիկոլակիչին: Նրա տեսքն ապշեցրեց ինձ: Կորացած էր, դեմքը՝ տանջահար, աչքերը՝ մարած, թույլ էր թվում, ինչպիսին երբեք չէի տեսել նրան: Երբ հավասարվեցիմք, արագ բռնեց ձեռքս և արցունքն աչքերին ասաց.

«Աղավնյա կս, Իվան Վասիլևիչ, ի՞նչ է անում նա ինձ հետ: Ինձնից լիազորագիր է պահանջում հետապնդում հարուցելու համար: Չէ՞ որ ես այդ անել չեմ կարող... Դա իմ համոզմունքներին դեմ կլիներ»:

Հետո ինձ հետ մի քանի քայլ անցնելով՝ ասաց. «Մի մեծ խնդրանք ունեմ, միայն թող մեր մեջ մնա, չասեք ոչ մեկին, նույնիսկ Մաշային: Խնդրում եմ, մի թուղք կազմեք ինձ համար, որով ի լուր բոլորի կկարողանայի հայտարարել, որ բոլոր ստեղծագործություններս, երբ էլ գրված լինեն, հանձնում եմ հանրային օգտագործման»:

Հուլիսի տասներկուսին Տոլստոյն օրագրում գրում է. «Երեկ երեկոյան ծանր էր հրատարակության ու դատական հետապնդման մասին Սոֆյա Անդրեևնայի խոսակցություններից: Եթե նա իմանար ու հասկանար, թե ինչպես է թունավորում է իմ վերջին ժամերը, օրերը, ամիսները կյանքիս»:

Ընդամին, դեռ 1908 թվականի հունիսին Անգլիայից ընտանիքով վերադառնում է Չերտկովը ու տեղավորվում Յասնայա Պոլյանային մերձ ամառանոցում: Սակայն թույլատրելով վերադառնալ Ռուսաստան՝ կառավարությունն անմիջապես էլ սկսեց հետապնդել նրան ու պատժեց շատ տարօրինակ կերպով. 1909 թվականին նրան աքսորեցին Տուլայի նահանգի սահմաններից դուրս՝ հեռու Տոլստոյից: Նա հաստատվեց Մոսկովյան նահանգի Կոյոկչինո կալվածքում: Հենց այդտեղ, 1909 թվականի սեպտեմբերի 18-ին կազմվեց Տոլստոյի առաջին պաշտոնական կտակը.

«Հայտարարում եմ, որ ցանկանում եմ, որպեսզի իմ բոլոր ստեղծագործությունները, գեղարվեստական գործերն ու ամեն տեսակի գրվածքները, ինչպես արդեն որևէ տեղ տպագրված, այնպես էլ դեռ չհրատարակված, գրված կամ առաջին անգամ տպագրված 1881 թվականի հունվարի 1-ից, ինչպես և այն ամենը, որ գրել եմ մինչ այդ ժամկետը, բայց դեռ չեմ տպագրել, իմ մահվանից հետո չլինեն որևէ մեկի սեփականությունը, այլ անհատույց հրատարակվեն ու վերահրատարակվեն բոլորի կողմից, ով կցանկանա: Ցանկանում եմ, որ բոլոր ձեռագրերն ու թղթերը, որ կմնան ինձնից հետո, փոխանցվեն Վլադիմիր Գրիգորևիչ Չերտկովին, որպեսզի նա իմ մահից հետո էլ տնօրինի դրանք, ինչպես հիմա է տնօրինում, որպեսզի իմ բոլոր գրվածքները անհատույց հասանելի լինեն բոլոր հրատարակել ցանկացողներին: Վլադիմիր Գրիգորևիչ Չերտկովին խնդրում եմ ընտրել այնպիսի անձի կամ անձանց, որին կփոխանցի այդ լիազորությունները իր մահվան դեպքում:

Լև Նիկոլևիչ Տոլստոյ

Կրյուկչինո, 18 սեպտեմբերի 1909թ.

Սույն կտակի ստորագրմանը ներկա են եղել և հավաստում են, որ Լև Նիկոլևիչ Տոլստոյը սույն կտակը կազմելիս առողջ դատողություն և հստակ հիշողություն է ունեցել.

Ազատ նկարիչ Ալեքսանդր Բորիսովիչ Գոլդենվեյզերը, Քաղքենի Ալեքսեյ Պետրովիչ Մերգենկոն, Ալեքսանդր Վասիլևիչ Կալաչյովը, քաղքենի:

Սույն կտակն արտագրել է Ալեքսանդրա Տոլստայան»:

Կտակի բնագիրը գրված է Տոլստոյի ձեռքով: Սակայն բավական է այդ տեքստը համեմատել օրագրային գրառումների տեսքով արված երկու կտակների հետ, հասկանալու համար, որ դա Տոլստոյի լեզուն չէ: Առաջին պաշտոնական կտակը ոչ միայն բովանդակությամբ, այլև բուն տեքստով համապատասխանում է այն «հարցարանին», որ Չերտկովն Անգլիայից ուղարկել էր քարտուղար Բրիգսի հետ: Հենց հարցերը հաստատական կրկնող Տոլստոյի պատասխաններն էլ ընկել էին կտակի հիմքում:

Չերտկովը հաղթեց Մոֆյա Անդրեևնային: Տոլստոյի հոգևոր բարեկամը ուժեղ դուրս եկավ օրինական կնոջից: Եվ դա արվեց կնոջ թիկունքում:

Ամուսնու մեկնելուց հետո Մոֆյա Անդրեևնան սկսեց ինչ-որ բան կասկածել: Սեպտեմբերի 8-ի առավոտյան նա Մոսկվայից մեկնում է Կրյուկչինո: Տոլստոյը նրան դիմավորեց կայարանում, և Չերտկովների տանը ամեն ինչ Մոֆյա Անդրեևնային թվաց «լավ, բարեհամբույր, գեղեցիկ»: Սեպտեմբերի 10-12-ը նա նորից Մոսկվայում էր: Գնաց բանկ, կարգի բե-

րեց իր հրատարակչական գործերը: Սեպտեմբերի 13-ին նորից եկավ Կրյոկչինո:

Այդ օրը որոշակի զգաց, որ ինչ որ բան այնպես չէ: Նրա հետ Մոսկվայից եկել էր Մաշա դուստրը, որը նույնպես գործերով քաղաքում էր և հիմա վերադառնում էր Չերտկովների ու հոր մոտ: Մայր ու դուստր այդ ժամանակ իրար չէին սիրում: Նրանք մրցում էին Տոլստոյի վրա ազդեցության համար: Կրյոկչինոյում գտնվող երաժիշտ Գուրբեմվեյզերը նկատել էր Սոֆյա Անդրեևնայի «հիվանդագին-գրգռված վիճակը, որն ամեն վայրկյան պատրաստ էր տեսարան սարքել կամ հիստերիայի մեջ ընկնել»: Սեպտեմբերի 17-ին, կտակի ստորագրման նախօրեին, Սոֆյա Անդրեևնայի ու Չերտկովի միջև վեճ ծագեց:

«Չերտկովների մոտ նրան ոչինչ դուր չէր գալիս,- հիշում էր դուստրը՝ Մաշան,- հորս շրջապատող «գորշերը», ընդհանուր սեղանը, որի շուրջն Իլյա Վասիլևիչը (*Տոլստոյների ծառան-Պ.Բ.*) մտնում էր իր կողքին: Նյարդերն ահավոր վիճակում էին: Դժվար է պատկերացնել՝ ինչ կկատարվեր, եթե իմանար, որ այստեղ, Կրյոկչինոյում հայրս որոշել է կտակ գրել... Ես արտագրեցի այդ կտակը, հայրս ու երեք վկաները ստորագրեցին: Պատճենը տվեցի Չերտկովին, բնագիրը թողեցի ինձ մոտ, և Չերտկովը խնդրեց Մոսկվայում այցելել երդվյալ հավատարմատար Մուրավյովին, իմանալու՝ այդպիսի կտակը իրավաբանական ուժ ունի՞»:

Նիկոլայ Կոնստանտինովիչ Մուրավյովն այդ պատմության մասնակիցներին բացատրեց, որ գրական իրավունքները, ինչպես ցանկացած սեփականություն, չեն կարող փոխանցվել բոլորին: Դրանք կարելի է փոխանցել իրավաբանական կամ ֆիզիկական անձի: Տոլստոյն ընտրության առաջ կանգնեց: Կամ ամեն ինչ թողնել ինչպես կա ու ոչինչ չձեռնարկել (այդ դեպքում ժառանգ կդառնային կինն ու երեխաները), կամ սկսածը հասցնել ավարտին:

1909 թվականի աշնանը երկու անգամ Յասնայա Պոլյանա է գալիս Չերտկովի աշխատակից Ֆյոդոր Ստրախովը (գրող Լիդիա Ալեքսեևնա Ավիլովայի հարազատ եղբայրը, որը կապ չունեի Ն.Ն.Ստրախովի հետ): Հոկտեմբերի 11-ին Տոլստոյի դուստրը՝ Մաշան գրում է Չերտկովին. «(Ամենակարևորը) Վերջին օրերին շատ էի մտածում հորս կտակի մասին, ու մտքովս անցավ, որ լավ կլինեի այդպիսի կտակ գրել ու վավերացնել վկաների ստորագրություններով, որդիներին կենդանության օրոք հայտարարել իր ցանկությունն ու կամքը: Երեք օր առաջ դրա մասին խոսեցի պապա-ի հետ: Ասացի, որ եղել են Մուրավյովի մոտ, ու Մուրավյովն ասել է, որ պա-

պա՛-ի կտակը անվավեր է, ու թե ինչ պետք է անել: Վավերականության մասին ասածիս ի պատասխան նա ասաց՝ ինչ կա որ, դա կարելի է անել, բայց՝ Տուլայում: Իսկ մնացածի մասին ասաց, որ կմտածի, ու որ դա լավ է այն առումով, որ եթե իր ցանկության մասին հայտարարի կենդանության օրոք, ապա դա չի ընկալվի, թե ինքը չի վստահում երեխաներին, որ չեն կատարի իր կամքը, իսկ եթե մահվանից հետո հայտնվի այդպիսի փաստաթուղթ, ապա որդիները, Մերյոժան, օրինակ, կվիրավորվեն, որ հայրը կասկածել է, թե իրենք առանց նոտարական փաստաթղթի չեն կատարի իր կամքը: Հորս հետ խոսակցությունից տպավորություն ստացա, որ նա կկատարի ինչ պետք է: Հիմա մտածեք ու որոշեք՝ որն է ավելի լավ: Հնարավոր չէ՞ խոսք բացել բոլոր ստեղծագործությունների մասին: Խնդրում եմ չհապաղեք: Երբ գա Տանյան, շատ ավելի դժվար, գուցե և անհնար կլինի որևէ բան ձեռնարկել»:

Սաշան այդ ժամանակ որոշ հիմքեր ուներ մորը չսիրելու: Դեռ երեխա ժամանակ նրան հայտնի էր դարձել, որ ծնվել է հոր՝ մորից բաժանվելու առաջին փորձի գիշերը, 1884 թվականի հունիսին: Գիտեր, որ իրենով հղի մայրը գնացել է տուլացի մանկաբարձուհու մոտ՝ խնդրելով արհեստական վիժում անել: Մանկաբարձուհին հրաժարվել է, ինչի համար Սոֆյա Անդրեևնան հետո երախտապարտ էր Աստծուն: Բայցևայնպես, նա երես չէր տալիս Սաշային, բաժին չէր հանում այն ուշադրությունը, որ հասնում էր մյուս երեխաներին: Աղջկան հեռու էր պահում իրենից, վիրավորում ու նույնիսկ նվաստացնում: Դուստրը պատասխանում էր կոպտություններով ու անհնազանդությամբ.

«Նա անմիջապես գնաց իր առանձնասենյակը և իր հետ տարավ Ալեքսանդրա Լվովնային ու ինձ, - հիշում էր Ֆյոդոր Ստրախովը իր առաջին այցելության մասին: - Ես ձեզ կգարմացնեմ իմ ծայրահեղ որոշումով, - բարի ժպիտը դեմքին՝ դիմեց երկուսիս: - Ուզում եմ plus roaliste que le roi<sup>33</sup> լինել: Ուզում եմ, Սաշա, միայն քեզ տալ ամբողջը, հասկանո՞ւմ ես: Ամբողջը, չբացառելով և այն, որի մասին վերապահում էր արվել իմ թերթային հայտարարությունում: - Մենք «միայն» և «ամբողջը» բառերից կայծակնահար կանգնել էինք նրա առաջ: Իսկ նա այդ բառերն այնքան հասարակ արտաբերեց, ասես մեզ տեղեկացնում էր ամենաանձան արկածի մասին, որ իրեն պատահել էր զբոսնելիս»:

33. Միապետից ավելի միապետական (ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

«1909 թվականի նոյեմբերի 1-ին հայրս նոր կտակ ստորագրեց, որը կազմել էր փաստաբան Մուրավյովը,- հիշում է Ալեքսանդրա Լվովնան:- Հայրս սկզբում մտածում էր իր ստեղծագործությունների իրավունքները թողնել երեքիս՝ իրեն ավելի մոտ Սերյոժային, Տանյային և ինձ, որպեսզի մեր հերթին այդ իրավունքները հանձնենք հանրային օգտագործման: Բայց երբ մի առավոտ մտա նրա աշխատասենյակը, հանկարծ ասաց. «Մա՛շա, որոշել եմ կտակը կազմել միայն քո անունով», - ու հարցական նայեց ինձ: Ես լուռ էի: Պատկերացրի այն ահռելի պատասխանատվությունը, որ ընկնելու էր ինձ վրա, ընտանիքի հարձակումները, ավագ եղբայրների ու քույրերի վիրավորվածությունը, ու դրա հետ միասին իմ հոգում բարձրանում էր հպարտության, երջանկության զգացումը, որ նա այդպիսի հսկա գործ է վստահում ինձ:

- Ինչո՞ւ ես լուռ,- ասաց նա:

Ես հայտնեցի իմ կասկածները:

- Ո՛չ, ես այդպես եմ որոշել,- հաստատուն ասաց նա,- դու հիմա միակն ես, որ մնացել ես ինձ մոտ, և միանգամայն բնական է, որ քեզ եմ հանձնարարում այդ գործը»:

Տոլստոյի օրագրում այդ դեպքը նկարագրված է ավելի մռայլ գույներով: Հոկտեմբերի 26. «Մինչև 3-ը ջքնեցի, ու տխուր էր, բայց լիովին չէի տրվում տխրությանը: Ուշ արթնացա: Վերադարձավ Սոֆյա Անդրեևնան: Ուրախ եմ նրա գալու համար, բայց շատ բորբոքեցի... Եկավ Ստրախովը: Առավոտյան ոչինչ չարեցի: Լավ նամակ Չերտկովից: Նա ինձ ավելի պարզ է ասում, ինչ ես մտածում էի: Չերտկովի պահանջների վերաբերյալ Ստրախովի հետ խոսակցությունը ծանր էր, որովհետև պետք է գործ ունենալ կառավարության հետ: Կարծես թե ամեն ինչ կվճռեմ պարզ ու բնական եղանակով. Մաշա՛ն: Ուզում եմ նաև նախկինները, մինչև 82... Երեկո: Եվս մի խոսակցություն Ստրախովի հետ: Համաձայնեցի: Բայց ափսոսում եմ, որ չասացի, որ այդ ամենը ծանր է ինձ համար, ու լավագույնը չբաժանելն է»:

Տոլստոյը հիշողության խնդիրներ ուներ. նա խառնել է 1881 և 1882 թվականները: Ընդհանրապես վատ էր զգում. «...կասկածելի է, որ ողջ կմնամ. թուլություն, քնկոտություն», - գրում է նա օրագրում հոկտեմբերի 28-ին. «...անբնական երկար քնեցի» (հոկտեմբերի 29-ի գրառումը): «Շատ տարօրինակ, թախծոտ վիճակ: Չեմ կարողանում քնել, ժամը երկուսն է (գիշերվա)» (31-ը հոկտեմբերի, կտակը ստորագրելու նախօրեին): Նոյեմբերի 1. «Այսօր եկան Գոլդենվեյզերն ու Ստրախովը, Չերտկովից բերեցին թղթերը: Ես ամեն ինչ խմբագրեցի: Բավական ձանձրալի է»:



1910 թվականի ամռանը Սաշայի մոտ թոքախտի նշաններ հայտնաբերեցին: Նա մեկնեց Գրիմ, որտեղ արագ ոտքի կանգնեց: Սակայն Սաշայի հիվանդությունը նշանակալի դեր խաղաց կտակի պատմության մեջ: Դա անհանգստացրեց Չերտկովին: Առանց Սաշայի՝ այդ դրածո իրավաբանական անձի, կտակը կկորցնեք իր նշանակությունը: Չերտկովը նորից կգրկվեր ամեն ինչից: Այդ ժամանակ՝ 1910 թվականի հունիս-հուլիսին կրկնվում էր 1909 թվականի աշնան իրավիճակը: Սկզբում կնոջ պահվածքից տանջահար Տոլստոյը մեկնում է հանգստանալու «սիրելի բարեկամի» մոտ, որն արդեն Կրյոկչինոյում չի ապրում, այլ Օտրադնոյում, Մոսկվայի նահանգի Մեշչերսկի գյուղի մոտ: Նրան ուղեկցում էին Գրիմից վերադարձած Սաշան, անձնական բժիշկ Գ.Ա. Մակովիցկին ու երիտասարդ քարտուղար Վալենտին Բուլգակովը: Մեշչերսկոյեում Տոլստոյը հոգեպես հանգստանում էր և արդյունավետ աշխատում: Երկու ոչ մեծ գեղարվեստական տեքստ գրեց, այդ թվում՝ «Ակամա» հրաշալի հոգեբանական էտյուդը:

Իսկ այդ ընթացքում կոմսուհու հիվանդությունն անկառավարելի, ագրեսիվ բնույթ էր ստանում: Նա ամուսնուն ու դստերը հեռագիր է ուղարկում Յասնայա Պոլյանայում ապրող Սաշայի ընկերուհու՝ Վարվառա Ֆեոկրիտովայի ստորագրությամբ (որ չմտածեն, թե դա խելագարի գառանցանք է). «Սոֆյա Անդրեևնան ուժգին ջղային տագնապ ունի, անքնություն, լաց է լինում, զարկերակը՝ հարյուր: Խնդրում է հեռագրել: Վարյա»: Հետո նոր հեռագիր է ուղարկում, արդեն իր ստորագրությամբ, որով ամուսնուն աղաչում է անհապաղ վերադառնալ: Պատասխանը եկավ հունիսի 23-ին. «Ավելի հարմար է գալ վաղը ցերեկը, բայց եթե անհրաժեշտ է, կգանք գիշերը»: «Հարմար է» արտահայտությունը պայթեցնում է Սոֆյա Անդրեևնային:

Եվ այդ նույն ժամանակ Օտրադնոյե տեղեկություն է հասնում, որ իշխանությունները Չերտկովին թույլատրել են վերադառնալ Տոլայի նահանգ: Եվ Տոլստոյը շտապում է այդ լուրով «ուրախացնել» հիվանդ կնոջը:

Հունիսի քսաներեքին Տոլստոյն ու Սաշան վերադառնում են Յասնայա Պոլյանա: Հուլիսի 27-ին մոտակա Տելյատնիկիում հաստատվում է Չերտկովը և սկսում ամեն օր այցելել յասնոպոլյանյան տուն, ինչով լրիվ խելագարեցնում է Սոֆյա Անդրեևնային: Հարազատները ստիպված են Մոսկվայից հրավիրել նշանավոր պրոֆեսոր Գրիգորի Իվանովիչ Ռոսսոլիմոյին: Նա ցնցված էր Սոֆյա Անդրեևնայի վիճակից: Ախտորոշումն այսպիսին էր. «Դեգեներատիվ կրկնակի կառուցվածք. պարանոյիդալ և հիստերիկ, առաջինի գերակշռությամբ»:

Իսկ ինչպե՞ս ընդունեց այդ ախտորոշումը Տոլստոյը:

«Ռոստոլիմոն ապշեցուցիչ հիմար է գիտական առումով, անհուսալի է»,- գրում է նա օրագրում հուլիսի 20-ին: «Նամակ Ռոստոլիմոյից, ապշեցուցիչ հիմար՝ Սոֆյա Անդրեևնայի վիճակի մասին»,- գրառում է անում գաղտնի «Օրագիր միայն ինձ համար»-ում, որը թաքցնում էր կնոջից:

Ողջ գաղտնի օրագիրը նվիրված է կնոջը: «Ես միանգամայն անկեղծորեն կարող եմ սիրել նրան, ինչը չեմ կարող Լևի (*որդու-Պ.Բ.*) հանդեպ: Գժբա՛խտ, ինչպես չխղճամ նրան»: «Պարզվում է՝ նա գտել ու վերցրել է իմ փոքրիկ օրագիրը: Գիտի ինչ-որ մեկին ուղղված, ինչ-որ բանի՝ ակնհայտորեն իմ ստեղծագործություններին վերաբերող կտակի մասին: Ինչպիսի՛ տառապանք դրանց դրամական արժեքի պատճառով, ու վախենում է, որ կխանգարեմ հրատարակությանը: Եվ ամեն ինչից վախենում է, խեղճը»: «Ողջ գիշեր տեսել եմ իմ ծանր պայքարը նրա դեմ»: «Արթնանում եմ, քնում, ու նորից նույնը»:

Բայց այդ գաղտնի օրագրում այլ խոստովանություններ էլ կան. «Սոֆյա Անդրեևնան հանգիստ է, բայց՝ նույնքան օտար». «Առավտից ծանր, չար զգացում նրա հանդեպ, Սոֆյա Անդրեևնայի: Եվ պետք է ներել, և խղճալ, բայց առայժմ չեմ կարող». «Թշնամական ոչինչ չկա նրա կողմից, բայց ինձ համար ծանր է երկկողմանի այդ ձևացումը»: Եվ վերջապես. «Հիշելով իմ ամուսնությունս՝ մտածում էի որ դա ինչ-որ ճակատագրական բան էր: Ես նույնիսկ երբեք սիրահարված չեմ եղել: Եվ չէի կարող չամուսնանալ...»:

Տոլստոյի օրագրերից կարելի է դատել կյանքի վերջին ամիսներին Սոֆյա Անդրեևնայի հանդեպ նրա իրական վերաբերմունքի մասին: Այնտեղ և՛ սեր կար, և՛ սովորություն, և՛ խղճահարություն նրա հանդեպ, և՛ սարսափ նրա պահվածքից, և՛ հեռանալու մշտական ցանկություն, և՛ ընկալում, որ հեռանալը կարող է դաժան արարք լինել հիվանդ կնոջ հանդեպ:

Կյանքի վերջում Տոլստոյն ու կինը փոխել էին տեղերը: Սոֆյա Անդրեևնայի մեղությունը սեփական տանը այնպիսին էր, ինչպես Տոլստոյի մեղությունը հոգևոր հեղաշրջման սկզբում: Եվ երկու դեպքում էլ խոսքը «խենթության» մասին էր: Ինչպես Տոլստոյին էին կասկածում, որ «խելագարվել է», այդպես էլ նրա կնոջը կամ որպես խելագար էին ընդունում, կամ խելագարություն ձևացնող: Չնայած Ռոստոլիմոյի ախտորոշմանը, Սոֆյա Անդրեևնայի բոլոր հակառակորդները, ներառյալ և դուստրը, համոզված էին, որ նա հիվանդ չէ, միայն հիվանդ է ձևանում: Այդ կարծիքն առավել կոպիտ արտահայտված է Վարվառա Ֆեոկրիտովայի օրագրում:

Նա գրում է, որ Սոֆյա Անդրեևնայի «թվացյալ» խելագարությունը սկսվել է, երբ նա սկսել է կասկածել, որ Տոլստոյն ու Չերտկովը Մեշչերսկոյեում կտակ են կազմում իր դեմ: Կոմսուիին այդ ժամանակ շտապ պատարաստում էր ամուսնու ստեղծագործությունների հրատարակությունը, որը, նրա կարծիքով, հեղինակի մահվանից հետո առանձնապես լավ էր վաճառվելու: Բայց եթե Տոլստոյն ամբողջը կտակում է Չերտկովին, ապա ինքը «կվառվի»: Այստեղից էլ 1900 թվականից նրա հիվանդագին հետաքրքրությունը ամուսնու օրագրերի հանդեպ, որոնք պահվում էին Չերտկովի մոտ (մինչև 1900 թվականի օրագրերը Սոֆյա Անդրեևնան ի պահ էր տվել նախ Ռուսյանցևայան գրադարանին, ապա Պատմական քանգարանին): Այդ օրագրերում չկա՞ն «կտակներ», ինչպես 1895 թվականի օրագրում: Ֆեոկրիտովան պնդում է, որ երբ Սաշան Տոլստոյի խնդրանքով Չերտկովի մոտից յասնապոլյանյան տուն է բերել օրագրերը, Սոֆյա Անդրեևնան սկսել է նայել դրանք՝ քրթմնջալով. «Արդյո՞ք այստեղ կտակ չկա»: Ֆեոկրիտովայի կարծիքով՝ կոմսուիին փաղաքշանքով, սպառնալիքներով, հիստերիաներով ու շանտաժով ցանկանում էր հասնել գլխավորին՝ կտակի ոչնչացմանը, եթե այն գոյություն ունի: Երբ նա հափշտակեց ամուսնու գաղտնի օրագիրն ու իմացավ, որ այդպիսի կտակ գոյություն ունի, իրավիճակն անտանելի դարձավ:

Ֆեոկրիտովայի օրագիրը մինչ օրս հրատարակված չէ, չնայած Ն.Ն. Գուսևն այն հրատարակության էր պատրաստել դեռևս 1930-ական թվականներին: Դա Տոլստոյի կնոջ հանդեպ ամենամանողոք փաստաթուղթն է, գրված մի մարդու կողմից, որին հենց ինքն էլ տուն էր ընդունել որպես մեքենագրուհի՝ իր «Իմ կյանքը» հուշագրությունը մեքենագրելու համար: Բայց ցավն այն է, որ Ֆեոկրիտովայի կարծիքը կիսում էին այդ պատմության համարյա բոլոր մասնակիցները, և ամենագլխավորը՝ այդ տեսակետին էին հակում Տոլստոյին:

Սոֆյա Անդրեևնայի կողքին մնացին միայն երկու որդիները՝ Լևն ու Անդրեյը: Եվ զարմանալի չէ, որ մայրը նրանց կանչեց իր մոտ՝ Յասնայա Պոլյանա: Բայց հենց նրանք իրենց պահվածքով վերջնականապես խրախուսեցին Տոլստոյի որոշումը՝ ընտանիքը զրկել իր գրական ժառանգության հանդեպ բոլոր իրավունքներից:

«Լևն է եկել,- հունիսի 4-ին օրագրում գրում է Տոլստոյը: - Ոչ մեծ համարիչ, իսկ հայտարարը ձգտում է անսահմանության»:

«Որդիներս՝ Անդրեյն ու Լևը, շատ ծանր են, չնայած ամեն մեկը տարբեր ու յուրովի»,- գրում է նա: «Անդրեյը պարզապես մեկն է նրանցից, որոնց

ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

մասին դժվար է մտածել, թե նրանց մեջ Աստծու հոգին է (բայց այն կա, հիշիր)»: «Լև Լվովիչին տանել չեմ կարողանում: Իսկ նա ուզում է բնակություն հաստատել այստեղ»:

Տեյաանիկիում, Չերտկովի տանը պաշտոնական կտակի լրացված տարբերակը ստորագրելուց մի քանի օր առաջ, որով Մաշայի մահվան դեպքում նրա ժառանգորդ էր հայտարարվում Տատյանան, Տոլստոյի ու Լևի միջև սկանդալային տեսարան եղավ:

«Հազիվ եմ շնչում,- օրագրում հուլիսի 11-ին գրում է Տոլստոյը:- սարսափելի գիշեր: Մինչև ժամը 4-ը: Եվ ամենից սարսափելիին Լև Լվովիչն էր: Նա ինձ այպանում էր, ինչպես տղեկի...»:

Հուլիսի 11-ի գիշերը Սոֆյա Անդրեևնան պահանջեց, որ ամուսինն իրեն տա Չերտկովի մոտ պահվող բոլոր օրագրերն, ու մերժում ստացավ: Նա դուրս եկավ պատշգամբ, որի վրա էր բացվում ամուսնու մնջարանի դուռը, պառկեց հատակին ու սկսեց բարձր տնքալ: Նրա պահվածքի խելահեղությունը հաստատվում է իր իսկ օրագրերով, նա գրում է, որ այդ պահին «հիշում էր, թե ինչպես այդ պատշգամբում, 48 տարի առաջ, դեռ օրիորդ, ես առաջին անգամ սեր զգացի Լև Նիկոլաևիչի հանդեպ: Ցուրտ գիշեր էր, և ինձ հաճելի էր մտածել, թե որտեղ գտել եմ նրա սերը, այնտեղ էլ մահ կգտնեմ»:

Տոլստոյը ելավ պատշգամբ ու կնոջը խնդրեց հեռանալ: Կինը խոստացավ, որ «կսպանի Չերտկովին», վազեց այգի ու պառկեց խոնավ հողին: Մթան մեջ մի քանի հոգի փնտրում էին նրան ու գտան Մարքիզուհի պուդելի օգնությամբ: Բայց նա տուն վերադառնալու խնդրանքներին պատասխանում էր՝ միայն այն դեպքում, եթե ամուսինը գա իր ետևից:

Լև Լվովիչը գնաց հոր մոտ:

«Նա չի ուզում գալ,- ասացի ես,- ասում է՝ վռնդել ես իրեն:

- Ա՛խ, Աստված իմ,- գոչեց հայրս:- Ո՛չ: Ո՛չ: Գա անտանելի է:

- Գնա նրա մոտ,- ասացի ես:- Առանց քեզ չի գա:

- Ո՛չ, ո՛չ,- հուսահատությունից իրեն կորցնելով՝ կրկնում էր նա,- չեմ գնա:

- Չէ՞ որ դու նրա ամուսինն ես,- այդ ժամանակ բարձր ու նեղսրտած ասացի ես,- հենց դու էլ պիտի հարթես այս ամենը:

Նա զարմացած նայեց ինձ և հեզ ու լուռ իջավ այգի»:

Նույնիսկ Լև Լվովիչի նկարագրությամբ՝ տեղի տեսարան էր: Ավելի վատն է Գոլդենվելյեյերի օրագրում: «Սոֆյա Անդրեևնան պահանջում էր, որ Լ.Ն.-ն գա իր ետևից: Լև Լվովիչը գնաց հոր մոտ, գոռում էր վրան, հայիո-

յում, հասավ այնտեղ, որ «անպետքություն» անվանեց նրան»:

Գողթենվեյզերի օրագրում հուլիսի 17-ի թվագրությամբ պատմվում է, թե ինչպես էր Տոլստոյը Տեյլատնիկիում արտագրում կտակը.

«Չերտկովը Լ.Ն.-ին տարավ վերև: Լ.Ն.-ն, ինձ բարևելով, երկու անգամ ամուր սեղմեց ձեռքս: Նա նստեց սեղանի մոտ և ինձ խնդրեց թելադրել Մուրավյովի տված տեքստից, որը նույնական էր հնի հետ, բայց հավելումով, որ Լ.Ն.-ից առաջ Ալեքսանդրա Լվովնայի մահանալու դեպքում ամբողջն անցնում է Տատյանա Լվովնային:

Լ.Ն.-ն ըստ երևույթին հուզված էր, բայց գրում էր արագ և անսխալ: Երբ վերջացրեց, ասաց ինձ.

- Ահա, ի՞նչ լավ է»:

Սակայն շտապելուց մոռացել էին Տոլստոյին թելադրել «առողջ դատողությամբ և հստակ հիշողությամբ» բառերը: Պարզապես գրված էր «կազմված, գրված ու ստորագրված է կոմս Լև Նիկոլաևիչ Տոլստոյի կողմից»: Կտակն այդ տեսքով օրինական ուժ չունեի: Շտկելու համար պահանջվեց հինգ օր:

1910 թվականի հուլիսի քսաներկուսին Գրումանտ գյուղի մերձակա անտառում նա ևս մեկ անգամ արտագրում ու ստորագրում է իրավաբանական կտակի հիմա արդեն վերջնական տեքստը:

Այդ տեքստի ստեղծման պատմությունը մանրամասն նկարագրված է Չերտկովի քարտուղար Ալեքսեյ Սերգենևկոյի՝ Պ.Ա. Սերգենևկոյի որդու հուշերում.

«Լև Նիկոլաևիչը նստեց կոճղին և հանեց վերնաշապիկին ամրացված ինքնահոս գրիչը, խնդրեց մեզ իրեն տալ գրելու համար անհրաժեշտ պարագաները: Ես նրան թողթ ու այդ նպատակի համար պահված սովորաբար կտոր տվեցի, որի վրա պետք է գրեր, իսկ Ալեքսանդր Բորիսովիչը (*Գողթենվեյզերը - Պ.Բ.*) նրա առաջ պահել էր կտակի սևագիրը: Ոտքը ոտքին զցելով ու սովորաբար ծնկին՝ Լև Նիկոլաևիչը սկսեց գրել. «Հազար ինը հարյուր տասը թիվ, հուլիսի քսաներկուսի»: Անմիջապես նկատեց վրիպակը, որ արել էր, և ուզում էր ուղղել կամ մաքուր թերթ վերցնել, բայց միտքը փոխեց ու ժպտալով ասաց.

- Թող մտածեն՝ անգրագետ եմ եղել:

Հետո ավելացրեց.

- Դեռ թվերով էլ կգրեմ, որ կասկած չլինի:

Եվ «հուլիս» բառից հետո փակագծերում գրեց՝ «22»:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Նրա համար դժվար էր կոճղին նստած հետևել սևագրին և Ալեքսանդր Բորիսովիչին խնդրեց կարդալ: Ալեքսանդր Բորիսովիչը սկսեց հստակ կարդալ սևագիրը, իսկ Լև Նիկոլաևիչը ջանադրաբար գրում բառերը, կրկնակի տողանցներ անելով տողերի վերջում ու սկզբում, ինչպես, կարծես, արվում էր հնում, և Լև Նիկոլաևիչը ինքը երբեմն անում էր իր նամակներում, երբ ջանում էր առանձնապես հստակ ու ընթեռնելի գրել:

Նա սկզբում տողերը սեղմ էր գրում, իսկ երբ տեսավ, որ դեռ շատ տեղ կա, ասաց.

- Պետք է լայնաթափ գրել, որ անցնեն հաջորդ էջ,- ու մեծացրեց տողերի միջտարածությունը:

Երբ կտակի վերջում պետք էր ստորագրել, հարցրեց.

- Պետք է գրել «կո՞նս»:

Ասացինք, որ կարելի է և չգրել, ու նա չգրեց:

Հետո մենք՝ վկաներս էլ ստորագրեցինք: Լև Նիկոլաևիչը մեզ ասաց.

- Դե, շնորհակալություն ձեզ»:

Միևնույն ժամանակ Տոլստոյին հանձնվեցին Չերտկովի ուղարկած թղթերը՝ կարևորագույն լրացում կտակին. Տոլստոյի ստեղծագործությունների և ձեռագրերի հանդեպ բոլոր իրավունքները միայն ձևական էին անցնում Սաշային, իսկ դրանց իրական տնօրինողը Չերտկովն էր:

Նույն օրվա երեկոյան, երբ Տոլստոյը գրում էր իր գաղտնի կտակը կնոջ դեմ, Չերտկովը հյուր եկավ Յասնայա Պոլյանա: Քարտուղար Վալենտին Բուլգակովը գրում է. «Երբ հիշում եմ այդ երեկոն, ապշում եմ Սոֆյա Անդրեևնայի բնագրի վրա. նա ասես զգում էր, որ հենց նոր ինչ-որ ահավոր անուղղելի բան է կատարվել... Հյուրի և ընդհանրապես բոլոր ներկաների հանդեպ իրեն կոպիտ ու հանդուգն էր պահում: Պարզ է, դա ազդում էր բուրի վրա: Բոլորը նստած էին լարված, ճնշված: Չերտկովն ասես քանոն կուլ տված լիներ, ձգվել էր, դեմքը քարացել էր: Սեղանին հաճելի քլթքլթում էր ինքնատեղ, ճերմակ սփռոցին որպես վառ կարմիր բիծ առանձնանում էր ազնվամորու ափսե՛ն, բայց սեղանի շուրջը նստածները մի կերպ էին ձեռք տալիս թեյի գավաթներին, ասես պարտականություն էին կատարում: Եվ մի քիչ նստելով՝ շուտով բոլորը ցրվեցին»:

Հուլիսի քսանհինգին, հավաքելով իրերն ու վերցնելով ափիոնի սրվակը, կոմսուհին կայարան ուղարկված կառքով մեկնեց Տոլա՝ Անդրեյ որդուն դիմավորելու: Նա աղոտ նպատակ ուներ՝ կամ ընդմիջտ մեկնել, կամ ինքնասպանությամբ վերջ տալ կյանքին: Մեկնումից առաջ գրություն թողեց, որը նախատեսում էր ուղարկել թերթերին. «Խաղաղ Յասնայա Պոլյանայում

արտակարգ իրադարձություն է կատարվել: Իր տունն է լքել կոմս (ուհի) Սոֆյա Անդրեևնա Տոլստայան, այն տունը, որտեղ նա 48 տարի սիրով պահպանել էր ամուսնուն՝ նրան տալով իր ողջ կյանքը: Պատճառն այն է, որ տարիքից թուլացած Լև Նիկ-ը լիովին ընկել է պարոն Չ-ի վնասակար ազդեցության տակ, և իսպառ կորցրել կամքը՝ թույլատրելով Չ-ին և ինչ-որ բանի մասին անընդհատ գաղտնի խորհրդակցելով նրա հետ: Մեկ ամիս տառապելով ջղային հիվանդությամբ, ինչի հետևանքով երկու բժիշկ էին հրվիրվել Մոսկվայից, կոմսուհին այլևս անկարող էր տանել Չ-ի ներկայությունը ու հուսահատ հոգով լքեց իր տունը»:

Անդրեյը կայարանում տեսնելով մոր վիճակը՝ նրան ստիպեց միասին վերադառնալ կալվածատուն:

Հուլիսի քսանյոթին Լևն ու Անդրեյը հարցաքննեցին Սաշային՝ հայրը կտակ չի՞ գրել: Անդրեյը գնաց հոր մոտ և ուղիղ հարցրեց, որևէ գրավոր կարգադրություն չի՞ արել: Տոլստոյը ստել չէր կարող: Ճշմարտությունն ասել նույնպես չէր կարող: Այդ դեպքում կնոջ ու որդիների ողջ ցասումը կթափվեր Սաշայի վրա: Ասաց, որ չի ցանկանում քննարկել այդ հարցը: Սակայն փաստացի դա կտակի գոյությունն ընդունել էր նշանակում:

Տոլստոյը հայտնվել էր ծողակում: Նա չէր կարող ստել ու չէր կարող ասել ճշմարտությունը: Նույն վիճակում էր նաև Սաշան, որին հենց ինքն էր դաստիարակել այն ոգով, որ ոչ մեկին խաբել չի կարելի:

Հուլիսի երեսունին Յասնայա Պոլյանա եկավ Տոլստոյի կենսագիր Պ.Ի. Բիրյուկովը: Նրան, որպես վստահելի անձի, պատմեցին կտակի մասին: Եվ «Պոշան», ինչպես նրան կոչում էին մերձավորները, հավանություն չտվեց դրան: Տոլստոյին ասաց, որ այդպիսի փաստաթուղթը գաղտնի պահելը ճիշտ չէ: Նա ցնցված էր Յասնայայում կատարվող խարդավանքներից: Տոլստոյն էլ հասկանում էր, որ ինչ-որ բան այնպես չի արել:

«Լիովին, լիովին հասկացա սխալս,- գրում է նա օրագրում:- Պետք էր հավաքել բոլոր ժառանգներին ու հայտարարել իմ մտադրությունը, ոչ թե թաքուն: Ես դրա մասին գրեցի Չերտկովին»:

Ահա այդ նամակը.

«Երեկ խոսեցի Պոշայի հետ, և նա շատ ճիշտ ասաց, որ ես մեղավոր եմ նրանով, որ կտակը թաքուն եմ կազմել: Կամ պետք էր բացահայտ անել, հայտնելով բոլորին, որոնց վերաբերում էր, կամ ամեն ինչ թողնել այնպես, ինչպես կար. ոչինչ չանել: Եվ նա միանգամայն իրավացի է. ես վատ եմ վարվել ու հիմա ցավում եմ դրա համար: Վատն այն է, որ գաղտնի եմ արել՝ վատություն ենթադրելով ժառանգներիս կողմից, և, գլխավորը, անկասկած

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

վատ են արել նրանով, որ օգտվել են իմ կողմից մերժվող կառավարության գերատեսչությունից՝ պաշտոնապես կազմելով կտակը: Հիմա հստակ տեսնում եմ, որ ամեն ինչում, ինչ կատարվում է, մեղավոր եմ միայն ես: Պետք էր ամեն ինչ թողնել ինչպես կար, ու ոչինչ չանել...»:

Ո՞ւմ էր գրում: Մարդու, որը վեց տարի բարդագույն գաղտնապահական աշխատանք էր արել իր օգտին Տոլստոյի կտակը կազմելու ուղղությամբ: Ի՞նչ էին նշանակում նրա համար «ոչինչ չանել» բառերը: Այն, որ Տոլստոյի ողջ ժառանգությունը կմնա կնոջն ու երեխաներին:

Ապշած Չերտկովը տասը օր տքնում էր ուսուցչին ուղղված պատասխանի վրա: Այդ նամակում նա Տոլստոյին ( ) մանրամասն պատմում էր, թե ինչպես է կազմվել կտակը և ինչն է առաջնորդել կտակողին (այսինքն՝ Տոլստոյին), երբ ստորագրում էր այն: Նա ասես վերականգնում էր իր կուռքի հիշողությունը՝ պատմելով այն մասին, թե Տոլստոյն ինչ է արել իր ձեռքով: Ու Տոլստոյը նորից զիջեց...

«Գրում եմ թերթիկների վրա, որովհետև գրում եմ անտառում, զբոսանքի ժամանակ: Երեկ երեկոյից ու մինչև այս առավոտ մտածում էի Չերտկովա նամակի մասին: Երկու զգացում արթնացրեց իմ մեջ Չերտկովա նամակը. զգվանք այն կոպիտ շահամոլության և անսրտության կոպիտ արտահայտությունների դեմ, որոնք կամ չեն տեսել, կամ տեսել ու մոռացել են. և զղջում ու դառնություն առ այն, որ Չեզ ցավ են պատճառել իմ նամակով, որտեղ ափսոսանք եմ հայտնել արածիս համար: Իսկ նամակից արված եզրակացությունն այն է, որ Պավել Իվանովիչն իրավացի չէր, ինչպես որ իրավացի չէի ես՝ համաձայնելով նրա հետ. միանգամայն հավանություն եմ տալիս Չերտկովային: Բայց իմ գործունեությանը, ինչպես նաև նայնդեպս դժգոհ եմ. զգում եմ, որ կարելի էր ավելի լավ վարվել, չնայած և չգիտեմ՝ ինչպես»:

Տոլստոյը չէր ցանկանում լուծել այդ անհիծյալ իրավաբանական խնդիրը: Նա ուզում էր, որ այն ինքն իրեն լուծվի հաշտությամբ: Չերտկովին ուղղված նամակում նա ոչ միայն զիջում էր բարեկամին, այլև բացատրում իր արարքի շարժառիթները. «Ես չեմ հավատում, որ նրա (կնոջ-Պ.Բ.) դեմ ուղղված իմ որոշումների վճռական պաշտպանությունը կարող էր օգտակար լինել նրա համար, չեմ հավատում, իսկ եթե հավատալի էլ, համենայնդեպս չէի կարող դա անել: Իսկ գլխավորը, բացի նրանից, որ մտածում եմ, թե պետք է այդպես վարվեմ, իմ փորձից գիտեմ, որ երբ պնդում եմ, ինձ համար տառապանք է, իսկ երբ զիջում եմ, ոչ միայն հեշտ է, այլև նույնիսկ բերկրալի»:



Չերտկովը Տոլստոյին պատասխանեց մի խելագար նամակով, որտեղ տենդագին ապացուցում էր, որ կտակը գաղտնի պահելն անհրաժեշտ է... «հենց Սոֆյա Անդրեևնայի շահերից ելնելով»: «Եթե նա Չեր կենդանության օրոք ստույգ իմանար Չեր կարգադրության մասին, պարզապես չէր դիմանա դրան, այդքան տարիներ նա մտորել է, փայփայել և հաշվենկատ շրջահայեցությամբ ու զգուշավորությամբ նախապատրաստել Չեր մահվանից հետո Չեր բոլոր գրվածքները զավթելու պլանը, որ հիասթափությունն այդ հարցում չափազանց մեծ հարված կլիներ նրա համար, և նա ոչինչ ու ոչ մեկին չէր խնայի, չէր խնայի ոչ միայն Չեզ, այլև իրեն, իր կյանքը չէր խնայի և, ամենասարսափելին, չէր խնայի իր հոգին՝ խղճի վերջին մնացորդները, հուսահատ փորձելով նվաճել, հասնել իր ուզածին, քանի դեռ Դուք ողջ եք...»:

Ինչո՞վ էր տարբերվում Չերտկովը հոգեկան հիվանդ Սոֆյա Անդրեևնայից, երբ Տոլստոյին ապացուցում էր, որ կտակի հարցում անհրաժեշտ է կնոջն անտեղյակության մեջ պահել, որպեսզի նա վերջնականապես չխելագարվի և ինքնասպանություն չգործի:

1910 թվականի սեպտեմբերի քսանչորսին Տոլստոյը «Միայն ինձ համար օրագիր»-ում գրում է. «Նրանք կտոր-կտոր են անում ինձ: Երբեմն մտածում եմ հեռանալ բոլորից»:

Հաջորդ օրը նա գրեց Չերտկովին՝ իրենց նամակագրության պատմության մեջ առաջին անգամ պահանջելով չխառնվել կնոջ հետ իր հարաբերություններին: «Այս գործը միայն ես պիտի վճռեմ՝ իմ հոգում, Աստծո առաջ, և փորձում եմ այդ անել, իսկ ցանկացած օտար մասնակցություն դժվարացնում է այդ աշխատանքը: Ինձ համար ցավոտ էր նամակը, զգացի, որ ինձ երկու կես են անում...»:

Հոկտեմբերի լույս 28-ի գիշերը նա փախավ տնից:

### *Փախուստ*

Բժիշկ Դուշան Պետրովիչ Մակովիցկու գրառումներից.

«Առավոտյան, ժ. 3-ին, խալաթով, կոշիկները բոբիկ ոտքերին հագած, մտնը ձեռքին՝ արթնացրեց ինձ. դեմքը տառապած է, հուզախոռով ու վճռական:

- Ես որոշել եմ մեկնել: Դուք կգաք ինձ հետ: Ես կբարձրանամ վերև, դուք էլ եկեք, միայն թե չարթնացնեք Սոֆյա Անդրեևնային: Շատ բան չենք վերցնի, միայն ամենաանհրաժեշտը: Սաշան երեք օրից կգա մեր ետևից ու կբերի՝ ինչ պետք է»:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Ի՞նչ իրեր էին «ամենից անհրաժեշտ»: Տոլստոյը դրա մասին չէր մտածում: Մտահոգ էր, որ Մաշան Սոֆյա Անդրեևնայից թաքցնի իր օրագրերը: Վերցրեց Չերտկովի նվիրած ինքնահոս գրիչն ու նոթատետրերը: Իրերն ու սննդամթերքը հավաքեցին ու տեղավորեցին Մակովիցկին, Մաշան ու նրա ընկերուհի Վարվառա Ֆեոկրիտովան: Պարզվեց, որ իրերը շատ են: Մեծ ուղեպայուսակ էր պետք: Բայց ինչպե՞ս բերել առանց Սոֆյա Անդրեևնային անհանգստացնելու: Տոլստոյի ու կնոջ ննջարանների արանքում երեք դուռ կար: Սոֆյա Անդրեևնան գիշերը դրանք բաց էր թողնում, որ արթնանա ամուսնու սենյակից եկած ցանկացած տազնապալի նշանի դեպքում: Ասում էր՝ եթե գիշերը նա օգնության կարիք ունենա, ինքը փակ դռների միջով ոչինչ չի լսի: Մակայն գլխավոր պատճառն այն էր, որ վախենում էր նրա գիշերային փախուստից: 1910 թվականի հուլիսի 15-ին ամուսնու հետ բուռն բացատրությունից հետո նա ողջ գիշերն անքուն անցկացրեց և առավոտյան նամակ գրեց.

«Լյովուչկա, սիրելի՛ս, ոչ թե ասում, այլ գրում եմ, որովհետև անքուն գիշերից հետո ինձ համար դժվար է խոսել, շատ եմ հուզվում և նորից կարող եմ բորբոքվել, իսկ ես ուզում եմ խաղաղ ու ողջամիտ լինել: Գիշերը ամեն ինչ մտածեցի, և ահա թե ինչ տառապալի բան պարզվեց. դու ինձ մի ձեռքով շոյում էիր, մյուսով դանակ ցույց տալիս: Ես դեռ երեկ աղոտ զգացի, որ այդ դանակն արդեն վիրավորել է իմ սիրտը: Այդ դանակը սպառնալիք է ու՛ խիստ վճռական, որ հետ կառնես խոստումներդ և անաղմուկ կհեռանաս ինձնից, եթե ես այնպիսին լինեմ, ինչպիսին հիմա եմ... Նշանակում է, ցանկացած գիշեր, ինչպես անցած գիշեր էր, ականջ եմ դնելու՝ դու չե՞ս հեռացել: Քո ցանկացած բացակայություն դեպքում, թեկուզ փոքր-ինչ տևական, տառապանքով մտածելու եմ, որ ընդմիջտ ես հեռացել: Մտածիր, սիրելի՛ Լյովուչկա, չե՞ որ քո մեկնումն ու սպառնալիքը հավասարագոր են սպանության սպառնալիքի»:

Մաշան, Վարվառան ու Մակովիցկին անաղմուկ էին հավաքում իրերը, դավաղիրների պես: Սոֆյա Անդրեևնայի սենյակից ձայն լսելուն պես մարում էին մոմերը: Տոլստոյն ամուր փակեց կնոջ ննջարան տանող երեք դռներն ու անձայն հանեց ճամպրուկը: Բայց դա էլ ամբողջը չէր. մի կապոց էլ գոյացավ՝ պլեդով ու վերարկուով, ուտելիքի զամբյուղը... Տոլստոյը չսպասեց մինչև ամեն ինչ հավաքեն: Շտապեց արթնացնելու կառապան Անդրիանին և օգնելու, որ լծի ձիերը:

Տոլստոյի օրագրից.

«...զնում եմ ձիանոց, որ կարգադրեմ լծել ձիերը. Գուշանը, Մաշան, Վարյան վերջացնում են իրերը հավաքելը: Ակնակույր գիշեր է, շեղվում եմ կողաշենք տանող ուղյակից, հայտնվում եմ քավուտում, ծակծկվում եմ, խփվում ծառերին, ընկնում, կորցնում գլխարկս, մի կերպ դուրս եմ գալիս, վերադառնում եմ տուն, գլխարկ եմ դնում ու լապտերի լույսով հասնում ձիանոց, կարգադրում եմ լծել: Գալիս եմ Դաշան, Գուշանը, Վարյան... Դոդում եմ՝ հետապնդման սպասելով»:

Ալեքսանդրա Լվովնան ուշ շրջանի հուշերում այլ կերպ է նկարագրում հոր վիճակը.

«Ես սպասում էի նրա հեռանալուն, սպասում էի ամեն օր, ամեն ժամ, բայց ևայնպես, երբ ասաց, «Ընդմիջտ հեռանում եմ», դա ցնցեց ինձ որպես նոր, անսպասելի մի բան: Երբեք չեմ մոռանա նրան՝ դռների մեջ, բլուզով, մոնը ձեռքին և պայծառ, սքանչելի, վճռական դեմքը»:

Այո՛, ինքնատիրապետումը չէր լքել նրան: Իրերը բերող օգնականներից դիմավորեց ճանապարհի կեսին:

«Յեխ էր, սայթաքում ու դժվարությամբ էինք շարժվում խավարի մեջ,- հիշում էր Ալեքսանդրա Լվովնան:- Կողաշենքի մոտ կապտագույն լույս առկայծեց: Հայրս ընդառաջ էր գալիս մեզ:

- Ա՛խ, դուք եք,- ասաց նա,- դե, այս անգամ բարեհաջող հասա: Չիերն արդեն լծում են: Ես առաջ գնամ, լուսավորեն ձեր ճանապարհը: Ա՛խ, ինչո՞ւ եք Մաշային ամենածանր իրերը տվել,- հանդիմանեց նա Վարվառա Միխայլովնային: Նրա ձեռքից վերցրեց զամբյուղն ու տարավ, իսկ Վարվառա Միխայլովնան օգնեց ինձ քարշ տալու ճամպրուկը: Հայրս առջևից էր գնում՝ ժամանակ առ ժամանակ սեղմելով էլեկտրական լապտերի կոճակը և անմիջապես էլ թողնելով, ինչից խավարն ավելի էր խտանում: Հայրս միշտ խնայող էր և այստեղ էլ, ինչպես միշտ, ավստում էր էլեկտրական էներգիան»:

Բայց երբ Տոլստոյն օգնում էր կառապանին լծել ձիերը, «ձեռքերը դոդում էին, չէին ենթարկվում, ու նա ոչ մի կերպ չէր կարողանում կոճկել ճարմանդը: Հետո կառասրահի անկյունում նստեց ճամպրուկի վրա ու անմիջապես վհատվեց:

- Չգում եմ,- ասաց,- որ ուր որ է կհասնեն մեր ետևից, և այդ ժամանակ ամեն ինչ կորած է: Արդեն առանց սկանդալի չենք մեկնի»:

Նրան ուղեկցող բժիշկ Մակովիցկին գրում է՝ կալվածատնից դուրս գալով Տուլայի խճուղի՝ Տոլստոյը, որ «մինչ այդ լուռ էր, տխուր, հուզված, կերկերուն ձայնով, ասես տրտնջալով ու ներողություն խնդրելով ասաց, որ չդի-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

մացավ ու Սոֆյա Անդրեևնայից թաքուն է հեռանում: Եվ անմիջապես էլ հարցրեց.

- Ավելի ճիշտ կլինի ո՞ր ուղղությամբ գնալ:

Երբ Շչոկինո կայարանում տեղավորվեցին երկրորդ կարգի վագոնի առանձին խցիկում, ու գնացքը շարժվեց, նա, հավանաբար, վստահ, որ Սոֆյա Անդրեևնան այլևս հետևից չի հասնի, ուրախ-ուրախ ասաց, որ լավ է գգում: Բայց սուրճ խմելով ու տաքանալով՝ հանկարծ ավելացրեց.

- Հիմա ի՞նչ է անելու Սոֆյա Անդրեևնան: Մեղքս գալիս է»:

Աստապովոյում, արդեն Տոլստոյի մահվանից հետո, Սոֆյա Անդրեևնան կհարցնի Մակովիցկուն.

- Իսկ ո՞ւր էիք գնում:

- Հեռու:

- Բայց Լայպես ո՞ւր:

- Սկզբում Դոնի Ռոստով, այնտեղ ուզում էինք արտասահմանյան անձնագրեր վերցնել:

- Իսկ հետո՞:

- Օդեսա:

- Հետո՞:

- Կոստանդնուպոլիս:

- Իսկ հետո՞ ուր:

- Բուլղարիա...

Տնից փախչելիս Տոլստոյն իսկապես ստույգ չգիտեր ուր է ուղղվում և որն է «հեռացումի» վերջնակետը: Այդպիսի հնարավոր կետերից մեկը Բուլղարիան էր, որտեղ, ինչպես հույս ուներ Տոլստոյը, իրեն չէին ճանաչի, չէին գտնի, և կկարողանար ինկոգնիտո ապրել: Նա չգիտեր (կամ մոռացել էր), որ Բուլղարիայում, ինչպես և այլ սլավոնական երկրներում, ահռելի թվով երկրպագուներ, տեղական «տոլստոյականներ» կան:

Շչոկինոյում մտնելով կայարանի շենք՝ նա բուֆետապանին հարցրեց՝ Գորբաչովից Կոզելսկ հաղորդակցություն կա՞: Հետո նույնը ճշտեց կայարանի հերթապահից: Հաջորդ օրը Սոֆյա Անդրեևնան տոմսավաճառից իմացավ՝ ուր է մեկնել ամուսինը

Տոլստոյը ցանկություն հայտնեց Գորբաչովից Կոզելսկ գնալ երրորդ կարգի՝ ամենաէժան վագոնով: Տեղավորվելով փայտե նստարանին՝ ասաց.

- Ինչ լավ է, ազա՛տ:

Բայց Մակովիցկին տագնապ հնչեցրեց: Գնացքն ապրանքատար էր, մեկ ուղևորատար վագոնով, որ լեփ լեցուն էր ու ծխախեղդ: Ուղևորները

նեղվածքի պատճառով տեղափոխվում էին տաքացվող ապրանքատար վագոնները: Գնացքի մեկնելուն չսպասելով՝ Մակովիցկին շտապեց կայարանապետի մոտ՝ պահանջելով, որ լրացուցիչ վագոն կցեն զնացքին: Կայարանապետը նրան ուղարկեց իր օգնականի մոտ, օգնականը՝ հերթապահի: Հերթապահը վագոնում էր և չէր կարողանում աչքը կտրել Տոլստոյից, որին ուղևորներն արդեն ճանաչել էին: Նա ուրախ կլիներ օգնել, բայց վագոնների համար պատասխանատու հերթապահը չէր: Այդ հերթապահն էլ վագոնում էր ու զննում էր Տոլստոյին: Մակովիցկին կրկնեց խնդրանքը:

«Նա մի տեսակ չկամ ու անվճռական (բառերն ատամների արանքից նետելով) երկաթուղային բանվորին ասաց, որ ավագ վագոնավարին փոխանցի երրորդ կարգի մի ուրիշ վագոն կցելու կարգադրությունը,- գրում է Մակովիցկին:- Վեց բուպեից շոգեքարշը վագոնը քաշեց մեր զնացքի մոտով: Տոմսերը ստուգելու համար ներս մտած ավագ վագոնավարը ժողովրդին հայտարարեց, որ ուրիշ վագոն է կցվելու, ու բոլորը կտեղավորվեն, թե չէ շատերը կանգնած էին վագոնում կամ հարթակներին: Բայց հնչեց երկրորդ զանգը, կես բուպեից՝ երրորդը, իսկ վագոնը դեռ չէին կցել: Ես վազեցի հերթապահի մոտ: Նա ասաց, որ ազատ վագոն չկա: Գնացքը շարժվեց: Վագոնավարից իմացա, որ կցելու տարած վագոնը պետք էր եկել կայարանի աշակերտներին տեղափոխելու համար»:

«Մեր վագոնն ամենավատն ու նեղվածքն էր, որով երբեք էլ վիճակվել էր ճամփորդել Ռուսաստանում,- հիշում է Մակովիցկին:- Մուտքն անհամաչափ էր երկարուկ միջանցքին: Ներս մտնողը զնացքը շարժվելիս կարող էր վնասվել՝ դեմքը՝ խփելով բարձրացրած թիկնակի անկյունին, որն ուղիղ դռան դիմաց էր. այն պետք էր շրջանցել: Վագոնի բաժանմունքները նեղ էին, նստարանների միջև տարածությունը՝ փոքր, ուղեբեռը նույնպես չի տեղավորվում: Տո՛թ»:

Տոլստոյը սկսեց շնչահեղձ լինել տոթից ու ծխախոտի ծխից: Հագնելով վերարկուն ու խոր ձմեռային կրկնակոշիկները, գոակը դնելով՝ նա դուրս եկավ հետին հարթակ: Բայց այնտեղ էլ էին ծխում: Անցավ առջևի հարթակ, որտեղ հանդիպակաց քամի էր փչում: Հարթակի վրա անցկացրած քառորդ ժամը Մակովիցկին «ճակատագրական» կկոչի: Այդքանը բավական էր մրսելու համար:

Վերադառնալով վագոն՝ Տոլստոյը գրույցի բռնվեց մի հիսնամյա գեղջուկի հետ՝ ընտանիքի մասին, տնտեսության, սայլապանության... Գեղջուկը խոսքասեր մարդ դուրս եկավ: Համարձակ դատողություններ էր անում

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

օդու վաճառքի մասին, բողոքում կալվածատիրոջից, որի հետ համայնքը համաձայնության չէր եկել անտառի հարցում. ինչի պատճառով իշխանությունները «Էկոլոգիա» էին արել գյուղում: Կողքին նստած հողաչափը սկսեց պաշտպանել կալվածատիրոջը և ամեն ինչում մեղադրել գյուղացիներին: Գեղջուկն իրենն էր պնդում:

- Մենք ձեզնից՝ գեղջուկներից շատ ենք աշխատում,- ասաց հողաչափը:

- Չի կարելի համեմատել,- առարկեց Տոլստոյը:

Գյուղացին համաձայնում էր, հողաչափը՝ վիճում... Մակովիցկու կարծիքով՝ «նա պատրաստ էր անվերջ վիճել, ու ոչ թե խոսակցության մեջ ճշմարտությունը գտնելու համար», այլ որ ցանկացած գնով ապացուցի իր իրավացիությունը: Վեճն անցավ հողահարկին, Գարվինին, գիտությանն ու կրթությանը: Տոլստոյը բորբոքվեց, վեր կացավ ու ժամից ավելի խոսում էր: Վագոնի երկու ծայրերից նրան էին մոտենում մարդիկ՝ գյուղացիներ, քաղքենիներ, բանվորներ, ինտելիգենտներ... Մի գիմնագիստուհի գրի էր առնում Տոլստոյի ասածը, բայց հետո թողեց և ինքն էլ սկսեց վիճել:

- Մարդիկ արդեն կարողանում են թռչել,- ասաց նա:

- Թողեք թռչունները թռչեն,- պատասխանեց Տոլստոյը,- իսկ մարդիկ պիտի քայլեն գետնի վրայով:

Բեյլովի գիմնագիտայի շրջանավարտ Ս. Թամանսկայան հուշ է թողել դրա մասին՝ հրապարակված «Գոլոս Մոսկվի» թերթում: Նա գրում է, որ «Տոլստոյը համարյա մինչև ծնկները հասնող սև վերնաշապիկով ու բարձրաճիտք սապոգներով էր: Գլխին կլոր մահուդե շլապայի փոխարեն սև մետաքսե թասակ էր»:

Երբ վիճելիս Տոլստոյը զցեց թաթմանն ու ու լապտերով սկսեց լուսավորել հատակը, որ գտնի, գիմնագիստուհին նկատեց.

- Ահա և գիտությունը պետք եկավ, Լև՝ Նիկոլակիչ:

Վեճից ու ծխախոտի ծխից հոգնատանջ Տոլստոյը նորից ելավ հարթակ՝ շունչ առնելու: Հողաչափն ու աղջիկը «նոր առարկություններով» հետևեցին նրան: Բեյլովում իջնելիս գիմնագիստուհին նրանից ինքնագիր խնդրեց: Տոլստոյը գրեց. Լև Տոլստոյ:

Գյուղացին Տոլստոյին խորհուրդ տվեց.

- Դու վանք մտի, ա՛յ հեր: Աշխարհական կյանքը թողելու, հոգին փրկելու ժամանակն է: Հենց վանքում էլ կաց:

«Լ.Ն.-ն նրան պատասխանեց բարի ժպիտով»:

Վագոնի վերջում հարմոն էին նվագում ու երգում: Տոլստոյը հաճույքով լսում ու զովում էր:

Գնացքը դանդաղ էր գնում՝ հարյուրից մի քիչ ավելի վերստը կարելով վեցուկես ժամում: Վերջիվերջո Տոլստոյը «հոգնեց նստելուց»: «Այդ դանդաղ ընթացքը ռուսական երկաթուղով օգնեց սպանելու Տոլստոյին»,- գրում է Մակովիցկին:

Հոկտեմբերի 28-ին, երեկոյան մոտ ժամը հինգին իջան Կոզելսկում:

Տոլստոյն այդ ժամանակ դեռ չգիտեր՝ Յասնայա Պոլյանայում ինչ է կատարվել իր անսպասելի մեկնումից հետո: Չգիտեր, որ Սոֆյա Անդրեևնան երկու անգամ փորձել է ինքնասպան լինել:

Հոկտեմբերի 28-ի առավոտյան Սոֆյա Անդրեևնան ուշ վեր կացավ՝ ժամը 11-ին մոտ, և անմիջապես ինչ-որ վատ բան զգաց ծառաների պահվածքում: Վազեց Մաշայի մոտ.

- Որտե՞ղ է պապան:

- Մեկնել է:

- Ո՞ւր:

- Չգիտեմ:

Մաշան նրան տվեց հոր հրաժեշտի նամակը:

«Իմ մեկնումը կվշտացնի քեզ: Ցավում եմ դրա համար, բայց հասկացիր ու հավատա, որ այլ կերպ վարվել չէի կարող: Իմ վիճակը տանը անտանելի է դառնում, անտանելի է դարձել: Մնացած ամեն ինչից բացի, ես չեմ կարող ապրել ճոխության այն պայմաններում, որի մեջ ապրել եմ, և անում եմ այն, ինչ սովորաբար անում են իմ տարիքի ծերունիները՝ հեռանում եմ աշխարհիկ կյանքից, որ իրենց կյանքի վերջին օրերն ապրեն մեռության ու խաղաղության մեջ...»:

Սոֆյա Անդրեևնան արագ նայեց նամակը: Գլուխը ցնցվում էր, ձեռքերը դողում էին, դեմքը պատվել էր կարմիր բծերով: Մինչև վերջ չկարդալով՝ նամակը նետեց հատակին և «Գնացե՛լ է, ընդմիջտ է զնացել, մնա՛ս բարով, Մա՛շա, ես ինձ ջո՛րը կզցեմ» գոչելով՝ վազեց դեպի լճակը:

Նրա ինքնասպանության առաջին փորձը մանրամասն նկարագրված է Վալենտին Բուլգակովի օրագրում.

«Երբ առավոտյան, ժամը տասնմեկին եկա Յասնայա Պոլյանա, Սոֆյա Անդրեևնան հենց նոր էր արթնացել ու հագնվել: Մտավ Լև Նիկոլաևիչի սենյակն ու չզտավ նրան: Վազեց «ռեմինգտոնի սենյակ» (*որտեղ Տոլստոյի ձեռագրերի պատճեններն էին մեքենագրվում-Պ.Բ.*), հետո՝ գրադարան: Այստեղ նրան հայտնեցին Լև Նիկոլաևիչի հեռանալու մասին, տվեցին նրա նամակը:

- Աստվա՛ծ իմ,- մրմնջաց Սոֆյա Անդրեևնան:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Պատռեց ծրարը ու կարդաց առաջին տողը. «Իմ մեկնումը կվշտացնի քեզ...»: Չկարողացավ շարունակել՝ նամակը նետեց գրադարանի սեղանին ու վազեց իր սենյակը՝ շնջալով.

- Ասովա՛ծ իմ, նա ի՛նչ է անում ինձ հետ...

- Ախր կարդացեք նամակը, գուցե այնտեղ ինչ-որ բան կա,- ետևից կանչում էին Ալեքսանդրա Լվովնան ու Վարվառա Միխայլովնան, բայց Սոֆյա Անդրեևնան նրանց չէր լսում:

Այդ պահին ներս է ընկնում ծառաներից մեկն ու գոռում, որ Սոֆյա Անդրեևնան վազեց գրասայգի, լճակի կողմը:

- Գնացեք նրա ետևից, դուք սապոզներով եք,- ինձ դիմեց Ալեքսանդրա Լվովնան ու վազեց կրկնակոշիկները հագնելու:

Ես վազեցի բակ ու նետվեցի դեպի այգին: Սոֆյա Անդրեևնայի մոխրագույն շորը երևաց հեռվում, ծառերի արանքում. լորենիների ծառուղով արագ իջնում էր ներքև, դեպի լճակը: Ծառերի ետևը թաքնվելով՝ գնացի նրա հետևից: Հետո վազեցի:

- Այդպես մի վազեք,- իմ ետևից կանչեց Ալեքսանդրա Լվովնան:

Հետ նայեցի: Արդեն մի քանի հոգի էին գալիս իմ ետևից. խոհարար Սեմյոն Նիկոլաևիչը, սպասավոր Վանյան և ուրիշներ:

Ահա Սոֆյա Անդրեևնան կողքի թեքվեց ու շարունակեց վազել դեպի լճակը: Ծածկվեց թփերի ետևում: Ալեքսանդրա Լվովնան, շրջագզեստը խշշացնելով, սրընթաց թռչում է իմ կողքով: Հապաղել չէր կարելի. Սոֆյա Անդրեևնան արդեն լճակի մոտ էր:

Հասանք դարիվարին: Սոֆյա Անդրեևնան հետ նայեց ու տեսավ մեզ: Նա արդեն ներքևում էր: Գնում էր դեպի կամրջակը (լողարանի մոտ), որից սպիտակեղենն էին պարզաջրում: Ըստ ամենայնի, շտապում էր: Հանկարծ սայթաքեց ու մեջքի վրա ընկավ կամրջակին... Տախտակներից կառչելով՝ սողաց դեպի եզրը ու շրջվեց ջրի մեջ:

Ալեքսանդրա Լվովնան արդեն կամրջակի վրա է: Նույնպես ընկնում է սայթաքում տեղում... Ես էլ եմ կամրջակին: Ալեքսանդրա Լվովնան նետվում է ջուրը: Ես էլ նույնն եմ անում: Կամրջակից դեռ տեսնում եմ Սոֆյա Անդրեևնային. դեմքը՝ վեր, բերանը՝ բաց, բերանն արդեն երևի ջուր է լցվել, ձեռքերն անօգնական տարածած՝ սուզվում է ջրի տակ... Ահա ջուրը ծածկեց նրան

Բարեբախտաբար ես ու Ալեքսանդրա Լվովնան ոտքի տակ զգում ենք հատակը: Սոֆյա Անդրեևնան սայթաքելով հաջող է ընկել: Եթե ուղիղ կամրջակից նետվեր ջուրը, չէինք հանի: Միջին լճակը շատ խորն է, այն-



տեղ մարդիկ են խեղդվել... Ափին մոտ մեր կրծքից է:

Ալեքսանդրա Լվովնայի հետ Սոֆյա Անդրեևնային վեր ենք քաշում, նստեցնում իշտանուկի գերանին, հետո՝ հենց կամրջակին:

Վրա է հասնում սպասավոր Վանյա Շուրակը: Երկուսով դժվարությամբ բարձրացնում ենք ծանրացած, լրիվ թաց Սոֆյա Անդրեևնային ու տանում ավտո:

Ալեքսանդրա Լվովնան, ականջ դնելով իր ետևից տնից դուրս եկած Վարվառա Միխայլովնայի հորդորին, վազում է շորերը փոխելու:

Վանյան, ես, խոհարարը Սոֆյա Անդրեևնային զգույշ տանում ենք տուն: Նա ափսոսում է, որ իրեն հանել ենք ջրից: Քայլերը դժվար է: Մի տեղ անուժ նստում է գետնին.

- Մի քիչ նստեմ... Թողեք նստեմ...

Բայց դրա մասին մտածել իսկ չի կարելի. Սոֆյա Անդրեևնան արագ պիտի փոխի հագուստը:

Ես ու Վանյան նստարան անելով՝ խաչում ենք ձեռքներս, խոհարարի ու մյուսների օգնությամբ նստեցնում Սոֆյա Անդրեևնային ու տանում: Բայց նա շուտով խնդրում է իջեցնել իրեն»:

Ինքնասպանության առաջին փորձից հետո Սոֆյա Անդրեևնային սկսեցին հետևել: Չեռքից վերցրին ավիոնը, գրչահատ դանակը, ծանր պրեսպայեն: Բայց նա անընդհատ կրկնում էր, որ ինքնասպանության ձևը կգտնի: Մեկ ժամ անց նրան նորից հաջողվեց դուրս վազել տնից: Բուլգակովը ետևից հասավ լճակի ճանապարհին և ուժով հետ բերեց:

- Որդու պե՛ս, հարազատ որդու պե՛ս,- ասում էր Սոֆյա Անդրեևնան:

Նա կրկին սպառնում էր դուրս նետվել պատուհանից, ջրհորն ընկնել: Բայց միևնույն ժամանակ կայարան մարդ ուղարկեց՝ իմանալու, թե որտեղ են գնվել տոմսերը: Իմանալով, որ Տոլստոյն ու Մակովիցկին մեկնել են Գորբաչևո, սպասավորին պատվիրեց հեռագիր ուղարկել, բայց ոչ իր ստորագրությամբ. «Անմիջապես վերադարձիր: Մաշա»: Սպասավորը դրա մասին հայտնեց Մաշային, և նա անմիջապես մի ուրիշ հեռագիր ուղարկեց. «Մի անհանգստանա, իսկականը միայն Ալեքսանդրա ստորագրությամբ հեռագրերն են»:

- Ես կգտնե՛մ նրան,- ճշում էր Սոֆյա Անդրեևնան:- Ինձ ինչպե՞ս եք հսկելու: Դուրս կթռչեմ պատուհանից, կգնամ կայարան: Ի՞նչ եք անելու: Միայն թե իմանամ՝ որտեղ է: Այ այդ ժամանակ բաց չեմ թողնի, օրուզիչեր կհսկեմ, նրա դռան տակ կքնեմ:

Հոկտեմբերի 28-ի երեկոյան Չերտկովը հեռագիր ստացավ. «Գիշերում ենք Օպտինոյում: Վաղը՝ Շամորդինո: Հասցեն՝ Պողբորկի: Առողջ եմ: Տ. Նիկոլաս»:

*Օպտինյան անապատ*

Տոլստոյի «հեռանալու» ամենահանելուկային և առ այսօր չպարզաբանված պահերից մեկը նրա այցելությունն է Օպտինյան անապատ: Եկեղեցուց վտարված գրողն ինչո՞ւ է ճանապարհի առաջին կանգառ ընտրում հենց ուղղափառ վանքը: Դա չի՞ նշանակում, արդյոք, որ կյանքի վերջում Տոլստոյն ուզում էր հաշտվել Եկեղեցու հետ, իսկ գուցե և գղջալ նրա հանդեպ գործած մեղքերի համար: Այդ հարցն այսօր էլ բաց է մնում:

Հոկտեմբերի քսանութին, ցերեկվա ժամը 4.50-ին Տոլստոյը Մակովիցկու հետ գնացքից իջավ Կոզելսկում: Լև նիկոլակիչն առաջինը դուրս եկավ վագոնից: Քանի դեռ բժիշկն ու բեռնակիրը իրերը տեղափոխում էին սպասարան, Տոլստոյն անհետացավ, բայց շուտով վերադարձավ և ասաց, որ երկու կառք է վարձել մինչև Օպտինյան անապատ: Վերցրեց ուտելիքով զամբյուղը և Մակովիցկուն ու բեռնակրին առաջնորդեց կառքերի մոտ: Կառապանը, որ տեղափոխելու էր Տոլստոյին ու բժշկին, Ֆյոդոր Նովիկովն էր: Մի քանի օրից նա կյանքում առաջին անգամ հարցազրույց տվեց թերթերին և այսպես էր պատմում իր ուղևորի մասին.

- Նրա մասին հաստատ բան չգիտեմ, բայց զգում եմ, որ սիրտը բոլորի սրտի պես է: Ուզում եմ կառքի ծածկոցն արձակեմ, չի թողում, ասում է՝ ես կանեմ, Ֆյոդոր, ես էլ ձեռներ ունեմ: Եկեղեցի չի գնում, բայց շրջում է վանքերով:

Ճանապարհին Նովիկովը աղապարոնից ծխելու թույլտվություն է խնդրում (սկզբում Մակովիցկուն էր պարոն կարծել. նա ավելի ճոխ էր հագնված, քան Տոլստոյը, որին կառապանը ծեր գեղջուկի տեղ էր դրել): Տոլստոյը թույլատրեց, բայց հետո հետաքրքրվեց՝ ինչքան փող է ծախսվում թութունի և օղու վրա: Ստացվեց, որ մի տարվա թութունի փողով կարելի է կես ձի առնել, օղու գնով՝ ամբողջ երկու ձի: Տես ինչ վատ է՝ հառաչեց Տոլստոյը: Հա՛, վատ է՝ համաձայնեց գեղջուկը:

Ժիզդրա գետի լաստի վրա (այդ գետի ափին է Օպտինյան) Տոլստոյը խոսքի բռնվեց լաստավար-վանականի հետ: Վանքի հյուրատան ծառայող մոնթ Միխայիլին հարցրեց՝ կարո՞ղ է հյուրատանն ընդունել Եկեղեցուց վտարվածին:

«Իսկ նրանք,- հետագայում պատմում էր եղբայր Միխայիլը,- երկուսով էին եկել: Թակեցին դուռը: Բացեցի: Լև Նիկոլաևիչը հարցնում է. «Կարելի՞ է մտնել»: Ասացի. «Խնդրեմ»: Իսկ նա ասում է. «Գուցե ինձ չի՞ կարելի: Ես Տոլստոյն եմ»: -«Ինչո՞ւ,- ասում եմ,- մենք բոլորի համար էլ ուրախ ենք, ով ցանկություն ունի մեզ մոտ գալու»: Այդ ժամանակ նա ասում է. «Դե, բարև, եղբայր»: Ես պատասխանում եմ. «Բարև ձեզ, Չերդ պայծառափայլություն»: Նա ասում է. «Հո չնեղացա՞ր, որ քեզ եղբայր կոչեցի: Բոլոր մարդիկ եղբայրներ են»: Ես պատասխանում եմ. «Ոչ մի դեպքում, և ճշմարիտ է, որ բոլոր մարդիկ եղբայրներ են»: Այդպես էլ իջևանեց մեզ մոտ: Ես նրան ամենալավ սենյակը տվեցի»:

Ընդարձակ, երեք լուսամուտով, շղարշե վարագույրներով սենյակ էր, անկյունում Փրկչի մեծ սրբապատկերով, հինավուրց բազմոցով ու դրա առջև դրված կլոր սեղանով, երկրորդ փափուկ բազմոցով ու փայտե, հատակի մեջ ամրացված շիրմաներով, որոնք փակում էին հարմարավետ անկողինը. այդ սենյակը Տոլստոյի սրտով էր:

- Ինչ լավ է այստեղ,- ասաց նա:

Երբ պատկում էր քնելու, ևս մի սեղանիկ ու մոմ խնդրեց: Քնելուց առաջ քեյ խմեց: Միխայիլն անտոնովյան խնձորներ բերեց: Տոլստոյը գովեց խնձորներն ու հարցրեց.

- Մեղը չե՞ք ունենա, եղբայր Միխայիլ: Չէ՞ որ դուք դեռ պարեգոտ չեք առել, ուրեմն ձեզ «եղբայր» կկոչեն:

Միխայիլը բերեց մեղրը...

Սակայն Օպտինոյում անցկացրած գիշերն անհանգիստ էր: Միջանցքով կատուներ էին վագում, ցատկում պատի տակ դրված կահույքի վրա, իսկ պատից այն կողմ քնած էր Տոլստոյը: Հետո բարձր լաց եղավ ինչ-որ կին: Եղբայրն էր մահացել, եղբայր-կրպակավարը: Առավոտյան նա եկավ կոմսի մոտ և աղաչում էր օգնել իր փոքրիկներին:

Առավոտյան ժամը յոթին Տոլստոյը դուրս եկավ սենյակից ու միջանցքում հանդիպեց Ալեքսեյ Սերգեևնային: Բայց նա որտեղի՞ց գիտեր, որ Տոլստոյը Օպտինոյում է: Տոլստոյը դեռ Շչոկինից հեռագիր էր ուղարկել Սաշային. «Ամենայն հավանականությամբ կգնանք Օպտինո... Խնդրում եմ, աղավնյա՛կս, հենց իմանաս՝ որտեղ եմ, իսկ դա շուտով կիմանաս, տեղեկացրու ինձ ամեն ինչի մասին՝ ինչպես է ընդունվել իմ մեկնելու լուրը, և որքան մանրամասն, այնքան լավ»:

«Անհանգիստ քնեցի,- հոկտեմբերի 29-ին օրագրում գրում է Տոլստոյը,- առավոտյան՝ Ալյոշա Սերգեևնկոն... Չհասկանալով բանն ինչ է՝ ուրախ ըն-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

դունեցի նրան: Բայց նրա բերած լուրերը սարսափելի են: Նրանք հասկացել են որտեղ են, ու Սոֆյա Անդրեևնան խնդրել է Անդրեյին (*որդուն-Պ.Բ*) ամեն գնով գտնել ինձ: Ու ես հիմա, 29-ի երեկոյան, սպասում եմ Անդրեյին... Ինձ համար շատ ծանր էր ամբողջ օրը, ասե՛նք, ֆիզիկապես էլ թույլ եմ»:

«Օրագիր միայն ինձ համար». «Մերգեներկոն է եկել: Ամեն ինչ նույնն է, միայն ավելի վատ: Միայն թե մեղք չգործեմ: Եվ չչարանամ: Հիմա չկա»:

Չկա<sup>օ</sup>:

«Եթե մեկը պիտի ջրահեղձ լինի, ապա հաստատ ոչ մի դեպքում նա, այլ ես,- տրտնջում էր նա Սաշային ուղարկած նամակում:- Ես մի բան եմ ցանկանում՝ ազատվել նրանից, այդ ստից, կեղծավորությունից ու չարությունից, որով հագեցած է նրա ողջ էությունը... Տեսնո՞ւմ ես, սիրելի՛ս, ինչ վատն եմ ես»:

Եթե գիշերը չհաշվենք, Տոլստոնը Օպտինյան անապատում մնաց մոտ ութ ժամ: Այդ ընթացքում փորձեց երեխաների հարցում օգնել խնդրարկուին՝ այրի Դարյա Օկայոնովային, նրան իր որդի Մերգեյին ուղղված նամակ հանձնելով: Հետո Ալեքսեյ Մերգեներկոյին թելադրեց «Գործուն միջոց» փոքրիկ հոդվածը մահապատիժների վերաբերյալ, որը գրել էր Կոռնեյ Չուկովսկու խնդրանքով: Եվ երկու անգամ փորձեց հանդիպել Օպտինյան անապատի սրբահայր Իոսիֆի հետ:

Ճգնարանի ճանապարհին Տոլստոյը հանդիպեց մեկ այլ հյուրընկալի՝ գվարդիայի նախկին զինվոր հայր Պախոմի հետ: Նա, արդեն իմանալով, որ Տոլստոյը վանքում է, ընդառաջ էր ելել նրան:

- Սա ի՞նչ շինություն է:

- Հյուրատուն:

- Կարծես թե այստեղ իջևանել եմ: Ո՞վ է հյուրընկալը:

- Ես՝ մեղավոր հայր Պախոմը: Դո՞ւք եք, ձերդ պայծառափայլություն:

- Ես Լև Նիկոլակիչ Տոլստոյն եմ: Ահա գնում եմ հայր Իոսիֆի մոտ, սրբահոր, բայց վախենում եմ անհանգստացնել, ասում են՝ հիվանդ է:

- Հիվանդ չի, թույլ է: Գնացեք, ձերդ պայծառափայլություն, կընդունի ձեզ:

- Առաջ որտե՞ղ էիք ծառայում:

Պախոմը Պետերբուրգում տեղակայված ինչ-որ գվարդիական գնդի անուն տվեց:

- Հա՛, գիտեմ... Տեսություն, եղբայր: Կներեք, որ այդպես եմ ասում, հիմա ես բոլորին եմ այդպես կոչում: Բոլորս մեկ տիրակալի ծառայող եղ-

բայրներ ենք:

Մի հանդիպում էլ կար. հյուրատան ծառայող տղայի հետ: «Ինձ հետ էլ խոսեց Լև Նիկոլակիչը,- հպարտությամբ պատմում էր տղան:- Հարցրեց՝ ովքեր են ծնողներս, հետո մեղմ խառնեց մազերս ու ասում է՝ ի՞նչ է, եկել ես ճգնավոր դառնաս»:

Ամեն ինչ լավ էր, քանի Տոլստոյը չէր հասել ճգնարան: Չգիտես ինչու, այդպես էլ չհանդիպեց հայր Իոսիֆին, ինչի համար էլ, ամենայն հավանականությամբ, վանք էր եկել, բնավ ջերմ ընդունելություն չակնկալելով, որը նրան ցույց տվեցին հասարակ բնակիչները: Ինչո՞ւ հայր Իոսիֆը չհրավիրեց Տոլստոյին, ում հետ նախկինում մի քանի անգամ հանդիպել էր իր հոգևոր դաստիարակ Ամբրոսին:

Այդ հանդիպման չկայանալու պատճառները գնահատելիս ուղղափառության ջատագովների ու նրանց հակառակորդների կարծիքը միանական է: «Գոռոզություն» ասում են առաջինները: «Գոռոզություն» ասում են երկրորդները:

Բախավել էին երկու հեղինակություն՝ եկեղեցական և աշխարհիկ: Երկու սրբահայր: Մեկը չհրավիրեց, մյուսը չգնաց: Իսկ եթե հրավիրե՞ր: Իսկ եթե գնա՞ր: Գուցե տեղի ունենար Եկեղեցու և Տոլստոյի հաշտությունը: Ո՛չ պաշտոնական, ո՛չ հանուն Միևորդի, ո՛չ հանուն հայրապետների, ո՛չ հանուն պետության: Հանուն մենաստանի շարքային վանական Միխայիլի ու Պախումի, հանուն Կորյուշկա տղայի, որը մեծահասակների մոտ կպարծենար Ռուսաստանի Մեծ գրողի հետ հանդիպումով: Հանուն այն վանականների, որոնք, Մակովիցկու վկայությամբ, հավաքվել էին լաստի մոտ, երբ Տոլստոյը մեկնում էր Օպտինոյից:

- Ափսոս Լև Նիկոլակիչը, ա՛խ, Աստված,- շնջում էին վանականները:- Հա՛: Խեղճ Լև Նիկոլակիչ:

Տոլստոյը բազրիքի մոտ կանգնած գրուցում էր լաստավարի՝ ակնոցավոր ծեր վանականի հետ: Կարեկցաբար հարցուփորձ էր անում նրա տեսողության մասին: Մի ծիծաղելի դեպք հիշեց իր կազանյան ջահելությունից, երբ ուսանող էր, ու մի թաթար առաջարկել էր. «Ա՛ռ էս ակնոցը»:- «Ինձ հարկավոր չի»:- «Ո՞նց հարկավոր չի, հիմա ամեն օրինավոր աղա ակնոց է դնում»:

«Գետանցումը կարճատև էր,- գրում է Մակովիցկին,- մեկ րոպե»։ Մի րոպե և Տոլստոյի ու եկեղեցու հաշտության հնարավորությունը ընդմիջտ կորսված էր: Հետո արդեն ոչինչ հնարավոր չէր ուղղել:

Իսկ ի՞նչ էր կատարվել:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Մենաստանի վանահայր, ծայրագույն վարդապետ Քսենոֆոնտը այդ ժամանակ հիվանդ էր: Վիրահատությունից հետո մի քանի օր առաջ էր վերադարձել Մոսկվայից: Ասենք, վանահայրը չէր էլ կարող ինքնագուրխ, առանց Կալուգայի քահանայապետի թույլտվության հանդիպել «հերետիկոս» Տոլստոյի հետ:

«Պարտքս են համարում խոնարհաբար տեղեկացնել Չերոյ Սրբազնությանը, որ հոկտեմբերի անցած 28-ին, Բելյովից եկող երեկոյան ժամը 5-ի գնացքով իմ տնօրինությանը վստահված անապատ է ժամանել կոմս Լև Տոլստոյը, իր ասելով՝ բժշկի ուղեկցությամբ... Հոկտեմբերի 29-ի առավոտյան ժամը 7-ին կայարանից նրա մոտ եկավ ինչ-որ երիտասարդ, երկար ինչ-որ բան էին գրում սենյակում, և նույն կառքով էլ էլ նրա բժիշկը մեկնեց ք. Կոզելսկ: Նույն օրվա առավոտյան ժամը 8-ի կողմը Տոլստոյը գնաց զբոսնելու, երկու անգամն էլ՝ մենակ: Երկրորդ անգամը նրան տեսել են դատարկ մասնաշենքի մոտով անցնելիս: Մասնաշենքը մենաստանի պարսպից դուրս է ու կոչվում է «Հյուպատոսական», որտեղ նա եղել էր դեռ հանգուցյալ սրբահայր Ամբրոսիի կենդանության օրոք՝ հանգուցյալ գրող Կ. Լեոնտևի մոտ, հետո անցել է ճգնարանի մոտով, բայց ոչ սրբահայրերի, ոչ ինձ՝ վանահոր մոտ չի եղել: Մենաստան ու ճգնարան չի մտել: Այդ զբոսանքից Տոլստոյը վերադարձել է ցերեկվա ժամը մեկին մոտ, ճաշել ու նույն օրվա ժամը երեքին մեկնել է Շամոդոլինո, որտեղ ապրում է նրա միանձնուհի քույրը: Հյուրատան այցելուների գրառումների մատյանում գրել է. «Լև Տոլստոյը շնորհակալություն է հայտնում ընդունելության համար»:

Սա վանահայր Քսենոֆոնտի «զեկուցագիրն» է Կալուգայի եպիսկոպոս Վենիամինին (Մուրատովսկուն)։ Դրանից կարելի է հասկանալ հետևյալը. Տոլստոյը չի եղել ոչ միայն ճգնարանում, այլև մենաստանում, չի անցել Սուրբ դարպասները: Հյուրատունն ու ճգնարանը մենաստանի տարածքից դուրս էին: «Լ.Ն.-ն զբոսնելու էր գնացել ճգնարանի մոտ,- գրում է Մակովիցկին:- Մոտեցավ հարավ-արևմտյան անկյանը: Անցավ հարավային պատի երկայնքով... ու գնաց անտառ... Ժամը 12-ին Լ.Ն.- նորից զբոսնելու գնաց ճգնարանի մոտ: Դուրս եկավ հյուրատանից, գնաց ձախ, հասավ Սուրբ դարպասներից, վերադարձավ ու գնաց աջ, նորից վերադարձավ Սուրբ դարպասների մոտ, հետո, աշտարակը շրջանցելով, գնաց դեպի ճգնարան»:

Սովորական զբոսանք: Բայց Մակովիցկին նկատում է. «Լ.Ն.-ն երբեք առավոտյան երկու անգամ չէր զբոսնում»: Բժիշկն ուշադրություն է դարձ-

նում Տոլստոյի պահվածքի տարօրինակություններին. «Լ.Ն.-ն ըստ երևույթին մեծ ցանկություն ուներ զրուցելու սրբահայրերի հետ»:

Չի հաջողվում: Երկրորդ զբոսանքից վերադառնալով՝ նա ասում է.

- Ինքս սրբահայրերի մոտ չեմ գնա: Եթե իրենք կանչեին, կգնայի:

Այս բառերի մեջ են Տոլստոյի «գոռոզության» արտահայտությունը տեսնում: Ինչո՞ւ պարզապես չթակեց Իոսիֆի տան դուռը. սանդղամուտն իջնում էր ճգնարանի պարսպից այն կողմ, որ ցանկացած ուխտավոր կարողանար ընդունելություն խնդրել նրա խցակցի միջոցով: Ինչո՞ւ էր սպասում, որ «կանչեն»: Իոսիֆը գիտե՞ր նրա գալու մասին:

Գիտե՞ր:

Ահա թե Օպտինյան անապատի «Տարեգրության» մեջ ինչ է պատմում սրբահայր Իոսիֆի խցակիցը.

«Սրբահայր Իոսիֆը հիվանդ էր, ես նստած էի նրա մոտ: Ներս է մտնում սրբահայր Վարսոնոֆին և ասում, որ հայր Միխայիլն է ուղարկել՝ զգուշացնելու, որ Լ.Տոլստոյը գալիս է մեզ մոտ: «Ես,- ասում է,- հարցրի նրան՝ ո՞վ ասաց քեզ»: Ասում է. «Հենց Տոլստոյն էլ ասաց»: Սրբահայր Իոսիֆն ասում է. «Եթե գա, կընդունենք սիրով ու հարգանք, և ուրախությամբ, չնայած և նա վտարված է, բայց եթե ինքն է եկել, չէ՞ որ ոչ ոք չի ստիպել նրան, այլ կերպ չենք կարող»: Հետո ինձ ուղարկեցին նայելու պարսպից այն կողմ: Ես տեսա Լև Նիկոլակիչին ու սրբահայրերին զեկուցեցի, որ նա տանը մերձ է շրջում, մեկ մոտենում, մեկ հեռանում է: Սրբահայր Իոսիֆն ասում է. «Դժվար է նրա համար: Չէ՞ որ մեզ մոտ կենարար ջրի է եկել: Գնա, հրավիրիր, եթե մեզ մոտ է եկել: Հարցրու նրան»: Ես դուրս եկա, բայց նա արդեն չկար, գնացել էր: Շատ չէր հեռացել, բայց ձիով էր, հետևից հասնել չէր լինի...»:

Սա հակասում է Մակովիցկու գրառումներում արձանագրվածին: Երկրորդ զբոսանքից հետո Տոլստոյը ոտքով վերադարձավ հյուրատուն ու հասցրեց պինդ ճաշել: «Լ.Ն.-ին շատ համեղ թվացին մենաստանի շիին ու լավ եփած հնդկաձավարի շիլան՝ արևածաղկի ձեթով. շատ կերավ»: Նա հասցրեց վճարել հյուրընկալին. «Ինչքա՞ն պիտի վճարեմ: - Ըստ ջանադրության: - Երեք ռուբլին բավական է»: Գրառում արեց պատվավոր այցելուների մատյանում ու ոտքով հասավ լաստի մոտ, ուր երկու կառքով ետևից հասան Սերգենկոն ու Մակովիցկին: Լաստի մոտ Տոլստոյին, Մակովիցկու հաշվարկով, ճանապարհում էր 15 վանական: Սրբահայր Իոսիֆի խցակիցը նրանց թվում չէր:

Պարզապես պետք էր կանչել Տոլստոյին: Նա չգնաց Իոսիֆի մոտ, քան-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

զի գիտեր, որ նա հիվանդ է: Նա, իր դաստիարակությամբ, առանց հրավերի չէր կարող անհանգստացնել ծեր, հիվանդ մարդուն: Տոլստոյը դրա մասին Շամորդինոյում ասաց քրոջը՝ Մարիա Նիկոլանային: Ու նաև ասաց՝ վախենում էր, որ իրեն՝ «վտարվածին» չեն ընդունի: Նրան խանգարեց նրբանկատությունը: Սրբահայր Իոսիֆին էլ իր հերթին հայտնի չէր Տոլստոյի գալստյան պատճառը: Միայն լուրերով գիտեր, որ կոմսը ցանկանում է խոսել իր հետ: Վերջապես, Իոսիֆը չգիտեր ամենագլխավորը՝ «հեռանալու» մասին: Թերթերում դրա վերաբերյալ տեղեկատվություն հայտնվեց միայն հաջորդ օրը:

Տոլստոյի մահից հետո մի միանձնուհի Մակովիցկու ներկայությամբ հանդիմանել էր Պախոմին, թե ինչու Տոլստոյին չի տարել սրբահոր մոտ՝ իմանալով, որ կոմսն ուզում է զրուցել նրա հետ: «Մի տեսակ չհամարձակվեցի,- արդարանում էր Պախոմը:- Չէի ուզում աներես լինել»:

Տոլստոյն Օպտինյան անապատից մեկնեց Շամորդինոյի կանանց մենաստանը՝ Մարիա Նիկոլանայի մոտ...

Նա քրոջն ասաց, որ պատրաստվում է նորից վերադառնալ Օպտինո ու խոսել հայր Իոսիֆի հետ: Բայց արդեն ուշ էր:

### *Շամորդինո և ավելի հեռուն*

Դեռ Յասնայա Պոլյանայում, հոկտեմբերի 28-ի գիշերը, տնից հեռանալիս Տոլստոյը դատերը՝ Սաշային ասել էր, որ ավելի շուտ կմեկնի «Մաշենկայի»՝ քրոջ՝ Մարիա Մերգենայի մոտ, Շամորդինո:

Վալերիան Տոլստոյի, դը Կլենի և ապօրինի դստեր՝ Ելենայի հետ անձնական դրամաներից հետո Մարիա Նիկոլանայն վերջապես կանգնել էր միանձնության ճշմարիտ ճանապարհին: Սկզբում հաստատվեց Բելյովի կանանց մենաստանում, Տուլայի նահանգում, որտեղից 1889 թվականին գրում էր եղբորը.

«Չէ՞ որ դու, իհարկե, հետևում ես իմ ներքին, հոգևոր կյանքին, ոչ թե նրան, թե ես ինչպես եմ տեղավորվել, և ուզում ես իմանալ՝ գտե՞լ եմ ինչ փնտրում էի, այսինքն՝ բարոյական բավարարություն ու հոգևոր խաղաղություն և այլն: Եվ հենց այդ էլ ինձ համար դժվար է բացատրել քեզ, հենց քեզ. չէ՞ որ եթե ասեմ չեմ գտել (չափազանց արագ կլիներ), այլ հույս ունեմ գտնել ինչ ինձ պետք է, ապա հարկ կլինի բացատրել, թե ինչ ճանապարհով և ինչու հատկապես այստեղ, այլ ոչ մեկ ուրիշ վայրում: Չէ՞ որ դու այդ ամենը չես ընդունում, բայց ընդունում ես, որ պետք է հրաժարվել ամենայն պարապից, ավելորդից, որ պետք է աշխատես քեզ վրա, քո թերություններն



ուղղելու համար, հաղթահարես թուլությունները, հասնես հնազանդության, անխռովության, այսինքն հնարավոր անտարբերության այն ամենի հանդեպ, որ կարող է խաթարել հոգեկան աշխարհը: Աշխարհիկ կյանքում դրան չեմ կարող հասնել, շատ դժվար է. փորձեցի հրաժարվել այն ամենից, ինչ ինձ շեղում էր՝ երաժշտությունից, անիմաստ գրքերի ընթերցումից, տարբեր անպիտանի մարդկանց հետ հանդիպումներից, պարսպ խոսակցություններից... Չափազանց մեծ կամքի ուժ է հարկավոր, որ այդ ամենի շրջանակում կյանքդ կազմակերպես այնպես, որ հոգու անդորրը խախտող ոչինչ չդիպչի քեզ, չէ՞ որ ես քեզ հավասարվել չեմ կարող. ես ամենասովորական կին եմ. եթե տամ ամեն ինչ, ապա պետք է տեղավորվեմ մեկնումեկի մոտ. աշխատել, այսինքն սեփական աշխատանքով ապրել ես չեմ կարող: Եվ ի՞նչ եմ անելու: Ի՞նչ գոհ պիտի բերեմ Աստծուն: Իսկ առանց գոհաբերության, առանց աշխատանքի փրկվել հնարավոր չէ. ահա, ուրեմն, մեզ՝ թույլ ու միայնակ կանանց համար, իմ կարծիքով, ամենալավ, օրինավոր վայրն այն է, որտեղ ես հիմա ապրում եմ»:

Նա վերջնականապես աշխարհաթող եղավ 1891 թվականին՝ հաստատվելով Շամորդինոյի մենաստանում, տնակ-խցում, որը հատուկ կառուցվել էր նրա հոգևոր հոր՝ օպտինյան սրբահայր Ամբրոսիի նախագծով: Միանձնուհի դառնալով՝ նա չէր դադարում տազնապել եղբոր համար: «...Ես քեզ շատ, շատ սիրում եմ, աղոթում եմ քեզ համար, զգում եմ, թե ինչ լավ մարդ ես, լավն ես քո բոլոր Ֆետերից, Ստրախովներից ու մյուսներից: Բայցևայնպես, շատ ափսոս, որ ուղղափառ չես, որ չես ցանկանում միանալ Քրիստոսին... Եթե ուզեի՝ ը միայն միանալ Նրան... ինչպիսի՜ պայծառացում ու խաղաղություն կզգայիր քո հոգում, և ինչքան բան, որ հիմա քեզ անհասկանալի է, պարզ կդառնար արև օրվա պես»,- գրում էր նա եղբորը 1909 թվականին:

Դրան Տոլստոյը պատասխանեց օրագրում. «Այո, վանական կյանքը շատ լավ կողմեր ունի. գլխավորն այն է, որ բացառվում են գայթակղություններն ու ժամանակը զբաղեցված է անվնաս աղոթքներով: Դա հրաշալի է, բայց ինչո՞ւ ժամանակը չլցնես քեզ ու մյուսներին կերակրելու աշխատանքով, որը հատուկ է մարդուն»:

Տոլստոյը մեկ անգամ չէ, որ եղել էր Շամորդինոյում, և միանձնուհիները, ներառյալ մայրապետը, սիրում էին նրան՝ չնայած Եկեղեցուց վտարված լինելուն: Մի անգամ Շամորդինոյում այցելելով քրոջը՝ Տոլստոյն անհաջող կատակեց. «Այստեղ յոթ հարյուր հիմար միանձնուհի եք, որ ոչինչ չեն անում»: Շամորդինյան մենաստանը լեփ լեցուն էր բնակչության ամեն-

նաաղքատ շերտերի կույտերով ու կանանցով, որովհետև Ամբրոսին մահվանից առաջ հրամայել էր ընդունել բոլոր ցանկացողներին: Եղբոր կատակին ի պատասխան Մարիա Նիկոլաննան Յասնայա ուղարկեց իր ձեռքով ասեղնագործած բարձիկը՝ մակագրությամբ. «Շ-յան յոթ հարյուր հիմարներից մեկը»: Տոլստոյը ոչ միայն գնահատեց այդ պատասխանը, այլև ամաչեց իր անմիտ խոսքերից: Այդ բարձիկն այսօր էլ դրված է Տոլստոյի բազկաթռչին «Յասնայա Պոլյանա» թանգարան-դաստակերտի իր աշխատասենյակում:

Մարիա Նիկոլաննան այնքան էլ սովորական շամորդիյան միանձնուհի չէր: Մահվանից առաջ, հաղորդություն ընդունելիս, նա ֆրանսերեն էր զառանցում: Ազատ ապրելուն սովոր՝ նրա համար դժվար էր հնազանդվել, ամեն ինչի համար թույլտվություն հարցնել իր հոգեհորից (Ամբրոսիի մահվանից հետո նրա հոգևոր հայրը սրբահայր Իոսիֆն էր) կամ վանամորից: Նա կարոտում էր կրթությամբ իրեն հավասար մարդկանց հետ շփմանը, թերթեր ու ժամանակակից գրքեր էր կարդում: «Նրա խցում,- հիշում էր դուստրը՝ Ելիզավետա Վալերիանովնա Օբոլենսկայան,- բոլոր սենյակներում սրբապատկերների առաջ և ննջարանում, պատկերախորշի առաջ կանթեղներ էին վառվում, նա դա շատ էր սիրում. բայց եկեղեցում մոմ չէր վառում, ինչպես անում էին մյուսները, սրբապատկերները չէր համբուրում, աղոթքի կարգ չէր կատարում, պարզ ու կամացուկ աղոթում էր իր տեղում, որտեղ աթոռ էր դրված ու փոքրիկ գորգ էր փռված: Սկզբնական շրջանում դրան կշտամբանքով էին նայում, իսկ ոմանք նաև դատապարտում էին, բայց հետո վարժվեցին... Ես մի անգամ մորս մոտ եկա մալարիայով տառապող աղջկաս՝ Նատաշայի հետ: Մայրս մի ջահել, շատ հաճելի միանձնուհու դրեց նրա հետ, ամենուր միասին էին, բայց երբ ուզում էր աղջկաս տանել սուրբ ջրհորը՝ հավատացնելով, որ բավական է սառը ջուր լցնի վրան, հիվանդությունն անմիջապես կանցնի, մայրս ասաց.

- Նատաշա, ջուրը թեև սուրբ է, բայց ավելի լավ է չցնել:

Ամռանը երկու ամիս հյուրընկալվում էր եղբոր մոտ՝ Յասնայա Պոլյանայում: Դրա համար թույլտվություն ստանալը հեշտ չէր, ստիպված էին լինում դիմել Կալուգայի եպիսկոպոսին: Վերջին անգամ Յասնայայում էր 1909 թվականի ամռանը: Մեկնելիս լաց էր լինում, ասելով, որ էլ չի տեսնի եղբորը...»:

Հոկտեմբերի 29-ի ուշ երեկոյան Մակովիցկու ու Մերգենկոյի հետ գալով Շամորդինո՝ Տոլստոյը նույնիսկ չմտավ հյուրանոցի համար, որտեղ իջել էին. անմիջապես գնաց քրոջ մոտ:

Մարիա Նիկոլաննայի խցում նրա դուստր Ելիզավետան ու միանձնուհի քույրերն էին: Նրանք հուզիչ տեսարանի վկա դարձան. մեծն Տոլստոյը հեկեկում էր մեկ քրոջ, մեկ զարմուհու ուսին՝ պատմելով թե ինչ էր կատարվում Յասնայա Պոլյանայում վերջին ժամանակները և ինչ է եղել այնտեղ իր «հեռանալուց» հետո: «Մտածիր, թե ինչ սարսափելի է. ջո՛րն է ընկել»:

Չարմուհուն նա «խղճալի ու ծեր» թվաց. «Փաթաթված էր իր դարչնագույն գլխանոցով, որի տակից մի տեսակ խղճալի ցցվել էր ճերմակ մորուքը: Նրան հյուրանոցից ուղեկցած միանձնուհին մեզ հետո ասաց, որ նա մեզ մոտ գալիս օրորվում էր»:

Հոր խղճալի վիճակը նկատել էր նաև հաջորդ օրը Շամորդինո հասած դուստրը՝ Մաշան: «Ինձ թվում է՝ պապա՛ն արդեն զոջում է, որ մեկնել է»,- ասաց զարմուհի Ելիզավետա Օբոլենսկայային:

«Թե՛յ խմելիս մայրս սկսեց հարցուփորձ անել Օպտինյան անապատի մասին,- հիշում էր Ե.Վ. Օբոլենսկայան:- Նրան շատ դուր էր եկել (չէ՞ որ նախկինում մի անգամ չէ, որ եղել էր այնտեղ), ասաց.

- Հաճույքով այնտեղ կմնայի: Կլրեի ամենածանր ապաշխարությունը, միայն թե չստիպեին խաչակնքել ու եկեղեցի գնալ»:

1991 թվականի հունվարի16-ին Տոլստոյի ֆրանսիացի թարգմանիչ Շառլ Մոլոմոնին ուղարկած նամակում Մարիա Նիկոլաննան գրում էր. «Դուք կուզեիք իմանալ, թե եղբայրս ի՞նչ էր փնտրում Օպտինյան անապատում: Սրբահայր-հոգևոր հայր կամ իմաստուն մարդ, որը մենության մեջ ապրում է Աստծո և իր խղճի հետ, որը կհասկանար նրան և կկարողանար մի քիչ թեթևացնել նրա մեծ վիշտը: Ես կարծում եմ՝ ոչ այդ էր փնտրում, ոչ մյուսը: Նրա վիշտը չափազանց բարդ էր. նա պարզապես ուզում էր խաղաղվել և ապրել հանդարտ հոգևոր իրավիճակում»:

Հյուրանոցում Տոլստոյը քնկոտ էր, ցրված: Մակովիցկուն Գուշան Իվանովիչ ասաց (Պետրովիչի փոխարեն), «ինչը երբեք չէր պատահել»։ Հաջորդ օրը, երկրորդ այցից հետո քրոջ մոտից հեռանալիս մոլորվեց միջանցքում ու ոչ մի կերպ չէր կարողանում գտնել մուտքի դուռը: Մինչ այդ քույրը նրան պատմել էր, որ գիշերներն իր մոտ է գալիս ինչ-որ «թշնամի», շրջում է միջանցքում, շոշափում պատերը, դուռը փնտրում: «Ես էլ մոլորվել էի թշնամու պես»,- ասաց Տոլստոյը: Դրանք վերջին բառերն էին, որ նրանից լսեց Մարիա Նիկոլաննան:

Հոկտեմբերի երեսունին Տոլստոյը մեկնեց Շամորդինո գյուղ և ամիսը հինգ ռուբլով վարձեց այրի Ալյոնա Խոմկինայի տունը՝ մաքուր ու տաք վերնասենյակով:

Չնայած վատ ինքնագագողությանը, Տոլստոյն առաջվա պես հետաքրքրասեր էր: Պատրաստվում էր ուսումնասիրել մենաստանի գործերի վիճակը, նայել արհեստանոցներն ու տպարանը: Նրա օրագրում չորս ստեղծագործությունների պլաններ էին, որ գրի էր առել դեռ Օպտինոյում. «1. Ֆեոդորիտն ու սատկած ձին. 2. Հավատքի բերվողից հավատի եկած քահանան. 3. Ստրախովի վեպը: Գրուշենկա տնտեսուհին. 4. Որս. մենամարտ և դիմահարներ»: Քրոջ տնային հավաքածուում գտնելով Մ.Ա. Նովոյուովի «Կրոնական-փիլիսոփայական գրադարանի» գրքերից՝ վերցրեց դրանք ու հետաքրքրությամբ ուսումնասիրում էր հյուրանոցում, հատկապես Գերցենի հողվածը սոցիալիզմի մասին՝ հիշելով, որ Յասնայա Պոլյանայում է թողել այդ թեմայով իր անավարտ հողվածը:

Դստեր ու Վարվառա Ֆեոկրիտովայի գալուց առաջ Տոլստոյը վերջնական որոշել էր մնալ Շամոդոյի մոտ: Բայց Սաշայի գալուստը փոխեց բոլոր պլանները...

Այդ ժամանակ Յասնայա Պոլյանայում էին հավաքվել հեռագրերով կանչված բոլոր երեխաները, բացի Լև Լվովիչից, որը Փարիզում էր:

Սերգեյը, Տատյանան, Իլյան, Անդրեյն ու Միխայիլը հոր խնդիրը չէին քննարկում: Գլխավոր հոգսը հիվանդ մայրն էր:

«Մայրս մտավ մեզ մոտ՝ սրահ,- հիշում է Սերգեյ Լվովիչը:- Վատ էր հազնված, ինչ-որ տնային շորով, չաանրված: Ինձ ապշեցրեց նրա դեմքը՝ հանկարծակի ծերացած, կնճռոտ, ցնցվող, փախչող հայացքով: Դա ինձ համար նոր արտահայտություն էր: Եվ խղճում էի նրան, և սարսափելի էր: Նա անընդհատ խոսում էր, ժամանակ առ ժամանակ լալիս և ասում, որ անպայման ինքնասպան կլինի, որ թույլ չեն տվել ջրահեղձ լինել, բայց իրեն կսպանի քաղցով: Ես բավական կտրուկ ասացի, որ նման պահվածքը հակառակ ազդեցություն կունենա հորս վրա, որ պետք է հանդարտվի ու բուժի նյարդերը. այդ ժամանակ հայրս կվերադառնա: Ի պատասխան նա ասաց. «Ո՛չ, դուք նրան չեք ճանաչում, նրա վրա կարելի է ազդել միայն խղճահարությամբ» (այսինքն նրա մեջ խղճահարություն արթնացնելով): Ես մտածեցի, որ դա ճիշտ է, և չնայած առարկում էի, բայց զգում էի, որ առարկություններս թույլ են: Ասացի՝ քանի որ հայրս հեռացել է, չի կարող շուտ վերադառնալ, պետք է սպասել, ու որոշ ժամանակ անց գուցե և վերադառնա Յասնայա: Հատկապես ծանր էր, որ մորս անընդհատ պետք էր պահել հսկողության տակ: Չէինք հավատում, որ նա կարող է ինքնասպանության լուրջ փորձ անել, բայց ինքնասպանություն մտանկում՝ կարող էր, և չզգալով վտանգի աստիճանը՝ կարող էր իսկապես վնասել իրեն...»:

Իսկ հա՞յրը: Հայտնի չէ որտեղ է, 82 տարեկանում: Գրա վերաբերյալ Անդրեյը միանգամայն իրավացիորեն ասում էր, որ հորը գտնելը ամենահեշտ գործն է, որ նահանգապետն ու ոստիկանությունը հավանաբար արդեն գիտեն՝ որտեղ է նա, և միամտություն կլինե՞ր մտածել, որ Լև Նիկոլաևիչը կարող է որևէ տեղ թաքնվել: Թերթերն էլ, ըստ երևույթին, շուտով հոտը կառնեն: Նույնիսկ յուրատեսակ մրցում կսկսվի՝ «ով առաջինը կգտնի Տոլստոյին»:

Կարդալով Մաշայի բերած նամակները՝ Տոլստոյը ճնշված էր: Հենց այդ տնից բերած նամակներն էլ նրա հետագա փախուստի պատճառը դարձան:

Ամենասարսափելին Մոֆյա Անդրեևնայի նամակն էր.

«Լյո՛վոչկա, աղավնյա՛կս, վերադարձիր տուն, փրկիր ինձ ինքնասպանության կրկնությունից: Լյո՛վոչկա, ողջ կյանքիս ընկե՛ր, ինչ ուզես՝ կանեմ, ամեն ճոխություն կթողնեմ ընդհանրապես, համերաշխ կլինեմ բարեկամներիդ հետ, կբուժվեմ, հեզ կլինեմ, սիրելի՛ս, սիրելի՛ս, վերադարձիր, չե՞ որ պետք է փրկել ինձ, չե՞ որ Ավետարանում ասված է, որ ոչ մի պատրվակով չի կարելի լքել կնոջը: Սիրելի՛ս, աղավնյա՛կս, հոգո՛ւս ընկեր, փրկի՛ր, վերադարձի՛ր, վերադարձիր գոնե հրաժեշտ տալու մեր հավերժական բաժանումից առաջ:

Ո՞ր ես դու: Ո՞ր ես: Առո՞ղջ ես, արդո՞ք: Լյո՛վոչկա, մի տանջիր ինձ, աղավնյա՛կս, կծառայեմ քեզ սիրով և իմ ողջ էությանբ ու հոգով, վերադարձիր ինձ մոտ, վերադարձիր. Աստծու սիրուն, Աստծու սիրուն, որի մասին ասում ես բոլորին, ես քեզ այնպիսի հնազանդ, անձնագրի սեր կտամ: Ազնվորեն ու հաստատ խոստանում եմ, աղավնյա՛կս, և մենք ամեն ինչ կլուծենք սիրաբար. կմեկնենք՝ ուր կուզես, կապրենք՝ ինչպես կուզես:

Դե, մնաս բարով, մնաս բարով, գուցե՝ ընդմիշտ...

Քո Սոնյա

Մի՞թե ընդմիշտ ես լքել ինձ: Չե՞ որ չեմ դիմանա այդ դժբախտությանը, չե՞ որ կսպանես ինձ: Սիրելի՛ս, փրկիր ինձ մեղքից, չե՞ որ դու չես կարող խաղաղ ու երջանիկ լինել, եթե սպանես ինձ: Լյո՛վոչկա, իմ սիրելի բարեկամ, մի թաքցրու ինձնից՝ որտեղ ես և թույլ տուր գամ հանդիպեմ քեզ հետ, աղավնյա՛կս, քեզ չեմ վշտացնի, խոստանում եմ, հեզ ու սիրով կվերաբերվեմ քեզ: Բոլոր երեխաներս այստեղ են, բայց ինձ չեն օգնի իրենց ինքնավստահ դեսպոտիզմով. իսկ ինձ մի բան է պետք, պետք է քո սերը, անհրաժեշտ է, որ տեսնեմ քեզ: Բարեկա՛նս, թույլ տուր գոնե հրաժեշտ տամ քեզ, ասեմ վերջին անգամ, թե ինչպես եմ սիրում քեզ: Կանչիր ինձ կամ

ինքդ արի: Մնաս բարով, Լյո՛վոչկա, ես դեռ փնտրում ու կանչում եմ քեզ: Ի՞նչ տառապանք է հոգուս»:

Տոլստոյն այս խելագար նամակից հետևություններ չանել չէր կարող: Նախ. կինն իրեն հանգիստ չի թողնի: Կամ կհասնի ետևից, կամ Յասնայա Պոլյանայից կհետապնդի ինքնասպանության մշտական սպառնալիքներով: Երկրորդ. երեխաները չեն կարողանա օգնել հիվանդ մորը. «...չեն օգնի ինձ իրենց ինքնավստահ դեսպոտիզմով»:

Երկրորդ նամակը Չերտկովից էր. «Անկարող եմ բառերով արտահայտել, թե ինձ համար ինչ ուրախություն էր լուրը, որ Դուք հեռացել եք... Համոզված եմ, որ Չեր քայլից լավ կլինի բոլորի և առաջին հերթին խեղճ Ս.Ա.-ի համար, որքան էլ արտաքուստ ազդի նրա վրա»:

Ի՞նչ է նշանակում «արտաքուստ»: «Արտաքուստ» Սոֆյա Անդրեևնան արդեն երկու անգամ փորձել էր ինքնասպան լինել:

Ամենից արտառուչը Սերգեյ Լվովիչի նամակն էր. «Կարծում եմ՝ մամա՛ն ջղախին հիվանդ է և մեծ հաշվով անմեղսունակ, և դուք պետք է բաժանվեք (գուցե՝ վաղուց պիտի բաժանվեիք), որքան էլ դա ծանր է երկուսիդ համար: Կարծում եմ նաև, որ եթե մամա՛-ին որևէ բան պատահի, ինչը հնարավոր եմ համարում, դու քեզ ոչ մի բանում չպիտի կշտամբես: Վիճակն անելանելի էր, և ես կարծում եմ՝ դու ընտրել ես իսկական ելքը...»:

Տատյանա Լվովնան հորը խոստանում էր մորը հետ պահել ճակատագրական քայլից՝ օգտագործելով «վախը կամ իշխանությունը»:

Իլյա Լվովիչն ափսոսում էր, որ հայրն «այդ խաչին չդիմացավ մինչև վերջ». «Երկուսիդ կյանքն էլ ապրված է, բայց պետք է գեղեցիկ մահանալ»:

Անդրեյ Լվովիչը բացահայտ հայտարարում էր, որ ոչ ինքը, ոչ մյուս որդիները պատասխանատվություն չեն վերցնի մոր կյանքի համար. «Միակ միջոցը վարձու մարդկանց մշտական հսկողությունն է: Նա, իհարկե, ողջ ուժով կդիմադրի դրան, և համոզված եմ՝ երբեք չի ենթարկվի: Իսկ մեր՝ եղբայրներիս վիճակը տվյալ դեպքում անտանելի է, քանի որ չենք կարող թողնել մեր ընտանիքներն ու ծառայությունը՝ մշտապես մեր մոր կողքին լինելու համար»:

Տոլստոյի փախուստը Շամորդինոյից հոկտեմբերի 31-ի վաղ առավոտյան Յասնայա Պոլյանայից «հեռանալու» հայելային կրկնությունն էր:

«Ժամը 4-ին Լ.Ն.-ն մտավ ինձ մոտ, արթնացրեց, ասաց, որ մեկնում ենք հայտնի չէ ուր, և որ քնել է 4 ժամ ու հասկացել, որ էլ չի քնի (ուստի) որոշել է առավոտյան գնացքով մեկնել Շամորդինոյից.- գրում է Մակովից-

կին:- Լ.Ն.-ն, ինչպես և Յասնայա Պոլյանայից մեկնելուց առաջ, վաղ առավոտյան, նստեց նամակ գրելու Սոֆյա Անդրեևնային, իսկ հետո գրեց նաև Մարիա Նիկոլանային: Ես սկսեցի իրերը դասավորել: 15 բոպեից Լ.Ն.-ն արթնացրեց Ալեքսանդրա Լվովնային ու Վարվառա Սիխայրովնային»:

Շամոդրոյից փախչելուց առաջ Չերտկովին ուղղված նամակում, Տոլստոյը գրում էր. «Մեկնում ենք հարավ, հավանաբար Կովկաս: Քանի որ ինձ համար մեկ է որտեղ, որոշել եմ ընտրել հարավը, մանավանդ այն պատճառով, որ Սաշան հագում է»: Սակայն հիվանդ թոքերով դատեր համար լավագույն վայրը Դրիմն էր: Նախօրեին նրանք հենց Դրիմի, ոչ կովկասյան ուղղությամբ էին քննարկում հյուրանոցում՝ կռացած Բոլյուի երկաթուղային ուղեցույցի վրա: «Որոշեցինք՝ Դրիմ,- գրում է Մակովիցկին:- Հրաժարվեցինք, որովհետև այնտեղ տանող մի ճամապարհ կա, իսկ այնտեղից՝ ոչ մի տեղ: Ասեմք վայրն էլ առողջարանային է, իսկ Լ.Ն.-ն խուլ վայր է փնտրում»:

Հրաժարվելով Դրիմից՝ «խոսում էին Կովկասի, Բեսարաբիայի մասին: Քարտեզի վրա նայեցին Կովկասը, հետո՝ Լզովը»: «Ոչնչի վրա կոնկրետ կանգ չառանք,- հիշում է Մակովիցկին:- Ավելի շուտ՝ Լզովի, որտեղից 28 վերստի վրա ապրում է Լ.Ֆ. Անենկովան՝ Լ.Ն.-ի հոգևոր ընկերը: Չնայած Լզովը չափազանց մոտիկ էր թվում, Սոֆյա Անդրեևնան կարող էր գալ»:

Սաշան, հիշելով քարտեզի իրիկնային ուսումնասիրությունը, հիշատակում է Նովոչերկասկը: «Մտածում էինք հասնել Նովոչերկասկ: Նովոչերկասկում իջևանել Ելենա Սերգեևնա Դենիսենկոյի մոտ, փորձել Իվան Վասիլևիչի օգնությամբ արտասահմանյան անձնագրեր ստանալ և, եթե հաջողվի, մեկնել Բուլղարիա: Իսկ եթե չհաջողվեր՝ Կովկաս, հորս համակիրների մոտ...»:

Բոլոր տարբերակներն էլ վատն էին:

Լզովը խուլ գավառական քաղաք էր, ընդամենը հինգ հազարից մի քիչ ավելի բնակչությամբ, Կուրսկից 60 մղոն հեռավորության վրա, Մեյն գետի ափին: Տոլստոյի երկրպագու Լեոնիլա Ֆոմինիչնա Անենկովայի կալվածքը Լզովից 28 վերստի վրա էր: Տոլստոյին այնտեղ ուրախությամբ կընդունեին: «Ինչ կրոնասեր կին է», - նամակներից մեկում Լեոնիլա Ֆոմինիչնայի մասին ասում է Տոլստոյը: Սակայն Անենկովայի մոտ տեղափոխվելը կնոջից հեռանալուց հետո չափազանց դաժան հարված կլիներ վերջինիս: Ուստի Տոլստոյը չէր պատրաստվում ընդմիջտ մնալ այնտեղ: Միայն «հանգստանալ»: Բայց եթե ընտրեին Սուխինիչի-Բոլյանսկ երկաթուղին, նրանց հետա-

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

գա ճանապարհը կանցներ Կիևով, ուր Տոլստոյն ընդհանրապես չէր պատրաստվում մեկնել: Հակառակ դեպքում հարկ կլիներ վերադառնալ վտանգվելով, որ Սոֆյա Անդրեևնան կհասնի ետևերից: Այսպիսով, Լզովը նույնպես «փակուղի» էր:

Եվ Տոլստոյն ընտրում է երկաթուղային չվացուցակի տեսանկյունից ամենամոտ, բայց աշխարհագրական առումով ամենաերկար ճանապարհը՝ Կոզելսկ-Գորբաչևո-Վորոնեժ-Նովոչերկասկ:

Մեկնելուց առաջ նա նամակ թողեց քրոջն ու զարմուհուն.

«Միրելի բարեկամներ, Մաշենկա և Լիզոնկա:

Մի զարմացեք և մի մեղադրեք ինձ, որ մեկնում եմք առանց ձեզ կարգին հրաժեշտ տալու: Չեմ կարող արտահայտել երկուսիդ, հատկապես քեզ, աղավնյա կա Մաշենկա, իմ շնորհակալությունը քո սիրո և իմ փորձության հանդեպ կարեկցանքի համար: Չեմ հիշում, որ, քեզ միշտ սիրելով, երբևէ այնպիսի քնքշություն զգացած լինեի քո հանդեպ, ինչպես այս օրերին և որով մեկնում եմ: Մեկնում եմք անկանխատեսելի, որովհետև վախենում եմ, որ Սոֆյա Անդրեևնան ինձ կգտնի այստեղ: Իսկ գնացքը միայն մեկն է՝ ժամը 8-ին...

Համբուրում եմ, սիրելի բարեկամներ, և այնպես բերկրալի սիրում եմ ձեզ:

Լ.Տ.»:

Արդեն գնացքում՝ փախստականները շարունակում են քննարկել, թե հիմա ուր են գնալու: «Գորբաչևից հետո կրկին խորհուրդ արեցինք ու կանգ առանք Նովոչերկասկի վրա,- գրում է Մակովիցկին:- Այնտեղ, Լ.Ն.-ի զարմուհու մոտ հանգիստ առնել մի քանի օր ու որոշել, թե վերջնականապես ուր ենք մեկնելու՝ Կովկաս, թե՞ Բուլղարիա կամ Հունաստան՝ Լ.Ն.-ին ուղեկցողների համար անձնագրեր ձեռք բերելով («Գուք բոլորդ կեցության իրավունք ունեք, իսկ ես ձեր սպասավորը կլինեմ՝ առանց իրավունքի»,- ասաց Լ.Ն.-ն)»:

Նրանք պատրաստվում էին հատել սահմանը՝ 82-ամյա հիվանդ ծերունուն, ճանաչելի արտաքինով, աշխարհահռչակ Լև Տոլստոյին սպասավոր ներկայացնելով: Բայց դա անհնար էր: Նախ. նրանց կբացահայտեին հենց սահմանին, որովհետև լուրը, որ Լև Տոլստոյը ռուսերեն վատ խոսող սլովակ բժշկի հետ փախել է տնից, արդեն տարածվել էր աշխարհով մեկ: Երկրորդ. գնացքում նրանց գաղտնի ուղեկցում էր «Ռուսակոե սովո» թերթի թղթակից Կոնստանտին Օռլովը: Նա Տոլստոյին հետևում էր Կոզելսկից՝ հանձ-



նարարություն ունենալով յուրաքանչյուր խոշոր երկաթուղային կայարանից թերթին հայտնել Տոլստոյի և նրա ուղեկիցների գտնվելու վայրի մասին: Եթե նրանք նույնիսկ հասնեին Նովոչերկասկ, այնտեղ նրանց կղիմավորեր թղթակիցների ամբոխը Ռուսաստանի ողջ հարավից: Բայց առանց այդ էլ բոլոր թերթերը գրում էին Տոլստոյի փախուստի մասին:

Լրագրողներն արդեն հասցրել էին հարցաքննել յասնապոլյանյան կառնապան Ֆիլկային, որը Տոստոյին հասցրել էր Շչոկինո, կոմսի տան սպասավորներին ու Յասնայա Պոլյանայի գեղջուկներին, բոլոր կայարանների տոմսավաճառներին ու բուֆետապաններին, որտեղով անցել էր Տոլստոյը, Կոզելսկից նրան Օպտինյան անապատ տարած կառնապանին, հյուրատան միաքաններին:

Հեռանալու, թաքնվելու, աշխարհին անտեսանելի դառնալու նրա երազանքը բացարձակապես անիրագործելի էր:

Իրավացի էր Տոլստոյի Անդրեյ որդին: Որոնումները վերածվել էին յուրատեսակ մարզական մրցման՝ ով շուտ կգտնի Լև Տոլստոյին: «Բնականաբար, նրա նոր կեցավայրը շատ արագ կբացահայտվի», - գրում էր «Պետերբուրգսկայա գազետան»:

Գորբաչևո կայարանում Սաշան թարմ թերթեր գնեց ու ցույց տվեց հորը:

- Ամեն ինչ արդեն հայտնի է, բոլոր թերթերը լցված են իմ մեկնումով, - գոչեց նա:

Վագոնում ուղևորներից շատերը կարդում էին թերթերն ու քննարկում գլխավոր նորությունը:

«Իմ դիմաց նստել էին երկու երիտասարդ, - հիշում է Սաշան, - գռեհիկ-պճնամուղ հագնված, գլանակներն ատամների արանքում:

- Տես ծերուկն ի՞նչ օյին է խաղացել, - ասաց նրանցից մեկը: - Վայ թե Սոֆյա Անդրեևնային առանձնապես դուր եկած չլինի, - ու տխմար քրքջաց, - բռնել ու գիշերով փախել է:

- Էս էլ քեզ ողջ կյանքում նրան խնամելը, - ասաց մյուսը, - երևի էնքան էլ անուշ չի եղել էդ խնամքը:

Շուտով վագոնով մեկ տարածվեց, որ Տոլստոյն այդտեղ է: Հետաքրքրասեր ուղևորները սկսեցին աչք ածել նրանց: Միայն Տոլստոյի ուղեկցողների ուժերը բավարար չէին այդ ճնշմանը դիմադրելու համար: Այդ ժամանակ միջամտեցին վագոնավարները:

- Ի՞նչ եք կպել ինձ, - ասում էր նրանցից մեկը: - Իսկապես, ի՞նչ եք ուզում: Ախր ասում են՝ Տոլստոյը նախավերջին կայարանում իջել է»:

Տոլստոյն այդ ամենն արդեն չէր տեսնում ու չէր լսում: Քնած էր՝ պլեդով ծածկված, դատարկ կուպեում: Իսկ երբ արթնացավ, պարզվեց, որ ծանր հիվանդ է: Եվ Մաշան հանկարծ տեսավ, որ հարազատ տնից փախել է ոչ թե մեծ գրողը, այլ 82 տարեկան, հիվանդ ու անօգնական մի ծերունի:

«Ժամը չորսին հայրս ինձ կանչեց իր մոտ. դողում էր: Ես լավ ծածկեցի նրան, ջերմաչափ դրեցի. բարձր ջերմություն: Ու հանկարծ այնպիսի թուլություն զգացի, որ ստիպված էի նստել: Ես մոտ էի կատարյալ հուսահատության: Երկրորդ կարգի ծխախեղդ վագոնի հեղձուկ խցիկ, շուրջը լրիվ օտար, հետաքրքրասեր մարդիկ, ցուրտ, անտարբեր գնացքը համաչափ թխկթխկում է՝ մեզ տանելով ավելի ու ավելի հեռուն, մեզ տանում է դեպի անհայտություն, իսկ զգեստների կույտի տակ, դեմքը բարձի մեջ թաղած, կամացուկ տնքում է ուժատ, հիվանդ ծերունին: Պետք է շորերը հանել, պառկեցնել, տաք թեյ տալ... Իսկ գնացքը սլանում է ավելի ու ավելի հեռու... Ո՞ր: Որտե՞ղ է հանգրվանը: Որտե՞ղ է մեր տունը...»:

Մակովիցկին չափեց ջերմությունը. 38,1: Մի ժամից՝ 38,5: Սրտի դադարներ սկսվեցին: Ու պարզ դարձավ, որ Կովկասը չեղարկվում է:

Հասկանալով, որ Տոլստոյն այլևս չի կարող շարունակել ճանապարհը՝ բժիշկը վազեց վագոնավարների մոտ՝ հարցնելու, թե երբ կհասնեն մոտակա քաղաքը, ուր հնարավոր կլինի իջևանել հյուրանոցում: Նրանք խորհուրդ տվեցին հասնել Կոզլով:

Գնացքը գնում էր Կոզելսկ-Բելյով-Գորբաչևո-Վոլովո-Գանկով-Աստապովո-Ռանենբուրգ-Բոգոյավլենսկ-Կոզլով-Գոբյազի-Գրաֆսկայա-Վորոնեժ-Լիսկի-Միլերովո-Նովոչերկասկ-Ռոստով երթուղով:

Ո՛չ Գանկովում, ո՛չ Աստապովոյում, ո՛չ Ռանենբուրգում, ո՛չ Բոգոյավլենսկոյեում մույնիսկ կարգին հյուրանոց չկար, որտեղ հնարավոր կլիներ ապահովել հիվանդին անհրաժեշտ խնամքը: Բայց Տոլստոյն արդեն այնպիսի վիճակում էր, որ ստիպված էին իջնել Աստապովոյում: Երեկոյան ժամը 6.35-ն էր:

«Ես շտապեցի կայարանապետի մոտ, որը կառամատույցին էր, ասացի, որ գնացքում է Լ.Ն.Տոլստոյը, որը հիվանդացել է, նրան հանգիստ է պետք, անկողին, ու խնդրեցի ընդունել մեզ... Հարցրի՝ ինչպիսին է նրա բնակարանը»,- գրում է Մակովիցկին:

Կայարանապետ Իվան Իվանովիչ Օզոլինը, որը ազգությամբ լատվիացի էր ու դավանանքով՝ լյութերական, ապշած նայում էր գունատ, անարյուն դեմքով և ոչ ռուսական խոսվածքով տարօրինակ պարոնին, որն ասում էր, թե կայարան է ժամանել հիվանդ Լև Տոլստոյն ու չգիտես ինչու ցանկա-

նում է իջևանել իր բնակարանում: Բայց վագոնավարները հաստատեցին բժշկի ասածը:

Հանգամանքների երջանիկ բերումով՝ պարզվեց, որ Օգոլինը Տոլստոյի երկրպագուն է: Նա անմիջապես համաձայնեց ընդունել գրողին, հետաձգեց գնացքի մեկնումը, որ Տոլստոյն ու ուղեկիցները հանգիստ կարողանան հավաքել իրերն ու իջնել: Բայց միանգամից չէր կարող լքել պաշտոնավայրը, երբ գնացքներն անընդհատ ժամանում ու մեկնում էին: Սկզբում Տոլստոյին տարան կանանց սպասասրահ, որովհետև այնտեղ չէին ծխում: Կառանատույցով Տոլստոյն առանց օգնության էր քայլում՝ վերարկուի օձիքը բարձրացրած: Յուրտ էր, սուր քամի էր փչում: Սրահում նստեց բազմոցի ծայրին, գլուխը քաշեց օձիքի մեջ, ձեռքերը թաքցրեց թևերում ու սկսեց ննջել՝ կողքի ընկնելով: Մակովիցկին բարձ առաջարկեց: Նա հրաժարվեց:

«Երբ եկանք կայարան,- հիշում էր Ալեքսանդրա Լվովնան,- հայրս նստել էր կանանց սենյակում, բազմոցին, հագին իր դարչնագույն վերարկուն էր, ձեռքին՝ ձեռնափայտը: Ողջ մարմնով դողում էր, ու շրթունքները թույլ շարժվում էին: Ես առաջարկեցի պառկել բազմոցին, բայց նա հրաժարվեց: Կանանց սրահի դուռը կողպված էր, ու դռան առաջ կանգնած էր հետաքրքրասերների ամբոխը՝ սպասելով Տոլստոյի անցնելուն: Ժամանակ առ ժամանակ սենյակ էին խուժում տիկիներ, հայելու առաջ շտկում էին մազերն ու գլխարկները և դուրս գալիս... Երբ հորս թևանցուկ տանում էինք կայարանի սրահով, հետաքրքրասերների բազմություն հավաքվեց: Նրանք հանում էին գլխարկներն ու խոնարհվում հորս: Հայրս մի կերպ էր քայլում, բայց պատասխանում էր նրանց՝ դժվարությամբ ձեռքը գլխարկին տանելով»:

Օգոլինի տունն Տոլստոյին արդեն պետք էր ոչ թե ուղեկցել, այլ տեղափոխել: Բայց ինչպե՞ս: Ամբոխից ոչ մեկը, այդ թվում և լրագրող Օռլովը օգնության չեկան բժշկին ու երկու աղջիկներին: Գլխարկ հանում էին, խոնարհվում, բայց օգնություն չէին առաջարկում: Վերջապես մի ծառայող վճռեց ետևից, թևատակերից գրկել Տոլստոյին: Հետո պարզվեց, որ նրա հայրը ծնունդով Յասնայա Գոլյանայից է: Կայարանից դուրս գալիս մոտեցավ նաև երկաթուղու պահակը, նա էլ առջևից թևատակերից գրկեց Տոլստոյին:

Օգոլինի տունը բլրի ստորոտում էր: Արդեն մութ էր: «Կայարանի շենքից դուրս գալիս,- հիշում է Օգոլինը,- բնակարանի ճանապարհին, ծառայողը, որ բռնել էր Լև Նիկոլակիչի թևը, զգուշացրեց, որ իջնում ենք սանդուղքով: Նա պատասխանեց. «Ոչինչ, ոչինչ, տեսնում եմ...»: Այդպիսի զգուշացում

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

արվեց ու նույնպիսի պատասխան ստացվեց նաև բնակարանի աստիճաններով բարձրանալիս. ծառայակիցներից մեկը միջանցք մտնելիս լամպ խնդրեց սանդուղքը լուսավորելու համար, բայց Լև Նիկոլակիչն ասաց. «Ո՛չ, տեսնում եմ, ես ամեն ինչ տեսնում եմ»:

### *Աստապովո*

Աստապովոյից ավագ զավակներին ուղարկած նամակում Տոլստոյը գրում էր. «Իմ լավ երեխաներ, Սերյոժա և Տանյա, հույս ունեմ և համոզված եմ, որ ինձ չեք մեղադրի նրա համար, որ ձեզ չեմ կանչել: Միայն ձեզ, առանց մամա՛ի կանչելը մեծ վիշտ կլիներ նրա, ինչպես և մյուս եղբայրների համար: Դուք երկուսդ կհասկանաք, որ Չերտկովը, ում կանչել եմ, իմ վերաբերյալ բացառիկ վիճակում է: Նա կյանքը նվիրել է այն գործին, որին ես էլ եմ ծառայել վերջին 40 տարում»:

Ամուսնու փախչելուց հետո Սոֆյա Անդրեևնան փորձեց հաշտվել Չերտկովի հետ: Զարտուղար Վալենտին Բուլգակովի միջոցով նրան հրավիրեց Յասնայա Պոլյանա: Ու մերժում ստացավ:

«Յասնայա Պոլյանայում,- գրում է Բուլգակովը,- բոլորը զարմացած էին, որ ես մենակ եմ վերադարձել: Ոչ մեկի մտքով չէր անցնում, որ Չերտկովը կարող է մերժել Սոֆյա Անդրեևնայի՝ իրեն տեսնելու և հաշտվելու ցանկությունը... Սոֆյա Անդրեևնայի խնդրանքը լսելով՝ Վլադիմիր Գրիգորևիչը առաջին պահին կարծես համաձայն էր մեկնել Յասնայա Պոլյանա, բայց հետո մտափոխվեց:

- Ինչո՞ւ գնամ,- ասաց նա:- Որ նվաստանա՞ իմ առաջ, ներողություն՞ն խնդրի: Խորամանկություն է անում, որպեսզի խնդրի՝ իր հեռագիրն ուղարկեմ Լև Նիկոլակիչին»:

Նա ամեն ինչ ճիշտ էր հասկացել: Սոֆյա Անդրեևնայի խնդիրը ամեն գնով ամուսնուն վերադարձնելն էր: Նույնիսկ ժամանակավոր հաշտության գնով մի մարդու հետ, որին ատում էր: Սակայն տվյալ իրավիճակում Չերտկովն ազնիվ չվարվեց: Սառը հրաժարվեց բանակցությունների մեջ մտնել մրցակցուհու հետ: Նա Տոլստոյի կնոջը քաղաքավարի նամակ ուղարկեց, որը կարդալով՝ Սոֆյա Անդրեևնան արհամարհանքով ասաց. «Չոր բարոյախոսություն»:

Չերտկովն առաջինը սլացավ Տոլստոյի մոտ: Բժիշկներից, հոգևորականներից, նրա ընտանիքի անդամներից առաջ: Արդեն նոյեմբերի 2-ին: «Առավոտվա ժամը իննին եկավ Վլադիմիր Գրիգորևիչը՝ իր քարտուղար Ա.Պ. Սերգեևնայի հետ,- հիշում էր Սաշան:- Շատ հուզիչ էր նրա հանդի-

պումը հորս հետ՝ մի քանի ամսվա բաժանումից հետո: Երկուսն էլ լալիս էին: Նրանց նայելով՝ չկարողացա զսպել արցունքներս ու լաց էի լինում հարևան սենյակում»:

Չերտկովը նույնպես իր հուշերում նկարագրել է այդ հանդիպումը. «Լ.Ն.-ին տեսա անկողնում, չափազանց թույլ, բայց պայծառ հիշողությամբ: Նա շատ ուրախացավ ինձ տեսնելով, պարզեց ձեռքը, որ զգույշ բռնեցի ու համբուրեցի: Աչքերն արցունքոտվեցին, և նա անմիջապես սկսեց հարցուփորձ անել, թե տանն ինչպես են... Շուտով խոսեց այն մասին, ինչն այդ պահին ըստ երևույթին ամենաշատն էր անհանգստացնում նրան: Առանձնակի եռանդով ասաց, որ պետք է ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի Սոֆյա Անդրեևնան չգա իր մոտ: Մի քանի անգամ հուզված հարցրեց, թե Սոֆյա Անդրեևնան ինչ է պատրաստվում անել: Երբ հայտնեցի, որ նա հայտարարել է, թե ամուսնու կամքին հակառակ՝ հանդիպման չի ձգտի, նա իրեն մեծապես թեթևացած զգաց և այդ օրն ինձ հետ այլևս չխոսեց իր տագնապներից...»:

Դա ճիշտ է, որ Տոլստոյը վախենում էր կնոջ գալուց: Նոյեմբերի 1-ի գիշերը քնի մեջ մրմնջում էր.

- Փախչել... Փախչել... Հասնել ետևից:

Արդյունքում՝ Տոլստոյի ընտանիքը նրա տեղն իմացավ ոչ թե Սաշայից, Չերտկովից կամ Մակովիցկուց, այլ «Ռուսկոյե սլովոյի» թղթակից Կոնստանտին Օռլովից: Տոլստոյի Տատյանա դուստրը դրա համար «մինչ ի մահ» երախտապարտ էր նրան: «Հայրս մահանում է մոտակայքում, իսկ ես չգիտեմ՝ որտեղ է,- հիշում էր նա:- Եվ չեմ կարող խնամել նրան: Գուցե և այլևս չտեսնեմ: Թույլ կտա՞ն գոնե նայել մահվան մահճում: Անքուն գիշեր: Իսկական տանջանք: Բայց գտնվեց ինձ անձանոթ մի մարդ, որը հասկացավ ու խղճաց Տոլստոյի ընտանիքին: Նա հեռագրեց մեզ. «Լև Նիկոլաևիչը Աստապովոյում է, կայարանապետի մոտ: Ջերմությունը՝ 40°»:

Աստապովո մեկնելու համար Տոլստոյի ընտանիքն առանձին գնացք վարձակալեց: Նոյեմբերի 2-ի ուշ երեկոյան կայարան եկան Սոֆյա Անդրեևնան, Տատյանան, Անդրեյն ու Միխայիլը:

Մերգեյն ու Իլյան առանձին եկան:

Ընտանեկան խորհրդում երեխաները միաձայն որոշեցին թույլ չտալ, որ մայրը հանդիպի հորը: Դա պսակագերծում է երրորդ միֆը, որ Սոֆյա Անդրեևնային ամուսնու մոտ չէին թողնում Սաշան ու Չերտկովը: Բոլոր երեխաներն էլ հասկանում էին, որ այդ վիճակում, որի մեջ հայրն ու մայրն էին, նման հանդիպումն անհնարին է: Դա չէր հասկանում միայն Փարիզում

գտնվող Լև Լվովիչը, որը Աստապովոյում կատարվողի մասին տեղեկանում էր ֆրանսիական թերթերից: Նա հուշերում գրում է. «Աստապովոյում արված մորս լուսանկարը կա: Անփույթ հագնված՝ դրսից զգույշ մոտենում է տնակին, որտեղ մահանում է հայրս, որ ականջ դնի, ծածուկ նայի՝ ինչ է կատարվում այնտեղ: Հանցագործի պես, խորապես մեղավոր, լքված, զղջացող՝ նա մուրացկանի նման կանգնած է պատուհանի տակ փոքրիկ սենյակի, որտեղ մահանում է իր ամուսինը, իր Լյովոչկան, իր կյանքը, իր մարմինը, ինքը»:

Այդ սարսափելի պահի ոչ միայն լուսանկարը կա, այլև կինոխրոնիկան, որն արել է առաջին ռուս կինոօպերատոր Ալեքսանդր Դրանկովը: Սոֆյա Անդրեևնան ներս է նայում Օզոլինի տան պատուհանից՝ փորձելով տեսնել ամուսնուն: Հանկարծ կողքին բացվում է դուռը: Սոֆյա Անդրեևնան փորձում է ներս մտնել: Նրան հետ է մղում ինչ-որ կին, ըստ երևույթին՝ Սաշան: Նա օրագրում գրում է, որ սարսափել էր՝ տեսնելով մորն ու նրա թիկունքում կանգնած ճրթճրթացող կինոխցիկով մարդուն...

Այդ պատմության մեջ հնարավոր չէ մեկ երկու կամ երեք մեղավոր գտնել: Բոլորը, բացի Չերտկովից, չգիտեին՝ ինչպես պահեն իրենց: Մահացողի անկողնու մոտ չէր ոչ միայն Սոֆյա Անդրեևնան, այլև որդիները՝ Իլյան, Անդրեյն ու Միխայիլը: Հնարավոր է, որ նրանք իրենց մեղավոր էին զգում հոր առաջ: Սակայն գլխավորը՝ նրանց հայտնվելը Օզոլինի տանը կնշանակեր, որ Աստապովոյում է ողջ ընտանիքը և, իհարկե... Սոֆյա Անդրեևնան: Դրա համար էլ հոր մոտ եկան միայն ավագ զավակները՝ Սերգեյն ու Տատյանան: Բայց նրանք էլ ստիպված էին ձևացնել, թե մենակ են եկել:

Վարվառա Ֆեոկրիտովան օրագրում գրում է, որ Տոլստոյն անշուշտ կռահում էր կնոջ՝ Աստապովոյում գտնվելը: Հայրը սովորեցրել էր չստել, և Սաշան, Սերգեյն ու Տատյանան չէին կարող նրան ուղիղ ասել, թե Սոֆյա Անդրեևնան մնացել է Յասնայա Պոլյանայում, իսկ Տոլստոյն անընդհատ նրա մասին էր հարցնում: Ստիպված էին խույս տալ այդ թեմայով խոսակցություններից:

«Հայրս սկսեց նրանից, որ թույլ, ընդհատուն ձայնով, շնչակտուր լինելով՝ ասաց. «Ինչ շքեղ ու ներկայանալի ես,- գրում էր Տատյանան ամուսնուն:- Ես ասացի, որ գիտեմ իր վատ ճաշակը ու ծիծաղեցի: Հետո սկսեց հարցուփորձ անել մամա՝-ի մասին: Ամենաշատը դրանից էի վախենում, որովհետև վախենում էի ասել, որ նա այստեղ է, իսկ նրան ուղիղ ստելու ուժ, զգում էի, չունեի: Բարեբախտաբար հարցն այնպես դրեց, որ ստիպված չե-

դա խաբել:

- Նա ո՞ւմ հետ է մնացել:

- Անդրեյի ու Միշայի:

- Ու Միշայի՞:

- Այո՛: Բոլորը միակամ են, որ նրան չթողնեն քեզ մոտ, մինչև դու չցանկանաս:

- Անդրեյն է՞լ:

- Այո՛, նաև Անդրեյը: Շատ լավն են նրանք՝ փոքր տղաները, շատ են չարչարվել խեղճերը, ամեն կերպ ջանում են հանգստացնել մայրիկին:

- Դե, պատմիր, նա ի՞նչ է անում, ինչո՞վ է զբաղված:

- Հայրի՛կ, գուցե ավելի լավ է չասե՞մ. կհուզվես:

Նա եռանդուն ընդհատեց ինձ և արցունքոտ, կերկերուն ձայնով ասաց.

- Խոսի՛ր, խոսի՛ր, դրանից ավելի ինչ կարող է կարևոր լինել ինձ համար:

Ու շարունակեց հարցուփորձ անել, թե ո՞վ կա նրա մոտ, բժիշկը լա՞վն է: Ասացի, որ լավը չի, ու մենք բաժանվել ենք նրանից, շատ լավն է բուժակուհին, որը երեք ու կես տարի ծառայել է Ս.Ս. Կորսակովի հետ, ուրեմն սովոր է այդպիսի հիվանդների:

- Իսկ նա սիրե՞ց բուժակուհուն:

- Այո՛:

- Դե, շարունակի՛ր: Ուտո՞ւմ է:

- Այո՛, ուտում է ու հիմա ջանում է պահպանել իրեն, որովհետև ասարում է քեզ հետ տեսնվելու հույսով:

- Իմ նամակը ստացե՞լ է:

- Այո՛:

- Իսկ ինչպե՞ս վերաբերվեց դրան»:

Նա այդ հարցերով տանջում էր երեխաներին և իրեն: Բայց այդպես էլ չասաց գլխավորը: Չասաց, որ մահվանից առաջ կուզեր տեսնել կնոջը: Չնայած՝ մի անգամ մազի վրա էր:

«Մի անգամ,- հիշում է Տատյանա Լվովնան,- երբ հերթապահում էի նրա մոտ, կանչեց ինձ և ասաց. «Շատ բան է ծանրանում Սոնյայի վրա: Մենք վատ վարվեցինք»:

Հուզմունքից շունչս կտրվեց: Ուզում էի՝ նա կրկնի ասածը, որպեսզի համոզվեմ, որ ճիշտ են հասկացել, թե ինչի մասին է խոսքը: «Ինչ ասացի՞ր, պապա՛: Ի՞նչ սո... սողա»:

Եվ նա կրկնեց. «Սոնյայի, Սոնյայի վրա է շատ բան ընկնում»:

## ՊԸՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Ես հարցրի. «Կուզե՞ս տեսնել նրան, կուզե՞ս տեսնել Սոնյային»: Բայց նա արդեն կորցրել էր գիտակցությունը»:

Աստապովոյում Տոլստոյը զայրանում էր շրջապատողների վրա, որ չեն կարողանում իրեն ճիշտ հասկանալ: «Ինչպե՞ս չեք հասկանում: Ինչո՞ւ չեք ուզում հասկանալ... Դա այնքան պարզ է... Ինչո՞ւ չեք ուզում անել դա»,- տենդի մեջ մրմնջում էր նա մահվանից երկու օր առաջ: «Ըստ երևույթին, տանջվում ու բարկանում էր նրանից, որ չէր կարողանում բացատրել, թե ինչ է պետք հասկանալ ու անել,- հիշում էր Սերգեյ Լվովիչը:- Մենք այդպես էլ չհասկացանք՝ ինչ էր ուզում ասել»:

Ամսի վեցի առավոտյան նա վրա մտեց անկողնում ու հստակ ասաց, «Չեզ խորհուրդ եմ տալիս հիշել միայն մեկ բան. Լև Տոլստոյից բացի, անհաշիվ մարդիկ կան աշխարհում, իսկ դուք մայրն եք միայն Լևին»:

Ըստ Մակովիցկու նոթերի՝ նա հաճախ ասում էր. «Մի արթնացրեք ինձ», «Մի խանգարեք ինձ», «Մի խցկեք իմ մեջ»:

Երբ հիվանդի անկողնու մոտ վեց բժիշկներից կոնսիլիում հավաքվեց, Տոլստոյը հարցրեց.

- Ովքե՞ր են այս հաճելի մարդիկ:

Բժիշկ Նիկիտինն ուզում էր հոգնա անել, բայց Տոլստոյը հրաժարվեց. «Աստված ամեն ինչ կկարգավորի»,- ասաց նա: Երբ հարցնու էին՝ ինչ կուզեք, պատասխանում էր. «Ուզում եմ ինձ ոչ ոք չձանձրացնի»:

«Նա լրիվ փոքրիկ երեխայի պես է»,- բացականչեց Մաշան հորը լվացացնելիս:

«Երբեք այսպիսի հիվանդ չեմ տեսել»,- խոստովանում էր Մոսկվայից եկած բժիշկ Ուսովը: Երբ զննության ժամանակ մեջքը պահած բարձրացնում էր հիվանդին, նա գրկեց բժշկին ու համբուրեց:

Մահվանից առաջ երկու կին երևացին աչքին: Մեկից նա վախեցավ ու խնդրեց վարագուրել պատուհանը: Հնարավոր է, որ կինն էր: Երկրորդին տեսնելով՝ բարձր կանչեց. «Մա՛շա, Մա՛շա»: «Ես փշաքաղվեցի,- գրում էր Ս.Լ. Տոլստոյը:- հասկացա, որ հիշել է քոջս՝ Մաշայի մահը, ում հետ առանձնապես մտերիմ էր (Մաշան նույնպես մահացել էր թոքերի բորբոքումից, 1906 թվականի նոյեմբերին)»:

Մի անգամ այդ երկու կանայք միասին եկան: Ալեքսանդրա Լվովնան հիշում էր. «Յերեկը օդափոխում էինք ննջարանն ու հորս տեղափոխեցինք մյուս սենյակ: Երբ նորից ներս բերեցինք, ակնդետ նայեց իր մահճակալի դիմացի ապակեպատ դռանն ու հերթապահող Վարվառա Միխայլովնային հարցրեց.



- Ո՞ր է տանում այս ապակեպատ դուռը:
- Միջանցք:
- Իսկ ի՞նչ կա միջանցքից այն կողմ:
- Նախասենյակն ու սանդղամուտը:
- Այդ ժամանակ ես մտա սենյակ:
- Իսկ ի՞նչ է, դուռը կողպա՞ծ է,- հարցրեց հայրս:
- Ասացի, որ կողպած է:
- Տարօրինակ է, իսկ ես հստակ տեսա, որ այդ դռան ետևից ինձ են նայում երկու կնոջ դեմք:
- Մենք ասացինք, որ այդպիսի բան չի կարող լինել, որովհետև միջանցքից նախասենյակ տանող դուռը նույնպես կողպած է:
- Երևում էր, որ շհանգստացավ ու շարունակում էր տագնապած նայել ապակեպատ դռանը:
- Ես ու Վարվառա Միխայլովնան վերցրինք պլեդն ու վարագուրեցինք դուռը:
- Ա՛խ, այ հիմա լավ է,- թե՞նացած ասաց հայրս: Շրջվեց պատի կողմն ու առժամանակ խաղաղվեց»:
- Մահվան տառապանքներից բացի («Ինչպե՛ս էր բղավում Լ.Ն.-ն, ինչպես էր ջղաձգվում, ինչպես էր շնչահեղձ լինում»,- գրում է Մակովիցկին), նրա տառապանքը ծանրանում էր նաև նրանով, որ գիտակցությունը շարունակում էր գործել: Տոլստոյը փորձեց իր համար կարևոր ինչ-որ բան թելադրել շրջապատողներին, բայց լեզուն արդեն չէր ենթարկվում:
- «Հայրս մեզ խնդրեց գրի առնել իր ասածը, բայց դա անհնար էր, քանի որ կցկտուր, անհասկանալի բառեր էր արտաբերում,- հիշում է Ալեքսանդրա Լվովնան:- Երբ խնդրեց կարդալ գրի առածը, շփոթվեցինք ու չգիտեինք ինչ կարդանք: Իսկ նա անընդհատ խնդրում էր.
- Դե, կարդացե՛ք, կարդացե՛ք:
- Մենք փորձեցինք գրի առնել նրա զառանցանքը, բայց զգալով, որ գրածն իմաստ չունի, նա չէր բավարարվում և նորից էր խնդրում կարդալ»:
- Վերջին գրառումը Տոլստոյի օրագրում, նոյեմբերի 3-ին. «Ահա և իմ պլանը: Fais ce gue doit, adv<sup>34</sup>... Եվ ամենը այլոց ու գլխավորը՝ իմ բարօրության համար...»:

34. Անավարտ. «Արա, ինչ պետք է, ու թող լինի, ինչ լինելու է...» (Ֆր.):

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Վերջին հասկանալի բառերը, որ մահվանից մի քանի ժամ առաջ ասել է ավագ որդուն. «Սերյո՛ժա... ճշմարտությունը... ես շատ եմ սիրում, ես սիրում եմ բոլորին»:

«Նրա հիվանդության ողջ ընթացքում,- հիշում է Ալեքսանդրա Լվովնան,- ինձ ապշեցնում էր, որ չնայած բարձր ջերմությանը, սրտի խիստ քույլ աշխատանքին ու ֆիզիկական ծանր տառապանքներին, հայրս միշտ ապշեցուցիչ պայծառ միտք ուներ: Ամենայն մանրամասնությամբ նկատում էր շուրջ կատարվող ամեն ինչ: Այսպես, օրինակ, երբ բոլորը դուրս եկան նրա մոտից, սկսեց հաշվել, թե ընդամենը քանի հոգի է եկել Աստապովո, ու հաշվեց, որ եկել է 9 հոգի»:

Մահացող Տոլստոյի սևեռուն գաղափարը փախուստն էր: «Փախչել: Փախչել»,- հաճախ քրթմնջում էր նա: Նոյեմբերի 5-ին նորից փորձեց փախչել:

«Այդ ամբողջ ընթացքում,- հիշում է Ալեքսանդրա Լվովնան,- մենք ձգտում էինք երկու հոգով հերթապահել, բայց մի անգամ այնպես եղավ, որ ես մենակ մնացի հորս անկողնու մոտ: Թվում էր՝ ննջում է: Բայց հանկարծ ուժեղ շարժումով թիկնեց բարձերին ու սկսեց ոտքերն իջեցնել մահճակալից: Ես մոտեցա. «Ի՞նչ ես ուզում, հայրի՛կ»:- «Թո՛ղ, բաց թող ինձ», - և նա մահճակալից իջնելու շարժում արեց: Գիտեի, որ եթե վեր կենա, չեմ կարողանալու պահել, ու նա կընկնի, և ամեն կերպ փորձում էի հանգստացնել ու պահել մահճակալին: Բայց նա անընդհատ պոկվում էր ինձնից ու ասում. «Թո՛ղ, բաց թող, դու իրավունք չունես ինձ պահելու, թո՛ղ»: Տեսնելով, որ չեմ կարողանում հաղթահարել հորս, հորդորներս ու խնդրանքներս չեն ազդում, իսկ ուժով պահել չէի համարձակվում, սկսեցի բղավել. «Բժի՛շկ, բժի՛շկ, շտապ եկեք այստեղ»: Այդ ժամանակ կարծեմ Մեմենովսկին էր հերթապահում: Նա ներս մտավ Վարվառա Սիխայլովնայի հետ, և մեզ հաջողվեց հանգստացնել հորս ու պահել մահճակալին»:

Տոլստոյի համար լուրջ մտահոգություն էր, որ կամֆորայի հետ նաև մորֆի էին սրսկում՝ ֆիզիկական տառապանքներից ազատելու համար: Նա ասում էր թմրանյութերը: Նա ասում էր այն ամենը, որ մթազնում էր գիտակցությունը: Երբ վախճանից անմիջապես առաջ բժիշկներն առաջարկեցին մորֆի ներարկել, Տոլստոյը փաթ ընկնող լեզվով խնդրեց. «Պարֆին չեմ ուզում... Պետք չի պարֆին»:

«Մորֆի սրսկեցինք,- գրում է Մակովիցկին:- Լ.Ն.-ն սկսեց ավելի ծանր շնչել, և, թուլացած, կիսատենդի մեջ մրմնջում էր.

- Ես որևէ տեղ կզնամ, որ ոչ մեկը չխանգարի... Հանգիստ թողեք ինձ...

Պետք է փախչել, պետք է որևէ տեղ փախչել...»:

Միայն մորֆի սրսկելուց հետո նրա մոտ թողեցին Սոֆյա Անդրեևնանին: «Նա սկզբում կանգնեց, հեռվից նայեց հորս,- գրում է Սերգեյ Լվովիչը,- հետո հանգիստ մոտեցավ նրան, համբուրեց ճակատը, ծնկի եկավ և ասաց. «Ներիր ինձ» ու էլի ինչ-որ բան, որ չլսեցի»:

Նոյեմբերի 7-ի առավոտյան ժամը երեքին մոտ Տոլստոյն ուշքի եկավ, բացեց աչքերը: Մեկը մոմը մոտեցրեց դեմքին: Նա կնճռտավեց ու շրջվեց: Մակովիցկին մոտեցավ և ջուր առաջարկեց. «Թրջեք շրթունքները, Լև՝ Նիկոլանիչ»: Տոլստոյը մի կուն արեց: Գրանից հետո միայն շնչառության մեջ էր կյանք գգացվում:

Ժամը վեցն անց հինգ թուպեին Տոլստոյը վախճանվեց:

### *Վերջաբան*

Տոլստոյը չէր սիրում վերհիշել իր կյանքը: Չէր պատկանում այն գրուցասեր պապիկների թվին, որոնք խոր ծերությանը շուրջն են հավաքում երեխաներին ու թոռներին և հպարտությամբ կամ բարեհոգի հումորով պատմում իրենց անցյալի մասին:

Հնարավոր է, որ Յասնայա Պոլյանայի այգում կամ մոտակա անտառներից մեկում՝ Ջակագում կամ Չեպիժում զբոսնելիս Տոլստոյը մտովի վերադառնում էր անցյալին, բայց այդ զբոսանքներին հաջորդած օրագրային գրառումներում դրա ուղղակի վկայություններ չենք գտնի: Չուտ մտքի արդյունք.

«Աստծու սիրուն, թեկուզև ոչ Աստծու, ապա գոնե հանուն ձեզ ուշքի եկեք: Հասկացեք ձեր կյանքի ողջ խելահեղությունը: Գոնե մի ժամով կտրվեք մանրութներից, որոնցով զբաղված եք և որոնք ձեզ այնքան կարևոր են թվում. ձեր բոլոր միլիոնները, կողոպուտները, սպանությունների նախապատրաստությունը, ձեր խորհրդարանները, գիտությունները, եկեղեցիները... Գոնե մի ժամով կտրվեք այդ ամենից ու նայեք ձեր կյանքին, գլխավորը՝ ձեր կյանքին, ձեր հոգուն, որ այդպիսի անորոշ, կարճ ժամանակ է ապրում այդ մարմնում, սթափվեցեք, նայեք ձեզ ու կյանքին՝ ձեր շուրջը, ու հասկացեք ձեր ողջ խելագարությունը, ու սարսափեք դրանից...»:

Կարո՞ղ էր, արդյոք, այդ մարդը ուրախությամբ հիշել իր անցյալը, առավել ևս՝ հպարտանալ նրանով: Չէ՞ որ իր կյանքն էլ, զգալի մասով, երբ ապրում էր այդ մանրութներով, որոնք այն ժամանակ կարևոր էին թվում, տարեց հասակում տառապանքի ու ամոթի աղբյուր էր դարձել: Խայտառակ, ամոթալի կյանք:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

1903 թվականին իր կենսագիր Պավել Իվանովիչ Բիրյուկովի խնդրանքով Տոլստոյը համենայնդեպս սկսեց գրել «Հուշերը»: «Ես այդ ժամանակ հիվանդացել էի,- խոստովանում է նա:- Եվ հիվանդության ակամա պարապության ժամանակ միտքս անընդհատ դառնում էր հիշողություններին, և այդ հուշերը սարսափելի էին: Ես մեծապես զգում էի այն, ինչի մասին Պուշկինն ասում է իր բանաստեղծության մեջ.

### ՀՈՒՇ

*Երբ որ աղմկոտ օրն է խաղաղվում բոլորի համար,  
Ու քաղաքների համրության վրա  
Կիսաթափանցիկ ստվերն է փռվում անվերջ գիշերվա,  
Եվ քունը - հոգս ու վաստակի պարզև,-  
Անքնությունն է հեշտ ու անարգել  
Քաշում լռության ցանցերը արագ,  
Ու գիշերային անշարժության մեջ  
Մողում են շուրջս սրտախայթոցի օձերը անվերջ,  
Երազանքներն են եռում շարունակ,  
Եվ խիտ խտացած խոհերի ծանր գալարումի մեջ  
Հիշողությունն է իմ առաջ բացում  
Գալարաթերթն իր անվերջանալի,  
Ու ես զգվանքով կյանքն իմ կարդալիս  
Անվերջ դողում եմ, անկանգ անիծում,  
Արցունք եմ հեղում, դառը տրտնջում,  
Բայց տխուր տողերն արդեն չեմ ջնջում:*

«Վերջին տողում,- նկատում է Տոլստոյը,- ես մի այսպիսի փոփոխություն կանեի՝ տխուր տողերի փոխարեն... կդնեի ամոթալի տողեր...»:

«Հուշերը» սկսելուց առաջ նա օրագրում գրում է. «Հիմա դժոխքի չաչաբանքներ եմ կրում. հիշում եմ իմ անցած կյանքի ողջ նողկանքը, և այդ հուշերը չեն լքում ինձ ու թունավորում են կյանքս»:

Հավատացյալ մարդու գլխավոր մխիթարությունը, թերևս, հույսն է, որ մահվանից հետո ինքը կպահպանվի որպես անհատ: Բայց չէ՞ որ դա անհնար է, եթե անդինում չհիշես քո կյանքը, չհիշես քեզ: Մակայն հենց այդպիսի հեռանկարն էր ամենից սարսափելին թվում Տոլստոյին: Նա հավատում էր, որ մահվանից հետո ինքը որպես անհատ պարզապես գոյություն չի ունենա: Կանհետանա հիշողությունն, ու ոչ մի Լև Տոլստոյ չի լինի:

«Ի՞նչ երջանկություն է, որ հուշն անհետանում է մահվան հետ, և մնում է միայն գիտակցությունը... Մեծ երջանկություն է հիշողության ոչնչացումը, անհնար է նրա հետ ուրախության մեջ ապրել...»,- գրում էր նա:

Եվ նույնիսկ երկրային գոյության մեջ անհիշողության վտանգը ոչ թե վախեցնում, այլ ավելի շուտ ուրախացնում էր Տոլստոյին: «Իմ կյանքը՝ իմ անհատականության իմ գիտակցումը անընդհատ թուլանում ու թուլանում է, ավելի թույլ կլինի և կավարտվի զառամախտովով ու անհատականության գիտակցման կատարյալ դադարով»:

Կարո՞ղ էր այդպիսի մարդը «Հուշեր» գրել: Տոլստոյը ոչ միայն չավարտեց հուշերը, այլ նույնիսկ չհասցրեց ինքնուրույն կյանքի սկզբին՝ սահմանափակվելով մանկությամբ, պատանեկության ու երիտասարդության մի քանի կազանյան տպավորություններով:

Եվ միայն սիրելի մանկությունն էր ուրախալի հիշել: «Այո՛, այնքան հետաքրքիր բան կա առջևում, որ կուզեի պատմել, բայց չեմ կարողանում կտրվել մանկությունից, պայծառ, քնքուշ, բանաստեղծական, սիրելի ու հանելուկային մանկությունից»:

Վաղ մանկության տարիներին նա սիրում էր լսել մոր պատմությունները, ում համարյա սուրբ էր համարում: Հոր մասին՝ գեղեցիկ և ուժեղ տղամարդու, 1812-1814 թվականների հայրենական պատերազմի հերոսի մասին: Պապի՝ հպարտ, լուսավորյալ ազնվականի մասին: Ծնողների հսկա տանը 32 սենյակ կար: Բայց չգիտես ինչու մանկական գիշերանոթը տնտեսուհու սենյակում էր: Արդեն ծեր Տոլստոյը «Հուշերում» այն գորովանքով կոչում էր «մանկական անոթիկ»: Հենց այդ «անոթիկին» նստած էլ փոքրիկ Լյովուչկան լսում էր պապի մասնակցությամբ Օչակովը գրավելու պատմությունները:

«- Պրասկո՛վյա Իսաննա, իսկ պապիկն ինչպե՞ս էր կռվում: Չի նստա՞ծ, տնքալով կհարցնեիր նրան, միայն թե նա խոսեր և ինքը լսեր:

- Ամեն ձև էլ կռվում էր, համ ձի նստած, համ ոտավոր: Բայց հո գեներալ-անշեֆ էր,- պատասխանում էր նա ու բացելով պահարանը՝ հանում հոտավետ խեժը, որը օչակովյան ծխելիք էր կոչում: Նրա ասելով դուրս էր գալիս, որ այդ ծխելիքը պապիկը բերել էր Օչակովից: Կանթեղից կպցնում էր թղթի կտորն ու սրբապատկերների տակ վառում խեժը, և այն բուրավետ ծխում էր»:

Այս պատկերում եկեղեցական ինչ-որ բան կա: Վառված խեժը՝ ինչպես խունկը խնկամանում: «Անոթիկին» նստած անմեղ հոգին թռչում է նախնիների անցյալը: Երջանիկ է, որ միանում է նրանց, որ հեռացած են, բայց

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

այնքան կենդանի:

Իսկ կյանքը... Կյանքը ի՞նչ: Դա այն կարևորն է, որից նա տարեց հասակում կոչ էր անում «հրաժարվել»: Եվ այդ «կարևորի» մեջ, եթե նա շարունակեր «Հուշերը», կմտնեին Կովկասն ու Սևաստոպոլը, արտասահմանն ու ամուսնությունը, գյուղական տնտեսությունը և այն, ինչպես գրում է ուշ շրջանի Տոլստոյը, «գեղարվեստական շաղակրատանքը, որով լեցուն են իմ ստեղծագործությունների 12 հատորները, և որոնց մեր ժամանակի մարդիկ դրանց չվաստակած նշանակություն են վերագրում...»:

Դեռ կենդանության օրոք հանճար հռչակված գրողի մահվանից հետո սովորաբար մնում են սևագրեր, անավարտ գործեր ու վաղ գրչափորձեր: Տոլստոյի դեպքում այդպես չէր: Երբ լույս տեսան նրա «Հետմահու գեղարվեստական ստեղծագործությունների» երեք գրքերը, հասարակությունն ախ քաշեց: Գլուխգործոցը գլուխգործոցի ետևից: «Դևը», «Հայր Մերգին», «Կենդանի դիակը», «Պարահանդեսից հետո»-ն, «Կեղծ կտրոնը», «Հաջի Մուրադը»: Այս ամենը կենդանության օրոք չէր հրատարակվել: Ինչի՞ համար: Ի՞նչ կար շտապելու:

Տոլստոյի կյանքը... Ո՞րն էր նրա մեջ գլխավոր ու որը՝ երկրորդական: Ինքն ինչպե՞ս էր հասկանում դա:

Կարող է տարօրինակ թվալ, բայց այդ մեծագույն բարոյախոսի գոյության գլխավոր նպատակն ու իմաստը կյանքի բերկրանքն էր: Նա հաճախ էր գրում դրա մասին: «Կյանքը կարող է և պետք է անդադար բերկրություն լինի»: «Մարդը միշտ պետք է բերկրանքի մեջ լինի: Եթե բերկրանքը վերջանում է, փնտրիր՝ որտեղ ես սխալվել»: «Եթե կյանքը քեզ ահռելի բերկրանք չի թվում, ապա միայն այն պատճառով, որ միտքդ կեղծ ուղղության վրա է»:

Անդադար բերկրանքի այդ զգացումը նա կորցրել էր մանկության ավարտի հետ: Եվ մնացած բոլոր տարիները ծախսեց այդ զգացումը վերադարձնելու վրա:

Կորցնելով իր կյանքի արտաքին հանգամանքները փոխելու հնարավորության հավատը, որոնք, ինչպես սկզբում մտածում էր, խանգարում էին այդ զգացման վերադարձին, նա սկսեց փոխել իրեն, իր կեղծ ուղղվածությամբ միտքը: Դրա վրա ինքնաստեղծման տաժանակիր աշխատանքի տասնամյակներ ծախսվեցին:

Հասա՞վ այդ զգացմանը: Դժվար է ասել: 82 տարեկան ծերունու փախուստը Յասնայա Պոլյանայից խախտումն էր նրա բացահայտած գլխավոր բարոյական օրենքի՝ ոչինչ մի փոխիր արտաքին հանգամանքներում, ինքդ փոխվիր:

Նշանակում է՝ կյանքը ձախողվել էր: Բայց այդ դեպքում ինչո՞ւ է Տոլստոյի կերպարը այսօր էլ գրավում ողջ աշխարհի ընթերցող մարդկանց ուշադրությունը: Ինչո՞ւ ճերմակամորուս, ճերմակ «տոլստոլկայով» ծերունու կերպարը, դրոշմված հազարավոր լուսանկարներում ու կինոխրոնիկայի կադրերում, շարունակում է գաղտնի իմաստ կրել: Ինչո՞ւ նրա գերեզմանն անտառում, մռայլ ձորակի եզրին. արտաքուստ այնքան համեստ՝ աշխարհի ամենաձգող հանգստարաններից մեկն է, Թաջ Մահալի ու եգիպտական բուրգերի հանգույն:

Ո՞չ այն պատճառով, որ Տոլստոյին մոտիկ մենք զգում ենք նույնը, ինչ նրա ժամանակակիցները, որոնք մեկ կամ մի քանի անգամ եղել են Յասնայա Պոլյանայում: Նրանք այդ վայրը լքում էին՝ գլխավոր հարցերն իրենց հոգու մեջ. ո՞րն է այդ մարդու կյանքի գաղտնիքը և ինչո՞ւ է այդպես անկասելի նրա ազդեցությունը:

«Նրա քայլվածքին, գլխի պտույտին, կեցվածքին ուշադիր նայողը պարզորոշ տեսնում էր մշտապես գիտակցված շարժումներ, այսինքն՝ յուրաքանչյուր շարժում մշակված էր, իմաստավորված, գաղափար էր արտահայտում», - գրում էր Տոլստոյների ընտանիքի ծանոթ, բժշկության պրոֆեսոր Վլադիմիր Ֆյոդորովիչ Սնեգիրյովը: Եվ ցանկացած մարդ, ով թեկուզ մեկ անգամ հանդիպել էր Տոլստոյին, զգում էր, որ այդ մարդը բացի այն կյանքից, որ ապրել է բոլորի աչքի առաջ, ապրել է ևս մեկը: Ոչ այն, որ ապրում էին իր ժամանակակիցները և ապրում ենք մենք:

**Ազատ մարդու կյանքը:**

***Լ.Ն. Տոլստոյի կյանքի և ստեղծագործության հիմնական տարեթվերը***

1828, օգոստոսի 28 - Տուլայի նահանգի Կրասնիվկինյան գավառի Յասնայա Պոլյանա կալվածքում, զինվորական, 1812թ. Հայրենական պատերազմի մասնակից կոմս Նիկոլայ Իլյիչ Տոլստոյի և նրա կնոջ՝ Մարիա Նիկոլանայի ընտանիքում ծնվեց նրանց որդին՝ Լևր:

1830, օգոստոսի 4 - մոր մահը «ջղատենդից»:

1835 - գրում է «Արծիվ» և «Բագե» աշակերտական վարժությունները՝ առաջին հայտնի ինքնագրերը:

1837, հունվար - ընտանիքը Յասնայա Պոլյանայից տեղափոխվում է Մոսկվա:

Հունիսի 21 - հոր մահը «արյան հարվածից»:

Հորաքրոջը՝ Ա.Ի. Օստեն-Սակենին խնամակալ նշանակելը:

1838, մայիսի 25 - տատիկի՝ Պ.Ն. Տոլստայայի մահը:

Դմիտրի եղբոր, Մարիա քրոջ և հորաքրոջ՝ Տ.Ա. Յորգոլսկայայի հետ տեղափոխվում է Յասնայա Պոլյանա:

1840 - գրում է առաջին գեղարվեստական ստեղծագործությունը՝ շնորհավորական բանաստեղծություն Տ.Ա. Յորգոլսկայային՝ «Միրելի հորաքրոջը»:

1841, օգոստոսի 30 - խնամակալի՝ Ա.Ի. Օստեն-Սակենինի մահը Օպտինյան անապատում:

Սեպտեմբեր - եղբայրների և քրոջ հետ տեղափոխվում է Կազան՝ նոր խնամակալի՝ Պ.Ի. Յուշկովայի մոտ:

1844, սեպտեմբեր - ընդունվում է Կազանի համալսարանի արևելագիտության ֆաժին:

1846, հունվար - պատժախուց է նստում դասախոսություններին չհաճախելու համար: Տեղափոխվում է իրավաբանական ֆակուլտետ:

1847, մարտ - համալսարանական հիվանդանոցում բուժվում է հոնորեայից. սկսում է օրագիր վարել:

Ապրիլ - թողնում է համալսարանը:

Մայիս - տեղափոխվում է Յասնայա Պոլյանա, գյուղատնտեսությամբ զբաղվելու առաջին փորձերն է անում:

Հուլիս - եղբայրների հետ ստորագրում է ծնողների ժառանգությունը բաժանելու փաստաթուղթը:

1848, սեպտեմբեր - տեղափոխվում է Մոսկվա, որտեղ ապրում է «շատ



թափթփված, առանց ծառայության, առանց զբաղմունքի, առանց նպատակի»:

1849, փետրվար - մեկնում է Պետերբուրգ՝ համալսարանում քննություններ հանձնելու:

Ապրիլ - էքստենզիոն հանձնում է իրավունքի թեկնածուի աստիճանի քննությունները:

Մայիս - վերադառնում է Յասնայա Պոլյանա:

Զբաղվում է երաժշտությամբ: Փորձում է դպրոց կազմակերպել գեղջուկ երեխաների համար:

1850, դեկտեմբեր - տեղափոխվում է Մոսկվա: Ապրում է «կատարելապես անասնաբար, թեկուզև ոչ լրիվ անառակ»:

1851, մարտ - սկսում է վարել «Ֆրանկլինյան օրագիրը»:

Հոկտեմբեր - Նիկոլայ եղբոր հետ մեկնում է Կովկաս:

1852, հունվար - քննություն է հանձնում յունկերի աստիճանի համար, հաշվառվում է գինվորական ծառայության որպես 4-րդ հրետանու ենթասպա:

Սեպտեմբեր - «Մովրենենիկ» ամսագրի իններորդ համարում հրատարակում է «Մանկություն» վիպակը՝ Լ.Ն. ստորագրությամբ:

1853 - մասնակցում է չեչենների դեմ արշավանքներին. սկսում է գրել «Կազակներ» և «Պատանեկություն» վիպակները:

1854, հունվար-փետրվար - Կովկասից վերադառնում է Յասնայա Պոլյանա:

Փետրվար - գալիս է Մոսկվա

Մարտ - Կուրսկով, Պոլտավայով ու Քիշնևով մեկնում է Գունայական բանակ:

Ապրիլ - Ժամանում է Բուխարեստ:

Մայիս-հունիս - մասնակցում է Սիլիստրիա ամրոցի պաշարմանը:

Հունիս - վերադառնում է Բուխարեստ:

Սեպտեմբեր - ժամանում է Քիշնև: Այլ սպաների հետ փորձում է կազմակերպել «Մոլդատսկի վեստնիկ» ամսագիրը:

Նոյեմբեր - տեղափոխվում է Սևաստոպոլ. Նիկոլայ I-ից մերժում է ստանում ամսագիր հրատարակելու խնդրանքին:

1855, հունվար - թղթախաղում տանուլ է տալիս հայրական յասնոպոլյանյան տան վաճառքից ստացած գումարը:

Մարտ - Ա.Գ. Ստոլիպինի հետ մասնակցում է գիշերային արտելքի:

Ապրիլ - Սևաստոպոլում ծառայում է ամենավտանգավոր՝ 4-րդ բաստինոնում:

## ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

Հունիս - «Սովրեմեննիկում» հրապարակում է «Սևաստոպոլը դեկտեմբերին» պատմվածքը՝ առաջինը հետագայում «Սևաստոպոլյան պատմվածքներ» վերնագրված շարքից: Ալեքսանդր II-ի հանձնարարականը՝ պատմվածքը ֆրանսերեն թարգմանելու վերաբերյալ:

Օգոստոս - մասնակցում է «անհաջող, սարսափելի գործի»՝ Չյոռնի գետակի ճակատամարտին: Սևաստոպոլի անկումը:

Նոյեմբեր - Դրիմից մեկնում է Պետերբուրգ՝ ճանապարհին մտնելով Յասնայա Պոլյանա:

Նոյեմբեր-դեկտեմբեր - ապրում է Ի.Ս. Տուրգենևի մոտ, շփվում Նեկրասովի հետ, ծանոթանում է Ա.Ա. Ֆետի, Ի.Ա. Գոնչարովի, Ա.Ֆ. Պիսեմսկու, Ա.Վ. Դրուժինինի և այլ գրողների հետ:

1856, հունվար - Օրյոլում այցելում է մահացող եղբորը՝ Գմիտրիին:

Նոյեմբեր - ազատվում է զինվորական ծառայությունից:

1857, հունվար - մեկնում է առաջին արտասահմանյան ուղևորությանը:

Մարտ - տեսնում է առաջին հրապարակային մահապատիժը գիլյոտինով, սարսափած փախչում է Փարիզից:

Հուլիս - Բադեն-Բադենում պտտախաղում տանուլ է տալիս երեք հազար ֆրանկ: Տեղեկանում է քրոջ ու ամուսնու բաժանման մասին: «Այդ լուրը խեղդեց ինձ»: Մեկնում է Ռուսաստան՝ քրոջը փրկելու:

1858, սեպտեմբեր - ծանոթանում է «հաճելի աղջիկների»՝ Լիզա, Սոնյա և Տանյա Բերս քույրերի հետ:

1859 - որսի է գնում Ֆետի և Տուրգենևի հետ: Գեղջուկ երեխաների համար դպրոց է բացում Յասնայա Պոլյանայում: Գրում է «Ընտանեկան երջանկություն» վիպակը:

1860, հուլիս - Մարիա քրոջ ու նրա երեխաների հետ մեկնում է երկրորդ արտասահմանյան ուղևորությանը:

Սեպտեմբեր - տեսնում է Նիկոլայ եղբոր մահը ֆրանսիական Հիեր քաղաքում:

1861, փետրվար - Լոնդոնում այցելում ու ծանոթանում է Ա.Ի.Գերցենի հետ:

Մարտ-ապրիլ - արտասահմանյան ուղևորության ընթացքում ուսումնասիրում է կրթական համակարգը Եվրոպայում: Հանգում է Ռուսաստանում սեփական մանկավարժական ամսագիր հրատարակելու մտքին. «Նպատակը մեկն է՝ ժողովրդի կրթությունը»:

Ապրիլ - գալիս է Պետերբուրգ:

Մայիս - վերադառնում է Յասնայա Պոլյանա: Հաշտարար միջնորդ է

նշանակվում գյուղացիների ազատագրման գործում: Ֆետի կալվածքում վեճը Տուրգենևի հետ քիչ է մնում ավարտվի մենամարտով:

Մեպտեմբեր - գալիս է Մոսկվա, այցելում Բերսերին, սկսում է մտածել ամուսնության մասին: «Լիզա Բերսը գայթակղում է ինձ, բայց դա չի լինի»:

1862, հունվար - «Յասնայա Պոլյանա» մանկավարժական ամսագրի առաջին համարի հրատարակումը:

Փետրվար - թղթախաղում խոշոր գումար տանուլ տալուց հետո պարտք է վերցնում «Ռուսսկի վեստնիկ» ամսագրի հրատարակիչ Մ.Ն. Կատկովից՝ պարտավորվելով նրան հանձնել «Կազակներ» վիպակը:

Մայիս-հուլիս - մեկնում է Սամարայի նահանգ՝ առողջությունը վերականգնելու: Օգոստոս - Բերսերի ազգական Ա.Մ. Իվենևի կալվածքում սեր է խոստովանում Սոֆյա Բերսին:

Մեպտեմբերի 23 - ամուսնանում է Սոֆյա Բերսի հետ, նույն օրը կնոջ հետ մեկնում է Յասնայա Պոլյանա:

1863, հունիսի 28 - առաջնեկի՝ Մերգեյի ծնունդը:

Ընտանիքով ապրում է Յասնայա Պոլյանայում: Անտարբեր է դառնում մանկավարժական գործունեության հանդեպ: Սկսում է գրել վեպ-էպոպեա, որը հետագայում վերնագրվում է «Պատերազմ և խաղաղություն»:

1864, հոկտեմբերի 4 - դստեր՝ Տատյանայի ծնունդը:

1865, փետրվար - «Ռուսսկի վեստնիկում» սկսում են հրատարակվել «1805 թիվ» («Պատերազմ և խաղաղություն» վեպի նախնական անունը) ստեղծագործության գլուխները:

1866, մայիսի 22 - Իլյա որդու ծնունդը:

Հուլիս - որպես փաստաբան մասնակցում է սպային հարվածած զինվոր Շարունիցի ռազմադաշտային դատին:

Հուլիս-օգոստոս - Յասնայա Պոլյանայի տան կցաշենք է կառուցում:

Հոկտեմբեր - ստանում է հաշտարար դատավորի կոչում:

1867-1868 - ավարտում է «Պատերազմ և խաղաղություն» վեպն ու պատրաստում առանձին հրատարակության:

1869, մայիսի 20 - Լև որդու ծնունդը:

Մեպտեմբեր - Կալվածքը գնելուց առաջ տեսնելու նպատակով ուղևորության ժամանակ նյարդային նոպա է ունենում, այսպես կոչված՝ «արգամասյան սարսափը»:

Հոկտեմբեր - տպագրության է ստորագրում «Պատերազմ և խաղաղության» վերջին՝ վեցերորդ հատորը:

1870 - սկսում է վեպ գրել Պյոտր I-ի մասին:

ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

- 1870/71, ձմեռ - մեկուկես ամսում հունարեն է սովորում:  
1871, փետրվարի 12 - դատեր՝ Մարիայի ծնունդը:  
Փետրվար - առաջին լուրջ կոնֆլիկտն ընտանիքում՝ Սոֆյա Անդրեևնայի՝ երեխա ունենալուց հրաժարվելու մտադրության պատճառով:  
Մարտ - բնագրով կարդում է Պլատոն ու Հոմերոս:  
Հունիսի 13 - Պյոտր որդու ծնունդը:  
Հունիս - կասկածելով, որ հիվանդ է թոքախտով, մեկնում է Սամարայի տափաստանները՝ կումիսով բուժվելու:  
1872, մարտ - գրում է «Կովկասի գերին» պատմվածքը երեխաների համար:  
Մայիս - աճող ընտանիքի համար վերակառուցում է Յասնայա Պոլյանայի տունը:  
Նոյեմբեր - լույս է տեսնում «Այբբենարանը»՝ բոլոր դասերի դաստիարակության համար Տոլստոյի կազմած քրեստոմատիան:  
Աշխատում է Պյոտր I-ի դարաշրջանի մասին վեպի վրա:  
1873, սեպտեմբեր-հոկտեմբեր - Յասնայա Պոլյանայում բնորդում է Ի.Ն. Կրամսկոյին՝ Պ.Մ. Տրետյակովի պատվիրած դիմանկարի համար:  
Նոյեմբերի 9 - Պյոտր որդու մահը:  
Հիասթափվում է Պյոտր I-ի մասին վեպից:  
Սկսում է գրել «Աննա Կարենինա» վեպը:  
1874, ապրիլի 22 - Նիկոլայ որդու ծնունդը:  
Հունիսի 20 - սիրելի հորաքրոջ՝ Տ.Ա. Յորզուլսկայայի մահը:  
1875, հունվար - «Ռուսսկի վեստնիկ» ամսագրում սկսում է հրապարակել «Աննա Կարենինա» վեպը:  
Փետրվարի 20 - Նիկոլայ որդու մահը:  
Նոյեմբեր - Վարվառա դատեր ծնունդն ու մահը:  
1876 - շարունակում է աշխատել «Աննա Կարենինայի» վրա:  
1877, հուլիս - Օպտինյան անապատում գրուցում է սրբահայր Ամբրոսիի հետ:  
Դեկտեմբերի 6 - Անդրեյ որդու ծնունդը:  
Ավարտում է «Աննա Կարենինան»: «Աննա Կարենինայի» հրապարակման ավարտը «Ռուսսկի վեստնիկում»: Վեպի ահռելի հաջողությունը: Հոգեկան հեղաշրջման առաջին նշանները՝ կապված կյանքի իմաստը կորցնելու հետ:  
1878, հունվար - «Աննա Կարենինայի» լույսընծայումն առանձին հրատարակությամբ:

Փետրվար - Մոսկվայում հանդիպում է ղեկաբրիստներ Պ.Ն. Սվիստունովի և Մ.Ի. Մուրավյով-Ապոստոլի հետ:

Մարտ - մեկնում է Պետերբուրգ «Դեկաբրիստներ» վեպի համար նյութեր հավաքելու: Փիլիսոփա Վ.Ս. Մոլոժյովի դասախոսության ժամանակ առաջին անգամ հայտնվում է Ֆ.Ս. Դոստոևսկու կողքին, բայց չի ծանոթանում:

Ապրիլ - նամակ է ուղարկում արտասահման՝ Ի.Ս. Տուրգենևին՝ առաջարկելով հաշտվել, և ստանում նրա բարեհաճ պատասխանը:

Մայտեմբեր - Ի.Ս. Տուրգենևի հետ հանդիպում է Յասնայա Պոլյանայում:

Տարվում է եկեղեցական արարողություններով, աղոթքներով, պահքերով:

1879, հունիս - ուխտի է գնում Կիև-Պեչորյան վանք:

Ս.Ա. Տոլստայայի նամակը քրոջը. «Սևեռվել է ժողովրդական ընթերցումների վրա»:

Մոսկվայում նոր կենսակերպ է վարում. վեր է կենում առավոտվա յոթին, ջուր է բերում, փայտ է սղոցում ու ջարդում, սպիտակ հաց չի ուտում, հյուր չի գնում, շուտ է պառկում քնելու:

1886, հունվարի 18 - Ալեքսեյ որդու մահը:

Փետրվար - ծանոթանում է Վ.Գ. Կորոլենկոյի հետ

Գրում է «Խավարի իշխանություն» դրաման (սկզբում բեմադրությունն արգելված էր):

Սկսում է գրել «Լուսավորության պտուղները» կատակերգությունը:

1887, ապրիլ - ծանոթանում է Ն.Ս. Լեսկովի հետ:

Սկսում է գրել «Կրեյցերյան սոնատ» վիպակը:

1888, հունվար - «Խավարի իշխանության» առաջին բեմադրությունը Փարիզում:

Մարտի 31 - վերջին երեխայի՝ Վանեչկայի ծնունդը:

Դեկտեմբերի 24 - առաջին թոռան՝ Աննայի՝ Իլյա Լվովիչի դստեր ծնունդը:

Վերջնականապես թողնում է ծխելը: Մասնակցում է «Համաձայնություն հարբեցողության դեմ» հասարակական շարժմանը:

Չինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքերի ալիքը՝ տոլստոյական հայացքների ազդեցության տակ:

1889, մարտ - հանդիպում է փիլիսոփա Վ.Ս. Մոլոժյովի հետ:

Օգոստոս - ընտանիքի անդամների և հյուրերի համար կարդում է «Կրեյցերյան սոնատը»:

Սկսում է «Հարություն» վեպը: Վարուցանք ու հունձ է անում գյուղացի-

ների հետ:

1890, փետրվար - Ալեքսանդր III-ը կարդում է «Կրեյցերյան սոնատը», որի տպագրությունն արգելված էր հոգևոր գրաքննության կողմից:

Ապրիլ - ավարտում է «Կրեյցերյան սոնատի» հետգրությունը: Սապոգներ է կարում: Գրում է «Ինչո՞ւ են իրենց քննեցնում մարդիկ» հոդվածը, «Հայր Սերգի» վիպակն ու հոդված «չհակառակվելու» մասին:

Գրառում է անում օրագրում. «Բարոյապես շատ ծանր է. տխրություն, ամեն ինչ վատ է, ու սեր չկա»:

1891, ապրիլ - Ս.Ա. Տոլստայան հանդիպում է ցարի հետ՝ փորձելով «Կրեյցերյան սոնատի» հրատարակման թույլտվություն ստանալ:

Մեպտեմբեր - կնոջ, երեխաների ու հետևորդների հետ սկսում է օգնել սովյալ գյուղացիներին:

1892 - Ռյազանի նահանգում «աշխատում է սովի դեմ»: Հոդված է գրում սովյալների մասին: Գրում է «Աստծո թագավորությունը մեր մեջ» գիրքը:

1893 - Շարունակում է «աշխատել սովի դեմ»:

1894, հուլիս - Տպագրության հարցերով գլխավոր վարչությունը խմբագրություններին արգելում է «արտասահմանյան թերթերից փոխառնել Լ.Ն. Տոլստոյի, նրա ստեղծագործությունների ու մասնավոր կյանքի վերաբերյալ որևէ տեղեկություն»:

Գրում է «Քրիստոնեություն և հայրենասիրություն» հոդվածը: Փորձում է «կատեխեզիս» կազմել՝ իր հավատի հիմունքների շարադրումով:

1895, հունվար - փորձում է հեռանալ ընտանիքից:

Փետրվարի 23 - սիրելի որդու՝ Վանեչկայի մահը:

Օգոստոս - ծանոթանում է Ա.Պ.Չեխովի հետ:

Հոկտեմբեր - «Խավարի իշխանության» առաջին ներկայացումը Պետերբուրգի Ալեքսանդրիյան թատրոնում:

Նոյեմբեր - «Խավարի իշխանության» առաջին ներկայացումը Մոսկվայի Փոքր թատրոնում:

Գրում է «Ամոթ է» հոդվածը՝ մարմնական պատիժների դեմ:

1896 - սկսում է գրել «Հաջի Մուրադ» վիպակը:

1897, հուլիս - փորձում է հեռանալ ընտանիքից:

Դեկտեմբեր - ավարտում է «Ինչ է արվեստը» հոդվածը:

Սկսում է օգնել Ռուսաստանում հետապնդվող դուխոբորների աղանդին:

1898 - ավարտում է «Հարություն» վեպը: Որոշում է հրատարակել Կանադա տեղափոխվող դուխոբորների օգտին:

1899, մարտ-դեկտեմբեր - «Հարությունը» տպագրում է «Նիվա» ամսագրում:

1900 - ծանոթանում է Ա.Մ. Գորկու հետ:

1901, փետրվար - «Եկեղեցական տեղեկագրերում» հրապարակվում է Սինոդի որոշումը Եկեղեցուց Տոլստոյի «կտրվելու» մասին:

Մեպտեմբեր - առողջության վատանալու պատճառով մեկնում է Ղրիմ:

1902, հունվար-մայիս - Ղրիմում հանդիպում է Ա.Պ. Չեխովի, Ա.Մ. Գորկու, Ա.Ի. Կուպրինի հետ:

Հունիս - վերադառնում է Յասնայա Պոլյանա:

1903, օգոստոս - գրում է «Հայր ու դուստր» վիպակը (հետմահու հրատարակվել է «Պարահանդեսից հետո» վերնագրով):

Շարունակում է գրել «Հաջի Մուրադ» վիպակը:

1904, հունվարի 27 - ռուս-ճապոնական պատերազմի սկիզբը հակապատերազմական տրամադրություններ է հարուցում Տոլստոյի մեջ:

Օգոստոսի 23 - ավագ եղբոր՝ Մերգեյի մահը:

1905, հունվար - առաջին ռուսական հեղափոխության սկիզբը:

Ծանր է տանում ռուսական նավատորմի պարտությունն ու Պորտ-Արտուրը հանձնելը: Գրում է «Դարի վերջը» և «Ցարին ու իր օգնականներին» հոդվածները:

1906, նոյեմբերի 27 - սիրելի դստեր՝ Մարիայի մահը:

Կազմում է «Ընթերցանության շրջան» և «Իմաստուն մարդկանց մտքերը» («Մտքեր ամեն օրվա համար») անթոլոգիաները:

1908 - աշխատում է երեխաների համար Ավետարանի շարադրանքի և «Մանկական ընթերցանության շրջան»-ի վրա:

1908, մայիս - գրում է «Չեմ կարող լռել» հոդվածը՝ մահապատժի դեմ:

Օգոստոս - հանդիսություններ Ռուսաստանում և ողջ աշխարհում՝ նվիրված Տոլստոյի ութսունամյակին:

1909 - գրառում է անում օրագրում. «Չի գրվում, բայց ուզվում ու մտածվում է... Շատ, շատ բան եմ ուզում ասել: Պահանջը խեղդում է...»:

Կոնֆլիկտ կնոջ հետ գրական ժառանգության պատճառով: Չերտկովի խարդավանքները Տոլստոյի կտակի շուրջ:

1910, հուլիս - թաքուն կտակ է ստորագրում դստեր՝ Ալեքսանդրայի օգտին:

Լույս հոկտեմբերի 11-ի գիշերը - հեռանում է Յասնայա Պոլյանայից:

Նոյեմբերի 7 - վախճանվում է Աստապովո երկաթուղային կայարանում:

Նոյեմբերի 9 - հուղարկավորվում է Յասնայա Պոլյանայի անտառում:

**Մատենագիտություն**

*Լ.Ն. Տոլստոյի ստեղծագործությունները*

Տոլստոյ Լ.Ն., Երկերի լիակատար ժողովածու 90 հատորով, Մ., 1928-1958

Հուշեր, օրագրեր, նամակներ, հարցազրույցներ  
Բուլգակով Վ.Ֆ., Ինչպես ապրել կյանքը. Լ.Ն.Տոլստոյի վերջին քարտուղարի հուշերը, Մ., 2012

Բուլգակով Վ.Ֆ., Լ. Ն.Տոլստոյը կյանքի վերջին տարում. Լ.Ն. Տոլստոյի քարտուղարի օրագիրը, Մ., 1957

Բուլգակով Վ.Ֆ., Լև Տոլստոյը, նրա բարեկամներն ու մերձավորները, Տուլա, 1970

Վելիչկինա Վ.Մ., Սովի տարին Լև Տոլստոյի հետ, Մ., Լ., 1928

Գոլդենվեյզեր Ա.Բ., Տոլստոյի կողքին (տասնհինգ տարվա նոթեր), Մ., 2002

Գուսև Ն. Ն., Երկու տարի Լ.Ն. Տոլստոյի հետ, Մ., 1973

Ժիրկևիչ Ա.Վ., Հանդիպումներ Տոլստոյի հետ, Մ., 1986

Հարցազրույցներ և զրույցներ Լև Տոլստոյի հետ, Մ., 1986

Կուզմինսկայա Տ.Ա., Իմ կյանքը տանը և Յասնայա Պոլյանայում, Մ., 1986

Լ.Ն. Տոլստոյն ու մերձավորները, Մ., 1986

Լ.Ն. Տոլստոյը ժամանակակիցների հուշերում, երկու հատորով, Մ., 1987

Լ.Ն. Տոլստոյն ու Ա.Ա. Տոլստայան: Նամակագրություն (1857-1903), Մ., 2011

Մակովիցկի Գ.Պ., Տոլստոյի մոտ, 1904-1910. «Յասնոպոլյանյան նոթեր», 4 գրքով. Գրական ժառանգություն, հ. 90, Մ., 1979

Միկուլիչ Վ.Մ., (Վեսելիտսկայա Լ.Ի.): Հանդիպումներ գրողների հետ, Լ., 1929

Լ.Ն. Տոլստոյի նամակագրությունը Ն. Ն. Ստրախովի հետ: 1870-1894, ՍՊԲ, 1914

Լ.Ն. Տոլստոյի նամակագրությունը քրոջ ու եղբայրների հետ (ներածական հոդվածը՝ Լ.Գ. Օպոլենսկայայի, տեքստի պատրաստումն ու ծանո-



քագրությունները՝ Ն.Ա. Կալինինա, Վ.Վ. Լոբզյակովա, Տ.Գ. Նիկիֆորովա),  
Մ., 1990  
Սուխոտինա-Տոլստայա Տ.Լ., Հուշեր, Մ., 1980  
Սուխոտինա-Տոլստայա Տ.Լ., Օրագիր, Մ., 1987  
Տոլստայա Ա.Լ., Օրագրեր (1903-1920), Մ., 2015  
Տոլստայա Ա.Լ., Դուստրը, Մ., 2001  
Տոլստայա Ա.Լ., Հայրը, երկու հատորով, Մ., 2001  
Տոլստայա Ս.Ա., Օրագրեր, 2 հատորով, Մ., 1978  
Տոլստայա Ս.Ա., Իմ կյանքը, 2 հատորով, Մ., 2011  
Տոլստայա Ս.Ա., Օրագրեր, 2 հատորով, Մ., 1978  
Տոլստայա Ս.Ա., Նամակներ Լ.Ն. Տոլստոյին, Մ., Լ., 1936  
Տոլստոյ Ա.Լ., Հորս մասին /Յասնոպոլյանյան ժողովածու/, Տուլա, 1965  
Տոլստոյ Ի.Լ., Իմ հուշերը, Մ., 1969  
Տոլստոյ Լ.Լ., Յասնայա Պոլյանայում: Ճշմարտությունը հորս ու նրա  
կյանքի մասին, Պրահա, 1923  
Տոլստոյ Լ.Լ., Իմ կյանքի փորձը, Մ., 2014  
Տոլստոյ Լ.Ն., Նամակագրություն ռուս գրողների հետ, 2 հատորով, Մ.,  
1978  
Տոլստոյ Ս.Լ., Անցյալի ակնարկներ, Տուլա , 1975  
Տոլստոյ Ս.Մ., Տոլստոյի երեխաները, Տուլա, 1994

**Գրականություն**

Բասինսկի Պ.Վ., Լև Տոլստոյ. փախուստ դրախտից, Մ., 2010  
Բասինսկի Պ.Վ., Սուրբը Լևի դեմ: Իրան Կրոնշտադցին ու Լև Տոլստոյը.  
մի թշնամանքի պատմություն, Մ., 2013  
Բիրյուկով Պ.Ի., Լ.Ն. Տոլստոյի կենսագրությունը, 4 հատորով, Մ., 2000  
Գուսև Ն.Ն., Լև Նիկոլաևիչ Տոլստոյ. Կենսագրական նյութեր, 1828-1855  
թթ., Մ., 1954  
Գուսև Ն.Ն., Լև Նիկոլաևիչ Տոլստոյ. Կենսագրական նյութեր, 1855-1869  
թթ., Մ., 1958  
Գուսև Ն.Ն., Լև Նիկոլաևիչ Տոլստոյ. Կենսագրական նյութեր, 1870-1881  
թթ., Մ., 1963  
Գուսև Ն.Ն., Լև Նիկոլաևիչ Տոլստոյ. Կենսագրական նյութեր, 1881-1885  
թթ., Մ., 1970

ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

- Գուսև Ն.Ն., Լ. Ն. Տոլստոյի կյանքի և ստեղծագործության տարեգրություն., Մ., 1936
- Լև Տոլստոյի հոգևոր ողբերգությունը, Մ., 1995
- Ժդանով Վ.Ա., Տոլստոյն ու Սոֆյա Բերսը, Մ., 2008
- Ջվերև Ա.Մ., Տունիմանով Վ.Ա., Լև Տոլստոյ («Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշար), Մ., 2006
- Կայունին Ա.Ի., Տոլստոյի հեռանալը, ՍՊԲ, 2000
- Լ.Ն. Տոլստոյ, Pro et contra, ՍՊԲ, 2000
- Լ.Ն. Տոլստոյ, Հանրագիտարան, Մ., 2009
- Լև Տոլստոյն ու ժամանակակիցները. հանրագիտարան, Մ., 2008
- Լև Տոլստոյի Հեռանալն ու մահը, Մ., Լ., 1960
- Օպուլսկայա Լ.Դ., Լև Նիկոլևիչ Տոլստոյ. Կենսագրական նյութեր 1892-1899 թթ., Մ., 1979
- Օպուլսկայա Լ.Դ., Լև Նիկոլևիչ Տոլստոյ. Կենսագրական նյութեր 1892-1899 թթ., Մ., 1998
- Օրեխանով Գ. քահ., Ռուս ուղղափառ եկեղեցին և Լ.Ն. Տոլստոյը, Մ., 2010
- Պետրով Գ.Պ., Լև Տոլստոյի հեռացումը եկեղեցուց, Մ., 1978
- Ռուս մտածողները Լև Տոլստոյի մասին, Տուլա, 2002
- Տոլստոյի մահը՝ ըստ նոր նյութերի. Աստապովյան հեռագրերը, Մ., 1929
- Տոլստայա Ա.Լ., Լ.Ն. Տոլստոյի հեռանալու և մահվան մասին, Տուլա, 1929
- Լև Տոլստոյի հեռանալն ու մահը: Թղթակցություններ: Հոդվածներ: Ակնարկներ, ՍՊԲ, 2010
- Չերտկով Վ. Գ., Լ.Ն. Տոլստոյի վերջին օրերի մասին: ՍՊԲ, 1911
- Չերտկով Վ. Գ., Տոլստոյի հեռանալը, Բեռլին, Մ., 1922
- Շկլովսկի Վ.Բ., Լև Տոլստոյ («Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշար), Մ., 1963

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան. Տոլստոյը որպես ստեղծագործություն . . . . . 5

**ՄԱՍ ԱՌԱՋԻՆ**

ԶԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (1828-1847) . . . . . 7  
Կյանքը որպես բռնություն . . . . . 7  
Վոլկոնսկիները . . . . . 12  
Տոլստոյները . . . . . 21  
Հորաբույրները . . . . . 29  
Եղբայրները . . . . . 37

**ՄԱՍ ԵՐԿՐՈՐԳ**

ՓԱԽՍՏԱԿԸ (1847-1862) . . . . . 45  
Կալվաժատիրոջ առավոտը . . . . . 45  
«Դատարկ ջահելը» . . . . . 51  
Ինքն իր լրտեսը . . . . . 55  
Կովկասի գերին . . . . . 60  
Սևաստոպոլյան փոխտեղակալը . . . . . 70  
Տուրգենևն ու մյուսները . . . . . 83  
Տոլստոյն արտասահմանում . . . . . 89

**ՄԱՍ ԵՐԲՈՐԳ**

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ (1862-1877) . . . . . 96  
Պողկոլյուսինը . . . . . 96  
Դևը . . . . . 102  
Բերսերը . . . . . 108  
Ճակատագրական սխալ . . . . . 118  
Չտեսնված երջանկություն . . . . . 121  
Յաշա Պոլյանովները . . . . . 126  
Արևը զենիթում . . . . . 132

**ՄԱՍ ՉՈՐՐՈՐԳ**

ՀԵՂԱՇՐՋՈՒՄ (1877-1892) . . . . . 137  
Դեռ ոչ աղետ . . . . . 137  
Կյանքի կանգ . . . . . 139  
Գայթակորություն և խելագարություն . . . . . 142  
Հրաժարում Եկեղեցուց . . . . . 146  
Հրաժարում գրականությունից . . . . . 156  
Հրաժարում պետությունից . . . . . 165  
Հրաժարում սեփականությունից . . . . . 172  
Հրաժարում գրական իրավունքներից . . . . . 184  
Չերտկովը . . . . . 192  
Չերտկովն ու Սոֆյա Անդրեևնան . . . . . 207

**ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԳ**

ՀԵՌԱՑՈՒՄ ԵՎ ՄԱՀ (1892-1910) . . . . . 214  
Տոլստոյը իննսունական թվականներին . . . . . 214  
Վտարում Եկեղեցուց . . . . . 231  
Մահվան խաղափորձ . . . . . 241  
Կտակ . . . . . 244  
Փախուստ . . . . . 265  
Օպտինյան անապատ . . . . . 274  
Շամորդինո և ավելի հեռուն . . . . . 280  
Աստապովո . . . . . 292  
Վերջաբան . . . . . 299

*Լ.Ն. Տոլստոյի կյանքի և ստեղծագործության*  
*հիմնական տարեթվերը . . . . . 304*  
**Մատենագիտություն . . . . . 312**  
*Լ.Ն. Տոլստոյի ստեղծագործությունները . . . . . 312*  
*Գրականություն . . . . . 313*

ՊԱՎԵԼ ԲԱՍԻՆՍԿԻ

**ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ.**

**ԱՋԱՏ ՄԱՐԴԸ**

Ռուսերենից թարգմանությունը՝  
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան  
Էջադրումը՝ Ա. Խաչատրյանի  
Կազմի ձեռավորումը՝ Բ. Դոլուխանյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 20 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պրես» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

**«ԳԵՂԱՐՄ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել**

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010  
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011  
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012  
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,  
Վ.Խոդասեւիչ/ - 2012  
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012  
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012  
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012  
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013  
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014  
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,  
Լ.Ռուբինշտեյն/ - 2014  
Յենրիխ Սապգիր. «Ջուզահեռ մարդը» - 2014  
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014  
«Կամուրջների խռովությունը.  
մետամետաֆորիստներ» - 2015  
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015  
Անդրեյ Պլատոնով. «Չեւեւգուր. Գուրը.  
Պատմվածքներ» - 2015  
Արդի ռուսական վերլիբը (անթոլոգիա) - 2015  
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015  
Զիդի Մաջիա. «Յրեղեն խոսքեր» - 2015  
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015  
Եվգենի Վոդլազկին. «Լավր» - 2015  
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015  
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016

Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.  
Փախուստ դրախտից» - 2016

Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016

Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո  
պատմությունը» - 2016

Լյուդմիլա Պետրուշենսկայա. «Սեր. երջանկություն.  
ռեքվիեմ» - 2016

Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016

«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»  
(անթոլոգիա) - 2016

Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016

Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղայականությունը,  
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական  
մշակույթը» - 2016

Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017

Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017

Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017

Ջիդի Մաջիա. «Ընծառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017

Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017

Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017  
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017  
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ  
նախագծերի» - 2017  
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017  
Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադեւը» - 2018  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 5) - 2018  
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018  
Մարտիրոս Ոբն. «Մոմերն իզուր են այրվել  
մեղքերիս համար» - 2018  
Ուեյսին Սյուլն, Սյուն ճու. «Չինաստանի յուրահատկու-  
թյունները: Չինաստանի համաշխարհային  
ժառանգությունը» - 2018  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 6) - 2018  
Աղի ձայնը (20-րդ դարի հետազոտմանական թվականների  
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019  
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 7) - 2019  
Գվինեթ Լյուիս. «Քաոսի հրեշտակները» - 2020



Ոգի-Նաիրի  
Vogi-Nairi

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru  
Ճեռ.: +37497252323